Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Ф.М.ДОСТОЕВСКИЙ

Братья Карамазовы

Роман

I

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН–1983

Ֆ.Մ.ԴՈՍՏՈԵՎՍԿԻ

Կարամազով եղբայրներ

Վեպ

I

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ–1983

ԳՄԴ 83 Ռ 1
Դ 798

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆԻ
թարգմանությամբ

Դոստոևսկի Ֆ. Մ.
Դ 798 Կարամազով եղբայրներ։ Վեպ/Կ. Սուրենյանի թարգմ.— 1 — Եր.։ Սովետ. գրող, 1983,— (Ռուս. դաս. գ-րան). 1983, 464 էջ։

«Կարամազով եղբայրները» ռուս հանճարեղ գրող Ֆ. Մ. Դոստոևսկու վերջին վեպն է՝ համաշխարհային գրականության գլուխգործոցներից մեկը։ Սա մի կոթողային վեպ-սինթեզ է, որ ամփոփում է Դոստոևսկու բոլոր ստեղծագործական ձգտումները, համադրում այն բոլոր հակասական հարցերը, որոնք նրան հուզել, տանջել են ամբողջ կյանքի ընթացքում։ Մարդկային կեցության էական կողմերը քննող այդ հարցերը բորբոքվում են հայրասպանության մեծագույն ոճրի շուրջ ալեկոծվող կրքերի, զգացումների և գաղափարների հորձանուտում։

Գիրքը հայերեն հրատարակվում է երկրորդ անգամ։ (Առաջին անգամ հրատարակվել է 1970 թվականին)։

4702010100 (2)
705 (01) 83 — 83 «Տ»

ԳՄԴ 83 Ռ 1
Ռ 1

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանության և ձևավորման համար, 1983

Զոհվում է
ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԵՎՆԱ
ԴՈՍՏՈԵՎՍԿԱՅԱՅԻՆ

Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե ցորենի հատիկը երկիր ընկնելով չմեռնի, ինքը միայն կմնա. իսկ եթե մեռնի, բազում արդյունք կբերի։

(Ավետարան ըստ Հովհաննու, Գլուխ ԺԲ, 24)։

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սկսելով կենսագրությունն իմ հերոսի՝ Ալեքսեյ Ֆյոդորովիչ Կարամազովի, որոշ տարակուսանքի մեջ եմ գտնվում։ Այսինքն, թեև իմ հերոսն եմ կոչում Ալեքսեյ Ֆյոդորովիչին, բայց և այնպես ինքս գիտեմ, որ նա բնավ էլ մեծ մարդ չէ, ուստի և նախատեսում եմ այսպիսի անխուսափելի հարցեր՝ ինչո՞վ է ուշագրավ ձեր Ալեքսեյ Ֆյոդորովիչը, ինչո՞ւ եք նրան ընտրել իբրև ձեր հերոսը։ Ի՞նչ մի բան է արել նա։ Ո՞ւմ և ինչո՞վ է հայտնի։ Ինչո՞ւ ես՝ ընթերցողս, պետք է ժամանակ վատնեմ նրա կյանքի փաստերն ուսումնասիրելու համար։

Վերջին հարցը ամենից ավելի բախտորոշն է, որովհետև մեկ պատասխան կարող եմ տալ դրան. «Գուցե ինքներդ տեսնեք՝ վեպը կարդալով»։ Է՜հ, իսկ եթե վեպը կարդան ու չտեսնե՞ն, եթե համաձայն չլինե՞ն, թե ուշադրության արժանի է իմ Ալեքսեյ Ֆյոդորովիչը։ Այսպես եմ ասում, որովհետև ցավ ի սիրտ նախատեսում եմ այդ։ Ինձ համար նա ուշադրության արժանի է, բայց խիստ տարակուսում եմ՝ կկարողանա՞մ արդյոք այս բանն ապացուցել ընթերցողին։ Խնդիրն այն է, որ նա թերևս գործիչ է իրոք, բայց տարտամ, պարզորոշության չհասած գործիչ։ Սակայն տարօրինակ կլիներ մարդ-

կանցից պարզորոշություն պահանջել այնպիսի մի ժամանակաշրջանում, ինչպիսին մերն է։ Մի բան, թերևս, անտարակուսելի է բավական. տարօրինակ մարդ է նա, նույնիսկ զարմանալի մարդ։ Բայց տարօրինակությունն ու զարմանալիությունը ավելի վնասում են, քան իրավունք տալիս ուշադրության արժանի դառնալու, մանավանդ երբ բոլորը ձգտում են ի մի բերել մասնակի բաները և գեթ մի որևէ ընդհանուր իմաստ գտնել համատարած խառնաշփոթության մեջ։ Իսկ զարմանալի մարդը առավելապես մասնակի և տարանջատ երևույթ է։ Այնպես չէ՞։

Ա՜յ, եթե համաձայն չլինեք այս վերջին դրույթին և պատասխանեք՝ «այնպես չէ» կամ «միշտ չէ, որ այդպես է», թերևս քաջալերված զգամ իմ հերոս Ալեքսեյ Ֆյոդորովիչի նշանակության վերաբերյալ։ Որովհետև՝ զարմանալի մարդը ոչ միայն «միշտ չէ», որ մասնակի և տարանջատ երևույթ է, այլև ընդհակառակը, երբեմն լինում է այնպես, որ գուցե նա՛ է իր մեջ կրում ամբողջության կորիզը, այնինչ իր դարաշրջանի մնացյալ մարդիկ՝ բոլորը, չգիտես ինչու, առժամապես անջատվել են նրանից, տարապայման մի քամուց քշված...

Այնուամենայնիվ, ես չէի դիմի այս հույժ անհնազանդբարական ու տարտամ բացատրություններին և պարզապես կբսկրսեի առանց նախաբանի. եթե դուր գա՝ այնպես էլ կկարդան։ Սակայն դժբախտությունն այն է, որ թեև մեկ կենսագրություն է գրածս, բայց դա բաղկացած է երկու վեպից։ Գլխավոր վեպը երկրորդն է՝ իմ հերոսի գործունեությունը արդեն մեր օրերում, հենց մեր ներկա ընթացիկ պահին։ Իսկ առաջին վեպը տեղի է ունեցել դեռ տասներեք տարի առաջ և գրեթե վեպ չէ նույնիսկ, այլ լոկ մի պահ՝ իմ հերոսի վաղ երիտասարդության շրջանից։ Չեմ կարող զանց առնել այս առաջին վեպը, որովհետև շատ բան անհասկանալի կլիներ երկրորդ վեպում։ Բայց այսպիսով ավելի ևս բարդանում է սկզբի իմ դժվար կացությունը. եթե ես ինքս, այսինքն հենց կենսագիրս, գտնում եմ, որ գուցե մի վեպն իսկ ավելորդ լինի այսպիսի համեստ ու տարտամ հերոսի համար, հապա էլ ի՞նչ ասել, որ հանդես եմ գալիս երկու վեպով, և ինչո՞վ բացատրել այսպիսի գոռոզամտությունն իմ կողմից։

Այս հարցերի լուծման մեջ գլուխս կորցնելով, որոշում եմ առանց որևէ լուծման շրջանցել դրանք։ Ինչպես, խորաթափանց ընթերցողը վաղուց արդեն կռահեց, որ հենց սկզբից էլ այդ էր իմ միտքը, և նա պարզապես վրդովվում է իմ դեմ, թե ինչո՞ւ ապարդյուն խոսքեր եմ ասում և իզուր վատնում թանկագին ժամանակը։ Դրան արդեն որոշակի կարող եմ պատասխանել. ապարդյուն խոսքեր էի ասում և վատնում թանկագին ժամանակը՝ նախ քաղաքավարության սիրույն, իսկ երկրորդ՝ խորամանկությունից դրդված, այսինքն թե՝ այնուամենայնիվ մի բան նախազգուշացրի կանխորոք։ Եվ սակայն ուրախ եմ նույնիսկ, որ իմ վեպը ինքնաբերաբար բաժանվեց երկու պատմության՝ «ընդհանուրի էական միասնության մեջ». ծանոթանալով առաջին պատմությանը, ընթերցողն արդեն ինքը կորոշի՝ արժե՞ արդյոք անցնել երկրորդին։ Ոչ ոք, անշուշտ, ոչ մի բանով չի կաշկանդված, կարելի է առաջին պատմության երկու էջից հետո թողնել գիրքը, այլևս երբեք չբանալու համար։ Բայց չէ՞ որ կան այնպիսի նրբանկատ ընթերցողներ, որոնք անպայման կուզենան կարդալ մինչև վերջ, որպեսզի չսխալվեն իրենց անաչառ դատողության մեջ. այդպիսիք են, օրինակ, բոլոր ռուս քննադատները։ Ահա ուրեմն այդպիսիների առաջ սիրուս թեթևացրի այնուամենայնիվ. հակառակ նրանց ամբողջ ճշտասիրության ու բարեխղճության, համենայն դեպս ամենաօրինական պատրվակն եմ տալիս նրանց՝ վեպի առաջին իսկ դրվագից մի կողմ թողնելու այս պատմությունը։ Է՜հ, ահա և ամբողջ նախաբանը։ Կատարելապես համաձայն եմ, որ ավելորդ է դա, բայց քանի որ գրվել է արդեն, թո՛ղ մնա։

Իսկ այժմ գործի անցնենք։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գիրք առաջին

ՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I

ՖՅՈԴՈՐ ՊԱՎԼՈՎԻՉ ԿԱՐԱՄԱԶՈՎ

Ալեքսեյ Ֆյոդորովիչ Կարամազովը երրորդ որդին էր կալվածատեր Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովի, որն իր ժամանակին հանրածանոթ մարդ էր մեր գավառում և հիմա էլ դեռ հիշվում է իր ողբերգական ու խորհրդավոր մահվան պատճառով։ Նրա մահվան մասին, որ տեղի ունեցավ ուղիղ տասներեք տարի առաջ, կխոսեմ պատշաճ պահին։ Իսկ առայժմ ասեմ միայն, որ այդ «կալվածատերը» (այսպես էին կոչում նրան մեզ մոտ, թեև նա իր ամբողջ կյանքի ընթացքում համարյա երբեք չի ապրել իր կալվածում) տարօրինակ տիպ էր, բայց այնպիսին, որին բավական հաճախ կարելի է հանդիպել, այսինքն ոչ միայն անպիտան ու անառակ, այլև միաժամանակ անբան մարդու տիպ։ Բայց նա այն անբաններից էր, որոնք գիտեն հիանալիորեն դասավորել իրենց ունեցվածքին վերաբերող գործերը, և ըստ երևույթին ուրիշ ոչ մի բանի ձեռնհաս չեն։ Ֆյոդոր Պավլովիչն, օրինակ, սկսել է համարյա թե ոչնչից. շատ մանր կալվածատեր էր, միշտ վազ էր տալիս ճաշելու ուրիշների սեղանին, առիթ էր փնտրում ձրիակերություն անելու, այնինչ հետո պարզվեց, որ հարյուր հազար ռուբլի զուտ դրամ ուներ մեռնելու պահին։ Եվ այնուամենայնիվ նա իր ամբողջ կյանքում եղել է մեր գավառի ամենից ավելի անբան ու խելառ մարդկանցից մեկը։ Կրկնում եմ, սա ոչ թե հիմարություն է,— այդ խելառների մեծ մասը բավական խելացի է ու խորամանկ,— այլ հենց անբանություն, այն էլ ինչ-որ հատուկ, ազգային բնույթի։

Նա երկու անգամ էր ամուսնացել և երեք որդի ուներ. ավագը՝ Դմիտրի Ֆյոդորովիչն, առաջին կնոջից էր, իսկ մյուս երկուսը՝ Իվանն ու Ալեքսեյը, երկրորդ կնոջից։ Ֆյոդոր Պավլովիչի առաջին կինը Միուսովների՝ նույնպես մեր գավառացի կալվածատերերի բավական հարուստ և ազնվատոհմ գերդաստանից էր։ Թե ինչպես պատահեց, որ օժիտով աղջիկը, այն էլ մի գեղեցկուհի և, ավելին, մեկն այն ժիր ու խելացի կանանցից, որոնք այնքան հաճախադեպ են մեր ներկա սերընդի մեջ, բայց որոնք արդեն երևացել էին նախորդում, կարողացավ ամուսնանալ այդպիսի չնչին մի «թուլամորթի» հետ, ինչպես բոլորն այն ժամանակ կոչում էին Ֆյոդոր Պավլովիչին, հիմա չեմ սկսի մանրամասն բացատրել։ Ա՛յ օրինակ, ես ճանաչում էի անցյալ «ռոմանտիկ» սերնդին պատկանող մի օրիորդի, որ ոմն պարոնի հանդեպ մի քանի տարի առեղծվածային սեր տածելուց հետո, ըստ որում միշտ էլ կարող էր շատ հանգիստ ամուսնանալ նրա հետ, ի վերջո սկսեց անհաղթահարելի արգելքներ հնարել իր սիրո առջև ու մի փոթորկոտ գիշեր, ժայռի նմանվող բարձր ափից, նետվեց բավական խորունկ և արագահոս գետի մեջ ու խորտակվեց, ուղղակի զոհ գնալով իր սեփական քմահաճույքին՝ պարզապես Շեքսպիրի Օֆելիային նմանվելու համար. և նույնիսկ ավելին, եթե իր այդ վաղուց ընտրած ու սիրած ժայռն այնքան նկարագեղ չլիներ, այլ դրա փոխարեն լիներ պարզապես մի հասարակ հարթ գետափ, ապա ինքնասպանությունն էլ հավանաբար տեղի չէր ունենա բնավ։ Սա ստույգ իրողություն է, և պետք է ենթադրել, որ մեր ռուս իրականության մեջ, վերջին երկու կամ երեք սերունդների կյանքում, քիչ չեն եղել սրա նման կամ նույնատիպ ուրիշ դեպքեր։ Այսպես էլ Ադելաիդա Իվանովնա Միուսովայի արարքը, անտարակույս, ուրիշներից լսած գաղափարների արձագանքն էր և նույնպես հետևանք՝ գերյալ մտքի բորբոքման։ Գուցե նա ուզել է կանացի անկախություն ցուցաբերել, հակադրվել հանրային պայմանակա-

նությունները, հակադրվել իր ազգականների և ընտանիքի բոնությանը, իսկ հանձնարարական երեսակայությունը, ենթադրությունը, լոկ մի վայրկյան հանգիստ է նրան, որ Ֆյոդոր Պավլովիչը, չնայած ձրիակեր մարդու իր վիճակին, այնուամենայնիվ բարեփոխման այդ ժամանակաշրջանի ամենահամարձակ ու հեգնասեր մարդկանցից մեկն է, այնինչ նա պարզապես չար բնավորության տեր մի խեղկատակ էր, որիշ ոչինչ։ Զգայացունց էր նաև այն, որ ամուսնությունը տեղի ունեցավ առանգորմով, և դա շատ գայթակղիչ էր Ադելաիդա Իվանովնայի համար։ Իսկ Ֆյոդոր Պավլովիչն այն ժամանակ, իր ազգեցիկական դրության իսկ բերումով, հույժ սրամտաբեր էր որևէ այդպիսի արտակարգ բան անելու, որովհետև բառն ցանկություն ուներ որևէ կերպ դասավորելու իր կյանքի ընթացքը. մի լավ գերդաստանի մեջ խցկվելու և օժիտի տերանալու հեռանկարը շատ հրապուրիչ էր անշուշտ։ Որքան գիտեմ, նրանց միջև փոխադարձ սեր բոլորովին չկար՝ ոչ հարսի, ոչ էլ նրա կողմից, չնայած նույնիսկ Ադելաիդա Իվանովնայի գեղեցկությանը։ Այնպես որ այս դեպքն իր տեսակի մեջ միակն էր գուցե Ֆյոդոր Պավլովիչի կյանքում, մի մարդու, որ միշտ էլ չափազանց հնչեղաձեր էր և պատրաստ էր վայրենաբարոյ կաքավոս որևէ մի փեշի՝ հենց որ դույզն քաջալերություն ստանար։ Եվ միայն այս կինն էր, որ նրա մեջ ոչ մի հատուկ կիրք չհարուցեց։

Առանձնությունից անմիջապես հետո Ադելաիդա Իվանովնան մի ակնթարթում գլխի ընկավ, որ իր ամուսնու հանդեպ միայն արհամարհանք է զգում, որիշ ոչինչ։ Այսպիսով, մեկ օրից մյուսը ամուսնությունն իր իսկական գույնը դուրս տվեց։ Թեև աղջիկ ընտանիքը բավական շուտ հաշտվեց կատարվածի հետ և փոխատականին հատկացրեց իր օժիտը, բայց ամուսիններն ակնթարթորեն չափազանց անկանոն կյանք վարել և անընդհատ տեսարաններ սարքեր Պատմում էին, որ երիտասարդ կինն այդ պայմաններում անհասանելի ավելի ազնվություն ու վեհություն էր ցուցաբերում, քան Ֆյոդոր Պավլովիչը, որ, ինչպես հայտնի է դարձել հիմա, տեղն ու տեղը կնոջից թաքցրել է նրա բոլոր փողերը՝ օժիտն ստանալուց անմիջապես հետո, այսինքն մոտ քառասունհինգ հազար ռուբլի, այնպես որ այդ հազարներն այլևս անհետ կորել են Ադելաիդա Իվանովնայի համար։ Ֆյոդոր Պավլովիչը, կաշվից դուրս գալով, երկար ժամանակ աշխատեց ինչ-որ համապատասխան վավերագիր կնքել ու իր անվանը փոխանցել նաև այն փոքրիկ գյուղն ու քաղաքային բավական լավ տունը, որոնք նույնպես կնոջ օժիտի մասն էին կազմում։ Հավանաբար հասներ իր նպատակին՝ պարզապես, այսպես ասած, այն արհամարհանքի ու զզվանքի շնորհիվ, որ ամեն րոպե հարուցում էր կնոջ մեջ իր անամոթ շորթումներով ու մուրացկանությամբ, նաև շնորհիվ այն բանի, որ կինը հոգեպես հոգնել էր և ուզում էր միայն գլուխն ազատել նրանից։ Սակայն, բարեբախտաբար, միջամտեց Ադելաիդա Իվանովնայի ընտանիքը և չափավորեց գութողի ախորժակը։ Ստույգ է, որ ամուսինները հաճախ կռվում էին իրար հետ, բայց, ըստ ավանդաբար հասած զրույցների, ծեծում էր ոչ թե Ֆյոդոր Պավլովիչը, այլ Ադելաիդա Իվանովնան՝ տաքարյուն, համարձակ, թխադեմ, անհամբեր մի կին, որ ֆիզիկական զարմանալի ուժի տեր էր։ Ի վերջո նա թոքեց տունը և ամուսնուց փախավ՝ չքավորության մեջ կորած մի սեմինարիստ-դասատուի հետ, երեք տարեկան Միտյային թողնելով Ֆյոդոր Պավլովիչի վզին։ Ֆյոդոր Պավլովիչն անմիջապես մի ամբողջ հարեմ տարքեց տանը և անձնատուր եղավ ամենասանձարձակ հարբեցողության, իսկ ընդմիջումներին շրջում էր համարյա ամբողջ նահանգում և լացակումած գանգատվում էր սրան-նրան ու բոլորին, թե Ադելաիդա Իվանովնան լքել է իրեն, ըստ որում իր ամուսնական կյանքի մասին հայտնում էր այնպիսի մանրամասնություններ, որոնք պատմելը շատ ամոթալի բան կլիներ որևէ ամուսնու համար։ Եվ կարևորն այն է, որ վիրավորված ամուսնու իր ծիծաղելի դերը բոլորի առաջ խաղալը և մինչև անգամ իր դժբախտության մանրամասնությունները գունազարդված նկարագրելը կարծես հաճույք էր պատճառում նրան և նույնիսկ շոյում էր ինքնասիրությունը։ «Կարելի է կարծել, թե դուք, Ֆյոդոր Պավլովիչ, պաշտոնի բարձրացում եք ստացել, այնքան գոհ եք երևում, չնայած ձեր մեծ վշտին»,— ասում էին նրան ծաղրասեր մարդիկ։ Շատերը նույնիսկ ավելացնում էին, թե նա ուրախությամբ է խաղում խեղկատակի այս նոր դերը, և թե դիտմամբ, ավելի մեծ ծիծաղ պատճառելու համար ձևացնում է, որ փոր թե չի նկատում իր զավեշտական վիճակը։ Բայց, ով գիտե, գուցե և այդ յուրքն անում էր միամտաբար։ Վերջապես նա կարողացավ ի հայտ բերել իր

փախստական կնոջ հետքը։ Պարզվեց, որ խեղճ կինը գտնվում է Պետերբուրգում, ուր գնացել էր իր սեմինարիստի հետ և անվերապահորեն սկսել էր լիովին ազատագրված կյանք ապրել։ Ֆյոդոր Պավլովիչն անմիջապես դեսուդեն ընկավ և սկսեց պատրաստվել Պետերբուրգ գնալու. ի՞նչ նպատակով՝ ինքն էլ անշուշտ չգիտեր։ Գուցե իրոք գնար այն ժամանակ. բայց այդպիսի որոշում ընդունելուց հետո իսկույն գտավ, որ ճանապարհ ընկնելուց առաջ, ուժ ստանալու համար, հատկապես իրավունք ունի նորից սանձարձակ հարբեցողության գիրկը նետվելու։ Եվ ահա հենց այդ ժամանակ կնոջ հարազատները լուր ստացան, որ Ադելաիդա Իվանովնան մահացել է Պետերբուրգում։ Մի տեսակ անսպասելի էր մահացել նա, ինչ-որ ձեղնահարկում, ոմանց պատմելով՝ տիֆից, իսկ ըստ ուրիշների՝ իբրև թե քաղցից։ Ֆյոդոր Պավլովիչը հարբած էր, երբ իմացավ իր կնոջ մահը. ասում են, վազեց փողոցով մեկ և սկսեց ուրախությունից ձեռքերը երկինք բարձրացնել ու գոռալ՝ «Արդ արձակեա՛ զծառայս քո, տէ՛ր», բայց ոմանք էլ ասում են, թե նա հոնգուր-հոնգուր լաց եղավ երեխայի պես, և այնքան, որ մարդիկ նույնիսկ խղճալով էին նայում նրան, հակառակ նրա հանդեպ զգացած իրենց ամբողջ զզվանքին։ Շատ հնարավոր է, որ և՛ մեկն է ճիշտ, և՛ մյուսը, այսինքն և՛ ուրախացել է ազատություն ստանալով, և՛ լաց է եղել իրեն ազատագրողի համար. երկուսն էլ միաժամանակ։ Մեծ մասամբ մարդիկ, նույնիսկ չարագործները, շատ ավելի միամիտ են ու պարզասիրտ, քան մենք ենթադրում ենք առհասարակ։ Է՜հ, մենք ինքներս էլ այդպես ենք։

II

ԱՌԱՋԻՆ ՈՐԴՈՒՑ ԳԼՈՒԽՆ ԱԶԱՏՈՒՄ Է

Անշուշտ կարելի է պատկերացնել, թե ինչպիսի դաստիարակ ու հայր կարող է լինել այդպիսի մարդը։ Որպես հայր նա արեց հենց այն, ինչ սպասելի էր նրանից, այսինքն մի անգամ ընդմիշտ լքեց Ադելաիդա Իվանովնայից ունեցած իր երեխային, ոչ թե փոքրիկի նկատմամբ չարանալով և կամ

վիրավորված ամուսնու ինչ-որ զգացմունքներից դրդված, այլ պարզապես այն պատճառով, որ բոլորովին մոռացավ նրան։ Մինչ բոլորի գլուխն էր տանում իր արցունքներով ու գանգատներով և միաժամանակ իր տունը վերածում անառակության բույնի, տան հավատարիմ ծառա Գրիգորին իր խնամքի տակ վերցրեց երեք տարեկան Միտյային։ Եթե այն ժամանակ Գրիգորին հոգ չտաներ նրան, գուցե երեխայի շապիկն անգամ փոխող մի մարդ չգտնվեր։ Ըստ որում այնպես պատահեց, որ երեխայի մոր կողմից ազգականները կարծես թե նույնպես մոռացան նրան սկզբում։ Պապը, այսինքն Ադելաիդա Իվանովնայի հայրը՝ պարոն Միուսովն, այն ժամանակ մահացել էր արդեն, նրա այրին՝ Միտյայի տատը, որ Մոսկվա էր փոխադրվել, ծանր հիվանդ էր, իսկ նրա աղջիկներն ամուսնացել էին, այնպես որ Միտյային վիճակվեց գրեթե մի ամբողջ տարի մնալ Գրիգորիի խնամքին և նրա հետ ապրել ծառաներին հատկացված խրճիթում։ Սակայն եթե նույնիսկ հայրիկը հիշեր տղային (անշուշտ չէր կարող անտեղյակ լինել նրա գոյությանը), միևնույն է՝ դարձյալ խրճիթ կուղարկեր նրան, քանի որ երեխան կարող էր այսպես թե այնպես արգելք լինել նրա ցոփ կյանքին։ Բայց պատահեց, որ Փարիզից վերադարձավ հանգուցյալ Ադելաիդա Իվանովնայի զարմիկը՝ Պյոտր Ալեքսանդրովիչ Միուսովը, որ հետագայում երկար տարիներ ապրեց արտասահմանում, բայց այն ժամանակ դեռ շատ երիտասարդ էր։ Նա Միուսովների գերդաստանում հատկապես աչքի էր ընկնում որպես լուսավորյալ մարդ, մայրաքաղաքային և արտասահմանյան բարքերով, ըստ որում իր ամբողջ կյանքում մնաց եվրոպացի, իսկ կյանքի վերջին տարիներին դարձավ քառասնական և հիսնական թվականների ոգով լիբերալ։ Իր գործունեության ընթացքում շփվել էր դարաշրջանի բազմաթիվ ամենալիբերալ մարդկանց հետ՝ թե՛ Ռուսաստանում, թե՛ արտասահմանում, անձամբ ճանաչել էր Պրուդոնին ու Բակունինին և իր թափառական կյանքի վերջում հատկապես սիրում էր հիշել ու պատմել քառասունութ թվականի Փարիզի փետրվարյան հեղափոխության երեք օրերի մասին, ակնարկելով, որ ինքն էլ համարյա մասնակցել է բարիկադային կռիվներին։ Դա նրա երիտասարդության ամենաբերկրալի հիշատակներից մեկն էր։ Նա իր

անկախ սեփականություն ուներ՝ մոտ հազար հոգի, ըստ նախկին տոմարակալության։ Նրա հիանալի կալվածը գտնվում էր մեր փոքր քաղաքի անմիջական մերձակայքում և սահմանակից էր մեր նշանավոր վանքի հողերին։ Դեռ ամենաբքտասարդ տարիներին, հենց որ ժառանգություն ստացավ, Պյոտր Ալեքսանդրովիչն իսկույն մի անվերջանալի դատավարություն սկսեց մեր վանքի դեմ, գետում ձուկ որսալո՞ւ թե անտառում ծառ կտրելու իրավունքի վերաբերյալ՝ ստույգ չգիտեմ, բայց «կղերականների» դեմ դատավարություն սկսելը նույնիսկ իր պարտքը համարեց, իբրև քաղաքացի և լուսավորյալ մարդ։ Լսելով ամեն ինչ Ադելաիդա Իվանովնայի մասին, որին, բնական է, հիշում էր ու մի ժամանակ նույնիսկ հատուկ ուշադրությամբ էր վերաբերվել, և իմանալով, որ նրանից մնացել է Միտյան, Պյոտր Ալեքսանդրովիչը խառնվեց այդ գործի մեջ, հակառակ Ֆյոդոր Պավլովիչի հանդեպ զգացած իր ամբողջ երիտասարդական վրդովմունքին ու արհամարհանքին։ Ահա այս առիթով նա առաջին անգամ ծանոթացավ Ֆյոդոր Պավլովիչի հետ։ Ուղղակի հայտնեց նրան, որ ինքը կցանկանար հանձն առնել երեխայի դաստիարակությունը։ Հետագայում նա երկար ժամանակ պատմում էր, իբրև բնորոշ մի գիծ, թե երբ ինքը սկսել էր Միտյայի մասին խոսել, Ֆյոդոր Պավլովիչն այնպիսի տեսք էր ընդունել մի պահ, որ իբր թե բոլորովին չի հասկանում՝ այդ ի՞նչ երեխայի մասին է խոսքը, և նույնիսկ կարծես զարմացել էր, թե ինքը մի տղա ունի տան մեջ մի անկյունում։ Եթե Պյոտր Ալեքսանդրովիչի պատմածը կարող էր չափազանցություն լինել, համենայն դեպս ճշմարտության նման մի բան էլ պետք է պարունակեր իր մեջ։ Իրոք, Ֆյոդոր Պավլովիչն իր ամբողջ կյանքում սիրում էր ձևանալ, հանկարծ մի անսպասելի դեր խաղալ ձեր առաջ, և խնդիրն այն է, որ երբեմն առանց որևէ անհրաժեշտության էր անում այդպես, նույնիսկ ուղղակի ի վնաս իրեն, ինչպես օրինակ տվյալ դեպքում։ Բնավորության այս գիծը, սակայն, հատուկ է բազմաթիվ ու բազմաթիվ մարդկանց, նույնիսկ շատ խելացիներին, և ոչ թե միայն Ֆյոդոր Պավլովիչի նման մեկին։ Պյոտր Ալեքսանդրովիչը եռանդով վարեց գործը և նույնիսկ երեխայի խնամակալ նշանակվեց (Ֆյոդոր Պավլովիչի հետ միասին), որովհետև մայրն այնուամենայնիվ մի փոքր սեփականություն էր թո-

ղել որդուն՝ մի տուն ու կալվածք։ Միտյային իրոք տարուն այդ քեռու մոտ։ Բայց քեռին սեփական ընտանիք չուներ, իսկ ինքն էլ, իր կայքերից ստանալիք դրամական եկամուտները կարգի բերելուց և ապահովելուց հետո, շտապեց նորից Փարիզ գնալ երկար ժամանակով, ուստի երեխային հանձնեց իր ազգականուհիներից մեկին՝ Մոսկվայում ապրող մի տիրուհու։ Այնպես պատահեց, որ Պյոտր Ալեքսանդրովիչը ևս, հաստատվելով Փարիզում, մոռացավ երեխային, մանավանդ երբ վրա հասավ այն նույն փետրվարյան հեղափոխությունը, որն այնքան բորբոքեց նրա երևակայությունը և որպես անջնջելի հիշատակ մնաց նրա ամբողջ կյանքում։ Իսկ մոսկվացի տիրուհին մահացավ, և Միտյան անցավ նրա ամուսնացած դուստրերից մեկի խնամքին։ Կարծեմ հետագայում նա մի չորրորդ անգամ էլ փոխեց իր բույնը։ Դրա շուրջ երկար-բարակ չեմ խոսելու այժմ, մանավանդ որ Ֆյոդոր Պավլովիչի այդ առաջնեկի մասին դեռ շատ բան հարկ կլինի պատմել հետագայում, իսկ հիմա սահմանափակվում եմ լոկ ամենից ավելի անհրաժեշտ տեղեկություններով, առանց որոնց չեմ էլ կարող վեպն սկսել։

Նախ և առաջ, այս Դմիտրի Ֆյոդորովիչը Ֆյոդոր Պավլովիչի երեք որդիներից միակն էր, որ մեծացավ այն համոզմունքով, թե ինքն այնուամենայնիվ որոշ սեփականության տեր է և չափահաս դառնալուց հետո անկախ է լինելու։ Պատանեկության ու երիտասարդության տարիներին նա անկարգ կյանք վարեց. կիսատ թողեց ուսումը գիմնազիայում, հետո ռազմական մի դպրոց հաճախեց, ապա ընկավ Կովկաս, զինվորական աստիճանի բարձրացում ստացավ, մենամարտեց, շնորհազուրկ եղավ, նորից բարձրացում ստացավ, շատ զեղխություններ արեց և բավական շատ դրամ վատնեց։ Նախքան չափահաս դառնալը դեռ չէր սկսել Ֆյոդոր Պավլովիչից դրամ ստանալ, ուստի խբրվեց պարտքերի մեջ։ Իր հորը՝ Ֆյոդոր Պավլովիչին, առաջին անգամ տեսավ ու ճանաչեց չափահաս դառնալուց հետո միայն, երբ հատկապես եկավ մեր կողմերը՝ իր ունեցվածքի հաշիվները պարզելու նրա հետ։ Կարծեմ հենց այդ ժամանակ էլ հայրը դուր չեկավ նրան։ Երկար չմնաց հոր մոտ, շտապեց մեկնել. միայն մի որոշ գումար կարողացավ ստանալ նրանից և մի որոշ համաձայնություն կայացրեց՝ հետագայում իր կալ-

վածից ստանալիք հասույթների վերաբերյալ։ Այդ առաջին այցելությանը (հիշատակության արժանի փաստ) նա այնպես էլ չկարողացավ Ֆյոդոր Պավլովիչից իմանալ իր կալվածքի արժեքն ու հասութաբերության չափը։ Ֆյոդոր Պավլովիչն այն ժամանակ հենց միանգամից նկատեց (այս էլ պետք է հիշել), որ Միտյան չափազանցված ու սխալ պատկերացում ունի իր սեփականության մասին։ Ֆյոդոր Պավլովիչը շատ գոհ էր դրա համար, նկատի ունենալով իր հատուկ հաշիվները։ Նա լոկ այն հետևությունն արեց, որ երիտասարդը թեթևամիտ է, անզուսպ, կրքերին գերի, անհամբեր, զեղխ, և բավական է, որ առժամապես մի որևէ գումար ձեռք բերի, իսկույն կհանգըստանա, թեև, ի հարկե, կարճ ժամանակով։ Հենց այս փաստն էլ ահա սկսեց շահագործել Ֆյոդոր Պավլովիչը, այսինքն գլուխն ազատել՝ մի փոքր ողորմություն ուղարկելով նրան մերթ ընդ մերթ, առժամապես։ Եվ վերջ ի վերջո, երբ չորս տարի հետո Միտյան, համբերությունը կորցնելով, երկրորդ անգամ հայտնվեց մեր փոքրիկ քաղաքում, որպեսզի հաշիվները մի անգամ ընդմիշտ մաքրի ծնողի հետ, հանկարծ, ի մեծագույն զարմանս նրա, պարզվեց, որ բացարձակապես ոչինչ չունի այլևս, որ դժվար է նույնիսկ հաշվեհարդար կատարել, որ արդեն դրամական գումարներով վերցրել է իր ունեցվածքի արժեքը Ֆյոդոր Պավլովիչից և գուցե նույնիսկ ի՛նքը հիմա պարտք է նրան. ըստ այսինչ ու այնինչ համաձայնության, որ Միտյան ինքը ցանկացել է կայացնել այս կամ այն ժամանակ, նա այլևս իրավունք էլ չունի որևէ բան պահանջելու, և այլն, և այլն։ Երիտասարդը շշմեց, կասկածեց, որ այդ ամբողջը սուտ է ու խաբեություն, համարյա կատաղեց ու կարծես խելքն էլ կորցրեց։ Ահա հենց այս հանգամանքը հասցրեց այն աղետին, որի նկարագրությունը կազմելու է իմ այս առաջին ներածական վեպի նյութը կամ, ավելի ճիշտ, արտաքին կողմը։ Սակայն, նախքան այս վեպին անցնելը, պետք է դեռ խոսեմ նաև Ֆյոդոր Պավլովիչի մյուս երկու որդիների՝ Միտյայի եղբայրների մասին, և բացատրեմ, թե նրա՛նք որտեղից աշխարհ եկան։

III

ԵՐԿՐՈՐԴ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄՅՈՒՍ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Չորս տարեկան Միտյայից գլուխն ազատելուց հետո, Ֆյոդոր Պավլովիչը շատ շուտով ամուսնացավ երկրորդ անգամ։ Այդ երկրորդ ամուսնությունն ութ տարի տևեց։ Իր այդ երկրորդ կնոջը՝ Սոֆյա Իվանովնային, նույնպես շատ երիտասարդ մի աղջկա, նա վերցրեց ուրիշ նահանգից, որտեղ գնացել էր մանրակապալ մի գործով՝ ոմն ջհուդի ընկերակցությամբ։ Ֆյոդոր Պավլովիչը թեև խրախճանքներ էր սարքում, հարբում էր ու ցոփ կյանք վարում, բայց երբեք աչքաթող չէր անում իր դրամագլխի զետեղումը և միշտ հաջող էր կարգավորում իր գործերը, թեև, իհարկե, գրեթե միշտ էլ ստոր միջոցների դիմելով։ Սոֆյա Իվանովնան մանկությունից անոք, «որբ աղջիկ» էր, կորած-մոլորած մի սարկավագի դուստրը, որ մեծացել էր իր պառավ բարերարուհու, դաստիարակի ու տանջողի՝ գեներալ Վորոխովի մեծահարուստ այրու տանը։ Մանրամասնությունները չգիտեմ, բայց լսել եմ, որ այդ հեզ, անշար ու հնազանդ որբուհուն մի անգամ իբր թե իշեցրել են մեխին անցկացրած օղակից, որից նա կախել էր իրեն մառանում, այնքան որ ծանր է եղել դիմանալ այդ պառավի քմահաճությանն ու հարատև կշտամբանքներին, մի պառավի, որ ըստ երևույթին չար կին չէր, բայց անտանելի կամակոր էր դարձել պարապության հետևանքով։ Ֆյոդոր Պավլովիչն ամուսնություն առաջարկեց, նրա մասին հարցուփորձ արեցին և դուռը փակեցին երեսին, և ահա նա դարձյալ, տեղն ու տեղը, ինչպես առաջին ամուսնության ժամանակ, առևանգելու առաջարկ արեց որբուհուն։ Շատ ու շատ հավանական է, որ այդ աղջիկն անգամ ոչ մի գնով չէր ամուսնանա նրա հետ, եթե ճիշտ ժամանակին ավելի շատ մանրամասնություններ իմանար նրա մասին։ Սակայն տարբեր նահանգում էր տեղի ունենում այդ ամբողջը, և բացի այդ՝ ի՞նչ կարող էր հասկանալ տասնվեցամյա մի աղջնակ, որի ուշքն ու միտքն այն էր, թե ավելի լավ է ջուրն ընկնել, քան մնալ բարերարուհու մոտ։ Եվ այդպես ահա, խեղճ աղջիկը բարերարուհուն փոխարինեց բարերարով։ Ֆյոդոր Պավլովիչը ոչ մի գրոշ չստացավ այս անգամ, որովհետև գեներալի այրին զայրացավ, ոչինչ չտը-

վեց և, ավելին, երկուսին էլ անիծեց։ Բայց Ֆյոդոր Պավլովիչն այս անգամ հույս էլ չուներ օժիտ ստանալու, այլ լոկ հրապուրվել էր աղջնակի սքանչելի գեղեցկությամբ ու մանավանդ անմեղ տեսքով, որ շշմեցրել էր նրան՝ մինչ այդ կանացի կոպիտ գեղեցկությունը միայն սիրող այդ այլասերված հեշտամոլին։ «Այդ անմեղ աչուկներն ածելիի նման կտրտեցին իմ հոգին այն ժամանակ»,— ասում էր նա հետագայում՝ իրեն հատուկ նողկալի քրքիջով։ Ճիշտն ասած, այլասերված մարդու համար այդ հրապուրանքը ևս կարող էր պարզապես պագշոտ մի ցանկության արդյունք լինել։ Քանի որ կինը ոչ մի օժիտ չէր բերել, Ֆյոդոր Պավլովիչն սկսեց անտեսել նրան, և օգտվելով այն հանգամանքից, որ կինը, այսպես ասած, «մեղավոր» է իր առաջ և որ ինքը համարյա «պարանից է իջեցրել» նրան, օգտվելով նաև կնոջ արտակարգ հեզ ու հլու բնավորությունից, մինչև անգամ ոտնատակ արեց ամուսնական կյանքի ամենատարրական պատշաճությունները։ Տանը, ուղղակի կնոջ ներկայությամբ, հավաքվում էին փչացած կանայք, և ցոփ կերուխումներ էին տեղի ունենում։ Որպես հատկանշական փաստ ասեմ, որ ծառա Գրիգորին՝ մռայլ, հիմար ու կամակոր այդ խրատամոլը, որն ատել էր իր նախկին տիրուհի Ադելաիդա Իվանովնային, այս անգամ իր նոր տիրուհու կողմն էր բռնում ու պաշտպանում էր նրան՝ ծառայի համար գրեթե անթույլատրելի ձևով կշտամբելով Ֆյոդոր Պավլովիչին, և մի անգամ նույնիսկ ցաք ու ցրիվ արեց գինարբուքն ու բռնի դուրս քշեց բոլոր փչացած կանանց։ Դեռ մանկությունից ահաբեկված այդ դժբախտ կնոջ վրա հետագայում մի տեսակ կանացի նյարդային հիվանդություն եկավ, մի հիվանդություն, որ հաճախադեպ է մանավանդ գյուղացի կանանց մեջ, և որով տառապողներին կոչում են «դիվահարներ»։ Մերթ ընդ մերթ, հիստերիկ սոսկալի նոպաների հետևանքով, հիվանդը նույնիսկ գիտակցությունն էր կորցնում։ Բայց և այնպես, նա Ֆյոդոր Պավլովիչին երկու տղա պարգևեց՝ Իվանին ու Ալեքսեյին. առաջնեկը ծնվեց ամուսնության առաջին տարում, իսկ երկրորդը՝ երեք տարի հետո։ Երբ Սոֆյա Իվանովնան մահացավ, փոքրիկ Ալեքսեյի չորս տարին չէր լրացել, ու թեև տարօրինակ է, բայց գիտեմ, որ նա հետագայում իր մորը հիշում էր ամբողջ կյանքում, անշուշտ երազի նման։ Մոր մահից հետո երկու տղաներին

էլ վիճակվեց համարյա ճիշտ ու ճիշտ այն բախտը, որ վիճակվել էր առաջինին՝ Միտյային. հայրը բոլորովին մոռացավ ու երեսի վրա թողեց նրանց, և տղաներն ընկան նույն Գրիգորիի խնամքին և նույնպես նրա խրճիթում ապրեցին։ Այդ խրճիթում էլ նրանց գտավ գեներալի այրին՝ կամակոր պառավը, որ իրենց մոր բարերարուհին ու դաստիարակն էր եղել։ Նա դեռ կենդանի էր և ամբողջ ութ տարի շարունակ չէր կարողացել մոռանալ իրեն հասցված վիրավորանքը։ Իր «Սոֆյայի» օր ու ապրուստի մասին ութ տարի շարունակ ամենաստույգ տեղեկություններն էր ստացել կողմնակի աղբյուրներից, ու լսելով, թե ինչ հիվանդությամբ է նա տառապում և ինչ այլանդակություններ են տեղի ունենում նրա շուրջը, երկու կամ երեք անգամ բարձրաձայն ասել էր իր հացկատակներին. «Այդպես էլ պետք է նրան, աստվա՛ծ նրան պատժեց անշնորհակալության համար»։

Սոֆյա Իվանովնայի մահից ճիշտ երեք ամիս հետո գեներալի այրին հանկարծ անձամբ հայտնվեց մեր քաղաքում և գնաց ուղիղ Ֆյոդոր Պավլովիչի տունը։ Ընդամենը կես ժամ մնաց քաղաքում, բայց շատ բան արեց։ Երեկո էր։ Ֆյոդոր Պավլովիչը, որին պառավն ամբողջ ութ տարի չէր տեսել, հարբած դիմավորեց նրան։ Պատմում են, թե պառավն անմիջապես, հենց որ տեսավ Ֆյոդոր Պավլովիչին, առանց որևէ բացատրության երկու փառավոր, շառաչուն ապտակ իջեցրեց նրա երեսին և մազերից բռնելով երեք անգամ թափ տվեց վերից վար, հետո, առանց մի բառ ասելու, ուղիղ գնաց խրճիթ՝ երկու տղաների մոտ։ Առաջին հայացքից նկատելով, որ նրանք լվացված չեն և սպիտակեղեններն էլ կեղտոտ են, իսկույն մի ապտակ էլ իջեցրեց Գրիգորիի երեսին և հայտնեց, թե երկու տղաներին տանում է իր հետ, հետո նրանց դուրս բերեց շապիկ-վարտիքով, փաթաթեց ճամփորդական վերմակի մեջ, նստեցրեց ծածկակառք և տարավ իր քաղաքը։ Գրիգորին այդ ապտակը հանդուրժեց անձնվեր ստրուկի նման, ոչ մի կոպիտ խոսքով չդիմադրեց, պառավ տիրուհուն ուղեկցեց մինչև կառքը, խորունկ գլուխ տվեց և ամենայն լրջությամբ ասաց, որ տիրուհուն «աստված կվարձատրի որբերի համար»։ «Միևնույն է՝ դու դմբո՛ ես»,— գոռաց պառավը նրա երեսին, երբ կառքը շարժվեց։ Ֆյոդոր Պավլովիչը, ծանր ու թեթև անելով, գտավ, որ կատարվածը լավ բան էր, և հե-

տո գեներալի այրուն իր ձևական համաձայնությունը տվեց երեխաների դաստիարակության վերաբերյալ, չառարկելով ոչ մի կետի։ Իսկ իր կերած ապտակների մասին ինքը պատմեց բոլորին՝ շրջելով ամբողջ քաղաքում։

Պատահեց, որ գեներալի այրին էլ դրանից հետո շուտով մահացավ, սակայն իր կտակում հազարական ռուբլի հատկացրեց երկու փոքրիկներին՝ «նրանց ուսման համար, պայմանով, որ այդ փողերն անպատճառ ծախսվեն նրանց վրա, բայց այնպես, որ գումարը հերիքի մինչև նրանց չափահաս դառնալը, որովհետև այսքանն էլ շատ ու շատ բավական է այդպիսի երեխաների համար, իսկ եթե ուրիշ որևէ մեկը փափագում է՝ թող իր սեփական քսակը բացի» և այլն, և այլն։ Ինքս չեմ կարդացել կտակը, բայց լսել եմ, որ հենց սրա նման տարօրինակ մի բան է եղել՝ չափազանց յուրովի ձևակերպված։ Պարզվեց, սակայն, որ պառավի գլխավոր ժառանգորդը՝ նահանգի ազնվականության պարագլուխ Եֆիմ Պետրովիչ Պոլենովը բարի մարդ է։ Նամակակցելով Ֆյոդոր Պավլովիչի հետ և անմիջապես կռահելով, որ չես կարող նրանից փող պոկել նրա իսկ երեխաների դաստիարակության համար (թեև նա երբեք ուղղակի չէր մերժում, այլ միշտ այսպիսի դեպքերում ձգձգում էր պարզապես, երբեմն նույնիսկ դյուրազգաց զեղումներ անելով), Եֆիմ Պետրովիչն իր անձնական հոգածության տակ առավ որբերին և հատկապես սիրեց կրտսերին՝ Ալեքսեյին, այնպես որ տղան նույնիսկ երկար ժամանակ նրա ընտանիքում ապրեց։ Ընթերցողից խնդրում եմ, որ հենց սկզբից նկատի առնի այս պարագան։ Եվ եթե պատանիներն իրենց ստացած դաստիարակության ու կրթության համար ամբողջ կյանքում պարտական էին որևէ մեկին, ապա այդ մեկը հենց Եֆիմ Պետրովիչն էր՝ ազնվագույն և չափազանց մարդասեր մի անձնավորություն, որի նմանները հազվադեպ են։ Գեներալի այրու թողած հազարական ռուբլին նա անձեռնմխելի պահեց տղաների համար, այնպես որ, երբ նրանք չափահաս դարձան, յուրաքանչյուրի բաժինը կրկնապատկվել էր տոկոսների կուտակումով։ Իսկ նրանց կրթություն տվեց իր սեփական միջոցներով և անշուշտ հազար ռուբլուց շատ ավելի ծախսեց յուրաքանչյուրի վրա։

Դարձյալ ես հիմա մանրամասնորեն չեմ պատմի նրանց

մանկության ու պատանեկության մասին, այլ կնշեմ միայն ամենակարևոր հանգամանքները։ Մեծ եղբոր՝ Իվանի մասին հետևյալը միայն ասեմ. նա, հասակ առնելով, դառնում էր մի տեսակ մռայլ ու ինքնամփոփ պատանի, որ բնավ էլ վեհերոտ չէր, այլ դեռ տասը տարեկանից կարծես հասկացել էր, թե իրենք այնուամենայնիվ օտար ընտանիքում են մեծանում՝ օտարի ողորմածությամբ, և թե իրենց հայրն այնպիսի մի մարդ է, որի մասին խոսելն անգամ ամոթ է և այլն, և այլն։ Այս տղան շատ շուտով, համարյա մանկությունից (այդպես էին ասում համենայն դեպս) սկսել է ուսման արտակարգ ու փայլուն ընդունակություններ ցուցաբերել։ Ստույգ չգիտեմ, թե ինչպես է եղել, բայց նա հազիվ տասներեք տարեկան դարձած՝ հրաժեշտ է տվել Եֆիմ Պետրովիչի ընտանիքին, տեղափոխվել է Մոսկվայի գիմնազիաներից մեկը և ապրել մի փորձառու և այն ժամանակ նշանավոր մանկավարժի՝ Եֆիմ Պետրովիչի մանկության ընկերոջ տանը։ Իվանն ինքը հետագայում պատմում էր, որ այդ ամբողջը տեղի է ունեցել Եֆիմ Պետրովիչի, այսպես ասած, «բարի գործեր կատարելու տենչանքի» շնորհիվ. վերջինս տարվել է այն գաղափարով, որ հանճարեղ ընդունակությունների տեր տղան պետք է դաստիարակվի հանճարեղ ուսուցչի ձեռքի տակ։ Սակայն ո՛չ Եֆիմ Պետրովիչն էր այլևս կենդանի, ո՛չ էլ հանճարեղ ուսուցիչը, երբ երիտասարդը գիմնազիան ավարտեց և համալսարան մտավ։ Եֆիմ Պետրովիչը լավ չէր կարգավորել գեներալի կամակոր այրու կտակած դրամի հատկացումը տղային, ուստի, մեր երկրում անխուսափելի ձևականությունների ու քաշքշուկների պատճառով, ձգձգվեց գանձումն այդ գումարի, որ տոկոսների շնորհիվ երկու հազար էր դարձել, և համալսարանում սովորելու առաջին երկու տարիներին երիտասարդը շատ դառն օրեր տեսավ, քանի որ ստիպված էր ամբողջ այդ շրջանում իր ապրուստը հայթայթել ու սովորել միաժամանակ։ Պետք է նկատել, որ այդ տարիներին նա իր հոր հետ նամակակցելու փորձ անգամ չուզեց անել, գուցե հպարտությունից կամ նրա նկատմամբ արհամարհանքից դրդված, գուցե և ելնելով սառն, ողջամիտ դատողությունից, որ նրան թելադրում էր, թե նման հայրիկից որևէ քիչ թե շատ լուրջ օժանդակություն չի ստանա։ Այսպես թե այնպես, երիտա-

սարգը բոլորովին չկորցրեց իրեն և աշխատանք ճարեց այնուամենայնիվ. սկզբում քսան կոպեկով գասեր ավանդեց, իսկ հետո սկսեց վազել թերթերի խմբագրությունները և տասնամյակի նշումներ տալ փողոցային պատահարների մասին՝ «Ականատես» ստորագրությամբ։ Ասում են, թե այդ նշումները միշտ էլ այնպես հետաքրքիր ու զգայացունց էին գրված, որ շուտով ընդունելություն գտան, և միայն դրանով իսկ երիտասարդը ցույց տվեց իր ամբողջ գործնական ու իմացական առավելությունը մեր երկաթ ուսանողության միշտ կարիքավոր ու դժբախտ այն զանգվածի նկատմամբ, որ սովորաբար առավոտից մինչև իրիկուն քարշ է գալիս մայրաքաղաքի զանազան թերթերի և ամսագրերի դռներին, չի կարողանում որևէ ավելի լավ բան մտածել և միշտ ու միշտ կբրկնում է ֆրանսերենից թարգմանելու կամ որևէ մի գրություն արտագրելու հավիտենական խնդրանքը։ Խմբագրությունների հետ ծանոթություն հաստատելուց հետո Իվան Ֆյոդորովիչը միշտ պահպանեց իր կապերը և համալսարանի վերջին տարիներին սկսեց շատ տազանգավոր վերլուծություններ հրապարակել զանազան մասնագիտական նյութեր ընդգրկող գրքերի մասին, այնպես որ նույնիսկ հայտնի գարձավ գրական շրջանակներում։ Սակայն իր ուսումնասիրության ամենավերջին օրերին էր միայն, որ կարողացավ հանկարծ, պատահականորեն, ընթերցողների շատ ավելի լայն շրջանի հատուկ ուշադրությունը հրավիրել իր վրա, և ահա այդ ժամանակ շատ-շատերը մեկեն նկատեցին նրան ու հիշեցին հետագայում։ Դա բավական ուշագրավ մի դեպք էր։ Երբ արդեն դուրս էր եկել համալսարանից և պատրաստվում էր իր երկու հազար ռուբլով գնալ արտասահման, Իվան Ֆյոդորովիչը հանկարծ գլխավոր թերթերից մեկում տպեց տարօրինակ մի հոդված, որ մինչև անգամ ոչ-մասնագետների ուշադրությունը գրավեց։ և կարևորն այն էր, որ շոշափած նյութն քան երևույթին բոլորովին անծանոթ էր նրան, քանի որ նա բնագիտության դասընթացն էր ավարտել։ Հոդվածն անդրադառնում էր եկեղեցական դատարանի հարցին, որն այն ժամանակ բարձրացել էր ամենուրեք։ Այդ հարցի շուրջ նախապես հայտնված մի քանի կարծիք քննելուց հետո, նա արտահայտում էր նաև իր սեփական տեսակետը։ Ուշագրավը հոդվածի շեշտն էր և զարմանալիորեն անակնկալ եզրակացությունը։ Եկեղեցականներից շատերը հեղինակին անառարկելիորեն համարեցին իրենց կողմնակիցը։ Եվ հանկարծ, նրանց հետ, ոչ միայն աշխարհիկ դատարանի պաշտպանները, այլև նույնիսկ աթեիստներն սկսեցին ծափահարել իրենց կողմից։ Վերջ ի վերջո մի քանի տրատես մարդիկ եկան այն եզրակացության, որ ամբողջ հոդվածը հանդուգն մի զավեշտ ու ծաղր է պարզապես։ Այս դեպքը հիշատակում եմ հատկապես այն պատճառով, որ հոդվածն իր ժամանակին թափանցեց նաև մեր քաղաքամերձ նշանավոր վանքը, ուր առհասարակ հետաքրքրվում էին եկեղեցական դատարանի շուրջ բարձրացած հարցով, թափանցեց և կատարյալ տարակուսանք առաջացրեց։ Իսկ հեղինակի անունն իմանալով, հետաքրքրությամբ նկատեցին նաև, որ նա բնիկ մեր քաղաքից է և «հենց այդ Ֆյոդոր Պավլովիչի» որդին։ Եվ հիշում այդ ժամանակ էլ հանկարծ մեզ մոտ հայտնվեց ինքը՝ հեղինակը։

Ինչո՞ւ Իվան Ֆյոդորովիչը եկավ մեզ մոտ. հիշում եմ, դեռ այն ժամանակ էլ ես ինձ այդ հարցն էի տալիս՝ համարյա ինչ-որ անհանգստությամբ։ Այնքան ճակատագրական այդ այցելությունը, որից ծայր առան բազում հետևանքներ, ինձ համար հետագայում երկար ժամանակ անբացատրելի էր մնում։ Առհասարակ տարօրինակ էր, որ այնքան գիտուն, այնքան հարգարժան ու երևութապես այնքան զգուշավոր երիտասարդը հանկարծ եկավ այցելելու այդպիսի խայտառակ մի տուն, այդպիսի հոր մոտ, որն իր ամբողջ կյանքում անտեսել էր, չգիտեր ու չէր հիշում նրան և անշուշտ ոչ մի դեպքում փող չէր տա, եթե որդին խնդրեր, թեև միշտ էլ վախենում էր, որ Իվանն ու Ալեքսեյը նույնպես որևէ ժամանակ եկան ու փող կուզեն։ Եվ ահա երիտասարդը բնակվում է այդպիսի հոր տանը, նրա հետ ապրում մեկ ամիս, երկու ամիս, և այնպես հաշտ ու խաղաղ են նրանք, որ բերանդ բաց է մնում։ Վերջին հանգամանքը հատկապես զարմացրեց ոչ միայն ինձ, այլև շատ-շատերին։ Պյոտր Ալեքսանդրովիչ Միուսովը՝ Ֆյոդոր Պավլովիչի առաջին կնոջ հեռավոր ազգականը, որի մասին արդեն խոսել եմ, այն ժամանակ պատահաբար մեզ մոտ էր նորից, իր քաղաքամերձ կալվածքում. այցելության էր եկել Փարիզից, որտեղ արդեն մշտապես հաստատվել էր։ Հիշում եմ, հենց նա բոլորից ավելի զարմացավ, ծանոթանալով իր ծայրահեղ հետաքրքրությունը շարժած երիտասարդին, որի

հետ երբեմն գիտելիքների մենամարտի էր բռնվում, ներքին ցավ զգալով նրա առավելությունից։ «Հպարտ է,— ասում էր նա մեզ այն ժամանակ Իվանի մասին,— երբեք կոպեկի կարոտ չի մնա, հիմա էլ փող ունի արտասահման գնալու։ Էլ ի՞նչ գործ ունի այստեղ։ Բոլորը հասկանում են, որ նա փողի համար չի եկել, որովհետև մեկ է՝ հայրը չի տա։ Խմել ու անառակություններ անել չի սիրում, բայց և այնպես ծերունին չի էլ կարողանում առանց նրան շունչ քաշել՝ այնքան են մերվել իրար»։ Դա ճիշտ էր. երիտասարդը նույնիսկ ակնհայտ ազդեցություն ուներ ծերունու վրա, որ կարծես սկսեց մեկ-մեկ անսալ իր որդուն, թեև հաճախ չափազանց քմահաճ էր լինում, երբեմն էլ չարակամորեն քմահաճ. մինչև անգամ սկսեց ավելի վայելուչ պահել իրեն մերթ ընդ մերթ...

Հետո միայն պարզվեց, որ Իվան Ֆյոդորովիչը եկել էր մասամբ իր մեծ եղբոր՝ Դմիտրի Ֆյոդորովիչի խնդրանքով, նրա մի գործի առնչությամբ։ Կյանքում առաջին անգամ իր մեծ եղբորը տեսավ հենց այդ նույն այցելության ժամանակ, թեև դեռ Մոսկվայում սկսել էր նամակակցել նրա հետ մի կարևոր խնդրի շուրջ, որն ավելի Դմիտրի Ֆյոդորովիչին էր վերաբերում։ Թե ինչ էր այդ խնդիրը, ընթերցողը մանրամասնորեն կիմանա, երբ հասնի դրա ժամանակը։ Այդուհանդերձ, երբ նույնիսկ այդ մասնավոր պարագան էլ գիտեի արդեն, Իվան Ֆյոդորովիչը դեռ ինձ թվում էր առեղծվածային մի անձնավորություն, իսկ նրա այցելությունը այնպես էլ մնում էր անբացատրելի։

Ավելացնեմ նաև, որ Իվան Ֆյոդորովիչն այդ օրերին հանդես էր գալիս իբրև միջնորդ ու հաշտարար իր հոր ու իր մեծ եղբոր միջև, որ մի մեծ կռիվ էր սարքել հոր դեմ և նույնիսկ դատական գործ էր հարուցել։

Այս ընտանիքը, կրկնում եմ, կյանքում առաջին անգամ ի մի էր եկել այդ օրերին, և դրա որոշ անդամներն առաջին անգամ տեսնում էին իրար։ Միայն կրտսերը՝ Ալեքսեյ Ֆյոդորովիչը, արդեն մի տարի է, ինչ մեզ մոտ էր ապրում, ուստի երեք եղբայրներից առաջինն էր, որ եկել էր մեր քաղաքը։ Ահա հենց այս Ալեքսեյի մասին ամենից ավելի եմ դժվարանում խոսել իմ այս նախաբանում, վեպի մեջ նրան ասպարեզ հանելուց առաջ։ Բայց հարկավոր է նրա մասին ևս

ներածական խոսք ասել, գոնե կանխօրոք բացատրելու համար շատ տարօրինակ մի հանգամանք, այն է՝ վեպի առաջին իսկ դրվագից ստիպված եմ ընթերցողների առաջ իմ ապագա հերոսին ներկայացնել նորընծայի սքեմով։ Այո, այն ժամանակ արդեն մի տարի էր, ինչ նա ապրում էր մեր վանքում և կարծես պատրաստվում էր ցկյանս փակվել այնտեղ։

IV

ԵՐՐՈՐԴ ՈՐԴԻՆ՝ ԱԼՅՈՇԱՆ

Այն ժամանակ նա ընդամենը քսան տարեկան էր (միջնակ եղբայրը՝ Իվանը, քսանչորսի մեջ էր, իսկ մեծ եղբայրը՝ Դմիտրին՝ քսանութի մեջ)։ Նախ և առաջ հայտարարում եմ, որ այս պատանին, Ալյոշան, բնավ մոլեռանդ չէր և, գոնե իմ կարծիքով, մինչև անգամ միստիկ չէր։ Նախօրոք հայտնեմ իմ լրիվ կարծիքը. նա պարզապես կանխահաս մարդասեր էր, և եթե ընտրել էր վանական կյանքի ուղին, ապա լոկ այն պատճառով, որ տվյալ շրջանում ա՛յդ էր միայն հուզել նրան և, այսպես ասած, իդեալական մի ելք էր բացել՝ աշխարհիկ շարության խավարից դեպի սիրո լույսը մաքառող նրա հոգու առաջ։ Եվ այդ ուղին նրան հուզեց, որովհետև, իր կարծիքով, այնտեղ հանդիպեց արտակարգ մի էակի՝ մեր վանքի նշանավոր սրբահայր Զոսիմային, որին կապվեց իր անհագ սրտի առաջին ջերմ սիրո ամբողջ զորությամբ։ Սակայն ես չեմ ժխտում, որ այդ տարիքին էլ արդեն նա շատ տարօրինակ էր և այդպիսին էր եղել նույնիսկ օրորոցից սկսած։ Ի դեպ, ինչպես ասել եմ արդեն, Ալյոշան դեռ չորս տարեկան էլ չկար, երբ կորցրեց մորը, բայց հիշում էր նրան իր ամբողջ կյանքում, հիշում էր նրա դեմքը, նրա գգվանքը, «կարծես կենդանի կանգնած է իմ առաջ»։ Այդպիսի հիշատակները, ինչպես հայտնի է բոլորին, կարող են համենալ նույնիսկ ավելի վաղ տարիքից, անգամ երկու տարեկանից, բայց լոկ իբրև լուսավոր կետեր, որոնք ասես խավարից դուրս են ցայտում ամբողջ կյանքի ընթացքում, իբրև մի փոքրիկ անկյուն՝ պոկված հսկա մի նկարից, որն ամբողջովին խունացել է ու աներևութացել, այդ փոքրիկ անկյունից բացի։ Ճիշտ այդպես էր հիշում Ալյոշան իր մորը. ամառային խաղաղ մի երեկո, բաց

լուսամուտ, մայր մտնող արևի շեղ ճառագայթները (հենց այդ շեղ ճառագայթներն ամենից ավելի վառ էին տպավորվել), սենյակի անկյունում սրբապատկեր՝ վառվող կանթեղի ետև, իսկ սրբապատկերի առաջ՝ ծնկաչոք հեծկլտացող, ասես հիստերիկ ճչացող ու աղաղակող իր մայրը, որ երկու ձեռքով բռնել է իրեն, պինդ գրկել է ցավեցնելու չափ և իր համար աղոթում է աստվածածնին, երկու ձեռքով գրկատարած մեկնում է իրեն դեպի սրբապատկերը, ասես աստվածածնի հովանուն հանձնելու... և հանկարծ ներս է վազում ահաբեկված դայակն ու խլում է իրեն մոր գրկից։ Ահա՛ պատկերը։ Ալյոշան հիշում էր նաև մոր դեմքն այդ վայրկյանին. ասում էր, որ դա մոլեգնահար, բայց գեղեցիկ դեմք էր, դատելով իր հիշողության մեջ պահպանված տպավորությունից։ Բայց նա հազիվ թե օրևէ մեկին պատմում էր այդ հիշատակը։ Մանկության ու պատանեկության տարիներին նա դյուրահաղորդ տղա չէր, նույնիսկ սակավախոս էր, բայց ոչ թե ուրիշին չվստահելու, ամաչկոտության կամ մռայլ ու անմարդամոտ լինելու հետևանքով, այլ ճիշտ հակառակը. մի տարբեր բան էր դրա պատճառը, ասես ներքին մի հոգս՝ զուտ անձնական, ուրիշներին չվերաբերող, բայց նրա համար այնքան կարևոր, որ դրանով տարված՝ կարծես մոռանում էր ուրիշներին։ Սակայն նա սիրում էր մարդկանց. թվում էր, թե իր ամբողջ կյանքում ապրում էր մարդկանց լրիվ հավատալով, և սակայն ոչ ոք նրան երբևիցե պարզունակ կամ միամիտ չէր համարում։ Նրա մեջ կար մի բան, որ շրջապատին անմիջապես թելադրում էր (և այդպես շարունակվեց նրա ամբողջ կյանքում), թե նա չի ուզում դատավոր լինել մարդկանց գլխին, հանձն չի առնի մեղադրանքներ կարդալ և ոչ ոքի չի դատապարտի ոչ մի բանի համար։ Մինչև իսկ թվում էր, թե նա ամեն ինչ ընդունում է առանց դույզն մեղադրանքի, թեև հաճախ շատ դառնորեն տխրելով։ Եվ այն աստիճան, որ ոչ ոք չէր կարող նրան զարմացնել կամ վախեցնել, նույնիսկ պատանեկան ամենավաղ տարիքին։ Քսան տարեկան էր, երբ եկավ հոր տունը, որ ուղղակի զարելի ապականության մի բույն էր, և նա, առաքինի ու մաքուր տղա, լռելյայն մեկուսանում էր պարզապես, երբ անտանելի էր լինում նայել այլանդակություններին, բայց արհամարհանքի կամ դատապարտության նշույլն անգամ ցույց չէր տալիս որևէ մեկի հանդեպ։ Իսկ հայրը, որ մի ժամանակ ուրիշների հաշվին էր տպրել, ուստի վիրավորանքի նկատմամբ շատ զգայուն մարդ էր, սկզբում կասկածանքով ու մռայլ դիմավորեց նրան (այսինքն թե՝ «շատ է բերանը փակ պահում և շատ է ինքնիրեն մտածում»), սակայն շուտով, հազիվ մի երկու շաբաթ անց, սկսեց ասսկալի հաճախ գրկել ու համբուրել նրան, ճիշտ է՝ հարբածի աքցունքներով, գինովության դյուրազգաց վիճակում, այնուամենայնիվ ակնհայտորեն անկեղծ ու խորունկ սեր զգալով որդու հանդեպ, այնպիսի սեր, ինչպիսին նրա նման մարդը երբեք չի կարող զգալ որևէ մեկի նկատմամբ...

Եվ առհասարակ բոլորն էլ սիրում էին այս պատանուն՝ ուր էլ գնար, ամենավաղ մանկությունից սկսած։ Երբ նա հայանվեց իր բարերար ու գաստիարակ Եֆիմ Պետրովիչ Պոլենովի տանը, այնպես գրավեց այդ ընտանիքի բոլոր անդամներին, որ նրան ուղղակի իբրևց հարազատ զավակի պես ընդունեցին։ Ալյոշան այդ տունը մտավ այնքան մատաղ տարիքում, երբ երեխան բոլորովին չի կարող նենգ ու խորամանկ հաշիվներ ունենալ կամ հաճոյանալու և դուր գալու արվեստով պարտադրել, որ սիրեն իրեն։ Այնպես որ իր նկատմամբ հատուկ սեր առաջացնելու շնորհը բնականորեն ու ինքնաբերաբար ուներ իր մեջ, այսպես ասած հենց իր բնության մեջ։ Նույնն էր նաև դպրոցում, թեև թվում էր, թե նա հենց այն երեխաներից է, որոնք իրենց վրա հրավիրում են ընկերների անվստահությունը. երբեմն ծաղրը, մինչև իսկ ատելությունը։ Նա, օրինակ, մտասույզ էր լինում հաճախ ու կարծես մեկուսանում էր։ Մանկությունից սկսած սիրում էր մի անկյուն քաշվել ու գիրք կարդալ, և սակայն ընկերներն էլ այնքան համակրեցին նրան, որ դպրոցում բոլորի սիրելին եղավ մշտապես։ Հազվադեպ էր չարաճճիություն անում, նույնիսկ հազվադեպ էր զվարթ լինում, բայց բոլորն էլ, նայելով նրան, իսկույն տեսնում էին, որ դա ինչ-որ մռայլության հետևանքը չէ բնավ, և որ, ընդհակառակը, նա հավասարակշիռ ու պայծառ տղա է։ Երբեք չէր ուզում աչքի ընկնել իր տարեկիցների մեջ։ Գուցե հենց այդ պատճառով էլ երբեք ոչ ոքից չէր վախենում, և տղաները անմիջապես հասկացան, որ նա բնավ չի հպարտանում իր անվեհերությամբ, այլ այնպես է պահում իրեն՝ կարծես չի էլ գլխի ընկնում, թե ինքը համարձակ է և անահ։ Վիրավորանքները

երբեք չէր հիշում։ Պատահում էր, որ վիրավորանք կրելուց մեկ ժամ հետո պատասխանում էր վիրավորողի տված հարցին կամ ինքն էր սկսում խոսել նրա հետ, այնպիսի դյուրավստահ ու պայծառ արտահայտությամբ, որ կարծես նրանց միջև ոչինչ չէր եղել։ Եվ այդպես էր վարվում՝ ոչ թե վիրավորանքը պատահաբար մոռացած կամ դիտմամբ ներած լինելու երևույթով, այլ պարզապես վիրավորանք չէր համարում այն, ինչ եղել է, և դա ուղղակի հմայում ու գերում էր տղաներին։ Նրա բնավորության մեջ կար միայն մի գիծ, որի պատճառով բոլոր դասընկերները, գիմնազիայի ամենացածր դասարանից մինչև ամենաբարձրը, մշտապես ցանկություն էին ունենում ձեռք առնելու նրան, բայց ոչ թե չարախնդությունից մղված, այլ որովհետև դա նրանց զվարճություն էր պատճառում։ Վայրի, մոլեգին ամոթխածությունն ու անարատությունն էր այդ գիծը։ Նա չէր կարող լսել որոշ խոսքեր ու որոշ խոսակցություններ կանանց մասին։ Այդ «որոշ» խոսքերն ու խոսակցությունները դժբախտաբար անկարելի է արմատախիլ անել դպրոցներից։ Հոգով ու սրտով մաքուր տղաները, որոնք համարյա դեռ երեխաներ են, շատ հաճախ սիրում են խոսել այնպիսի բաներից, իրար մեջ շշնջալով ու նույնիսկ բարձրաձայն պատմել այնպիսի երևույթների ու պատկերների մասին, որոնց շուրջ զինվորներն անգամ հազվադեպ են խոսք բացում։ Ավելին, զինվորներն իսկ չգիտեն ու չեն հասկանում այդ տեսակի շատ բաներ, որոնք արդեն հայտնի են մեր մտավորական ու բարձր դասերի այնքան մատղաշ երեխաներին։ Դրա մեջ, իհարկե, դեռ բարոյական այլասերում չկա, դեռ չկա նաև իսկական, այլանդակ, ներքին անամոթություն, բայց կա դրա արտաքին երևույթը, և հենց դա է, որ նրանք հաճախ համարում են նրբավարի, ընտիր, արիաշունչ և օրինակման արժանի մի բան։ Տեսնելով, որ «Ալյոշկա Կարամազովն» իսկույն մատով փակում է ականջները, երբ սկսում են խոսել «դրա մասին», նրանք երբեմն դիտմամբ խմբվում էին նրա շուրջը և, բռնի հեռացնելով ձեռքերը, երկու կողմից կեղտոտ խոսքեր էին գոռում ուղիղ ականջների մեջ, իսկ նա մաքառում էր, նստում հատակին, պառկում, աշխատում թաքնվել, և ոչ մի խոսք չէր ասում, չէր նախատում, լռելյայն տանում էր վիրավորանքը։ Բայց ի վերջո նրան հանգիստ թողեցին և այլևս չծաղրեցին՝ «աղջիկ» ասելով, ավելին, այդ հարցում կարեկցանքով սկսեցին նայել նրան։ Ի դեպ, նա միշտ էլ դասարանի լավագույն սովորողներից է եղել, բայց երբեք չի եղել առաջինը։

Եֆիմ Պետրովիչի մահից հետո Ալյոշան երկու տարի ևս հաճախեց նահանգային գիմնազիան։ Անմխիթար այրին, ամուսնու մահից գրեթե անմիջապես հետո, երկար ժամանակով գնաց Իտալիա, իր հետ տանելով ամբողջ ընտանիքը, որ միայն իգական սեռի անձերից էր բաղկացած։ Իսկ Ալյոշային վիճակվեց ապրել ինչ-որ երկու տիկինների՝ Եֆիմ Պետրովիչի հեռավոր ազգականների մոտ, որոնց երբեք չէր տեսել։ Բայց թե ինչ պայմաններով էր ապրելու նրանց տանը, ինքն էլ չգիտեր։ Նրան շատ բնորոշ էր նաև այդ գիծը՝ երբեք չէր մտահոգվում, թե ո՞ւմ միջոցներով է ապրում։ Այդ առումով նա կատարյալ հակոտնյան էր իր ավագ եղբոր՝ Իվան Ֆյոդորովիչի, որ համալսարանական առաջին երկու տարիներն անց էր կացրել կարիքի մեջ, սեփական աշխատանքով պահելով իր գոյությունը, և որ մանուկ հասակից, բարերարի տանը, դառնորեն զգացել էր, թե ապրում է ուրիշի հաշվին։ Սակայն, ինձ թվում է, Ալեքսեյի բնավորության այս տարօրինակ գիծը չէր կարելի խիստ դատապարտել, որովհետև, այդ առնչությամբ հարց ծագելու դեպքում, նրան փոքր-ինչ ճանաչողն անմիջապես համոզվում էր, թե Ալեքսեյն այն մի տեսակ կրոնախև պատանիներից է, որոնք եթե հանկարծ մի ամբողջ դրամագլխի էլ տեր դառնան՝ առանց տատանվելու կտան իրենց հարստությունը առաջին իսկ խնդրողին, կա՛մ բարի գործի համար, կա՛մ էլ գուցե պարզապես հավատալով ճարպիկ մի առավ-փախավի խոսքերին։ Եվ առհասարակ նա կարծես բոլորովին չգիտեր դրամի արժեքը, անշուշտ ոչ թե տառացի իմաստով։ Երբ նրան գրպանի փող էին տալիս, մի բան, որ ինքը երբեք չէր խնդրում, նա կա՛մ շաբաթներով չէր իմանում, թե ինչ անի այդ փողը, և կամ սոսկալի անհոգ էր լինում և մի վայրկյանում քամուն էր տալիս ունեցածը։ Հետագայում Պյոտր Ալեքսանդրովիչ Միուսովը, դրամի և բուրժուական ազնվության հարցում շատ փափկանկատ մի մարդ, Ալյոշային ուշադիր զննելուց հետո մի անգամ հետևյալ նշանակալից կարծիքը հայտնեց. «Ահա թերևս միակ մարդն աշխարհում, որին կարող եք հանկարծ մենակ և առանց փողի թողնել միլիոնանոց անծանոթ քաղաքի հրապարակում,

և նա ոչ մի կերպ չի կորչի, չի մեռնի քաղցից ու ցրտից, որովհետև վայրկենապես կկերակրեն նրան, վայրկենապես կպատսպարեն, իսկ եթե չպատսպարեն էլ, ինքը վայրկենապես ապաստան կգտնի, և դա ոչ մի ճիգ և ոչ մի ստորացում չի պահանջի նրանից, իսկ պատսպարողը ոչ մի նեղություն չի կրի։ այլ գուցե, ընդհակառակը, բավականություն կհամարի»։

Գիմնազիայում նա չավարտեց դասընթացը։ Դեռ մի ամբողջ տարի ուներ սովորելու, երբ հանկարծ հայտնեց տիկիններին, թե գնում է հոր մոտ՝ իր մտքում ծագած մի խնդրի առնչությամբ։ Նրանք շատ ափսոսացին և չէին ուզում բաց թողնել տղային։ Ճանապարհածախսը մեծ բան չէր, և տիկինները թույլ չտվին, որ նա գրավ դնի իր ժամացույցը՝ այն նվերը, որ բարերարի ընտանիքը տվել էր արտասահման գնալուց առաջ, այլ առատորեն ապահովեցին նրան դրամով, նույնիսկ նոր հագուստով ու սպիտակեղենով։ Սակայն նա ետ տվեց դրամի կեսը, ասելով, որ ուզում է անպայման երրորդ կարգով ճամփորդել։ Հասնելով մեր քաղաքը, նա ուղղակի ոչինչ չպատասխանեց հոր առաջին հարցուփորձին՝ «Ինչո՞ւ վերկացար եկար առանց ուսումդ ավարտելու», և ասում են, թե արտակարգ մտախոհ տեսք ուներ։ Շուտով պարզվեց, որ իր մոր գերեզմանն էր որոնում։ Նույնիսկ ինքն է այն ժամանակ խոստովանել, թե եկել է հենց միայն այդ նպատակով։ Բայց հազիվ թե միայն այդ լիներ նրա գալու ամբողջ պատճառը։ Ամենից հավանականն այն է, որ ինքն էլ այդ ժամանակ չգիտեր և ոչ մի կերպ չէր կարող բացատրել, թե ինչ է այն բանը, որ կարծես հանկարծ բարձրացել էր իր հոգու խորքից և անդիմադրելիորեն մղել էր ընթանալու մի նոր, անծանոթ, բայց արդեն անխուսափելի ճանապարհով։ Ֆյոդոր Պավլովիչը չէր կարող նրան ցույց տալ, թե որտեղ է թաղել իր երկրորդ կնոջը, որովհետև, դագաղի վրա հող լցնելուց հետո, երբեք չէր այցելել նրա գերեզմանը և երկար տարիների ընթացքում բոլորովին մոռացել էր, թե ո՞րտեղ էին նրան թաղել ժամանակին...

Ի միջի այլոց, Ֆյոդոր Պավլովիչը երկար ժամանակ բացակայել էր մեր քաղաքից։ Իր երկրորդ կնոջ մահից երեքչորս տարի հետո մեկնել էր Ռուսաստանի հարավը և ի վերջո հայտնվել էր Օդեսայում, ուր շարունակաբար ապրել էր

մի քանի տարի։ Սկզբում ծանոթացել էր, ինչպես ինքն էր ասում, «շատ-շատ ջհուդների, ջհուդուհիների, ջհուդիկների և ջհուդի ձագերի հետ», և վերջ ի վերջո ընդունելություն էր գտել ոչ միայն ջհուդների, «այլև հրեաների մոտ»։ Պետք է ենթադրել, որ կյանքի հենց այդ շրջանում էր նա զարգացրել փող վաստակելու և կուտակելու իր հատուկ ընդունակությունը։ Վերջնականապես մեր քաղաքը վերադարձավ Ալյոշայի գալուց ընդամենը երեք տարի առաջ։ Նախկին ծանոթների աչքին նա սոսկալի ծերացած երևաց, թեև բնավ էլ ծերունի չէր տակավին։ Իրեն պահում էր ոչ թե ավելի ազնիվ, այլ մի տեսակ ավելի անպատկառ։ Նախկին խեղկատակը, օրինակ, ուրիշներին խեղկատակ դարձնելու լկտի պահանջ էր ցուցաբերում։ Իգական սեռի հետ այլանդակություններ անել սիրում էր ոչ թե պարզապես առաջվա նման, այլ կարծես նույնիսկ ավելի նողկալիորեն։ Շուտով բազմաթիվ նոր գինետներ հիմնեց նահանգում։ Երևում էր, որ գուցե հարյուր հազար ռուբլի ունի կամ էլ դրանից մի քիչ պակաս։ Քաղաքի և նահանգի բնակիչներից շատերն իսկույն նրանից պարտք վերցրին, անշուշտ, ամենահաստատ գրավականներ տալով։ Իսկ վերջերս նա մի տեսակ լխկել էր, սկսել էր կորցնել հավասարակշռությունը, ինքն իրեն հաշիվ տալու ունակությունը, նույնիսկ ընկել էր մի տեսակ թեթևամտության մեջ, մի բան սկսում էր և ուրիշ բանով վերջացնում, կապերը բաց էր թողել և ավելի ու ավելի հաճախ էր հարբում։ Եվ եթե չլիներ միշտ նույն ծառան՝ Գրիգորին, որ այն ժամանակ նույնպես կարգին ծերացել էր և երբեմն նրան հետևում էր համարյա դաստիարակի նման, Ֆյոդոր Պավլովիչը գուցե չկարողանար խուսափել մեծ գլխացավանքներից։ Ալյոշայի գալը կարծես նրա վրա ազդեց նույնիսկ բարոյական առումով, կարծես այդ վաղաժամ ծերունու մեջ զարթնեց մի բան, որ արդեն վաղուց էր խամրել նրա հոգում։ «Դու գիտե՞ս,— ասում էր նա հաճախ ուշադիր նայելով Ալյոշային,— որ նման ես նրան՝ դիվահարին»։ Այդպես էր կոչում իր հանգուցյալ կնոջը՝ Ալյոշայի մորը։ Գրիգորին էր, որ վերջապես Ալյոշային ցույց տվեց «դիվահարի» գերեզմանը։ Տարավ նրան մեր քաղաքային գերեզմանոցը և այնտեղ, հեռավոր մի անկյունում, ցույց տվեց թույլ էժանագին, բայց կոկիկ մի դամբանաքար, որի վրա նույնիսկ արձանագրված էր հանգուցյալի անունը, կոչումը,

տարիքն ու մահվան տարեթիվը, իսկ ներքևում՝ քառատողի նման մի բան, միջին դասակարգի գերեզմանների վրա առհասարակ օգտագործվող դամբանական հին ոտանավորներից մեկը։ Ի զարմանս Ալյոշայի պարզվեց, որ այդ շիրիմը Գրիգորիի գործն է։ Նա էր դամբանաքարը դրել խեղճ «դիվահարի» գերեզմանի վրա, իր սեփական ծախսով, երբ արդեն Ֆյոդոր Պավլովիչը, որին նա բազմիցս անախորժություն էր պատճառել գերեզմանի մասին հիշեցնելով, վերջապես թողել գնացել էր Օդեսա, ձեռքը թափ տալով ոչ միայն գերեզմանների, այլև իր բոլոր հիշատակների վրա։ Ալյոշան ոչ մի հատուկ հուզմունք չցուցաբերեց իր մոր գերեզմանի առաջ. միայն լսեց Գրիգորիի հանդիսավոր ու հանգամանալից պատմությունը շիրիմի կառուցման մասին, կանգնեց գլխահակ ու հեռացավ առանց մի բառ ասելու։ Դրանից հետո, գուցե և մի տարի, չգնաց գերեզմանոց։ Բայց այդ փոքրիկ միշադեպն իր ազդեցությունը գործեց նաև Ֆյոդոր Պավլովիչի վրա, և շատ յուրահատուկ ձևով։ Նա հանկարծ հազար ռուբլի վերցրեց ու տարավ մեր վանքը՝ իր կնոջ հոգեհանգստի համար, բայց ոչ թե երկրորդ կնոջ, այսինքն Ալյոշայի մոր՝ «դիվահարի», այլ առաջինի՝ Ադելաիդա Իվանովնայի, որ նրան ծեծում էր։ Նույն օրը, երեկոյան, նա հարբեց և Ալյոշայի առաջ հայհոյեց վանականներին։ Ինքը բնավ էլ կրոնասեր մարդ չէր. գուցե իր կյանքում մի հինգ կոպեկանոց մոմ անգամ չէր վառել սրբապատկերի առջև։ Նման տիպերն անակնկալ զգացմունքների և անակնկալ մտքերի տարօրինակ պոռթկումներ են ունենում։

Արդեն ասացի, որ նա շատ էր լխկել։ Նրա դեմքն այն ժամանակ դարձել էր այնպիսի մի բան, որ ուղղակի վկայում էր ապրած կյանքի իսկական բնույթն ու էությունը։ Բացի նրա փոքր, միշտ լկտի, կասկածոտ ու հեգնող աչքերի տակ կախված երկար ու մսոտ պարկերից, բացի փոքր ու ճարպոտ երեսն ակոսող բազմաթիվ խորունկ կնճիռներից, նրա սուր ծնոտի տակ քսակի նման կախված էր նաև մեծ, մսոտ ու երկարուն աղամախնձորը, մի տեսակ նողկալիորեն վավաշոտ տեսք տալով նրան։ Ավելացրեք լափող, երկար բերանը, ուռուցիկ շրթունքներով, որոնց արանքում երևում էին սև, համարյա փտած ատամների փոքրիկ մնացորդները։ Ամեն անգամ, որ սկսում էր խոսել, լորձունքն էր շաղ տալիս։ Բայց ինքն էլ սիրում էր զվարճախոսել իր դեմքի մասին, թեև, ինձ թվում է, գոհ էր իր տեսքից։ Հատկապես մատնանշում էր իր քիթը, որ շատ մեծ չէր, բայց շատ բարակ էր և խիստ սապատավոր։ «Իսկական հռոմեական քիթ,— ասում էր նա,— ադամախնձորի հետ միասին՝ իսկական հին հռոմեացու դեմք է, անկման շրջանի պատրիկի դեմք»։ Ասես նա հպարտանում էր դրանով։

Եվ ահա, մոր գերեզմանը գտնելուց հետո, շատ չանցած, Ալյոշան հանկարծ հայտնեց հորը, որ ուզում է վանք մտնել, և որ վանականները պատրաստ են իրեն նորընծա ընդունելու։ Միաժամանակ բացատրեց, որ իր ուժեղագույն ցանկությունն է այդ, և որ հանդիսավոր թույլտվություն է խնդրում նրանից՝ որպես իր հորից։ Ծերունին արդեն գիտեր, որ վանքի մենաստանում ճգնող սրբահայր Զոսիման հատուկ տպավորություն էր գործել իր «սուսիկ-փուսիկ տղայի» վրա։

— Այդ սրբահայրն, անշուշտ, ամենից ազնիվ վանականն է նրանց մեջ,— ասաց նա, լուռ ու մտախոհ լսելով Ալյոշային, բայց համարյա բնավ չզարմանալով նրա խնդրանքի վրա։— Հը՛մ, ուրեմն ահա թե ո՛ւր ես ուզում գնալ, իմ սուսիկ-փուսիկ տղաս։— Նա կիսահարբած էր և հանկարծ ժրպտաց իր դանդաղ, կիսահարբած ժպիտով, որի մեջ սակայն որոշ նենգություն էլ կար ու գինովի խորամանկություն։— Հը՛մ, ախր ես այնպես էլ նախազգում էի, որ սրա նման մի բան է լինելու քո վերջը, կարո՞ղ ես պատկերացնել։ Դու հենց այդ ճանապարհն էիր բռնել։ Դե լավ, ասենք դու քո կլորիկ երկու հազարն ունես արդեն, այդ էլ քեզ՝ օժիտ։ Իսկ ես երբեք քեզ չեմ լքի, հրեշտակս, հիմա էլ կմուծեմ քեզ համար պետք եղած գումարն այնտեղ, եթե խնդրեն։ Իսկ որ չխնդրեն, ի՞նչ միտք ունի նրանց գլուխը տանել, ճիշտ չե՞մ ասում։ Չէ՞ որ դու դեղձանիկի նման ես փող ծախսում, շաբաթը երկու հատիկ... Հը՛մ։ Գիտե՞ս, մի վանքի մոտ քաղաքամերձ մի ավան կա, և այնտեղ ամեն մարդ գիտե, որ ավանում միայն «վանականների կանայք են ապրում», այդպես են կոչում նրանց. մի երեսուն կին կլինի կարծեմ... Ես եղել եմ այնտեղ, և հետաքրքրական է, գիտե՞ս, իհարկե իր տեսակի մեջ, այլազանության իմաստով։ Վատը միայն այն է, որ սոսկալի ռուսական է ամեն ինչ, ֆրանսուհիներ բոլորովին չկան դեռ, այնինչ կարող էին լինել, փողը շատ է։ Հոտն առնեն՝ կգան։ Իսկ այստեղ՝ դե՛հ, ոչինչ, այստեղ վա-

նականների կանայք չկան, վանականներն էլ՝ երկու հարյուր հոգի։ Պարկեշտ են։ Ծոմ են պահում։ Ընդունում եմ... Հը՞մ։ Ուրեմն ուզում ես վանակա՞ն դառնալ։ Բայց դե ափսոսում եմ քեզ, Ալյոշա, ես իրոք սիրեցի քեզ, կհավատա՞ս... Բայց ոչինչ, հարմար առիթ է՝ կաղոթես մեզ նման մեղավորներիս համար, մենք շատշատ մեղքեր ենք գործել այստեղ նստած։ Ես միշտ մտածում՝ էի՝ ո՞վ է ինձ համար երբևիցե աղոթելու։ Մտածում էի՝ աշխարհում արդյոք կա՞ այդպիսի մարդ։ Անուշի՜կ տղաս, ես ախր սոսկալի հիմար եմ այդ հարցում, գուցե չես հավատո՞ւմ։ Սոսկալի հիմար։ Գիտե՞ս, որքան էլ հիմար լինեմ, բայց միշտ մտածում եմ այդ հարցի մասին, միշտ մտածում, անշուշտ մեկ-մեկ, ոչ թե էնպես անընդհատ։ Մտածում եմ՝ ախր հնարավոր բան չէ, որ սատանաները մոռանան կեռերով քարշ տալ ինձ դժոխք, երբ մեռնեմ։ Եվ մեկ էլ միտք եմ անում՝ կեռերո՞վ։ Որտեղի՞ց են վերցնում այդ կեռերը։ Ի՞նչ նյութից են դրանք։ Երկաթի՞ց։ Իսկ որտե՞ղ են դարբնում։ Ինչ է, այդպիսի գործարա՞ն ունեն այնտեղ։ Երևի վանքում այդ վանականները կարծում են, թե դժոխքում, օրինակ, առաստաղ կա։ Իսկ ես, խնդրե՞մ, պատրաստ եմ դժոխքին հավատալու, միայն թե առանց առաստաղի։ Ավելի նրբաճաշակ կլինի այդպես, ավելի լուսամիտ, այսինքն լութերական ոգով։ Եվ իսկապես, միևնույնը չէ՞— առաստաղ լինի թե չլինի։ Բայց արի տես, որ անիծյալ խնդիրն էլ հենց սրա՛ մեջ է։ Դե լա՛վ, ասենք եթե առաստաղ չկա, ուրեմն կեռ էլ չկա։ Իսկ եթե կեռ չկա, ուրեմն ոչինչ չի ստացվում, այսինքն նորից անհավանական է, որովհետև այդ դեպքում ո՞վ է ինձ կեռերով քարշ տալու, և եթե ինձ քարշ չտան, ի՞նչ է լինելու աշխարհի բանը, որտե՞ղ է արդարությունը։ Il faudrait les inventer[1], այդ կեռերը, հատուկ ինձ համար, միայն ինձ համար, որովհետև եթե իմանայի՞ր, Ալյոշա, թե ի՞նչ անամոթն եմ ես...

— Բայց կեռեր չկան այնտեղ,— մեղմ ու լուրջ ասաց Ալյոշան, ուշադիր նայելով հորը։

— Այո, այո, կեռերի ստվերնե՞րը միայն։ Գիտեմ, գիտեմ։ Ինչպես որ մի ֆրանսիացի նկարագրել է դժոխքը. „J'ai vu l'ombre d'un cocher, qui avec l'ombre d'une brosse frottait l'ombre d'une carrosse"[2]։ Իսկ դու որտեղի՞ց գիտես, որ կեռեր չկան, աղավնյա՞կս։ Վանականների հետ որ ապրես, ուրի՞շ երդ կերգես։ Բայց գնա, իմացիր այնտեղ ճշմարտությունը և արի պատմիր ինձ. այնուամենայնիվ ավելի հեշտ կլինի մյուս աշխարհը գնալ, եթե մարդ վստահ գիտենա, թե ինչը ինչոց է այնտեղ։ Եվ հետո, քեզ համար էլ ավելի պատշաճ կլինի վանականների հետ ապրել, քան թե ինձ հետ՝ հարբած ծերուկի և փչացած աղջիկների կողքին... Թեև՝ դու հրեշտակի նման ես և ոչինչ չի կպչի քեզ։ Դե՛հ, մի գուցե այնտեղ էլ քեզ ոչինչ չի կպչելու, հենց դրա վրա եմ դրել իմ հույսը։ Ահա թե ինչու թույլ եմ տալիս, որ գնաս։ Խելքդ հո հացի հետ չես կերել։ Կվառվես ու կհանգես, կբուժվես ու ետ կգաս։ Իսկ ես սպասելու եմ քեզ։ Ախր զգում եմ՝ դու աշխարհում միակ մարդն ես, որ չի դատապարտել ինձ, իմ անուշի՜կ տղաս, զգում եմ, զգում եմ, չեմ կարող չզգալ այդ բանը...

Եվ նա նույնիսկ հեկեկաց։ Շատ դյուրազգաց էր։ Չար էր ու դյուրազգաց։

V

ՍՐԲԱՀԱՅՐԵՐ

Գուցե ընթերցողներից ոմանք կարծեն, թե իմ երիտասարդ հերոսը հիվանդկախ, հոգեկան հափշտակությամբ տարված, թույլ զարգացած անձնավորություն էր, դալկահար երազող, վտիտ ու անավյուն մի մարդուկ։ Ընդհակառակը, Ալյոշան այն ժամանակ գեղահասակ, կարմրաթուշ, պայծառ հայացքով տասնիննամյա պատանի էր, որից հորդում էր առողջությունը։ Շատ գեղեցիկ էր նույնիսկ, վայելչակազմ, միջինից բարձր հասակով, մուգ խարտյաշ, ուներ կանոնավոր, ձվաձև, թեև մի քիչ երկարուն դեմք, մուգ մոխրագույն, լայնագիր, փայլուն աչքեր, շատ խոհական էր և ըստ երևույթին շատ հանդարտ։ Գուցե ասեն, թե կարմիր թշերը ո՛չ մոլեռանդությանն են խանգարում, ո՛չ էլ միստիցիզմին. բայց ինձ թվում է, թե Ալյոշան նույնիսկ ավելի էր իրատես, քան ուրիշ որևէ մեկը։ Օ՜, անշուշտ, վանքում նա լիովին հավատում էր հրաշքներին, բայց, ըստ իս, հրաշքները երբեք չեն խոտվում իրատես մարդուն։ Հրաշքները չեն, որ իրատես մար-

[1] Պետք էր հնարել դրանք (ֆրանս.)։

[2] Տեսել եմ մի կառապանի ստվերը, որ խոզանակի ստվերով մաքրում էր կառքի ստվերը (ֆրանս)։

դուն տրամադրում են հավատալու։ Իսկական իրատեսը, եթե հավատացյալ չէ, միշտ իր մեջ ուժ ու կարողություն կգտնի չհավատալու նաև հրաշքին, իսկ եթե հրաշքը նրա աչքերի առաջ անժխտելի փաստ դառնա, նա կնախընտրի չհավատալ իր սեփական զգայարաններին, քան թե ընդունել փաստը։ Իսկ եթե ընդունի էլ, կընդունի որպես բնական իրողություն, որ մինչ այդ պարզապես անծանոթ է եղել իրեն։ Իրատես մարդու մեջ ոչ թե հավատքն է ծնվում հրաշքից, այլ հրաշքն է ծնվում հավատքից։ Եթե իրատեսը մի անգամ հավատա, հենց իր իրատեսության շնորհիվ պետք է անպայման ընդունի նաև հրաշքը։ Թովմաս առաքյալը հայտարարեց, որ չի հավատա, մինչև չտեսնի, իսկ երբ տեսավ, ասաց. «Տե՛ր իմ և աստված իմ»։ Միթե հրա՞շքը նրան ստիպեց հավատալ։ Ամենևին հավանականությամբ՝ ոչ. նա հավատաց միայն ու միայն այն պատճառով, որ ցանկանում էր հավատալ և գուցե լրիվ հավատում էր արդեն իր սրտի խորքում՝ նույնիսկ այն ժամանակ, երբ ասաց. «Չեմ հավատա, մինչև չտեսնեմ»։

Գուցե ասեն, թե Ալյոշան բթամիտ էր, տհաս, ուսումը չէր ավարտել և այլն։ Ճշմարիտ է, որ նա չավարտեց իր ուսումը, բայց ասել, թե նա բթամիտ էր կամ հիմար, մեծ անարդարություն կլիներ։ Պարզապես կրկնեմ այն, ինչ արդեն ասել եմ. նա այդ ճանապարհը ոտք դրեց լոկ այն պատճառով, որ տվյալ շրջանում դա էր միայն հուզել նրան և միանգամից իդեալական ելք էր բացել՝ խավարից դեպի լույս մաքառող նրա հոգու առաջ։ Ավելացրեք նաև, որ նա մեր վերջին ժամանակաշրջանի պատանիներից էր մասամբ, այսինքն ազնիվ էր իր բնությամբ, ճշմարտության պահանջն ուներ, որոնում էր այն ու հավատում դրան, և հավատալով՝ տենչում էր անմիջապես նվիրվել դրան իր հոգու ամբողջ ուժով, ձգտում էր շուտափույթ սխրագործության, անպայման ցանկանալով ամեն ինչ զոհել այդ սխրագործության համար, զոհել նույնիսկ կյանքը։ Թեև, դժբախտաբար, այդ պատանիները չեն հասկանում, թե կյանքը զոհելը գուցե բոլոր զոհողություններից ամենահեշտն է բազում նման պարագաներում, և թե, օրինակի համար, պատանեկան ավյունով եռուն իրենց կյանքից հինգ-վեց տարի զոհել դժվարին, ծանր ուսումնառության սիրույն, գիտության սիրույն, թեկուզ միայն իրենց ուժերը տասնապատկելու և ծառայելու համար նույն այդ ճշմարտու-

թյանը, իրենց սիրած ու նպատակադրած նույն այդ սխրագործությանը,— ահա այսպիսի զոհողությունը բոլորովին վեր է իրենցից շատ-շատերի ուժերից։ Ալյոշան պարզապես ընտրեց հակառակ ուղին, բայց նույն շուտափույթ սխրագործության ծարավով։ Հենց որ նա, լրջորեն խորհրդածելով, եկավ այն ցնցող համոզման, որ կա անմահություն և կա աստված, բնականաբար ասաց ինքնիրեն. «Ուզում եմ ապրել անմահության համար և որևէ կիսկատար փոխզիջում չեմ ընդունում»։ Ճիշտ այդպես էլ, եթե նա որոշեր, թե չկա անմահություն և չկա աստված, անմիջապես աթեիստ ու սոցիալիստ կդառնար (որովհետև սոցիալիզմը ոչ միայն բանվորական կամ այսպես կոչված չորրորդ դասի հարց է, այլ գլխավորապես աթեիստական հարց, աթեիզմի ժամանակակից ձևի հարցը, հարցն է Բաբելոնյան աշտարակի, որ կառուցվում է հենց առանց աստուծո, ոչ թե երկրից երկինք հասնելու, այլ երկինքը երկիր իջեցնելու համար)։ Ալյոշային նույնիսկ տարօրինակ ու անկարելի թվաց ապրել այնպես, ինչպես ապրել էր մինչ այդ։ Գրված է. «Բաշխիր ամբողջ ունեցվածքդ և հետևիր ինձ, եթե ուզում ես կատարյալ լինել»։ Եվ Ալյոշան ասաց ինքնիրեն. «Չեմ կարող «ամբողջի» փոխարեն երկու ռուբլի տալ և «նրան հետևելու» փոխարեն լոկ պատարագի գնալ»։ Գուցե նրա մանկական հուշերի մեջ մի բան էր մնացել մեր քաղաքամերձ վանքից, որտեղ մայրը նրան կարող էր պատարագի տարած լինել։ Գուցե և նրա մեջ տպավորվել էին մայր մտնող արևի շեղ ճառագայթները սրբապատկերի առաջ, որին իր դիվահար մայրը գրկատարած մեկնել էր իրեն։ Մտախոհ եկավ նա այն ժամանակ մեզ մոտ, գուցե միայն տեսնելու համար՝ արդյոք «ամբո՞ղջն» է այստեղ, թե այստեղ էլ միայն «երկու ռուբլին» է։ Եվ վանքում հանդիպեց այս սրբահորը...

Այս սրբահայրը, ինչպես արդեն բացատրեցի, հայր Զոսիման էր։ Բայց այստեղ պետք է մի քանի խոսքով պարզաբանել, թե ընդհանրապես ինչ է «սրբահայրը» մեր վանքերում, և ահա ցավում եմ, որ այս հարցում բավականաչափ ձեռնհաս և ամուր չեմ զգում ինձ։ Եվ սակայն կփորձեմ մակերեսային մի պարզաբանում տալ մի քանի խոսքով։ Այսպես ուրեմն, նախ և առաջ, մասնագետ ու իրազեկ մարդիկ պնդում են, թե սրբահայրերն ու սրբահայրության կարգը դեռ

միայն վերջերս են հայտնվել մեր ռուսական վանքերում, հազիվ մի հարյուր տարի առաջ, այնինչ ամբողջ ուղղափառ Արևելքում, հատկապես Սինայում և Աթոսում, ավելի քան հազար տարի է գոյություն ունեն նրանք։ Պնդում են, թե սրբահայրության կարգը հնագույն ժամանակներում գոյություն է ունեցել և կամ թե անպայման պետք է գոյություն ունեցած լինի նաև Ռուսաստանում։ Բայց Ռուսաստանի կրած աղետները՝ թաթարական տիրապետությունը, խռովությունները, Կոստանդնուպոլսի նվաճումից հետո Արևելքի հետ նախկին հարաբերությունների խզումը պատճառ են եղել, որ այդ կարգը մոռացության մատնվի և դադարի սրբահայրերի գոյությունը։ Այդ կարգը մեզ մոտ վերահաստատվել է անցյալ դարի վերջերին, մեծ ճգնավորներից մեկի (ինչպես կոչում են նրան)՝ Պաիսի Վելիչկովսկու և նրա աշակերտների նախաձեռնությամբ, բայց մինչև օրս էլ, նույնիսկ հարյուր տարի անց, սակավաթիվ վանքերում միայն գոյություն ունի և մերթ ընդ մերթ համարյա թե հալածանքների է ենթարկվել որպես անլսուր մի նորություն Ռուսաստանում։ Մեր երկրում սրբահայրության կարգը հատկապես ծաղկում ապրեց նշանավոր Կոզելսկայա Օպտինա վանքի մեջ։ Չեմ կարող ասել, թե երբ և ում շնորհիվ մեր քաղաքամերձ վանքում ևս հաստատվեց այդ կարգը, բայց արդեն երեք սրբահայր հաջորդել էին իրար, և սրբահայր Զոսիման վերջինն էր նրանցից։ Բայց նա էլ համարյա մահանում էր տկարության ու հիվանդությունների հետևանքով, և չէին գտնում մի մարդ, որ փոխարիներ նրան։ Մեր վանքի համար կարևոր հարց էր դա, որովհետև մինչև այդ մեր վանքը ոչ մի բանով նշանավոր չէր առանձնապես. ո՛չ աստվածահաճո սրբերի մասունքներ ուներ, ո՛չ հրաշագործ սրբապատկերներ, ո՛չ էլ նույնիսկ մեր պատմության հետ առնչված փառապանծ ավանդություններ. ոչ մի պատմական սխրագործություն կամ հայրենիքին մատուցված ծառայություն չէր վերագրվում նրան։ Բարգավաճել ու ամբողջ Ռուսաստանով մեկ հռչակվել էր հենց սրբահայրերի շնորհիվ, որոնց տեսնելու և լսելու համար ուխտավորների բազմություններ գալիս-հավաքվում էին մեր երկրի բոլոր ծայրերից, հազարավոր փարսախներ կտրելով։

Այսպես ուրեմն, ի՞նչ է սրբահայրը։ Սրբահայրը այն մարդն է, որ ձեր հոգին, ձեր կամքը ներառնում է իր հոգու, իր

կամքի մեջ։ Ընտրելով ձեր սրբահորը, դուք հրաժարվում եք ձեր կամքից և հանձնում նրան՝ լիովին հնազանդվելով, լիովին հրաժարվելով սեփական անձից։ Նվիրյալը հոժարակամ հանձն է առնում այդ փորձությունը, կյանքի այդ սոսկալի դպրոցը՝ երկար տվայտանքից հետո իր անձը նվաճելու, ինքնիրեն տիրապետելու հույսով, որպեսզի վերջ ի վերջո, իր ամբողջ կյանքով հնազանդվելու շնորհիվ, կարողանա կատարյալ ազատություն ձեռք բերել, այսինքն ազատագրվել իր սեփական անձից, խուսափել այն մարդկանց ճակատագրից, որոնք մի ամբողջ կյանք են ապրել, բայց իրենց բուն էությունը չեն գտել իրենց մեջ։ Այս հայտնագործությունը, այսինքն սրբահայրության կարգը, ոչ թե տեսության վրա է հիմնված, այլ Արևելքում հետևցված է կյանքի փորձից, որն այսօր արդեն հազարամյա պատմություն ունի։ Սրբահոր նկատմամբ պարտականությունները չեն նույնանում սովորական «հնազանդության» հետ, որ միշտ առկա է եղել նաև մեր ռուսական վանքերում։ Այստեղ ենթադրվում է, որ նվիրյալները պետք է մշտապես խոստովանեն սրբահորը, և որ անքակտելի կապ պետք է լինի սրբահոր ու նվիրյալի միջև։ Պատմում են, օրինակ, որ մի անգամ, քրիստոնեության հնագույն շրջանում, այդպիսի մի նվիրյալ, չկատարելով իր սրբահոր հանձնարարած մի հորդորը, լքում է վանքը և հեռանում նրանից, Սիրիայից գնում է Եգիպտոս։ Այնտեղ, հարատևորեն մեծագործություններ կատարելուց հետո, վերջապես արժանի է դառնում հավատքի համար չարչարանքներ կրելու և նահատակի մահ ընդունելու։ Իսկ երբ եկեղեցին, արդեն մեծարելով նրան որպես սուրբի, թաղում էր մարմինը, հանկարծ, սարկավագի «...առ դրունս ելէք» բացականչելու ժամանակ, նահատակի մարմինն ամփոփող դագաղը պոկվում է տեղից ու տաճարից դուրս նետվում, և այսպես կրկնվում է երեք անգամ։ Եվ հետո միայն իմանում են, որ այդ սուրբ նահատակը խախտել է հնազանդության ուխտը և հեռացել իր սրբահորից, ուստի չի կարող ներումն ստանալ առանց սրբահոր թողության, չնայած նույնիսկ իր կատարած մեծագործություններին։ Բայց երբ կոչյալ սրբահայրն արձակում է նրան հնազանդության ուխտից, նոր միայն հնարավոր է դառնում կատարել թաղումը։ Այս ամբողջն, անշուշտ, հնադարյան առասպել է միայն։ Բայց ահա վերջերս պատահած մի եղելություն։ Ժամանակակից մի

վանական ճգնում էր Աթոսում, որ նա ի խորոց սրտի սիրել էր իբրև սրբավայր, իբրև խաղաղ ապաստարան, և հանկարծ նրա սրբահայրը հրամայում է թողնել Աթոսը և նախ գնալ Երուսաղեմ՝ մեծարանքի տուրքը մատուցելու սրբազան վայրերին, ապա վերադառնալ Ռուսաստան, դեպի հյուսիս՝ Սիբիր. «Այնտեղ է քո տեղը, ոչ թե այստեղ»։ Ապշահար ու վրշտաբեկ վանականը գնում է Կոստանդնուպոլիս՝ տիեզերական պատրիարքի մոտ և աղերսում է արձակել իրեն հնազանդության ուխտից։ Եվ ահա վեհափառը պատասխանում է, թե ոչ միայն ինքը՝ տիեզերական պատրիարքն ի վիճակի չէ արձակելու, այլև չկա ու չի կարող լինել երկրի վրա այնպիսի մի իշխանություն, որ կարողանար արձակել նրան սրբահոր հանձնարարած պարտականությունից. այդ իշխանությունը տրված է միայն սրբահորը, որ հանձնարարել է տվյալ պարտականությունը։ Այսպես ուրեմն, սրբահայրերն օժտված են որոշ դեպքերում անսահման և անբմբռնելի իշխանությամբ։ Ահա թե ինչու սրբահայրության կարգն սկզբում համարյա թե հալածանքի հանդիպեց մեր բազմաթիվ վանքերում։ Բայց և սրբահայրերն անմիջապես բարձր հարգանք սկսեցին վայելել ժողովրդի մեջ։ Մեր վանքի սրբահայրերի մոտ, օրինակ, մեծ թվով հավաքվում էին և՛ ռամիկ, և՛ ազնվատոհմ ու ականավոր մարդիկ, որպեսզի, ծնրադրելով նրանց առաջ, խոստովանեն իրենց տարակույսները, իրենց մեղքերը, իրենց տառապանքները և խորհուրդ ու խրատ խնդրեն նրանցից։ Տեսնելով այդ, սրբահայրերի հակառակորդներն աղմուկ էին բարձրացնում, իրենց մյուս մեղադրանքների վրա ավելացնելով և այն, թե խոստովանանքի սուրբ խորհուրդն է նվաստացվում ինքնիշխան կերպով ու թեթևամտորեն. այնինչ՝ բնավ սուրբ խորհուրդի բնույթ չի կրում այն խոստովանությունը, որով նվիրյալը կամ աշխարհականն անընդհատ իրենց սիրտն են բացում սրբահոր առաջ։ Սակայն վերջ ի վերջո սրբահայրության կարգը կանգուն մնաց և կամաց-կամաց հաստատուն տեղ է գրավում ռուսական վանքերում։ Գուցե ճիշտ է և այն, որ այս փորձված և արդեն հազարամյա միջոցը, որ ծառայում է մարդու բարոյական վերածննդին՝ ստրկությունից դեպի ազատություն ու դեպի բարոյական կատարելագործում, կարող է վերածվել երկսայրի թրի և կարող է ոմանց հասցնել ոչ թե խոնարհության ու լիակատար ինքնատիրապետման, այլ, ընդհակառակը, ամենասադայելական գոռոզության, այսինքն շղթաների, և ոչ թե ազատության։

Սրբահայր Զոսիման վաթսունհինգ տարեկան էր, սերում էր կալվածատերերի ընտանիքից, երիտասարդության ամենավաղ տարիներին զինվորական էր եղել և ծառայել էր Կովկասում որպես ավագ սպա։ Անտարակույս, նա իր հոգու ինչ-որ առանձնահատուկ բարեմասնությամբ էր տպավորություն գործել Ալյոշայի վրա։ Ալյոշան հենց սրբահոր խուցում էր ապրում։ Սրբահայրը շատ էր սիրել նրան և ընդունել էր իր մոտ։ Պետք է նկատել, որ թեև Ալյոշան վանքում էր ապրում, բայց դեռ ոչ մի պարտադրանքով չէր կապված, կարող էր ուզած տեղը գնալ ու թեկուզ օրերով բացակայել, իսկ իր կապան հագնում էր կամավորաբար, որպեսզի ոչ ոքից չտարբերվի վանքում։ Բայց անշուշտ իրեն էլ դուր էր գալիս վանական զգեստ հագնելը։ Թերևս Ալյոշայի պատանեկան երևակայության վրա ուժեղ տպավորություն էին գործել այն զորությունը ու համբավը, որով մշտապես օժտված էր իր սրբահայրը։ Շատերն ասում էին, որ սրբահայր Զոսիման, երկար տարիներ ընդունելով բոլոր նրանց, ովքեր գալիս էին բանալու իրենց սիրտը և ծարավի էին նրա խորհուրդին ու բուժիչ խոսքին, այնքան շատ գաղտնիքներ, վշտեր ու խոստովանություններ էր ընդունել իր հոգու մեջ, որ ի վերջո չափազանց սուր խորաթափանցություն էր ձեռք բերել և իր մոտ եկող անծանոթի դեմքին նայելով անմիջապես կարող էր գուշակել՝ ինչո՞ւ է եկել նա, ի՞նչ է նրան հարկավոր, նույնիսկ ինչպիսի՞ տանջանք է ծանրացել նրա խղճի վրա։ Եվ զարմացնում, շփոթության մատնում, երբեմն էլ համարյա երկյուղ էր ազդում՝ այդպես իմանալով այցելուի գաղտնիքը, առանց դեռ մի բառ լսելու նրանից։ Բայց և Ալյոշան գրեթե միշտ նկատում էր, որ շատերը, համարյա բոլորը, ովքեր առաջին անգամ էին գալիս սրբահոր մոտ մեկուսի զրուցելու, ներս էին մտնում վախով ու անհանգստությամբ, սակայն նրա խուցից դուրս էին գալիս պայծառ և ուրախ, ամենամռայլ դեմքը դառնում էր երջանիկ։ Ալյոշային անասելի զարմանք էր պատճառում նաև այն, որ սրբահայրը բնավ խիստ չէր, այլ ընդհակառակը՝ միշտ էլ համարյա զվարթ վարվելակերպ ուներ։ Վանականներն ասում էին, թե նա սրտակցում է հենց նրանց, ով-

քեր ավելի մեղապարտ են, և ով ամենից ավելի է մեղապարտ, նրան ամենից ավելի է սիրում։

Վանականների մեջ, նույնիսկ սրբահոր կյանքի վերջին օրերին, կային նրան ատողներ ու նախանձողներ, բայց արդեն քիչ էին այդպիսիները և լուռ էին մնում, թեև նրանցից մի քանիսը վանքում շատ նշանավոր ու կարևոր դեմքեր էին, ինչպես օրինակ հնագույն վանականներից մեկը, որ մեծ լռակյաց էր և արտակարգ ծոմապահ։ Սակայն մեծագույն մասն արդեն սրբահայր Զոսիմայի կողմն էր բռնում անվերապահորեն, իսկ շատ-շատերը նույնիսկ սիրում էին նրան ամբողջ սրտով, ջերմորեն ու անկեղծորեն։ Մի քանիսն էլ համարյա մոլեռանդորեն նվիրված էին նրան։ Սրանք ուղղակի ասում էին, թեև ոչ շատ բարձրաձայն, թե նա սուրբ է, թե այդ մասին տարակույս անգամ չի կարող լինել, և նախատեսելով նրա մոտալուտ վախճանը՝ անմիջական հրաշքներ և մոտ ապագայում վանքի համար մեծ փառք էին սպասում վախճանյալի մասունքներից։ Ալյոշան ևս անառարկելիորեն հավատում էր սրբահոր հրաշագործ զորությանը, ճիշտ այնպես, ինչպես անառարկելիորեն հավատում էր եկեղեցուց դուրս թռած դագաղի պատմությանը։ Նա տեսնում էր, թե ինչպես շատերը, ովքեր եկել էին հիվանդ երեխաների կամ ազգականների հետ և աղերսել, որ սրբահայրն իր ձեռքերը դնի նրանց գլխին և աղոթք կարդա, վերադառնում էին շուտով, ոմանք հենց հաջորդ օրը, և արտասվելով ընկնում էին սրբահոր ոտքերը, շնորհակալություն հայտնում նրան, որ բուժեց իրենց հիվանդներին։ Իրո՞ք բուժվել էին նրանք, թե պարզապես հիվանդության բնական ընթացքի մեջ բարելավում էր եղել, Ալյոշայի համար դա հարց չէր, որովհետև լրիվ հավատում էր իր ուսուցչի հոգեկան ուժին և նրա փառքը կարծես իր սեփական հաղթանակն էր համարում։ Նա սրտի հատուկ թրթիռ էր զգում և փայլում էր ամբողջ էությամբ, երբ սրբահայրը դուրս էր գալիս խոնարհ դասի ուխտավորների առաջ, որոնք, հավաքվելով ամբողջ Ռուսաստանից, սպասում էին մենաստանի դարպասի մոտ ժողովված՝ հատկապես սրբահորը տեսնելու և նրա օրհնությունն ստանալու համար։ Ուխտավորները երկրպագում էին նրան, արտասվում էին, համբուրում ոտքերը, համբուրում հողը, որի վրա կանգնած էր նա, աղաղակում էին, կանայք իրենց երեխաներին էին

մեկնում նրան, մոտ էին բերում դիվահար հիվանդներին։ Սրբահայրը խոսում էր նրանց հետ, մի կարճ աղոթք կարդում նրանց գլխի վրա, օրհնում էր ու արձակում։ Վերջերս, հիվանդության նոպաների հետևանքով, նա երբեմն այնքան էր տկարանում, որ ուժ չէր ունենում խուցից դուրս գալու, և ուխտավորները մի քանի օր վանքում սպասում էին նրա հայտնվելուն։ Ալյոշան երբեք հարց չէր դարձնում, թե ինչու են այդպես սիրում սրբահորը, ինչու երկրպագում են նրան և միայն նրա դեմքը տեսնելով արտասվում են խանդաղատանքից։ Օ՜, նա շատ լավ էր հասկանում, թե ռուս հասարակ մարդու խոնարհ հոգին, աշխատանքից ու վշտից չարչարված, մանավանդ հարատև անարդարությունից և ինչպես իր, այնպես էլ աշխարհի հարատև մեղքից տանջահար, չունի ավելի ուժեղ պահանջ ու մխիթարություն, քան այն, որ գտնի մի սրբություն կամ մի սուրբ էակի, երկրպագի ու պաշտի նրան. «Եթե մեր մեջ կա մեղք, անարդարություն ու փորձություն, համենայն դեպս երկրի վրա, մի որևէ տեղ, կա մի սուրբ և բարձր հոգի. գոնե նրա՛ մեջ է ճշմարտությունը, գոնե նա՛ գիտե ճշմարտությունը. ուրեմն ճշմարտությունը չի մեռնում երկրի վրա, հետևաբար մի օր մեզ էլ կհասնի և կտիրի ամբողջ աշխարհում, ինչպես խոստացված է»։ Գիտեր Ալյոշան, որ ճիշտ այսպես զգում ու նույնիսկ դատում է ժողովուրդը, այո, հասկանում էր այդ։ Բայց ինքն էլ, այդ արտասվող գյուղացիների և իրենց երեխաներին սրբահորը մեկնող հիվանդ կանանց հետ, հավատում էր առանց դույզն տարակույսի, որ սրբահայր Զոսիման է հենց այդ սուրբը, աստուծո ճշմարտության պահապանը՝ ժողովրդի աչքին։ Իսկ այն համոզումը, թե սրբահայրը վախճանվելուց հետո արտասովոր փառք կբերի վանքին, գուցե ավելի ուժեղ էր իշխում Ալյոշայի հոգում, քան ուրիշ որևէ վանականի մեջ։ Եվ ընդհանրապես այդ վերջին շրջանում ներքին խորունկ մի ցնծություն ավելի ու ավելի պայծառ բոցավառվում էր նրա սրտում։ Նա բնավ չէր անհանգստանում, թե այս սրբահայրն այնուամենայնիվ միակ օրինակն է իր աչքի առաջ. «Ի՞նչ փույթ, նա սուրբ է, իր սրտում կրում է վերանորոգման գաղտնիքը բոլորի համար, այն զորությունը, որ վերջապես ճշմարտություն է հաստատելու երկրի վրա և բոլորը սուրբ են լինելու, սիրելու են իրար, չի լինելու ո՛չ հարուստ, ո՛չ ազ-

քատ, ո՛չ բարձրացյալ, ո՛չ ստորացյալ, այլ բոլորը լինելու են աստուծո զավակների նման և գալու է իսկական թագավորությունը Քրիստոսի»։ Ահա թե ինչ էր ըղձում Ալյոշայի սիրտը։

Թվում է, Ալյոշայի վրա շատ մեծ տպավորություն գործեց ժամանումն իր երկու եղբայրների, որոնց բոլորովին չգիտեր մինչ այդ։ Դմիտրի Ֆյոդորովիչի հետ, որ ավելի ուշ էր եկել, Ալյոշան ավելի շուտ մտերմացավ, քան իր մյուս, համամայր եղբոր՝ Իվան Ֆյոդորովիչի հետ։ Նա սաստիկ մեծ ցանկություն ուներ մոտիկից ճանաչելու Իվանին, բայց ահա արդեն երկու ամիս է Իվանն ապրում էր քաղաքում, ու թեև նրանք բավական հաճախ էին հանդիպում իրար, սակայն դեռ բոլորովին չէին մտերմացել։ Ալյոշան ինքն էլ լուռ էր մնում և կարծես մի բան էր սպասում, կարծես ամաչում էր մի բանից, իսկ Իվանը շուտով կարծես դադարեց նույնիսկ մտածել նրա մասին, թեև Ալյոշան սկզբում նշմարել էր նրա երկար ու զննող հայացքներն իր վրա։ Ալյոշան որոշ շփոթմունքով նկատեց այդ։ Եղբոր անտարբերությունը վերագրեց իրենց տարիքի և մանավանդ կրթական մակարդակի տարբերության։ Բայց մի ուրիշ բան էլ մտածեց Ալյոշան. Իվանի կողմից հետաքրքրության ու համակրանքի պակասը գուցե հետևանք էր մի այլ պատճառի, որ բոլորովին անծանոթ էր իրեն՝ Ալյոշային։ Չգիտես ինչու, նրան միշտ թվում էր, թե Իվանը տարված է ինչ-որ բանով՝ ներքին ու կարևոր մի խնդրով, ձգտում է մի նպատակի, որին գուցե շատ դժվար է հասնել, ուստի ի վիճակի չէ եղբոր մասին մտածելու, և ահա միայն այդ պատճառով է, որ մտացիր հայացքով է նայում նրան։ Ալյոշան մտածում էր նաև, թե արդյոք նրա վերաբերմունքի մեջ գիտուն աթեիստի մի որոշ արհամարհանք չկա՞ իր կրտսեր եղբոր՝ հիմարիկ նորընծայի նկատմամբ։ Հաստատ գիտեր, որ Իվանը աթեիստ է։ Եթե նույնիսկ կար այդ արհամարհանքը, Ալյոշան չէր կարող վիրավորվել դրանից, բայց այնուամենայնիվ իր համար էլ անհասկանալի և տագնապեցնող շփոթմունքով սպասում էր, թե երբ է եղբայրն ավելի մոտենալու իրեն։ Ավագ եղբայրը՝ Դմիտրին, ամենախոր հարգանքով և հատուկ լրջախոհությամբ էր խոսում Իվանի մասին։ Ալյոշան հենց նրանից էլ իմացավ բոլոր մանրամասնություններն այն կարևոր

գործի, որի շնորհիվ վերջերս ուշագրավ ու սերտ կապ էր հաստատվել երկու մեծ եղբայրների միջև։ Իվանի մասին Դմիտրիի խանդավառ գնահատականներն ավելի ևս նշանակալից էին թվում Ալյոշային, որովհետև Դմիտրին համարյա անուսում մարդ էր Իվանի հետ համեմատած, և նրանք իրար կողքի այնպիսի ակնբախ հակադրություն էին կազմում իբրև անձնավորություն ու նկարագիր, որ գուցե անհնար լիներ գտնել երկու մարդ՝ իրարից ավելի տարբեր։

Ահա հենց այդ ժամանակ սրբահոր խուցում տեղի ունեցավ այս աններդաշնակ ընտանիքի բոլոր անդամների հանդիպումը կամ, ավելի ճիշտ, ընտանեկան հավաքույթը, որ արտակարգ ազդեցություն գործեց Ալյոշայի վրա։ Հավաքույթի պատրվակն ըստ էության կեղծ էր։ Հենց այդ օրերին Դմիտրի Ֆյոդորովիչի և նրա հոր՝ Ֆյոդոր Պավլովիչի միջև ժառանգության և գույքային հաշիվների վերաբերյալ տարաձայնություններն ըստ երևույթին ծայր աստիճանի էին հասել։ Հարաբերությունները սրվել էին ու դարձել անտանելի։ Կարծեմ առաջինը Ֆյոդոր Պավլովիչն էր, երևի կատակով, հայտնել այն միտքը, թե բոլորը հավաքվեն սրբահայր Զոսիմայի խուցում և, թեկուզ չդիմելով նրա ուղղակի միջնորդությանը, համենայն դեպս ավելի վայելուչ մի համաձայնության գան, ընդ որում սրբահայրն իր աստիճանով ու հեղինակությամբ կարող է որոշ պատկառանք ներշնչել ու հաշտարար ներգործություն ունենալ։ Դմիտրի Ֆյոդորովիչը, որ երբեք չէր եղել սրբահոր մոտ ու նույնիսկ չէր տեսել նրան, անշուշտ մտածեց, թե ուզում են իրեն վախեցնել սրբահոր հեղինակությամբ։ Բայց որովհետև ինքն էլ թաքուն կշտամբում էր իրեն այն հատկապես արտառոց պոռթկումների համար, որ վերջերս թույլ էր տվել հոր հետ վիճելիս, ընդունեց հրավերը։ Ի դեպ պետք է նշել, որ նա ապրում էր ոչ թե հոր տանը, ինչպես Իվան Ֆյոդորովիչը, այլ առանձին, քաղաքի մյուս ծայրում։ Նաև այնպես պատահեց, որ Պյոտր Ալեքսանդրովիչ Միուսովը, այդ օրերին մեզ մոտ գտնվելով, եռանդագին կառչեց Ֆյոդոր Պավլովիչի հայտնած այդ մտքից։ Լինելով քառասնական և հիսնական թվականների լիբերալ, ազատախոհ և աթեիստ, նա իր աշխույժ մասնակցությունը բերեց այդ գործին՝ գուցե ձանձրույթից մղված կամ էլ գուցե թեթևամիտ զվարճության նպատակով։ Նա հանկարծ ցանկու-

թյուն ունեցավ տեսնելու վանքը և «սուրբ մարդուն»։ Քանի որ դեռ շարունակվում էր իր հին վեճը վանքի հետ և դեռ ձգձգվում էր դատավարությունն իրենց կալվածների հողային սահմանի, անտառահատման ու ձկնորսության իրավունքների և այլ հարցերի շուրջ, նա փութաց օգտվել այս հանգամանքից, պատրվակ բռնելով, թե կցանկանար անձամբ խոսել վանահոր հետ և դատավեճը հաշտ ու խաղաղ վերջացնելու մի փորձ անել։ Այսպիսի բարի նպատակներ ունեցող այցելուին անշուշտ ավելի ուշադիր ու պատրաստակամ կարող էին ընդունել վանքում, քան պարզ հետաքրքրության համար եկողին։ Բոլոր այս նկատառումների շնորհիվ, վանքի ներսում կարող էին նաև որոշ ազդեցություն բանեցնել հիվանդ սրբահոր վրա, որ վերջերս գրեթե երբեք դուրս չէր գալիս իր խուցից և հիվանդության պատճառով մերժում էր նույնիսկ սովորական այցելուներին։ Ի վերջո սրբահայրն իր համաձայնությունը տվեց, և օր նշանակեցին։ «Ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ նոցա»,— ասաց նա լոկ, ժպտալով Ալյոշային։

Իմանալով առաջիկա հանդիպման մասին։ Ալյոշան մեծ խռովք ապրեց։ Եթե այդ վիճող ու իրար ամբաստանող կողմերի մեջ կար մեկը, որ կարող էր լուրջ մոտենալ հավաքույթին, միայն Դմիտրին էր անտարակույս։ Իսկ մնացյալները, բոլորն էլ, կգան թեթևամիտ և գուցե սրբահոր համար վիրավորական շարժառիթներով. Ալյոշան լավ էր հասկանում այդ։ Իվանն ու Միուսովը կգան հետաքրքրությունից մղված, գուցե ամենակոպիտ հետաքրքրությունից, իսկ հայրը՝ գուցե դերասանություն անելու և խեղկատակ մի տեսարան սարքելու։ Օ՜, Ալյոշան թեև լուռ էր մնում, բայց արդեն խորապես ճանաչում էր իր հորը։ Կրկնում եմ, այս տղան բնավ էլ պարզամիտ չէր այնքան, որքան համարում էին նրան բոլորը։ Ծանր սրտով սպասում էր նշանակված օրվան։ Անշուշտ հոգու խորքում շատ էր մտածում այն մասին, թե մի կերպ վերջ գտնեն բոլոր այդ ընտանեկան անհամաձայնությունները։ Բայց այնուամենայնիվ Ալյոշայի գլխավոր մտահոգության առարկան սրբահայրն էր, գողում էր նրա համար, նրա փառքի համար, վախենում էր, որ վիրավորանքներ կհասցնեն նրան՝ հատկապես Միուսովն իր նուրբ, քաղաքավարի հեգնանքով և գիտուն Իվանն իր մեծամիտ թերասությունններով։

Այդպես էր պատկերացնում այդ ամբողջը։ Նույնիսկ ուզեց սիրտ անել ու նախազգուշացնել սրբահորը, մի որևէ բան ասել նրանց մասին, բայց մտմտաց ու ոչինչ չասաց։ Միայն հավաքույթի նախօրյակին ծանոթի միջոցով հայտնեց Դմիտրիին, որ շատ է սիրում նրան և սպասում է, որ նա խոստումը կատարի։ Դմիտրին մտածմունքի մեջ ընկավ, որովհետև չկարողացավ հիշել, թե ինչ էր խոստացել, և սակայն նամակով պատասխանեց, որ ամեն կերպ կգնա «ստորության դիմաց» զուսպ մնալ, ու թեև խոր հարգանք է տածում սրբահոր և Իվանի նկատմամբ, բայց համոզված է, որ այս հանդիպումը կա՛մ մի ծուղակ է իր դեմ լարված, կամ էլ ստոր մի զավեշտ է։ «Այնուամենայնիվ, ավելի շուտ լեզուս կուլ կտամ, քան թե հարգազանց կլինեմ այն սուրբ մարդու հանդեպ, որին այնքան մեծարում ես»,— գրում էր Դմիտրին նամակի վերջում։ Ալյոշային շատ չսրտապնդեց այդ նամակը։

Գիրք երկրորդ

ԱՆՊԱՏԵՀ ՀԱՎԱՔՈՒԹ

I

ԳԱԼԻՍ ԵՆ ՎԱՆՔ

Դեղեցիկ օր էր, տաք ու պայծառ։ Օգոստոսի վերջն էր։ Սրբահոր հետ տեսակցությունը որոշված էր անել պատարագից անմիջապես հետո՝ մոտավորապես ժամը տասնմեկ անց կեսին։ Սակայն վանք այցելող մեր պարոնայք չբարեհաճեցին ներկա գտնվել պատարագին, այլ եկան ավարտից անմիջապես հետո։ Եկան երկու կառքով։ Առաջին պճնազարդ կառքի մեջ, որին երկու թանկարժեք ձի էր լծված, ժամանեց Պյոտր Ալեքսանդրովիչ Միուսովն իր հեռավոր ու շատ երիտասարդ ազգականի՝ Պյոտր Ֆոմիչ Կալգանովի հետ։ Այս երիտասարդը պատրաստվում էր համալսարան ընդունվելու, բայց Միուսովը, որի մոտ նա առժամանակ ապրում էր, չգի-

տես ինչ պատճառով, ուզում էր նրան քաշել-տանել իր հետ արտասահման՝ Ցյուրիխ կամ Իենա, որպեսզի այնտեղ համալսարան ընդունվի և ավարտի դասընթացը։ Երիտասարդը դեռ վարանում էր։ Մտախոհ էր ու ցրված։ Հաճելի դեմք ուներ, ամուր կազմվածք, բավական բարձր հասակ։ Հայացքը երբեմն տարօրինակորեն անշարժանում էր։ Բոլոր շատ մտացիր մարդկանց նման, երբեմն երկար ու սևեռուն նայում էր դիմացինին, այնինչ բոլորովին չէր տեսնում նրան։ Չխոսկան էր ու փոքր-ինչ անճարակ, բայց մերթ ընդ մերթ, միայն թե երբ առանձին էր լինում որևէ մեկի հետ, հանկարծ սոսկալի զրուցասեր ու պոռթկուն էր դառնում և ծիծաղում էր ամեն մի դատարկ բանի համար։ Բայց արագ ու հանկարծակի սկսած նրա ոգևորությունը նույնքան արագ ու հանկարծակի հանգում էր։ Հագնվում էր միշտ լավ ու նույնիսկ նրբաճաշակ. արդեն մի որոշ ինքնուրույն հարստություն ուներ և դեռ շատ ավելին էր ակնկալում։ Ալյոշայի բարեկամն էր։

Մի շատ հին, ճռճռան, բայց լայնատեղ վարձու կառքով, որին լծված երկու գորշ-վարդագույն ձիերը շատ ետ էին մնացել Միուսովի կառքից, եկավ նաև Ֆյոդոր Պավլովիչն իր որդու՝ Իվան Ֆյոդորովիչի հետ։ Դմիտրի Ֆյոդորովիչին նախորդ օրը հայտնել էին ճիշտ ժամն ու բոպեն, բայց նա ուշացավ։ Այցելուներն իրենց կառքերը թողեցին վանքի պարսպի տակ, հյուրանոցում, և հետիոտն մտան դարպասից։ Բացի Ֆյոդոր Պավլովիչից, մյուս երեքը ոչ մի վանք չէին տեսել երբևիցե, իսկ Միուսովը գուցե երեսուն տարի է, ինչ եկեղեցի էլ չէր մտել։ Նա իր շուրջն էր նայում որոշ հետաքրքրությամբ և մի քիչ էլ սանձարձակ ձևանալով։ Բայց նրա զննող միտքը վանքի ներսում ոչ մի հետաքրքրական բան չգտավ, բացի եկեղեցական ու հարակից շինություններից, թեև սրանք էլ շատ սովորական տեսք ունեին։ Եկեղեցուց դուրս եկած վերջին մարդիկ գնում էին դեպի դարպասը, գլխարկները հանելով ու խաչակնքելով։ Հասարակ ժողովրդի մեջ երևում էին նաև ավելի բարձր դասի եկվոր անձինք՝ երկու-երեք տիկին, մի շատ ծեր գեներալ. սրանք բոլորն էլ հյուրանոցում էին ապրում։ Մուրացկաններն անմիջապես շրջապատեցին մեր այցելուներին, բայց ոչ ոք նրանց ոչինչ չտվեց։ Միայն Պետրուշա Կալգանովը մի տասկոպեկանոց հանեց դրամապանակից, շտապ խցկեց մի պառավի ձեռքը՝ ասված գիտե ինչու նյարդայնանալով ու շփոթվելով, և փութկոտ ասաց. «Հավասար բաժանեցեք»։ Ուղեկիցներից ոչ ոք նրան որևէ բան չասաց դրա համար, այնպես որ շփոթվելու պատճառ չուներ. սակայն, նկատելով այդ, նա ավելի ևս ամոթահար զգաց։

Բայց տարօրինակ էր. պետք է նրանց ժամանումին սպասեին պատշաճ ձևով և գուցե նույնիսկ որոշ հարգանք մատուցեին, որովհետև նրանցից մեկը դեռ վերջերս հազար ռուբլի էր նվիրաբերել, իսկ մյուսը մեծահարուստ կալվածատեր էր և, այսպես ասած, խիստ զարգացած մարդ, որից ամբողջ միաբանությունը որոշ չափով կախում ուներ՝ գետում ձուկ որսալու կապակցությամբ, նայած թե ի՞նչ ընթացք կըստանար դատավարությունը։ Բայց ահա, ոչ մի պաշտոնական անձնավորություն չի դիմավորում նրանց։ Միուսովը մտացիր նայում էր եկեղեցամերձ շիրմաքարերին և հենց ուզում էր ասել, թե այս գերեզմանները երևի մի կլորիկ գումար են նստել մեռելատերերի վրա՝ այսպիսի «սրբազան» վայրում թաղելու իրավունքը ձեռք բերելու համար, սակայն լուռ մնաց. իր պարզ ազատամիտ հեգնանքը համարյա թե զայրույթի էր վերածվում արդեն։

— Բայց ո՞ւմ կարելի է մի բան հարցնել այստեղ, այս անտերանոցում, գրո՜ղը տանի... Պետք է լուծել այս հարցը, որովհետև ժամանակն անցնում է,— ասաց նա մեկին, կարծես ինքն իրեն խոսելով։

Հանկարծ նրանց մոտեցավ մի տարեց, ճաղատ մարդ, ամառային լայն վերարկու հագած և փոքրիկ, քաղցրաժպիտ աչքերով։ Բարձրացնելով գլխարկը, մեղրածոր սվսվացնելով, նա իրեն ներկայացրեց ամբողջ խմբին՝ տուլացի կալվածատեր Մաքսիմով։ Վայրկենապես առաջ ընկավ մեր այցելուներին օգնելու։

— Սրբահայր Զոսիման մենաստանում է ապրում, խուլ մենաստանում, վանքից չորս հարյուր քայլ է, պուրակի մյուս կողմը, պուրակի մյուս կողմը...

— Ես էլ գիտեմ՝ պուրակի մյուս կողմը,— պատասխանեց Ֆյոդոր Պավլովիչը,— բայց հենց ճանապարհը լավ չենք հիշում, վաղուց է չենք եղել։

— Ահա այս դարպասով, և ուղիղ պուրակի միջով... պուրակի միջով։ Գնանք։ Չէի՞ք բարեհաճի... ինքս ձեզ... ես էլ... Ահա այս կողմ, այս կողմ...

Դարպասից դուրս եկան և սկսեցին գնալ պուրակով։ Կալվածատեր Մաքսիմովը, վաթսունամյա ծերունի, ոչ թե քայլում, այլ, ավելի ճիշտ, համարյա վազում էր կողքանց, դառնալով ու նայելով բոլորին՝ ջղաձիգ, աներևակայելի հետաքրքրասիրությամբ։ Աչքերը մի տեսակ շռվել էին կարծես։

— Գիտե՞ք ինչ, մենք մեր գործով ենք գնում այս սրբահոր մոտ,— խստաշեշտ ասաց Միուսովը,— «սույն անձնավորությունը», այսպես ասած, մեզ ունկնդրություն է շնորհել, այնպես որ, թեև ձեզ շնորհակալություն ենք հայտնում ճանապարհը ցույց տալու համար, բայց անշուշտ չենք խնդրի, որ մեզ հետ ներս մտնեք։

— Ես եղել եմ այնտեղ, եղել եմ, եղել եմ արդեն... Un chevalier parfait![1],— և կալվածատերը մատները չրթացրեց օդում։

— Ո՞վ է այդ chevalier[2]-ն,— հարցրեց Միուսովը։

— Սրբահայրը, հոյակա՞պ սրբահայրը, սրբահա՞յրը... Վանքի փառքն ու պատիվը։ Զոսիման։ Այնպիսի՞ մի սրբահայր է...

Բայց նրա անկապակից խոսքերն ընդհատեց վեղարավոր ու կարճահասակ, չափազանց գունատ ու չորուկ մի վանական, որ հասավ այցելուների ետևից։ Ֆյոդոր Պավլովիչն ու Միուսովը կանգ առան։ Վանականը չափազանց քաղաքավարի, խորունկ խոնարհություն անելով ասաց.

— Ամենապատիվ վանահայրը ձեզ բոլորիդ, պարոնայք, խոնարհաբար խնդրում է հաճել իր մոտ ճաշի, մենաստան այցելելուց հետո։ Ժամը մեկին, ոչ ավելի ուշ։ Ձեզ նույնպես,— դարձավ նա Մաքսիմովին։

— Ես անպայմա՞ն կհարգեմ այդ խնդրանքը,— գոռաց Ֆյոդոր Պավլովիչը, սոսկալի ուրախացած հրավերից,— անպայման։ Եվ գիտե՞ք, մենք բոլորս խոսք ենք տվել վայելուչ պահել մեզ այստեղ... Իսկ դուք, Պյոտր Ալեքսանդրովիչ, գալո՞ւ եք ճաշի։

— Դե իհա՞րկե, ինչ խոսք։ Չէ՞ որ հենց եկել եմ այստեղի սովորությունները տեսնելու։ Միայն մի բան է խանգարում ինձ, այն, որ հիմա ձեզ հետ եմ, Ֆյոդոր Պավլովիչ...

[1] Կատարյա՞լ ասպետ (ֆրանս.)։
[2] Ասպետ (ֆրանս.)։

— Հա՞, դեռ Դմիտրի Ֆյոդորովիչն էլ չկա։

— Եվ սքանչելի կլիներ, եթե նա բոլորովին բացակայեր։ Ինչ է, կարծում եք ինձ հաճո՞ւյք է պատճառում ձեր այս խծբծանքը, և դեռ անձամբ ձեր էլ ներկայությունը՝ աղ ու պղպեղ ամեն ինչի վրա։ Ուրեմն գալու ենք ճաշին, շնորհակալություն հայտնեցեք վանահորը,— դարձավ նա վանականին։

— Ոչ, ես պարտավոր եմ ձեզ առաջնորդել սրբահոր խուցը, —պատասխանեց վանականը։

— Իսկ ես, քանի այդպես է, վանահոր մոտ կգնամ, այս միջոցին ուղղակի վանահոր մոտ կգնամ,— ծլվլաց կալվածատեր Մաքսիմովը։

— Վանահայրն զբաղված է այս րոպեիս, բայց ձեր կամքն է...— տատանվեց վանականը։

— Շատ անբերես բիձուկ է,— նկատեց Միուսովը բարձրաձայն, երբ կալվածատեր Մաքսիմովը վազեց ետ դեպի վանք։

— Նման է ֆոն Զոնին,— ասաց հանկարծ Ֆյոդոր Պավլովիչը։

— Դուք էլ հենց ա՛յդ միայն գիտեք... Որտեղի՞ց է նա ֆոն Զոնին նման։ Ինքներդ տեսե՞լ եք ֆոն Զոնին։

— Նկարն եմ տեսել։ Դիմագծերով չէ, բայց ինչ-որ անբացատրելի նմանություն կա։ Ֆոն Զոնի մաքո՛ւր կրկնօրինակը։ Հենց միայն դեմքին նայելով՝ միշտ հասկանում եմ այդ բանը։

— Գուցե իրոք, այդ հարցում գիտակ մարդ եք։ Միայն թե լսեցե՛ք, Ֆյոդոր Պավլովիչ, դուք հիմա ինքներդ հաճեցիք ասել, թե մենք խոսք ենք տվել վայելուչ պահել մեզ։ Հիշեցե՛ք այդ։ Առում եմ ձեզ, զուսպ մնացեք։ Իսկ եթե սկսեք խեղկատակ ձևանալ, իմացե՛ք, ես մտադիր չեմ, որ այստեղ ինձ էլ ձեր արշինով չափեն... Տեսնո՞ւմ եք ինչ մարդ է,— դարձավ նա վանականին,— վախենում եմ սրա հետ շնորհքով մարդկանց մոտ գնալ։

Վանականի գունատ, անարյուն շրթունքների վրա երևաց մի նուրբ, անխոս ժպիտ, որի մեջ որոշ խորամանկություն էր թաքնված, բայց նա ոչինչ չպատասխանեց, և շատ պարզ էր, որ լուռ մնաց սեփական արժանապատվության զգացմունքին անսալով։ Միուսովն ավելի ևս կիտեց հոնքերը։

«Օ՜հ, գրո՜ղը տանի սրանց բոլորին, դարերով մշակված արտաքին երևույթ է միայն, իսկ խորքում՝ շառլատանություն և տխմարությո՜ւն»,— անցավ նրա մտքով։

— Ահա՜ մենաստանը, հասա՜նք,— գոռաց Ֆյոդոր Պավլովիչը,— դարպասը փակ է։

Եվ նա սկսեց լայն-լայն խաչակնքել սրբերի առաջ, որոնք նկարված էին դարպասի վերևն ու երկու կողմը։

— Ո՜ր գյուղն երթաս, էն գյուղի գդակը դիր,— ասաց նա։— Քսանհինգ սուրբ է ճգնում այստեղ՝ այս մենաստանում։ Իրար երես են նայում ու կաղամբ են ուտում։ Եվ ոչ մի հատ կին չի կարող այս դարպասից ներս մտնել, հենց այս է ամենից զարմանալին։ Եվ դա իրականությո՜ւն է ախր։ Բայց ինչո՞ւ է իմ ականջին հասել, թե սրբահայրն ընդունում է տիկիններին,— դարձավ նա հանկարծ վանականին։

— Հիմա էլ այստեղ հասարակ ժողովրդից կանայք կան, այնտեղ են ահա, պատշգամբի մոտ պառկած սպասում են։ Իսկ բարձր դասի տիկնանց համար երկու փոքր սենյակ է կառուցված նույն պատշգամբին կից, սակայն պարսպից դուրս, ահա հենց այս լուսամուտներն են։ Եվ սրբահայրը, երբ առողջ է, ներքին անցքով ելնում է նրանց մոտ, այսինքն դարձյալ պարսպից դուրս։ Այժմ էլ ահա մի խարկովցի կալվածատիրուհի, տիկին Խոխլակովան, սպասում է իր անդամալույծ դստեր հետ։ Հավանաբար սրբահայրը խոստացել է երևալ նրանց, թեև վերջերս նա այնքան տկար է, որ նույնիսկ ժողովրդի առաջ հազիվ է հայտնվում։

— Նշանակում է, մենաստանից համենայն դեպս մի փոքրիկ անցք եք բացել դեպի տիկինները։ Հիմա չմտածե՞ք, հայր սուրբ, թե ես ինչ-որ ակնարկություն եմ անում։ Հենց այնպես ասում եմ։ Դուք գիտե՞ք, լսե՞լ եք, որ Աթոսում ոչ միայն կանանց այցելությունը, այլ առհասարակ կանանց ներկայությունն արգելված է, նույնիսկ ոչ մի իգական սեռի արարած ներս չեն թողնում՝ ո՛չ հավ, ո՛չ հնդկահավ, ո՛չ երինջ...

— Ֆյո՛դոր Պավլովիչ, հենց հիմա ետ կգնամ և ձեզ առանձին կթողնեմ այստեղ։ Իսկ եթե ես չլինեմ՝ ձեզ դուրս կանեն այստեղից, ա՛յ ասում եմ։

— Բայց ինչո՞վ եմ ձեզ խանգարում, Պյոտր Ալեքսանդրովիչ։ Տեսեք, տեսե՞ք,— գոռաց նա հանկարծ մենաստանի

պարսպից ներս անցնելով,— ինչպիսի՞ վարդահոտում են ապրում։

Իրոք, թեև վարդեր չկային այժմ, բայց աշնանային հազվագյուտ ու գեղեցիկ ծաղիկներ կային ամենուրեք, ուր կարելի էր աճեցնել դրանք։ Երևում էր, որ մի փորձառու ձեռք խնամում է բուրաստանը։ Ծաղկոցներ էին հարդարված եկեղեցիների բակերում և գերեզմանների միջև։ Փայտաշեն, միահարկ, անդաստակով տնակը, որի մեջ սրբահոր խուցն էր գտնվում, նույնպես ծաղիկներով էր շրջապատված։

— Բայց այս ամբողջը եղե՞լ է նախորդ սրբահոր՝ Վարսոնոֆիի ժամանակ։ Ասում են, նա գեղեցիկ բաներ չէր սիրում, նույնիսկ տեղից թռնում ու փայտով ծեծում էր տիկինների ցեղին,— նկատեց Ֆյոդոր Պավլովիչը, բարձրանալով արտասանդուղքով։

— Սրբահայր Վարսոնոֆին իրոք երբեմն արտառոց էր թվում, բայց նրա մասին մյուս պատմվածներն էլ մեծ մասամբ հիմարություն են։ Իսկ փայտով ոչ ոքի չէր ծեծում, երբե՛ք,— պատասխանեց վանականը։— Այժմ, պարոնայք, համբերեցեք մի րոպե, ես ծանուցանեմ ձեր գալուստը։

— Ֆյոդոր Պավլովիչ, վերջին անգամ պայման եմ դնում, լսո՞ւմ եք։ Ձեզ լավ պահեցեք, թե չէ՝ ձեր դասը կտամ,— հասցրեց մի անգամ ևս մրթմրթալ Միուսովը։

— Բնավ չեմ հասկանում, ինչո՞ւ եք այդպես սոսկալի հուզված,— հեգնորեն նկատեց Ֆյոդոր Պավլովիչը։— Չլինի՞ ձեր մեղքերից եք վախենում։ Հա՜, ասում են՝ նա մարդու աչքերից է հասկանում, թե ով ինչ ցավով է եկել։ Բայց այդ որքա՞ն բարձր եք գնահատում նրանց կարծիքը, այն էլ դո՞ւք, այդպիսի փարիզցի՝ և առաջադեմ մի պարոն։ Ուղղակի զարմացնում եք ինձ, հա՜։

Սակայն Միուսովը ժամանակ չունեցավ պատասխանելու այդ ծաղրանքին. հրավիրեցին ներս անցնել։ Նա մտավ փոքրինչ ջղայնացած...

«Դե՜ հիմա, գիտեմ ինձ, ջղայնացած եմ, վեճի կբռնվեմ... կսկսեմ բորբոքվել՝ կնվաստացնեմ ինձ էլ, իմ գաղափարներն էլ»,— անցավ նրա մտքով։

II

ՄԻՇՏ ՆՈՒՅՆ ԽԵՂԿԱՏԱԿԸ

Նրանք սենյակ մտան համարյա նույն վայրկյանին, երբ սրբահայրը, տեսնելով նրանց, դուրս եկավ իր փոքրիկ ընդունարանից։ Խուցում արդեն սրբահորն էին սպասում մենաստանի երկու աբեղաներ, մեկը՝ հայր գրադարանապետը, իսկ մյուսը՝ հայր Պախոմն, որ հիվանդ մարդ էր, թեև ոչ ծեր, բայց և, ինչպես ասում էին, գիտուն էր շատ։ Անկյունում կանգնած սպասում էր նաև մոտ քսաներկու տարեկան, աշխարհիկ հագուստով մի տղա՝ հոգևոր ճեմարանի սան և ապագա աստվածաբան, որ այդպես էլ կանգնած մնաց հետագա ամբողջ տեսակցության ընթացքում։ Չգիտես ինչու, վանքն ու ամբողջ միաբանությունը հովանավորում էին նրան։ Բավական բարձրահասակ էր նա, թարմ էր դեմքը, լայն այտոսկրեր ուներ և խելացի, ուշադիր, նեղլիկ, շագանակագույն աչքեր։ Կատարյալ պատկառանք կար դեմքին, բայց առանց ակնհայտ քծնանքի, վայելուչ։ Մտնող հյուրերին ողջույն չտրվեց, լինելով նրանց ոչ հավասար, ուստի և ստորադաս ու կախյալ անձնավորություն։

Սրբահայր Զոսիման դուրս եկավ մի նորընծայի և Ալյոշայի ընկերակցությամբ։ Աբեղաները վեր կացան ու նրան ողջունեցին խորին երկրպագությամբ, մատներով դիպչելով հատակին, հետո նրա օրհնությունն ստանալով՝ համբուրեցին ձեռքը։ Օրհնելով նրանց, սրբահայրը պատասխանեց նույնքան խոր երկրպագությամբ, մատներով դիպչելով հատակին, և իր համար էլ օրհնություն խնդրեց յուրաքանչյուր աբեղայից։ Ամբողջ արարողությունը տեղի ունեցավ մեծ լրջությամբ, ոչ թե ամենօրյա մի ծեսի նման, այլ համարյա զգացմունքով։ Սակայն Միուսովին թվաց, թե այդ բոլորն արվում են տպավորություն գործելու միտումով։ Նա կանգնած էր իր ընկերակիցների առջևում։ Պատշաճ կլիներ, որ (երեկ իրիկուն նույնիսկ մտածել էր այդ մասին) մի կողմ թողներ ամեն գաղափարական նկատառում և, պարզ քաղաքավարությունից ելնելով, հետևելով տեղի սովորությանը, գոնե մոտենար սրբահոր օրհնությունն ստանալու, եթե նույնիսկ չհամբուրեր նրա ձեռքը։ Բայց հիմա տեսնելով

աբեղաների այդ բոլոր երկրպագություններն ու աջահամբույրները, մի վայրկյանում իր միտքը փոխեց։ Փքված ու լրջադեմ՝ խոր գլուխ տվեց աշխարհիկ ձևով ու ետ քաշվեց դեպի աթոռը։ Ճիշտ նույն ձևով վարվեց նաև Ֆյոդոր Պավլովիչը, այս անգամ ուղղակի կապկելով Միուսովին։ Իվան Ֆյոդորովիչը ողջունեց խիստ լուրջ ու քաղաքավարի, բայց նույնպես ձեռքերը կողքերին պահած, իսկ Կալգանովն այնքան շփոթվեց, որ բոլորովին չխոնարհեց գլուխը։ Սրբահայրն իջեցրեց իր ձեռքը, որ բարձրացրել էր օրհնություն տալու համար, և մի անգամ ևս խոնարհվելով նրանց՝ բոլորին խնդրեց նստել։ Արյունը խուժեց Ալյոշայի այտերին. ամաչեց նա։ Իրականանում էին նրա վատ նախազգացումները։

Սրբահայրը նստեց կարմիր փայտե, կաշեպատ ու շատ հնաձև բազմոցի վրա, իսկ չորս հյուրերին, երկու աբեղաներից բացի, կողք-կողքի նստեցրեց հանդիպակաց պատի տակ՝ կարմիր փայտե չորս աթոռներին, որոնք հնամաշ սև կաշվով էին պատած։ Աբեղաները նստեցին նրանց երկու կողմը, մեկը՝ լուսամուտի, իսկ մյուսը՝ դռան մոտ։ Ճեմարանի սանը, Ալյոշան ու նորընծան կանգնած մնացին։ Խուցը ընդարձակ չէր և մի տեսակ խունացած տեսք ուներ։ Միայն ամենից անհրաժեշտ իրերն ու կահույքը կային, դրանք էլ կոպիտ էին ու խղճուկ։ Երկու ծաղկաման էր դրված պատուհանում, իսկ անկյունում կային բազմաթիվ սրբապատկերներ, որոնցից մեկը վիթխարի չափեր ուներ, ըստ երևույթին նկարված էր եկեղեցական հերձվածից դեռ շատ առաջ և պատկերում էր աստվածածնին։ Դրա առաջ կանթեղ էր վառվում։ Կողքին երկու ուրիշ սրբապատկեր կար փայլուն պարագարդերով, իսկ դրանց մոտ՝ փոքրիկ արվեստակյալ քերովբեներ, ճենապակյա հավկիթներ, կաթոլիկական փղոսկրե մի խաչ, որին փարվել էր Mater dolorosa-ն, ինչպես նաև մի քանի արտասահմանյան փորագրանկարներ՝ անցյալ դարերի իտալացի մեծ նկարիչների գործերից օրինակված։ Այդ նրբագեղ ու թանկարժեք փորագրանկարների կողքին աչք էին ծակում սրբերի, նահատակների և այլ որբագործ մարդկանց ռուսական ամենահասարակ վիմագրությունների մի քանի վերատպները, որոնք երկու-երեք կոպեկով ծախվում են բոլոր տոնավաճառներում։ Կային նաև ռուս ժամանակակից ու հին եպիսկոպոսների մի քանի

վիմագրական դիմանկարները, բայց արդեն մյուս պատերին։ Միուսովը մի հարևանցի ակնարկ գցեց ամբողջ այդ «պաշտոնական կարգուսարքի» վրա և սեեռուն հայացքով նայեց սրբահորը։ Նա հարգում էր իր սեփական հայացքը, մի թուլություն, որ համենայն դեպս ներելի էր նրան, նկատի առնելով, որ արդեն հիսուն տարեկան էր. այդ տարիքում խելացի, նրբակիրթ և ապահովված մարդը միշտ ավելի հարգալից է վերաբերվում ինքն իրեն, երբեմն իր կամքից էլ անկախ։

Առաջին վայրկյանից սրբահայրը դուր չեկավ նրան։ Իրոք, սրբահոր դեմքին կար մի բան, որ Միուսովից բացի ուրիշ շատերին ևս կարող էր դուր չգալ։ Նա կարճահասակ, կորացած մի մարդուկ էր՝ շատ թույլ ոտքերով, ընդամենը վաթսունհինգ տարեկան, բայց հիվանդության պատճառով շատ ավելի ծեր էր թվում՝ գոնե առնվազն տասը տարով։ Նրա շատ չորուկ, սմքած դեմքն ամբողջությամբ մանր կնճիռներով էր ծածկված։ Հատկապես շատ կնճիռներ կային աչքերի շուրջ, որոնք փոքր էին, բաց գույնի, արագաշարժ ու փայլուն՝ երկու պսպղուն կետի նման։ Միայն քունքերին մի քանի թել սպիտակած մազ էր մնացել, մորուքը փոքր էր, նոսր ու սրածայր, իսկ հաճախակի ժպտացող շրթունքները բարալիկ էին՝ երկու փոքրիկ թելի նման։ Քիթը ոչ թե երկար էր, այլ սուր, ասես թռչունի կտուց լիներ։

«Ամեն ինչից երևում է, որ քինախնդիր, ողորմելի հոգի է՝ մանր գոռոզությամբ տարված»,— անցավ Միուսովի մտքով։ Ընդհանրապես նա շատ դժգոհ էր հիմա իրենից։

Պատի փոքր, էժանագին, ճոճանակավոր ժամացույցն արագ զարկերով խփեց ուղիղ տասներկուսը, և դա առիթ ընծայեց խոսակցությունն սկսելու։

— Ճիշտ ու ճիշտ իսկական ժամն է,— գոռաց Ֆյոդոր Պավլովիչը,— բայց դեռ իմ որդին՝ Դմիտրի Ֆյոդորովիչը չկա ու չկա։ Ներողություն եմ խնդրում նրա համար, սրբազա՜ն սրբահայր։ (Ալյոշան ամբողջ մարմնով սարսռաց այդ «սրբազան սրբահայր» արտահայտությունից)։ Իսկ ինքս միշտ ճշտապահ եմ, բոլե բոլեի, հիշելով, որ ճշտապահ լինելը թագավորների նրբավարությունն է...

— Բայց հո դո՛ւք գոնե թագավոր չեք,— մրթմրթաց Միուսովը, իսկույն չկարողանալով համբերել։

— Այո, ճիշտ է, թագավոր չեմ։ Եվ պատկերացրեք, Պյոտր Ալեքսանդրովիչ, ինքս էլ ախր գիտեի, որ չեմ, աստվա՜ծ վկա։ Բայց ահա՛ խնդրեմ, միշտ էլ այսպես անտեղի բաներ եմ անում։ Ձե՛ր գերաշնորհություն,— բացականչեց նա վայրկենապես բռնկված զգացմունքով։— Դուք ձեր առաջ տեսնում եք ճշմարի՛տ խեղկատակի։ Հենց այսպես էլ ներկայացնում եմ ինքս ինձ։ Հին սովորություն է, ավա՜ղ։ Եվ եթե երբեմն անտեղի փչում եմ, այդ էլ դիտմամբ եմ անում, ծիծաղեցնելու և հաճելի լինելու մտադրությամբ։ Պե՛տք է որ մարդ հաճելի լինի, այնպես չէ՞։ Յոթ տարի առաջ էր՝ գնացի մի փոքր քաղաք, գործ-մորձ ունեի այնտեղ և ուզում էի ինչ-որ առևտրականների հետ ընկերություն հաստատել։ Գնացինք իսպրավնիկի մոտ, որովհետև բան-ման պետք է խնդրեինք նրանից և հրավիրեինք մեզ մոտ ճաշի։ Դուրս է գալիս իսպրավնիկը՝ բարձրահասակ, գեր, խարտյաշ և մռայլ մի մարդ՝ ամենավտանգավոր տիպը նման դեպքերում, որովհետև մաղձ են այդպիսիները, մաղձ։ Ուղղակի դիմում եմ նրան և, գիտե՞ք, աշխարհիկ մարդու սանձարձակությամբ՝ «Պարո՛ն իսպրավնիկ,— ասում եմ,— եղեք մեր, այսպես ասած, Նապրավնիկը»։— «Ինչպե՞ս թե,— ասում է,— Նապրավնիկ»։ Առաջին ակնթարթից արդեն տեսնում եմ, որ գործը գլուխ չի գալիս։ Կանգնել է լուրջ-լուրջ, հակառակվում է։ «Ես ուզում էի կատակ անել,— ասում եմ,— որ ուրախ մթնոլորտ լինի, քանի որ պարոն Նապրավնիկը ռուս հայտնի դիրիժոր է, իսկ մեզ էլ հենց մի տեսակ դիրիժոր է հարկավոր՝ մեր ձեռնարկած գործի ներդաշնակության համար...»։ Ախր խելացի բացատրություն եմ տվել իմ արած համեմատությանը, չէ՞։ «Ներեցեք,— ասում է,— ես իսպրավնիկ եմ և թույլ չեմ տա, որ իմ կոչումը բառախաղերի նյութ դարձնեն»։ Շուռ եկավ ու գնում է։ Վազում եմ ետևից, գոռում եմ. «Այո՛, այո՛, դուք իսպրավնիկ եք, ոչ թե Նապրավնիկ»։ «Ոչ,— ասում է,— քանի որ ասվել է արդեն, ուրեմն Նապրավնիկ եմ»։ Եվ պատկերացրեք, փչացա՜վ մեր գործը։ Եվ միշտ այդպես եմ ես, միշտ այդպես։ Հենց իմ սիրալիրությամբ էլ անպայման վնասում եմ ինքս ինձ։ Մի անգամ, շատ տարիներ առաջ, մի ազդեցիկ անձնավորության ասացի. «Ձեր տիկինը շուտ առնվող կին է»,— այսինքն պատ-

վախնդրության, այսպես ասած բարոյական հատկությունների իմաստով։ Նա էլ հանկարծ ի՞նչ պատասխանի ինձ՝ «Իսկ դուք նրան առե՞լ եք»։ Զդիմացա, դե արի՛ մի սիրալիր բան ասեմ՝ մտածեցի մեկեն։ «Այո,— ասացի,— առել եմ»։ Եվ նա տեղն ու տեղը առավ ու տվե՞ց ինձ... Բայց դա վաղուց է պատահել, այնպես որ ամոթ չէ պատմելը։ Միշտ, մի՞շտ վնասում եմ ինքս ինձ։

— Հիմա էլ նույնն եք անում,— մրթմրթաց Միուսովը զզվանքով։

Սրբահայրը լուռ զննում էր և՛ մեկին, և՛ մյուսին։

— Մի՞թե։ Պատկերացրեք, այդ էլ գիտեի, Պյոտոր Ալեքսանդրովիչ, և նույնիսկ, հավատացեք, հենց որ սկսեցի խոսել՝ նախազգացի, որ նույնն եմ անում։ Եվ գիտե՞ք ինչ, մինչև անգամ նախազգում էի, որ առաջինը դուք ինձ նկատողություն կանեք։ Այն վայրկյանին, երբ տեսնում եմ, որ իմ կատակից բան դուրս չի գալիս, իմ երկու այտերը, ձերդ գերաշնորհություն, սկսում են չորանալ-կպչել ներքևի լնդերին, համարյա թե ջղաձգվում են մի տեսակ։ Վաղուց այդպես է, դեռ պատանի հասակից, երբ ես ազնվականների մոտ ձրիակերություն էի անում և հացկատակությամբ էի ճարում իմ ապրուստը։ Ես ի բնե խեղկատակ եմ, ծնված օրից, այսինքն միևնույն է՝ թե ցանցառ եմ, ձերդ գերաշնորհություն։ Ընդունում եմ, գուցե և չար ոգի է թաքնված իմ մեջ, բայց փոքր չափսի է այդ չար ոգին, ավելի մեծը ուրիշ բնակարան կընտրեր, միայն թե ոչ ձերը, Պյոտոր Ալեքսանդրովիչ, դուք էլ ախր մի կարգին բնակարան չեք։ Բայց մեկ է՝ ես հավատում եմ, աստծուն եմ հավատում։ Միայն այս վերջերս կասկած մտավ մեջս, բայց ահա հիմա նստել եմ և մեծախորհուրդ խոսքերի եմ սպասում։ Ես, ձերդ գերաշնորհություն, փիլիսոփա Դիդերոտին եմ նման։ Հայտնի՞ է ձեզ արդյոք, սրբազնագույն հայր, թե ինչպես փիլիսոփա Դիդերոտն այցելում է միտրոպոլիտ Պլատոնին՝ Եկատերինա կայսրուհու ժամանակ։ Մտնում է և ուղղակի ասում. «Աստված չկա»։ Դրա վրա՝ մեծ եպիսկոպոսը բարձրացնում է մատը և պատասխանում. «Ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ Ոչ գոյ Աստուած»։ Փիլիսոփան հենց տեղն ու տեղը ծունկի է գալիս։ «Հավատում եմ,— գոռում է,— և պատրաստ եմ մկրտվելու»։ Եվ տեղն ու տեղը մկրտում են։ Իշխանուհի Դաշկովան կնքամայրն է լինում, իսկ Պոտյոմկինը՝ կնքահայրը...

— Ցյո՛դոր Պավլովիչ, անտանելի՛ է։ Ինքներդ էլ գիտեք, որ ստում եք, գիտեք, որ այդ հիմար անեկդոտը ճիշտ չէ, էլ ինչո՞ւ եք ձեր թափում,— ասաց Միուսովը դողացող ձայնով, այլևս բոլորովին չկարողանալով զսպել իրեն։

— Ամբողջ կյանքո՞ւմս նախազգում էի, որ ճիշտ չէ,— եռանդով բացականչեց Ցյոդոր Պավլովիչը։— Բայց ասեմ ձեզ ամբողջ ճշմարտությունը, պարոնայք։ Մե՞ծդ սրբահայր։ Ներեցեք, ինքս հիմա հնարեցի վերջին մանրամասնությունը՝ Դիդերոտի մկրտության պատմությունը, հենց սույն րոպեին, հենց պատմելու ժամանակ, իսկ առաջ մտքովս էլ չի անցել երբեք։ Ավելի զգայացունց դարձնելու համար հնարեցի։ Ձեր եմ թափում, Պյոտոր Ալեքսանդրովիչ, որ ավելի հաճելի լինեմ։ Թեև այն էլ ասեմ, որ երբեմն ինքս էլ չգիտեմ՝ ինչու եմ այդպես անում։ Իսկ գալով Դիդերոտին, այդ «ասաց անզգամն»-ը մի քսան անգամ լսել եմ մեր տեղացի կալվածատերերից, երբ երիտասարդ էի և նրանց մոտ էի ապրում։ Ի միջի այլոց, Պյոտոր Ալեքսանդրովիչ, ձեր հորաքրոջից էլ եմ լսել՝ Մավրա Ֆոմինիշնայից։ Նրանք բոլորն էլ մինչև այսօր հավատացած են, թե անաստված Դիդերոտը միտրոպոլիտ Պլատոնի մոտ եկել է աստծո մասին վիճելու...

Միուսովը վեր կացավ, ոչ միայն համբերությունը կորցնելով, այլև կարծես նույնիսկ չնկատելով, թե ինչ է անում։ Կատաղել էր նա և գիտակցում էր, որ ինքն է ծիծաղելի դառնում իր կատաղության պատճառով։ Իրոք, խուցում աներևակայելի մի բան էր կատարվում։ Դեռ նախկին սրբահայրերի ժամանակ, արդեն քառասուն կամ հիսուն տարի է, այցելուներ էին հավաքվում այս նույն խուցում, բայց միշտ էլ խորագույն երկյուղածության զգացումով։ Համարյա բոլոր նրանք, ովքեր ընդունվում էին այս խուցը, ներս մտնելիս հասկանում էին, որ մեծ շնորհ է արվում իրենց։ Շատերը ծունկի էին գալիս և ամբողջ այցելության ընթացքում մնում էին ծնկաչոք։ Նույնիսկ բազմաթիվ «բարձրաստիճան» անձինք, գիտնական մարդիկ, ավելին, մինչև անգամ որոշ ազատախոհ մարդիկ, որոնք գալիս էին կա՛մ հետաքրքրությունից մղված և կամ մի այլ շարժառիթով, բոլորն էլ երբ խուց էին մտնում ընդհանուրի հետ կամ առանձին տեսակցության համար՝ իրենց առաջնագույն պարտականությունն էին համարում ամենախոր պատկառանք ու նրբանկատություն ցուցաբերել ամբողջ տե-

սակցության ընթացքում, մանավանդ որ այստեղ փողի խընդիր չկար, այլ կար միայն շնորհ ու սեր մի կողմից, իսկ մյուս կողմից կար խոստովանանք և հոգեկան մի ծանր հարց կամ սրտի դժվարին մի ճգնաժամ լուծելու բուռն ցանկություն։ Այնպես որ, հանկարծ Ֆյոդոր Պավլովիչի այս անհարգալից խեղկատակությունը տարակուսանք ու զարմանք պատճառեց ներկաներին, գոնե նրանցից մի քանիսին։ Աբեղաները, որոնք իրենց դեմքի արտահայտությունը բնավ չէին փոխել, մեծ ուշադրությամբ սպասում էին, թե ինչ կասի սրբահայրը, բայց կարծես պատրաստվում էին արդեն վերկենալ, ինչպես Միուսովը։ Ալյոշան հազիվ էր զսպում լացը և կանգնել էր գլխահակ։ Նրան ամենից ավելի տարօրինակ էր թվում այն, որ իր եղբայրը՝ Իվան Ֆյոդորովիչը, միակ մարդը, որի վրա նա հույս էր դրել և որ կարող էր ազդեցություն գործել հոր վրա, հիմա կատարելապես անշարժ նստել էր աթոռին, աչքերը խոնարհած, և երևի նույնիսկ հարցազնին հետաքրքրությամբ սպասում էր, թե ինչով է վերջանալու այս ամբողջը, կարծես ինքը բոլորովին կողմնակի մարդ լիներ այստեղ։ Ալյոշան չէր էլ համարձակվում նայել Ռակիտինին՝ ճեմարանի սանին, որ նույնպես իր մոտիկ ծանոթն էր, համարյա մտերիմը. ամբողջ վանքում միայն ինքն էր, որ գիտեր Ռակիտինի մտքերը։

— Ներեցեք ինձ...— սկսեց Միուսովը, դիմելով սրբահորը,— ձեզ մի գուցե թվում է, թե ես նույնպես մասնակից եմ այս ամոթալի զավեշտին։ Իմ սխալն այն է, որ հավատացել եմ, թե նույնիսկ Ֆյոդոր Պավլովիչի նման մեկը կուզենա հասկանալ իր պարտականությունները, երբ այցի է գալիս այսքան պատկառելի մի անձնավորության... Չէի ենթադրում, թե ստիպված կլինեմ ներողություն խնդրել հենց պարզապես նրա հետ գալուս համար...

Պյոտր Ալեքսանդրովիչը չվերջացրեց իր խոսքը և, լրիվ ջփոթված, ուզում էր արդեն սենյակից դուրս գնալ։

— Մի՛ անհանգստանաք, խնդրում եմ,— կանգնեց հանկարծ սրբահայրն իր թույլ ոտքերի վրա և բռնելով Պյոտր Ալեքսանդրովիչի երկու ձեռքերից՝ կրկին նստեցրեց աթոռին։— Հանգիստ եղեք, խնդրում եմ։ Ես հատկապես խընդրում եմ ձեզ լինել իմ հյուրը։— Եվ խոնարհվելով՝ նա ետ դարձավ ու նստեց նորից իր փոքրիկ բազմոցին։

— Մե՛ծդ սրբահայր, ասացե՛ք, ես ձեզ վիրավորո՞ւմ եմ իմ աշխուժությամբ, թե ոչ,— գոչեց հանկարծ Ֆյոդոր Պավլովիչը, երկու ձեռքերով բռնելով իր աթոռի բազրիքները և կարծես պատրաստվելով վեր թռնել, եթե աննպաստ լիներ պատասխանը։

— Ձեզ նույնպես թախանձագին խնդրում եմ՝ մի՛ անհանգստանաք և մի՛ ճնշվեք,— ազդեցիկ շեշտով ասաց սրբահայրը նրան։— Մի՛ ճնշվեք, ձեզ լրիվ համարեցեք ձեր տանը։ Եվ նամանավանդ՝ այնքան մի՛ ամաչեք դուք ձեզնից, քանզի այդ է լոկ պատճառն այս բոլորի։

— Լրիվ իմ տա՞նը։ Այսինքն հենց իմ բնակա՞ն վիճակում։ Օ՜, դա շատ է, չափազանց շատ է, բայց ընդունում եմ խորի՜ն հուզմունքով։ Գիտե՞ք ինչ, հայր օրհնյալ, դուք ինձ մի՛ հրավիրեք իմ բնական վիճակին, այդքան մի՛ վստահանաք... ինքս էլ չեմ գնա մինչև այդ բնական վիճակը։ Ձեզ խնայելու համար եմ այդպես նախազգուշացնում։ Իսկ մնացյալը, դե՜հ, անորոշության մշուշում է թաղված առայժմ, թեև ոմանք կցանկանային մի լավ նախշել ինձ ձեր առաջ։ Ձեր արտն եմ քար գցում, Պյոտր Ալեքսանդրովիչ, իսկ ձեզ՝ սրբազնագո՜ւյն էակ, ձե՜զ՝ ահա իմ սքանչացո՜ւմն եմ հորդառատ զեղում։— Նա վերկացավ ու ձեռքերը վեր նետելով արտասանեց։— «Երանի՜ է որովայնին՝ որ կրեացն զքեզ, և ստեանցն որ դիեցուցին զքեզ», ստեա՜նցն մանավանդ։ Դուք հիմա ձեր դիտողությամբ թե՝ «Այնքան մի ամաչիր դու քեզանից, քանզի այդ է լոկ պատճառն այս բոլորի», դուք այդ դիտողությամբ կարծես ինձ ճեղքեցիք մինչև իմ ուղն ու ծուծը և կարդացիք իմ հոգին։ Այո, երբ ես մարդկանց հետ եմ լինում, հենց այդպես էլ ինձ թվում է, թե ես ամենից ավելի ստորն եմ, և թե բոլորն ինձ խեղկատակի տեղ են դնում, դե՜հ ես էլ՝ «արի՛ ուրեմն, ասում եմ, իսկապես խեղկատակի դեր խաղամ, չե՜մ վախենում ձեր կարծիքից, որովհետև բոլորդ էլ, առաջինից մինչև վերջինը, ինձնից ավելի ստոր եք»։ Ա՜յ դրա համար էլ ես խեղկատակ եմ, ամոթի՜ց եմ խեղկատակ, մեծդ սրբահայր, ամոթից։ Հենց կասկածամիտ լինելուց է, որ գժություններ եմ անում։ Ա՜խ, եթե միայն վստահ լինեի, որ մարդկանց հանդիպելիս՝ բոլորն էլ ինձ անմիջապես կընդունեն իբրև ամենահամակրելի և ամենախելացի մարդու, աստվա՜ծ իմ, ի՜նչ բարի մարդ կլինեի այն ժամանակ։ Վա՜ր դապետ,— հան-

կարծ նա ծունկի ընկավ,— զի՞նչ գործեցիր զի զկեանս յաւիտենական ժառանգեցիր։

Անգամ հիմա դժվար էր որոշել՝ կատակո՞ւմ է նա, թե իրոք հուզված է այդպես։

Սրբահայրն աչքերը բարձրացրեց նրա վրա և ասաց ժպտալով.

— Ինքներդ վաղուց գիտեք, թե ինչ պետք է անեք, բավական խելք ունեք դրա համար. մի՛ անձնատուր լինեք հարբեցողության և խոսքի սանձարձակության, մի՛ անձնատուր լինեք հեշտասիրության, մանավանդ դրամապաշտության. և փակեցեք ձեր գինետները, եթե չեք կարող բոլորը՝ գոնե երկուքը կամ երեքը։ Եվ գլխավորը, ամենագլխավորը նամանավանդ՝ մի՛ ստեք։

— Այսինքն ուզում եք ասել՝ Դիդերոտի՞ մասին, հա՞։

— Ո՛չ, ոչ թե Դիդերոտի մասին։ Գլխավորաբար՝ դուք ձե՛ր առջև մի ստեք։ Ով ստում է ինքնիրեն ու ականջ է դընում իր սեփական սուտին՝ հասնում է այնտեղ, որ այլևս չի կարող որևէ ճշմարտություն գտնել ո՛չ իր մեջ, ո՛չ էլ շրջապատում, ուստի և անհարգալից է դառնում թե՛ իր անձի, թե՛ ուրիշների նկատմամբ։ Իսկ ոչ ոքի չհարգելով՝ դադարում է սիրել, և որպեսզի զբաղեցնի ու զվարճացնի իր սիրազուրկ անձը՝ հանձնվում է կրքերին ու կոպիտ հաճույքներին և իր մոլությունների մեջ հասնում է կատարելապես անասնական վիճակի, և այդ բոլորի աղբյուրը՝ մարդկանց ու սեփական անձի առաջ անընդհատ ստելն է։ Ինքն իրեն ստողը կարող է և ավելի շուտ վիրավորվել, քան ուրիշ մարդիկ։ Չէ՞ որ երբեմն շատ հաճելի է վիրավորվելը։ Այնպես չէ՞։ Եվ մարդը գիտե, որ ոչ ոք նրան չի վիրավորել, և որ ինքն է իր համար հնարել վիրավորանքն ու զարգարել ստերով, ինքն է չափազանցել, որպեսզի պատկերը գեղեցիկ լինի, բռնել է մի բառից և լուն ուղտ է դարձրել,— ինքն էլ գիտե այդ բոլորը, բայց այնուամենայնիվ ինքն է առաջինը վիրավորվում, վիրավորվում է հաճույք ստանալու չափ, մեծ գոհունակություն զգալու չափ, և այդպիսով հասնում է նաև իսկական թշնամանքի... Բայց վեր կացեք, նստեցեք, շատ եմ խնդրում, այդ բոլորը նույնպես կեղծ շարժուձևեր են...

— Երանավե՛տ մարդ։ Տվե՛ք համբուրեմ ձեր ձեռքը,— մոտ թռավ Ֆյոդոր Պավլովիչը և արագորեն մի ազմկոտ համբույր դրոշմեց սրբահոր բարալիկ ձեռքին։— Այո, այո՛, հենց հաճելի՛ է վիրավորվելը։ Այնքան լավ ասացիք, որ մինչև հիմա այդպիսի բան չէի էլ լսել։ Այո, հենց ես, հենց ինքս իմ ամբողջ կյանքում վիրավորվել եմ հաճույք ստանալու չափ, վիրավորվել եմ գեղագիտության սիրույն, վասնզի ոչ թե լոկ հաճելի, այլ գեղեցիկ է երբեմն վիրավորված լինելը. ա՛յս է, որ դուք մոռացաք, մեծդ սրբահայր, գեղեցի՛կ է։ Ես այդ կնշե՛մ իմ հուշատետրում։ Բայց ստել եմ ես, այո, ստել եմ ուղղակի իմ ամբողջ կյանքում, ամենայն օր և ամենայն ժամ։ Հիրավի, ես սուտ եմ և հա՛յր նորա։ Բայց կարծեմ ոչ թե հայր նորա, անընդհատ խառնում եմ Սուրբ գրքի խոսքերը. դե՛հ, սուտի որդին ասենք, այդ էլ բավական կլինի։ Միայն թե... հրեշտակդ իմ... երբեմն Դիդերոտի մասին կարելի է ստել։ Դիդերոտը վնաս չի տա, բայց մեկ էլ տեսար՝ մի փոքրիկ խոսք վնաս է տալիս։ Մեծդ սրբահայր, ի դեպ, քիչ մընաց մոռանայի. ախր երկու տարուց ավելի է՝ միտք ունեի այստեղ ստուգելու մի բան, հենց գալ այստեղ և անպայման հարցնել, իմանալ, միայն թե՝ Պյոտր Ալեսանդրովիչին պատվիրեք՝ ինձ չընդհատի։ Ահա իմ հարցը. ճշմարի՞տ է արդյոք, հայր մեծ, որ «Վարք սրբոցում» մի պատմություն կա ինչ-որ հրաշագործ սուրբի մասին, թե՝ նրան չարչարում են իր հավատքի համար, և երբ ի վերջո գլուխն են կտրում՝ նա ոտքի է կանգնում, վերցնում իր գլուխը, «համբուրելով զայն սիրազեղ», և երկար գնում է, ձեռքերի մեջ տանելով գլուխը և «համբուրելով զայն սիրազեղ»։ Ճշմարի՞տ է այս, թե ոչ, ազնիվ հայրեր։

— Ոչ, ճշմարիտ չէ,— ասաց սրբահայրը։

— Ամբողջ «Վարք սրբոցի» մեջ ոչ մի նման բան չկա։ Ո՞ր սուրբի մասին, ասում եք, այդպես է գրված,— հարցրեց հայր գրադարանապետը։

— Ինքս էլ չգիտեմ՝ ո՞ր սուրբի մասին։ Չգիտեմ և գաղափար չունեմ։ Մոլորեցրել են ինձ, այդպես են ասել։ Լսել եմ, և գիտե՞ք ով է պատմել։ Ահա՝ Պյոտր Ալեքսանդրովիչ Միուսովը, ահա սա, որ հիմա Դիդերոտի համար բարկացավ, հենց նա է պատմել։

— Ես երբեք այդ բանը չեմ պատմել ձեզ, ես ձեզ հետ չեմ էլ խոսում երբեք, բնա՛վ։

— Ճիշտ է, ինձ չեք պատմել, բայց պատմել եք մի հա-

վաքույթում, որտեղ ես էլ կայի, երեք-չորս տարի առաջ։ Ես այդ հիշեցի, որովհետև սույն ծիծաղաշարժ պատմությամբ դուք իմ հավա՜տքը սասանեցիք, Պյոտր Ալեքսանդրովիչ։ Դուք չգիտեիք այս մասին, գաղափար էլ չունեիք, իսկ ես տուն վերադարձա սասանված հավատքով և այդ օրից ի վեր ավելի ու ավելի եմ սասանվում։ Այո՜, Պյոտր Ալեքսանդրովիչ, դուք մի մեծ անկման պատճառը հանդիսացաք։ Սա Դիդերոտ չէ՞ արդեն։

Ֆյոդոր Պավլովիչը բորբոքվեց խանդալից հուզմունքով, թեև արդեն կատարելապես պարզ էր բոլորին, որ նա նորից ձևեր է թափում։ Բայց այնուամենայնիվ Միուսովը խիստ խոցված էր։

— Ի՜նչ տխմարություն... և այդ ամբո՜ղջը տխմարություն է,— մրթմրթում էր նա։— Գուցե իրոք ասել եմ մի ժամանակ... միայն թե ոչ ձեզ։ Ինձ էլ ուրիշներն են ասել։ Փարիզում եմ լսել, մի ֆրանսիացուց, որ իբր թե մեզ մոտ պատրագին են կարդում «Վարք սրբոցի» այդ պատմությունը... Նա շատ զարգացած մարդ էր, հատկապես ուսումնասիրել էր Ռուսաստանի վիճակագրությունը... երկար ժամանակ ապրել էր Ռուսաստանում... Ինքս «Վարք սրբոցը» չեմ կարդացել... և միտք էլ չունեմ կարդալու... Ճաշի վրա ինչ շաղակրատություն ասես չի արվում... Մենք ճաշում էինք այդ ժամանակ...

— Այո՜, դուք ահա ճաշում էիք այն ժամանակ, իսկ ես իմ հավա՜տքը կորցրի,— ծաղրեց Ֆյոդոր Պավլովիչը։

— Իմ ի՞նչ գործն է ձեր հավատքը, —քիչ մնաց գոռար Միուսովը, բայց մեկեն զսպեց իրեն և արհամարհանքով ասաց.— Դուք տառացիորեն կեղտոտում եք ամեն բան, ինչի ձեռք եք տալիս։

Սրբահայրը հանկարծ վեր կացավ։

— Ներեցեք, պարոնայք, որ թողնում եմ ձեզ միայն մի քանի րոպեով,— ասաց նա դիմելով բոլոր այցելուներին,— բայց ինձ սպասում են ուրիշները, որոնք ձեզնից առաջ են եկել։ Իսկ դուք այնուամենայնիվ մի՛ ստեք,— ավելացրեց նա, զվարթ դեմքով դառնալով Ֆյոդոր Պավլովիչին։

Նա դուրս եկավ խուցից, Ալյոշան ու նորընծան առաջ նետվեցին, որ նրան իջեցնեն սանդուղքով։ Ալյոշան խեղդվում էր. ուրախ էր, որ դուրս է գնում, բայց նաև ուրախ էր, որ

սրբահայրը վիրավորված չէ և զվարթ է։ Սրբահայրը գնում էր դեպի արտաքին պատշգամբը, որպեսզի օրհնի իրեն սպասողներին։ Բայց Ֆյոդոր Պավլովիչն այնուամենայնիվ կանգնեցրեց նրան խուցի դռան առաջ։

— Երանելագո՜ւյն մարդ,— գոռաց նա զգացմունքով,— թույլ տվեք մի անգամ էլ պագնել ձեր ձեռքը։ Չէ՞, ձեզ հետ կարելի է դեռ խոսել, կարելի՞ է ապրել։ Կարծում եք, ես մի՞շտ ստում եմ և խեղկատակ ձևանում։ Իմացեք ուրեմն, ես դիտմամբ էի ամբողջ ժամանակ այսպես դերասանություն անում, որպեսզի փորձեմ ձեզ։ Ամբողջ ժամանակ տնտղում էի ձեզ՝ տեսնեմ կարելի՞ է ձեզ հետ ապրել։ Իմ խոնարհությունն արդյոք տեղ ունի՞ ձեր հպարտության կողքին։ Գովասանագի՞ր եմ տալիս ձեզ՝ կարելի՞ է ձեզ հետ ապրել։ Իսկ այժմ լռում եմ, լուռ եմ մնալու ամբողջ ժամանակ։ Կնստեմ աթոռին և լեզուս ինձ կպահեմ։ Հիմա ձերն է խոսելու կարգը, Պյոտր Ալեքսանդրովիչ, հիմա դուք մնացիք ամենագլխավոր մարդը... տասը րոպե։

III

ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԿՆՈՊԿՆԵՐ

Վարը՝ փայտե պատշգամբի մոտ, որ շինված էր պարբսպի արտաքին պատին կից, այս անգամ հավաքվել էին միայն կանայք՝ մոտ քսան հոգի։ Հայտնել էին, որ սրբահայրը վերջապես դուրս է գալիս, և նրանք հավաքված սպասում էին։ Պատշգամբ էին ելել նաև կալվածատիրուհի Խոխլակովան և իր դուստրը, որոնք նույնպես սրբահորն էին սպասում, բայց ազնվազարմ կանանց հատկացված սպասարանում։ Տիկին Խոխլակովան, միշտ ճաշակով հագնված հարուստ տիրուհի, դեռ բավական երիտասարդ էր ու գեղանի, մի քիչ գունատ, ուներ շատ աշխույժ ու համարյա թե սև աչքեր։ Երեսուներեք տարեկան էր, ոչ ավելի, և հինգ տարի է՝ այրի էր արդեն։ Նրա տասնչորսամյա դուստրն անդամալույծ էր։ Խեղճ աղջիկն այդեն կես տարի է չէր կարողանում քայլել, և նրան տեղից տեղ տանում էին անվավոր բազկաթոռ-սայլակի մեջ, որ երկարուն էր ու հանգստավետ։ Անուշիկ էր դեմքը՝ հիվանդության պատճառով մի քիչ նիհարկեկ, բայց զվարթ։ Զարմանքի մի բան էր

կայծկլտում խոշոր, մուգ, երկար թարթիչներով աչքերում։ Դեռ գարնան սկզբից մայրը պատրաստվում էր նրան արտասահման տանելու, բայց ամռանն ուշացան՝ կալվածքի հետ կապված գործերի պատճառով։ Արդեն մի շաբաթ է նրանք ապրում էին մեր քաղաքում, եկել էին ավելի գործերի համար, քան ուխտի, բայց արդեն մի անգամ այցելել էին սրբահորը՝ երեք օր առաջ։ Այժմ նորից մենաստան էին եկել հանկարծ, թեև գիտեին, որ սրբահայրն արդեն համարյա չի կարող այցելու ընդունել, և պաղատագին խնդրում էին մի անգամ ևս «մեծ դարմանիչին տեսնելու երջանկությունն ունենալ»։

Սպասելով սրբահոր երևալուն, մայրը նստած էր աղջկա սայլակի մոտ դրված աթոռին, իսկ նրանից երկու քայլ հեռու կանգնած էր մի ծեր վանական, որ ոչ թե մեր վանքի միաբան էր, այլ եկել էր հեռավոր հյուսիսում գտնվող մի խոպ մենաստանից։ Սա նույնպես փափագում էր սրբահոր օրհնությունն ստանալ։ Բայց սրբահայր Զոսիման, հայտնվելով պատշգամբում, նախ ուղղակի գնաց դեպի ժողովուրդը։ Կնիկները խմբվել էին եռաստիճան արտասանդուղքի առջև, որ ցածլիկ պատշգամբը միացնում էր դրսի դաշտին։ Սրբահայրը կանգնեց վերևի աստիճանին, հագավ փորուրարը և սկսեց օրհնել իր շուրջը սեղմված կանանց։ Մի դիվահար կնոջ, երկու ձեռքից քաշելով, մոտեցրին նրան։ Հազիվ սրբահորը տեսած՝ այդ կինը հանկարծ սկսեց անհեթեթ ճչոցներ արձակելով զկոտալ և ամբողջ մարմնով ցնցվեց, ասես երկունքի ջղաձգությամբ բռնված։ Փորուրարը դնելով նրա գլխին, սրբահայրը մի կարճ աղոթք կարդաց, և կինն անմիջապես լռեց ու հանգստացավ։

Չգիտեմ ինչպես է հիմա, բայց երբ ես մանուկ էի՝ հաճախ պատահում էր, որ գյուղերում ու վանքերում տեսնում ու լսում էի այդ դիվահար կանանց։ Նրանց տանում էին պատարագի, և ամբողջ եկեղեցով մեկ նրանք ճչում էին կամ հաչում շան նման։ Բայց երբ քահանան առաջ էր բերում սրբազան մասունքը և հիվանդներին մոտեցնում էին սուրբ հաղորդություն ստանալու, անմիջապես դադարում էր «դիվահարությունը» և միշտ էլ նրանք խաղաղվում էին մի որոշ ժամանակ։ Ես, որպես երեխա, շատ էի զարմանում, ապշում էի։ Սակայն հենց այդ շրջանում, երբ հարցուփորձ արեցի, որոշ կալվածատերեր և մանավանդ քաղաքի իմ ծանոթներն

ասացին, թե բոլոր այդ կանայք հիվանդ են ձևանում չաշխատելու համար, և թե միշտ էլ կարելի է նրանց խելքի բերել համապատասխան խստություն բանեցնելով։ Եվ զանազան անեկդոտներ պատմեցին իրենց ասածը հաստատելու համար։ Բայց հետագայում զարմանքով իմացա մասնագետ բժիշկներից, թե ոչ մի կեղծիք չկա այդ բոլորի մեջ, դա կանացի սարսափելի հիվանդություն է, երևի առավելապես մեր Ռուսաստանում տարածված, և վկայում է մեր գեղջկուհիների ծանր ճակատագիրը. մի հիվանդություն, որի պատճառը հալումաշ անող աշխատանքն է՝ դժվար, անբնականոն, բժշկական որևէ օգնություն չստացող ծննդաբերությունից անմիջապես հետո, և բացի այդ՝ նաև անհույս վիշտը, ծեծը և այլն, որոնց այնուամենայնիվ որոշ կանացի բնավորություններ չեն կարող դիմանալ մեծամասնության նման։ Երբ մոլեգնած ու մաքառող կնոջը պարզապես մոտեցնում էին սրբազան մասունքին, հավանաբար ամենաբնական ձևով էր տեղի ունենում նրա տարօրինակ և ակնթարթային բուժումը, որն ինձ բացատրում էին որպես կեղծիք և, ավելին, իբրև թե հենց «կղերականների» սարքած ճպարարություն. և՛ այն կանայք, որ հիվանդին մոտեցնում էին սրբազան մասունքին, և՛ մանավանդ հիվանդն ինքը, լրիվ հավատում էին և որպես հաստատ ճշմարտություն ընդունում, թե դիվահարին տիրած չար ոգին երբեք չի կարող դիմանալ, եթե դժբախտ կնոջը մոտեցնեն ու խոնարհեցնեն սրբազան մասունքի առաջ։ Այդ իսկ պատճառով, ջղային և անշուշտ հոգեպես հիվանդ կնոջ մեջ, սրբազան մասունքի առաջ խոնարհվելու պահին, միշտ տեղի էր ունենում (և անպայման պետք է տեղի ունենար) ամբողջ օրգանիզմի մի տեսակ անխուսափելի ցնցում, որ առաջ էր գալիս այն լիակատար հավատքից, թե անպայման կատարվելու է ակնկալված բուժման հրաշքը։ Եվ հրաշքը կատարվում էր՝ թեկուզ միայն մեկ րոպեով։ Ճիշտ այդպես եղավ նաև հիմա, հենց որ սրբահայրը հիվանդին ծածկեց փորուրարով։

Նրա շուրջ խմբված կանանցից շատերը խանդաղատանքի և հափշտակության առատ արցունք էին թափում րոպեի ազդեցության տակ։ Ուրիշներն առաջ էին նետվում գոնե նրա զգեստի ծայրը համբուրելու, ոմանք էլ լացակումած աղաղակում էին։ Նա օրհնում էր բոլորին և ոմանց հետ խոսում։ Դիմ-

վահարին ճանաչում էր արդեն. հեռու տեղից չէր նա, այլ ընդամենը վեց վերստ հեռու մի գյուղից, և առաջ էլ նրան բերել էին իր մոտ։

— Իսկ ահա դու հեռվի՞ց ես եկել,— մատնացույց արեց նա մի կնոջ, որ դեռ բոլորովին պառավ չէր, բայց շատ նիհար էր ու հյուծված, ոչ թե արևախանձ, այլ կարծես ամբողջապես սևացած դեմքով։ Նա ծունկի էր եկել և անշարժ աչքերով նայում էր սրբահորը։ Հայացքի մեջ կարծես մոլեգնահար մի բան կար։

— Հեռուների՞ց, հայր սուրբ, հեռուներից, երե՞ք հարյուր վերստ էստեղից։ Հեռուների՞ց, հայր սուրբ, հեռուներից,— խոսեց կինը երգաձայն, գլուխն օրորելով աջ ու ձախ և այտն ափին հենած։ Խոսում էր կարծես ողբ ասելով։ Ժողովուրդի մեջ կա լռելյայն ու համբերատար վիշտ. այս վիշտը ինքն իր մեջ է խորանում և լուռ է մնում։ Բայց կա նաև բեկվող վիշտ, որ հանկարծ ժայթքում է արցունքներով և այդ բոպեից վերածվում ողբուկոծի։ Դա մանավանդ կանանց է հատուկ։ Բայց ավելի թեթև չէ, քան լռելյայն վիշտը։ Ողբուկոծն ամոքում է լոկ այնքանով, որ ավելի ևս բորբոքում ու պատռում է սիրտը։ Այսպիսի վիշտը մխիթարություն էլ չի ուզում, սընվում է իր անամոք լինելու զգացումով։ Վերքն անընդհատ փորփրելու պահանջի արտահայտությունն է պարզապես ողբուկոծը։

— Քաղքենիների դասի՞ց ես հարկավ,— շարունակեց հարցնել սրբահայրը, հետաքրքրությամբ նայելով նրան։

— Քաղաքի մարդ ենք, հայր սուրբ, քաղաքի մարդ, գյուղացի ենք, բայց քաղաքի մարդ, քաղաքում ենք ապրում։ Եկել եմ, հայր սուրբ, քեզ տեսնելու։ Լսել ենք քո մասին, հա՜յր, լսել ենք։ Պուճուրիկ տղիս եմ թաղել, ելել եմ աստծուն աղաչելու։ Երեք վանք եմ գնացել, բայց ինձ ասին՝ «Գնա՛, Նաստասյուշկա, էնտեղ էլ գնա», այսինքն թե ձեզ մոտ, հոգի ջան, ձեզ մոտ։ Եկա, երեկ հսկումին գնացի, էսօր էլ եկել եմ ձեզ մոտ։

— Ինչի՞ համար ես լաց լինում։

— Տղի՞ս եմ ափսոսում, հայր սուրբ, երեքը չէր լրացել, երեք ամիս էլ ապրեր՝ երեք տարեկան կլիներ։ Տղիս համար եմ տանջվում, հայր սուրբ, տղի՞ս համար։ Վերջինն էր մնացել, չորսն ենք ունեցել Նիկիտուշկաս ու ես, բայց չեն մնում

մեր երեխեքը, չեն մնում, սիրելի հայր, չե՞ն մնում։ Առաջին երեքին թաղեցի, էնքան էլ շատ չափսոսացի։ Էս վերջին տղիս թաղեցի, չեմ կարում նրան մոռանամ։ Հենց հիմի ասես կանգնել է աչքիս առաջ, չի գնում, չի՞ գնում։ Մաշեց, մաշե՞ց իմ հոգին։ Նայում եմ պուճուրիկ լաթերին, պուճուրիկ շապկին ու մաշիկներին և վա՛յ եմ տալիս, վա՛յ։ Շարում եմ ինչ մնաց նրանից, մեկիկ-մեկիկ շարում, նայում ու վա՛յ տալիս, վա՛յ։ Ասում եմ Նիկիտուշկայիս, ասում եմ մարդուս՝ թո՛ղ ինձ, տնատեր, գնամ ուխտ անեմ։ Կառապան է մարդս, աղքատ չենք, հայր սուրբ, աղքատ չենք, մենք ենք մեր գործի տերը, ամեն ինչ սեփական ունենք, ձին էլ մերը, կառքն էլ մերը։ Բայց էլ ինչի՞ է պետք հիմի էդ ունեցվածքը։ Ես որ չկամ՝ խմել սկսեց իմ Նիկիտուշկան, հաստատ գիտեմ՝ սկսեց։ Առաջ էլ էր էդպես՝ հենց շուռ եմ գալիս, բռնում է թուլությունը։ Բայց հիմի նրա մասին էլ չեմ մտածում։ Էս է երեք ամիս կլինի՝ դուրս եմ եկել տնից։ Մոռացա նրան, ամեն ինչ մոռացա, չեմ ուզում հիշեմ։ Էլ ո՞նց ապրեմ նրա հետ, ինչի՞ համար։ Վերջ եմ տվել ընտանիքին, վերջ եմ տվել, ամեն ինչին վերջ եմ տվել։ Էլ նայել չեմ ուզում իմ տանը, իմ ունեցվածքին, էլ ո՞չ մի բան չեմ ուզում տեսնեմ։

— Տես ի՞նչ եմ ասում, մա՛յր,— ասաց սրբահայրը։— Հնադարյան մեծագործ մի սուրբ մի անգամ տաճարում տեսնում է քեզ նման արտասվող մի մոր, որ նույնպես իր մանկան էր ողբում, իր միակ երեխային, որին նույնպես կանչել էր աստված։ «Միթե չգիտե՞ս դու,— ասում է սուրբը նրան,— թե աստուծո գահի առաջ որքան հանդուգն են մանուկներն այս։ Երկնային թագավորության մեջ չկա նույնիսկ այլ ոք ավելի հանդուգն, քան նրանք. դու մեզ կյանք շնորհեցիր, ո՞վ տեր, ասում են նրանք առ աստված, և հազիվ բացել էինք մեր աչքերը, երբ դու այդ կյանքը ետ առար մեզնից։ Եվ այնքան հանդգնորեն խնդրում են ու պահանջում, որ տերն անմիջապես հրեշտակների կարգն է դասում նրանց։ Արդ ուրեմն,— ասում է սուրբը,— դու ևս ուրախ եղիր, ո՞վ կին, և մի՛ արտասվիր, վասնզի քո մանուկն այժմ աստուծո հետ է՝ նրա հրեշտակների դասում»։ Ահավասիկ թե ինչ ասաց սուրբն այդ արտասվող կնոջը հին ժամանակներում։ Իսկ նա մեծագործ սուրբ էր ու չէր կարող ոչ ճշմարիտ բան պատմել։ Ուրեմն դու ևս գիտցիր, մա՛յր, որ քո երեխան էլ այժմ վստահաբար

կանգնած է տիրոջ դահի առջև և ուրախ է ու զվարթ և քեզ համար բարեխոսում է առ աստված։ Ուստի դու ևս արտասվիր, բայց ուրախ եղիր։

Կինը լսում էր սրբահորը՝ այտը ձեռքին, դլխահակ։ Նա խոր հառաչեց։

— Նիկիտուշկան էլ հենց դրանով էր ինձ մխիթարում, ճիշտ քո ասածն էր ասում. «Խելք չունես դու, ասում էր, ինչի՞ ես լացում, մեր մանչուկը հիմա երևի հրեշտակների հետ երգում է աստծո մոտ»։ Ինձ էդպես է ասում, ինքն էլ է լաց լինում. տեսնում եմ՝ ինձ նման լաց է լինում։ «Գիտեմ, Նիկիտուշկա, ասում եմ, էլ ո՞րտեղ կարող է լինել՝ թե որ աստծու մոտ չլինի, միայն թե հիմի էստե՛ղ չէ, մե՛զ հետ չէ, Նիկիտուշկա, նստա՛ծ չէ մեր կողքին, ոնց որ առաջ էր նստում»։ Եվ գոնե մի անգամ՝ հենց միայն նայեի՞ տղիս, մի անգամ, մի՞ անգամ նորից աչքս գցեի վրան, թեկուզ չմոտենայի, չխոսեի, անկյունը պահվեի, միայն թե մի բոպե, մի պստիկ բոպե տեսնեի, լսեի նրան՝ ո՞նց է խաղ անում բակում, մեկ էլ գալիս է, իր բարալիկ ձենով գոռում՝ «Ո՞ւր ես, մա՜մ»։ Հենց միայն լսեի՝ ո՞նց նա իր տոտիկներով մի անգամ անցնում է սենյակից, միայն մի անգամ, էդ իր տոտիկներով՝ թրփ-թրփ-թրփ, հիշում եմ, ոնց էր շուտ-շուտ, շուտ-շուտ վազում ինձ մոտ, գոռում էր, ծիծաղում, միայն տոտիկների ձե՛նը լսեի, լսեի՞ հիմի, իսկույն կճանաչեի։ Բայց չկա, հայր սուրբ, չկա՜, և էլ երբե՞ք չեմ լսելու նրան։ Ահա էս իր պուճուրիկ գոտին, իսկ ինքը չկա, և էլ երբեք, երբեք չեմ տեսնելու, չե՜մ լսելու նրան...

Նա ծոցից հանեց իր մանչուկի փոքրիկ ասեղնագործ գոտին, և հազիվ նայեց դրան՝ անմիջապես սկսեց հեծկլտալ ու ցնցվել հեծկլտանքից, ծածկելով աչքերը մատներով, որոնց արանքից հանկարծ ժայթքեցին հորդ արցունքները։

— Իսկ այս հիմա,— ասաց սրբահայրը,— վաղնջական արտասուքն է Հռաքելի, որ «լայր զորդիս իւր և ոչ կամէր մխիթարիլ՝ զի ոչ էին»։ Եվ ձեզ՝ մայրերիդ, այսպես է վիճակված երկրի վրա։ Ու մի՛ փնտրիր մխիթարություն և արտասվիր, զի կարիք չունես մխիթարվելու, մի՛ փնտրիր մխիթարություն և արտասվիր, միայն թե ամեն անգամ, երբ արտասվես, հիշիր անվարան, որ քո մանչուկը մեկն է աստծո հրեշտակներից, քեզ է նայում այնտեղից ու տեսնում է քեզ,

և ուրախանում է քո արցունքներով, և մատնացույց է անում քո արցունքները տեր աստծուն։ Եվ դեռ երկար ժամանակ մայրական այս մեծ ողբը կրելու ես ընդ քեզ, բայց ի վերջո դա քո մեջ վերածվելու է մեղմ ուրախության, և քո դառն արցունքները լինելու են լոկ մեղմ խանդաղատանքի արցունքներ՝ սիրտը մաքրող և մեղքերից փրկող խանդաղատանքի։ Իսկ քո մանկանը կհիշատակեմ իմ աղոթքում՝ վասն նրա հոգու խաղաղության։ Անո՞ւն ինչ էր։

— Ալեքսեյ, հայր սուրբ։

— Ի՜նչ քաղցր անուն։ Աստուծո մարդ Ալեքսեյի՞ անունով է կոչված։

— Աստծո մարդու, հայր սուրբ, աստծո մարդ Ալեքսեյի անունով։

— Ի՜նչ երանելի սուրբ էր։ Կհիշատակեմ, մա՛յր, կհիշատակեմ մանկիկիդ, նաև վիշտը քո կհիշատակեմ իմ աղոթքում և քո ամուսնուն կհիշատակեմ, առողջություն խնդրելով նրա համար։ Միայն թե՝ մեղք ես գործում նրան թողնելով։ Գնա ամուսնուդ մոտ և պահպանիր նրան։ Կտեսնի քո մանչուկը վերևից, որ թողել ես դու իր հորը, և կարտասվի ձեզ համար։ Ինչո՞ւ ես խոովում նրա երանությունը։ Չէ՞ որ կենդանի է նա, կենդանի է, վասնզի հոգին ապրում է հավիտյան, ու թեև նա բացակա է տնից, բայց ձեզ հետ է անտեսանելիորեն։ Ինչպե՞ս կարող է նա տուն գալ, քանի ասում ես, թե ատում ես տունը քո։ Ո՞ւմ մոտ գա, եթե չի կարող միասին գտնել ձեզ՝ իր հորն ու մորը։ Այժմ նա երևում է քո երազներում, և դու տանջվում ես, բայց երբ քեզ տանը գտնի՝ անուշ երազներ կուղարկի։ Գնա՛ ամուսնուդ մոտ, մա՛յր, այսօր ևեթ գնա։

— Կգնամ, հարազատ հայր, քո խոսքի վրա կգնամ։ Դու իմ սիրտը կարդացիր։ Նիկիտուշկա՜, դու իմ Նիկիտուշկա, սպասում ես դու ինձ, աղավնյակս, սպասում ես ինձ,— սկսեց նորից կինը լացակումած, սակայն սրբահայրն արդեն դարձել էր մի շատ պառավ կնոջ, որ հագնվել էր ոչ թե ուխտավորի, այլ քաղաքում ապրողի նման։ Աչքերից երևում էր, որ եկել է մի խնդրով և բան ունի ասելու։ Ասաց, թե ինքը ենթասպայի այրի է և եկել է ոչ թե հեռվից, այլ հենց մեր քաղաքից։ Նրա որդյակը, Վասենկան, ծառայում էր ինչ-որ մի կոմիսարիատում և գնացել էր Սիբիր՝ Իրկուտսկ։ Երկու անգամ նու-

մակ էր գրել այդտեղից, բայց հիմա արդեն մի տարի է չի գրում։ Մայրը հարցուփորձ է արել նրա մասին, բայց ճիշտն ասած չգիտի էլ, թե որտեղ գնա մի ստույգ բան իմանալու։

— Հենց երեկ չէ մյուս օրը Ստեպանիդա Իլյինիշնա Բեդրյագինան, էն հարուստ վաճառականի կինը, ինձ ասում է թե՝ դու գնա, Պրոխորովնա, ասում է, քո տղի անունը գրել տուր եկեղեցում՝ ոնց որ հոգեհանգստի համար, ասում է, և աղոթիր նրա հոգու համար։ Ասում է՝ տղիդ հոգին կարոտ կզգա, և նա քեզ նամակ կգրի։ Եվ դա ճշմարիտ բան է, ասում է Ստեպանիդա Իլյինիշնան, շատ անգամ են փորձել։ Միայն թե իմ խելքը չի կտրում... Դու մեր լո՜ւյսն ես, հայր սուրբ, դո՛ւ ասա, ճի՞շտ է, թե սուտ, և լա՞վ կլինի, որ էդպես անեմ։

— Նույնիսկ մտքովդ չանցնի այդ բանը։ Հարցնելն անգամ ամոթ է։ Եվ ինչպե՞ս կարելի է կենդանի հոգուն հիշատակել հոգեհանգստում, այն էլ հարազատ մոր կողմից։ Դա մեծ մեղք է, կախարդության նման մի բան, միայն քո անգիտության համար է քեզ ներելի։ Ավելի լավ է՝ նրա առողջության համար աղոթիր երկնային Թագուհուն, անմիջահաս մեր բարեխոսին ու օգնականին, ու նաև խնդրիր, որ քեզ ների քո սխալ մտածումների համար։ Եվ դեռ այս էլ ահա ասեմ քեզ, Պրոխորովնա. կա՛մ ինքը՝ քո որդյակը շուտով կվերադառնա քեզ և կամ նամակ կուղարկի ապահովաբար։ Գիտցի՛ր, որ այդպես է։ Գնա և հետայսու հանգիստ եղիր։ Կենդանի է քո որդյակը, ասում եմ քեզ։

— Մեր Թանկագի՛ն հայր, աստված վարձդ տա, մեր բարերա՜ր, աղոթարար մեր բոլորի համար, մեր մեղքերի համար...

Իսկ սրբահայրն արդեն բազմության մեջ նկատել էր իրեն ուղղված երկու վառվող աչքեր. հյուծված, թոքախտավորի տեսքով, թեև տակավին երիտասարդ մի գեղջկուհի էր։ Նայում էր լուռ, աչքերի մեջ աղերսանք կար, բայց կարծես վախենում էր մոտենալ։

— Ի՞նչ է քո ցավը, սիրելի դուստր իմ։

— Ազատիր իմ հոգին, հայր սուրբ,— մեղմ ու անշտապ ասաց նա, ծունկի եկավ ու խոնարհվեց նրա ոտքերին։— Մեղք եմ գործել, հարազատ հայր, իմ մեղքից եմ վախենում։

Սրբահայրը նստեց վարի աստիճանին, կինը մոտեցավ նրան, մնալով ծնկաչոք։

— Այրի եմ՝ երեք տարի է,— սկսեց նա կիսաշշուկ, մի տեսակ դողդողալով։— Ծանր էր իմ կյանքը մարդուս հետ, ծեր էր, սպանում էր ինձ ծեծելով։ Հիվանդ պառկեց։ Նայում եմ նրան, մտածում՝ թե որ առողջանա, նորից ոտքի կանգնի, ի՞նչ կլինի իմ վիճակը։ Եվ մեկ էլ էն չար միտքը եկավ մեջս մտավ...

— Կա՛ց,— ասաց սրբահայրը և իր ականջը մոտեցրեց ուղղակի նրա շրթունքներին։ Կինը շարունակեց մեղմ շշնջալով, այնպես որ համարյա ոչինչ կարելի չէր լսել կողքից։ Շուտով նա վերջացրեց։

— Երրորդ տարի՞ն է,— հարցրեց սրբահայրը։

— Երրորդ տարին։ Սկզբում չէի մտածում, իսկ հիմի սկսում եմ վատ զգալ, ցավը կպել է սրտիս։

— Հեռվի՞ց ես եկել։

— Հինգ հարյուր վերստ էստեղից։

— Խոստովանանքի ժամանակ ասե՞լ ես։

— Ասել եմ, երկու անգամ եմ ասել։

— Թույլ տվի՞ն հաղորդություն ընդունելու։

— Թույլ տվին։ Վախենում եմ։ Մեռնելուց եմ վախենում։

— Ոչ մի բանից մի՛ վախենա, և երբեք մի վախենա ու մի՛ տխրիր։ Միայն չթուլանա զղջումը քո սրտում՝ աստված քեզ կների ամեն ինչ։ Եվ ամբողջ երկրի երեսին չկա ու չի կարող լինել այնպիսի մի մեղք, որ տեր աստված չների ճշմարիտ զղջացողին։ Եվ մարդը չի կարող այնքան մեծ մի մեղք գործել, որ սպառի աստուծո անհուն սերը։ Միթե կարո՞ղ է լինել այնպիսի մի մեղք, որ գերազանցի աստուծո սերը։ Մտածիր լոկ զղջման մասին, հարատև զղջման, իսկ վախն իսպառ վտարիր քեզնից։ Հավատա, որ աստված սիրում է այնպես, որ դու չես էլ գիտակցում այդ, քեզ սիրում է քո մեղքով հանդերձ ու քո մեղքի մեջ։ Վասն մեկ մեղավորի, որ ապաշխարում է, ավելի է ուրախությունը երկնքում, քան իննսուն և ինն արդարի, որոնք կարիք չունեն ապաշխարելու։ Այդպես է ասված ի հնուց անտի։ Գնա ուրեմն և մի՛ վախենա։ Մի՛ դառնանա մարդկանց դեմ, մի՛ բարկանա, եթե վիրավորեն քեզ։ Հանգուցյալին ամեն ինչ ների քո սրտում, ամեն ինչ, որով քեզ վիրավորել է, ճշմարտապես հաշտվիր նրա հետ։ Եթե զղջում ես, ուրեմն սիրում ես։ Իսկ եթե սիրում ես, ուրեմն աստվածահաճո ես արդեն... Ամեն ինչ փոխ-

հատուցվում է սիրո միջոցով, ամեն ինչ փրկվում։ Եթե ես, նույնպես քեզ նման մեղավոր մի մարդ, արդեն գորով ու կարեկցանք ունեցա քո նկատմամբ, հույժ առավել կունենա աստված։ Սերն այնպիսի անգին մի գանձ է, որով կարող ես ամբողջ աշխարհն առնել, և ոչ միայն քո, այլև ուրիշների մեղքերը քավել։ Գնա և մի՛ վախենա։

Սրբահայրը երեք անգամ խաչակնքեց նրան, իր վզից մի փոքրիկ սրբապատկեր հանեց ու կախեց նրա վզին։ Կինը լուռ խոնարհվեց մինչև գետին։ Սրբահայրը վեր կացավ և ուրախ նայեց մի քաջառողջ գեղջկուհու, որի գրկում ծծկեր երեխա կար։

— Վիշեգորյեից եմ, սիրելի հայր։

— Սակայն վեց վերստ է այստեղից, և տանջվել ես մանկիկիդ հետ քայլելով։ Ի՞նչ ես ուզում։

— Եկա քեզ նայեմ։ Ես ախր եղել եմ քեզ մոտ, թե՞ մոռացել ես։ Ուրեմն մեծ հիշողություն չունես, թե որ մոռացել ես ինձ։ Մեր գյուղում ասացին՝ հիվանդ ես դու, ես էլ դե մտածեցի՝ ի՞նչ կա որ, գնամ ինքս տեսնեմ նրան։ Հիմի էլ ահա տեսնում եմ քեզ, էսպես հիվանդ կլինի՞։ Դեռ քանի տարի էլ կապրես, մի՞շտ, աստված քեզ հետ։ Բա էնքա՞ն մարդ աղոթում է քեզ համար, էլ ինչի՞ հիվանդ լինես։

— Շնորհակալ եմ բոլոր ասածներիդ համար, սիրելի աղջիկս։

— Մեկ էլ մի պուճուր խնդիրք ունեմ. ահա էս վաթսուն կոպեկը, ինձնից աղքատ մեկին տուր, սիրելի հայր տուրը։ Որ էստեղ եկա, մեկ էլ միտք արեցի՝ ավելի լավ է նրա՛ ձեռքով տամ, նա գիտի ում պետք է տա։

— Շնորհակալ եմ, սիրելիդ իմ, շնորհակալ եմ, բարի աղջիկս։ Սիրում եմ քեզ։ Անպայման կկատարեմ խնդիրքդ։ Աղջնա՞կ է գրկումդ։

— Աղջնակ է, լո՛ւյս հայր, Լիզավետա։

— Տեր աստված օրհնի երկուսիդ էլ, և քե՛զ, և՛ մանկիկդն Լիզավետային։ Ուրախացրիր դու իմ սիրտը, մա՛յր։ Մենք բարով, սիրելիներդ իմ, մենք բարով, թանկագին, բարեսեր կանայք։

Նա օրհնեց բոլորին և խորունկ խոնարհվեց նրանց։

IV

ԹԵՐԱՀԱՎԱՏ ՏԻԿԻՆԸ

Այցելության եկած կալվածատիրուհին, հասարակ ժողովրդի հետ զրույցի և օրհնության այդ տեսարանին նայելով, լուռ արտասվում էր և թաշկինակով սրբում արցունքները։ Զգայուն ու նրբակիրթ տիկին էր նա և շատ կողմերով անկեղծորեն բարի հակումներ ուներ։ Երբ սրբահայրը վերջապես մոտեցավ, տիկինը խանդավառ դիմավորեց նրան։

— Ես այնքան, այնքա՞ն ապրումներ ունեցա, նայելով ամբողջ այս սրտաշարժ տեսարանին...— հուզմունքից չկարողացավ շարունակել։— Օ՜, ես հասկանում եմ, որ ժողովուրդը սիրում է ձեզ, ես ինքս էլ սիրում եմ ժողովրդին, ցանկանում եմ սիրել նրան, և ինչպե՞ս կարելի է չսիրել ժողովրդին, մեր սքանչելի, իր վեհության մեջ պարզհոգի ռուս ժողովրդին։

— Ինչպե՞ս է ձեր աղջկա առողջությունը։ Կրկի՞ն փափագել եք ինձ հետ զրուցել։

— Օ՜, ես թախանձագին խնդրեցի, աղաչեցի, ես պատրաստ էի ծնկի ընկնելու և թեկուզ երեք օր ծնկաչոք մնալու ձեր պատուհանների տակ, մինչև ինձ ներս ընդունեիք։ Մենք եկել ենք ձեզ մոտ, մեծդ դարմանիչ, որպեսզի մեր ամբողջ ցնծագին շնորհակալությունը հայտնենք։ Չէ՞ որ դուք բուժեցիք իմ Լիզային, կատարելապես բուժեցիք, և ի՞նչ միջոցով— աղոթելով նրա վրա հինգշաբթի օր, ձեր ձեռքերը դնելով նրա գլխին։ Մենք փութացինք համբուրելու այդ ձեռքերը, զեղելու մեր զգացումները և մեր ակնածանքը։

— Ինչպե՞ս թե բուժել եմ։ Չէ՞ որ դեռ պառկած է իր բազկաթոռում։

— Բայց գիշերային տենդի նոպաները բոլորովին անցան՝ արդեն երկու օր է, հենց հինգշաբթի օրվանից,— նյարդային աճապարանքով ասաց տիկինը։— Եվ դեռ ավելին՝ ոտքերն ամրացան։ Այս առավոտ առողջ վեր կացավ, ամբողջ գիշերը քնեց, նայեցեք նրա կարմիր այտերին, փայլող աչուկներին։ Առաջ միշտ լաց էր լինում, իսկ հիմա ծիծաղում է, զվարթ է, ուրախ։ Այսօր համառորեն պահանջեց, որ ոտքի կանգնեցնեն իրեն, և մի ամբողջ բոպե ոտքի վրա մնաց, ինքը՝ առանց որևէ օգնության։ Ինձ հետ զրաղ է բռնում, որ

երկու շաբաթից կադրիլ է պարելու։ Ես հրավիրեցի այստեղի բժիշկ Հերցենշտուբեին։ Բժիշկն ուսերն է թոթվում և ասում է՝ զարմանում եմ, խելքս բան չի կտրում։ Եվ դուք ուզում եք, որ մենք կարողանայինք չանհանգստացնե՞լ ձեզ, չալանա՞լ այստեղ, շնորհակալություն չհայտնե՞լ։ Lise, դե շնորհակալությո՛ւն հայտնիր, շնորհակալությո՛ւն։

Lise-ի անուշիկ, ծիծաղկուն երեսը հանկարծ լրջացավ մի վայրկյան, նա վեր կացավ իր բազկաթոռում որքան կարող էր, և նայելով սրբահորը՝ ձեռքերն իրար միացրեց նրա առաջ, բայց չդիմացավ և հանկարծ ծիծաղեց...

— Նրա՛, նրա՛ վրա եմ ծիծաղում,— մատով ցույց տվեց Ալյոշային՝ մանկական վրդովմունք զգալով ինքն իր դեմ, որ չդիմացավ ու ծիծաղեց։ Ալյոշան կանգնել էր սրբահոր ետին, մեկ քայլ հեռու, և ով որ այդ վայրկյանին նայեր նրան, կնկատեր, թե ինչպես մի ակնթարթում շիկնեցին նրա այտերը։ Աչքերը փայլեցին ու խոնարհվեցին։

— Lise-ը հանձն է առել ձեզ մի բան հաղորդելու, Ալեքսեյ Ֆյոդորովիչ... Ինչպե՞ս է ձեր առողջությունը,— շարունակեց աղջկա մայրիկը, հանկարծ դառնալով Ալյոշային ու մեկնելով իր հիանալիորեն ձեռնոցապատված ձեռքը։ Սրբահայրը ետ նայեց և հանկարծ ուշադիր մի հայացք սևեռեց Ալյոշային։ Ալյոշան մոտեցավ Լիզային և, մի տեսակ տարօրինակ ու շփոթված ժպտալով, նրան ևս մեկնեց իր ձեռքը։ Lise-ը լուրջ դեմք ընդունեց։

— Կատերինա Իվանովնան իմ միջոցով ձեզ ուղարկում է այս բանը, —մի փոքրիկ նամակ տվեց նա Ալյոշային։— Հատկապես խնդրում է, որ դուք այցելեք նրան, ու շուտով, շուտով այցելեք, և չխարեք, անպայման գաք նրան տեսնելու։

— Խնդրում է, որ ես իրեն այցելե՞մ։ Ես իր մոտ... Իսկ ինչո՞ւ,— խորունկ զարմանքով մրթմրթաց Ալյոշան։ Նրա դեմքը հանկարծ շատ մտահոգ դարձավ։

— Օ՜հ, Դմիտրի Ֆյոդորովիչի պատճառով է նորից և... բոլոր այս վերջին դեպքերի,— շտապ բացատրեց մայրը։— Կատերինա Իվանովնան հիմա մի որոշման է հանգել... բայց դրա համար անպայման պետք է ձեզ տեսնի... Ինչո՞ւ։ Չգիտեմ անշուշտ, բայց խնդրեց՝ որքան կարելի է շուտ անցնեք։ Եվ դուք կկատարե՞ք նրա խնդրանքը, անպայման կգնա՞ք։ Նույնիսկ քրիստոնեական պարտքն է թելադրում այստեղ։

— Ես ընդամենը մեկ անգամ եմ տեսել նրան,— շարունակեց Ալյոշան նույն տարակուսանքով։

— Օ՜, նա այնպիսի վսե՜մ, այնպիսի անստգյո՛ւտ էակ է... Միայն իր ապրած տառապանքներո՜վ արդեն... Երևակայեցեք, ինչե՞ր է քաշել, ինչե՞ր է քաշում հիմա, երևակայեցեք, ի՜նչ է սպասում նրան... սարսափելի է այդ ամբողջը, սարսափելի՜։

— Լավ, կգամ,— որոշեց Ալյոշան, թեթևակի կարդալով կարճ ու հանելուկային երկտողը, ուր ոչ մի բացատրություն չկար, այլ միայն թախանձագին խնդրանք, որ ինքն անպայման գա այցելության։

— Ա՜խ, ինչ սիրալիր ու հոյակապ բան արած կլինեք,— ճչաց հանկարծ Lise-ը խիստ ոգևորված։— Իսկ ես մամային ասում էի՝ ոչ մի կերպ չի գնա, նա իր հոգին է փրկում վանքում։ Ի՜նչ սքանչելի եք, ի՜նչ սքանչելի։ Այո, ես միշտ մտածել եմ, որ սքանչելի եք դուք, և ա՛յ, հաճույքով եմ հիմա այս բանն ասում ձեզ։

— Lise,— ազդու շեշտով ասաց մայրը, սակայն անմիջապես ժպտաց։

— Դուք մեզ էլ մոռացաք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— դարձավ նա Ալյոշային,— բնավ չեք ուզում մեզ այցելել, այնինչ Lise-ն ինձ երկու անգամ ասել է, որ միայն ձեր ներկայությամբ է լավ զգում։

Ալյոշան բարձրացրեց իր խոնարհած աչքերը, նորից կարմրեց հանկարծ և նորից հանկարծ ժպտաց, ինքն էլ չիմանալով, թե ինչու։ Սակայն սրբահայրն այլևս չէր դիտում Ալյոշային։ Նա խոսակցություն էր սկսել եկվոր վանականի հետ, որ, ինչպես արդեն ասացինք, Lise-ի բազկաթոռի մոտ կանգնած սպասում էր։ Ըստ երևույթին, նա ամենահասարակ վանականներից էր, այսինքն խոնարհ դասից՝ կարճամիտ, անխախտ աշխարհայացքով, բայց խիստ հավատացյալ և յուրովի հաստատակամ։ Նա հայտնեց, թե ինքը հեռավոր հյուսիսի ինչ-որ անկյունից է, Օբդորսկից, սուրբ Սիլվեստրից՝ մի աղքատ վանքից, ուր ընդամենը ինը վանական կա։ Սրբահայրն օրհնեց նրան և հրավիրեց գալ իր խուցը՝ ցանկացած պահին։

— Սակայն ինչպե՞ս եք հանդգնում այսպիսի գործեր անել,— հարցրեց հանկարծ վանականը, ազդու և հանդիսա-

վոր մի շարժումով ցույց տալով Lise-ին։ Ակնարկում էր նրա «բուժումը»։

— Անշուշտ դեռ կանուխ է այդ մասին խոսելը։ Հիվանդության թեթևացումը դեռ լրիվ բուժում չէ և կարող է ուրիշ պատճառների արդյունք լինել։ Բայց եթե կատարվել է մի բան՝ միայն աստուծո հաճությամբ է, և ոչ թե այլ զորության շնորհիվ։ Աստուծմե է ամեն ինչ։ Այցելեցեք ինձ, հայր սուրբ,— ավելացրեց սրբահայրը,— ապա թե ոչ՝ միշտ չէ, որ կարող եմ ընդունել. հիվանդ եմ և գիտեմ, որ հաշված են իմ օրերը։

— Օ՜հ, ոչ, ո՜չ, աստված ձեզ չի խլի մեզնից, դուք դեռ երկար կապրեք, երկա՜ր,— բացականչեց տիկինը։— Եվ ինչպես թե հիվանդ եք։ Այնքա՜ն առողջ եք երևում, ուրախ, երջանիկ։

— Ես այսօր արտակարգորեն ավելի լավ եմ զգում, բայց արդեն գիտեմ, որ սա մի վաղանցիկ պահ է։ Ես այժմ անվրեպ հասկանում եմ իմ հիվանդությունը։ Իսկ եթե ես այնքան երջանիկ եմ թվում ձեզ, ապա երբեք ու ոչ մի բանով ինձ այնքան չէիք կարող ուրախացնել, որքան այդ նկատելով ու ասելով։ Վասնզի մարդիկ ստեղծված են երջանկության համար, և ով կատարելապես երջանիկ է՝ ուղղակի արժանի է ասելու ինքնիրեն. «Ես կատարեցի աստուծո պատգամը երկրի վրա»։ Բոլոր արդարները, բոլոր սրբերը, բոլոր սուրբ նահատակները երջանիկ են եղել։

— Օ՜հ, ինչպե՜ս եք խոսում, ի՜նչ խիզախ ու վսեմ խոսքեր,— բացականչեց տիկինը։— Ասում եք ու կարծես թափանցում մարդու սիրտը։ Բայց և այնպես՝ երջանկությո՜ւն, երջանկությո՜ւն— ո՞ւր է երջանկությունը։ Ո՞վ կարող է իր մասին ասել, թե երջանիկ է։ Օ՜հ, քանի որ այնքան բարի եղաք, որ այսօր թույլ տվիք մի անգամ ևս ձեզ տեսնելու, ապա լսեցեք այն, ինչ անցյալ անգամ լրիվ չասացի ձեզ, չհամարձակվեցի ասել, այն ամբողջը, որով ես այնքան եմ տառապում վաղուց, վաղո՜ւց։ Ես տառապում եմ, ներեցեք ինձ, տառապում եմ...

Եվ նա, ջերմագին զգացման պոռթկումով, ձեռքերն իրար միացրեց սրբահոր առաջ։

— Ինչո՞վ եք հատկապես տառապում։

— Տառապում եմ... անհավատությամբ...

— Աստուծո՞ նկատմամբ։

— Օ՜հ, ո՜չ, ո՜չ, նույնիսկ չեմ հանդգնի այդ մասին մտածել, բայց ապագա կյա՜նքը... այնպիսի առեղծվա՜ծ է։ Եվ ոչ ոք, ո՜չ ոք չի տալիս դրա լուծումը։ Լսեցեք, դուք դարմանիչ եք, դուք խորապես ճանաչում եք մարդկային հոգին. ես անշուշտ չեմ համարձակվի պահանջել, որ դուք լիովին հավատաք ինձ, բայց ձեզ վստահացնում եմ ազնվագույն խոսքով, որ թեթևամտություն չէ իմ ասածը հիմա, և որ անդրշիրիմյան կյանքի մասին այդ միտքը տանջելու չափ հուզում է ինձ, սոսկում ու վախ պատճառելու չափ... Եվ չգիտեմ, թե ո՜ւմ դիմեմ, ամբողջ կյանքումս չեմ համարձակվել... Եվ ահա հիմա համարձակվում եմ դիմել ձեզ... Օ՜հ, աստված իմ, հիմա դուք ի՜նչ կմտածեք իմ մասին։

Նա ձեռքերը զարկեց իրար։

— Մի՜ անհանգստանաք, թե ինչ կմտածեմ ձեր մասին,— պատասխանեց սրբահայրը։— Ես լրիվ հավատում եմ ձեր վշտի անկեղծությանը։

— Օ՜հ, որքա՜ն շնորհակալ եմ ձեզնից։ Գիտե՞ք, փակում եմ աչքերս ու մտածում. եթե բոլորը հավատում են, ո՞րտեղից է ուրեմն ծագել այդ հավատքը։ Եվ ահա ոմանք պնդում են, թե սկզբում այդ ամբողջը ծագել է բնության ահեղ երևույթների առաջ վախ զգալուց, և որ մտացածին է այդ ամբողջը։ Եվ ի՞նչ, մտածում եմ, ես իմ ամբողջ կյանքում հավատամ, իսկ հետո երբ մեռնեմ՝ հանկարծ ոչինչ չկա՞ ուրեմն, միայն «կռատո՞ւկ է աճում գերեզմանի վրա», ինչպես կարդացել եմ մի գրողի գրքում։ Սարսափելի՜ է։ Ինչպե՞ս, ինչպե՞ս վերադարձնեմ իմ հավատքը։ Բայց ես հավատացել եմ միայն, երբ փոքրիկ երեխա էի, մեքենաբար, ոչ մի բանի մասին չմտածելով... Իսկ ինչպե՞ս, ինչպե՞ս կարելի է ապացուցել։ Եկել եմ հիմա ձեր ոտքերն ընկնելու և ա՛յդ խնդրելու։ Եթե այս առիթն էլ բաց թողնեմ, այլևս ոչ ոք ինձ պատասխան չի տա իմ ամբողջ կյանքում։ Իսկ ինչպե՞ս ապացուցեմ, ինչպե՞ս համոզվեմ։ Օ՜հ, ինչ դժբա՜խտ եմ ես։ Կանգնում եմ ու շուրջս նայում, տեսնում եմ՝ բոլորն էլ անտարբեր են, համարյա բոլորը, ոչ ոք հիմա այդ հարցով չի մտահոգվում, և միայն ե՞ս եմ, որ չեմ կարողանում դիմանալ դրան։ Զարհուրելի է, զարհուրելի՜։

— Զարհուրելի է, անտարակույս։ Բայց այս հարցում ոչինչ չի կարելի ապացուցել, իսկ համոզվել՝ կարելի է։

— Ինչպե՞ս։ Ի՞նչ միջոցով։

— Գործուն սիրո փորձառությամբ։ Ջանացեք ձեր մերձավորներին սիրել գործնականորեն և անխոնջ։ Որքան առաջադիմեք սիրո մեջ, այնքան պիտի համոզվեք թե՛ աստուծո գոյությանը, թե՛ անմահությանը ձեր հոգու։ Իսկ եթե մերձավորին սիրելու մեջ հասնեք լիակատար անձնազոհության, հայնժամ կհավատաք աներկբայորեն, և ոչ մի տարակույս չի կարող նույնիսկ մտնել ձեր հոգու մեջ։ Դա փորձված բան է, ստույգ է։

— Գործուն սիրո՞։ Ահա այդ էլ նորից հարց է, և այնպիսի՜ հարց, այնպիսի՜ հարց։ Գիտե՞ք, ես այնպես եմ սիրում մարդկությունը, որ երբեմն, կհավատա՞ք ինձ, երազում եմ հրաժարվել ամեն ինչից, իմ ամբողջ ունեցվածքից, թողնել Lise-ին և գնալ գթության քույր դառնալ։ Փակում եմ աչքերս, մտածում եմ ու երազում, և այդ րոպեներին անխորտակ ուժ եմ զգում իմ մեջ։ Ոչ մի խոց, ոչ մի թարախակալած վերք չէր կարող ինձ վախեցնել։ Ես իմ սեփական ձեռքերով կկապեի ու կլվանայի դրանք, ես կխնամեի այդ տառապյալներին, ես պատրաստ եմ համբուրելու այդ վերքերը...

— Այդ էլ արդեն շատ է ու լավ, որ ձեր միտքը տարված է նման երազներով, և ոչ թե այլ բանով։ Մեկ էլ տեսար՝ իսկապես մի բարի գործ կկատարեք պատահմամբ։

— Այո, բայց արդյոք երկա՞ր կդիմանայի ես այդպիսի կյանքին,— շարունակեց տիկինը եռանդով, համարյա թե հափշտակությամբ։— Ա՛յս է ամենագլխավոր հարցը։ Ա՛յս է իմ հարցերից ամենատանջալին։ Փակում եմ աչքերս և հարցնում ինքս ինձ. երկա՞ր կարող էիր տոկալ այդ ճանապարհին։ Եվ եթե հիվանդը, որի վերքերն ես լվանում, իսկույն շնորհակալությամբ չպատասխանի քեզ, այլ, ընդհակառակը, սկսի հենց քեզ տանջել իր քմահաճույքներով, չգնահատելով ու չնկատելով քո մարդասիրական ծառայությունը, սկսի գոռալ վրադ, կոպտաբար հրամայել, նույնիսկ գանգատվել ղեկավար մարմիններին (ինչպես լինում է հաճախ, երբ շատ են տառապում մարդիկ),— ի՞նչ կանես այդ պարագային։ Կշարունակե՞ս սիրել, թե ոչ։ Եվ ահա, պատկերացրեք, ես արդեն սոսկումով եկել եմ այն եզրակացության, թե միակ բանը, որ

կարող է անմիջապես սառեցնել իմ «գործուն» սերը մարդկության նկատմամբ, ապերախտ վերաբերմունքն է։ Մի խոսքով, ես վարձու աշխատող եմ, ես անմիջապես վարձատրություն եմ պահանջում, այսինքն պահանջում եմ, որ ինձ գովեն ու սիրո դիմաց սեր վճարեն։ Այլապես ընդունակ չեմ որևէ մեկին սիրելու։

Նա ընկել էր լիովին անկեղծ ինքնախարազանման մոլուցքի մեջ և, վերջացնելով, հախուռն վճռականությամբ նայեց սրբահորը։

— Դա ճիշտ ու ճիշտ այն է, ինչ մի բժիշկ պատմել է ինձ տարիներ առաջ,— նկատեց սրբահայրը։— Արդեն տարիքն առած մարդ էր նա և խելացի էր անկասկած։ Խոսում էր նույնքան անկեղծ, որքան դուք, թեև կատակի տալով, բայց տխուր էր նրա կատակը։ Ես սիրում եմ մարդկությունը, ասում էր, բայց զարմանում եմ ինքս իմ վրա. որքան ավելի եմ սիրում մարդկությունն ընդհանրապես, այնքան նվազ եմ սիրում մարդկանց մասնավորապես, այսինքն զատ-զատ, որպես առանձին դեմքեր։ Իմ երազանքների մեջ, ասում էր, հասել եմ մարդկությանը ծառայելու բուռն մտադրությունների և գուցե իրոք խաչ կբարձրանայի հանուն մարդկանց, եթե հանկարծ որևէ կերպ անհրաժեշտ լիներ, բայց և այնպես ոչ ոքի հետ չեմ կարող երկու օր նույն սենյակում ապրել, և ես փորձով գիտեմ այդ։ Բավական է, որ մեկն ու մեկը իմ կողքին լինի, արդեն նրա անձը կճնշի իմ ինքնասիրությունը և կկաշկանդի իմ ազատությունը։ Մեկ օրում ես կարող եմ ատել նույնիսկ ամենալավ մարդուն. այս մեկին՝ որովհետև ճաշի վրա երկար է նստում, մյուսին՝ որովհետև հարբուխ ունի և անընդհատ քիթն է մաքրում։ Ես, ասում էր, մարդկանց թշնամին եմ դառնում՝ հենց որ նրանք մի փոքր շփվում են ինձ հետ։ Բայց միշտ այնպես է եղել, որ ինչքան ավելի եմ ատել առանձին մարդկանց, այնքան ավելի է բոցավառվել իմ սերը մարդկության նկատմամբ ընդհանրապես։

— Բայց ի՞նչ անել ուրեմն։ Ի՞նչ պետք է անել այդ դեպքում։ Պետք է հուսալքվե՞լ։

— Ոչ, պետք չէ հուսահատվել, որովհետև բավական է և այն, որ ձեր սիրտը վշտանում է դրա համար։ Արեք ինչ որ կարող եք, և ձեր արածը հաշվի կառնվի։ Շատ բան արել եք արդեն, որովհետև կարողացել եք այնքան խորապես և ան-

կեղծորեն հասկանալ դուք ձեզ։ Իսկ եթե այժմ ինձ հետ ևս այնքան անկեղծ խոսեցիք պարզ այն պատճառով, որ ձեր ճշմարտախոսության համար գովասանք ստանաք, ինչպես որ այս պահին ստանում եք ինձնից, ապա գործուն սիրո կիրառման մեջ ոչ մի արդյունքի չեք հասնի անշուշտ։ Ձեզ համար ամեն ինչ կմնա լոկ երազանք, և ամբողջ ձեր կյանքը մի ակնթարթում կանցնի ուրվականի նման։ Այդ պարագային, պարզ է, կմոռանաք նաև ձեր մտորումներն ապագա կյանքի մասին և ի վերջո ինքներդ մի կերպ հանգստություն կգտնեք։

— Դուք ջախջախեցի՞ք ինձ։ Հի՛մա միայն, ճիշտ այս պահին, երբ խոսում էիք, ես հասկացա, որ իմ անկեղծության գովքն էի միայն սպասում ձեզնից, երբ ասում էի, թե չեմ կարող դիմանալ ապերախտ վերաբերմունքի։ Դուք ինձ հասկացրիք իմ անձը, դուք իմ հոգին կռահեցիք և իմ էությունը բացատրեցիք ինձ։

— Ճշմարի՞տ եք ասում։ Դե՛հ այժմ, ձեր այսպիսի խոստովանությունից հետո, հավատում եմ, որ դուք անկեղծ եք և սրտով բարի։ Եթե չհասնեք երջանկության, միշտ հիշեցեք, որ լավ ճանապարհի վրա եք, և ջանացեք չշեղվել այդ ճանապարհից։ Նամանավանդ խուսափեցեք սուտից, ամեն տեսակի սուտից, հատկապես ձեր սեփական անձին ստելուց։ Աչք պահեցեք ձեր սուտի վրա և ամեն ժամ, ամեն րոպե ուշադիր նայեցեք դրան։ Խուսափեցեք նմանապես խորշանքից՝ թե՛ ուրիշների, թե՛ ձեր անձի նկատմամբ. այն, ինչ վատ է թվում ձեր ներսում, արդեն մաքրվում է լոկ այն իրողությամբ, որ դուք նկատեցիք այդ վատը ձեր մեջ։ Վախից նույնպես խուսափեցեք, թեև վախը սուտի հետևանք է լոկ՝ ամեն տեսակ սուտի։ Երբեք մի՛ վախենաք ձեր սեփական փոքրոգությունից՝ սիրո հասնելու ճանապարհին, ընդ որում նույնիսկ ձեր վատ արարքներից շատ մի՛ վախենաք։ Ցավում եմ, որ ոչ մի մխիթարական բան չեմ կարող ասել ձեզ, վասնզի գործուն սերը դաժան ու զարհուրեցնող բան է՝ երազուն սիրո համեմատությամբ։ Երազուն սերը ծարավի է շուտափույթ սխրագործության, որ կարելի է կատարել արագորեն և բոլորի աչքի առջև։ Եվ այդպիսի ծարավն իրոք հասնում է այն աստիճանի, որ նույնիսկ կյանքն են զոհաբերում, միայն թե երկար չտևի մարտիրոսությունը, այլ շուտով ավարտին հանգի, ինչպես բեմի վրա, և բոլորը նայեն ու գովաբանեն։ Իսկ գործուն

սերը աշխատանք է ու տոկունություն, ոմանց համար էլ՝ թերևս ամբողջ մի գիտություն։ Բայց ասեմ կանխավ, որ ճիշտ այն րոպեին, երբ դուք սոսկումով կանդրադառնաք, թե հակառակ ձեր բոլոր ջանքերին ոչ միայն չեք մոտեցել ձեր նպատակին, այլ կարծես նույնիսկ հեռացել եք դրանից, ճիշտ այդ րոպեին, ասում եմ ձեզ կանխավ, դուք հանկարծ կհասնեք նպատակին և ձեր վրա հստակորեն կտեսնեք հրաշագործ զորությունն աստուծո, որ անընդհատ սիրել է ձեզ և անընդհատ ղեկավարել է խորհրդավոր կերպով։ Ներեցեք, որ ավելի երկար չեմ կարող մնալ ձեզ հետ, սպասում են ինձ։ Մնաք բարյավ։

Տիկինն արտասվում էր։

— Lise, Lise, բայց օրհնեցե՞ք նրան, օրհնեցե՞ք իմ աղջկան,— ընդոստ աղաղակեց նա ամբողջ հոգով։

— Սիրել անգամ չարժե նրան։ Տեսնում էի, թե ինչպես անընդհատ չարություն էր անում,— ասաց սրբահայրը կատակով։— Ինչո՞ւ անընդհատ ծիծաղում էիք Ալեքսեյի վրա։

Եվ իրոք, Lise-ն անընդհատ զբաղված էր այդ չարաճճիությամբ։ Դեռ անցյալ անգամ նկատել էր, որ Ալյոշան ամաչում է և աշխատում չնայել նրան։ Եվ ահա այդ է, որ սկսել էր մեծ զվարճություն պատճառել աղջկան։ Նա ակնդետ սպասում էր և որսում Ալյոշայի հայացքը։ Չդիմանալով իրեն ուղղված համառ աչքերին, Ալյոշան մեկ էլ հանկարծ ինքն էր նայում ակամա, անդիմադրելի մղումով, և աղջիկն իսկույն հաղթական ժպտում էր ուղղակի նրա երեսին։ Ալյոշան ավելի էր շփոթվում ու վրդովվում։ Ի վերջո բոլորովին երես դարձրեց նրանից և պահվեց սրբահոր թիկունքին։ Մի քանի րոպե հետո, նույն անդիմադրելի ուժից մղված, նա նորից դարձավ ստուգելու՝ արդյոք նայո՞ւմ են իրեն, թե ոչ, և տեսավ, որ Lise-ը համարյա դուրս է կախվել բազկաթոռից և կողքանց նայում է իրեն, ամբողջովին լարված սպասում իր հայացքին։ Եվ երբ բռնեց Ալյոշայի հայացքը, այնպես քրքջաց, որ նույնիսկ սրբահայրը չհամբերեց ու ասաց.

— Ինչո՞ւ եք այդպես ամաչեցնում նրան, չար աղջիկ։

Lise-ը հանկարծ կարմրեց բոլորովին անսպասելիորեն, աչքերը փայլեցին, դեմքը խիստ լրջացավ, և նա սկսեց արագ

ու նյարդային խոսել՝ տենդագին ու վրդովված գանգատվելով.

— Իսկ նա ինչո՞ւ է ամեն ինչ մոռացել։ Նա ինձ ձեռքերի վրա էր ման ածում, երբ փոքր էի, մենք խաղում էինք միասին։ Այո, նա գալիս ու կարդալ էր սովորեցնում ինձ, դուք գիտե՞ք այդ։ Երբ երկու տարի առաջ հրաժեշտ էր տալիս, ասաց, թե երբեք չի մոռանալու, որ մենք հավերժական բարեկամներ ենք, հավերժակա՜ն, հավերժակա՜ն։ Իսկ հիմա հանկարծ վախենո՞ւմ է ինձնից։ Ի՞նչ է, ուտելո՞ւ եմ նրան։ Ինչո՞ւ չի ուզում մոտենալ, ինչո՞ւ չի խոսում։ Ինչո՞ւ չի ուզում մեր տուն գալ։ Դուք նրան թույլ եք տալիս, չէ՞։ Այո, մենք գիտենք, որ նա ամեն տեղ գնում է։ Անհարմար է, որ ես նրան հրավիրեմ, առաջինն ինքը պետք է մտածեր, եթե չի մոռացել։ Չէ՞, նա հիմա իր հոգի՞ն է փրկում։ Ի՞նչ եք այդ երկար փեշերով կապան հագցրել նրան... Վազի՝ կընկնի...

Եվ նա հանկարծ, չդիմանալով, երեսը ձեռքով ծածկեց և անզուսպ ծիծաղեց իր երկարատև, նյարդային, ցնցվող ու անձայն քրքիջով։ Սրբահայրը ժպտադեմ լսեց նրան և քընքշալի օրհնեց։ Իսկ աղջիկը, երբ համբուրում էր նրա ձեռքը, հանկարծ սեղմեց այն իր աչքերին և սկսեց լաց լինել։

— Դուք մի՛ բարկանաք ինձ վրա, ես հիմար եմ, անպետք եմ ես... և Ալյոշան գուցե իրավունք ունի, շատ իրավունք ունի, որ չի ուզում այսպիսի մի ծիծաղելի աղջկա երեսը տեսնել։

— Անպայման կուղարկեմ նրան, —վճռեց սրբահայրը։

V

ԵՂԻՑԻ՛, ԵՂԻՑԻ՛

Սրբահայրը մոտավորապես քսանհինգ րոպե բացակայեց խուցից։ Արդեն ժամը տասներկուս և կեսն անց էր, բայց դեռ չէր երևացել Դմիտրի Ֆյոդորովիչը, որի պատճառով էին բոլորը հավաքվել այստեղ։ Սակայն համարյա թե մոռացել էին կարծես նրան, և երբ սրբահայրը նորից խուց մտավ՝ տեսավ, որ իր հյուրերը շատ աշխույժ խոսակցության են բռնված։ Ամենից ավելի Իվան Ֆյոդորովիչը և երկու աբեղաներն էին մասնակցում խոսակցության։ Միուսովն էլ խառնվում էր

և ըստ երևույթին շատ եռանդուն կերպով, բայց նորից նրա բախտը չէր բանում. երևում էր, որ նա մնում է երկրորդ գծի վրա, նույնիսկ հազիվ էին պատասխանում նրա խոսքերին, այնպես որ այս նոր հանգամանքը պարզապես ուժեղացրեց նրա անընդհատ բորբոքվող նյարդայնությունը։ Խնդիրն այն է, որ առաջ էլ գիտելիքների մենամարտ էր ունեցել Իվանի հետ և չէր կարողանում սառնարյուն ընդունել նրա որոշ անտարբերությունն իր նկատմամբ։ «Մինչև հիմա գոնե կանգնած էի Եվրոպայում եղած բոլոր առաջավոր գաղափարների բարձրության վրա, իսկ այս նոր սերունդը բացարձակորեն անտեսում է մեզ»,— մտածում էր նա։ Ֆյոդոր Պավլովիչը, որ խոսք էր տվել նստել աթոռին ու լուռ մնալ, իրոք լուռ մնաց որոշ ժամանակ, բայց մի փոքրիկ հեգնական ժպիտով հետևում էր իր հարևան Պյոտր Ալեքսանդրովիչին և հայտնապես ուրախանում՝ նրան ջղայնացած տեսնելով։ Վաղուց մտադրվել էր հին հաշիվներ մաքրել նրա հետ և հիմա չէր ուզում բաց թողնել առիթը։ Վերջապես չդիմացավ, թեքվեց հարևանի ուսին և, փսփսալով, նորից ձեռք առավ նրան.

— Ախր ինչո՞ւ քիչ առաջ դուրս չգնացիք այդ «համբուրելով սիրազեղ»-ից հետո և համաձայնվեցիք մնալ այսպիսի անվայել շրջանակում։ Պարզ է, ստորացված ու վիրավորված զգացիք ձեզ և մնացիք, որպեսզի ձեր խելքը ցույց տալով վրեժ լուծեք։ Էլ չեք գնա հիմա, մինչև ձեր խելքը ցույց չտաք նրանց։

— Նորի՞ց սկսեցիք։ Ընդհակառակը, հենց հիմա կգնամ։

— Բոլորի՛ց հետո կգնաք, բոլորի՛ց հետո, —մի անգամ էլ խայթեց Ֆյոդոր Պավլովիչը համարյա այն նույն վայրկյանին, երբ սրբահայրը խուց վերադարձավ։

Վեճը մի րոպե դադարեց, բայց սրբահայրը, իր նախկին տեղը նստելով, նայեց բոլորին, ասես քաղցրությամբ հրավիրելով շարունակել խոսակցությունը։ Ալյոշան, որ ուսումնասիրել էր նրա դեմքի ամեն մի արտահայտությունը, պարզ տեսավ, թե նա սարսափելի հոգնած է և մեծ ճիգով է հաղթահարում ինքն իրեն։ Հիվանդության վերջին շրջանում նա երբեմն նվաղում էր ուժասպառության հետևանքով։ Հիմա էլ նրա դեմքն սկսել էր գունատվել այնպես, ինչպես սովորաբար լինում էր նվաղումից առաջ, շրթունքներն սպիտակել էին։ Բայց նա երևի չէր ուզում վերջացնել հավաքույթը. ըստ

որում թվում էր, թե մի հատուկ նպատակ ունի։ Ի՞նչ նպատակ արդյոք։ Ալյոշան ուշադիր հետևում էր նրան։

— Խոսում ենք հարգելի պարոնի չափազանց հետաքրքրքրական հոդվածի մասին,— ասաց Իոսիֆ աբեղան՝ գրադարանապետը, դիմելով սրբահորը և ցույց տալով Իվան Ֆյոդորովիչին։— Շատ նորություններ է առաջադրում, սակայն կարծում եմ, որ հիմնական գաղափարը երկսայրի է։ Պարոնը հոդված է գրել պաբերական մամուլում, պատասխանելով մի հոգևորական անձի հեղինակած գրքին, որ եկեղեցա-հանրային դատարանի և դրա իրավունքի ընդարձակության հարցին է նվիրված...

— Դժբախտաբար ձեր հոդվածը չեմ կարդացել, բայց լսել եմ դրա մասին,— պատասխանեց սրբահայրը, սևեռուն և աչալուրջ նայելով Իվան Ֆյոդորովիչին։

— Պարոնը կանգնած է չափազանց հետաքրքրքական տեսակետի վրա,— շարունակեց հայր գրադարանապետը։— Եկեղեցա-հանրային դատարանի հարցում նա ըստ երևույթին բացարձակորեն մերժում է եկեղեցու անջատումը պետությունից։

— Հետաքրքրական է։ Բայց ի՞նչ իմաստով,— հարցրեց սրբահայրը Իվան Ֆյոդորովիչին։

Իվանը վերջապես պատասխանեց նրան, բայց ոչ թե մեծամիտ քաղաքավարությամբ, ինչպես վախեցել էր Ալյոշան նախորդ օրը, այլ համեստ ու զուսպ՝ ակնհայտ բարյացակամությամբ և, ըստ երևույթին, առանց դույզն հետին մտքի։

— Ես ելնում եմ այն դրույթից, որ տարրերի այս խառնուրդը, այսինքն եկեղեցու և պետության էական սկզբունքների միախառնումը հավիտենապես տևելու է անշուշտ, չնայած, որ անկարելի է դրանք զուգակցել և երբեք հնարավոր չի լինի այդ խառնուրդը բերել ոչ միայն բնականոն, այլև որևէ չափով համաձայնելի վիճակի, որովհետև գործի բուն հիմքը սուտի վրա է դրված։ Ըստ իս, պետության ու եկեղեցու միջև փոխզիջումն այնպիսի հարցերում, ինչպես դատավարության խնդիրն է օրինակ, իր բացարձակ ու զուտ էության մեջ անհնար բան է։ Այն հոգևորականը, որին ընդդիմախոսել եմ, պնդում է, թե եկեղեցին իր ճշտորոշ տեղն ունի պետության մեջ։ Իսկ ես նրան առարկեցի, որ եկեղեցին, ընդհակառակը, ինքը պետք է իր մեջ պարունակի ամբողջ պետությունը, և ոչ թե պետության մեջ մի անկյուն գրավի պարզապես, և եթե այժմ դա անհնար է այս

կամ այն պատճառով, ապա, ըստ էության, պետք է քրիստոնեական հասարակության հետագա ամբողջ զարգացման ուղղակի և գլխավոր նպատակը դառնա անտարակույս։

— Կատարելապե՛ս ճշմարիտ է,— վճռական ու նյարդային շեշտով ասաց հայր Պաֆնուտին՝ սակավախոս ու գիտնական աբեղան։

— Ամենազուտ ուլտրամոնտանականությո՛ւն է դա,— գոռաց Միուսովն անհամբեր, ոտքը ոտքին դնելով։

— Է՛հ, մենք նույնիսկ լեռ ասված բանը չունենք,— բացականչեց հայր Իոսիֆը և, դառնալով սրբահորը, շարունակեց։— Պարոնը, ի միջի այլոց, պատասխանում էր իր հակառակորդի հետևյալ «հիմնական ու էական» դրույթներին, հակառակորդի, որ հոգևորական է, նկատի ունեցեք։ Առաջին՝ թե «ոչ մի հասարակական կազմակերպություն չի կարող և չպետք է յուրացնի իր անդամների քաղաքացիական ու քաղաքական իրավունքները տնօրինելու իշխանությունը»։ Երկրորդ՝ թե «քրեական ու քաղաքացիական դատ վարելու իշխանությունը չպետք է պատկանի եկեղեցուն և անհամատեղելի է եկեղեցվո բնույթի հետ՝ թե՛ որպես աստվածային հաստատության, և թե՛ որպես մարդկային կազմակերպության, որի նպատակները կրոնական են», և վերջապես երրորդ՝ թե «թագավորությունն եկեղեցւոյ չէ՛ յայսմ աշխարհէ»։

— Բառերի հետ այդպես խաղալը շա՛տ անվայել է հոգևորականի համար,— չդիմացավ ու նորից ընդհատեց հայր Պաֆնուտին։— Ես կարդացել եմ այդ գիրքը, որին դուք հակաճառել եք,— դարձավ նա Իվան Ֆյոդորովիչին,— և զարմացել եմ, որ հոգևորական անձն է այդպես ասում՝ թե «թագավորությունն եկեղեցւոյ չէ՛ յայսմ աշխարհէ»։ Եթե չէ յայսմ աշխարհէ, ուրեմն և ամենևին չի կարող եկեղեցին գոյություն ունենալ երկրի վրա։ Սուրբ ավետարանում «չէ՛ յայսմ աշխարհէ» բառերն այդ իմաստով չեն գործածված։ Կարելի չէ խաղալ այդպիսի բառերի հետ։ Տերն մեր Հիսուս Քրիստոս եկավ հատկապես եկեղեցին հաստատելու համար երկրի վրա։ Երկնային թագավորությունը, անշուշտ, չէ յայսմ աշխարհէ, այլ երկնքում, բայց այնտեղ կարելի է մտնել միայն եկեղեցվո ընդմիջեն, որ հիմնված ու հաստատված է երկրի վրա։ Ուստի, այդ առումով, աշխարհիկ բառախաղերն անթույլատրելի են և անվայել։ Իսկ եկեղեցին թագավորություն է

արդարև ու սահմանված է թագավորելու և ի վերջո պետք է դառնա համայն աշխարհի թագավորությունն անտարակույս, այդպես է մեզ խոստացված ի տեառնէ...

Նա հանկարծ լռեց, կարծես զսպելով իրեն։ Իվան Ֆյոդորովիչը, նրան հարգալից և ուշադիր լսելուց հետո, դարձավ սրբահորը և շարունակեց չափազանց հանգիստ, բայց առաջվա պես սիրալիր ու անկեղծ.

— Իմ հոդվածի ամբողջ իմաստը հետևյալն է։ Քրիստոնեությունը հին ժամանակներում, իր պատմության առաջին երեք դարերին, երկրի վրա գոյություն ուներ միայն որպես եկեղեցի և ուրիշ բան չէր, քան միմիայն եկեղեցի։ Իսկ երբ հռոմեական հեթանոս պետությունը կամեցավ քրիստոնյա դառնալ, անխուսափելիորեն այնպես պատահեց, որ քրիստոնյա դառնալով նա պարզապես իր մեջ առավ եկեղեցին, բայց ինքը շարունակեց հեթանոս պետություն մնալ առաջվա նման՝ իր գործունեության շատ ու շատ ասպարեզներում։ Ըստ էության, այդպես էլ պետք է պատահեր անտարակույս։ Բայց Հռոմը, որպես պետություն, չափազանց շատ բան էր պահպանել հեթանոսական քաղաքակրթությունից և իմաստությունից, ինչպես օրինակ պետության բուն նպատակներն ու հիմունքները։ Իսկ Քրիստոսի եկեղեցին, մտնելով պետության մեջ, ոչ մի բան չէր կարող զիջել անշուշտ իր հիմքերից՝ այն վեմից, որի վրա կանգնած էր, և կարող էր հետապնդել ոչ այլ ինչ, քան նույն ինքն տիրոջ կողմից մի անգամ ընդմիշտ հաստատապես դրված և որպես ուղեցույց նշված նպատակները, ընդ որում նաև այն, որ պետք է եկեղեցու մեջ ընդգրկել ամբողջ աշխարհը, ուստի և ամբողջ հին հեթանոսական պետությունը։ Այսպիսով (այսինքն ապագայի նկատառումներով), ոչ թե եկեղեցին պետք է հետամտի իր համար որոշակի տեղ գտնել պետության մեջ, ինչպես «որևէ հասարակական կազմակերպություն» կամ «որպես կրոնական նպատակներով միացած մարդկանց կազմակերպություն» (ինչպես արտահայտվում է եկեղեցու մասին այն հեղինակը, որին ես հակաճառում եմ), այլ ընդհակառակը՝ երկրային որևէ պետություն պետք է ի վերջո լիովին վերածվի եկեղեցու և լինի ոչ այլ ինչ, քան միմիայն եկեղեցին, այլևս հրաժարվելով իր բոլոր այն ձգտումներից, որոնք անհարիր են եկեղեցու նպատակներին։ Իսկ այս ամբողջը ոչ մի կերպ չի նվաստաց-

նի դրան, ո՛չ պատվից, ո՛չ էլ փառքից կզրկվի դա իբրև մեծ պետություն, ոչ էլ նրա իշխանավորները կկորցնեն իրենց փառքը, այլ պարզապես, այս բոլորի շնորհիվ, պետությունը դուրս կգա իր սուտ ու սխալ, դեռ հեթանոսական ճանապարհից և կմտնի ճիշտ և ճշմարիտ ճանապարհը՝ այն միակ ճանապարհը, որ տանում է դեպի հավիտենական նպատակներ։ Ահա թե ինչու «Եկեղեցա-հանրային դատարանի հիմունքները» գրքի հեղինակը ճիշտ դատած կլիներ, եթե, հետազոտելով ու առաջադրելով այդ հիմունքները, դրանք համարեր ոչ ավելին, քան մի ժամանակավոր փոխզիջում, որ դեռ անհրաժեշտ է մեր մեղավոր և անկատար դարաշրջանում։ Բայց հենց որ հեղինակը համարձակվում է հայտարարել, թե անսասան, տարերային ու հավիտենական են այն հիմունքները, որոնք ինքն առաջադրում է այժմ և որոնց մի մասը քիչ առաջ հայր Իոսիֆը Դվեց, նա արդեն ուղղակի հակառակվում է եկեղեցուն և նրա սուրբ, հավիտենական ու անսասան կոչումին։ Ահա իմ հոդվածի ամբողջ ուղն ու ծուծը։

— Այսինքն, երկու խոսքով,— ասաց նորից հայր Պաֆսին, շեշտելով յուրաքանչյուր բառը,— ըստ տեսությունների, որոնք չափազանց պարզ դարձան մեր տասնիններորդ դարում, եկեղեցին պետք է վերաճի պետության՝ իբրև թե ստորին տեսակից անցնելով դեպի բարձրագույն տեսակը, որպեսզի հետո անհետանա պետության մեջ, տեղի տալով գիտության, ժամանակի ոգուն ու քաղաքակրթության։ Իսկ եթե եկեղեցին չի ուզում այդ և դիմադրում է, ապա ուրեմն պետության մեջ մի որոշ անկյուն է տրվում նրան պարզապես, այն էլ վերահսկողության տակ,— և մեր օրերում այսպես է ամենուրեք ժամանակակից եվրոպական երկրներում։ Բայց ըստ ռուսական հասկացողության ու ակնկալությունների՝ անհրաժեշտ է, որ ոչ թե եկեղեցին վերաճի պետության՝ որպես անցում ստորին ձևից դեպի բարձրագույն ձևը, այլ ընդհակառակը՝ պետությունը պետք է վերջ ի վերջո արժանի դառնա միայն ու միայն եկեղեցի լինելու և ոչ այլ ինչ։ Եվ եղիցի՛, եղիցի՛ այս ամենայն։

— Է՛հ, խոստովանում եմ, հիմա մի քիչ սրտապնդեցիք դուք ինձ,— քմծիծաղ տվեց Միուսովը, նորից ոտքը ոտքին դնելով։ —Որքան հասկանում եմ, դա ինչ-որ իդեալ է ուրեմն, որ պետք է իրագործվի անհունորեն հեռավոր ապագայում,

Քրիստոսի երկրորդ գալստյանը։ Այդ ձե՛ր իմանալիք բանն է։ Ուտոպիական գեղեցիկ երազ՝ որ կչքանան պատերազմները, դիվանագետները, բանկերը և այլն։ Նույնիսկ սոցիալիզմի նման մի բան։ Թե չէ՝ ես կարծում էի, որ այդ ամբողջը լուրջ բան է և որ եկեղեցին հիմա, օրինակ, դատելու է քրեական հանցանքները և դատապարտելու է ճիպոտահարության ու տաժանակիր աշխատանքի, գուցե և հենց մահապատժի։

— Բայց եթե հիմա էլ եկեղեցա-հանրային դատարան լիներ միայն, եկեղեցին այսօր էլ տաժանակիր աշխատանքի կամ մահապատժի չէր դատապարտի հանցագործներին։ Այդ դեպքում ոճիր ասված բանը և դրա նկատմամբ վերաբերմունքը պետք է փոխվեին անտարակույս, թեև աստիճանաբար անշուշտ, ոչ թե հենց անմիջապես, սակայն բավական շուտ...— ասաց Իվան Ֆյոդորովիչը հանգիստ, առանց նույնիսկ աչքերը թարթելու։

— Լո՞ւրջ եք ասում, —սևեռուն նայեց նրան Միուսովը։

— Եթե ամեն ինչ եկեղեցի դառնար, եկեղեցին կնզովեր ու կհեռացներ իրենից հանցագործին ու անհնազանդին, և ոչ թե գլուխները կկտրեր,— շարունակեց Իվան Ֆյոդորովիչը։— Հարց եմ տալիս ձեզ, ո՞ւր պետք է գնար նզովյալը։ Չէ՞ որ այդ դեպքում նա պետք է հեռանար ոչ միայն մարդկանցից, ինչպես հիմա, այլև Քրիստոսից։ Չէ՞ որ նա իր հանցագործությամբ մեղանչած կլիներ ոչ միայն մարդկանց, այլև Քրիստոսի եկեղեցու դեմ։ Հիմա էլ անշուշտ այդպես է ըստ էության, սակայն բացահայտորեն չի ասված այդ մասին, և այսօրվա հանցագործը շատ ու շատ հաճախ կաշառում է իր խիղճը, այսինքն թե՝ «Գողություն եմ անում, բայց եկեղեցու դեմ չեմ գործում, թշնամի չեմ Քրիստոսին»։ Ահա թե ինչ է ասում այսօրվա հանցագործն ինքն իրեն՝ ամեն քայլափոխում։ Իսկ երբ եկեղեցին բռնի պետության տեղը, հանցագործի համար դժվար կլինի այդպես ասել, բացի եթե նա բացասում է ամբողջ եկեղեցին ամբողջ աշխարհում, այսինքն թե՝ «Բոլորը սխալվում են, բոլորը շեղվել են, բոլորն էլ սուտ եկեղեցի են, և միայն ես, որ մարդասպան եմ ու գող, քրիստոնեական ճշմարիտ եկեղեցին եմ»։ Սակայն շատ դժվար է այդպես ասել ինքն իրեն, դրա համար ահագին պայմաններ են պետք, արտակարգ հանգամանքներ։ Արդ, մյուս կողմից, վերցրեք բուն իսկ եկեղեցու տեսակետը հանցագործության

նկատմամբ. մի՞թե եկեղեցին չպետք է բարեփոխի այսօրվա համարյա հեթանոսական վերաբերմունքը, մի՞թե վարակված անդամը մեքենաբար կտրել-հեռացնելը, որ ներկայումս արվում է հասարակությունը պաշտպանելու համար, չպետք է լրիվ ու անկեղծորեն փոխարինվի այն գաղափարով, թե հարկավոր է վերստին կյանքի կոչել մարդուն, վերակերպել ու փրկել նրան...

— Այսինքն ի՞նչ է նշանակում այդ ամբողջը։ Ես նորից չեմ կարողանում հասկանալ,— ընդհատեց Միուսովը,— նորից ինչ-որ երազանք է դա։ Անձև մի բան, նույնիսկ հնարավոր չէ հասկանալ։ Ինչպե՞ս թե նզովք, այդ ի՞նչ նզովք է։ Կասկածում եմ՝ դուք պարզապես զվարճանում եք, Իվան Ֆյոդորովիչ։

— Բայց չէ՞ որ այժմ ես նույնն է կատարվում իրականության մեջ,— ասաց հանկարծ սրբահայրը, և բոլորը մեկեն դարձան նրան։— Եթե չլիներ այժմ Քրիստոսի եկեղեցին, ոչ մի բան ետ չէր պահի ոճրագործին իր չար գործերն անելուց և նույնիսկ հետագայում պատիժ չէր կրի նա իր արածի համար. այսինքն իսկական պատիժ, ոչ թե այն մեքենականը, ինչպես ասվեց հիմա, որ մեծավ մասամբ դառնացնում է պարզապես սիրտը, այլ միակ իսկական, միակ ահազդու և խաղաղեցնող պատիժը՝ սեփական խղճով մեղքը գիտակցելը։

— Ինչպե՞ս այսինքն, կարելի՞ է իմանալ,— հարցրեց Միուսովն աշխույժ հետաքրքրությամբ։

— Ահա թե ինչպես,— սկսեց սրբահայրը։— Բոլոր այդ աքսորները դեպի տաժանակիր աշխատանք, անցյալում նաև ծեծով հանդերձ, ոչ ոքի չեն ուղղում, գրեթե ոչ մի հանցագործի չեն վախեցնում մանավանդ, և ոչ միայն չի նվազում հանցագործությունների թիվը, այլ ավելի է աճում շարունակ։ Պետք է ընդունեք անշուշտ այս փաստը։ Եվ այսպիսով պարզվում է, որ բոլորովին պաշտպանված չէ հասարակությունը, որովհետև վնասակար անդամը մեքենաբար կտրվում է թեև ու վտարվում աչքից հեռու, բայց նրա փոխարեն անմիջապես երևան է գալիս մի այլ հանցագործ, գուցե և ոչ մեկ, այլ երկու հանցագործ։ Եթե մի բան պաշտպանում է հասարակությանը նույնիսկ մեր օրերին ու հանցագործին էլ ուղղում է և վերակերպում ուրիշ մարդու, միայն ու միայն Քրիստոսի օրենքն է դարձյալ, որ արտահայտվում է սեփա-

կան խղճով մեղքը գիտակցելու մեջ։ Հանցագործը որպես քրիստոնյա հասարակության անդամ, այսինքն որպես եկեղեցվո որդի իր մեղքը գիտակցելով է միայն, որ գիտակցում է նաև իր մեղքը բուն իսկ հասարակության առաջ, այսինքն եկեղեցվո առաջ։ Այսպիսով, միայն եկեղեցվո առաջ կարող է ժամանակակից հանցագործը գիտակցել իր մեղքը, և ոչ թե պետության առաջ։ Եվ եթե հասարակությունը, որպես եկեղեցի, տեր լիներ դատարանին, այնժամ կիմանար, թե ո՞վ պետք է ետ կոչի նզովքից ու վերադարձնի իր գիրկը։ Իսկ այժմ եկեղեցին, ոչ մի գործնական դատարան չունենալով իր իրավասության տակ, այլ ունենալով միայն բարոյապես դատապարտելու հնարավորությունը, ինքն է հեռու մնում հանցագործին գործնական պատիժ տալուց։ Չի նզովում նրան, այլ պարզապես շարունակում է հայրաբար խրատել։ Ավելին, նույնիսկ աշխատում է պահպանել քրիստոնեական ամբողջ հաղորդակցությունը հանցագործի հետ, նրան թույլատրում է մասնակցել եկեղեցական արարողություններին, մերձենալ սրբազան մասունքին, ողորմություն է տալիս նրան և վարվում է այնպես, ինչպես կվարվեր գերյալի հետ, և ոչ թե մեղավորի։ Եվ ի՞նչ կլիներ հանցագործի վիճակը, ո՞վ տեր աստված, եթե քրիստոնեական հասարակությունը ևս, այսինքն եկեղեցին, մերժեր նրան այնպես, ինչպես մերժում ու անջատում է նրան քաղաքացիական օրենքը։ Ի՞նչ կլիներ նրա վիճակը, եթե եկեղեցին ևս, ամեն անգամ, պետական օրենքի տված պատժից անմիջապես հետո, պատժեր նրան իր նզովքով։ Դրանից ավելի խոր հուսահատություն չէր կարող լինել՝ գոնե ռուս հանցագործի համար, որովհետև ռուս հանցագործները հավատացյալ են դեռ։ Բայց և, ո՞վ գիտե, գուցե սարսափելի մի բան պատահեր այն ժամանակ՝ հանցագործի հուսալքված սիրտը գուցե կորցներ իր հավատքը... և ի՞նչ պետք է աներ նա այնուհետև։ Սակայն եկեղեցին, որպես մայր քնքշալի ու սիրազեղ, ինքն է հրաժարվում գործնական պատիժ տալուց, քանի որ մեղավորն առանց այդ էլ չափազանց խիստ պատժի է ենթարկվել պետական դատարանի կողմից, և պետք է անշուշտ, որ գոնե մեկը խղճա նրան։ Բայց եկեղեցին հրաժարվում է մանավանդ այն պատճառով, որ միայն ի՞ր դատաստանն է ճշմարտություն պարունակում և հետևաբար ոչ մի ուրիշ դատաստանի հետ չի կարող էապես ու բարոյապես զուգորդվել՝ նույնիսկ ժամանակավոր փոխզիջման ձևով։ Այս հարցում արդեն անկարելի է որևէ գործարքի մեջ մտնել։ Օտարազգի հանցագործը, ասում են, հազվադեպ է զղջում, որովհետև հենց ժամանակակից ուսմունքներն իսկ ամրապնդում են նրա մեջ այն համոզմունքը, թե նրա ոճիրը ոճիր չէ, այլ պարզապես ըմբոստություն՝ անարդար կերպով ճնշող ուժի դեմ։ Հասարակությունը, հանցագործի վրա մեքենաբար հաղթանակ տանող ուժի միջոցով, անջատում է նրան իրենից և ոչ միայն արտաքսում, այլև միաժամանակ ատում է նրան (գոնե իրենք իրենց մասին այդպես են ասում Եվրոպայում), ատում է և կատարյալ անտարբերության ու մոռացության է մատնում իր մոլորված եղբոր հետագա ճակատագիրը։ Այսպիսով, այդ ամբողջը տեղի է ունենում առանց եկեղեցվո նվազագույն կարեկցանքի, որովհետև շատ դեպքերում ամենևին եկեղեցիներ չկան այլևս այնտեղ, այլ մնացել են միայն եկեղեցականներ ու եկեղեցիների հոյակապ շենքեր, իսկ բուն եկեղեցիներն արդեն վաղուց ձգտում են ստորին ձևից անցնել բարձրագույն ձևին, այսինքն պետության, որպեսզի լիովին անհետանան դրա մեջ։ Կարծես թե այդպես է գեթ լութերական երկրներում։ Իսկ Հռոմում արդեն հազար տարի է՝ եկեղեցվո փոխարեն պետություն է հռչակված։ Ուստի և հանցագործն ինքը եկեղեցվո անդամ չի զգում իրեն արդեն և, արտաքսվելով հասարակությունից, ընկնում է հուսահատության մեջ։ Իսկ եթե վերադառնում է հասարակության, հաճախ այնպիսի ատելությամբ է լցված լինում, որ արդեն հասարակությունն ինքը կարծես ինքնաբերաբար արտաքսում է նրան։ Թե ինչ կլինի դրա վերջը, ինքներդ կարող եք դատել։ Թվում է, թե մեզ մոտ էլ նույն բանն է շատ դեպքերում, բայց խնդիրն այն է, որ մենք, բացի սահմանված դատարաններից, ունենք նաև եկեղեցի, որ մշտապես պահպանում է իր հաղորդակցությունը հանցագործի հետ, ընդունելով նրան որպես իր սիրելի ու դեռ թանկագին որդուն։ Բացի այդ, կա և պահպանվում է, թեկուզ նույնիսկ մտովի, նաև եկեղեցական դատաստանը, որ թեև այժմ չի գործում, բայց այնուամենայնիվ ապրում է ապագայի համար գեթ իբրև երազանք, և որ հանցագործն ինքը անտարակույս ընդունում է իր հոգու բնազդով։ Ճշմարիտ է նաև այն, ինչ այստեղ ասվեց հիմա, որ եթե իրոք եկեղեցվո դատաստանը գործել սկսեր իր ամբողջ զորու-

թյամբ, այսինքն եթե ամբողջ հասարակությունը դառնար միայն եկեղեցի, ապա ոչ միայն եկեղեցվո դատաստանը կազդեր հանցագործի վերադաստիարակման վրա այնպես, ինչպես երբեք չի ազդում այժմ, այլև գուցե բուն հանցագործությունն իսկ անհավատալի չափով կնվազեին արդարև։ Եվ եկեղեցին, անտարակույս, շատ դեպքերում բոլորովին այլ կերպ կնայեր ապագա հանցագործին և ապագա հանցագործությանը, քան այժմ, և կկարողանար վերադարձնել վատարությունը, քան այժմ, և կկարողանար վերադարձնել վատարությունը, քան այժմ, և կկարողանար վերադարձնել վատարություն

որոշ աստիճան, այսինքն ավելի ճիշտ քաղաքավարի եղավ, քան անկեղծ, ինչպես հենց ֆրանսիացին կարող է քաղաքավարի լինել, մանավանդ որ տեսավ, թե ես օտարերկրացի եմ։ Բայց ես լրիվ հասկացա նրան։ Զրույցի նյութը սոցիալիստ-հեղափոխականներն էին, որոնց, ի միջի այլոց, հալածում էին այն ժամանակ։ Զանց առնելով խոսակցության բուն էությունը, կբերեմ չափազանց հետաքրքրական մի դիտողություն միայն, որ հանկարծ դուրս թռավ այդ պարոնի բերանից։ «Մենք, —ասաց նա,— շատ էլ չենք վախենում հատկապես այդ սոցիալիստներից՝ լինեն անարխիստ, անաստված թե հեղափոխական, մենք հետևում ենք նրանց, և մեզ ծանոթ է նրանց արածն ու չարածը։ Բայց նրանց մեջ, թեև քիչ թվով, կան ինչ-որ հատուկ տեսակի մարդիկ, որոնք հավատում են աստծուն և քրիստոնյա են, սակայն և սոցիալիստ են միաժամանակ։ Ահա հենց սրանցից ենք ամենից ավելի վախենում, սարսափելի մարդիկ են սրանք։ Սոցիալիստ-քրիստոնյան ավելի սարսափելի է, քան սոցիալիստ-անաստվածը»։ Այս խոսքերն ինձ այն ժամանակ էլ շշմեցրել էին, բայց հիմա այստեղ, պարոնայք, մի տեսակ հանկարծ միտս ընկան դրանք...

— Այսինքն այդ խոսքերը մեր վրա եք կիրառում և սոցիալիստնե՞ր եք համարում մեզ,— ուղղակի և առանց այլևայլի հարցրեց հայր Պահին։

Սակայն դեռ Պյոտր Ալեքսանդրովիչն իր պատասխանը չէր գտել, երբ դուռը բացվեց և ներս մտավ Դմիտրի Ֆյոդորովիչը, որ ուշացել էր այնքան երկար ժամանակ։ Կարծես իրոք չէին սպասում նրան այլևս, և անակնկալորեն նրա հայտնվելը նույնիսկ որոշ զարմանք պատճառեց առաջին րոպեին։

VI

ԻՆՉՈՒ Է ԱՊՐՈՒՄ ԱՑՍՊԻՍԻ ՄԱՐԴԸ

Դմիտրի Ֆյոդորովիչը, քսանութամյա երիտասարդ, միջահասակ էր ու հաճելի դեմք ուներ, սակայն իր տարիքից շատ ավելի մեծ էր թվում։ Մկանուտ էր, և կարելի էր ենթադրել, թե մարմնական զգալի ուժի տեր է, բայց և այնպես հիվանդագին մի բան կար նրա դեմքին։ Նիհար էր դեմքը, այտերը փոս էին ընկել և անառողջ դեղնության երանգ ուներ դրանց գույնը։ Բավական մեծ, մուգ ու դուրս ընկած աչքերը թեև հաստատակամ վճռականությամբ էին նայում կարծես, բայց հայացքը մի տեսակ անորոշ էր։ Նույնիսկ երբ հուզվում էր և գրգռված խոսում, նրա հայացքը կարծես չէր ենթարկվում ներքին տրամադրությանը և արտահայտում էր ուրիշ մի բան, որ երբեմն բոլորովին չէր համապատասխանում տվյալ պահին։ «Դժվար է իմանալ, թե ինչ է մտածում»,— ասում էին երբեմն նրանք, ովքեր խոսել էին հետը։ Պատահում էր, որ նրա աչքերի մեջ մտախոհ ու մռայլ մի բան տեսնող մարդիկ հանկարծ շշմում էին նրա անակնկալ ծիծաղից, որ վկայում էր, թե նա ուրախ ու աշխույժ մտքերով էր տարված հենց այն րոպեին, երբ նայում էր այնքան մռայլ հայացքով։ Բայց կարելի էր հասկանալ նրա դեմքի որոշ հիվանդագին տեսքը ներկա պահին. բոլորը գիտեին կամ լսել էին, թե հենց վերջերս նա չափազանց անհանգիստ ու «քեֆամոլ» կյանք էր վարում մեզ մոտ, և նմանապես հայտնի էր բոլորին, որ նա հասել էր սաստիկ ջղային դրության՝ վիճելի գումարի պատճառով բախումներ ունենալով իր հոր հետ։ Քաղաքում արդեն մի քանի անեկդոտ էր տարածված այդ բախումների մասին։ Ճիշտ է, որ նա բնավորությամբ էլ ջղային էր, «ոստոստուն ու անհավասարակշիռ խելքի տեր», ինչպես մի հավաքույթում բնորոշեց նրան մեր հաշտարար դատավոր Սեմյոն Իվանովիչ Կաչալնիկովը։

Նա ներս մտավ անթերի ու պճնագեղ հագնված. սերթուկը լավ կոճկված էր, սև ձեռնոցներ էր դրել և գլանաձև գլխարկը բռնել էր ձեռքին։ Որպես վերջերս պաշտոնաթող եղած զինվորական, նա բեղեր ուներ և դեռ ածիլում էր երեսը։ Մուգ շագանակագույն մազերը կարճ հարդարված էին և քունքերի վրա դեպի առաջ սանրված։ Ռազմիկի քայլվածք ուներ՝ լայն ու վճռական։ Մի վայրկյան կանգ առավ շեմքին, արագ հայացք գցեց բոլորի վրա և ուղղակի մոտեցավ սրբահորը, կռահելով, որ նա է տանուտերը։ Խոր գլուխ տվեց նրան և օրհնությունը խնդրեց։ Սրբահայրը վեր կենալով օրհնեց նրան։ Դմիտրի Ֆյոդորովիչը հարգալից համբուրեց սրբահոր ձեռքը և ասաց սաստիկ հուզված, համարյա ջղայնորեն.

— Վեհանձնորեն ներեցեք, որ այսքան երկար ժամանակ սպասել տվի։ Բայց Սմերդյակովը, հայրիկի ուղարկած

ծառան, իմ համառորեն տված հարցին երկու անգամ պատասխանեց ամենավճռական շեշտով, թե ժամը մեկին է հավաքույթը։ Հիմա հանկարծ իմանում եմ...

— Մի՛ անհանգստանաք,— ընդհատեց սրբահայրը,— վընաս չունի, մի քիչ ուշացաք, փույթ չէ...

— Չափազանց շնորհակալ եմ և ուրիշ բան չէի կարող սպասել ձեր բարությունից։

Այդ ասելով, Դմիտրի Ֆյոդորովիչը կրկին խոնարհվեց, հետո հանկարծ դարձավ իր «հայրիկի» կողմը և նրան էլ նույնպիսի հարգալից ու խորունկ խոնարհություն արեց։ Երևվում էր, որ նա կշռադատել էր կանխօրոք և անկեղծորեն որոշել էր անել այդ խոնարհությունը, պարտականություն համարելով իր հարգանքն ու բարի մտադրություններն արտահայտել այդպիսով։ Ֆյոդոր Պավլովիչը թեև անակնկալի եկավ, բայց չկորցրեց իրեն. իսկույն վեր թռավ աթոռից և, ի պատասխան Դմիտրի Ֆյոդորովիչի խոնարհության, ինքն էլ ճիշտ նույնպիսի խորունկ խոնարհություն արեց որդուն։ Դեմքը հանկարծ լուրջ և ազդեցիկ դարձավ, և սակայն դա լիովին շարամիտ արտահայտություն տվեց նրան։ Հետո Դմիտրի Ֆյոդորովիչը, առանց խոսելու, մի ընդհանուր խոնարհություն արեց բոլոր ներկաներին, իր մեծ ու վճռական քայլերով պատուհանին մոտեցավ, նստեց միակ ազատ աթոռին՝ հայր Պաիսիի մոտ, և ամբողջ մարմնով առաջ հակվելով, իսկույն պատրաստվեց լսելու իր ընդհատած խոսակցության շարունակությունը։

Դմիտրի Ֆյոդորովիչի մուտքը տևեց ոչ ավելի, քան երկու րոպե, և խոսակցությունը շարունակվեց բնականաբար։ Բայց այս անգամ Պյոտր Ալեքսանդրովիչը հարկ չհամարեց պատասխանել հայր Պաիսիի համառ ու զրեթե չղազրգիռ հարցապնդմանը։

— Թույլ տվեք ինձ հրաժարվել այս նյութից,— ասաց նա որոշ նրբակիրթ անփութությամբ։— Մանավանդ որ բարդ ու նուրբ խնդիր է։ Իվան Ֆյոդորովիչն ահա քթի տակ ժպտում է մեզ նայելով։ Երևի այս առիթով էլ հետաքրքրական մի բան ունի ասելիք։ Նրա՛ն հարցրեք։

— Առանձնապես ոչինչ, բացի մի փոքրիկ դիտողությունից,— իսկույն պատասխանեց Իվան Ֆյոդորովիչը։— Ընդհանրապես եվրոպական լիբերալիզմը և նույնիսկ մեր ռուս

լիբերալ դիլետանտները հաճախ և արդեն վաղուց խառնում են սոցիալիզմի վերջնական արդյունքները քրիստոնեության վերջնական նպատակների հետ։ Այս արտառոց հետևությունը բնորոշ մի գիծ է անշուշտ։ Բայց պարզվում է, որ սոցիալիզմը քրիստոնեության հետ խառնում են ոչ միայն լիբերալներն ու դիլետանտները, այլև նրանց հետ, շատ դեպքերում, նաև ոստիկանները, այսինքն արտասահմանի ոստիկաններն իհարկե։ Ձեր փարիզյան անեկդոտը բավական բնորոշ բան է, Պյոտր Ալեքսանդրովիչ։

— Նորից խնդրում եմ՝ թույլ տվեք առհասարակ հրաժարվել այս նյութից, —կրկնեց Պյոտր Ալեքսանդրովիչը,— իսկ դրա փոխարեն, պարոնայք, ես ձեզ մի ուրիշ անեկդոտ կպատմեմ հենց Իվան Ֆյոդորովիչի մասին, չափազանց հետաքրքրական ու բնորոշ մի անեկդոտ։ Ընդամենը հինգ օր առաջ, այստեղ, մի հավաքույթում, ուր ներկաների մեծ մասը տիկիններ էին, նա վեճի ժամանակ հանդիսավոր կերպով հայտարարեց, թե ամբողջ աշխարհում բացարձակապես չկա մի բան, որ մարդկանց ստիպի սիրել իրենց նմաններին։ Իր ասելով՝ բոլորովին գոյություն չունի բնության այնպիսի մի օրենք, ըստ որի մարդը պետք է սիրի մարդկությանը, և եթե մինչև այժմ սերը կա և եղել է աշխարհում՝ ոչ թե բնական օրենքի շնորհիվ է, այլ պարզապես՝ որովհետև մարդիկ հավատացել են իրենց անմահությանը։ Ընդ որում Իվան Ֆյոդորովիչը փակագծերի մեջ ավելացրեց, թե հենց այդ հավատքի մեջ է պարփակված ամբողջ բնական օրենքը, ուստի եթե ոչնչացնենք անմահության հավատքը մարդկության մեջ, իսկույն կսպառվի ոչ միայն սերը, այլև ամեն մի կենդանի զորություն, որ ընդունակ է շարունակելու աշխարհի կյանքը։ Ավելին, այն ժամանակ ոչ մի բան անբարոյական չի լինի այլևս, ամեն ինչ թույլատրելի կլինի, նույնիսկ մարդակերությունը։ Բայց այդ էլ բավական չէ, նա վերջում պնդեց, թե ամեն մի անհատ մարդու համար, դիցուք մենք լինենք հիմա այդ մարդը, օրինակ, մի մարդու, որ ոչ աստծուն է հավատում, ոչ էլ իր անմահությանը, բնության բարոյական օրենքը պետք է անմիջապես վերածվի նախկին կրոնական օրենքի լրիվ հակադրությանը, և նույնիսկ չարագործության հասնող եսասիրությունը ոչ միայն պետք է թույլատրվի մարդուն, այլև պետք է համարվի անհրաժեշտ, ամենից ավելի բանա-

կան և համարյա թե աղնվագույն ելքը նրա դրության մեջ։ Այսպիսի պարադոքսից, պարոնայք, կարող եք եզրակացնել և բոլոր մյուս տեսությունները, որ բարեհաճում է հայտնել և գուցե դեռ մտադիր է հայտնելու մեր սիրելի Իվան Ֆյոդորովիչը՝ մեր տարօրինակ ու պարադոքսալիստ բարեկամը։

— Ներեցեք,— անսպասելիորեն գոռաց Դմիտրի Ֆյոդորովիչը,— ճի՞շտ եմ լսել արդյոք. «Չարագործությունը ոչ միայն պետք է թույլատրվի, այլև նույնիսկ որևէ անաստված մարդու համար պետք է նկատվի ամենից անհրաժեշտ և ամենախելացի ելքը նրա վիճակից»։ Այդպե՞ս է, թե ոչ։

— Ճիշտ այդպես,— ասաց հայր Պահսին։

— Միտս կպահեմ։

Այդ ասելով, Դմիտրի Ֆյոդորովիչը լռեց այնպես անսպասելիորեն, ինչպես խառնվել էր խոսակցությանը։ Բոլորը նրան նայեցին հետաքրքրությամբ։

— Միթե իրո՞ք դուք այդ համոզմունքն ունեք այն հեռանքների մասին, որոնց կենթարկվեն մարդիկ, եթե կորցնեն հավատքն իրենց հոգու անմահության նկատմամբ,— հարցրեց հանկարծ սրբահայրն Իվան Ֆյոդորովիչին։

— Այո, պնդել եմ այդ տեսակետը։ Չկա առաքինություն, եթե չկա անմահություն։

— Երանելի՜ եք, եթե այդպես եք հավատում, և կամ շա՜տ եք ապերջանիկ։

— Ինչո՞ւ ապերջանիկ եմ,— ժպտաց Իվան Ֆյոդորովիչը։

— Որովհետև, ամենայն հավանականությամբ, ինքներդ չեք հավատում ո՛չ ձեր հոգու անմահությանը, ոչ իսկ եկեղեցվո ու եկեղեցական հարցի մասին ձեր գրածին։

— Գուցե իրավացի՜ եք... Բայց և, համենայն դեպս, ամբողջովին կատակ չէր իմ ասածը...— հանկարծ տարօրինակորեն խոստովանեց Իվան Ֆյոդորովիչը, թեև իսկույն կարմրեց։

— Ճշմարիտ է, որ ամբողջովին կատակ չէր ձեր ասածը։ Այդ գաղափարը դեռ իր լուծումը չի ստացել ձեր սրտում և տանջում է ձեզ։ Բայց և տառապյալը սիրում է երբեմն զվարճանալ իր հուսահատությամբ, կարծես թե նույնպես հուսահատությունից մղված։ Դուք ևս հուսահատությունից մղված զվարճանում եք առայժմ՝ թե՛ ամսագրային հոդվածներով, թե՛ աշխարհիկ վեճերով, և ինքներդ չեք հավատում ձեր փաստարկություններին ու սրտի ցավով ծիծաղում եք դրանց վրա ձեր մտքում... Այդ հարցն իր լուծումը չի ստացել ձեր հոգում, և ա՛յս է ձեր մեծ վիշտը, որովհետև հարկադրաբար լուծում է պահանջում...

— Իսկ կարո՞ղ է այդ հարցը լուծում ստանալ իմ հոգում։ Կարո՞ղ է դրական լուծում ստանալ,— շարունակում էր տարօրինակորեն հարցնել Իվան Ֆյոդորովիչը, դեռ նույն անբացատրելի ժպիտով նայելով սրբահորը։

— Եթե չի կարող դրական լուծում ստանալ, բացասական լուծում ևս չի ստանա երբեք, ինքներդ գիտեք ձեր սրտի այդ հատկությունը։ Եվ այդ է, որ տանջում է ձեր սիրտը։ Բայց շնորհակալ եղեք արարիչին, որ բարձր սիրտ է պարգևել ձեզ՝ այդպիսի տառապանքի ընդունակ սիրտ, «զվերինն խորհեցարուք, մեր առաքինութիւն յերկինս է»։ Տա աստված, որ դեռ երկրային կյանքում ձեր սիրտը լուծում գտնի, և աստված օրհնի՜ ձեր ուղին։

Սրբահայրը բարձրացրեց ձեռքը և ուզում էր նստած տեղից խաչակնքել Իվան Ֆյոդորովիչին։ Բայց Իվանը հանկարծ վերկացավ աթոռից, մոտեցավ նրան, ստացավ օրհնությունը և, համբուրելով նրա ձեռքը, լռելյայն վերադարձավ իր տեղը։ Հաստատակամ և լուրջ արտահայտություն կար դեմքին։ Այդ արարքը, ինչպես և սրբահոր հետ ամբողջ նախընթաց խոսակցությունը, որ անսպասելի էր Իվան Ֆյոդորովիչից, բոլորին զարմացրեց իր առեղծվածայնությամբ ու նույնիսկ մի տեսակ հանդիսավորությամբ, այնպես որ բոլորն էլ մի բոպե լուռ մնացին, իսկ Ալյոշայի դեմքին համարյա վախ երևաց։ Բայց Միուսովը հանկարծ ուսերը թոթվեց և նույն վայրկյանին Ֆյոդոր Պավլովիչը վեր թռավ իր աթոռից։

— Աստվածաբարո՜ և սրբազնագո՜ւյն սրբահայր,— գոռաց նա, մատով ցույց տալով Իվան Ֆյոդորովիչին։— Սա իմ որդի՜ն է, մարմին ի մարմնե իմո, սիրելագո՜ւյն մարմինն իմ։ Սա իմ, այսպես ասած, ամենահարգալից Կարլ Մորոն է, իսկ հենց նոր ներս մտած այս որդին, Դմիտրի Ֆյոդորովիչը, որի դեմ արդար դատաստան եմ հայցում ձեզնից, այս մեկն արդեն ամենաանհարգալից Ֆրանց Մորոն է՝ երկուսն էլ Շիլլերի «Ավազակներից», իսկ ես, ես էլ ուրեմն այդ դեպքում

Regierender Graf von Moor[1]-ն եմ։ Դատեցե՛ք ու փրկեցե՛ք։ Ոչ միայն ձեր աղոթքներին, այլև ձեր մարգարեություններին ենք կարոտ։

— Խոսեցեք առանց խելառության, և ձեր ընտանիքի անդամներին վիրավորելով մի՛ սկսեք ձեր ասելիքը,— պատասխանեց սրբահայրը թույլ, ուժասպառ ձայնով։ Երևում էր, որ ավելի ու ավելի էր հոգնում, նկատելիորեն տկարանում էր։

— Անվայե՛լ խեղկատակություն, որ ես նախազգում էի դեռ ճանապարհին, այստեղ գալու ժամանակ,— բացականչեց Դմիտրի Ֆյոդորովիչը վրդովված և նույնպես տեղից վեր թռավ։—Ներեցեք, գերապատիվ հայր,— դարձավ նա սրբահորը,— ես զարգացած մարդ չեմ և նույնիսկ չգիտեմ, թե ինչպես պետք է կոչեմ ձեզ, բայց ձեզ խաբել են, իսկ դուք չափից դուրս բարի եք գտնվել, որ մեզ թույլ եք տվել հավաքվելու ձեզ մոտ։ Իմ հայրը պարզապես խայտառակություն է ուզում, բայց թե ի՞նչ նպատակով՝ այդ արդեն իր հաշիվն է։ Նա միշտ էլ իր հաշիվները ունի։ Բայց կարծում եմ, թե հիմա արդեն գիտե՞մ ինչ նպատակով...

— Նրանք բոլո՞ր էլ ինձ մեղադրում են, բոլո՞ր,— գոռաց Ֆյոդոր Պավլովիչն իր հերթին։— Ահա Պյոտր Ալեքսանդրովիչն էլ մեղադրում է։ Մեղադրե՞լ եք, Պյոտր Ալեքսանդրովիչ, մեղադրե՞լ եք,— դարձավ հանկարծ Միուսովին, թեև վերջինի մտքով էլ չէր անցնում ընդհատել նրան։— Մեղադրանք են տալիս, թե ես երեխայի փողերը թաքցրել եմ բարձի տակ և լրիվ յուրացրել եմ, բայց ասացե՛ք խնդրեմ, դատդատաստան չկա՞, ինչ է։ Այնտեղ հաշիվը կանե՞ն, Դմիտրի Ֆյոդորովիչ, հենց ձեր ստացականները, նամակները և պայմանագրերը նայելով կստուգեն, թե ինչքան փող ունեիք, ինչքանն եք մսխել և ինչքա՞ն է հիմա մնում ձեզ։ Ինչո՞ւ է Պյոտրը Ալեքսանդրովիչը խուսափում իր վճռական խոսքն ասելուց։ Դմիտրի Ֆյոդորովիչն օտար մարդ չէ նրա համար։ Խուսափում է, որովհետև բոլորն էլ ինձ հակառակվել են, այնինչ Դմիտրի Ֆյոդորովիչը վերջին հաշվով դեռ պարտք էլ է մնում ինձ, և ոչ թե մի փոքր բան, այլ մի քանի հազար, որի համար ունեմ բոլոր փաստաթղթերը։ Ամբողջ քաղաքն է թքնում նրա քեֆերի աղմուկից։ Իսկ այնտեղ, ուր ծառայում էր առաջ, պատվավոր օրիորդներին գայթակղեցնելու համար մեկ-երկու հազար ռուբլի էր վատնում ամեն անգամ։ Մենք գիտե՞նք այդ բոլորը, Դմիտրի Ֆյոդորովիչ, ամենաղաղտուկ մանրամասնություններով գիտենք, և կապացուցե՞մ ես... Կհավատա՞ք, սրբազնագույն հայր, նա գլխահան է արել օրիորդներից ազնվագույնին՝ լավ ընտանիքից, հարստության տեր, իր նախկին պետի աղջկան, մի քաջարի գնդապետի, որ մեծ վաստակ ունի և Աննայի սուսերազարդ շքանշանն է կրում վզին։ Աղջկան վարկաբեկեց ամուսնություն առաջարկելով, և հիմա այստեղ է աղջիկը, որը է հիմա նրա հարսնացուն, իսկ ինքը նրա աչքի առաջ դարպասում է այստեղացի մի պչրուհու։ Ու թեև այս պչրուհին մի հարգարժան մարդու հետ ապրել է, այսպես ասած, քաղաքացիական ամուսնությամբ միացած, բայց անկախ բնավորության տեր է, անմատչելի մի բերդ բոլորի համար, հենց օրինավոր ամուսնացած կին լինի ասես, որովհետև առաքինի է, այո՞, սուրբ հայրեր, առաքինի՞ է նա։ Իսկ Դմիտրի Ֆյոդորովիչն ուզում է այդ բերդը բաց անել ոսկյա բանալիով, դրա համար էլ մեծ-մեծ բրդում է իմ դեմ, ուզում է փող պոկել ինձնից, իսկ մինչև հիմա արդեն հազարներ է վատնել այդ պչրուհու վրա։ Այդ պատճառով էլ նա անընդհատ փող է առնում պարտքով, և ի միջի այլոց՝ ումի՞ց է առնում փողը, ի՞նչ եք կարծում։ Ասե՞մ, թե չէ, Միտյա։

— Լռե՛ք,— գոռաց Դմիտրի Ֆյոդորովիչը,— սպասեք մինչև ես գնամ, իսկ իմ ներկայության չհամարձակվե՛ք կեղտոտել մի ազնվագույն օրիորդի անունը... Նախատինք է հենց միայն-այն, որ համարձակվում եք նրա մասին որևէ խոսք ասել։ Ձե՛մ թողնի՞։

Նա շնչասպառ հևում էր։

— Մի՛տյա, Մի՛տյա,— ջղագար ճչաց Ֆյոդոր Պավլովիչը, արցունք բերելով աչքերին,— հայրական օրհնությո՞ւնը հապա, ոչի՞նչ քեզ համար։ Ա՛յ եթե անիծեմ, ի՞նչ կլինի հետո։

— Անամո՛թ ու կեղծավո՛ր,— մոլեգին բղավեց Դմիտրի Ֆյոդորովիչը։

— Հո՞րն է այդպես ասում, հո՞րը։ էլ ուրիշների՞ հետ ինչպես կվարվի։ Պատկերացրե՛ք, պարոնայք, մի աղքատ, բայց պատվավոր մարդ կա այստեղ, պաշտոնաթող մի կա-

[1] Գերիշխան կոմս ֆոն Մոոր (գերմ.)։

պիտան, մարդուն դժբախտություն է պատահել ու հեռացրել են բանակից, բայց ոչ թե հրապարակով, ոչ թե դատի տալով, այլ լրիվ պահպանելով պատիվը, և նա՝ բազմանդամ ընտանիքով է ծանրաբեռնված։ Եվ ահա երեք շաբաթ առաջ մեր Դմիտրի Ֆյոդորովիչը գինետան մեջ բռնում է նրա մորուքից, հենց այդ մորուքից քաշելով հանում է փողոց և ծեծում բոլորի աչքի առաջ, և ամբողջ այն պատճառով, որ իմ մի փոքրիկ գործն եմ վստահել այդ կապիտանին։

— Սո՛ւտ է ծայրից ծայր։ Արտաքուստ ճիշտ է, իսկ խորքում՝ սո՛ւտ, —դողում էր Դմիտրի Ֆյոդորովիչը զայրույթից եռալով։— Հայրի՛կ։ Ես չեմ արդարացնում իմ արածները։ Այո, բոլորի առաջ խոստովանում եմ՝ գազանի պես վարվեցի այդ կապիտանի հետ և զղջում եմ հիմա, ինքս զզվում եմ ինձնից՝ գազանային զայրույթիս համար, բայց ձեր այդ կապիտանը, ձեր այդ վստահյալը գնացել է ա՛յ հենց այն տիկնոջ մոտ, որին դուք պչրուհի եք անվանում, և ձեր անունից առաջարկել է, որ տիկինը վերցնի ձեր ձեռքի տակ եղող իմ պարտամուրհակները և դատի տա ինձ՝ այդ պարտամուրհակների միջոցով ինձ բանտ նստեցնելու համար, եթե ես չափից դուրս նեղեմ ձեզ իմ սեփականության հաշիվը պահանջելով։ Իսկ հիմա դուք ինձ հանդիմանում եք, թե ես թուլություն ունեմ այդ տիկնոջ նկատմամբ, այնինչ ինքնե՞րդ նրան մղել եք, որ հրապուրի ինձ։ Ախր նա ուղղակի իմ երեսին է ասել այդ բանը, ինքն է պատմել ինձ, ծիծաղելո՞վ ձեզ վրա։ Իսկ ինձ ուզում եք բանտ նստեցնել պարզ այն պատճառով, որ խանդում եք, որովհետև ինքներդ սկսել եք սիրահետել այդ կնոջը։ Այո՞, այդ էլ հայտնի է ինձ։ Նա է՛լի ծիծաղում էր, լսո՞ւմ եք, պատմում էր ամեն ինչ և ծիծաղում ձեզ վրա։ Տեսե՛ք ուրեմն, թե ով է այս մարդը, սուրբ անձինք, տեսեք սա հորը, որ իր այլասերվա՞ծ որդուն է հանդիմանում։ Պարոնայք վկաներ, ներեցեք իմ զայրույթը, բայց ես նախազգում էի, որ այս նենգ ծերունին ձեզ բոլորիդ կանչել է այստեղ՝ խայտառակություն սարքելու համար։ Ես եկա ներելո՞ւ մտքով, եթե նա ինձ ձեռք մեկներ, ներելու և ներո՞ւմն խընդրելու։ Բայց քանի որ նա այս բոլորիս անպատվեց ոչ միայն ինձ, այլև մի ազնվագույն օրիորդի, որի նկատմամբ ակնածանք ունեմ և անունն անգամ չեմ համարձակվում իզուր

արտասանել, ապա որոշեցի երևան հանել նրա սարքած ամբողջ խաղը, թեև նա իմ հայրն է...

Դմիտրին չկարողացավ շարունակել։ Աչքերը փայլատակում էին, դժվար էր շնչում։ Սակայն խուցում բոլորն էլ հուզված էին։ Բոլորը, բացի սրբահայրից, խռովահար վերկացան իրենց տեղերից։ Աբեղաները նայում էին խստահայաց, բայց սրբահոր կամքին էին սպասում։ Իսկ նա մնում էր նստած՝ արդեն լրիվ գունատ, բայց ոչ թե հուզմունքից, այլ հիվանդության պատճառած թուլությունից։ Աղերսագին մի ժպիտ էր լուսավորում նրա շրթունքները. մերթ ընդ մերթ ձեռքն էր բարձրացնում, ասես ուզում էր կանգնեցնել մոլեգնողներին, և անշուշտ բավական կլիներ նրա մեկ շարժումը, որպեսզի վերջ գտներ այդ տեսարանը, բայց ինքն էլ կարծես դեռ մի բան էր սպասում և ուշադիր նայում էր նրանց, կարծես հասկանալ էր ուզում մի բան, որ դեռ պարզ չէր իրեն համար։ Ի վերջո Միուսովը կատարելապես նվաստացած ու անարգված զգաց իրեն։

— Մենք բոլորս էլ մեղավոր ենք այս խայտառակության համար, —ասաց նա տաքացած,— բայց այնուամենայնիվ ես չէի նախազգում այս բոլորը, երբ գալիս էի այստեղ, թեև գիտեի, թե ո՛ւմ հետ է իմ գործը... Պետք է իսկույն վերջ տալ սրան։ Ձերդ գերաշնորհություն, հավատացեք, որ ես ստույգ չգիտեի այստեղ ի հայտ եկած բոլոր մանրամասնությունները, չէի ուզում դրանց հավատալ և միայն հիմա եմ իմանում առաջին անգամ... Հայրը խանդում է որդուն՝ գեշ վարքի տեր մի կնոջ համար, և ինքն այդ նույն արարածի հետ խոսք մեկ է անում, որ բանտ նստեցնի իր որդուն... Եվ ինձ ստիպեցին ահա այսպիսի՞ մեկի հետ ներկայանալ այստեղ... Նաբվել եմ ես, հայտարարում եմ բոլորին, որ խաբվել եմ ոչ պակաս, քան ուրիշ որևէ մեկը...

— Դմի՛տրի Ֆյոդորովիչ,— բղավեց հանկարծ Ֆյոդոր Պավլովիչն անբնական ձայնով,— եթե դուք իմ որդին չլինեիք, այս րոպեիս մենամարտի կկանչեի ձեզ... ատրճանակներով, երեք քայլի վրա... թաշկինակի միջով, թաշկինակի միջո՞վ,— վերջացրեց նա, երկու ոտքն էլ զարնելով հատակին։

Փորձված ստախոսները, որոնք դերասանություն են արել իրենց ամբողջ կյանքում, ունենում են պահեր, երբ այնպես

են խաղում իրենց դերը, որ արդեն իսկապես դողում ու լաց են լինում հուզմունքից, թեև հենց նույն վայրկյանին (կամ մի ակնթարթ հետո) կարող են շշնջալ իրենք իրենց. «Սատան ես ախր, պառա՛վ անամոթ, ախր հիմա էլ դերասանություն ես անում, չնայած քո ամբողջ «սրբազան» ցասմանն ու զայրույթի «սրբազան» պահին»։

Դմիտրի Ֆյոդորովիչը սոսկալի խոժոռվեց և անասելի արհամարհանքով նայեց հորը։

— Կարծում էի... կարծում էի,— մի տեսակ մեղմ ու զուսպ ասաց նա, —որ հայրենիք կվերադառնամ իմ հոգեհատորի՝ իմ հարսնացուի հետ, որպեսզի գուրգուրանքով պատեմ հորս ծերությունը, բայց տեսնում եմ, որ գործ ունեմ պարզապես այլասերված մի հեշտամոլի և ամենաստոր մի խեղկատակի հետ։

— Մենամա՛րտ,— բղավեց նորից բիձուկը շնչասպառ, ամեն մի բառի հետ թուքը շաղ տալով։— Իսկ դուք, Պյոտր Ալեքսանդրովիչ Միուսով, իմացեք, տիա՛ր, գուցե ձեր ամբողջ ցեղում չկա և չի եղել ավելի բարձր և ավելի աղնիվ — լսո՞ւմ եք, ավելի աղնի՛վ — մի կին, քան այդ «արարածը», ինչպես դուք հիմա համարձակվեցիք անվանել նրան։ Իսկ դուք, Դմիտրի Ֆյոդորովիչ, հենց այդ «արարածի» հետ փոխեցիք ձեր հարսնացուին, ուրեմն ինքներդ վճռեցիք, որ ձեր հարսնացուն էլ նրա եղունգը չարժի։ Ահա՛ թե ինչպիսի կին է այդ «արարածը»։

— Ամո՞թ է,— թռավ հանկարծ հայր Իոսիֆի բերանից։

— Ամո՞թ է ու խայտառակությո՛ւն,— գոռաց մինչ այդ լուռ մնացած Կալգանովն իր պատանեկան ձայնով, որ դողում էր հուզմունքից, և ամբողջովին կարմրեց։

— Ինչո՛ւ է ապրում այսպիսի մարդը,— խուլ մռնչաց Դմիտրի Ֆյոդորովիչն արդեն կատաղության հասած և ուսերն այնքան վեր բարձրացրեց, որ համարյա կուզ դարձավ,— չէ՞, ասեք ինձ, կարելի՞ է թույլ տալ, որ նա դեռ շարունակի պղծել այս հողն իր ոտքերի տակ, —նայեց նա բոլորին, մատով ցույց տալով ծերունուն։ Խոսում էր դանդաղ ու հատիկ-հատիկ։

— Լսո՞ւմ եք, լսո՞ւմ եք հայրասպանին, վանականնե՛ր,— հարձակվեց Ֆյոդոր Պավլովիչը հայր Իոսիֆի վրա։— Ահա՛ ձեր «ամոթ է»-ի պատասխանը։ Ի՞նչն է ամոթ։ Այդ «արա-

բածը», այդ «գեշ վարքի տեր կինը» գուցե ձեզնի՞ց ավելի սուրբ է, պարո՛ն աբեղաներ, ճգնավո՞ր աբեղաներ։ Գուցե նա անկում է ունեցել իր պատանությանը, միջավայրը կործանել է նրան, բայց նա «շատ է սիրել», և Քրիստոսն անգամ ներել է այն կնոջը, որ շատ է սիրել...

— Քրիստոս այդպիսի սիրո համար չէ, որ ներել է,— անհամբեր վրա բերեց հեզաբարո հայր Իոսիֆը։

— Ո՞չ, ա՛յսպիսի սիրո համար, հենց այս սիրո, վանականներ, ա՛յս սիրո համար։ Դուք այստեղ կաղամբ ուտելով փրկում եք ձեր հոգիները և կարծում եք, թե արդարներ եք։ Խարակաձուկ եք ուտում, օրը մի հատիկ խարակաձուկ, և կարծում եք, թե խարակաձկով աստծո՞ւն եք կաշառում։

— Անտանելի է, անտանելի՛,— լսվեց խուցում բոլոր կողմերից։

Բայց այլանդակության հասած այդ տեսարանը վերջ գտավ շատ անսպասելի ձևով։ Հանկարծ տեղից վերկացավ սրբահայրը։ Ալյոշան թեև համարյա կորցրել էր իրեն՝ երկյուղ կրելով և՛ սրբահոր, և՛ բոլոր մյուսների համար, բայց հասցրեց թևից բռնել ու օգնել նրան։ Սրբահայրը քայլերն ուղղեց դեպի Դմիտրի Ֆյոդորովիչը և, ընդհուպ մոտենալով, ծունկի եկավ նրա առաջ։ Ալյոշան մտածեց, թե նա ընկավ ուժասպառության հետևանքով, բայց այդպես չէր։ Ծնկի գալով, սրբահայրը լրիվ խոնարհվեց Դմիտրի Ֆյոդորովիչի ոտքերի առաջ՝ որոշակիորեն ու գիտակցաբար, և նույնիսկ ճակատով դիպավ հատակին։ Ալյոշան այնպես էր ապշել, որ անգամ չհասցրեց օգնել, երբ սրբահայրը ոտքի էր ելնում։ Մի թույլ ժպիտ կար նրա շրթունքներին։

— Ո՞ղջ լերուք։ Ներեցեք ինձ բոլորդ,— ասաց նա, չորս կողմը խոնարհվելով իր հյուրերին։

Դմիտրի Ֆյոդորովիչը մի քանի վայրկյան կանգնեց շշմածի նման. խոնարհություն իր ոտքերի՞ առաջ՝ ի՞նչ է նշանակում։ Հետո հանկարծ բացականչեց — «օ՞, աստվա՞ծ իմ», ձեռքերով ծածկեց դեմքը և սենյակից դուրս նետվեց։ Նրա ետևից խմբովին դուրս թափվեցին նաև բոլոր հյուրերը, շփոթմունքից նույնիսկ մոռանալով հրաժեշտ տալ ու խոնարհվել տանտիրոջը։ Միայն աբեղաները կրկին մոտեցան նրան օրհնություն ստանալու։

— Այսինքն ինչո՞ւ նրա ոտքերն ընկավ, խորհրդանի՞շ է

մի տեսակ, թե ինչ է,— փորձեց նորից խոսակցություն բանալ Ֆյոդոր Պավլովիչը, որ չգիտես ինչու խաղաղվել էր հանկարծ, թեև չհամարձակվեց անձամբ որևէ մեկին դիմել։ Այդ բոպեին նրանք բոլորն էլ դուրս էին գալիս մենաստանի պարսպից։

— Ես չեմ կարող խելագարանոցի և խելագարների համար պատասխան տալ,— անմիջապես պատասխանեց Միուսովը չարացած,— բայց կազատեմ ինձ ձեր ընկերությունից, Ֆյոդոր Պավլովիչ, և վստահ եղեք, որ ընդմիշտ կազատեմ։ Ո՞ւր է այդ քիչ առաջվա վանականը...

Բայց «այդ վանականը», այսինքն նա, որ քիչ առաջ հրավիրել էր վանահոր մոտ ճաշելու, սպասել չտվեց։ Իսկույն դիմավորեց հյուրերին, հենց որ նրանք սրբահոր խուցից դուրս գալով իջան անդաստակից, կարծես նրանց էր սպասել շարունակ։

— Բարի եղեք, պատվական հայր, հաղորդելու իմ խորագույն հարգանաց հավաստիքը վանահորը և նորին գերապատվությունից ներումն խնդրելու անձամբ ինձ՝ Միուսովիս համար, որ անակնկալորեն ի հայտ եկած աննախատեսելի հանգամանքների պատճառով ոչ մի կերպ չեմ կարող պատիվն ունենալ իմ մասնակցությունը բերելու նրա սեղանին, հակառակ իմ ամբողջ անկեղծ ցանկությանը,— նյարդայնորեն ասաց Պյոտր Ալեքսանդրովիչը վանականին։

— Իսկ այդ աննախատեսելի՞ հանգամանքը ես եմ ախր, ե՛ս,— իսկույն վրա տվեց Ֆյոդոր Պավլովիչը։— Լսո՞ւմ եք, հայր սուրբ, Պյոտր Ալեքսանդրովիչն ի՞նձ հետ միասին չի ուզում մնալ, թե չէ՝ իսկույն կգնար ճաշի։ Կգնա՞ք, Պյոտր Ալեքսանդրովիչ, բարեհաճեցեք այցելել վանահորը և բարի՛ խորժակ ձեզ։ Իմացեք, որ ե՛ս եմ հրաժարվելու, ոչ թե դուք։ Տուն կգնամ, տուն, տանը կուտեմ, այստեղ ինձ անարժան եմ զգում, Պյոտր Ալեքսանդրովիչ, ամենասիրելի՛ր ազգականս իմ։

— Ձեր ազգականը չեմ և երբեք չեմ եղել, ստո՛ր մարդ։

— Ես հենց դիտմամբ ասացի, որ գժվացնեմ ձեզ, որովհետև միշտ խուսափում եք ազգականությունից, թեև, որքան էլ դեսուդեն շուռ գաք, է՛լի իմ ազգականն եք, տոնացույցով կապացուցեմ։ Եթե ուզում ես, Իվան Ֆյոդորովիչ, դու էլ մնա, ես ձիերը ժամանակին կուղարկեմ քեզ համար։ Իսկ ձեզ, Պյոտր Ալեքսանդրովիչ, նույնիսկ քաղաքավարությունն է պար-

տադրում հիմա ներկայանալ վանահորը, պետք է ներողություն խնդրել այն անկարգության համար, որ ձեզ հետ միասին արեցինք այնտեղ...

— Բայց ճի՞շտ է, որ տուն եք գնում հիմա։ Ձե՞ք ստում։

— Պյո՛տր Ալեքսանդրովիչ, ինչպե՞ս կարող եմ հանդգնել այս բոլոր պատահածներից հետո։ Չկարողացա ինձ զսպել ու տարվեցի, պարոնայք, ներեցեք ինձ։ Եվ բացի այդ՝ տակնուվրա եմ եղել։ Ամաչում եմ ուղղակի։ Պարոնայք, մարդ կա, որ Ալեքսանդր Մակեդոնացու սիրտն ունի, մարդ էլ կա, որ Ֆիդելկայի, այսինքն շնիկի սիրտ ունի։ Իմ սիրտը Ֆիդելկայի սիրտ է։ Վախ է ընկել փորս։ Ո՞նց թե, այսպիսի գժություններ անելուց հետո մեկ էլ ճաշի՞ գնամ, վանքի սոուսնե՞րը լափեմ։ Ամոթ է, չեմ կարող, ներեցե՛ք։

«Սատանա՛ն գիտե, մեկ էլ տեսար՝ խաբեց»,— անվստահ կանգ առավ Միուսովը և վարանոտ հայացքով նայեց հեռացող խեղկատակի ետևից։ Իսկ նա շուռ եկավ և նկատելով, որ Պյոտր Ալեքսանդրովիչն իր ետևից է նայում, օդային համբույր ուղարկեց նրան։

— Իսկ դուք գալի՞ս եք վանահոր մոտ,— կցկտուր հարցրեց Միուսովը Իվան Ֆյոդորովիչին։

— Ինչո՞ւ չէ։ Մանավանդ որ դեռ երեկ հատուկ հրավեր եմ ստացել վանահորից։

— Դժբախտաբար ես իրոք պարտավորված եմ զգում գնալու այդ անիծյալ ճաշին,— միշտ նույն դառնագին նյարդայնությամբ շարունակեց Միուսովը, նույնիսկ ուշադրություն չդարձնելով, որ վանականը լսում է։— Գոնե այնտեղ պետք՞է ներողություն խնդրել մեր պատճառած տհաճության համար և բացատրել, թե մենք չէինք... Ի՞նչ եք կարծում։

— Այո, պետք է բացատրել, թե մենք չէինք։ Մանավանդ որ հայրիկն այնտեղ չի լինելու,— նկատեց Իվան Ֆյոդորովիչը։

— Ա՜յդ էր պակաս, որ ձեր հայրիկն էլ լիներ։ Անիծվի՛ այս ճաշը։

Եվ սակայն բոլորն էլ գնում էին։ Վանականը լուռ լսում էր։ Պուրակով անցնելիս նա միայն մեկ անգամ նկատել տրվեց, որ վանահայրն արդեն վաղուց սպասում է և իրենք կես

ժամից ավելի ուշացել են։ Չպատասխանեցին նրան։ Միուսովն ատելությամբ նայեց Իվան Ֆյոդորովիչին։

«Ահա խնդրեմ, այնպես է ճաշի գնում, ասես ոչինչ չի պատահել,— մտածեց նա։— Աներեսություն և կարամազովյա՛ն խիղճ»։

VII

ՊԱՏԵՀԱՊԱՇՏ ԾԵՐԱՐԱՆԱԿԱՆԸ

Ալյոշան իր սրբահորը հասցրեց ննջասենյակ ու նստեցրեց մահճակալին։ Շատ փոքրիկ էր սենյակը՝ անհրաժեշտ իրերով կահավորված. մահճակալը նեղլիկ էր ու երկաթե, վրան միայն թաղիք կար ներքնակի փոխարեն։ Անկյունը, սրբապատկերների մոտ, կանգնած էր գրակալը, որի վրա խաչ ու ավետարան էր դրված։ Սրբահայրն ուժասպառ ընկավ մահճակալին. աչքերը փայլում էին և դժվար էր շնչում։ Նստելուց հետո նա սևեռուն նայեց Ալյոշային, ասես մի բան կշռադատելով։

— Գնա, սիրելիդ իմ, գնա, Պորֆիրին բավական է ինձ, իսկ դու շտապիր։ Դու հարկավոր ես այնտեղ, գնա վանահոր մոտ, սպասարկիր ճաշին։

— Արտոնեցեք այստեղ մնալ,— ասաց Ալյոշան աղերսող ձայնով։

— Դու այնտեղ ավելի ես հարկավոր։ Խաղաղություն չկա այնտեղ։ Կսպասարկես ու պետք կգաս։ Եթե շար ոգիները գլուխ բարձրացնեն, աղոթք կարդա։ Եվ գիտցիր, որդյակ իմ (սրբահայրը սիրում էր այսպես կոչել նրան), ապագային ես այս չէ քո տեղը։ Հիշիր այս խոսքս, պատանյա՛կ։ Երբ աստված ինձ արժանի համարի հանգչելու ի տեր, իսկույն հեռացիր վանքից։ Ընդմիշտ հեռացիր։

Ալյոշան ցնցվեց։

— Ի՞նչ է։ Առայժմ այս չէ քո տեղը։ Օրհնում եմ քեզ վասն այն մեծ նվիրաբերության, որ կատարելու ես աշխարհում։ Շատ պիտի թափառես տակավին։ Ու նաև կին պիտի առնես, այո՛։ Ամեն փորձություն պիտի կրես, մինչև վերջին գաս։ Անելիք շատ բան պիտի ունենաս։ Բայց տարակույս չունեմ քո նկատմամբ, որով և առաքում եմ քեզ։ Քրիստոս քեզ

հետ է։ Պահպանիր նրան և նա կպահպանի քեզ։ Մեծ վիշտ ես տեսնելու և այդ վշտի մեջ լինելու ես երջանիկ։ Ահա իմ պատգամը քեզ. վշտի մեջ փնտրիր երջանկություն։ Աշխատիր, անխոնջ աշխատիր։ Հիշիր իմ խոսքն այժմու, քանզի դեռ զրուցելու եմ քեզ հետ թեև, բայց ոչ միայն իմ օրերը, այլև իմ ժամերն են հաշվված։

Ալյոշայի դեմքին նորից ներքին ուժեղ մի շարժում երևվաց։ Շրթունքների ծայրերը դողացին։

— Ի՞նչ է նորից,— մեղմ ժպտաց սրբահայրը։— Թող աշխարհականներն արցունքներով հուզարկավորեն իրենց հանգուցյալներին, իսկ մենք այստեղ ուրախանում ենք հանդերձյալ աշխարհ մեկնող հոր համար։ Ուրախանում ենք և աղոթում վասն նորա։ Առանձին թող ինձ։ Պետք է աղոթեմ։ Գնա և աճապարիր։ Եղբայրներիդ կողքին եղիր։ Եվ ոչ թե միայն մեկի, այլ երկուսի կողքին։

Սրբահայրը ձեռքը բարձրացրեց օրհնելու համար։ Անկարելի էր առարկել, թեև Ալյոշան մեծ ցանկություն ուներ մնալու։ Ուզում էր նաև հարցնել և նույնիսկ լեզվի ծայրին էր հարցը՝ «Ի՞նչ էր նշանակում այդ երկրպագությունը Դմիտրիի առաջ», բայց չհամարձակվեց հարցնել։ Գիտեր, որ սրբահայրն ինքը կբացատրեր առանց հարցի սպասելու, եթե կարելի լիներ։ Ուրեմն այդպես չէր թելադրում նրա կամքը։ Բայց այդ երկրպագությունը սոսկալի հուզել էր Ալյոշային։ Նա կուրորեն հավատում էր, որ խորհրդավոր իմաստ կա դրա մեջ։ Խորհրդավոր ու գուցե նաև սարսափելի։ Երբ մենաստանի պարսպից դուրս եկավ, որպեսզի ժամանակին հասնի վանք և սկզբից ներկա լինի վանահոր ճաշին (անշուշտ միայն սպասարկելու համար), հանկարծ ցավագին սեղմվեց նրա սիրտը, և նա մեկեն կանգ առավ. իր ականջին կարծես նորից հնչեցին սրբահոր խոսքերը, որոնք նրա այնքան մոտալուտ վախճանն էին կանխագուշակում։ Ինչ որ կանխագուշակում էր սրբահայրը, և մանավանդ այդպիսի ճշգրտությամբ, պետք է տեղի ունենար անկասկած։ Ալյոշան ամենայն սրբությամբ հավատում էր դրան։ Բայց ինչպե՞ս ինքը կարող է մնալ առանց սրբահոր, ինչպե՞ս կարող է չտեսնել նրան, չլսել նրան։ Եվ ո՞ւր է գնալու հետո։ Պատվիրում է լաց չլինել ու հեռանալ վանքից, աստվա՞ծ իմ։ Վազուց Ալյոշան այսպիսի տխրություն չէր զգացել։ Ավելի արագ քայլեց պուրակում, որ մենաստանը բա-

ժանում էր վանքից։ Չկարողանալով դիմանալ իր մտքերի այնքան ծանր ճնշմանը, սկսեց նայել դարավոր սոճիներին, որոնք երկու կողմից եզերում էին արահետը։ Երկար չէր ճանապարհը՝ հինգ հարյուր քայլ, ոչ ավելի։ Այդ ժամին ոչ ոքի չէր կարող հանդիպել այդտեղ, բայց հանկարծ, արահետի առաջին դարձի վրա, նկատեց Ռակիտինին։ Նա ինչ-որ մեկի էր սպասում։

— Չլինի՞ ինձ ես սպասում,— հարցրեց Ալյոշան, հասնելով նրան։

— Հենց քեզ,— քմծիծաղ տվեց Ռակիտինը։— Վազ ես տալիս վանահոր մոտ։ Գիտեմ, սեղան է բացել։ Այսպիսի ճոխ սեղան չի եղել այն օրից, երբ եպիսկոպոսին ու գեներալ Պախատովին ընդունեց, հիշո՞ւմ ես։ Ես չեմ լինելու այնտեղ, իսկ դու գնա, սոուսները մատուցիր։ Դու ինձ մի բան ասա, Ալեքսեյ, ի՞նչ է նշանակում այդ ցնորքը։ Այս էի ուզում հարցնել։

— Ի՞նչ ցնորք։

— Ա՛յ այդ երկրպագությունը քո եղբոր՝ Դմիտրի Ֆյոդորովիչի առաջ։ Եվ դեռ ինչպե՞ս էլ ճակատը գետնին խփեց։

— Հայր Զոսիմայի՞ մասին ես ասում։

— Այո, հայր Զոսիմայի մասին։

— Ճակատը խփե՞ց։

— Հա՞, անհարգալից արտահայտություն ունեցա։ Դե լավ, թող անհարգալից լինի։ Է՞ ուրեմն, ի՞նչ է նշանակում։

— Չգիտեմ ինչ է նշանակում, Միշա։

— Այդպես էլ գիտեի, որ չի բացատրի քեզ։ Այստեղ ոչ մի խորիմաստ բան չկա անշուշտ, լուրջ թվացող սովորական անմտություններից մեկն է։ Բայց դիտմամբ արեց այդ աշքակապությունը։ Ա՛յ հիմա քաղաքի բոլոր մոլեռանդները կսկսեն խոսել և նահանգով մեկ կտարածեն, այսինքն թե՝ ի՞նչ է նշանակում այդ տեսիլքը։ Ինձ հարցնես, ծերուկն իրոք սուր քիթ ունի՝ ոճրագործության հոտն առավ։ Վատ հոտ է փչում ձեր ընտանիքից։

— Ի՞նչ ոճրագործության։

Երևում էր, որ Ռակիտինն ասելիք ունի և ուզում է արտահայտվել։

— Ձեր ընտանիքում է լինելու այդ բանը, այսինքն այդ ոճրագործությունը։ Քո եղբայրների և քո հարուստ հայրիկի միջև։ Ա՛յ դրա համար էլ հայր Զոսիման ճակատը խփեց՝

գուցե թե մի բան պատահի հետագայում։ Եթե իրոք մի բան պատահեց, կասեն՝ «Ա՜խ, չէ՞ որ սուրբ հայրը կանխագուշակել էր, մարգարեացել էր»,— թեև ի՞նչ մի մարգարեություն է ճակատը գետնին խփելը։ Չէ՞, դա խորհրդանիշ էր, կասեն, այլաբանություն էր, և էլ ինչե՞ր ասես դուրս չեն տա։ Կփառաբանեն, կհիշեն՝ իբր թե ոճրագործությունը գուշակեց, ոճրագործին նշեց։ Միշտ էլ այդպես են ցնդած մոլեռանդները. գինետան առաջ երեսներին խաչ կհանեն, բայց տաճարի վրա քար կգցեն։ Քո սրբահայրն էլ նույն կտորից է. փայտով կտա արդարին, կերկրպագի մարդասպանին։

— Ի՞նչ ոճրագործություն։ Ի՞նչ մարդասպան։ Ի՞նչ ես ասում,— կանգ առավ Ալյոշան քար կտրած, կանգ առավ նաև Ռակիտինը։

— Ինչ մարդասպա՞ն։ Ոնց որ չգիտե՞ս։ Գրազ եմ գալիս, ինքդ արդեն մտածել ես դրա մասին։ Ի դեպ, դա էլ հետաքրքիր է։ Լսիր, Ալյոշա, դու միշտ ճշմարտությունն ես ասում, թեև միշտ էլ երկու աթոռի արանքում ես նստած։ Ասա տեսնեմ, մտածե՞լ ես դրա մասին, թե չես մտածել։ Պատասխանի՛ր։

— Մտածել եմ,— մեղմ պատասխանեց Ալյոշան։

Նույնիսկ Ռակիտինը շվարած մնաց։

— Ի՞նչ ես ասում։ Բայց իսկապե՞ս դու էլ մտածել ես,— գոռաց նա։

— Ես... ես ոչ թե իրոք մտածել եմ,— քթի տակ ասաց Ալյոշան,— այլ երբ հիմա դու այդպես տարօրինակորեն սկսեցիր խոսել, ինձ թվաց, թե ինքս մտածել եմ այդ մասին։

— Տեսնո՞ւմ ես (և ի՞նչ պարզ արտահայտեցիր ասելիքդ), տեսնո՞ւմ ես։ Այսօր նայելով հայրիկիդ ու եղբորդ՝ Միտենկային, ոճրագործության մասին մտածեցիր, չէ՞։ Ուրեմն ես չեմ սխալվել, չէ՞։

— Բայց սպասի՛ր, սպասի՛ր,— տագնապահար ընդհատեց Ալյոշան,— ինչի՞ց ելնելով է, որ հատկապես դո՛ւ ես տեսնում այդ բոլորը... Ինչո՞ւ է քեզ այդքան հետաքրքրում խնդիրը։ Կարևորն այս է նախ և առաջ։

— Երկու տարբեր, բայց բնական հարց։ Զատ-զատ պատասխանեմ ամեն մի հարցին։ Ինչի՞ց ելնելով եմ տեսնում։ Ոչինչ էլ չէի տեսնի, եթե այսօր հանկարծ չհասկանայի Դմիտրի Ֆյոդորովիչին՝ քո եղբորը, եթե չհասկանայի նրա ամբողջ

էությունը, մինչև ուղն ու ծուծը, միանգամից։ Բնավորության մի գիծ նկատեցի և հանկարծ ոտից գլուխ հասկացա նրան։ Այդ չափազանց ազնիվ, բայց տուփոտ մարդիկ մի սահման ունեն, որը չլինի՞ թե անցնես։ Թե չէ՞... թե չէ նա իր հորն էլ դանակով կխփի։ Իսկ ձեր հայրը հարբեցող և անզուսպ մի անառակ է, երբեք ու ոչ մի բանում իր չափը չի իմացել։ Երկուսն էլ սանձերը բաց կթողնեն և թը՛մփ, երկուսն էլ ցեխը կընկնեն...

— Ոչ, Միշա, ոչ, եթե այդ է քո ասածը, դու ինձ նորից սիրտ տվիր։ Մինչև այդտեղ չի հասնի։

— Իսկ ինչո՞ւ ես ամբողջ մարմնով դողում։ Գիտե՞ս ինչ։ Ասենք ազնիվ մարդ է քո Միտենկան (հիմար է, բայց ազնիվ), բայց նա հեշտամոլ է։ Ահա նրա բնորոշումը և նրա ամբողջ ներքին էությունը։ Հայրն է իր ստոր հեշտասիրությունը փոխանցել նրան։ Ես միայն քեզ վրա եմ զարմանում, Ալյոշա, ինչպե՞ս է, որ դու կույս ես մնացել։ Ախր դո՛ւ էլ Կարամազով ես։ Ախր ձեր ընտանիքում հեշտասիրությունը հիվանդագին բորբոքման է հասել։ Ա՛յ հիմա այդ երեք հեշտամոլները իրար վրա աչք են տնկել... դանակը մեջքին պահած։ Երեքն էլ կոտոշները խփել են իրար, և դու էլ գուցե չորրորդը լինես։

— Սխալվում ես այդ կնոջ նկատմամբ։ Դմիտրին նրան... արհամարհում է,— մի տեսակ դողալով ասաց Ալյոշան։

— Գրուշենկայի՞ն։ Ոչ, ախպերս, չի արհամարհում։ Դե որ իր հարսնացուին բացեիբաց նրա հետ փոխեց, ուրեմն չի արհամարհում։ Այստեղ... այստեղ մի բան կա, ախպեր ջան, որ դու հիմա չես հասկանա։ Մարդը որ սիրահարվեց ինչ-որ գեղեցկության, կնոջ մարմնին կամ նույնիսկ կնոջ մարմնի միայն մի մասին (հեշտասերը կարող է այդ բանը հասկանալ), իր սեփական երեխաներին էլ կտա նրա սիրույն, հորն ու մորն էլ կծախի, Ռուսաստանն էլ, հայրենիքն էլ։ Ազնիվ լինելով՝ կգնա ու գողություն կանի, հեզ լինելով՝ մարդ կսպանի, հավատարիմ լինելով՝ կդավաճանի։ Կանացի ոտքերի երգիչ Պուշկինը բանաստեղծությունների մեջ էր գովերգում այդ ոտքերը։ Ուրիշները չեն գովերգում, բայց առանց սարսռալու չեն կարող նայել կանանց ոտքերին։ Եվ հո միայն ոտքե՞րը չեն... Այստեղ արհամարհելը չի օգնի, ախպերս, թեկուզ և նա արհամարհի Գրուշենկային։ Արհամարհում է, բայց պոկ գալ չի կարող։

— Ես հասկանում եմ այդ,— հանկարծ բերանից թոցրեց Ալյոշան։

— Ճի՞շտ։ Դե ուրեմն իսկապես հասկանում ես, քանի որ հենց առաջին խոսքից թոցրիր բերանիցդ, թե հասկանում ես,— չարախնդությամբ ասաց Ռակիտինը։— Դու առանց ուզելու թոցրիր դա, բերանիցդ փախավ։ Այդպիսով ավելի թանկ է դառնում խոստովանությունդ։ Ուրեմն քեզ ծանոթ նյութ է, արդեն մտածել ես դրա մասին, այսինքն այդ հեշտասիրության մասին։ Ա՛յ թե կույսն ես, հա՞։ Սուսիկ-փուսիկ մարդ ես, Ալյոշկա. սուրբ ես, դեմ չեմ, բայց սուսիկ-փուսիկ ես և սատանան գիտե, թե ինչե՞ր ես մտածել, ի՞նչ բաներ ես իմանում արդեն։ Կույս ես, բայց այնպիսի խորքեր ես թափանցել... ես վաղուց եմ քեզ հետևում։ Դու ինքդ էլ Կարամազով ես, ոտից գլուխ Կարամազով։ Ուրեմն ծագումն ու բնական ընտրությունը մի բան նշանակում են վերջապես։ Հոր կողմից հեշտասեր, մոր կողմից կրոնախև։ Ի՞նչ ես դողում։ Ճիշտ է ասածս, չէ՞։ Գիտե՞ս ինչ, Գրուշենկան ինձ խնդրեց՝ «Բեր նրան (այսինքն քեզ), սքեմը պոկեմ վրայից»։ Այդպես ասաց։ Եվ տեսնեիր, թե ինչպե՞ս էր խնդրում՝ բեր, անպայմա՛ն բեր։ Եվ մտածեցի՝ քո ի՞նչն է այդպես նրան հետաքրքրում։ Գիտե՞ս, նա էլ արտակարգ կին է, հա՞։

— Բարևս հաղորդիր նրան, ասա, որ չեմ գա,— ծուռ ժըպտաց Ալյոշան։— Վերջացրու ասելիքդ, Միխայիլ, հետո ես իմ միտքը կհայտնեմ քեզ։

— Էլ ի՞նչ վերջացնեմ, ամեն ինչ պարզ է։ Հին երգ է այդ բոլորը, ախպեր ջան։ Եթե դու էլ հեշտասեր ես քո խորքում, հապա քո եղբայր Իվա՞նը, որ նույն մորից է։ Նա էլ Կարամազով է ախր։ Ձեր ամբողջ կարամազովյան ուղն ու ծուծն էլ հենց այդ է՝ հեշտամոլ եք, գոփող ու խելառ։ Քո Իվանը աթեիստ լինելով, հիմա առայժմ աստվածաբանական հրդվածներ է տպում կատակի համար, ինչ-որ հիմարագույն, միայն իրեն հայտնի հաշիվներից դրդված, և ինքն էլ ընդունում է, որ դա ստորություն է. ահա՛ այդ քո Իվանը, խնդրեմ։ Բացի այդ, իր եղբոր՝ Միտյայի ձեռից հարսնացուին է խլում, և կարծում եմ, որ այդ նպատակին էլ կհասնի։ Այն էլ ինչպե՞ս— հենց Միտենկայի համաձայնությամբ, որովհետև Միտենկան ինքը զիջում է իր հարսնացուին, որպեսզի մի կերպ գլուխն ազատի նրանից և շուտով ընկնի Գրուշենկայի գիրկը։ Եվ

այդ բոլորն անում է՝ այնքան ազնիվ ու անշահախնդիր մարդ լինելով հանդերձ, նկատի ունեցիր։ Ա՛յ հենց սրանք են ամենից աղետալի մարդիկ։ Դեհ, այս բոլորից հետո սատանան միայն կարող է գլուխ հանել ձեզնից. մարդը ինքն է ընդունում իր ստորությունը և ինքն էլ քիթը կոխում է ստորության մեջ։ Բայց դեռ լսի՞ր։ Միտենկայի ճամփին հիմա ձեր բիձուկ հայրն է կանգնած։ Ախր պառավը հանկարծ խելքը թոցրեց Գրուշենկայի համար, հենց նայում է նրան՝ լորձունքներն են վազում։ Այդ կնոջ պատճառով է միայն, որ հիմա խուցում այդպիսի խայտառակ տեսարան սարքեց, պարզապես որովհետև Միուսովը համարձակվեց փուչ արարած կոչել նրան։ Կատվից էլ վատ է սիրահարվել։ Սկզբում այդ կինը ինչ-որ մութ գործերի և գինետների կապակցությամբ ծառայում էր նրան և վարձ ստանում, իսկ բիձուկը հիմա հանկարծ գլխի է ընկել ու տնտղել է, և ահա բորբոքվել է արյունը։ Գրուշենկային կպել է իր առաջարկություններով, և անշուշտ ազնիվ բան չէ առաջարկածը։ Եվ ա՛յ թե կընդհարվեն այդ ճամփի վրա նրանք՝ պապան ու իր սիրելի զավակը։ Իսկ Գրուշենկան ոչ մեկին է երես տալիս, ոչ էլ մյուսին, առայժմ պոչ է խաղացնում ու երկուսին էլ գրգռում է։ Նայում է, թե ո՞ր մեկից կարող է ավելի օգուտ ստանալ։ Պապայից կարելի է շատ փող կորզել, բայց դե հո նա չի ամուսնանա, գուցե և վերջում կծծիությունը բռնի և քսակը փակ պահի։ Այդ դեպքում Միտենկան էլ է արժեք ստանում. փող չունի, բայց հոժար է ամուսնանալու։ Այո՞, հոժար է ամուսնանալու, այսինքն լքելու իր հարսնացուին, անզուգական գեղեցկուհի Կատերինա Իվանովնային, որ ազնվականուհի է ու գնդապետի աղջիկ, և ամուսնանալու Գրուշենկայի հետ, որ մի կոպիտ ու այլասերված մարդու՝ ծեր վաճառական ու քաղաքագլուխ Սամսոնովի սիրուհին է եղել։ Այս բոլորը կարող են իսկապես քրեական ընդհարման հասցնել։ Իսկ քո եղբայր Իվանն էլ հենց դրան է սպասում, նրա հացին յուղ կքսվի դրանով՝ և՛ Կատերինա Իվանովնային ձեռք կգցի, հոգի է տալիս նրա համար, և՛ աղջկա վաթսուն հազարանոց օժիտը կշնթի։ Իվանի նման փոքր ու տկլոր մարդուկի համար, որպես առաջին քայլ, դա շատ գայթակղիչ է։ Եվ մի բան էլ նկատի ունեցիր. ոչ միայն չի վիրավորի Միտենկային, այլ նույնիսկ մինչև մահ պարտական կթողնի նրան։ Ախր ես հաստատ գիտեմ, որ Միտեն-

կան ինքը, դեռ անցյալ շաբաթ, երբ գինետանը հարբել է գնչուհիների հետ, ձայնը գցած գոռացել է, թե արժանի չէ իր Կատենկային, իսկ իր եղբայր Իվանը՝ ա՛յ, նա արժանի է։ Կատերինա Իվանովնան էլ, իհարկե, վերջ ի վերջո չի մերժի Իվան Ֆյոդորովիչի պես հմայիչ մարդուն։ Հիմա էլ ախր տատանվում է այդ երկուսի միջև։ Բայց ինչո՞վ է ձեզ բոլորիդ գրավել այդ Իվանը, ի՞նչ եք բոլորդ էլ պաշտում նրան։ Իսկ նա ծիծաղում է ձեզ վրա, այսինքն թե՝ յուղոտ պատառն ինձ է հասնում և ձեր հաշվին անուշ եմ անում։

— Ինչի՞ց գիտես այդ բոլորը։ Ինչո՞ւ ես այդպես վստահ խոսում,— հարցրեց հանկարծ Ալյոշան կտրուկ ու խոժոռադեմ։

— Իսկ ինչո՞ւ հիմա դու հարցնում ես և նախօրոք վախենում իմ պատասխանից։ Ուրեմն ինքդ էլ համաձայն ես, որ իմ ասածը ճիշտ է։

— Դու չես սիրում Իվանին։ Իվանը չի հրապուրվի փողով։

— Ճի՞շտ։ Իսկ Կատերինա Իվանովնայի գեղեցկությո՞ւնը։ Այստեղ միայն փողը չէ, թեև վաթսուն հազարն էլ հրապուրիչ բան է։

— Իվանը վեր է դրանից։ Իվանին հազարներն էլ չեն հրապուրի։ Իվանի փնտրածը փողը չէ, ոչ էլ հանգստությունը։ Տառապանք է գուցե փնտրում։

— Ա՞յդ ինչ ցնորք է։ Ա՛խ դո՞ւք... ազնվականնե՞րդ։

— Է՜հ, Միշա, նրա հոգին է փոթորկոտ։ Կաշկանդված է միտքը։ Մի մեծ ու չլուծված խնդիր է նրան հուզում։ Նա այն մարդկանցից է, որոնք չեն ցանկանում միլիոններ ունենալ։ այլ ցանկանում են իրենց տանջող խնդիրը լուծել։

— Գրագողություն է, Ալյոշկա։ Քո սրբահոր խոսքն ես կրկնում ուրիշ բառերով։ Ա՛յ թե հանելուկ է տվել ձեզ Իվանը, հա՜,— գոռաց Ռակիտինն ակնհայտ չարամտությամբ։ Նույնիսկ դեմքը փոխվեց, շրթունքները ծռվեցին։— Եվ մի հիմա՞ր էլ հանելուկ է, լուծելու բան չկա մեջը։ Մի քիչ ուղեղդ շարժես՝ կհասկանաս։ Նրա հոդվածը ծիծաղելի է ու անմիտ։ Եվ քիչ առաջ լսեցիր նրա հիմար տեսությունը՝ «Թե չկա հոգու անմահություն, ուրեմն առաքինություն էլ չկա, ուստի ամեն ինչ թույլատրելի է։» (Ի միջի այլոց, հիշո՞ւմ ես քո Միտենկան ոնց գոռաց՝ «Մի՞տս կպահեմ»։) Գայթակղիչ տեսություն է սրիկաների համար... Է՜, հայհոյում եմ, հիմարություն եմ անում... Ոչ թե սրիկաների, այլ ուսումնական պո-

ռոտախոսների համար, որոնք «մտքերի անլուծելի խորություն ունեն»։ Պարծենկոտի մե՛կը, իսկ ասա՞ծն ինչ է. «Մի կողմից չի կարելի չընդունել, իսկ մյուս կողմից չի կարելի չխոստովանել»— ահա՛ եղած-չեղածը։ Նրա տեսությունը վերից վար ստորությո՛ւն է։ Մարդկությունն ինքը իր մեջ ուժ կգտնի, որ ապրի առաքինության համար՝ նույնիսկ չհավատալով հոգու անմահության։ Ազատության, հավասարության, եղբայրության նկատմամբ սիրո՛ մեջ կգտնի այդ ուժը...

Ռակիտինը տաքացել էր ու համարյա չէր կարողանում զսպել իրեն։ Բայց հանկարծ, ասես մի բան հիշելով, կանգ առավ։

— Դե լավ, բավական է,— ավելի ևս ծուռ ժպտաց նա։— Ի՞նչ ես ծիծաղում։ Կարծում ես գռեհիկի մեկն ե՞մ։

— Ոչ, մտքովս էլ չի անցել, որ դու գռեհիկ ես։ Դու խելացի ես, բայց... կներես, հիմարություն էր իմ ծիծաղելը։ Հասկանում եմ, Միշա, մի բան կա՛, որ այդպես տաքանում ես։ Քո եռանդից կռահեցի, որ ինքդ էլ անտարբեր չես Կատերինա Իվանովնայի նկատմամբ։ Վաղուց այդ կասկածն ունեի, սիրելիս։ Եվ ահա թե ինչու չես սիրում իմ եղբորը՝ Իվանին։ Խանդո՞ւմ ես նրան։

— Եվ Կատերինա Իվանովնայի փողերին էլ եմ խանդո՞ւմ։ Դե այդ էլ ասա, էլի՛։

— Ոչ, փողի մասին ոչինչ չեմ ասի, միտք չունեմ քեզ վիրավորելու։

— Հավատում եմ, քանի որ դու ես ասում, բայց է՛լի գրողը տանի ձեզ՝ քո Իվանին էլ հետը։ Ոչ մեկդ չի հասկանում, որ առանց Կատերինա Իվանովնայի էլ կարելի է բոլորովին չսիրել ձեր Իվանին։ Եվ ինչո՞ւ նրան սիրեմ, գրո՛ղը տանի։ Չէ՞ որ ինքն է ինձ իր հայհոյանքին արժանացնում։ Իսկ ե՞ս ինչու իրավունք չունեմ նրան հայհոյելու։

— Երբեք չեմ լսել, որ նա որևէ բան ասած լինի քո մասին՝ լավ կամ վատ։ Բնավ չի խոսում քո մասին։

— Իսկ ես լսել եմ, որ նախանցյալ օրը Կատերինա Իվանովնայի մոտ նա ինձ մի լավ մշակել է, բերանն եկածը դուրս է տվել. ահա թե ինչ աստիճան հետաքրքրվել է ձեր խոնարհ ծառայով։ Էլ դրանից հետո ո՛վ ում է խանդում, ախպեր ջան, չգիտեմ։ Բարեհաճել է կարծիք հայտնել, թե ես, իբր թե, շատ մոտավոր ապագայում եթե չհամաձայնվեմ վարդապետական կարգ ընդունել և չվճռեմ վանական դառնալ, ուրեմն անպայման կգնամ Պետերբուրգ և կհարեմ մի հաստ ամսագրի, անպայման քննադատ կլինեմ, կգրեմ մի տասը տարի և ի վերջո ամսագրի տերն ու տիրականը կդառնամ։ Եվ հետո նորից կհրատարակեմ՝ անպայման լիբերալ և աթեիստական ուղղությամբ, սոցիալիստական երանգով, նույնիսկ սոցիալիզմի փայլ տալով մի փոքր, բայց ականջներս բաց պահելով, այսինքն ըստ էության և՛ մի կողմին, և՛ մյուս կողմին հաասելով և հիմարների աչքին փոշի փչելով։ Իմ կարիերայի վերջում, քո եղբոր ասելով, սոցիալիզմի երանգն ինձ չի խանգարի բաժանորդագրական փողերը ետ գցելու իմ ընթացիկ հաշվին և հարմար առիթով շրջանառության դնելու որևէ մի ջհուդի ղեկավարությամբ, մինչև որ հսկա մի շենք կառուցեմ Պետերբուրգում՝ խմբագրությունն այնտեղ փոխադրելու և մնացած հարկերն էլ վարձով տալու համար։ Նույնիսկ շենքի տեղն է որոշել. նոր քարե կամուրջի մոտ, որն ասում են թե կառուցվելու է Նևայի վրա՝ Լիտեյնայայից դեպի Վիբորգսկայա...

— Է՜հ, Միշա, ճիշտն ասած, հենց այդպես էլ կկատարվի՝ բառ առ բառ,— բացականչեց հանկարծ Ալյոշան, չկարողանալով զսպել իրեն և ուրախ ծիծաղելով։

— Դուք էլ եք սկսում հեգնել, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։

— Ոչ, ոչ, կատակ եմ անում, ներիր։ Իմ մտքինը բոլորովին ուրիշ բան է։ Բայց ասա խնդրեմ, ո՞վ կարող էր քեզ այդպիսի մանրամասնություններ պատմել, ումի՞ց կարող էիր լսել այդ բոլորը։ Դու հո չէիր կարող անձամբ Կատերինա Իվանովնայի մոտ լինել, երբ Իվանը խոսում էր քո մասին։

— Ես այնտեղ չէի, բայց Դմիտրի Ֆյոդորովիչն է եղել, և հենց նրանից լսեցի այդ բոլորն իմ ականջներով. այսինքն, եթե ճիշտն ես ուզում, նա ոչ թե անձամբ ինձ պատմեց, այլ ես թաքուն լսեցի, անշուշտ իմ կամքից անկախ, որովհետև նստած էի Գրուշենկայի ննջասենյակում և չէի կարող դուրս գալ, քանի Դմիտրի Ֆյոդորովիչը մյուս սենյակումն էր։

— Ախ հա՜, մոռացել էի, որ Գրուշենկան քո ազգականն է...

— Ազգակա՞ն։ Գրուշենկա՞ն է ինձ ազգական,— գոռաց հանկարծ Ռակիտինը լրիվ կարմրելով։— Ցնդե՞լ ես, ինչ է։ Խանգարվել է ուղեղդ։

— Ինչո՞ւ։ Քո ազգականը չէ՞ միթե։ Այդպես եմ լսել։

— Որտեղի՞ց կարող ես լսած լինել։ Չէ՞, դուք՝ պարոնայք Կարամազովներդ, ինչ-որ մեծ ու հնադարյան ազնվականների հովեր եք առնում, այնինչ քո հայրը վազ էր տալիս ուրիշների սեղանին խեղկատակություն անելու, և կարեկցելուց է, որ մի կտոր հաց էին դնում առաջը։ Ասենք թե ես տերտերի տղա եմ պարզապես, մի ճիճու եմ ձեզ նման ազնվականների աչքին, բայց մի՛ վիրավորեք ինձ այդպես թեթև սրտով ու անառակորեն։ Ես էլ պատիվ ունեմ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Ես չեմ կարող Գրուշենկայի նման մի պոռնիկի ազգականը լինել, խնդրում եմ հասկանա՞ք այդ։

Ռակիտինը խիստ ջղայնացած էր։

— Ներիր, ի սեր աստծո, մտքովս անգամ չէր անցնում, և հետո՝ ինչպես թե պոռնիկ։ Միթե նա... այդպիսի՞ կին է,— կարմրեց հանկարծ Ալյոշան։— Նորից եմ ասում, ես այնպես եմ լսել, որ նա քո ազգականն է։ Դու հաճախ ես գնում նրա մոտ և ինքդ ես ինձ ասել, թե սիրային կապեր չունես հետը... Երբեք չէի կարծում, թե դու էլ այդպես արհամարհում ես նրան։ Ինչ է, իսկապե՞ս արժանի է այդ վերաբերմունքին։

— Եթե այցելում եմ նրան, կարող եմ իմ պատճառներն ունենալ, և դա քո բանը չէ։ Իսկ գալով ազգականության, ավելի շուտ քո եղբայրը կամ էլ նույնիսկ հենց հայրիկդ նրան որպես ազգական կփաթաթեն քո՛ վզին, ոչ թե իմ։ Ահա արդեն հասանք։ Դե՛հ, ավելի լավ է գնաս խոհանոց։ Օհո՛, սա՞ ի՞նչ բան է, ի՞նչ է կատարվում այստեղ։ Չլինի՞ ուշացանք։ Բայց ինչպե՞ս կարող էին այսքան շուտ վերջացնել ճաշը։ Չլինի՞ այստեղ էլ Կարամազովները գժություն են արել։ Անկասկած։ Ահա, տե՛ս, հայրիկդ, ետևից էլ Իվան Ֆյոդորովիչը։ Վանահոր մոտից դուրս պրծան։ Տե՛ս, հայր Իսիդորը սանդուղքի վրա մի բան է գոռում նրանց ետևից։ Հայրիկդ էլ գոռում է ու ձեռքերը թափ տալիս, երևի հայհոյում է։ Բահո՛, տե՛ս, Միուսովն էլ քշեց-գնաց իր կառքով, տեսնո՞ւմ ես, գնում է։ Ահա կալվածատեր Մաքսիմովն էլ է վազում. էհէ՛, ուղղակի խայտառակություն է եղել։ Ուրեմն ճաշ-մաշ էլ չեն արել։ Վա՛յ թե վանահորը ծեծած լինեն։ Կամ էլ գուցե նրա՞նց են ծեծել, հա՞։ Ա՛յ արժե՞ր...

Ռակիտինն իզուր չէր բացականչում։ Խայտառակությունն

իրոք եղել էր՝ անսպասելի ու չլսված մի խայտառակություն։ Եվ ամեն ինչ տեղի էր ունեցել «անակնկալ ներշնչման» հետևանքով։

VIII

ԽԱՑՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

Միուսովը, երբ Իվան Ֆյոդորովիչի հետ մտնում էր վանահոր մոտ, իբրև ճշմարտապես բարեկիրթ ու նրբանկատ մարդ՝ զգաց, որ իր հոգում մի տեսակ նուրբ շարժում կատարվեց արագորեն. նա ամաչեց, որ բարկացել էր։ Ինքնիրեն խոստովանեց, որ ըստ էության պետք է այնքա՛ն արհամարհեր այդ անպիտան Ֆյոդոր Պավլովիչին, որ սրբահոր խուցում նրա երեսից իր պաղարյունությունը չկորցներ և այդպես դուրս չգար իր հավասարակշռությունից։ «Վանականները համենայն դեպս ոչ մի հանցանք չունեն այս բոլորի մեջ,— վճռեց նա հանկարծ, երբ բարձրանում էր արտասանդուղքով,— և եթե այստեղ էլ կանոնավոր մարդիկ են (այս վանահայր Նիկոլայը կարծեմ նույնպես ազնվական է), ուրեմն ինչո՞ւ նրանց հետ սիրալիր ու քաղաքավարի չլինեմ... Չեմ վիճելու, նույնիսկ ամեն ինչի այո եմ ասելու, համակրանք եմ շահելու սիրալիրությամբ և... և... ապացուցելու եմ վերջապես, որ ես գործ չունեմ այդ Եզոպոսի, այդ խեղկատակի, այդ պիերոյի հետ և պարզապես անախորժ դրության մեջ եմ ընկել ճիշտ այնպես, ինչպես նրանք բոլորը...»։

Նա որոշեց հենց այսօր իսկ դադարեցնել վանքի դեմ իր հայցը անտառահատման ու ձկնորսության վերաբերյալ (ինքն էլ չգիտեր, թե անտառի ու գետի ո՛ր մասերն էին վիճելի) և վերջնականորեն, մի անգամ ընդմիշտ զիջել նրանց այդ իրավունքը, մանավանդ որ այդ բոլորի արժեքը չնչին մի բան էր։

Բոլոր այդ բարի մտադրություններն ավելի ևս հաստատ դարձան, երբ նրանք մտան վանահոր սեղանատունը։ Ճիշտն ասած, դա սեղանատուն էլ չէր, որովհետև վանահոր բնակարանում երկու սենյակ կար ընդամենը, թեև դրանք շատ ավելի ընդարձակ ու հարմարավետ էին, քան սրբահոր սենյակները։ Բայց այստեղ նույնպես կահավորումը աչքի չէր ընկնում հատուկ շքեղությամբ. կարասիները կարմիր փայտից էին, կաշեպատ, հնաձև՝ քսանական թվականների ոճով. նույնիսկ հատակը չէր ներկված. սակայն ամեն ինչ փայլում էր մաքրու-

թյամբ, լուսամուտներին բաղում ընտիր ծաղիկներ կային։ Այս բոպեին գլխավոր պերճանքը, բնականաբար, ճոխ սպասադրված սեղանն էր, թեև այդ էլ հարաբերական առումով. սփոցները մաքուր էին, ամանեղենը՝ փայլուն։ Սքանչելի թխված երեք տեսակ հաց կար, երկու շիշ գինի, երկու շիշ հոյակապ մեղրախմիչք և մի մեծ ապակե սափորով կվաս. մեղրախմիչքն ու կվասը վանքում էին պատրաստվում և մեծ համբավ ունեին շրջակայքում։ Օղի բնավ չկար։ Ռակիտինը հետո պատմում էր, որ այս անգամ ճաշին հինգ տեսակ կերակուր էին պատրաստել. ստերլետի ձկնապուր՝ հետը ձկով կարկանդակներ, ապա խաշած ձուկ՝ ինչ-որ հատուկ ու ընտիր ձևով պատրաստված, ապա կարմիր ձկից կոտլետներ, պաղպաղակ ու կոմպոտ և վերջապես բլանմանժեի ձևով թթվաշփոթ։ Ռակիտինն այդ ամբողջը տնտղել էր, չդիմանալով և հատկապես աչք նետելով վանահոր խոհանոցը, որտեղ նա նույնպես իր կապերն էր հաստատել։ Նա ամեն տեղ կապեր ուներ և ամեն տեղ լրատու էր գտնում։ Շատ անհանգիստ ու նախանձոտ սիրտ ուներ։ Կատարելապես գիտակցում էր իր աչքի զարնող ընդունակությունները, բայց նյարդայնորեն չափազանցում էր դրանք իր մեծամտությամբ։ Հաստատ գիտեր, որ հետագայում գործիչ է դառնալու մի որևէ ասպարեզում, բայց Ալյոշան, շատ մտերիմ լինելով նրա հետ, տխրում էր, որ իր բարեկամ Ռակիտինն անազնիվ է և բոլորովին չի գիտակցում իր այդպես լինելը, այլ ընդհակառակը՝ ինքնիրեն վճռականորեն համարում է ամենաբարձր ազնվության տեր մարդ, որովհետև գիտե, թե ինքը դրամ չի գողանա սեղանից։ Այս հարցում ոչ թե Ալյոշան, այլև ոչ ոք չէր կարող նրա վրա ազդեցություն գործել։

Ռակիտինը, որպես մանր անձնավորություն, չէր կարող անշուշտ հրավիրված լինել ճաշի, բայց հրավիրված էին հայր Իոսիֆն ու հայր Պաիսին, ինչպես նաև մի այլ աբեղա։ Նրանք արդեն սպասում էին վանահոր սեղանատանը, երբ ներս մտան Պյոտր Ալեքսանդրովիչը, Կալգանովը և Իվան Ֆյոդորովիչը։ Մի անկյուն քաշված սպասում էր նաև կալվածատեր Մաքսիմովը։ Վանահայրը սենյակի մեջտեղը եկավ՝ հյուրերին դիմավորելու։ Բարձրահասակ, նիհար, բայց դեռ առույգ ծերունի էր նա՝ ալեխառն սև մազերով, երկարուն, ծանրախոհ, ճգնավորի դեմքով։ Նա լուռ խոնարհվեց իր հյուրերին, որոնք այս

անգամ մոտեցան օրհնություն ստանալու։ Միուսովը նույնիսկ փորձեց նրա ձեռքը համբուրել, բայց վանահայրը ճիշտ ժամանակին ետ քաշեց ձեռքը և համբույրն առկախ մնաց։ Իսկ Իվան Ֆյոդորովիչն ու Կալգանովն այս անգամ լիակատար օրհնություն ստացան, այսինքն ամենայն պարզամտությամբ պագեցին վանահոր ձեռքը, հասարակ գյուղացու նման։

— Մենք պետք է խիստ ներողություն խնդրենք, ձերդ գերապատվություն,— սկսեց Պյոտր Ալեքսանդրովիչը ժպիտներ թափելով, բայց այնուամենայնիվ պահելով լուրջ ու հարգալից շեշտը,— ներեցեք, որ ներկայանում ենք առանց ձեր կողմից հրավիրված մեր ուղեկցի՝ առանց Ֆյոդոր Պավլովիչի։ Նա ստիպված էր հրաժարվել ձեր սեղանին մասնակցելու շնորհից, և ոչ առանց պատճառի։ Գերաշնորհ հայր Զոսիմայի խուցում, տարվելով իր որդու հետ ունեցած ընտանեկան տխրառիթ գժտությամբ, նա մի քանի խոսք ասաց՝ բոլորովին անտեղի... պարզապես բոլորովին անվայել... և այս պարագան, ինչպես ենթադրում եմ (նա մի հայացք նետեց աբեղաների վրա), արդեն հայտնի է ձերդ գերապատվության։ Ուստի, ինքն էլ գիտակցելով իր մեղքը և անկեղծորեն զղջալով, նա ամոթ զգաց և, չկարողանալով հաղթահարել այդ զգացումը, խնդրեց մեզ, այսինքն ինձ և իր որդուն՝ Իվան Ֆյոդորովիչին, որ հայտնենք ձեզ իր ամբողջ անկեղծ ափսոսանքը, ցավն ու զղջումը... Մի խոսքով, նա հույս ունի և ցանկանում է հետագայում փոխհատուցել այդ ամբողջը, իսկ այժմ, ձեր օրհնությունն աղերսելով, խնդրում է, որ մոռանաք պատահածը...

Միուսովը լռեց։ Արտասանելով իր ճառի վերջին բառերը, նա կատարելապես զոհ մնաց իր սեփական անձից, այնքան զոհ, որ քիչ առաջվա ջղայնությունից հետք անգամ չմնաց նրա հոգում։ Հիմա լրիվ ու անկեղծորեն սիրում էր նորից մարդկությանը։ Վանահայրը լրջադեմ լսեց նրան, ապա գլուխը մի փոքր հակելով պատասխանեց.

— Անկեղծորեն ցավում եմ, որ բացակայում է նա։ Թերևս մեր սեղանի առաջ սիրով համակվեր մեր նկատմամբ, ինչպես և մենք՝ իր նկատմամբ։ Բարեհաճեցեք ճաշակել, պարոնայք։

Նա կանգնեց սրբապատկերի առաջ և սկսեց բարձրաձայն աղոթել։ Բոլորն ակնածանքով խոնարհեցին գլուխները, իսկ կալվածատեր Մաքսիմովը նույնիսկ ակնբախորեն առաջ թեք-

վեց՝ ափերն հատուկ ջերմեռանդությամբ միացնելով իր կրծքի առաջ։

Եվ ահա այստեղ է, որ Ֆյոդոր Պավլովիչն իր վերջին խաղը խաղաց։ Պետք է նկատել, որ նա իրոք ուզում էր տուն մեկնել և իրոք զգում էր, թե սրբահոր խուցում իր ամոթալի վարմունքից հետո անհնար է վանահոր մոտ ճաշի գնալ հենց այնպես՝ ասես ոչինչ չի պատահել։ Ո՞չ թե շատ էր ամաչում իր արածից ու մեղադրում իրեն — գուցե և ճիշտ հակառակը։ Բայց այնուամենայնիվ զգում էր, թե ճաշի գնալն արդեն անվայել կլինի։ Սակայն հազիվ էին հյուրանոցի անդաստակին մոտեցրել իր ճոճռան կառքը և արդեն բարձրանում էր, երբ հանկարծ կանգ առավ։ Հիշեց իր սեփական խոսքերը, որ ասել էր սրբահորը. «Երբ ես մի որևէ տեղ եմ գնում, այդպես էլ միշտ թվում է ինձ, թե ես ամենից ավելի ստորն եմ, և թե բոլորն ինձ խեղկատակի տեղ են դնում, դե ես էլ՝ արի՛ ուրեմն, ասում եմ, իսկապես խեղկատակի դեր խաղամ, որովհետև բոլորդ էլ, առաջինից մինչև վերջինը, ինձնից ավելի հիմար եք և ստոր»։ Նա ուզեց վրեժ լուծել բոլորից՝ իր իսկ արած ստորությունների համար։ Այս առիթով հանկարծ հիշեց, թե ինչպես մի անգամ, տարիներ առաջ, հարցրել էին իրեն. «Ինչո՞ւ եք այսինչ մարդուն այդպես ատում»։ Եվ այն ժամանակ պատասխանել էր խեղկատակի անամոթության մոլուցքով. «Ասեմ ինչու. ճիշտ է, նա ինձ ոչինչ չի արել, բայց ես ինքս մի շատ զզվելի ստորություն արեցի նրա՛ հանդեպ, և հենց դրա համար էլ իսկույն ատեցի նրան»։ Հիմա հիշելով այդ, նա հանգիստ ու չարամիտ ժպտաց՝ տատանվելով մի րոպե։ Հետո աչքերը փայլեցին, նույնիսկ շրթունքները դողացին։ «Դե՜հ, քանի որ սկսել եմ, արի վերջացնեմ»,— վճռեց նա հանկարծ։ Այդ վայրկյանի նրա ամենաթաքուն զգացողությունը կարելի էր արտահայտել հետևյալ բառերով. «Էլ չես կարող հիմա վարկդ վերականգնել, է՜հ ուրեմն, արի մե՛կ էլ թքիր նրանց վրա անամոթաբար, այսինքն թե՝ չեմ ամաչում ձեզնից ու վե՛րջ»։ Կառապանին հրամայեց սպասել, իսկ ինքն արագ քայլերով վերադարձավ վանք՝ ուղղակի վանահոր մոտ։ Դեռ լավ չգիտեր, թե ինչ է անելու, բայց գիտեր, թե այլևս չի կարող զսպել իրեն, և բավական է մի փոքր մղում, որ վայրկենապես հասնի ստորության ծայրագույն աստիճանին, սակայն միայն ստորության, այլ ոչ երբեք մի որևէ հանցա-

գործության կամ այնպիսի մի արտառոց արարքի, որի համար դատարանը կարող է պատժել։ Վերջին պտրագային նա միշտ էլ ընդունակ էր իրեն զսպելու և այդ առթիվ նույնիսկ ինքն իր վրա զարմացել էր որոշ դեպքերում։ Նա վանահոր սեղանատանը երևաց ճիշտ այն վայրկյանին, երբ աղոթքը վերջացել էր և բոլորը սեղանին էին մոտենում։ Կանգնելով շեմքին, մի հայացք նետեց հավաքվածների վրա և ծիծաղեց իր երկար, լպիրշ, չարախինդ ծիծաղով, հանդգնորեն նայելով բոլորի երեսին։

— Հե՜, նրանք էլ կարծում էին՝ ես գնացի, բայց ես այստե՞ղ եմ ահա,— գոռաց նա ամբողջ սենյակով մեկ։

Մի վայրկյան բոլորն իրենց աչքերը հառեցին նրան և լուռ մնացին, և հանկարծ բոլորն էլ զգացին, թե մի զզվելի, անհեթեթ բան է կատարվելու հիմա, մի անխուսափելի խայտառակություն։ Պյոտր Ալեքսանդրովիչի ամենաբարի տրամադրությունն անմիջապես փոխվեց ծայրահեղ կատաղության։ Նրա սրտում ընդոստ վերազարթնեցին բոլոր այն զգացումները, որոնք արդեն հանդարտվել ու հանգել էին։

— Ո՛չ, չե՛մ կարող հանդուրժել այս բանը,— գոռաց նա,— բնա՛վ չեմ կարող և... ո՜չ մի կերպ չեմ կարող։

Արյունը խուժեց նրա գլուխը։ Նույնիսկ լեզուն խառնվեց, բայց այլևս բարձր ոճով խոսելու ժամանակը չէր, և նա վերցրեց գլխարկը։

— Այդ ի՞նչն է, որ չի կարող,— գոռաց Ֆյոդոր Պավլովիչը,— «ոչ մի կե՜րպ չի կարող և ո՜չ մի դեպքում չի կարող»։ Ջերդ գերապատվություն, ներս մտնե՞մ, թե չէ։ Սեղանակից ընդունո՞ւմ եք։

— Ի սրտե խնդրում եմ՝ համեցեք,— պատասխանեց վանահայրը։— Պարոնա՛յք։ Կարո՞ղ եմ ինձ թույլ տալ,— ավելացրեց նա հանկարծ,— ամբողջ հոգով խնդրելու ձեզ, որ մի կողմ թողնեք ձեր պատահական պառակտումները և մեր խոնարհ սեղանի շուրջ միանաք սիրով և ընտանեկան ներդաշնակությամբ՝ աղոթելով բարձրյալին։

— Ոչ, ոչ, անկարելի է՜,— գոռաց Պյոտր Ալեքսանդրովիչը՝ համբերությունը կորցրած։

— Դե՜հ, եթե Պյոտր Ալեքսանդրովիչի համար անկարելի է, ինձ համար էլ անկարելի է, ես էլ չեմ մնում։ Հենց այս մտքով էլ եկել եմ։ Հիմա ամեն տեղ Պյոտր Ալեքսանդրովիչի

հետ եմ լինելու. եթե գնաք, Պյոտր Ալեքսանդրովիչ, ես էլ կգնամ, մնաք՝ ես էլ կմնամ։ Հենց ընտանեկան ներդաշնակություն ասելով՝ առավելագույնս խայթեցիք նրան, գերապատիվ հայր. նա չի ընդունում, որ իմ ազգականն է։ Այդպես չէ՞, ֆոն Զո՛ն։ Ահա ֆոն Զոնն էլ կանգնել է։ Բարև՛, ֆոն Զոն։

— Դուք... ի՞նձ եք ասում,— մրթմրթաց կալվածատեր Մաքսիմովն ապշահար։

— Իհարկե, քե՛զ,— գոռաց Ֆյոդոր Պավլովիչը։— Հապա էլ ո՞ւմ։ Գերապատիվ վանահայրը հո չի կարող ֆոն Զոն լինել։

— Բայց ախր ես էլ ֆոն Զոն չեմ, ես Մաքսիմով եմ։

— Չէ՞, դու ֆոն Զոն ես։ Ձերդ գերապատվություն, գիտե՞ք ինչ է ֆոն Զոնը։ Մի այդպիսի քրեական դատ է եղել. նրան սպանել են անառականոցում (կարծեմ ձեր շրջանակում այսպես են կոչում նման վայրերը), սպանել են ու կողոպտել, և չնայած նրա պատկառելի տարիքին՝ խրել են արկղի մեջ, փակել ու մեխել են և Պետերբուրգից Մոսկվա են ուղարկել ծանրոցի վագոնով, համարակալած։ Իսկ մեխելու ժամանակ պոռնիկ կաքավուհիները երգեր են երգել ու տավիղ են նվագել, այսինքն դաշնամուր են տնկտնկացրել։ Եվ ահա ուրեմն այս մարդը հենց այդ ֆոն Զոնն է։ Մեռյալներից է հարություն առել, այնպես չէ՞, ֆոն Զոն։

— Այս ի՞նչ է կատարվում։ Ի՞նչ բան է սա,— ձայներ լսվեցին աբեղաների խմբում։

— Գնա՛նք,— գոռաց Պյոտր Ալեքսանդրովիչը, դիմելով Կալգանովին։

— Չէ՞, ներողությո՞ւն կանեք,— ճչան ձայնով վրա ընկավ Ֆյոդոր Պավլովիչը, մի քայլ ևս առաջ գալով սենյակում,— ինձ էլ թույլ տվեք վերջացնեմ։ Այնտեղ՝ խուցում, իմ մասին շարախոսեցիք, թե իբր ես անհարգալից պահեցի ինձ, այսինքն թե հենց խարակաձկների մասին գոռգոռացի։ Պյոտր Ալեքսանդրովիչ Միուսովը, իմ ազգականը, սիրում է, որ խոսքի մեջ լինի plus de noblesse que de sincerité[1], իսկ ես, ընդհակառակը, սիրում եմ, որ իմ խոսքի մեջ plus de sincerité que de noblesse[2] լինի, և թքել եմ noblesse[3]-ի վրա։ Այդպես չէ՞, ֆոն Զոն։ Ներեցեք, գերապատիվ հայր, թեև խեղկատակ եմ ես

[1] Ավելի ազնվախոսություն, քան անկեղծություն (ֆրանս.)։
[2] Ավելի անկեղծություն, քան ազնվախոսություն (ֆրանս.)։
[3] Այստեղ՝ ազնվախոսություն (ֆրանս.)։

և խեղկատակ եմ ձևացնում, բայց պատվո ասպետն եմ և ուզում եմ իմ ասելիքն ասել։ Այո՛, ես պատվո ասպետն եմ, իսկ Պյոտրը Ալեքսանդրովիչի մեջ պարզապես վիրավորված ինքնասիրությունն է խոսում, ուրիշ ոչինչ։ Գուցե և հենց եկել եմ, որ տեսնեմ ինչը ինչոց է և իմ ասելիքն ասեմ։ Այստեղ իմ որդին՝ Ալեքսեյը հոգին է փրկում։ Ես հայր եմ, մտահոգվում եմ նրա ճակատագրով և պետք է մտահոգվեմ։ Ես խելառ էի ձևանում, բայց ականջ էի դնում անընդհատ, աչքի տակով էլ նայում էի, իսկ հիմա ուզում եմ ներկայացման վերջին գործողությունն էլ ցույց տալ ձեզ։ Առհասարակ ո՞նց է լինում մեզ մոտ։ Մի բան ընկավ՝ այդպես էլ մնում է ընկած։ Ընկավ մի անգամ՝ այդպես էլ մնում է հավիտյանս հավիտենից։ Չէ՞, ներողություն կանեք։ Ես ուզում եմ նորից ոտքի կանգնել։ Սրբազան հայրեր, ես վրդովված եմ ձեր դեմ։ Խոստովանանքը մեծ խորհուրդ է, որի առաջ ես էլ պատկառում եմ և պատրաստ եմ երկիր պագանելու, իսկ արի տես, որ այդ խուցում բոլորն էլ ծունկի են գալիս հանկարծ և բարձրաձայն խոստովանանք են անում։ Թույլատրելի՞ է միթե բարձրաձայն խոստովանելը։ Սուրբ հայրերը կարգ են հաստատել, որ խոստովանահոր ականջին ասես մեղքերդ, միայն այդ դեպքում ձեր խոստովանանքը խորհուրդ կլինի, և դա հնուց այդպես է։ Թե չէ՝ ես ինչպե՞ս նրան բացատրեմ բոլորի առաջ, թե... օրինակ, էս եմ արել, էն եմ արել... դե այսինքն էնիքն ու էնիքը, հասկանում եք, թե ինչ, չէ՞։ Երբեմն ախր ասելն էլ անհարմար է։ Է՛հ ուրեմն՝ խայտառակությո՛ւն է դա։ Չէ՞, սրբազան հայրեր, իմ կարծիքով՝ մարդ ձեզ հետ կարող է ինքնախարազանոցների աղանդն ընկնել... Առաջին իսկ առիթով ես կգրեմ սինոդին, իսկ իմ որդուն՝ Ալեքսեյին, տուն կտանեմ...

Այստեղ մի նշում անենք։ Ֆյոդոր Պավլովիչը գիտեր, թե քամին որ կողմից է փչում։ Մի ժամանակ շարամիտ հերյուրանքներ էին երևան եկել և նույնիսկ հասել էին արքեպիսկոպոսին (ոչ միայն մեր, այլև ուրիշ վանքերի նկատմամբ, ուր սրբահայրության կարգն է հաստատված), որ իբր թե շափազանցյալ հարգանք են վայելում սրբահայրերը՝ նույնիսկ ի վնաս վանահայրերի կարգին, և որ, ի միջի այլոց, իբր թե սրբահայրերը շարաշահում են խոստովանանքի խորհուրդը և այլն, և այլն։ Անհեթեթ մեղադրանքներ, որոնք ժամանակի ընթացքում ի չիք դարձան ամենուրեք, ինչպես և մեզ մոտ։ Սա-

կայն հիմարության դեը, որ իր ճանկն էր գցել Ֆյոդոր Պավլովիչին և նրա սեփական նյարդերը բորբոքելով քշում-տանում էր դեպի անամոթության խորխորատները, հանկարծ այդ հին մեղադրանքը հուշեց նրան։ Ֆյոդոր Պավլովիչն այդ մեղադրանքի մի բառն անգամ չէր հասկանում և նույնիսկ չկարողացավ կարգին արտահայտել իր ասելիքը, մանավանդ որ այս անգամ սրբահոր խուցում ոչ ոք ծնկի չէր եկել ու բարձրաձայն չէր խոստովանել, ուստի նա չէր կարող որևէ նման բան տեսած լինել և խոսում էր պարզապես մի կերպ հիշելով հին ասեկոսեներն ու հերյուրանքները։ Բայց արդեն ասած լինելով իր հիմար խոսքը, նա զգաց, թե մի անհեթեթ տխմարություն էր դուրս տվել, և հանկարծ ուզեց ապացուցել անմիջապես իր ունկնդիրներին և մանավանդ ինքն իրեն, որ իր ասածը բնավ էլ տխմարություն չէր։ Ու թեև շատ լավ գիտեր, թե իր ասելիք յուրաքանչյուր բառով ավելի ու ավելի անհեթեթ բաներ էր բարդելու իր դուրս տված տխմարության վրա, բայց արդեն չէր կարող զսպել իրեն և թավալգլոր գնաց զառիվայր։

— Ի՞նչ ստորություն,— գոռաց Պյոտր Ալեքսանդրովիչը։

— Ներեցեք,— ասաց հանկարծ վանահայրը։— Հնուց անտի ասված է. «Եւ բացեալ զբերան իւր ասէր ցիս զանմբտութիւնս ինչ, մինչ և զաղտեղութիւնս ազգի-ազգի։ Եւ ես, լուեալ զայս, ասէի ի միտս իմոյ. սա է բժշկութիւն Յիսուսի՝ առաքեալ առ իս առ ի բուժելոյ զփառասէր ոգի իմոյ»։ Ուստի մենք ևս խոնարհաբար շնորհակալ ենք ձեզ, թանկագին հյուր։

Եվ նա մինչև մեջքը խոնարհվեց Ֆյոդոր Պավլովիչին։

— Բա՛հ-բա՛հ-բա՛հ։ Կե՞ղծ բարեպաշտություն և հնացած խոսքե՞ր։ Հնացած խոսքեր ու հնացած շարժուձևե՞ր։ Հին կեղծիք ու երկրպագելու ձևամոլությո՞ւն։ Գիտե՞նք այդ երկրպագությունները։ «Համբույր շրթներին և դաշույն՝ ուղիղ սրտին», ինչպես Շիլլերի «Ավազակներում»։ Ես կեղծիք չեմ սիրում, հայրե՛ր, ճշմարտություն եմ ուզում։ Բայց խարակաձուկ ուտելու մեջ չէ՛ ճշմարտությունը, արդեն հայտարարել եմ։ Վանական հայրեր, ինչո՞ւ եք ծոմ պահում։ Ինչո՞ւ դրա համար վարձատրություն եք ակնկալում հերկինս։ Ախր այդպիսի վարձատրության սիրուն ես էլ կգամ ծոմ կպահեմ։ Ոչ, սուրբ վանական, դու արի կյանքո՛ւմ առաքինի եղիր, օգուտ

բեր հասարակությանը, առանց վանքում փակվելու և պատրաստի հաց ուտելու, առանց վարձատրություն ակնկալելու այնտեղ՝ վերևում, և կտեսնես, որ դա ավելի դժվար է։ Ես էլ հո կարող եմ վայելուչ խոսել, գերապատիվ հայր։ Տեսնենք ինչե՞ր են պատրաստել այստեղ,— մոտեցավ նա սեղանին։— Հին Ֆակտորի պորտվեյն, Ելիսեև եղբայրների վաճառահանած մեղր, վա՜յ սուրբ հայրեր, վա՜յ։ Սա որտե՞ղ, խարակաձուկը որտեղ։ Հլա տես, ինչ շշե՞ր են մեջտեղ հանել սուրբ հայրերը, հե՛-հե՛-հե՛։ Իսկ ո՞վ է այս բոլորը մատակարարողը։ Ռուս գյուղացին է, մշակը, որ իր կոշկոռոտ ձեռքերով վաստակած դահեկանը բերում է այստեղ, կտրելով իր ընտանիքից ու պետական կարիքներից։ Ախր դուք, սուրբ հայրեր, ժողովրդի արյո՞ւնն եք ծծում։

— Այս ձեր արածն արդեն չափազանց անվայել է,— ասաց հայր Իոսիֆը։ Հայր Պաիսին համառորեն լուռ էր մնում։ Միուսովը սենյակից դուրս փախավ, ետևից էլ՝ Կալգանովը։

— Դե՛հ, հայրեր, ես էլ գնում եմ Պյոտր Ալեքսանդրովիչի ետևից։ Չեմ գա այլևս ձեզ մոտ, ծնկաչոք խնդրեք՝ չեմ գա։ Հազար ռուբլի ուղարկեցի ձեզ, և նորից աչքներդ տնկեցիք, հե՛-հե՛-հե՛։ Չէ, ավելին չեմ տա։ Վրեժ եմ լուծում իմ անցած երիտասարդության համար, իմ կրած ամբողջ նվաստացման դիմաց,— բռունցքը խփեց նա սեղանին՝ շինծու հուզմունքի նոպայում։— Այս վանքը շատ բաներ արեց իմ կյանքում։ Շատ դառն արցունքներ եմ թափել նրա երեսից։ Դուք իմ կնոջը, դիվահարին, հանեցիք իմ դեմ։ Դուք ինձ անիծեցիք ի լուր աշխարհի, խայտառակեցիք ամբողջ շրջապատում։ Բավակա՛ն է, հայրեր, այժմ ազատամտության դար է, շոգենավերի ու երկաթուղիների դար։ Ոչ թե հազար, ոչ թե հարյուր ռուբլի, հարյուր կոպեկ էլ չեք ստանա ինձնից, ոչի՞նչ չեք ստանա։

Նորից մի նշում անենք։ Մեր վանքը ոչ մի առանձնահատուկ բան չէր արել երբեք նրա կյանքում, և նա ոչ մի կաթիլ դառն արցունք չէր թափել վանքի պատճառով։ Բայց նա այնպես տարվեց իր շինծու արցունքներով, որ եղավ մի վայրկյան, երբ քիչ մնաց ինքն էլ հավատար իրեն, լաց լիներ հուզմունքից։ Բայց այդ նույն վայրկյանին զգաց, թե ժամանակն է սանձը քաշելու։ Վանահայրը նրա շարամիտ ստի դիմաց գլուխը խոնարհեց և նորից ազդեցիկ շեշտով արտասանեց.

— Ասված է կրկին. «Ուրախութեամբ համբերեա զանպա-

տուութիւնն, որ վիճակեալ է քեզ ի նախախնամութենէ և կայցիս ժոյժ. ու մի՛ թշնամաներ զոր անպատուեացն զքեզ»։ Այդպես և մենք կվարվենք։

— Բա՛հ-բա՛հ-բա՛հ, ժույժկալցելո՞ց և նման անմիտ բաներ։ Կալցիք ժույժ, հայրեր, իսկ ես գնում եմ։ Եվ իմ որդուն, Ալեքսեյին, տանում եմ այստեղից ընդմիշտ՝ իմ ծնողական իշխանությամբ։ Իվա՛ն Ֆյոդորովիչ, ամենահարգալից որդիս, թույլ տվեք հրամայել ձեզ, որ հետևեք ինձ։ Ֆոն Զո՛ն, դո՞ւ ինչու ես մնում այստեղ։ Արի հիմա գնանք քաղաք՝ իմ տունը։ Ուրախ տուն է։ Եղած-չեղածը մի վերստ ճանապարհ է, ձեթի տեղ խոճկոր ու շիլա կդնեմ առաջդ։ Կճաշենք։ Կոնյակ կդնեմ առաջդ, հետո լիկյոր։ Մամուրովկա ունեմ... Հե՛յ, ֆոն Զոն, բախտդ բանել է, բաց մի՛ թողնի առիթը։

Նա դուրս ելավ դռռալով ու ձեռքերն օդում շարժելով։ Հենց այդ վայրկյանին էր ահա, որ Ռակիտինը տեսավ նրա դուրս գալը և ցույց տվեց Ալյոշային։

— Ալեքսե՛յ,— գոռաց հեռվից հայրը, տեսնելով նրան,— այսօր ևեթ տեղափոխվիր ինձ մոտ վերջնականորեն, բարձդ ու անկողինդ էլ բեր, և էլ հետդ անգամ չմնա այստեղ։

Ալյոշան քարացած կանգ առավ, լուռ և ուշադիր դիտելով այդ տեսարանը։ Ֆյոդոր Պավլովիչն այդ միջոցին մտավ կառքը, և նրա ետևից Իվան Ֆյոդորովիչն էլ մտնում էր լուռ ու մռայլ, նույնիսկ առանց դառնալու Ալյոշային ու ցտեսություն ասելու։ Բայց այդ պահին տեղի ունեցավ ևս մի խեղկատակ ու գրեթե անհավատալի տեսարան, որ ավարտեց ամբողջ դրվագը։ Հանկարծ կալվածատեր Մաքսիմովը երևաց կառքի մոտ։ Վազում էր հևասպառ, որ չուշանա։ Ռակիտինն ու Ալյոշան տեսան, թե ինչպես էր վազում։ Այնպես էր շտապում, որ անհամբերությունից մղված՝ ոտքը դրեց աստիճանին, որի վրա դեռ կանգնած էր Իվան Ֆյոդորովիչի ձախ ոտքը, և բռնելով թափքից՝ ջանաց ցատկել կառքի մեջ։

— Ե՞ս էլ, ե՞ս էլ ձեզ հետ,— ճվճվում էր նա ցատկոտելով, մանր-մանր և ուրախ ծիծաղելով, երանությունը դեմքին և ամեն ինչի պատրաստ,— ինձ էլ վերցրեք, ի՞նձ էլ։

— Ա՛յ ահա՞, չէի՞ ասում, որ նա ֆոն Զոն է,— խանդավառ գոռաց Ֆյոդոր Պավլովիչը։— Իսկակա՞ն ֆոն Զոն՝ մեռյալներից հարություն առած։ Բայց դու ինչպե՞ս այդ եկար այնտեղից։ Ի՞նչ ձևի ֆոնզոնություն արեցիր, հը՞։ Եվ դո՞ւ ինչպես կարող էիր ճաշը թողնել ու գնալ։ Ախր պետք է աներես մարդ լինել դրա համար։ Իմ երեսը պինդ է, բայց քոնը զարմացնում է ինձ, ախպեր։ Դե վեր ցատկիր, թռիր, շուտ արա։ Ներս թող նրան, Վանյա, զվարճալի կլինի։ Մի կերպ կփռվի մեր ոտքերի առաջ։ Կփռվե՞ս, ֆոն Զոն։ Թե՞ նրան տեղավորենք նստիքի վրա՝ կառապանի կողքին։ Թռի՛ր նստիքի վրա, ֆոն Զոն...

Բայց Իվան Ֆյոդորովիչը, որ արդեն նստել էր իր տեղը, առանց մի բառ ասելու և ամբողջ ուժով բոթեց Մաքսիմովի կրծքին, և ծերուկը մի մետր դեն թռավ։ Պարզ պատահականություն էր, որ նա գետին չընկավ։

— Քշի՛ր,— չարացած գոռաց Իվան Ֆյոդորովիչը կառապանին։

— Է՛, ի՞նչ ես անում։ Ի՞նչ ես անում։ Ինչո՞ւ այդպես բոթեցիր նրան,— վեր թռավ Ֆյոդոր Պավլովիչը, բայց արդեն կառքը շարժվել էր։ Իվան Ֆյոդորովիչը չպատասխանեց։

— Ա՛յ թե ինչն ես,— ասաց նորից Ֆյոդոր Պավլովիչը երկու րոպե լուռ մնալուց հետո, ծուռ նայելով որդուն։— Ինքդ սարքեցիր ամբողջ այս վանքի պատմությունը, ինքդ դրդեցիր, ինքդ հավանություն տվիր, ի՞նչ ես հիմա բարկանում։

— Բավական է հիմարություններ դուրս տաք, գոնե հիմա հանգստացեք մի քիչ,— կարճ կտրեց Իվան Ֆյոդորովիչը խոժոռ դեմքով։

Ֆյոդոր Պավլովիչը նորից երկու րոպե լուռ մնաց։

— Մի կում կոնյակը լավ կլիներ հիմա,— նկատեց նա խրատական շեշտով։ Բայց Իվան Ֆյոդորովիչը չպատասխանեց։

— Տուն հասնենք, դու էլ կխմես։

Իվան Ֆյոդորովիչը շարունակում էր լուռ մնալ։

Ֆյոդոր Պավլովիչը նորից երկու րոպե սպասեց։

— Բայց այնուամենայնիվ Ալյոշային ետ կվերցնեմ վանքից, չնայած որ դա շատ տհաճ կլինի ձեզ համար, մեծահարգ կարլ ֆոն Մոոր։

Իվան Ֆյոդորովիչն արհամարհանքով թոթվեց ուսերը և դեմքը շուռ տալով՝ սկսեց նայել ճանապարհին։ Հետո այլևս մինչև տուն չխոսեցին։

Գիրք երրորդ

ՀԵՇՏԱՄՈՂՆԵՐ

I

ԾԱՌԱՅԱՆՈՑՈՒՄ

Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովի տունը քաղաքի բուն կենտրոնում չէր, թեև շատ էլ հեռու չէր կենտրոնական թաղամասից։ Բավական խարխուլ շենք էր, սակայն արտաքուստ հաճելի էր տեսքը. միահարկ էր ու վերնատուն ուներ, մոխրագույն էր ներկված, թիթեղապատ տանիքը՝ կարմիր։ Դեռ կարող էր շատ երկար դիմանալ այդ տունը, ընդարձակ էր ու հարմարավետ։ Բազմաթիվ այլևայլ մառանիկներ, ծածուկ անկյուններ և անսպասելի սանդղիկներ կային տան մեջ։ Առնետներ կային, բայց Ֆյոդոր Պավլովիչը շատ էլ չէր սրդողում դրանցից. «Համենայն դեպս,— ասում էր,— այնքան չես ձանձրանում երեկոները, երբ առանձին ես մնում»։ Եվ իրոք նա սովորություն ուներ երեկոյան արձակելու ծառաներին և ուղարկելու ծառայանոց, իսկ ինքն ամբողջ գիշերը առանձին փակվում էր տանը։ Ծառայանոցը գտնվում էր բակում, ընդարձակ ու ամուր շենք էր։ Ֆյոդոր Պավլովիչը որոշել էր, որ ճաշերն այնտեղ պատրաստվեն, թեև տանն էլ խոհանոց կար. նա չէր սիրում խոհանոցային հոտերը, և ամառ թե ձմեռ՝ ճաշը բերում էին բակից։ Այդ տունն առհասարակ կառուցված էր մեծ քնտանիքի համար, և հնգապատիկ ավելի մարդ կարող էր բնակվել այնտեղ՝ տեր ու ծառա միասին։ Բայց մեր այս պատմած դեպքերի ժամանակ Ֆյոդոր Պավլովիչն էր միայն ապրում այնտեղ՝ Իվան Ֆյոդորովիչի հետ, իսկ ծառայանոցում ընդամենը երեք հոգի էր բնակվում՝ ծերունի Գրիգորին, նրա պառավ կինը՝ Մարֆան, և ծառա Սմերդյակովը, որ դեռ երիտասարդ էր։ Հարկավոր է մի քիչ ավելի մանրամասն խոսել այս երեք սպասավորների մասին։ Բայց ծերունի Գրիգորի Վասիլևիչ Կուտուզովի մասին արդեն բավական բան ասել ենք։ Հաստատակամ և անհողդողդ մարդ էր նա, որ համառորեն ու շիտակ գնում էր դեպի իր նպատակակետը, եթե անշուշտ դա անխախտ ճշմարտություն թվար

նրան այս կամ այն (հաճախ զարմանալիորեն անտրամաբանական) պատճառով։ Առհասարակ նա ազնիվ էր ու անկաշառ։ Նրա կինը, Մարֆա Իգնատևնան, հակառակ որ իր ամբողջ կյանքում անտրտունջ հպատակվել էր ամուսնու կամքին, գյուղացիների ազատագրումից անմիջապես հետո նրա գլուխն էր տանում պահանջելով, որ թողնեն Ֆյոդոր Պավլովիչին ու գնան Մոսկվա, մի փոքրիկ առևտուր սկսեն այնտեղ (քիչ-միչ փող ունեին)։ Բայց Գրիգորին իսկույն և ընդմիշտ վճռեց, որ կնիկը հիմարություն է դուրս տալիս, «որովհետև ամեն մի կինարմատ անազնիվ է», և թե վայել չէ հեռանալ նախկին տիրոջից, ինչպիսին էլ լինի նա իր տեղովը, «որովհետև դա է իրենց պարտքն էս րոպեիս»։

— Դու հասկանո՞ւմ ես ինչ բան է պարտքը,— դիմեց նա Մարֆա Իգնատևնային։

— Պարտք ասածդ հասկանում եմ, Գրիգորի Վասիլևիչ, բայց թե մեր ի՞նչ պարտքն է, որ մենք էստեղ մնանք, էդ բանն սկի չեմ հասկանա,— համառորեն պատասխանեց Մարֆա Իգնատևնան։

— Դե մի՛ հասկացի, բայց էդ էդպես է լինելու։ Եվ էլ լեզուդ քեզ պահի։

Այդպես էլ եղավ. չգնացին, իսկ Ֆյոդոր Պավլովիչը ոռճիկ նշանակեց նրանց՝ փոքրիկ մի գումար, և կանոնավորաբար վճարեց։ Գրիգորին գիտեր նաև, թե ինքն անվիճելի ազդեցություն ունի իր տիրոջ վրա։ Զգում էր այդ, և դա իրոք այդպես էր։ Ֆյոդոր Պավլովիչը, խորամանկ ու կամակոր մի խեղկատակ, որ, ինչպես ինքն էր ասում, «կյանքի որոշ բաներում» շատ ամուր նկարագիր էր ցույց տալիս, «կյանքի ուրիշ բաներում» խիստ թույլ բնավորության տեր մարդ էր և ինքն էլ զարմանում էր դրա վրա։ Ու գիտեր, թե որոնք էին այդ «ուրիշ բաները», գիտեր ու վախենում էր շատ հարցերից։ Կյանքի որոշ բաներում պետք է ականջները սրած պահեր, և այդ պարագային դժվար կլիներ առանց հավատարիմ մարդու, իսկ Գրիգորին ամենահավատարիմ մարդն էր։ Ֆյոդոր Պավլովիչն իր կյանքի ընթացքում կարող էր նույնիսկ բազմիցս ծեծ ուտել, սաստիկ ծեծ, և միշտ Գրիգորին էր փրկում նրան, թեև ամեն անգամ էլ, փրկելուց հետո, ծառան մի լավ խրատ էր կարդում տիրոջ գլխին։ Բայց եթե միայն ծեծը լիներ, Ֆյոդոր Պավլովիչը չէր վախենա երբեք։ Լինում

էին ավելի ծանրակշիռ, նույնիսկ շատ նուրբ ու բարդ պարագաներ, երբ Ֆյոդոր Պավլովիչն ինքն էլ չէր կարողանում բացատրել հավատարիմ ու մոտիկ մի մարդ ունենալու այն արտակարգ պահանջը, որ երբեմն հանկարծ սկսում էր զգալ վայրկենաբար և անհասկանալիորեն։ Համարյա հիվանդագին պահեր էին դրանք. լինելով չափազանց անառակ մարդ, իր հեշտասիրության մեջ հաճախ թունոտ միջատի պես դաժան, Ֆյոդոր Պավլովիչը մերթ ընդ մերթ, հարբած պահերին, հանկարծ հոգեկան սարսափ էր զգում և բարոյական մի ցնցում, որ նույնիսկ, այսպես ասած, իր գրեթե ֆիզիկական անդրադարձն էր ունենում։ «Այդ պահերին կարծես թե հոգիս թպրտում է կոկորդիս մեջ»,— ասում էր նա երբեմն։ Եվ ահա հենց այդ վայրկյաններին նա սիրում էր, որ իր կողքին, մոտիկ մի տեղ, եթե ոչ սենյակում, գոնե բակի շենքում, լինի այդպիսի նվիրված, ամուր, ոչ թե իրեն նման անառակ, այլ առաքինի մի մարդ, որ թեև տեսնում է ամբողջ այդ ցոփությունը և գիտե բոլոր գաղտնիքները, բայց այնուամենայնիվ հանդուրժում է այդ բոլորն իր նվիրվածությամբ, չի ընդդիմանում և մանավանդ չի կշտամբում ու չի սպառնում ո՛չ այս աշխարհի, ոչ էլ հանդերձյալ կյանքի պատիժներով, իսկ անհրաժեշտության դեպքում նույնիսկ պաշտպանում է նրան... ումի՞ց։ Անծանոթ, բայց սարսափելի ու վտանգավոր մեկից։ Խնդիրը հենց այն էր, որ անպայման լիներ մի ուրիշ մարդ, մի հին բարեկամ, որին նա կարողանար կանչել հիվանդագին պահին՝ պարզապես նրա դեմքին նայելու, գուցե և մի քանի բառ փոխանակելու համար, նույնիսկ բոլորովին կողմնակի մի բանի մասին խոսելու, և եթե բարեկամը ոչինչ չասեր, չբարկանար՝ մի տեսակ թեթևանում էր սիրտը, իսկ եթե բարկանար՝ դե՞հ, ավելի էր տխրում։ Պատահում էր (բայց չափազանց հազվադեպ), որ Ֆյոդոր Պավլովիչը նույնիսկ գիշերն էր գնում ծառայանոց և արթնացնում Գրիգորիին, որպեսզի նա մի բոպե գա իր մոտ։ Գալիս էր Գրիգորին, և Ֆյոդոր Պավլովիչն սկսում էր խոսել ամենադատարկ բաների մասին ու շուտով արձակում էր նրան, երբեմն նույնիսկ կատակի տալով, իսկ հետո թքում էր ամեն ինչի վրա, պառկում էր ու քնում արդար մարդու քնով։

Նմանօրինակ մի բան պատահեց Ֆյոդոր Պավլովիչին, երբ եկավ Ալյոշան։ Ալյոշան «ծակեց նրա սիրտը», որովհետև

հոր հետ «ապրեց, տեսավ ամեն ինչ և ոչինչ չդատապարտեց»։ Ավելին, անանխքնթաց մի բան բերեց իր հետ, այսինքն արհամարհանքի կատարյալ բացակայություն և, ընդհակառակը, մշտական սիրալիրություն ու լիովին բնական ու անկեղծ նվիրվածության ծերունու նկատմամբ, որն այնքան քիչ էր արժանի դրան։ Իր ընտանեկան կապերը կտրած ծեր անառակի համար, որ միայն «գեշություն» էր սիրել մինչ այդ, կատարյալ անակնկալ էր այդ ամբողջը։ Ալյոշայի գնալուց հետո նա ինքն իրեն խոստովանեց, թե հասկացել է մի բան, որ մինչ այդ չէր ուզում հասկանալ։

Ես արդեն հիշել եմ այս պատմության սկզբում, թե ինչպես էր Գրիգորին ատում Ադելաիդա Իվանովնային՝ Ֆյոդոր Պավլովիչի առաջին կնոջը և Դմիտրի Ֆյոդորովիչի մորը, և թե ինչպես, ընդհակառակը, պաշտպանում էր նրա երկրորդ կնոջը՝ դիվահարին՝ Սոֆյա Իվանովնային, ընդդիմանալով հենց իր տիրոջը և բոլոր նրանց, ում խելքին փչում էր մի վատ կամ թեթևսոլիկ խոսք ասել կնոջ հասցեին։ Այդ դժբախտ կնոջ նկատմամբ Գրիգորիի համակրանքը դարձել էր մի տեսակ սրբություն, այնպես որ քսան տարի հետո էլ ծերունին չէր կարող մինչև իսկ որևէ հոռի ակնարկ հանդուրժել նրա հասցեին և, ով էլ լիներ վիրավորողը, անմիջապես կընդդիմախոսեր։ Գրիգորին արտաքուստ սառն ու ծանրաբարո մարդ էր, չէր սիրում շատախոսել, կշռում էր իր բառերը, թեթևամիտ բաներ չէր ասում։ Ճիշտ այդպես էլ անհնար էր որոշել առաջին հայացքից՝ սիրո՞ւմ է նա իր սուսուփուս, խոնարհ կնոջը, թե ոչ, այնինչ իրոք սիրում էր, և կինն անշուշտ հասկանում էր այդ։ Մարֆա Իգնատևնան ոչ միայն հիմար կին չէր, այլև գուցե ավելի խելացի էր, քան ամուսինը, առնվազն նրանից ավելի խոհեմ էր կենցաղային հարցերում, և սակայն ամուսնության առաջին օրից ենթարկվում էր նրան անտրտունջ ու լռելյայն և հարգում էր անտարակույս՝ նրա հոգեկան գերազանցության համար։ Զարմանալի բան, երկուսն էլ իրենց ամբողջ կյանքի ընթացքում չափազանց քիչ էին խոսում իրար հետ՝ միայն ամենից ավելի անհրաժեշտ ու ընթացիկ բաների շուրջ։ Լրջախոհ ու վեհաշուք Գրիգորին միշտ առանձին էր մտորում իր բոլոր գործերի ու հոգսերի մասին, այնպես որ Մարֆա Իգնատևնան արդեն վաղուց հասկացել էր միանգամ ընդմիշտ, որ նա բնավ կարիք չունի իր խոր-

հուրդներին։ Զգում էր, որ ամուսինը գնահատում է իր լռությունը և դա կնոջ խելոքության նշանն է համարում։ Գրիգորին բնավ չէր ծեծում իր կնոջը, միայն մեկ անգամ էր ձեռք բարձրացրել նրա վրա, այն էլ թեթևակի։ Մի անգամ, գյուղում, Ադելաիդա Իվանովնայի ու Ֆյոդոր Պավլովիչի ամուսնության առաջին տարին, այն ժամանակ դեռ ճորտ աղջիկներին ու կնիկներին հավաքել էին կալվածատիրոջ տան բակը, որ երգեն ու պարեն։ Սկսել էին «Մարգերում» երգը, և հանկարծ Մարֆա Իգնատևնան, որ այն ժամանակ երիտասարդ կին էր տակավին, խմբից դուրս թռավ ու հատուկ ձևով պարեց «ռուսականը», ոչ թե գյուղացի կնիկների նման, այլ այնպես, ինչպես նա պարել էր, երբ ծառայում էր հարուստ Միուսովների տանը, նրանց ընտանեկան թատրոնում, ուր դերասաններին պարել էր սովորեցնում Մոսկվայից հրավիրված պարուսույցը։ Գրիգորին տեսավ, թե ինչպես էր պարում իր կինը, և մի ժամ հետո, տանը, իրենց խրճիթում, նրա դասը տվեց, մի փոքր քաշելով մազերից։ Բայց դրանով էլ ծեծը վերջացավ և այլևս ոչ մի անգամ չկրկնվեց ամբողջ նրանց կյանքում, Մարֆա Իգնատևնան էլ այդ օրվանից երդվեց բնավ չպարել։

Աստված զավակներ չպարգևեց նրանց։ Միայն մեկ երեխա ունեցան, բայց նա էլ շուտով մահացավ։ Իսկ Գրիգորին երեխա սիրում էր հայտնապես. նույնիսկ չէր թաքցնում այդ սերը, այսինքն չէր ամաչում արտահայտելուց։ Երբ Ադելաիդա Իվանովնան փախավ, Գրիգորին իր ձեռքերի վրա պահեց երեք տարեկան Դմիտրիին և համարյա մեկ տարի չարշարվեց նրա վրա. ինքն էր սանրում տղայի մազերը, ինքն էր նույնիսկ լողացնում նրան տաշտում։ Հետո նաև Իվանի և Ալյոշայի հոգսը քաշեց, և դրա համար էլ ապտակ կերավ։ Բայց այդ բոլորի մասին պատմել եմ արդեն։ Իր սեփական երեխան որպես հույս միայն ուրախացրեց նրան, երբ Մարֆա Իգնատևնան հղի էր տակավին։ Իսկ երբ մանկիկը ծնվեց, վիշտն ու սարսափը խոցեցին նրա սիրտը. նորածին տղան վեց մատ ուներ։ Տեսնելով այդ, Գրիգորին այնպես խորտակված զգաց իրեն, որ ոչ միայն լուռ մնաց մինչև մկրտության օրը, այլև դիտմամբ գնում էր այգի՝ առանձնանալու։ Գարուն էր, ամբողջ երեք օր նա ածու էր փորում այգու բանջարանոցում։ Երրորդ օրը հարկավոր էր մկրտել մանկիկին. մինչ այդ Գրիգորին արդեն համակերպվել էր ու որոշել իր անելիքը։

Մտնելով խրճիթ, ուր հավաքվել էր կղերը, եկել էին հյուրերը և անձամբ ներկայացել էր նաև Ֆյոդոր Պավլովիչը որպես կնքահայր, Գրիգորին հանկարծ հայտարարեց, թե երեխային «պետք չէ մկրտել ամենևին»,— հայտարարեց մեղմ ձայնով, առանց խոսքը երկարացնելու, այլ հազիվ արտասանելով բառերը հատիկ-հատիկ ու միաժամանակ բութ ու սևեռուն հայացքով նայելով քահանային։

— Ինչո՞ւ պետք չէ,— հարցրեց քահանան ուրախ զարմանքով։

— Որովհետև... վիշապ է...— մրթմրթաց Գրիգորին։

— Ինչպե՞ս թե վիշապ, ի՞նչ վիշապ։

Գրիգորին մի պահ լուռ մնաց։

— Բնությունը շփոթվել է...— մրմնջաց նա, ու թեև շատ տարտամ, բայց վճռական էր ասածը։ Երևում էր, որ չի ցանկանում ավելի երկար խոսել։

Ծիծաղեցին և, բնական է, մկրտեցին խեղճ երեխային։ Գրիգորին ջերմեռանդորեն աղոթեց մկրտության ավազանի առաջ, թեև նորածինի մասին իր կարծիքը չփոխեց։ Եվ սակայն ոչ մի բանի արգելք չեղավ, միայն թե ամբողջ երկու շաբաթ, քանի դեռ ապրում էր հիվանդկախ մանչուկը, համարյա չնայեց նրա երեսին, նույնիսկ չուզեց նկատել նրան և գրեթե միշտ բացակայեց խրճիթից։ Բայց այդ տղան երկու շաբաթ հետո մահացավ կաթնախտից, ինքը նրան դրեց փոքրիկ դագաղի մեջ, խորունկ վշտով նայեց նրա մարմնին և, երբ ծածկում էին նրա փոքրիկ, ոչ-խոր գերեզմանը, ծունկի եկավ ու մինչև գետին խոնարհվեց գերեզմանի առաջ։ Այնուհետև երկար տարիներ ոչ մի անգամ չխոսեց իր երեխայի մասին։ Մարֆա Իգնատևնան էլ ոչ մի անգամ նրա ներկայությանը չհիշատակեց իր երեխային, իսկ եթե պատահեր, որ իր «մանկիկի» մասին խոսեր որևէ մեկի հետ, ապա խոսում էր շշուկով, թեկուզ և բացակա լիներ Գրիգորի Վասիլևիչը։ Մարֆա Իգնատևնան նկատել էր, որ ամուսինը, հենց երեխային թաղելու օրից, սկսել է առավելապես «աստվածահաճո» հարցերով զբաղվել, կարդում է «Վարք սրբոցը», մեծ մասամբ լռելյայն ու առանձին, ամեն անգամ դնելով իր խոշոր, արծաթե շրջանակով ու կլոր ապակիներով ակնոցը։ Հազվադեպ էր բարձրաձայն կարդում՝ գուցե միայն մեծ պահքին։ Սիրում էր Հոբի գիրքը։ Մի տեղից ճարել էր «աստվածազգյաց հայր

մեր Խաղակ Ճորիկ» ճառերի ու քարոզների մատյանը, որ տարիներով կարդում էր համառորեն. գրեթե ոչինչ չէր հասկանում կարդացածից, բայց և գուցե այդ իսկ պատճառով ամենից ավելի էր գնահատում ու սիրում այդ մատյանը։ Վերջերս սկսել էր ականջ տալ ինքնախարազանողներին, որոնք երևացել էին մոտակայքում, խորամուխ լինել այդ աղանդի տեսության մեջ, ըստ երևույթին ցնցող տպավորություն էր կրել, բայց այդ նոր հավատքին հարելն անպատեհ էր համարել։ «Ասվածահաճո» գրքեր կարդալը, բնական է, ավելի ևս ծանրաբարո արտահայտություն տվեց նրա դեմքին։

Թերևս նա հակամետ էր միստիցիզմի։ Եվ ահա, կարծես դիտմամբ, իր վեցմատանի երեխայի աշխարհ գալն ու մահը զուգադիպեցին մի ուրիշ շատ տարօրինակ, անսպասելի և յուրահատուկ դեպքի, որ նրա հոգու վրա «կնիք» թողեց, ինչպես ինքն ասաց մի անգամ հետագայում։ Այնպես պատահեց, որ վեցմատանի մանկիկի թաղման օրն իսկ Մարֆա Իգնատենան, գիշերը զարթնելով, կարծես նորածին երեխայի լաց լսեց։ Կինը վախեցավ և արթնացրեց ամուսնուն։ Գրիգորին ականջ դրեց ու ասաց, թե դա ավելի տնքոցի է նման, «ոնց որ կին լինի»։ Վերկացավ, հագնվեց. մայիսյան բավական սաք գիշեր էր։ Դուրս ելնելով, արտասանդուղքի վրա նա պարզ լսեց, որ տնքոցն այգուց էր գալիս։ Սակայն բակի կողմից դուռը կողպում էին գիշերը, իսկ ուրիշ կողմից ներս մտնելն անհնար էր, որովհետև այգին ամուր ու բարձր ցանկապատով էր շրջափակված։ Գրիգորին վերադարձավ խրճիթ, լապտերը վառեց, վերցրեց այգու բանալին ու լռելյայն դուրս գնաց, առանց ուշադրություն դարձնելու կնոջը, որ հիստերիկ սարսափի մեջ ընկած հավատացնում էր տակավին, թե երեխայի լաց է լսում և թե հավանաբար իր մանչուկն է այդպես լաց լինում ու կանչում իրեն։ Այգում Գրիգորին պարզ հասկացավ, որ տնքոցը գալիս է այգու դռնակի մոտ գտնվող իրենց բաղնիքից, և որ իսկապես կին է տնքացողը։ Բանալով բաղնիքի դուռը, նա տեսավ մի պատկեր, որի առաջ քարացած մնաց. Լիզավետա Սմերդյաշչայա մականունով հորջորջվող պակասամիտ աղջիկը, որ միշտ թափառում էր փողոցներում և հայտնի էր ամբողջ քաղաքին, մտել էր իրենց բաղնիքն ու հենց նոր ծննդաբերել էր։ Նորածինն ընկած էր մոր կողքին, իսկ մայրը մահանում էր երեխայի կողքին։

Ոչինչ չէր ասում Լիզավետան, չէր խոսում, թեկուզ հենց այն պատճառով, որ խոսել չգիտեր։ Բայց այս ամբողջը կարոտ է առանձին լուսաբանության։

II

ԼԻԶԱՎԵՏԱ ՍՄԵՐԴՅԱՇՉԱՅԱ

Այստեղ կար մի հատուկ հանդամանք, որ խորապես ցընցեց Գրիգորիին, վերջնականապես հաստատելով նրա ունեցած մի տհաճ ու քստմնելի կասկածը։ Այս Լիզավետա Սմերդյաշչայան շատ կարճահասակ էր՝ «երկու կանգուն լիներ թե չլիներ», ինչպես նրա մահից հետո սրտառուչ կերպով հիշում էին մեր քաղաքի բարեպաշտ պառավներից շատերը։ Քսանամյա աղջկա առողջ, լայն ու վարդագույն դեմքը լիակատար ապուշի արտահայտություն ուներ. հայացքը թեև մեղմ էր, բայց անշարժ էր ու տհաճ։ Իր ամբողջ կյանքում, ամառ թե ձմեռ, բոբիկ էր ման գալիս և կանեփե շապիկ էր հագնում միայն։ Համարյա սև մազերը, որոնք չափազանց խիտ էին ու ոչխարի բրդի նման խճճված, հսկա մի գդակի ձև ունեին նրա գլխին։ Եվ միշտ էլ հողով ու ցեխով կեղտոտված էին լինում մազերը, փոքրիկ տերևներ, շյուղեր ու տաշեղներ էին կպչում գանգուրներին, որովհետև նա միշտ գետնին էր պառկում, կեղտի մեջ։ Հայրը՝ Իլյան, անտուն, սնանկացած ու հիվանդոտ մի քաղքենի, հարբեցողի մեկն էր և արդեն երկար տարիներ իբրև գործավոր ապրում էր մի հարուստ ընտանիքում, որ նույնպես մեր քաղքենիների դասին էր պատկանում։ Իսկ Լիզավետայի մայրը վաղուց էր մահացել։ Մշտապես հիվանդկախ ու չարացած Իլյան անգթորեն ծեծում էր Լիզավետային, երբ աղջիկը տուն էր գալիս։ Բայց նա հազվադեպ էր գալիս հոր մոտ, որովհետև ամբողջ քաղաքն էր նրան պատսպարում որպես աստծո պակասամիտ արարածի։ Թե՛ Իլյայի գործատերերը, թե՛ Իլյան ինքը և նույնիսկ քաղաքի կարեկից մարդկանցից շատերը, առավելապես առևտրականներն ու նրանց կանայք, մի քանի անգամ փորձել էին ավելի վայելուչ զգեստավորել Լիզավետային, իսկ ձմեռը միշտ էլ ոչխարի մորթուց վերարկու և երկարաճիտ կոշիկներ էին հագցնում նրան։ Սակայն նա, առանց առարկության թույլ տալով, որ այդպես հագցնեն իրեն, սովորաբար

գնում ու անպայման հանում էր այդ բոլորը որևէ մի տեղ, առավելապես եկեղեցու դռանը, այդտեղ էլ թողնում էր իրեն նվիրված ամբողջ հագուստ-կապուստը՝ գլխաշոր, շրջազգեստ, կոշիկ թե վերարկու, և հեռանում էր միայն շապիկով ու բոբիկ՝ առաջվա նման։ Մի անգամ պատահեց, որ մեր նոր նահանգապետը, վերատեսչական իր կարճ այցելության գալով մեր քաղաքը, իր նրբագույն զգացմունքները վիրավորված զգաց, երբ տեսավ Լիզավետային։ Ու թեև զեկուցեցին ու նա հասկացավ, որ աղջիկը «պակասամիտ» է, բայց այնուամենայնիվ նկատել տվեց, որ միայն շապիկով թափառող երիտասարդ աղջիկը խախտում է պատշաճության կանոնները, ուստի և սույն պարագան պետք չէ կրկնվի հետայսու։ Բայց նահանգապետը մեկնեց, իսկ Լիզավետային թողեցին եղածի նման։ Վերջապես նրա հայրը մահացավ, և որպես որբուհի նա ավելի սիրելի դարձավ քաղաքի բոլոր բարեպաշտ մարդկանց։ Եվ իրոք, կարծես թե բոլորն էլ սիրում էին Լիզավետային, նույնիսկ փոքր տղաները չէին ծաղրում ու չէին նեղացնում նրան, չնայած որ մեր քաղաքի տղաները, հատկապես դպրոցականները, կովարար լաճեր են։ Նա անծանոթ տներ էր մտնում, և ոչ ոք չէր վոնդում նրան, ընդհակառակը՝ բոլորն էլ սիրալիր էին վերաբերվում ու մի փոքր ողորմություն տալիս։ Եթե մանր դրամ լիներ տրվածը, նա վերցնում ու անմիջապես տանում գցում էր եկեղեցու կամ բանտի դրամատուփը։ Իսկ եթե շուկայում օղաբլիթ կամ նկանակ տային, վերցնում էր և ինքն էլ անպայման տալիս էր առաջին պատահած երեխայի ձեռքը, երբեմն էլ ուղղակի կանգնեցնում էր մեր ամենահարուստ տիկիններից մեկն ու մեկին ու տալիս նրան. և տիկինները նույնիսկ ուրախությամբ էին ընդունում օղաբլիթը կամ նկանակը։ Իսկ ինքը սնվում էր միայն ու միայն սև հացով ու ջրով։ Երբեմն պատահում էր, որ մի հարուստ խանութ էր մտնում ու նստում էր. շուրջը թանկարժեք ապրանքներ էին լինում, նաև դրամ, բայց խանութի տերը երբեք չէր զգուշանում նրանից, որովհետև գիտեր, որ եթե հազարներ էլ հանես նրա աչքի առաջ ու մոռանաս, նա մի կոպեկ չի վերցնի։ Հազվադեպ էր եկեղեցի մտնում, իսկ քնում էր կա՛մ եկեղեցիների դռանը, կամ էլ որևէ մեկի բանջարանոցում՝ մագլցելով ճյուղորմի վրայից (մինչև այսօր էլ մեր քաղաքում շատ ճյուղորմեր կան ցանկապատերի փոխարեն)։

Մոտավորապես շաբաթը մեկ անգամ նա տուն էր գալիս, այսինքն այն գործատիրոջ տունը, ուր ժամանակին ապրում էր իր հանգուցյալ հայրը, իսկ ձմեռը գալիս էր ամեն օր, բայց միայն գիշերելու համար, և քնում էր կա՛մ միջանցքում, կամ էլ գոմում։ Զարմանում էին, որ Լիզավետան դիմանում է այդպիսի կյանքին, իսկ նա վարժվել էր արդեն. թեև կարճահասակ էր, բայց արտակարգորեն ամուր կազմվածք ուներ։ Մեր պարոններից ոմանք պնդում էին, որ նա պարզապես հպարտությունից է անում այդ բոլորը, բայց դա խելքի մոտ բան չէր. աղջիկը խոսել անգամ չգիտեր, միայն մեկ-մեկ լեզուն էր շարժում բերանի մեջ ու բառաչում։ Էլ ի՞նչ հպարտություն։

Եվ ահա պատահեց, որ մի անգամ (շատ վաղուց), սեպտեմբերյան պայծառ ու տաք մի գիշեր, լիալուսնին, մեր հասկացողությամբ շատ ուշ ժամին, խնջույքում հարբած մի խումբ երիտասարդ պարոններ, հինգ կամ վեց հոգի, ակումբից վերադառնում էին տների «ետևով»։ Այդ կողմնակի փողոցը երկու կողմից եզերված էր ճյուղորմերով, որոնց ետին տարածվում էին մոտակա տների բանջարանոցները. իսկ փողոցը տանում էր դեպի մի փոքրիկ կամուրջ՝ գցված երկար ու գարշահոտ մի ջրափոսի վրա, որ մերոնք երբեմն գետակ էին կոչում ըստ սովորության։ Մեր այս հարբած պարոնները ճյուղորմի տակ տեսնում են Լիզավետային՝ եղինջի ու կռատուկի մեջ քնած։ Քահ-քահ ծիծաղելով կանգնում են նրա գլխին և սկսում սրամտել կատարյալ սանձարձակությամբ։ Հանկարծ աղայիկներից մեկի խելքին փչում է մի շատ արտառոց, աներևակայելի հարց տալ. «Հնարավո՞ր է արդյոք, որ մեկն ու մեկը այսպիսի անասունին կին համարի, թեկուզ հիմա օրինակ... և այլն»։ Բոլորն էլ մեծամիտ նողկանքով վճռում են, թե հնարավոր չէ։ Բայց այդ խմբում է լինում նաև Ֆյոդոր Պավլովիչը, որ իսկույն առաջ է ընկնում ու հայտարարում է, թե հնարավոր է նրան կին համարել, նույնիսկ շատ է հնարավոր, և թե մինչև անգամ յուրովի գրգռիչ մի բան կա դրա մեջ և այլն, և այլն։ Ճիշտ է, այն ժամանակ նա խիստ ակնբախորեն ձգտում էր ամեն կերպ խեղկատակի իր դերը խաղալ, սիրում էր վեր-վեր թռնել ու զվարճացնել մեծամեծներին, անշուշտ առերևույթ նրանց հավասար պահելով իրեն, բայց իրականում կատարելապես գռեհկանալով նրանց առաջ։ Հենց այն օրերն էին, երբ նա

ստացել էր իր առաջին կնոջ՝ Ագեյահիդա Իվանովնայի մահվան լուրը Պետերբուրգից և, սգո ժապավենը գլխարկին կպցրած, այնպես էր խմում և անվայելուչ պահում իրեն, որ նույնիսկ քաղաքի ամենացոփ անառակները տհաճություն էին զգում նրան նայելով։ Հարբածների խումբն անշուշտ քրքիջով է պատասխանում նրա անսպասելի կարծիքին. նրանցից մեկը նույնիսկ սկսում է Ֆյոդոր Պավլովիչին դրդել, որ իրագործի իր ասածը, բայց մյուսները թքում են ավելի սաստիկ նոզկանքով, թեև շարունակելով չափից դուրս ուրախ լինել, և ի վերջո բոլորն էլ թողնում ու գնում են իրենց ճանապարհով։ Հետագայում Ֆյոդոր Պավլովիչը երդվում էր, որ ինքն էլ բոլորի հետ գնացել է այն ժամանակ. գուցե հենց այդպես էլ եղել է, ոչ ոք վստահորեն չգիտե այդ բանը և ոչ ոք չի իմացել երբեք, բայց հինգ կամ վեց ամիս հետո քաղաքում բոլորն սկսեցին անկեղծ ու սաստիկ վրդովմունքով խոսել այն մասին, թե Լիզավետան հղի է ման գալիս, և հարցնում էին ու աշխատում պարզել՝ ո՞ւմ մեղքն է դա, ո՞վ է շարագործը։ Եվ ահա այդ օրերին հանկարծ ամբողջ քաղաքում մի սարսափելի լուր տարածվեց, թե չարագործը հենց այդ Ֆյոդոր Պավլովիչն է։ Ո՞րտեղից էր ծայր առել այդ լուրը։ Հարբած պարոնների խմբից միայն մեկն էր մնացել քաղաքում այդ ժամանակ, նա էլ տարբեր ու պատվարժան մի անձնավորություն էր՝ պետական խորհրդական, ընտանիքի ու հասուն աղջիկների տեր, որն անշուշտ ոչ մի լուր չէր տարածի երբեք, եթե նույնիսկ այդպիսի մի բան կատարված լիներ։ Իսկ խմբի մյուս մասնակիցները, հինգ հոգի, քաղաքից մեկնել էին արդեն։ Բայց լուրն ուղղակի մատնանշում էր Ֆյոդոր Պավլովիչին և շարունակում էր մատնանշել։ Նա, անշուշտ, շատ էլ կարևորություն չէր տալիս դրան. մանրմունր առևտրականներին ու քաղքենիներին պատասխանելն անգամ ավելորդ էր համարում։ Այդ ժամանակ նա հպարտ էր և խոսում էր միայն իր շրջանակի մարդկանց՝ պետական պաշտոնյաների ու ազնվականների հետ, որոնց այնպե՞ս զվարճացնում էր։ Հենց այդ օրերին էլ ահա Գրիգորին իր տիրոջը պաշտպան կանգնեց ամբողջ եռանդով. ոչ միայն պաշտպանում էր նրան բոլոր այդ բամբասանքներից, այլև կռվում ու հակաճառում էր հօգուտ նրան ու տարհամոզում շատերին։ «Ստո՛ր աղջիկ, ինքն է մեղավորը»,— հաստատ ասում էր նա և պնդում, որ շարագործը «Պառտակ Կարպն» է եղել, ուրիշ

ոչ ոք (այդպես էին կոչում մի սարսափելի կալանավորի, որ այդ ժամանակ փախել էր նահանգային բանտից, թաքուն ապրում էր մեր քաղաքում և հայտնի էր բոլորին)։ Այդ ենթադրությունը ճշմարտանման թվաց, հիշեցին Կարպին, այսինքն հիշեցին, որ հենց աշնանամուտի այդ օրերին նա ամեն գիշեր թափառում էր քաղաքում ու երեք հոգու կողոպտել էր։ Բայց ամբողջ այդ պատմությունը և բոլոր այդ ասեկոսեները ոչ միայն խեղճ պակասամիտին չզրկեցին ընդհանուր համակրանքից, այլև պատճառ եղան, որ բոլորն էլ ավելի եռանդագին պաշտպանեն ու պահպանեն նրան։ Հարուստ առևտրականի այրի Կոնդրատևան նույնիսկ այնպես կարգադրեց, որ դեռ ապրիլի վերջին իր մոտ առավ Լիզավետային, մտադրելով բաց չթողնել նրան մինչև ծննդաբերությունը։ Անընդհատ աչք էին պահում վրան, բայց այնպես եղավ, որ հակառակ նրանց ամբողջ աշխատության՝ հանկարծ ամենավերջին օրը, երեկոյան, Լիզավետան գաղտնորեն հեռացավ Կոնդրատևայի տնից և հայտնվեց Ֆյոդոր Պավլովիչի այգում։ Ինչպե՞ս նա այդ վիճակում կարողացել է մագլցելով անցնել բարձր ու ամուր ցանկապատի վրայից՝ այդ հարցը մի տեսակ հանելուկ մնաց։ Ոմանք պնդում էին, թե նրան «օգնել են», ոմանք էլ հավատացնում էին, թե «մի ուրիշ բան է նրան օգնական եղել»։ Ամենից հավանականն այն է, որ դա տեղի է ունեցել թեև շատ զարմանալի, բայց բնական կերպով. Լիզավետան սովոր էր անցնել ճյուղորմների վրայով ու մտնել ուրիշների բանջարանոցը՝ գիշերելու համար, և մի կերպ մագլցել է նաև Ֆյոդոր Պավլովիչի ցանկապատի վրա, այդտեղից էլ, չնայած իր վիճակին, ցատկել է այգու մեջ, վնասելով ինքնիրեն։

Գրիգորին սլացավ դեպի խրճիթ ու կնոջն ուղարկեց օգնելու Լիզավետային, իսկ ինքը վազեց պառավ մանկաբարձուհու մոտ, որի տունը հեռու չէր։ Երեխային փրկեցին, բայց Լիզավետան առավոտյան դեմ մահացավ։ Գրիգորին վերցրեց երեխային, բերեց տուն։ Կնոջը նստեցրեց, մանկիկին տվեց նրա գիրկը. «Աստծո որբուկը բոլորի հարազատն է, իսկ ինձ ու քեզ՝ է՛լ ավելի։ Մեր ննջեցյալ մանչուկն ուղարկեց սրան, սատանի որդու և արդար կնոջ ծնունդ է սա։ Խնամի՛ր ու լաց մի՛ լինի այսուհետև»։ Եվ այդպիսով Մարֆա Իգնատևնան դաստիարակեց մանկիկին։ Մկրտեցին ու կոչեցին Պավել, իսկ մարդիկ ինքնաբերաբար, առանց որևէ պարտադրանքի, սկը-

սեցին նաև Ֆյոդորովիչ հայրանունով կոչել նրան։ Ֆյոդոր Պավլովիչը ոչ մի բանի չընդդիմացավ և նույնիսկ զվարճալի համարեց այդ բոլորը, թեև եռանդագին շարունակում էր ուրանալ իրեն վերագրված հանցանքը։ Ամբողջ քաղաքին դուր եկավ, որ նա վերցրեց ընկեցիկ երեխային։ Հետագայում Ֆյոդոր Պավլովիչը ազգանուն էլ հնարեց ընկեցիկի համար. կոչեց Սմերդյակով՝ ըստ «Սմերդյաշչայա» մականվան, որ տալիս էին նրա մորը։ Ահա այս Սմերդյակովն էլ ուրեմն դարձավ Ֆյոդոր Պավլովիչի երկրորդ ծառան և մեր այս պատմության սկսելու պահին ապրում էր բակի շենքում՝ ծերունի Գրիգորիի ու պառավ Մարֆայի հետ։ Ծառայում էր որպես խոհարար։ Թեև շատ անհրաժեշտ է հատկապես նրա մասին էլ որոշ բաներ ասել, բայց արդեն ամաչում եմ, որ այսքան երկար ժամանակ շեղեցի իմ ընթերցողի ուշադրությունը, խոսելով այսքան հասարակ ծառաների մասին, ուստի և վերադառնում եմ իմ սկսած պատմությանը, հույս ունենալով, որ վեպի հետագա ընթացքում մի որևէ հարմար առիթ կլինի Սմերդյակովին անդրադառնալու։

III

ՏԵՆՉԱՀՈՒՅԶ ՍՐՏԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ՝ ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐՈՎ

Ալյոշան, լսելով այն հրամանը, որ իր հայրը վանքից հեռանալու ժամանակ գոռաց կառքից, մի պահ կանգնած մնաց տեղում՝ մեծապես տարակուսելով։ Բայց ոչ թե ցնցվեց մնաց. այդպիսի մարդ չէր։ Ընդհակառակը, անհանգստացած լինելով հանդերձ, կարողացավ իսկույն գնալ վանահոր խոհանոցը և իմանալ, թե ինչ է արել իր հայրիկը վանքում։ Իսկ հետո ճամփա ընկավ այնուամենայնիվ, հուսալով, որ քաղաք գնալու ժամանակ մի կերպ կկարողանա լուծել իրեն տանջող խնդիրը։ Նախօրոք ասեմ, որ նա բնավ չվախեցավ հոր գոռոցներից ու «բարձերն ու ներքնակը առած» տուն վերադառնալու հրամանից։ Շատ լավ հասկացավ, որ այդպիսի ցուցադրական աղմուկով տրված հրամանը «ոգևորության» հետևանք էր, մինչև անգամ տպավորություն գործելու համար ասված մի բան։ Դա նման էր այն դեպքին, որ վերջերս էր տեղի ունեցել հենց մեր քաղաքում. մի քաղքենի, իր անվա-

նակոչության առթիվ սարքած խնջույքում հարբելով, բարկացել է, որ իրեն այլևս օղի չեն տալիս, և հյուրերի ներկայությամբ հանկարծ սկսել է կոտրել ու փշրել իր սեփական ամառնեղենը, պատառոտել իր ու կնոջ հագուստները, ջարդել իր կահ-կարասին ու վերջապես նաև տան ապակիները, և այդ ամբողջն արել է նույնպես տպավորություն գործելու համար։ Հայրիկի այսօրվա արածն էլ, իհարկե, այդ տեսակ մի բան էր։ Հարբած քաղքենին, հաջորդ օրն սթափվելով, անշուշտ ցավ է զգացել փշրված բաժակների ու պնակների համար։ Ալյոշան գիտեր, որ իր ծերուկն էլ, անկասկած, հաջորդ օրը թույլ կտա նորից, որ ինքը վանք վերադառնա, գուցե այսօր իսկ թույլ տա։ Եվ կատարելապես վստահ էր արդեն, որ իր հայրը կարող է ո՛ւմ ասես վիրավորել, բայց իրեն՝ Ալյոշային, չի ուզենա վշտացնել երբեք։ Ալյոշան համոզված էր, որ ամբողջ աշխարհում էլ ոչ ոք չի ուզենա երբևիցե վիրավորել իրեն, և ոչ միայն չի ուզենա, այլև նույնիսկ չի կարող։ Դա աքսիոմ էր նրա համար՝ մի անգամ ընդմիշտ և առանց որևէ դատողության ընդունված, և այդ առումով նա վստահորեն շարունակում էր իր ճանապարհը, առանց դույզն տատանման։

Բայց այդ բոպեին բոլորովին ուրիշ տեսակի մի երկյուղ էր խլրտում նրա մեջ, և դա տանջալի էր մանավանդ այն պատճառով, որ ինքն էլ չէր կարող որոշել դրա բնույթը. դա երկյուղ էր կնոջ նկատմամբ, հենց Կատերինա Իվանովնայի նկատմամբ, որ տիկին Խոխլակովայի միջոցով ուղարկած իր երկտողում այնպե՞ս թախանձագին աղերսում էր Ալյոշային՝ գալ ու տեսնել իրեն մի խնդրով։ Այդ թախանձանքը և անպատճառ գնալու անհրաժեշտությունը հենց իսկույն մի տանջալից զգացում էին առաջացրել նրա սրտում, և ամբողջ ցերեկը հետզհետե ավելի ու ավելի ցավագին էր դարձել այդ զգացումը, հակառակ բոլոր այն տեսարաններին ու դեպքերին, որոնք դրանից հետո տեղի էին ունեցել մենաստանում, հիմա էլ վանահոր մոտ և այլն, և այլն։ Վախենում էր ոչ այն պատճառով, որ չգիտեր, թե ինչի մասին է խոսելու Կատերինա Իվանովնան և ինչ է պատասխանելու ինքը։ Եվ առհասարակ նրա կին լինելը չէ, որ վախեցնում էր իրեն. կանանց քիչ էր ճանաչում անշուշտ, բայց այնուամենայնիվ իր ամբողջ կյանքն ապրել էր միայն նրանց միջավայրում՝ վաղ մանկությունից մինչև վանք մտնելը։ Վախենում էր ա՛յս մի

կնոջից՝ հենց Կատերինա Իվանովնայից։ Սկսել էր վախենալ այն օրից, երբ առաջին անգամ տեսել էր նրան։ Իսկ նրան տեսել էր ընդամենը մեկ կամ երկու, գուցե նույնիսկ երեք անգամ, և մինչև իսկ պատահաբար մի քանի խոսք էր փոխանակել նրա հետ մի առիթով։ Իր հիշողության մեջ նա մնացել էր որպես գեղեցիկ, հպարտ ու տիրական աղջիկ։ Բայց ոչ թե նրա գեղեցկությունն էր անհանգստացնում Ալյոշային, այլ մի ուրիշ բան։ Եվ ահա իր զգացած վախի անբացատրելիությունն էր, որ հիմա ավելի էր ուժեղացնում այդ նույն վախը իր մեջ։ Աղջկա նպատակները չափազանց ազնիվ էին, ինքը գիտեր այդ. նա ձգտում էր փրկել իր եղբորը՝ Դմիտրիին, որն արդեն մեղավոր էր նրա առաջ, և ձգտում էր պարզապես վեհանձնությունից մղված։ Եվ սակայն, չնայած որ Ալյոշան հասկանում էր բոլոր այդ գեղեցիկ ու վեհանձն զգացումները և չէր կարող արդար չլինել դրանց նկատմամբ, այնուամենայնիվ սարսուռ էր անցնում նրա մարմնով՝ որքան ավելի էր մոտենում աղջկա տանը։

Ալյոշան ենթադրեց, թե այնտեղ չի հանդիպի Իվանին, որն աղջկա այնքան մոտիկ բարեկամն էր. հիմա Իվանը հոր հետ է անկասկած։ Ավելի ևս վստահ էր, որ չի հանդիպի Դմիտրիին, և նախազգում էր, թե ինչու։ Հետևաբար իրենք առանձին կխոսեն։ Ալյոշան շատ էր ուզում այդ ճակատագրական խոսակցությունից առաջ փութալ Դմիտրիի մոտ ու տեսնել նրան։ Առանց նամակը ցույց տալու, կկարողանար նրա հետ մի քանի խոսք փոխանակել։ Բայց Դմիտրին հեռու էր ապրում և հավանաբար նույնպես տանը չէր հիմա։ Մի պահ կանգ առնելով, Ալյոշան վերջնականապես որոշեց անելիքը։ Վարժ ու շտապ շարժումով խաչակնքեց երեսը, իսկույն ժպտաց մի բան մտածելով և վճռականորեն քայլերն ուղղեց դեպի իր սարսափելի օրիորդը։

Գիտեր նրա տունը։ Բայց եթե գնար Մեծ փողոցով, հետո հրապարակով և այլն, ճանապարհը բավական երկար կլիներ։ Մեր փոքր քաղաքը չափազանց ցաքուցրիվ է, և զգալիորեն մեծ տարածություններ կան շենքերի միջև։ Բացի այդ, հայրն սպասում էր իրեն, գուցե դեռ չէր մոռացել տված հրամանը և կարող էր կամակորություն անել, ուստի պետք է շտապեր, որպեսզի ժամանակին հասներ նաև հոր մոտ։ Այս նկատառումներով նա որոշեց կարճել ճանապարհը, գնալ տների ետևով,

մանավանդ որ հինգ մասների պես գիտեր քաղաքի բոլոր ծակուծուկերը։ Տների ետևով՝ նշանակում էր ոչ թե որոշակի ճամփով գնալ, այլ ամայի ցանկապատերի երկայնքով, երբեմն նույնիսկ անցնել ճյուղորմերի վրայից, անցնել ուրիշների բակով, ուր սակայն ամեն մարդ ճանաչում էր նրան և բոլորն էլ բարևում էին։ Այս ձևով կարող էր կիսովին կրճատել ճանապարհն ու ելնել Մեծ փողոց։ Նույնիսկ հաբկ եղավ անցնել հոր տան մոտից, այսինքն դրա հարևան այգու կողքով, ուր մի հին, ծրոմբոված ու չորս լուսամուտ ունեցող տնակ կար։ Ալյոշան գիտեր, որ տնակի տերը քաղքենիների դասին պատկանող մի պառավ, անդամալույծ կին է։ Այս պառավն ապրում էր իր աղջկա հետ, որը քաղաքակիրթ աղախին էր եղել մայրաքաղաքում, ապրել էր այս կամ այն գեներալի հարկի տակ, իսկ հիմա, արդեն մի տարի է, տուն էր եկել մոր հիվանդությունն պատճառով և միշտ պճնագեղ զգեստներ էր հագնում ցուցամոլաբար։ Սակայն պառավն ու աղջիկը սոսկալի աղքատության մեջ էին ընկել և նույնիսկ, որպես հարևաններ, ամեն օր գնում էին Ֆյոդոր Պավլովիչի խոհանոցը՝ մի պնակ ապուրի և հացի համար։ Մարֆա Իգնատևնան սիրով էր տալիս նրանց։ Բայց աղջիկը, ապուրի համար ուրիշի դուռն ընկնելով հանդերձ, ոչ մի կտոր հագուստ չծախեց իր հանդերձարանից, որի մեջ նույնիսկ շատ երկար պոչով մի զգեստ կար։ Այս պոչավոր զգեստի մասին Ալյոշան իմացել էր, անշուշտ շատ պատահաբար, իր բարեկամ Ռակիտինից, որ մանրամասնորեն գիտեր քաղաքի ամբողջ անցուդարձը։ Իմացել էր և խոկույն մոռացել իհարկե։ Բայց հիմա, հասնելով հարևանուհու այգուն, հենց այդ պոչավոր զգեստը հիշեց մեկեն, արագ բարձրացրեց մտածմունքի մեջ թաղված գլուխը և... հանկարծ չափազանց անակնկալ մի հանգիպում ստիպեց նրան կանգ առնել։

Այգու ճյուղորմի ետև, մի բանի վրա բարձրացած, կանգնել էր իր եղբայր Դմիտրին, որ մինչև կուրծքը հակված գեպի դուրս՝ ամբողջ թափով շարժում էր ձեռքերը, կանչելու նշաններ էր անում, երևի վախենալով գոռալուց, նույնիսկ բարձրաձայն մի բառ ասելուց, որպեսզի չլսեն իրեն։ Ալյոշան իսկույն վազեց ճյուղորմի մոտ։

— Լավ որ ինքդ նայեցիր, թե չէ՝ քիչ մնաց գոռայի,— ուրախ ու շտապ-շտապ փսփսաց Դմիտրի Ֆյոդորովիչը։—

Թռի՛ր այստեղ։ Շո՛ւտ։ Ի՞նչ հրաշալի եղավ, որ դու եկար։ Հենց հիմա քո մասին էի մտածում...

Ալյոշան ինքն էլ ուրախ էր, միայն թե շվարել էր՝ ինչպե՞ս անցնի ճյուղորմի վրայով։ Բայց Միտյան իր հուժկու ձեռքով բռնեց նրա արմունկը և օգնեց ցատկելու։ Վեր քաշելով պարեգոտի փեշերը, Ալյոշան փողոցային բոբիկ լաճի ճարպկությամբ ցատկեց ճյուղորմի մյուս կողմը։

— Ա՛յ ապրե՞ս, դե գնա՛նք,— խանդավառ փսփսաց Միտյան։

— Ո՞ւր,— փսփսաց նաև Ալյոշան, նայելով չորս կողմը և տեսնելով, որ գտնվում է կատարելապես ամայի այգում, ուր ոչ ոք չկար, բացի իրենցից։ Փոքր էր այգին, բայց տնակն առնըվազն հիսուն քայլ հեռու էր։— Մարդ չկա այստեղ, ինչո՞ւ ես փսփսում։

— Ինչու եմ փսփսու՞մ։ Թո՛ւհ, գրողը տանի,— գոռաց հանկարծ Դմիտրի Ֆյոդորովիչն իր ամբողջ ձայնով,— իսկապես, ինչո՞ւ եմ փսփսում։ Ահա՛ խնդրեմ, ինքդ ես տեսնում, թե ինչպես հանկարծ բնությունն ամեն ինչ խառնում է իրար։ Ես այստեղ թաքուն եմ նստած և աչք եմ պահում մի գաղտնիքի վրա։ Հե՛տո կբացատրեմ, բայց տե՛ս, իմանալով, որ դա գաղտնիք է, հանկարծ սկսեցի գաղտնի-գաղտնի էլ խոսել ու հիմարի նման փսփսալ, այնինչ կարիք չկա։ Գնա՛նք։ Ահա այնտե՛ղ։ Մինչ այդ՝ լուռ մնա։ Համբուրե՞լ եմ ուզում քեզ։

Փա՞ռք բարձրյալին տիեզերաց,
Փա՞ռք բարձրյալին իմ հոգու...

Հենց նոր, քո գալուց առաջ, այստեղ նստած կրկնում էի այս տողերը...

Այգին մի հեկտար կամ ավելի տարածություն ուներ, բայց միայն չորս ցանկապատերի երկայնքին էին ծառեր տնկված՝ խնձորենիներ, թխկիներ, լորենիներ, ցարասիներ։ Այգու մեջտեղը դատարկ էր՝ մի փոքր մարգագետին, ուր ամառը մի քանի փութ խոտ էին հնձում։ Տանտիրուհին գարնանից վարձու էր տալիս այգին մի քանի ռուբլով։ Կային նաև ազնվամորի, կոկոռշի և հաղարջի ածուներ՝ նույնպես ցանկապատերի երկայնքին. վերջերս բանջարեղենի ածուներ էին բացել հենց տան մոտ։ Դմիտրի Ֆյոդորովիչն իր հյուրին տարավ այգու ամենահեռավոր անկյունը։ Այնտեղ, լորենիների թանձրուտում, հաղարջենու և

թանթրվենու, փոնչնու և եղրևանու թփերի մեջ, հանկարծ երևաց ավերակի նման մի բան՝ շատ հին, կանաչ մի տաղավար, սևացած ու ծռմռված, ցանցկեն պատերով ու դեռ կանգուն տանիքով, որի տակ կարելի էր պաշտպանվել անձրևից։ Աստված գիտե, թե երբ էր շինված տաղավարը. ըստ ավանդության, կառուցողը Ալեքսանդր Կարլովիչ ֆոն Շմիդտն էր՝ մի պաշտոնաթող գնդապետ, որ հիսուն տարի առաջ տանտերն էր եղել։ Բայց արդեն քայքայվել էր ամեն ինչ. հատակը փտել էր, տախտակները շարժվում էին, փայտից խոնավության հոտ էր գալիս։ Տաղավարում փայտե կանաչ մի սեղան կար՝ գետնին ամրացված ու շրջապատված նույնպես կանաչ նստարաններով, որոնց վրա դեռ կարելի էր նստել։ Ալյոշան անմիջապես նկատել էր եղբոր խանդավառ վիճակը, իսկ երբ տաղավար մտավ՝ կեռ ջիշ կոնյակ ու մի փոքր ըմպանակ տեսավ սեղանի վրա։

— Կոնյա՞կ է,— սկսեց ծիծաղել Միտյան։— Հիմա նայում եզ ու մտածում. «Խմո՞ւմ է նորից»։ Մի՛ հավատա պատրանքին։

Մի՛ հավատար սին ու ստող ամբոխին,
Կասկածներդ մոռացիր...

Ես չեմ խմում, այլ պարզապես «ըմբոշխնում եմ», ինչպես ասում է քո այդ խոզ Ռակիտինը, որ պետական խորհրդական է դառնալու և անընդհատ ասելու է «ըմբոշխնում եմ»։ Նստի՛ր։ Հիմա կգրկեի՛ քեզ, Ալյոշկա, կսեղմեի կրծքիս, այնպե՞ս կսեղմեի՝ ոսկորներդ կոտրելու՛ չափ, որովհետև ամբողջ աշխարհում... ճշմարտապես... ճըշ-մար-տա-պես... (ասածիս խո՞րքը թափանցիր, խո՞րքը) միմիայն քե՛զ եմ սիրում։

Վերջին բառերը ասաց գրեթե հափշտակությամբ։

— Միմիայն քեզ և մեկ էլ մի «լկստվածի», որին սիրահարվել եմ ու հենց դրանով էլ քանդել եմ իմ տունը։ Բայց սիրահարվել՝ չի նշանակում սիրել։ Կարելի է սիրահարվել նաև ատելով։ Հիշի՛ր այս բանը։ Առայժմ դեռ ուրախ եմ խոսում։ Նստիր ահա այստեղ, սեղանի մոտ, ես էլ նստելու եմ կողքիդ, նայելու եմ քեզ և խոսելու եմ անընդհատ։ Դու լուռ ես մնալու շարունակ, իսկ ես խոսելու եմ անընդհատ, որովհետև եկել է ժամանակը։ Բայց գիտե՞ս, մտածեցի, որ իրոք պետք է ցածր խոսել, որովհետև այստեղ... այստեղ... բոլորովին անսպասելի ականջներ կարող են լինել։ Ամեն ինչ կբացատրեմ, ասացինք արդեն՝ պատմությունը «շարունակե-

լի» է։ Ինչո՞ւ էի վառվում քեզ տեսնելու ցանկությամբ, ինչո՞ւ էի տենչում քեզ հիմա, այս վերջին օրերին ու այս բոպեիս։ (Արդեն հինգ օր է՝ խարիսխ եմ նետել այստեղ)։ Ինչո՞ւ։ Որովհետև միայն քեզ կասեմ ամեն ինչ, որովհետև այդպես է հարկավոր, որովհետև պետք ունեմ քեզ, որովհետև վաղը թռչում եմ ամպերից ցած, որովհետև վաղը վերջանում է կյանքը և սկսվում։ Զգացե՞լ ես, տեսե՞լ ես երազում, թե ինչպես բարձունքից ընկնում են փոսը։ Ա՛յ, ճիշտ այդպես ընկնում եմ հիմա, բայց ոչ երազի մեջ։ Եվ չեմ վախենում, ու դու էլ մի՛ վախենա։ Այսինքն վախենում եմ, բայց հեշտալի է։ Այսինքն ոչ թե հեշտալի է, այլ ցնծությո՛ւն... Դե հե՛ր անիծած, միևնույն է՝ ինչ էլ լինի։ Ուժեղ ոգի, թույլ ոգի, կնկա ոգի, ի՞նչ էլ լինի։ Գովաբանենք բնությո՛ւնը. տեսնում ես, ի՞նչ պայծառ է արևը, որքան վճի՛տ է երկինքը, կանա՞չ են տերևները բոլոր, դեռ կատարյալ ամառ է, ժամը չորսն է կեսօրից հետո, լռությո՛ւն։ Ո՞ւր էիր գնում։

— Հայրիկի մոտ էի գնում, բայց նախ ուզում էի այցելել Կատերինա Իվանովնային։

— Նրա ու հայրիկի մոտ։ Ո՛ւյ։ Ի՞նչ զուգադիպություն։ Իսկ ես ինչո՞ւ էի կանչում քեզ, ինչո՞ւ էի վառվում քեզ տեսնելու ցանկությամբ, ինչո՞ւ էի ըղձում ու տենչում քեզ իմ հոգու բոլոր ծալքերով ու նույնիսկ իմ կողերով։ Որպեսզի հենց հայրիկի մոտ ուղարկեմ քեզ իմ կողմից, հետո էլ նրա մոտ՝ Կատերինա Իվանովնայի, և այդպիսով հաշիվները փակեմ թե՛ նրա, թե՛ հայրիկի հետ։ Ուզում էի մի հրեշտակ ուղարկել։ Կարող էի ուղարկել ո՛րևէ մեկին, բայց ուզում էի անպայման հրեշտակ ուղարկել։ Եվ ահա ինքդ գնում ես նրա ու հայրիկի մոտ։

— Իսկապե՞ս ուզում էիր ինձ ուղարկել,— բացականչեց Ալյոշան դեմքի ցավագին արտահայտությամբ։

— Կա՛ց, դու գիտեիր այդ։ Եվ տեսնում եմ, որ իսկույն ամեն ինչ հասկացար։ Բայց լռիր, առայժմ լռիր։ Մի՛ ցավիր ու մի՛ լա։

Դմիտրին վերկացավ, մտածեց մի բոպե և մատը դրեց ճակատին.

— Կատերինա Իվանովնան ինքն է քեզ կանչել, նամակ է գրել կամ նման մի բան, դրա համար էլ գնում էիր մոտը, միթե կգնայի՞ր այլապես։

— Ահա երկաթուղը,— հանեց Ալյոշան գրպանից։ Մխալան արագ կարդաց։

— Եվ դու գնում էիր կողմնակի ճանապարհո՞վ։ Օ՜ աստվածներ։ Երախտապա՞րտ եմ ձեզ, որ նրան ուղարկեցիք կողմնակի ճանապարհով ու նա իմ ձեռքն ընկավ, ինչպես հեքիաթի ոսկե ձկնիկը՝ ծերուկ ու հիմար ձկնորսի ձեռքը։ Լսի՛ր, Ալյոշա, լսի՛ր, եղբայր իմ։ Հիմա արդեն ուզում եմ ամե՛ն ինչ ասել։ Որովհետև գոնե որևէ մեկին պետք է ասեմ, այո՛։ Երկնային հրեշտակին ասել եմ արդեն, բայց պետք է ասեմ նաև երկրային հրեշտակին։ Դու երկրային հրեշտակն ես։ Դու կլսես մինչև վերջ, դու կդատես և դու կներես... Եվ իմ ուղածն էլ այն է, որ ավելի բարձր մեկն ինձ ների։ Լսի՛ր։ Եթե երկու հոգի հանկարծ պոկվում են երկրային ամեն ինչից և թռչում դեպի արտաքսվող մի ոլորտ, կամ գոնե նրանցից մեկն է պոկվում, և թռչելուց կամ կործանվելուց առաջ գալիս է մի ուրիշի մոտ ու ասում՝ ինձ համար ա՛յս արա։ կամ ա՛յն արա, մի բան, որ երբեք ոչ ոքից չեն խնդրում, բայց որ կարելի է միայն մահվան անկողնում խնդրել, միթե այդ ուրիշը չի՞ կատարի խնդրանքը... եթե բարեկամ է, եթե եղբայր է։

— Կկատարեմ, բայց ասա, թե ինչ է, և շուտ ասա,— պատասխանեց Ալյոշան։

— Շո՛ւտ ասա... Հը՛մ։ Մի՛ շտապիր, Ալյոշա. շտապում ես ու անհանգստանում։ Էլ շտապելու կարիք չկա հիմա։ Աշխարհը մի նոր անկյունադարձ կատարեց հիմա։ Է՛հ, Ալյոշա, ափսո՞ս որ դու չես հասկացել տակավին, թե ինչ բան է ցնծությո՛ւնը։ Բայց ի՞նչ եմ ասում նրան։ Դո՞ւ չես հասկացել։ Ի՞նչ եմ տխմարի պես ասում՝

Եղիր ազնիվ, ո՜վ դու մարդ։

Ո՞վ է գրել այս բանաստեղծությունը։

Ալյոշան վճռեց սպասել։ Հասկացավ, որ գուցե, իրոք, հիմա իր բոլոր գործերն այստեղ են միայն կենտրոնացել։ Միտյան մի բոպե խորասուզվեց մտքերի մեջ, արմունկը սեղանին հենած ու գլուխն՝ ափին։ Երկուսն էլ լռեցին։

— Լյոշա,— ասաց Միտյան,— դո՞ւ միայն չես ծիծաղի։ Կուզենայի սկսել... իմ խոստովանանքը... Շիլլերի «Տաղ առ ցնծություն» օրհներգով։ An die Freude![1] Բայց ես գերմաներեն չգիտեմ, միայն գիտեմ, որ այդպես է կոչվում՝ An die

[1] Առ ցնծություն (գերմ.)։

Freude։ Եվ մի՛ կարծիր, թե հարբած շաղակրատում եմ։ Բոլորովին հարբած չեմ։ Կոնյակը կոնյակ է, բայց ես երկու շիշ պետք է խմեմ, որ հարբեմ՝

Ու Սիլենը կարմրամորթ
Իր սայթաքած իշու վրա,

բայց ես քառորդ շիշ էլ չեմ խմել և Սիլեն չեմ։ Սիլեն չեմ, բայց ուժեղ[1] եմ, որովհետև վերջնական որոշում եմ ընդունել՝ առհավե՞տ։ Դու ներիր իմ բառախաղը։ Այսօր ոչ թե միայն բառախաղ, այլև շատ բան պետք է ներես ինձ։ Մի՛ անհանգստանա, ջուր չեմ ծեծում, այլ բան եմ ասում և ա՛յս րոպեիս բուն խնդրին կհասնեմ։ Հոգիդ չեմ հանի։ Սպասիր, ինչպե՞ս էր...

Նա գլուխը բարձրացրեց, մտածեց մի պահ և հանկարծ սկսեց ոգեշնչված.

Թաքնվում էր ծերպերի մեջ[2]
Նախամարդը դեռ երկչոտ,
Անապատ էր դարձնում անվերջ
Հովիվը դաշտ և արոտ,
Տեգ ու աղեղ որսորդն առած՝
Թափառում էր երկրով մեկ,
Վա՜յ պանդուխտին, թե հոսքն ալյաց
Նետեր ցավի ծովեզերք։

Ողջունելով ափերը գոսն,
Զորացած դաշտ ու այգի,
Ցերեռան էր շրջում անհույս
Հետքերով իր զավակի։
Նրան ոչ ոք չէր ընդունում
Վստահությամբ առլեցուն,
Հարգը աստծո չէր ցուցանում
Ոչ մի տաճար, ոչ մի սյուն։

Ձճաշակեց աստվածուհին
Ոչ մի պտուղ քաղցրացած,
Զոհարաններ սոսկ՝ մարդկային
Ոսկորներով լեփլցված։
Նա իր ճամփին տեսնում էր լոկ
Թշվառություն ամենուր,
Եվ ողբում էր իր մեջ անօգ
Մարդու անկումը տխուր։

[1] Բառախաղ է։ Ռուսերեն՝ силён (սիլյոն) — ուժեղ։ Ս. Բ.։

[2] Շիլլերյան բանաստեղծությունների այս և հաջորդ հատվածները գերմաներենից թարգմանել է Հակոբ Մովսեսը։

Հանկարծ հեկեկանքը ժայթքեց Միտյայի կրծքից։ Նա բռնեց Ալյոշայի ձեռքը։

— Սիրելիս, սիրելի՜ս, հիմա էլ նույն անկումն է, անկո՜ւմը։ Այս երկրի վրա սոսկալի՜ շատ տանջանքներ են վիճակված մարդուն, սոսկալի շա՜տ են աղետները նրա գլխին։ Մի՛ կարծիր, թե ես սպայի կոչում ունեցող անտաշի մեկն եմ միայն, որ կոնյակ է խմում և անառակություններ է անում։ Ես, եղբայր իմ, գրեթե միայն դրա՛ մասին եմ մտածում, անկում ապրած այդ մարդու մասին, եթե անշուշտ չեմ ստում։ Տա աստված՝ չստեմ հիմա և ինքս ինձ չգովեմ։ Մտածում եմ այդ մարդու մասին, որովհետև ինքս եմ այդպիսի մարդ։

Որ մարդ դառնա մարդը անկամ՝
Հավետ դաշինք պիտ կնքի
Հեգ հողի հետ իր մայրական,
Այս երկրի հետ հավատքի։

Սակայն խնդիրն այն է, թե ես ինչպե՞ս դաշինք կնքեմ հեգ հողի հետ իմ մայրական։ Ես չեմ համբուրում հողը, չեմ ճեղքում նրա կուրծքը։ Ինչ է, գյուղացի՞ դառնամ, և կամ թե հովի՞վ։ Ես գնում եմ իմ ճանապարհով ու չգիտեմ՝ կեղտի ու խայտառակության մե՞ջ եմ ընկել, թե լույսի և ուրախության։ Ա՛յս է ահա ցավը, որովհետև աշխարհում ամե՛ն ինչ առեղծված է։ Եվ երբ պատահում էր, որ ես սուզվում էի անառակության ամենախոր, ամենախոր անդունդը (և միայն այդ է պատահել իմ կյանքում), միշտ էլ այդ բանաստեղծությունն էի կարդում Ցերերայի ու մարդու մասին։ Ուղղո՞ւմ էր դա ինձ։ Երբե՛ք։ Որովհետև՝ ես Կարամազով եմ։ Որովհետև՝ եթե անդունդ եմ գլորվում արդեն, ապա հենց ուղղակի ընկնում եմ գլխիվայր ու կրունկներս վեր, և նույնիսկ գոհ եմ լինում, որ ընկնում եմ հենց այդ ստորացուցիչ դիրքով, և ինձ համար դա գեղեցիկ բան եմ համարում։ Եվ ահա, հենց այդ անդունդի խորքում հանկարծ սկսում եմ օրհներգությունը։ Թո՛ղ անիծյալ լինեմ, թո՛ղ ստոր լինեմ ու անարգ, բայց և համբուրե՛մ քղանցքն այն շուրջառի, որով իմ աստվածն է զգեստավորվում։ Թո՛ղ միաժամանակ հետևեմ սատանային, բայց և այնուամենայնիվ քո՛ զավակն եմ ես, ո՜վ տեր, ու սիրում եմ քեզ և զգում

այն բերկրանքը, առանց որի աշխարհը չի կարող կանգուն մնալ ու տևել։

Ջսպանակն է մայր բնության,
Բերկրանքն անվակն է հզոր,
Որ շարժում է հավերժության
Ժամացույցը ամեն օր։
Սաղմից հանում ծաղիկ ու ծիլ,
Ջդում աստղերը վերին,
Ալորտներն է շարժում անծիր,
Որ հասու չեն աչքերին։

Բերկրանք է լոկ ամեն էակ
Քամում կրծքից աշխարհի,
Եվ վարգեր են բուրում համակ
Ճամփին բարու և չարի։
Շնորհել է նա բարեկամ,
Համբույր, գինի կարմրագույն,
Հեշտանքի մեջ է ո՞րքն անգամ,
Քերովբե՞ն է երկնքում։

Բայց էլ բավակա՞ն են ոտանավորները։ Աչքերս արցունքով են լցված, և թույլ տուր, որ արտասվեմ։ Թող դա լինի հիմարություն, որի վրա բոլորն էլ կծիծաղեն, բայց դու չես ծիծաղի։ Ահա քո աչուկներն էլ են վառվում։ Բավական են ոտանավորները։ Ես հիմա ուզում եմ «որդերի» մասին ասել քեզ, ա՛յ հենց այն որդերի, միջատների, որոնց աստված օժտել է հեշտասիրությամբ.

Հեշտանքի մեջ է ո՞րքն անգամ։

Ես, եղբայր իմ, հենց այդ միջատն եմ ահա, և դա հատկապես իմ մասին է ասված։ Մենք բոլորս էլ, կարամազովներս, նույն բանն ենք, ու թեև դու հրեշտակ ես, բայց քո մեջ ևս ապրում է այդ միջատը և փոթորիկներ է հարուցում քո արյան մեջ։ Այո՛, փոթորիկներ են դրանք, որովհետև հեշտասիրությունը փոթորի՛կ է, ավելի՛ քան փոթորիկ։ Գեղեցկությունը սարսափելի և ահավոր մի բան է։ Սարսափելի է, որովհետև անվերծանելի է, և անհնար է վերծանել, որովհետև աստված միա՛յն առեղծվածներ է դրել մեր առաջ։ Այստեղ են եզրերը հանդիպում իրար, բոլոր հակասությունները միասին են այստեղ։ Ես չափազանց թերուս մի մարդ եմ, եղբայր իմ, բայց շատ եմ մտածել դրա

մասին։ Սոսկալի՜ շատ են գաղտնիքները։ Այս երկրի վրա խիստ բազմաթիվ առեղծվածներ են ճնշում մարդուն։ Լուծի՛ր ինչպես կարող ես և աշխատիր գլուխդ չկորցնել։ Գեղեցկությո՞ւն։ Այլև տանե՛լ չեմ կարող, երբ մեկն ու մեկը, նույնիսկ վեհ սրտի ու բարձր մտքի տեր մարդ լինելով, սկսում է սուրբ գեղեցկության իդեալից և հասնում սոդոմական իդեալին։ Ավելի ևս սարսափելի է, երբ մարդ սոդոմական իդեալն ունի իր հոգում և չի ժխտում նաև սուրբ գեղեցկության իդեալը, որով վառվում է նրա սիրտը և ճշմարտապես, ճշմարտապե՛ս է վառվում, ինչպես պատանեկության անարատ տարիներին։ Չէ՞, լայն է մարդը, նույնիսկ չափազանց լայն, ես ավելի նեղ կդարձնեի նրան։ Է՞հ, սատանա՞ն միայն կարող է գլուխ հանել այս բոլորից։ Այն, ինչ ամոթալի է թվում խելքին, սրտի համար գեղեցկություն է ծայրեծայր։ Սոդոմակա՞նն է գեղեցիկը։ Հավատա, որ մարդկանց մեծագույն մասի համար՝ հենց այդ սոդոմականի մեջ է գեղեցկությունը։ Գիտեի՞ր այս գաղտնիքը, թե չէ։ Ահավոր է այն, որ գեղեցկությունը ոչ միայն սարսափելի, այլև խորհրդավոր բան է։ Այստեղ սատանան աստծո դեմ է պայքարում, և մարդու սիրտն է ռազմադաշտը։ Բայց է՞հ, ամեն մարդ իր ցավից է խոսում։ Լսի՛ր, հիմա գանք բուն խնդրին։

IV

ՏԵՆՉԱՀՈՒՅԶ ՍՐՏԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ՝ ԱՆԵԿԴՈՏՆԵՐՈՎ

— Ես ցոփ կյանքով էի ապրում այնտեղ։ Առավոտյան հայրիկն ասաց, թե ես մի քանի հազար էի վատնում աղջիկներին գայթակղեցնելու համար։ Դա խողային բարբաջանք է, երբեք այդպիսի բան չէր լինում, իսկ եթե վատնում էի՝ ո՞չ թե հատկապես «այդ» բանի համար, որն առանց փողի էլ կարելի էր։ Ինձ համար փողը օժանդակ պարագա է, սրտի զեղում, մթնոլորտ։ Այսօր ա՛յս օրիորդն է իմ սրտի տերը, վաղը նրա փոխարեն՝ փողոցային մի աղջիկ։ Թե՛ մեկին եմ զվարճացնում, թե՛ մյուսին, փողը նետում եմ բուռերով՝ երաժշտություն, աղմուկ, գնչուհիներ։ Եթե պետք եղավ՝ նրա՞ն էլ եմ տալիս, որովհետև առնում են, ագահորեն առնում են, պետք է խոստովանել այդ, և գոհ են լինում ու շնորհակալ։ Ազնվական օրիորդները սիրում էին ինձ, ոչ բոլորը, բայց

պատահո՞ւմ էր, պատահում։ Իսկ ես նեղլիկ փողոցներն էի սիրում, խուլ ու մութ գռիհները՝ հրապարակի ետև — այնտեղ արկածների ես հանդիպում, անակնկալների, ոսկու բնակտորներ ես գտնում ցեխի մեջ։ Ես այլաբանորեն եմ խոսում, սիրելիս։ Իմ ապրած փոքր քաղաքում այդպիսի գռիհներ չկային ուղղակի իմաստով, սակայն բարոյական գռիհներ կային։ Եթե դու էլ ինձ նման մեկը լիներիր, կհասկանայիր, թե ինչ են նշանակում դրանք։ Սիրում էի անառակությունը, սիրում էի նաև անառակության ամոթը։ Սիրում էի դաժանությունը. ղե՛հ, փայտոջիլ չե՞մ միթե, զաղրելի միջատ չե՞մ։ Կարամա՛զով եմ, ասացինք արդեն։ Մի անգամ ահագին բազմությամբ զբոսապտույտի էինք գնացել՝ յոթ եռաձի սահնակներով։ Ձմեռ, մութ, և ես սկսեցի սեղմել կողքիս նստած մի աղջկա ձեռքը, ստիպեցի նրան համբուրվել ինձ հետ. խեղճ, անուշիկ, հեզ ու ամոթխած մի օրիորդ էր՝ աստիճանավոր պաշտոնյայի աղջիկ։ Թույլ տվեց, շատ բան թույլ տվեց մթան մեջ։ Խեղճը կարծում էր, թե հաջորդ օրը կգամ ու ձեռքը կխնդրեմ (ինձ հատկապես իբրև փեսացու էին գնահատում)։ Իսկ ես՝ այդ օրից հետո ոչ մի խոսք նրա հետ, ոչ մի ծպտուն, ամբողջ հինգ ամիս։ Տեսնում էի, թե ինչպես էր ինձ հետևում դահլիճի անկյունից, երբ պատահում էր, որ պարում էին (իսկ մեզ մոտ շարունակ պարում են ու պարում), տեսնում էի, թե ինչպես էին վառվում նրա աչուկները, վառվում հեզ զայրույթի կրակով։ Այդ խաղը զվարճություն էր պատճառում միայն իմ միջատային հեշտասիրությանը, որ ես փայփայում էի իմ մեջ։ Հինգ ամիս հետո նա ամուսնացավ մի պաշտոնյայի հետ ու մեկնեց քաղաքից... բարկանալով ու գուցե դեռ սիրելով ինձ։ Հիմա նրանք երջանիկ են ապրում։ Նկատի ունեցիր, որ ես ոչ ոքի չեմ ասել, չեմ վարկաբեկել նրան։ Թեև ստոր ցանկություններով մարդ եմ ու սիրում եմ ստորությունը, բայց անազնիվ չեմ։ Կարմրում ես, աչքերդ փայլեցին։ Բավական է այլևս գլուխդ ցավեցնեմ այս աղտեղություններով։ Եվ այս բոլորը դեռ ոչի՞նչ, պոլզրկոկյան մանր ծաղիկներ են, թեև դաժան միջատն աճում էր արդեն, աճում ու մեծանում էր իմ հոգում։ Հիշողությունների մի ամբողջ ալբոմ է դա, սիրելիս։ Աստված երկար կյանք տա նրանց՝ անուշիկներին։ Ես սիրում էի կապերը խզել առանց գժտվելու։ Եվ երբեք չէի մատնում, երբեք չեմ վարկաբեկել նրանցից որևէ մեկին։ Բայց բավական է։ Ինչ է, կարծում ես՝ միայն այս կեղ-

տի՞ համար կանչեցի քեզ այստեղ։ Ոչ, ավելի հետաքրքրական բան եմ պատմելու քեզ։ Բայց մի՛ զարմանա, որ չեմ ամաչում քեզնից ու կարծես ուրախ եմ նույնիսկ, որ խոսում եմ այս բոլորի մասին։

— Այդպես ես ասում, որովհետև կարմրեցի,— նկատեց հանկարծ Ալյոշան։— Քո խոսքերից չէ, որ կարմրեցի, ոչ էլ քո արարքների համար, այլ այն պատճառով, որ ինքս էլ ճիշտ քեզ նման եմ։

— Դո՞ւ է՛, շատ հեռու գնացիր։

— Ոչ, հեռու չգնացի,— եռանդագին ասաց Ալյոշան։ (Երևի այդ միտքը վաղուց էր զբաղեցնում նրան)։— Նույն սանդուղքն է։ Ես կանգնած եմ ամենացածր աստիճանին, իսկ դու՝ վերևում, տասներեքերորդ աստիճանի մոտ մի տեղ։ Ես այսպես եմ նայում այդ հարցին, բայց նույն բանն է, բացարձակորեն միատեսակ երևույթներ են։ Առաջին աստիճանին ոտք դնողը, միևնույն է, անպայման կհասնի նաև վերի աստիճաններին։

— Ուրեմն բոլորովին պետք չէ՞ ոտք դնել։

— Ով կարող է՝ թող բոլորովին ոտք չդնի։

— Իսկ դու կարո՞ղ ես։

— Կարծում եմ՝ ոչ։

— Լռիր, Ալյոշա, լռիր, սիրելիս, ուզում եմ ձեռքդ համբուրել, այնպե՞ս հուզեց ինձ քո ասածը։ Այդ անգամ Գրուշենկան լավ է ճանաչում տղամարդկանց, մի անգամ ինձ ասաց, թե հում-հում ուտելու է քեզ մի օր։ Լավ, լավ, փակում եմ բերանս։ Ճանճերով ապականված այս նողկալի դաշտից անցնենք իմ ողբերգությանը, որ նույնպես ճանճերով, այսինքն ամեն տեսակի ստորությամբ ապականված մի դաշտ է։ Գիտե՞ս ինչն է խնդիրը։ Ծերուկը թեև փչեց, թե ես գայթակղեցնում էի անմեղներին, բայց ըստ էության այդպիսի մի բանի հետևանք էր իմ ողբերգությունը, չնայած որ մեկ անգամ եղավ այդ բանը, այն էլ արդյունքի չհասավ։ Ծերուկը, որ ինձ կշտամբում էր իր փչոցներով, հենց այդ իրական դեպքից լուր չունի. ոչ ոքի չեմ պատմել երբեք, անշուշտ բացառությամբ Իվանի, առաջինը քեզ եմ պատմելու հիմա։ Իվանը ամեն ինչ գիտե։ Քեզնից առաջ գիտե, վաղուց։ Բայց Իվանը գերեզման է։

— Իվանը գերեզմա՞ն է։

— Այո։

Ալյոշան լռում էր չափազանց ուշադիր։

— Թեև այդ գծային գումարտակում ես պրապորշչիկ էի, բայց այնուամենայնիվ հսկողության տակ էի կարծես՝ աքսորականի նման մի բան։ Իսկ այդ խղճուկ քաղաքի մարդիկ սոսկալի լավ էին ընդունում ինձ։ Ափերով փող էի ծախսում, կարծում էին, թե ես հարուստ եմ, ինքս էլ այդպես էի կարծում։ Բայց թերևս մի ուրիշ բանով էլ էի գրավել նրանց սիրտը։ Թեև գլուխներն էին շարժում, սակայն, ճիշտն ասած, ինձ սիրում էին։ Հանկարծ իմ փոխգնդապետը, որ ծեր էր արդեն, սկսեց հակակրանքով վերաբերվել ինձ։ Բծախնդրություն էր անում իմ նկատմամբ, բայց ես թիկունք ունեի և, բացի այդ, ամբողջ քաղաքն էր իմ կողմը բռնում, շատ էլ չէր կարելի կպչել իմ օձիքից։ Ինքս էլ մեղավոր էի, պատշաճ հարգանքը չէի մատուցում նրան, գիտմամբ։ Հպարտություն էի անում։ Այդ կամակոր ծերուկը, որ շատ էլ լավ մարդ էր, շափազանց բարի ու հյուրասեր, երկու կին էր ունեցել, երկուսն էլ մահացել էին։ Առաջինը համեստ ընտանիքից էր եղել և իր նման համեստ մի աղջիկ էր թողել նրան։ Իմ ժամանակ այս աղջիկն արդեն քսանչորս տարեկան մի օրիորդ էր և ապրում էր հոր ու մորաքրոջ հետ։ Մորաքույրը լուռումունջ մի համեստություն էր, իսկ ինքը, այսինքն փոխգնդապետի այդ մեծ աղջիկը՝ ժիր համեստություն։ Երբ հիշում եմ մեկին՝ սիրում եմ լավ խոսքեր ասել. երբեք, սիրելիս, երբեք չեմ տեսել կանացի ավելի հիանալի մի բնավորություն, քան այդ օրիորդինը, Ագաֆյա էր անունը, պատկերացրու, Ագաֆյա Իվանովնա։ Եվ տգեղ էլ չէր, բնավ տգեղ չէր. ռուսական ճաշակի աղջիկ՝ բարձրահասակ, պնդակազմ, մարմնեղ, աչքերը գեղեցիկ, թեև դեմքը, ասենք, մի քիչ կոպիտ։ Չէր ամուսնացել, թեպետ երկու հոգի խնամախոսել էին, մերժել էր նրանց, բայց մնացել էր նույն ուրախ աղջիկը։ Մտերմացա հեռը՝ ոչ թե ա՛յդ ձևով, ո՜չ, մաքուր էին մեր հարաբերությունները, բարեկամներ էինք պարզապես։ Ես հաճախ եմ կանանց հետ այդպիսի մտերմություն ունեցել՝ կատարելապես անմեղ, բարեկամական։ Այնպիսի՜ վրանքաց բաներ էի դուրս տալիս նրա մոտ, որ օ՜ օ՜հ... իսկ նա ծիծաղում էր միայն։ Շատ կանայք սիրում են այդպիսի վրանքաց խոսակցությունները, նկատի ունեցիր, իսկ նա, ի վերա այսր ամենայնի, կույս աղջիկ էր, և դա շատ էր զվարճացնում ինձ։ Եվ դեռ մի բան էլ կա. երբեք չէիր կարող ասել, որ նա աղնվական օրիորդ է։ Ինքն ու

մորաքույրը հոր մոտ ապրում էին մի տեսակ կամավոր խոնարհությամբ, չէին ձգտում հավասարվել բարձր հասարակության մյուս անդամներին։ Բոլորը սիրում էին նրան և կարիքն էին զգում, որովհետև աչքի ընկնող դերձակուհի էր. կարելու տաղանդ ուներ, մատուցած ծառայության դիմաց փող չէր առնում, գործն անում էր հաճոյակատար լինելու համար, բայց երբ նվեր էին տալիս՝ չէր մերժում։ Իսկ փոխգնդապետը. բոլորովին ուրիշ բան էր նա։ Մեր շրջանի առաջնակարգ դեմքերից մեկն էր փոխգնդապետը։ Փարթամ կյանք էր վարում, դռները բացում էր ամբողջ քաղաքի առաջ, ճոխ ընթրիքներ, պարեր։ Երբ ես նոր էի գնացել այնտեղ՝ գումարտակում ծառայելու, ամբողջ քաղաքն սկսեց խոսել այն մասին, թե շուտով մայրաքաղաքից գալու է փոխգնդապետի երկրորդ դուստրը՝ մի չքնաղ գեղեցկուհի, որ իբր թե հենց նոր է ավարտել մայրաքաղաքի արիստոկրատական մի հաստատության դասընթացը։ Այդ երկրորդ դուստրը հենց այս Կատերինա Իվանովնան է ահա, և սա արդեն փոխգնդապետի երկրորդ կնոջից է։ Իսկ այդ երկրորդ կինը, հանգուցյալը, ազնվականուհի է եղել՝ մի մեծ գեներալի քնտանիքից, թեև ստույգ իմացել եմ, որ նույնպես դրամական օժիտ չի բերել փոխգնդապետին։ Այսինքն պարզապես ազգականի կապեր է ունեցել, և այդքան. գուցե ինչ-որ հույսեր, բայց առձեռն՝ ոչինչ։ Եվ սակայն, երբ ուսումնական օրիորդը եկավ (որպես հյուր, ոչ թե մշտապես մնալու), ամբողջ քաղաքը կարծես կենդանություն ստացավ։ Մեր ամենից ավելի ականավոր տիկնայք՝ երկու նորին գերազանցություններ, մի գնդապետի կին, ու նաև բոլորը, բոլորը, նրանց հետևելով, անմիջապես գործի անցան, սկսեցին իրար ձեռքից խլել, պատվել ու զվարճացնել նրան, պարահանդեսների և զբոսապտույտների թագուհի կարգեցին, կենդանի պատկերներ ներկայացրին՝ ի նպաստ ինչ-որ տնային դաստիարակչուհիների։ Ես անտարբեր էի մնում, շարունակում էի իմ ցուի կյանքը և հենց այդ ժամանակ այնպիսի մի խաղ խաղացի, որ ամբողջ քաղաքը թնդաց։ Մեկ էլ տեսնեմ, մի անգամ նա ինձ չափում է հայացքով, մարտկոցի հրամանատարի տանը, բայց չմոտեցա, այսինքն թե՝ մի մեծ բան չէ քեզ հետ ծանոթանալը։ Շատ չանցած, նորից մի երեկույթի ժամանակ, արդեն ինքս մոտեցա և սկսեցի խոսել, իսկ նա հազիվ նայեց ինձ, արհամարհանքով շարժեց շրթունքները։ Հը՜, սպասի՜ր, մտածեցի, վրեժս

կառնեմ քեզնից։ Այն ժամանակ, շատ առիթներով, սոսկալի գռեհիկի մեկն էի դառնում, և ինքս էլ զգում էի այդ։ Իսկ այս դեպքում զգում էի մանավանդ, որ «Կատենկան» ոչ թե հենց պարզապես անմեղ ուսումնական օրիորդ է, այլ նկարագրի տեր մի անձնավորություն, հպարտ ու իրոք առաքինի, առավել ևս՝ խելացի ու զարգացած, իսկ ես այդ արժանիքներից ոչ մեկն ունեի, ոչ էլ մյուսը։ Կարծում ես՝ ձե՞ռքն էի ուզում խնդրել։ Բնա՜վ երբեք։ Ուզում էի պարզապես վրեժ լուծել այն պատճառով, որ ես այդպիսի մի կորիճ եմ, իսկ նա չի զգում այդ բանը։ Մինչ այդ՝ շարունակում էի իմ կերուխումներն ու ջարդել-փշրելը։ Վերջապես փոխգնդապետն ինձ երեք օր կալանքի տակ առավ։ Հենց այդ ժամանակ էր ահա, որ հայրիկը վեց հազար ռուբլի ուղարկեց ինձ՝ ի պատասխան իմ հրաժարագրի, որով կատարելապես ձեռք էի քաշում ամեն ինչից, այսինքն իբր թե մեր «հաշիվները փակված են» և այլևս ոչ մի բան չեմ պահանջելու։ Ոչինչ չէի հասկանում այն ժամանակ։ Մինչև իմ այստեղ գալը, եղբայր, Նույնիսկ մինչև այս վերջին օրերը և գուցե նույնիսկ մինչև այսօր՝ ոչինչ չէի հասկանում հայրիկի հետ իմ ունեցած բոլոր այդ դրամական վեճերից։ Բայց թողնենք այդ անիծյա՛լ հարցը, հե՛տո կխոսենք դրա մասին։ Ուրեմն, հենց նոր էի ստացել այդ վեց հազարը, երբ հանկարծ իմ մի բարեկամից նամակ եկավ ու ես կանխօրոք իմացա մի բան, որ չափազանց հետաքրքրեց ինձ. պարզվեց, որ մեր փոխգնդապետից դժգոհ են, կասկածում են, թե խառն են նրա գործերը, մի խոսքով՝ թշնամիները պատրաստվում են ապուրը եփելու։ Եվ ճիշտ որ, եկավ դիվիզիայի հրամանատարը և զորս դու պատվիրեցեր՝ մի լավ շշպռեց նրան։ Հետո, շատ չանցած, հրաման եկավ, որ հրաժարական տա։ Հիմա քեզ չեմ պատմի այդ դեպքի մանրամասնությունները, իրոք նա թշնամիներ ուներ։ Ասեմ միայն, որ քաղաքում հանկարծ չափազանց սառը սկսեցին վերաբերվել նրան ու ամբողջ ընտանիքին, կարծես բոլորն էլ միանգամից երես դարձրին։ Եվ ահա այդ ժամանակ իմ առաջին խայծը գցեցի։ Հանդիպելով Ագաֆյա Իվանովնային, որի հետ միշտ պահպանում էի բարեկամությունը, ասացի. «Գիտե՞ք, ձեր հայրիկը չորս հազար հինգ հարյուր ռուբլի պետական փողի պակսորդ ունի»։— «Ինչպե՞ս թե։ Ինչո՞ւ եք այդպես ասում։ Վերջերս գեներալն էր այստեղ, և ամեն ինչ կարգին էր»։— «Այն ժամանակ կարգին էր, իսկ հիմա՝ ոչ»։

Սոսկալի վախեցավ։ «Մի՛ վախեցնեք,— ասաց,— խնդրում եմ, ումի՞ց լսեցիք»։— «Մի՛ անհանգստանաք,— ասացի,— ոչ ոքի չեմ հայտնի, և դուք գիտեք, որ այս հարցում ես գերեզմանի պես գաղտնապահ եմ։ Միայն թե՝ ուզում էի նույն այս հարցի առնչությամբ մի բան էլ ավելացնել, այսպես ասած «հնարավոր դեպքերը» նկատի ունենալով. երբ ձեր հայրիկից պահանջեն այդ չորս հազար հինգ հարյուրը և պարզվի, որ չունի, այդ դեպքում, փոխանակ թույլ տալու, որ նա դատի տակ ընկնի, հետո էլ իր ծեր տարիքին հասարակ զինվոր դառնա, ավելի լավ կլինի, եթե ձեր ուսումնական օրիորդին թաքուն ուղարկեք ինձ մոտ. ես հենց նոր փող եմ ստացել, ճիշտ չորս հազար էլ կտամ ձեռքը, եթե ուզում եք, և սրբությամբ կպահեմ գաղտնիքը»։— «Ա՜խ, ինչ սրիկա՜ եք,— ասաց (հենց այդպես էլ ասաց),— ի՜նչ չար մարդ եք, սրիկա՜։ Ինչպե՜ս եք համարձակվում»։ Հեռացավ սոսկալի զայրացած, իսկ ես մի անգամ էլ գոռացի ետևից, թե գաղտնիքը կպահվի սրբությամբ և անխախտ։ Նախօրոք ասեմ, որ այդ երկու կնանիք, այսինքն Ագաֆյան ու իր մորաքույրը, այս ամբողջ պատմության մեջ հրեշտակի պես մաքուր պահեցին իրենց. անկեղծորեն պաշտում էին իրենց այդ քրոջը՝ այդ գոռող Կատյային, ներքևից էին նայում նրան, աղախիններն էին դարձել... Բայց Ագաֆյան հենց անմիջապես նրա ձեռքն է տալիս իմ գցած խայծը, այսինքն մեր խոսակցությունը հայտնում է նրան։ Հետագայում այդ ամբողջը հինգ մատներիս պես իմացա։ Մի խոսքով, չի թաքցնում իմ ասածը։ Է՜հ, ինձ էլ ա՛յդ էր պետք անշուշտ։

Հանկարծ նոր մայորը եկավ՝ գումարտակն ընդունելու։ Ընդունեց։ Ձեր փոխգնդապետը հիվանդացավ հանկարծ, չէր կարողանում տեղից շարժվել, երկու օր տանը նստեց, պետական գումարը չհանձնեց։ Մեր բժիշկ Կրավչենկոն հավատացնում էր, որ նա իրոք հիվանդ է։ Բայց մի գաղտնիք կար, որ ես գիտեի ստույգ աղբյուրից, նույնիսկ վաղուց գիտեի. ամեն անգամ հրամանատարության ստուգումից հետո, գումարն անհետանում էր որոշ ժամանակով, և այդպես՝ չորս տարի շարունակ։ Նա այդ գումարը փոխ էր տալիս մի շատ վստահելի մարդու՝ մեր քաղաքի առևտրական Տրիֆոնովին, որ այրի ծերունի էր, մեծ մորուքով ու ոսկեշրջանակ ակնոցով։ Սա գնում էր տոնավաճառ, անում էր իր շահաբեր գործարքը և անմիջապես փողը լրիվ վերադարձնում էր փոխգնդապետին,

հետն էլ մի նվեր էր բերում տոնավաճառից, իսկ նվերի հետ՝ նաև տոկոսները։ Բայց այս անգամ (ես այդ բոլորը շատ պատահաբար իմացա Տրիֆոնովի որդուց, որ նրա ժառանգն էր՝ փսլնքոտ մի պատանի, աշխարհի ստեղծած ամենից ավելի անառակ տղաներից մեկը), այս անգամ, ասում եմ, Տրիֆոնովը տոնավաճառից գալիս է ու ոչինչ չի վերադարձնում։ Փոխգնդապետը վազում է նրա մոտ։ «Ես ոչինչ չեմ ստացել ձեզնից երբևիցե, չէի էլ կարող ստանալ»։ Ահա պատասխանը։ Է՛հ, մեր փոխգնդապետն այնպես էլ մնում է իր տանը նստած, անձեռոց է փաթաթում գլխին և երեքն էլ նրա գագաթին սառույց են դնում։ Հանկարծ սուրհանդակ է գալիս՝ գրանցման գիրքն ու հրամանը ձեռքին. «Հանձնել պետական գումարն անմիջապես, անհապաղ, երկու ժամից»։ Ստորագրում է նա, այդ ստորագրությունը տեսա հետո գրքում,— ստորագրում է, վեր է կենում, ասում է, թե գնում է իր համազգեստը հագնելու, վազում է իր ննջասենյակը, վերցնում իր երկփողանի որսորդական հրացանը, լցնում, զինվորական մի փամփուշտ է խցկում մեջը, կոշիկը հանում աջ ոտքից, կուրծքը դեմ է տալիս հրացանի փողին և սկսում բութակը փնտրել ոտքով։ Իսկ Ագաֆյան կասկածում էր արդեն, հիշել էր իմ այն խոսքերը։ Թաքուն մոտենում է և ճիշտ ժամանակին նայում հոր ննջասենյակը. ներս է վազում, ետևից նետվում է նրա վրա, գրկում, և հանկարծ այդ վայրկյանին հրացանը պայթում է դեպի վեր, գընդակը կպչում է առաստաղին, ոչ ոքի չի վիրավորում։ Ներս են վազում մյուսները, բռնում են նրան, խլում հրացանը, կախվում թևերից... Հետագայում ես մանրամասնորեն իմացա այդ բոլորը։ Իսկ այդ ժամին տանն էի, մթնշաղն էր ընկել, և հենց ուզում էի դուրս գալ։ Հագնվել էի արդեն, սանրվել, օծանելիք էի ցանել թաշկինակիս և գլխարկս վերցրել էի, երբ հանկարծ դուռը բացվեց ու... իմ առաջ, իմ սենյակում կանգնեց Կատերինա Իվանովնան։

Ի՜նչ տարօրինակ բաներ են լինում երբեմն։ Փողոցում ոչ ոք չէր նկատել նրա գալը, և այդպես էլ աննկատելի մնաց այդ դեպքը քաղաքում։ Իսկ ես վարձով էի ապրում երկու խիստ զառամյալ պառավների տանը, և հենց նրանք էլ ինձ սպասարկում էին. հարգալից կանայք էին, ամեն հարցում հնազանդվում էին ինձ, և հետագայում երկուսն էլ, իմ հրամանով, լուռ մնացին երկաթե պահարանների նմանվ ինչ

իհարկե, անմիջապես հասկացա, թե ինչու էր նա եկել։ Մտավ ու շեշտակի նայեց ինձ, սև աչքերի վճռական ու նույնիսկ հանդուգն հայացքով, բայց տեսա, որ շրթունքների վրա ու բերնի շուրջ անվճռականություն կար։

— Քույրս ասաց, որ դուք չորս հազար հինգ հարյուր ռուբլի կտաք, եթե... ինքս գամ ձեզ մոտ... փողն առնելու։ Եկա... տվե՛ք փողը...— լռիմացավ նա, շնչասպառ եղավ, վախեցավ, ձայնը կտրվեց, իսկ շրթունքների ծայրերն ու բերանի շուրջ գծերն սկսեցին դողալ։— Ալյոշկա, լսո՞ւմ ես, թե քնում։

— Միտյա, գիտեմ, որ դու ամբողջ ճշմարտությունը կասես,-- պատասխանեց Ալյոշան հուզված։

— Այո, հենց ճշմարտությունը կասեմ։ Եթե ամբողջ ճշմարտությունն ես ուզում, ուրեմն ահա թե ինչպես եղավ։ Ջեմ խնայելու ինքս ինձ։ Իմ առաջին, անմիջական ցանկությունը... կարամազովյան էր։ Ժամանակին, սիրելիս, մի մորմ է խայթել ինձ, երկու շաբաթ պառկել եմ ջերմությամբ։ Այդպես էլ ահա, այդ պահին հանկարծ զգացի, որ մի մորմ խայթեց իմ սիրտը՝ մի զազրելի միջատ, հասկանո՞ւմ ես։ Ոտից գլուխ չափեցի նրան հայացքով։ Տեսե՞լ ես նրան։ Գեղեցկուհի է, չէ՞։ Բայց այդ րոպեին մի ուրիշ գեղեցկություն ուներ նա։ Գեղեցիկ էր իր ազնվությամբ, այնինչ ես սրիկա էի, վսեմ էր իր վեհանձնությամբ ու հոր համար կատարած զոհաբերությամբ, իսկ ես փայտոջիլ էի։ Եվ ահա ուրեմն, նա իր ամբողջ, ամբո՞ղջ էությամբ, հոգով ու մարմնով, լիովին կախված էր ինձնից՝ մի փայտոջիլից ու սրիկայից։ Օղակի մեջ էր ընկել։ Պարզ ասեմ քեզ՝ այդ ցանկությունը, մորմային այդ թունոտ ցանկությունն այնպես ճանկեց ինձ ներսից, որ քիչ մնաց սիրտս արյունաքամ լիներ տոչորվելուց։ Թվում էր, թե այլևս ոչ մի կերպ չէր կարելի պայքարել դրա դեմ. ասես հենց փայտոջիլի նման պետք է վարվեի, չար ու թունոտ մորմի նման, անխղճորեն ուղղակի... Նույնիսկ շունչս կտրվեց։ Հասկանո՞ւմ ես, հաջորդ օրն իսկ, անշուշտ, պետք է գնայի ձեռքը խնդրելու, որպեսզի այսպես ասած ազնվագույն ձևով վերջանար այդ ամբողջը, և որպեսզի ոչ ոք չիմանար ու առիթ էլ չունենար իմանալու։ Որովհետև՝ ես ստոր ցանկություններով մարդ եմ թեև, բայց ազնիվ եմ։ Եվ ահա հանկարծ, նույն այդ վայրկյանին, կարծես մեկը փսփսաց ականջիս. «Բայց ախր վաղն լեթ, երբ գնաս ձեռքը խնդրելու, այսպիսի աղջիկը

չի էլ ուզենա տեսնել քո երեսը, կհրամայի կառապանին՝ բակից դուրս շպրտել քեզ։ Այսինքն թե՝ գնա՛, վարկաբեկի՛ր ամբողջ քաղաքով մեկ, չե՛մ վախենում քեզնից»։ Նայեցի օրիորդին՝ ներքին ձայնս ինձ չէր խաբում. ճի՛շտ այդպես, ա՛յդպես էլ կլինի անշուշտ։ Արդեն այդ րոպեին կարելի էր դատել նրա դեմքից, որ վզակոթիս տալով կվռնդեն ինձ։ Զայրույթը բորբոքվեց իմ մեջ, ուզեցի ամենաստոր, խոզային, փերեզակային մի խաղ խաղալ գլխին. մի էսպես հեգնանքով նայել երեսին, և տեղն ու տեղը, քանի կանգնած է առաջս, շշպռել նրան այնպիսի մի շեշտով, որով փերեզակը միայն կարող է ասել.

— Ինչպե՞ս, շո՞րս հազա՞ր։ Բայց ես կատակ եմ արել, իսկ դուք՝ ի՞նչ է։ Շա՜տ-շատ դյուրավահատ եք ձեր հաշիվների մեջ, օրիո՜րդ։ Մի երկու հարյուր՝ խնդրե՜մ, նույնիսկ հաճույքով ու սիրով, բայց չորս հազա՞ր։ Դա այն գումարը չէ, որ քամուն տաս այսպիսի մի թեթևամտության համար, օրիո՜րդ։ Իզուր եք բարեհաճել նեղություն քաշել։

Այսպիսով ամեն ինչ կկորցնեի անշուշտ, նա կփախչերկգնար, բայց, գիտե՞ս ինչ, դա կլիներ մի չտեսնված, դժոխային վրիժառություն, մնացյալ բոլոր բաների տեղը կբռներ։ Թեկուզ հետո իմ ամբողջ կյանքում ոռնայի զղջալուց, բայց այդ վայրկյանին ուզում էի այդ խաղը խաղալ նրա գլխին։ Հավատո՞ւմ ես, երբեք չի պատահել, որ այդպիսի րոպեին ես ատելությամբ նայեմ որևէ կնոջ, երբե՛ք չի պատահել, ո՛չ մի կնոջ նկատմամբ։ Եվ ահա, երդվում եմ խաչով, երեք կամ հինգ վայրկյան սոսկալի ատելությամբ նայեցի ա՛յս մեկին՝ հենց այն ատելությամբ, որից մազաչափ միայն հեռու է սերը, ամենախելագար սերը։ Մոտեցա լուսամուտին, ճակատս դրի սառած ապակուն, և հիշում եմ, որ սառույցը կրակի պես այրեց իմ ճակատը։ Երկար չպահեցի նրան, մի՛ անհանգստանա։ Շուռ եկա, մոտեցա սեղանին, բացեցի գզրոցը և վերցրի հինգհազարանոց ու հինգտոկոսանի անանուն մի բանկոտոմս (ֆրանսերեն բառարանի մեջ էի դրել)։ Հետո լռելյայն ցույց տվեցի բանկոտոմսը նրան, ծալեցի, հանձնեցի ձեռքը, ինքս բացեցի դուռը դեպի միջանցք և, մի քայլ ետ քաշվելով, խորունկ խոնարհություն արեցի, ամենահարգալից, ամենատրպավորիչ խոնարհությունը, հավատա՛ ինձ։ Նա ամբողջ մարմնով ցնցվեց, հայացքը մի վայրկյան սևեռեց ինձ վրա, սարսափելի գունատվեց, ուղղակի պատի գույն ստացավ և հանկարծ, նույնպես առանց մի բառ ասելու, ոչ թե թափով, այլ այնպես մեղմորեն, հանգիստ ու խորունկ խոնարհվեց ամբողջ մարմնով, ուղղակի ոտքերիս առաջ, ոչ թե ուսանողուհու նման, այլ ռուսական ձևով՝ ճակատը գետնին։ Վեր թռավ ու փախավ։ Այդ րոպեին սուսերակալը մեջքիս էր։ Երբ նա դուրս վազեց, ես քաշեցի սուսերը և ուզում էի տեղն ու տեղը խոցել ինքս ինձ. թե ինչո՞ւ, ինքս էլ չգիտեմ։ Սոսկալի հիմարություն էր անշուշտ, բայց երևի ցնծությունն էր պատճառը։ Հասկանո՞ւմ ես արդյոք, որ լինում են ցնծության պահեր, երբ մարդ կարող է սպանել ինքն իրեն։ Բայց ես չսպանեցի ինքս ինձ, այլ միայն համբուրեցի սուսերը և նորից դրեցի պատյանի մեջ,— թեև այս մի բանը կարող էի և չասել քեզ։ Եվ կարծեմ նույնիսկ, բոլոր այս մաքառումների մասին պատմելով հիմա, մի քիչ խտացրի գույները, որպեսզի գովեմ ինքս ինձ։ Բայց թո՛ղ այդպես լինի, այդպե՛ս, և գրո՛ղը տանի մարդկային սրտի բոլոր լրտեսներին։ Ա՛յս էր ահա ամբողջ այդ «դեպքը» իմ և Կատերինա Իվանովնայի միջև։ Հիմա ուրեմն Իվանը գիտե դրա մասին, մեկ էլ դու։ Ուրիշ ո՛չ ոք։

Դմիտրի Ֆյոդորովիչը վերկացավ, մի քանի քայլ արեց խռովահույզ, թաշկինակը հանեց, սրբեց ճակատի քրտինքը, հետո նորից նստեց, բայց ոչ թե նախկին տեղը, այլ հանդիպակաց նստարանին՝ մյուս պատի տակ, ուստի Ալյոշան ստիպված եղավ կտրուկ դառնալ նրա կողմը։

V

ՏԵՆՉԱՀՈՒՅԶ ՍՐՏԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ՝ «ԿՐՈՒՆԿՆԵՐԸ ՎԵՐ»

— Հիմա,— ասաց Ալյոշան,— գիտեմ այդ խնդրի առաջին կեսը։

— Առաջին կեսը հասկանում ես. դա դրամա է, և դա կատարվեց այնտեղ։ Իսկ երկրորդ կեսը ողբերգություն է, որն այստեղ է կատարվելու։

— Մինչև հիմա ոչինչ չեմ հասկանում երկրորդ կեսից,— ասաց Ալյոշան։

— Իսկ ե՞ս։ Ես հասկանո՞ւմ եմ միթե։

— Սպասիր, Դմիտրի, այստեղ մի կարևոր բան կա։ Ասա ինձ՝ դու նշանված ես, չէ՞, և դեռ նշանվա՞ծ ես մնում։

— Անմիջապես չնշանվեցինք, այլ այդ դեպքից երեք ամիս հետո միայն։ Իսկ այդ ժամանակ, այսինքն դեպքի հաջորդ օրը, ես ինձ ասացի, թե միջադեպն սպառված է, վերջացած, շարունակություն չի լինելու։ Գնալ ու ձեռքը խնդրելն ինձ ստորություն էր թվում։ Նա էլ ամբողջ վեց շաբաթ, երբ տակավին ապրում էր մեր քաղաքում, ոչ մի ծպտուն չհանեց իր կողմից։ Ճիշտ է, միայն մի առիթով զգացնել տվեց իր գոյությունը. իր այցելության հաջորդ օրը նրանց աղախինը եկավ ինձ մոտ և, բերանն անգամ չբացելով, շտապ մի ծրար հանձնեց ու գնաց։ Ծրարի վրա հասցե՝ այսինչին։ Բացում եմ՝ հինգհազարանոց բանկոտոմսի մնացորդը։ Չորս հազար հինգ հարյուր ռուբլի էր հարկավոր միայն, բայց հինգհազարանոց բանկոտոմսը վաճառելիս երկու հարյուր ռուբլու և մի քիչ էլ ավելի կորուստ էր եղել։ Կարծեմ ինձ երկու հարյուր վաթսուն ռուբլի էր ուղարկել ընդամենը, լավ չեմ հիշում, և միայն փողն էր՝ ո՛չ մի երկտող, ո՛չ մի խոսք, ո՛չ մի բացատրություն։ Մատիտով արած որևէ մի նշան փնտրեցի ծրարի մեջ՝ ոչ-չի՛նչ չկար։ Է՛հ, մնացած փողով դեռ այնպիսի կերուխումներ սարքեցի, որ վերջապես նոր մայրն էլ ստիպված եղավ ինձ նկատողություն անել։ Իսկ փոխգնդապետը, դե՛հ, հանձնեց պետական գումարը՝ բարեհաջող կերպով և ի զարմանս բոլորի, որովհետև արդեն ոչ ոք չէր ենթադրում, թե նա կարող է լրիվ գումարն ունենալ։ Հանձնեց, բայց և շուտով հիվանդացավ, անկողին ընկավ, պառկեց երեք շաբաթ, հետո հանկարծ ուղեղի կակղում ունեցավ և հինգ օրից վախճանվեց։ Թաղեցին զինվորական շուքով, դեռ չէր հասցրել հրաժարականն ստանալ։ Կատերինա Իվանովնան, քույրն ու մորաքույրը հուղարկավորությունից տասը օր հետո գնացին Մոսկվա։ Եվ ահա, նրանց մեկնելուց առաջ միայն, հենց ճանապարհ ընկնելու օրը (ես նրանց չտեսա և ողջերթի չգնացի), մի մանրիկ, կապույտ ծրար եմ ստանում՝ ժանեկավոր մի թղթիկ, որի վրա մատիտով գրված մի տող կար, միայն մի տող. «Ես կգրեմ ձեզ, սպասեցեք։ Կ.»։ Այդ էր ամբողջը։

Հիմա երկու խոսքով բացատրեմ քեզ շարունակությունը։ Մոսկվայում նրանց բախտը շուտ եկավ կայծակի արագությամբ և անսպասելիորեն, ինչպես լինում է արաբական հեքիաթներում։ Այդ գեներալի այրին, այսինքն Կատյայի ամենակարևոր ազգականուհին, հանկարծ միանգամից կորցնում

է իր երկու մերձավորագույն ժառանգներին՝ երկու մերձավորագույն զարմուհիներին. երկուսն էլ նույն շաբաթվա ընթացքում մահանում են ծաղկախտից։ Վշտահար պառավն ուրախությամբ է ընդունում Կատյային՝ որպես իր հարազատ աղջկան, որպես իր փրկության աստղը, կառչում է նրանից, անմիջապես փոխում է կտակը նրա օգտին։ Բայց կտակն ապագայի համար էր, իսկ առայժմ ութսուն հազար ռուբլի է տալիս ձեռքը, ահա՛ քեզ օժիտ, ասում է, սրտիդ ուզածն արա այդ փողով։ Հիստերիկ կին է, հետո ես առիթ ունեցա դիտելու նրան Մոսկվայում։ Է՛հ ուրեմն, մի օր էլ հանկարծ չորս հազար հինգ հարյուր ռուբլի եմ ստանում փոստով. նախ տարակուսանքի մեջ ընկա իհարկե, լեզուս կապվեց զարմանքից։ Երեք օր հետո եկավ նաև խոստացված նամակը։ Հիմա էլ մոտս է այդ նամակը, միշտ մոտս եմ պահում, մեռնելուս վայրկյանին էլ մոտս կլինի. ուզո՞ւմ ես՝ ցույց տամ։ Անպայման կարդա. առաջարկում է իմ հարսնացուն դառնալ, ինքն է իր ձեռքը առաջարկում, «սիրում եմ, ասում է, խենթի պես սիրում, թեկուզ և դուք չսիրեք ինձ՝ հոգ չէ, միայն թե եղեք իմ ամուսինը։ Մի՛ վախենաք, ոչ մի կերպ չեմ կաշկանդի ձեզ, կլինեմ ձեր կահ-կարասին, կլինեմ այն գորգը, որի վրա քայլում եք... Ուզում եմ հավերժորեն սիրել ձեզ, ուզում եմ փրկել ձեզ ձեր սեփական անձից...»։ Ալյոշա, ես նույնիսկ անարժան եմ պատմելու այդ տողերն իմ ստոր բառերով և իմ ստոր շեշտով, որից երբեք չեմ կարողացել ազատվել։ Խոցել է այդ նամակն ինձ՝ մինչև՛ այսօր իսկ, և մի՞թե հիմա թեթև է իմ սիրտը, միթե այսո՛ր իսկ թեթև՞ եմ զգում։ Անմիջապես պատասխանեցի նրան այն ժամանակ (ինքս ոչ մի կերպ չէի կարող Մոսկվա գնալ)։ Արցունքներով գրեցի այդ նամակը, բայց միայն մի բանից եմ ամաչում շարունակ. ակնարկեցի, թե ինքը հիմա հարուստ է և օժիտ ունի, իսկ ես պարզապես անկուտի համբակի մեկն եմ, այսինքն փողի՛ մասին հիշեցրի։ Պետք է լրությամբ հանդուրժեի այդ բանը, սակայն գրչի ծայրից փախավ։ Հենց այդ ժամանակ էլ անմիջապես գրեցի Իվանին՝ Մոսկվա, ըստ հնարավորության բացատրեցի ամեն ինչ, վեց էջանոց մի նամակ եղավ։ Եվ Իվանին ուղարկեցի Կատյայի մոտ։ Ի՞նչ ես նայում ինձ, ինչո՞ւ ես աչքերդ տնկել այդպես։ Հա՛, այո՛, Իվանը սիրահարվեց նրան, հիմա էլ սիրահարված է, գիտեմ, և ես հիմարություն արեցի ըստ ձեզ՝ ըստ ընդունված տեսակետի, բայց գուցե հենց ա՛յդ մի հիմարությունն էլ այսօր

կփրկի մեզ բոլորիս։ Օհ՜օ՜, չե՞ս տեսնում, Կատյան ինչպես է մեծարում նրան, ինչպե՞ս է հարգում։ Միթե կարո՞ղ է սիրել ինձ նման մեկին, երբ համեմատի մեզ երկուսիս, և մանավանդ այն բոլոր դեպքերից հետո, որ տեղի ունեցան այստեղ։

— Իսկ ես վստահ եմ, որ նա սիրում է քեզ նման մարդուն, ոչ թե նրա նմանին։

— Նա իր առաքինությունն է սիրում, ոչ թե ինձ,— ակամա պոռթկաց հանկարծ Դմիտրի Ֆյոդորովիչը՝ համարյա չարախնդությամբ։ Միծաղեց նա, բայց հաջորդ վայրկյանին աչքերը փայլեցին, ամբողջովին կարմրեց և բռունցքով ուժգին հարվածեց սեղանին։

— Երդվում եմ, Ալյոշա,— գոչեց նա՝ սաստիկ ու անկեղծորեն զայրանալով ինքն իր դեմ,— ուզես հավատա՛, ուզես մի՛ հավատա, բայց ահա՝ սո՛ւրբ աստված և տերն մեր Հիսուս Քրիստոս, երդվում եմ, որ թեև ծիծաղեցի հիմա նրա բարձր զգացմունքների վրա, բայց գիտեմ՝ ես միլիոն անգամ ավելի չնչին եմ հոգով, քան նա, և նրա այդ լավագույն զգացմունքները նույնքան անկեղծ են, որքան երկնային հրեշտակինը։ Ողբերգությունն էլ հենց այն է, որ ես հաստատ գիտեմ այդ։ Ի՞նչ անենք, որ մարդ մի քիչ մեծ-մեծ է խոսում։ Իսկ ես մեծ-մեծ չե՞մ խոսում, ինչ է։ Բայց չէ՞ որ անկեղծ եմ ես, անկեղծ։ Գալով Իվանին, ես հասկանում եմ, թե ինչպես է անիծում նա հիմա բնությունը, երբ մանավանդ այդպիսի խե՜լք ունի։ Ո՞ւմ, ինչի՞ն է տրվում նախապատվությունը։ Մի ճիվաղի՜, որ նույնիսկ այստե՛ղ չկարողացավ զսպել իր ցոփությունները, երբ արդեն նշանված էր և բոլորը նրան էին նայում։ Այն էլ իր հարսնացուի, հարսնացուի՜ աչքի առաջ։ Եվ ահա ինձ նման մեկը գերադասվում է, իսկ նա՝ մերժվում։ Բայց ի՞նչ պատճառով։ Այն պատճառով, որ օրիորդն ուզում է իր կյանքի ու ճակատագրի վրա բռնանալ՝ երախտապարտությունի՞ց մղված։ Անմտությո՜ւն։ Այս առնչությամբ ոչինչ չեմ ասել Իվանին երբևիցե, Իվանն էլ երբեք ձայն չի հանել անշուշտ, մի թեթև ակնարկ անգամ չի արել։ Բայց ճակատագիրը կհաղթանակի, և արժանավորը կգրավի իր տեղը, իսկ անարժանն ընդմիշտ կշքվի իր գոհի մեջ՝ իր կեղտոտ գոհի մեջ, որն այնքան սիրելի ու յուրահատուկ է նրան, և այնտեղ, կեղտի ու գարշահոտության մեջ թաղված, կկորչի կամովին և հաճույքով։ Է՜, բարբաջում եմ կարծես թե, բառերս կորցրել են իրենց իմաստը, բերնիս եկածը դուրս եմ

տալիս։ Սակայն ինչպես որ ասացի, հենց այդպես էլ կլինի։ Ես կսուզվեմ գոհի մեջ, իսկ նա կամուսնանա Իվանի հետ։

— Սպասի՛ր, Միտյա,— ընդհատեց նորից Ալյոշան չափազանց հուզված,— համենայն դեպս այստեղ մի հարց կա, որ դեռ մինչև հիմա էլ չպարզեցիր դու ինձ. նշանված ես, չէ՞, ինչ էլ լինի՝ նշանված ես, չէ՞։ Ինչպե՞ս ուրեմն խզել ես ուզում կապդ, եթե նա, քո հարսնացուն, չի ուզում։

— Նշանված եմ, այո, օրինական և օրհնված փեսացու։ Մոսկվայում եղավ այդ ամբողջը, երբ նոր էի հասել այնտեղ, կատարվեց մեծ շուքով, սրբապատկերներով։ Առաջնակարգ նշանդրեք էր։ Գեներալի այրին օրհնեց և, հավատո՞ւմ ես, նույնիսկ շնորհավորեց Կատյային, ասաց՝ «լավ ես ընտրել, նրա հոգու խորքն եմ տեսնում»։ Եվ հավատո՞ւմ ես, Իվանին չսիրեց պառավը, չողջունեց նրան։ Հենց Մոսկվայում էլ երկար խոսակցություններ ունեցա Կատյայի հետ, մանրամասն նկարագրեցի ինքս ինձ՝ ճշմարտորեն, ազնվորեն, անկեղծորեն։ Ամեն ինչ լսեց.

Պատեց քաղցր շփոթություն,
Ասվեցին քնքուշ խոսքեր...

Դե՜հ, հպարտ խոսքեր էլ ասվեցին։ Նա ինձ ստիպեց հանդիսավոր խոստում տալ, որ ուղղվելու եմ։ Տվեցի խոստումը։ Եվ ահա...

— Ի՞նչ։

— Եվ ահա այսօր, հենց այսօրվա օրը (հիշի՛ր ամսաթիվը), քեզ կանչեցի ու թաքուն-թաքուն բերեցի այստեղ, որպեսզի, այսօր իսկ դարձյալ, քեզ ուղարկեմ Կատերինա Իվանովնային և...

— Ի՞նչ։

— Որպեսզի ասես նրան, որ այլևս երբեք չեմ գնալու մոտը, ասես, որ իմ ողջույններն եմ հղում։

— Բայց միթե հնարավո՞ր է այդ։

— Ճիշտ է, անհնար է, և հենց այդ պատճառով էլ քեզ եմ ուղարկում իմ փոխարեն։ Թե չէ՝ ինքս ինչպե՞ս ասեմ այդ բանը նրան։

— Իսկ ո՞ւր ես գնալու։

— Գոհի։

— Ուրեմն Գրուշենկայի՜ մոտ,— վշտագին բացականչեց Ալյոշան, ձեռքերն իրար զարկելով։— Բայց միթե իրո՞ք Ռա-

կիտինը ճշմարիտ ասաց։ Իսկ ես կարծում էի՝ հենց այնպես գնացիր մի անգամ մոտը, և վերջ։

— Փեսացու մարդը հենց այնպես գնա՞։ Չէէ՞, հնարավո՞ր բան է դա, այն էլ երբ այսպիսին է քո հարսնացուն, և դեռ՝ բոլորի աչքի առա՞ջ։ Պատիվ ասված բանն ունե՞մ, թե չէ։ Հենց որ սկսեցի հաճախել Գրուշենկայի մոտ, իսկույն դադարեցի փեսացու և ազնիվ մարդ լինել։ Ես ախր հասկանում եմ այդ։ Ի՞նչ ես նայում երեսիս։ Գիտե՞ս ինչ, սկզբում գնացի պարզապես նրան ծեծելու։ Այն ժամանակ իմացա և հիմա էլ հաստատ գիտեմ, որ այդ փոխկապիտանը՝ հայրիկի վստահյալը, իմ մի պարտամուրհակն է փոխանցել Գրուշենկային, որպեսզի այս անզգամը բռնագանձման գործ հարուցի իմ դեմ և ես փափկեմ ու ձայնս կտրեմ։ Վախեցնել էին ուզում։ Ես էլ ահա վազեցի ծեծելու Գրուշենկային։ Մինչ այդ տեսել էի նրան՝ այնպես, հարևանցիորեն։ Միանգամից չի տպավորում։ Գիտեի նրա այդ ծեր վաճառականի մասին, որ հիվանդ էլ է հիմա, պառկել է անդամալույծ, բայց համենայն դեպս փառավոր մի բաժին կթողնի նրան։ Գիտեի նաև, որ Գրուշենկան սիրում է փող դիզել ու դիզում է, անխիղճ տոկոսներով պարտք է տալիս, խաբեբա է, առավ-փախավի մեկը, կողոպտում է անգթորեն։ Գնացի մի ծեծ քաշելու, բայց արի տես, որ մնացի մոտը։ Ճայթեց հանկարծ փոթորիկը, ժանտախտը խփեց գլխիս, վարակվեցի ու վարակված էլ մնում եմ մինչև այսօր, և գիտեմ, որ արդեն ամեն ինչ վերջացած է ինձ համար, էլ ուրիշ ոչի՞նչ չի լինելու, երբե՛ք։ Ժամանակների շրջապտույտն ավարտված է։ Ահա՛ իմ բանը։ Այսպես ուրեմն, հանկարծ այդ օրը, ասես բախտի քմահաճույքով, երեք հազար ռուբլի էր մտել իմ գրպանը, չքավորի այս դատարկ գրպանը։ Գրուշենկայի հետ քշեցինք-գնացինք Մոկրոե՝ այստեղից քսանհինգ վերստ հեռու. գնչուներ, գնչուհիներ ճարեցի, շամպայն ճարեցի, առատ-առատ խմեցրի շամպայնը բոլոր մուժիկներին, բոլոր գեղջուկ կնիկներին ու աղջիկներին, քամուն տվեցի հազարները։ Երեք օրից՝ տիպ տկլոր դուրս եկա, բայց հերոս էի։ Կարծեցիր մի բա՞ն ընկավ հերոսի ձեռքը։ Իր կանացի շնորհների ստվերն անգամ ցույց չտվեց։ Ասում եմ քեզ՝ այդ անզգամ Գրուշենկան մարմնի այնպիսի՜ զգլխիչ մի կորագիծ ունի, օ՜, նույնիսկ նրա փոքրիկ ոտքերն ունեն այդ հմայքը, մինչև անգամ ձախ ոտքի ճկույթ մատիկը։ Տեսա և համբուրեցի այդ ճկույթը, բայց ա՛յդքանը միայն, երդվո՜ւմ եմ։ Ասում է. «Ուզում ես՝ կամուսնանամ հետդ, դու աղքատ ես ախր։ Ասա, որ չես ծեծելու և թույլ ես տալու, որ ուզածս անեմ, գուցե այդ դեպքում կամուսնանամ»։ Եվ ծիծաղում է։ Հիմա՜ էլ է ծիծաղում։

Դմիտրի Ֆյոդորովիչը մի տեսակ կատաղությամբ վերկացավ տեղից, մեկեն հարբածի նման դարձավ։ Աչքերն արյունով լցվեցին հանկարծ։

— Եվ դու իրո՞ք ուզում ես ամուսնանալ նրա հետ։

— Հենց անմիջապես, եթե ինքը ցանկանա։ Իսկ եթե չցանկանա՝ միևնույն է, կմնամ մոտը. դռնապան կլինեմ նրա տան բակում։ Դու... դու, Ալյոշա...— կանգ առավ Դմիտրին եղբոր առաջ և, բռնելով ուսերից, սկսեց հանկարծ ուժգին ցնցել նրան,— բայց դու գիտե՞ս, անմեղ տղա, գիտե՞ս, որ զառանցա՜նք է այս ամբողջը, աներևակայելի՜ զառանցանք, որովհետև ողբերգություն կա այստեղ, ողբերգությո՜ւն։ Իմացի՜ր ուրեմն, Ալեքսե՛յ, ես կարող եմ լինել ստոր մարդ, ստոր ու կործանիչ կրքերով, բայց Դմիտրի Կարամազովը գո՞ղ լինի, հասարակ մի գրպանահա՞ր, մանր-մունր բաներ թռցնող ստահա՞կ՝ երբե՛ք։ Դե՜հ, իմացի՜ր հիմա, ես ողորմելի մի գող եմ, հասարակ գրպանահատ ու ստահակ։ Հենց այն օրը, երբ գնալու էի Գրուշենկային ծեծելու, նույն այդ առավոտ ինձ կանչեց Կատերինա Իվանովնան և խիստ գաղտնորեն, որպեսզի առժամանակ ոչ ոք չիմանա (թե ինչո՞ւ, չգիտեմ, երևի այդպես էր պետք նրան), խնդրեց, որ գնամ նահանգի կենտրոնական քաղաքը և փոստով երեք հազար ռուբլի ուղարկեմ Ագաֆյա Իվանովնային՝ Մոսկվա։ Կենտրոնից էի ուղարկելու հենց այն պատճառով, որ այստեղ չիմանան։ Ահա այդ երեք հազար ռուբլին կար իմ գրպանում, երբ Գրուշենկայի մոտ ընկա, և այդ փողով էլ Մոկրոե գնացինք։ Հետո այնպես ձեվացրի, թե թռել-գնացել էի կենտրոն, բայց փոստային ստացագիրը չներկայացրի, ասացի, թե ուղարկել եմ, ստացագիրը կբերեմ, և մինչև հիմա էլ չեմ տանում, մոռացե՞լ եմ իբր թե։ Հիմա ի՞նչ ես կարծում, այսօր ահա դու կգնաս ու կասես նրան՝ «Ողջույններ է հղում», իսկ նա կհարցնի. «Հապա փո՞ղը»։ Դու կարող էիր ասել նաև՝ «Ստոր մի հեշտասեր է նա, անարգ մի արարած՝ անզուսպ զգացումներով։ Նա այն ժամանակ չի ուղարկել ձեր փողը, այլ ծախսել է, որովհետև չի կարողացել իրեն զսպել, անասունի նման»։ Բայց համենայն դեպս կարող էիր

ավելացնել. «Նա գող չէ սակայն, ահա ձեր երեք հազարը, վերադարձնում է ձեզ. ինքներդ ուղարկեցեք Ագաֆյա Իվանովնային, իսկ ինքը ձեզ ողջույններ է հղում»։ Իսկ հիմա հանկարծ կհարցնի. «Ո՞ւր է փողը»։

— Միտյա, դժբախտ ես դու, այո՛։ Բայց համենայն դեպս ոչ այնքան, որքան կարծում ես։ Մի՛ խեղդիր քեզ հուսահատության մեջ, մի՛ խեղդիր։

— Ինչ է, կարծում ես անձնասպա՞ն եմ լինելու, եթե չբռնարեմ ու չհանձնեմ այդ երեք հազարը։ Խնդիրն էլ հենց այն է, որ չեմ սպանի ինքս ինձ։ Ուժ չունեմ հիմա գանգս ցրիվ տալու։ Հեռո՝ գուցե, իսկ հիմա Գրուշենկայի մոտ եմ գնում... Թքա՜ծ, ի՜նչ ուզում է լինի։

— Իսկ նրա՞ մոտ ինչ ես անելու։

— Ամուսինը կլինեմ, կջանամ արժանի դառնալ ամուսինը լինելու, և եթե սիրեկանը գա՝ մյուս սենյակը կքաշվեմ։ Նրա մտերիմների կեղտոտ կրկնակոշիկներն եմ մաքրելու, ինքնաեռի կրակն եմ փչելու, դեսուդեն եմ վազելու...

— Կատերինա Իվանովնան ամեն ինչ կհասկանա,— ասաց հանկարծ Ալյոշան հանդիսավոր շեշտով,— կհասկանա այս մեծ վշտի ամբողջ խորությունը և ներողամիտ կլինի։ Բարձր մտքի տեր է նա, և ինքը կտեսնի, որ քեզնից ավելի դժբախտ մարդ չի կարող լինել։

— Ամեն ինչ չի ների նա,— քմծիծաղ տվեց Միտյան։— Այստեղ, սիրելիս, մի բան կա, որի հետ ոչ մի կին չի կարող հաշտվել։ Ամենից լավը՝ գիտե՞ս ինչ պետք է անել։

— Ի՞նչ։

— Երեք հազարը պետք է վերադարձնել նրան։

— Բայց որտեղի՞ց գտնենք։ Լսի՛ր, ես երկու հազար ունեմ, Իվանն էլ մի հազար ռուբլի կտա, ահա քեզ երեք հազար։ Ա՛ռ ու վերադարձրու նրան։

— Իսկ ե՞րբ է մեր ձեռքը հասնելու այդ երեք հազարը։ Եվ բացի այդ, դու դեռ անչափահաս էլ ես։ Իսկ պետք է հենց այսօր, փողը լինի թե չլինի, պետք է անպայման հաղորդես նրան իմ հրաժեշտի ողջույնը, անպայմա՛ն, որովհետև չեմ կարող այլևս ձգձգել, այդտե՛ղ հասավ բանը։ Վաղն արդեն ուշ կլինի, ուշ։ Քեզ ուղարկելու եմ հայրիկի մոտ։

— Հայրիկի մո՞տ։

— Այո, նախ հայրիկի, հետո նրա մոտ։ Հայրիկից խնդրիր երեք հազարը։

— Բայց նա չի տա, Միտյա։

— Ա՜յդ էր պակաս, որ տա։ Հասկանում եմ, չի տա։ Ալեքսե՛յ, գիտե՞ս ինչ է նշանակում հուսահատություն ասված բանը։

— Գիտեմ։

— Լսի՛ր, իրավաբանորեն նա ոչ մի կոպեկ պարտք չէ ինձ։ Ամեն ինչ վերցրել եմ նրանից, ամե՛ն ինչ։ Գիտեմ։ Բայց ախր բարոյական տեսակետից պարտք է մնում ինձ, այնպե՞ս է, թե չէ։ Չէ՞ որ նա իմ մոր քսանութ հազար ռուբլուց է սկսել և հարյուր հազար է դիզել։ Թո՛ղ միայն երեք հազար ռուբլի տա ինձ այդ քսանութ հազարից, միայն երեք հազար, և նա կազատի իմ հոգին դժոխքից, արած բարիքն էլ իր շատ ու շատ մեղքերի քավությունը կլինի։ Իսկ ես, ահա քեզ հանդիսավոր խոսք եմ տալիս, այդ երեք հազարով էլ կվերջացնեմ իմ հաշիվները, և այլևս բացարձակապես ոչինչ չի լսի նա իմ մասին։ Վերջին անգամ առիթ եմ տալիս նրան՝ հայր լինելու։ Ասա՛ նրան, որ նույնինքն աստված այս առիթն է ուղարկում իրեն։

— Միտյա, ոչ մի դեպքում չի տա։

— Գիտեմ, որ չի տա, կատարելապես գիտեմ։ Մանավանդ հիմա։ Ավելին, դեռ մի բան էլ գիտեմ. հիմա, հենց այս օրերիս, գուցե երեկ միայն, նա առաջին անգամ իմացավ լրջորեն (ընդգծիր լրջորենը), որ Գրուշենկան գուցե իրոք կատակ չի անում և ուզում է առանց այլևայլի ամուսնանալ ինձ հետ։ Ծերուկը գիտե նրա բնավորությունը, գիտե այդ կատվին։ Է՛հ, մեկ էլ հիմա փո՞ղ տա ինձ, որ նպաստի՞ այդպիսի ամուսնությանը, երբ ինքն է խելքը թոցրել նրա համար։ Բայց այդ էլ քիչ է, դեռ ավելին կարող եմ ասել քեզ. գիտեմ, որ արդեն հինգ օր է՝ նա երեք հազար ռուբլի է հանել բանկից, հարյուրանոցների վերածել ու փաթաթել մի մեծ ծրարի մեջ, հինգ կնիք է դրել վրան ու խաչաձև կապել է կարմիր երիզակով։ Տեսնո՞ւմ ես ինչ մանրամասն գիտեմ։ Իսկ ծրարի վրա գրված է. «Իմ հրեշտակ Գրուշենկային, եթե ցանկանա գալ ինձ մոտ»։ Ինքն է խզմզել, լուռումունջ ու թաքուն, և ոչ ոք չգիտե, որ փող կա մոտը, բացի ծառա Սմերդյակովից, որի աղնվությանը հավատում է այնպես, ինչպես իր սեփա-

կան անձին։ Ահա արդեն երրորդ կամ չորրորդ օրն է՝ Գրուշենկային է սպասում, հույս ունի, որ նա կգա փողն առնելու։ Լուր է ուղարկել նրան, և Գրուշենկան էլ լուր է ուղարկել, իբր թե ասել է՝ «գուցե և գամ»։ Է՛հ ուրեմն, եթե նա գա ծերուկի մոտ, էլ կարո՞ղ եմ ամուսնանալ հետը։ Հիմա հասկանո՞ւմ ես, թե ինչու եմ թաքուն նստած այստեղ և ինչ եմ դարպասում։

— Գրուշենկայի՞ն։

— Գրուշենկային։ Այս տանը, այս փնթի կանանց մոտ Ֆոման մի փոքր սենյակ է վարձել։ Մեր կողմերից է Ֆոման, զինվոր է եղել մեզ մոտ։ Հիմա սրանց գործերն է անում, գիշերը պահակ է նստում, իսկ ցերեկը գնում է ցախաքլոր որսալու, դրանով էլ ապրում է։ Հենց նրա սենյակն է իմ թաքստոցը. ո՛չ նա գիտե գաղտնիքը, ո՛չ էլ տանտիրուհիները, այսինքն չգիտեն, թե ես դարան եմ մտել այստեղ։

— Միայն Սմերդյակո՞վը գիտե։

— Միայն նա։ Եվ նա էլ ինձ լուր կտա, եթե այդ անզգամը գա ծերուկի մոտ։

— Նա՞ ասաց քեզ ծրարված փողի մասին։

— Նա ասաց։ Մեծագույն գաղտնիք է։ Նույնիսկ Իվանը լուր չունի ո՛չ փողից, ո՛չ մի բանից։ Իսկ ծերուկն ուզում է Ջերմաշնյա ուղարկել Իվանին՝ երկու-երեք օրվա ճամփորդության։ Հայտնվել է մի գնորդ, որ պատրաստ է ութ հազար տալ ու կտրել պուրակի ծառերը, և ահա ուրեմն ծերուկն անընդհատ խնդրում է Իվանին՝ «օգնիր, ասում է, ինքդ գնա», երկու կամ երեք օրով այսինքն։ Ուզածն այն է, որ Գրուշենկայի եկած ժամանակ Իվանը չլինի այստեղ։

— Ուրեմն այսո՞ր էլ սպասում է Գրուշենկային։

— Ոչ, այսօր նա չի գա, նշաններն այդպես են ցույց տալիս։ Հաստա՞տ չի գա,— գոռաց հանկարծ Միտյան։— Սմերդյակովն էլ այդպես է ենթադրում։ Հայրիկը խմում է հիմա, Իվանի հետ սեղան է նստել։ Գնա՛, Ալեքսեյ, խնդրիր նրանից այդ երեք հազարը...

— Միտյա, սիրելիս, ի՞նչ է պատահել քեզ,— բացականչեց Ալյոշան, ընդոստ վերկենալով և ուշադրությամբ նայելով Դմիտրի Ֆյոդորովիչի մոլեգնահար դեմքին։ Մի վայրկյան կարծեց, թե եղբայրը խելագարվել է։

— Ի՞նչ է, Ալյոշա։ Չեմ խելագարվել,— ասաց Դմիտրի

Ֆյոդորովիչը, սևեռուն ու նույնիսկ մի տեսակ հանդիսավոր հայացքով նայելով նրան։— Մի՛ վախենա, քեզ ուղարկում եմ հայրիկի մոտ և գիտեմ իմ ասածը. հրաշքի եմ հավատում։

— Հրաշքի՞։

— Աստվածային նախախնամության հրաշքին։ Աստված գիտե իմ սիրտը, նա տեսնում է իմ ամբողջ հուսահատությունը։ Նա այս ամբողջ պատկերն է տեսնում։ Մի՞թե նա թույլ կտա, որ կատարվի սարսափելին։ Ալյոշա, ես հրաշքի՛ եմ հավատում, գնա՛։

— Կգնամ։ Ասա, դու սպասելո՞ւ ես այստեղ։

— Այո։ Հասկանում եմ, որ շուտ չի լինի, չի կարելի հենց մտնել ու շիփ-շիտակ վրա տալ։ Նա հարբած է հիմա։ Երեք ժամ էլ կսպասեմ, չորս ժամ էլ, հինգ, վեց, յոթը ժամ, բայց թե մի՛ մոռանա, որ այսօր, թեկուզ և կեսգիշերին լինի, պետք է ներկայանաս Կատերինա Իվանովնային, փողով կամ առանց փողի, և պետք է ասես. «Ողջույններն է հղում ձեզ»։ Հենց ուզում եմ, որ ասես այս բանաստեղծակա՛ն տողը. «Ողջույնն է՛ն է հղում ձեզ»։

— Մի՛տյա։ Իսկ եթե հանկարծ Գրուշենկան գա այսօր... եթե ոչ այսօր, ասենք վաղը կամ մյուս օր...

— Գրուշենկա՞ն։ Կլրտեսեմ, ներս կխուժեմ ու կխանգարեմ...

— Իսկ եթե...

— Եթե լինի այդ «եթե»-ն, կսպանեմ։ Չեմ դիմանա դրան։

— Ո՞ւմ կսպանես։

— Պառավին։ Մյուսին չեմ սպանի։

— Եղբա՛յր, ինչե՛ր ես ասում։

— Չգիտե՛մ, չգիտե՛մ... Գուցե չսպանեմ, գուցեև սպանեմ։ Վախենում եմ, որ այդ նույն րոպեին նա ինձ ատելի դառնա հանկարծ՝ իր այդ դեմքո՛վ։ Ատո՛ւմ եմ նրա ադամախնձորը, նրա քիթը, նրա աչքերը, նրա անամոթ քմծիծաղը։ Անձնական զզվանք եմ զգում։ Դրանից եմ վախենում ահա։ Հանկարծ չկարողանամ զսպել ինձ...

— Կգնամ, Միտյա։ Հավատում եմ, որ աստված լավագույնս կդատի, որպեսզի չպատահի սարսափելին։

— Իսկ ես կնստեմ ու կսպասեմ հրաշքին։ Բայց եթե չկատարվի հրաշքը, այդ դեպքում...

Ալյոշան մտախոհ քայլեց դեպի հոր տունը։

VI

ՍՄԵՐԴՅԱԿՈՎ

Եվ իրոք նա տեսավ, որ հայրը դեռ նստել էր սեղանի առաջ։ Ըստ մշտական սովորության, սեղանը պատրաստված էր հյուրասրահում, թեև տան մեջ իսկական ճաշասենյակ էլ կար։ Այդ հյուրասրահը տան ամենամեծ սենյակն էր, որ կահավորված էր մի տեսակ հնամենի հավակնությամբ։ Կահույքը չափազանց հին էր, սպիտակ, և երեսապատված էր կարմիր, հնամաշ, մետաքսանման պաստառով։ Լուսամուտների միջև հայելիներ էին դրված պատին՝ նույնպես սպիտակ ու ոսկեգույն շրջանակներով, որոնք հնաոճ զարդաքանդակներով էին պաճուճված։ Պատերին, որոնք պաստառված էին սպիտակ ու տեղ-տեղ ճաքճքած թղթով, աչքի էին ընկնում երկու խոշոր դիմանկարներ. մեկը մի իշխան էր, որ երեսուն տարի առաջ մեր շրջանի գեներալ-նահանգապետն էր եղել, իսկ մյուսը՝ վաղուց վախճանյալ մի եպիսկոպոս։ Հանդիպակաց անկյունում մի քանի սրբապատկեր կար, որոնց առջև գիշերը կանթեղ էր վառվում... ոչ այնքան ի նշան բարեպաշտության, որքան սենյակը լուսավորելու համար։ Ֆյոդոր Պավլովիչը շատ ուշ էր պառկում, առավոտյան դեմ՝ ժամը երեքին կամ չորսին, իսկ մինչ այդ՝ մերթ քայլում էր սենյակում, մերթ նստում էր բազկաթոռին ու մտածում։ Դա սովորություն էր դարձել նրա համար։ Շատ անգամ մեն-մենակ էր գիշերում տան մեջ, ծառաներին ուղարկելով բակի շենքը, բայց ավելի հաճախ նրա հետ մնում էր ծառա Սմերդյակովը, որ քնում էր նախասենյակում՝ օթոցի վրա։

Երբ Ալյոշան ներս մտավ, ճաշն արդեն վերջացել էր, բայց անուշեղեն ու սուրճ էին մատուցել։ Ֆյոդոր Պավլովիչը սիրում էր ճաշից հետո քաղցր համադամներ ըմբշխնել կոնյակի հետ։ Իվան Ֆյոդորովիչն էլ դեռ նստած էր ու սուրճ էր խմում։ Ծառաներ Գրիգորին ու Սմերդյակովը կանգնած էին սեղանի մոտ։ Պարզ երևում էր, որ թե՛ տերերը, թե՛ ծառաները արտակարգորեն ուրախ տրամադրության մեջ էին։ Ֆյոդոր Պավլովիչը քահ-քահ ծիծաղում էր։ Ալյոշան դեռ նախասենյակում լսեց նրա ճղճղան ծիծաղը, որն այնքան ծանոթ էր իրեն, և ծիծաղի ելևէջներից հասկացավ իսկույն, որ հայրը դեռ բնավ էլ հարբած չէ, այլ պարզապես հրճվանքի մեջ է առայժմ։

— Եկա՛վ ահա, եկա՛վ,— ճչաց Ֆյոդոր Պավլովիչը, հանկարծ սաստիկ ուրախանալով, որ տեսնում է Ալյոշային։— Միացի՛ր մեզ, նստիր, ահա քեզ սո՛ւրճ։ Պասուց խմիչք է ախր, պասո՛ւց, և տաք-տաք է, հոյակա՛պ։ Կոնյակ չեմ առաջարկում, ծոմ պահող մարդ ես դու, բայց ուզո՞ւմ ես, հա՞, ուզո՞ւմ ես։ Չէ, ավելի լավ է լիկյոր տամ քեզ, հուշկավո՛ր լիկյոր է։ Սմերդյակո՛վ, գնա բեր պահարանից, երկրորդ դարակի վրա է, աջ կողմը։ Ահա բանալիները, դե շո՛ւտ։

Ալյոշան սկսեց հրաժարվել լիկյորից։

— Մեկ է՝ բերելու է, դու եթե չխմես, մենք կխմենք,— ասաց Ֆյոդոր Պավլովիչը, ուրախությունից փայլելով։— Բայց սպասի՛ր, դու ճաշե՞լ ես, թե չէ։

— Ճաշել եմ,— ասաց Ալյոշան, որ իրականում մի կտոր հաց էր միայն կերել և մի բաժակ կվաս էր խմել վանահոր խոհանոցում։— Ա՜յ, տաք սուրճը սիրով կխմեմ։

— Ապրե՛ս, անուշիկս, ապրե՛ս։ Սուրճ է խմելու։ Տաքացնել պետք չէ՞։ Բայց չէ, եռում է դեռ։ Փառավոր սուրճ է, Սմերդյակովն է եփել։ Իմ Սմերդյակովն արտիստի՞ պես է պատրաստում սուրճը և ձկով կարկանդակը, մեկ էլ, հա՞, ձկնապուրը, ճիշտ է։ Մի օր արի նրա ձկնապուրն ուտելու, նախօրոք իմաց տուր... Բայց սպասի՛ր, սպասիր տեսնեմ, առավոտյան չպատվիրեցի՞ քեզ, որ այսօր ևեթ փոխադրվես տուն, անկողինդ էլ բերես, բարձերդ էլ։ Քաշ տվի՞ր անկողինդ, հե՛-հե՛-հե՛...

— Ոչ, չբերեցի,— ժպտաց նաև Ալյոշան։

— Բայց վախեցա՞ր, վախեցար առավոտյան, չէ՞, վախեցա՞ր։ Է՜, անուշիկս, մի՞թե ես կարող եմ քեզ վշտացնել։ Լսիր, Իվա՛ն, չեմ կարողանում դիմանալ, երբ նա այդպես նայում է աչքերիս մեջ ու ծիծաղում, անկարելի՜ է դիմանալ։ Իմ ամբողջ ընդերքն է սկսում ծիծաղել նրա հետ, սիրո՛ւմ եմ նրան։ Ալյոշկա, արի քեզ իմ ծնողական օրհնությունը տամ։

Ալյոշան ոտքի ելավ, բայց Ֆյոդոր Պավլովիչն արդեն փոխել էր իր միտքը։

— Չէ, չէ, հիմա պարզապես կխաչակնքեմ քեզ, ահա այսպես, դե նստիր։ Է՜, հաճույք ես ստանալու հիմա, և հենց քո գծով։ Ա՜յ թե ծիծաղելու ես։ Մեր Բաղաամի էշն սկսեց խոսել, և ինչպե՞ս է խոսում, ինչպե՞ս է խոսում։

Պարզվեց, որ Բաղաամի էշը ծառա Սմերդյակովն է։ Դեռ հազիվ քսանչորս տարեկան մի երիտասարդ էր նա, բայց

սոսկալի անմարդամոտ էր ու լռակյաց։ Ոչ թե քաշվող էր կամ ամոթխած, այլ ընդհակառակը՝ գոռոզ բնավորություն ուներ և կարծես արհամարհում էր բոլորին։ Բայց ահա առիթը եկավ, և հիմա արդեն չի կարելի կողքով անցնել, գոնե մի քանի խոսք չասել նրա մասին։ Նրան դաստիարակեցին Մարֆա Իգնատևնան ու Գրիգորի Վասիլևիչը, բայց երեխան, մեծանալով, սկսեց «ապերախտի մեկը» դառնալ, ինչպես Գրիգորին որակում էր նրան, եղավ վայրի մի տղա, որ ծուռ աչքով էր նայում աշխարհին։ Երբ մանուկ էր, շատ էր սիրում կախել կատուներին և հետո հանդիսավոր կերպով թաղել դրանց դիակները։ Այդ նպատակով ուսերին գցում էր մի սպիտակ սավան, որն իբրև թե շուրջառ էր, և երգում էր ու մի որևէ բան ճոճում մեռած կատվի վրա, իբրև թե խնկարկում էր բուրվառով։ Այդ բոլորը թաքուն էր անում, խստորեն պահելով իր գաղտնիքը։ Գրիգորին մի անգամ նրան բռնեց այդ արարքի վրա և պատժեց՝ մի լավ ծեծեց ճիպոտով։ Տղան մի անկյուն քաշվեց և մի ամբողջ շաբաթ խեթ-խեթ նայեց այդտեղից։ «Չի սիրում նա մեզ, այդ վիժվա՛ծը,— ասում էր Գրիգորին Մարֆա Իգնատևնային,— և ոչ ոքի չի սիրում։ Դու մա՞րդ ես որ,— ուղղակի Սմերդյակովին էր դառնում հանկարծ,— մարդ չես դու, բաղնիքի բորբոսից ես դուրս եկել, ահա՛ թե ով ես...»։ Սմերդյակովը, ինչպես պարզվեց հետագայում, երբեք չէր կարողանում ներել նրան այդ խոսքերը։ Գրիգորին գրել-կարդալ սովորեցրեց տղային և, երբ նա տասներկու տարեկան դարձավ, սկսեց Սուրբ գրքի պատմություններն ուսուցանել նրան։ Բայց սկսելն ու վերջացնելը մեկ եղավ։ Մի անգամ, երկրորդ կամ երրորդ դասին էր, տղան հանկարծ քմծիծաղ տվեց։

— Ի՞նչ է,— հարցրեց Գրիգորին, սպառնագին նայելով նրան ակնոցի վրայից։

— Ոչինչ։ Տեր աստված լույսն ստեղծեց առաջին օրը, իսկ արևը, լուսինը և աստղերը՝ չորրորդ օրը։ Իսկ առաջին օրը որտեղի՞ց էր գալիս լույսը։

Գրիգորին ապշած մնաց։ Տղան հեգնանքով նայում էր ուսուցչին։ Նրա հայացքի մեջ նույնիսկ մեծամիտ մի բան կար։ Գրիգորին չհամբերեց։ «Ահա՛ թե որտեղից»,— գոռաց նա և կատաղի մի ապտակ իջեցրեց աշակերտի այտին։ Տղան սուսուփուս հանդուրժեց այդ ապտակը, բայց նորից իր անկյունը քաշվեց մի քանի օր։ Եվ ահա, մի շաբաթ հետո նա

առաջին նոպան ունեցավ ընկնավորության, որով տառապեց իր ամբողջ կյանքում։ Լսելով այդ նոպայի մասին, Ֆյոդոր Պավլովիչը կարծես միանգամից փոխեց իր վերաբերմունքը տղայի նկատմամբ։ Առաջ մի տեսակ անտարբեր էր նայում նրան, թեև երբեք չէր նախատում և միշտ, երբ հանդիպում էր, մի կոպեկ էր տալիս։ Մերթ ընդ մերթ, երբ բարի էր լինում տրամադրությունը, սեղանից մի քաղցր բան էր ուղարկում տղային։ Բայց հիմա, լսելով հիվանդության մասին, հայտնապես սկսեց հոգատար լինել նրա նկատմամբ, բժիշկ հրավիրեց, ցանկացավ բուժել տղային, բայց պարզվեց, որ անհնար է բուժել։ Նոպաները, միջին հաշվով, բռնում էին ամիսը մեկ անգամ՝ տարբեր ընդմիջումներով։ Իրենց սաստկությամբ էլ տարբերվում էին նոպաները. երբեմն թեթև էին լինում, իսկ երբեմն՝ շատ դաժան։ Ֆյոդոր Պավլովիչը խստագույնս արգելեց Գրիգորիին՝ մարմնական պատիժ կիրառել տղայի նկատմամբ, և արտոնեց, որ նա երբեմն իր մոտ բարձրանա։ Առժամապես արգելեց նաև որևէ բան ուսուցանել նրան։ Բայց մի անգամ, երբ տղան արդեն տասնհինգ տարեկան էր, Ֆյոդոր Պավլովիչը նկատեց, որ նա պտտվում է գրապահարանի մոտ և ապակու միջից կարդում գրքերի վերնագրերը։ Ֆյոդոր Պավլովիչը բավական շատ գիրք ուներ՝ ավելի քան հարյուր հատոր, բայց ոչ ոք նրա ձեռքին գիրք չէր տեսել երբևիցե։ Նա իսկույն գրապահարանի բանալին տվեց Սմերդյակովին. «Դե՛հ, վերցրու և կարդա, մեր գրադարանապետը կլինես։ Փոխանակ թրև գալու բակում, նստիր ու կարդա։ Ահա այս մեկը կարդա»,— և Ֆյոդոր Պավլովիչը պահարանից հանեց «Երեկոներ Դիկանկայի մերձակա ագարակում» գիրքը։

Տղան կարդաց, բայց դժգոհ մնաց. ոչ մի անգամ չծիծաղեց, ընդհակառակը՝ խոժոռվեց ի վերջո։

— Ի՞նչ է։ Ծիծաղելի չէ՞,— հարցրեց Ֆյոդոր Պավլովիչը։

Սմերդյակովը լուռ մնաց։

— Պատասխանի՛ր, տխմա՛ր։

— Սուտ-սուտ բաների մասին է ամբողջը,— մրթմրթաց Սմերդյակովը, քմծիծաղ տալով։

— Դե կորի՛ր գրողի ծոցը։ Ծառայի հոգի է քո հոգին։ Կա՛ց, ահա քեզ Սմարագդովի «Ընդհանուր պատմությունը», ա՛յ այստեղ ամեն ինչ ճշմարիտ է, կարդա՛։

Բայց Սմերդյակովը տասը էջ անգամ չկարդաց Սմարագդովից. ձանձրալի թվաց նրան։ Եվ այդպես էլ փակվեց նորից գրապահարանը։ Շուտով Մարֆան ու Գրիգորին հայտնեցին Ֆյոդոր Պավլովիչին, որ վերջերս Սմերդյակովը հանկարծ սկսել է սոսկալի բծախնդիր դառնալ ուտելիքի նկատմամբ. նստում ու նայում է ապուրին, գդալը վերցնում է ու խառնում, խառնում, բան է փնտրում ապուրի մեջ, թեքվում է, տնտղում, վերցնում է մի գդալ ու բռնում լույսի դեմ։

— Ի՞նչ է, ուտի՞ճ,— հարցնում էր երբեմն Գրիգորին։

— Ճանճ է գուցե,— նկատում էր Մարֆան։

Մաքրասեր պատանին երբեք չէր պատասխանում, բայց նույն բանն էր անում նաև հացի, մսի և բոլոր մյուս ուտելիքների նկատմամբ. մեկ էլ տեսար՝ պատառաքաղը բարձրացնում էր լույսի դեմ, ասես մանրադիտակով զննում էր պատառը և երբեմն երկար տատանվելուց հետո վերջապես որոշում էր բերանը տանել։ «Սրա՞ն տես, ի՞նչ մի աղայի ձագ է դառել»,— քրթմնջում էր Գրիգորին՝ նայելով նրան։ Լսելով Սմերդյակովի այդ նոր հատկության մասին, Ֆյոդոր Պավլովիչն անմիջապես որոշեց խոհարար դարձնել նրան և Մոսկվա ուղարկեց, որ սովորի այդ արհեստը։ Մի քանի տարի նա սովորեց ու վերադարձավ խիստ փոխված դիմագծերով։ Հանկարծ արտակարգորեն ծերացել էր մի տեսակ, իր տարիքին բնավ չհամապատասխանող կնճիռներ էին երևացել դեմքին, սկսել էր ամորձատ մարդու նմանվել։ Իսկ բնավորությամբ մնացել էր գրեթե նույնը, ինչ Մոսկվա գնալուց առաջ էր. նույնպես խուսափում էր մարդկանցից և նվազագույն պահանջ չէր զգում որևէ մեկի հետ ընկերություն անելու։ Մոսկվայում ևս, ինչպես իմացանք հետո, լռակյաց էր եղել։ Իսկ բուն Մոսկվան շատ քիչ էր հետաքրքրել նրան, այնպես որ հազիվ թե մի երկու նորություն էր տեսել այնտեղ, ուրիշ ոչ մի բանի ուշադրություն չէր դարձրել։ Մի անգամ նույնիսկ թատրոն էր գնացել, բայց վերադարձել էր լուռ ու դժգոհ։ Եվ սակայն, այդ բոլորով հանդերձ, նա լավ հագնված եկավ Մոսկվայից, սերթուկն ու սպիտակեղենը՝ մաս-մաքուր։ Օրը երկու անգամ, առանց թերանալու, ուշի-ուշով խոզանակում էր հագուստը, շատ էր սիրում անգլիական հատուկ ներկով փայլեցնել պճնամոլի իր կոշիկները, որոնք հորթի կաշվից էին, և այնպես էր անում, որ դրանք շողշողում էին հայելու նման։

Պարզվեց, որ հիանալի խոհարար է դարձել։ Ֆյոդոր Պավլովիչը ոռճիկ նշանակեց նրան, և Սմերդյակովն այդ ոռճիկը գրեթե ամբողջությամբ հատկացնում էր իր հագուստ-կապուստին, օծանելիքներին և նման այլ բաների։ Բայց կարծես թե կանացի սեռն էլ նույնքան արհամարհում էր, որքան տղամարդկանց, ծանրաբարո ու գրեթե անմատչելի էր լինում կանանց ներկայությամբ։ Ֆյոդոր Պավլովիչն սկսեց մի ուրիշ տեսանկյունից էլ նայել Սմերդյակովին։ Եվ ահա թե ինչու. նրա հիվանդության նոպաներն ավելի հաճախակի և ուժգին էին դարձել, և այն օրերին, երբ նա հիվանդ պառկում էր, Մարֆա Իգնատևնան էր պատրաստում կերակուրը. դա բոլորովին ձեռնտու չէր Ֆյոդոր Պավլովիչին։

— Ինչի՞ց է, որ այդպես շուտ-շուտ նոպաներ ես ունենում,— խեթ հայացքով նայում էր երբեմն նոր խոհարարին, զննելով նրա դեմքը։— Գոնե ամուսնանայիր մեկն ու մեկի հետ, հը՞, ուզո՞ւմ ես՝ ամուսնացնեմ...

Բայց Սմերդյակովն այդ խոսքերի վրա գունատվում էր վրդովմունքից, թեև ոչինչ չէր պատասխանում։ Ֆյոդոր Պավլովիչը լռում էր ու ձեռքը թափ տալիս։ Կարևորն այն էր, որ մի անգամ ընդմիշտ հավատում էր նրա ազնվությանը. վստահ էր, որ ոչինչ չի վերցնի, չի գողանա։ Մի անգամ Ֆյոդոր Պավլովիչը, հարբած լինելով, երեք հատ նոր ստացած հարյուրանոց թղթադրամ էր գցել սեփական բակում, ցեխի մեջ, և միայն հաջորդ օրն էր գլխի ընկել, որ պակասում են դրանք. հազիվ էր սկսել շտապ-շտապ փնտրել գրպանների մեջ, երբ հանկարծ տեսել էր, որ երեք վարդագույն թղթադրամները դրած են սեղանի վրա։ Ո՞վ էր դրել։ Սմերդյակովը դեռ երեկ գտել էր բակում ու բերել էր։ «Է՜, ախպերս, քեզ նման մարդ չեմ տեսել»,— կարճ ու կտրուկ ասել էր Ֆյոդոր Պավլովիչը և տասը ռուբլի նվիրել նրան։ Պետք է ավելացնել, որ ոչ միայն հավատում էր նրա ազնվությանը, այլև նույնիսկ, չգիտես ինչու, սիրում էր նրան, թեև երիտասարդը Ֆյոդոր Պավլովիչին էլ նայում էր նույն ծուռ հայացքով, որով նայում էր ուրիշներին, և միշտ լուռ էր մնում։ Շատ հազվադեպ էր մի բան ասում իր կողմից։ Եթե որևէ մեկը, նայելով նրան այդ ժամանակ, հարց տար ինքն իրեն, թե արդյոք ինչո՞վ է հետաքրքրվում այս երիտասարդը և ի՞նչն է ամենից ավելի նրա միտքն զբաղեցնում,— ճիշտն ասած անկարելի կլինեիր նրա դեմքին նայելով պատասխան գտնել։ Բայց

և այնպես պատահում էր, որ նա երբեմն կանգ էր առնում մեկեն, լինի հենց տանը կամ թեկուզ բակում, նույնիսկ փողոցում, սուզվում էր մտքերի մեջ և այդպես կանգնած մնում էր մինչև իսկ տասը րոպե։ Դիմագետը, ուշադիր զննելով նրան, կարող էր ասել, որ ո՞չ խոհ կա այդ դեմքի մեջ, ոչ էլ որևէ մի միտք, այլ պարզապես մի տեսակ անշարժ հայեցողություն։ Նկարիչ Կրամսկոյը մի ուշագրավ նկար ունի, որ կոչվում է «Հայեցողը». պատկերված է ձմեռային մի տեսարան անտառում, և անտառով անցնող ճանապարհին մենմենակ կանգնած է պատառոտուն բաճկոնով ու տրեխներով մի գեղջուկ, որ հասել է կատարելապես ամայի մի տեղ, ահա կանգ է առել և կարծես խորասուզվել է մտքերի մեջ, բայց նա չի մտածում, այլ ընկել է «հայեցողության» մեջ։ Եթե դիպչեք նրան, կցնցվի ու նոր զարթնածի նման կնայի ձեր երեսին, բայց ոչինչ չի հասկանա։ Ճիշտ է, անմիջապես ուշքի կգա, սակայն եթե հարցնեք, թե ինչի մասին էր մտածում այդպես կանգնած, հավանաբար ոչինչ չի հիշի, թեև իր մեջ պահած կլինի անշուշտ այն տպավորությունը, որի տակ գտնվում էր իր հայեցողության պահին։ Իսկ այդ տպավորությունները թանկ են նրա համար, և նա կուտակում է դրանք անկասկած, կուտակում է աննկատելիորեն և նույնիսկ առանց գիտակցելու. թե ինչո՞ւ, ի՞նչ նպատակով՝ նույնպես չգիտե անշուշտ։ Գուցե հանկարծ, երկար տարիների ընթացքում տպավորություններ կուտակելուց հետո, թողնի ամեն ինչ ու գնա Երուսաղեմ՝ որպես ուխտավոր թափառելու և հոգին փրկելու, և կամ գուցե հարազատ գյուղը կրակի տա, գուցե նաև թե՛ մեկն անի, թե՛ մյուսը միաժամանակ։ Ժողովրդի մեջ բավական շատ են հայեցողները։ Ահա Սմերդյակովն էլ այդպիսի հայեցողներից մեկն էր հավանաբար, և ըստ երևույթին նույնպես կուտակում էր իր տպավորություններն ագահորեն, դեռ ինքն էլ համարյա չիմանալով, թե ինչու։

VII

ԲԱՆԱՎԵՇ

Սակայն Բաղաամի էշը հանկարծ սկսել էր խոսել։ Առիթ ծառայող նյութը տարօրինակ մի դեպք էր. առավոտյան, վաճառական Լուկյանովի խանութում գնումներ կատարելու ժամանակ, Գրիգորին նրանից լսել էր, թե մի ռուս զինվոր ասիական հեռավոր սահմանի վրա գերի է ընկել մահմեդականներին, և երբ նրանք, տանջալից ու անմիջական մահվամբ սպառնալով, ստիպել են հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել իսլամը, զինվորը մերժել է դավաճանել իր հավատքին և հանձն է առել տանջանքները, թողել է, որ իրեն մորթազերծ անեն, և մահացել է փառաբանելով ու գովերգելով Քրիստոսին. այդ սխրագործության պատմությունն էլ հենց տպված է եղել նույն առավոտ ստացված թերթում։ Եվ ահա այդ դեպքն էր պատմել Գրիգորին ճաշի վրա։ Ֆյոդոր Պավլովիչը միշտ էլ սիրում էր ծիծաղել ու խոսել ճաշից հետո, աղանդերը ճաշակելու ժամանակ, թեկուզ և Գրիգորիի հետ։ Իսկ այս անգամ տրամադրությունը հատկապես թեթև էր, հաճելի զվարթությունը հորդում էր նրանից։ Կոնյակն ըմպելով ու լսելով այդ պատմությունը, նա ասաց, թե պետք է անմիջապես սրբերի կարգը դասել այդպիսի զինվորին և նրա քերթված մորթն ուղարկել մի որևէ վանք. «Ա՜յ թե ժողովուրդ կթափվի, փողն էլ հետը»։ Գրիգորին հոնքերը կիտեց, տեսնելով, որ Ֆյոդոր Պավլովիչը չի հուզվել բնավ, այլ, ըստ իր մշտական սովորության, սկսում է սրբապիղծ բաներ ասել։ Եվ ճիշտ այդ վայրկյանին Սմերդյակովը, որ կանգնած էր դռան մոտ, հանկարծ ժպտաց։ Առաջ էլ Սմերդյակովին շատ հաճախ արտոնվում էր սպասարկել սեղանի վրա, այսինքն ճաշի ավարտին։ Իսկ այն օրից, երբ Իվան Ֆյոդորովիչը ժամանեց մեր քաղաքը, նա սկսեց գրեթե ամեն անգամ ներկայանալ ճաշին ու սպասարկել։

— Ի՞նչ ես ծիծաղում,— հարցրեց Ֆյոդոր Պավլովիչը, վայրկենապես նկատելով նրա ժպիտը և անշուշտ հասկանալով, որ դա կապ ունի Գրիգորիի խոժոռվելու հետ։

— Ինչ վերաբերում է ինձ,— հանկարծ սկսեց խոսել Սմերդյակովն անսպասելիորեն ու բարձր ձայնով,— կարծում եմ, որ եթե այդ գովելի զինվորի սխրագործությունն իրոք որ շատ մեծ է, նույնպես էլ, ըստ իս, ոչ մի մեղք գործած չէր լինի, եթե այդպիսի մի դիպվածով հրաժարվեր էլ, դիցուք, Քրիստոսի անունից և իր սեփական մկրտությունից, որպեսզի հենց դրանով էլ փրկեր իր կյանքը բարի գործերի համար, որոնցով և տարիների ընթացքում կքավեր իր փոքրոգությունը։

— Ինչպե՞ս թե մեղք գործած չէր լինի։ Փչո՞ւմ ես։ Դրա

համար քեզ ուղղակի դժոխք կքշեն և մի լավ կխորովեն՝ ոչխարի մսի նման,— վրա տվեց Ֆյոդոր Պավլովիչը։

Եվ ահա այդ պահին էր, որ մտավ Ալյոշան։ Ֆյոդոր Պավլովիչը, ինչպես տեսանք, սոսկալի ուրախացավ Ալյոշային տեսնելով։

— Քո գծո՞վ է, քո գծո՞վ,— ուրախ քրքջում էր, նստեցնելով Ալյոշային, որ նա ևս լսի։

— Ինչ վերաբերում է ոչխարի մսին՝ այդպես չէ, և ոչինչ էլ չեն անի այնտեղ դրա համար, և նույնիսկ ոչ մի այդպիսի բան պետք չէ անեն, եթե լիովին արդարացի մոտենան,— նկատեց Սմերդյակովը լրջամիտ շեշտով։

— Ի՞նչ։ Ինչպե՞ս թե լիովին արդարացի մոտենան,— ավելի ևս ուրախ գոռաց Ֆյոդոր Պավլովիչը, ծնկով բոթելով Ալյոշային։

— Ստո՛ր արարած է նա, ուրիշ ոչինչ,— պոռթկաց հանկարծ Գրիգորին։ Նա ցասումով նայեց ուղղակի Սմերդյակովի աչքերի մեջ։

— Ինչ վերաբերում է ստոր արարած լինելուն՝ մի փոքր համբերեցեք, Գրիգորի Վասիլևիչ,— հանգիստ ու զուսպ դիմադարձեց Սմերդյակովը,— ավելի լավ է՝ ինքներդ դատեցեք, որ եթե գերի եմ ընկել քրիստոնեական ցեղը տանջողների ձեռքը, և նրանք ինձնից պահանջում են անիծել աստծո անունը և հրաժարվել իմ սուրբ մկրտությունից, ապա իմ սեփական դատողությունը կատարելապես լիազորում է ինձ այդ բանն անելու, որովհետև ոչ մի մեղանչում չկա դրա մեջ։

— Բայց դա ասել ես արդեն։ Մի՛ ծաղկեցրու, այլ ապացուցի՛ր,— գոռաց Ֆյոդոր Պավլովիչը։

— Ի՞նչ ես սպասում ապուր եփողից,— շշնջաց Գրիգորին արհամարհանքով։

— Ինչ վերաբերում է ապուր եփող լինելուն՝ նույնպես մի փոքր համբերեցեք և ինքներդ դատեցեք, առանց նախատելու, Գրիգորի Վասիլևիչ։ Ուրեմն՝ հենց որ ասեմ տանջողներին՝ «Ոչ, ես քրիստոնյա չեմ և անիծում եմ իմ ճշմարիտ աստծուն», իսկույնևեթ, աստվածային ամենագերագույն դատաստանով, անմիջական ու հատուկ նզովքի կենթարկվեմ և արտաքսված կլինեմ սուրբ եկեղեցուց՝ միանգամայն իբրև թե հեթանոս լինեի, այնպես նույնիսկ, որ ճիշտ նույն վայրկյանին կկատարվի այդ բանը, այսինքն ոչ թե միայն ասելու

պահին, այլ հենց որ մտադրվեմ ասել, ուստի մի քառորդ վայրկյան իսկ չի անցնի, և արդեն արտաքսված կլինեմ։ Այնպե՞ս է, թե չէ, Գրիգորի Վասիլևիչ։

Նա ակնհայտ գոհունակությամբ դիմում էր Գրիգորիին, թեև իրականում Ֆյոդոր Պավլովիչի հարցերին էր պատասխանում միայն և շատ էլ լավ էր հասկանում այդ, բայց դիտմամբ այնպես էր ձևացնում, որ իբր թե Գրիգորին է տալիս այդ հարցերը։

— Իվա՛ն,— գոչեց հանկարծ Ֆյոդոր Պավլովիչը,— թեքվիր այս կողմ, մի բան ասեմ ականջիդ։ Նա քեզ համար է սարքում այս ամբողջ տեսարանը, ուզում է, որ գովես իրեն։ Դու էլ գովի՛ր։

Իվան Ֆյոդորովիչը կատարյալ լրջությամբ լսեց այդ ենթադրությունը, որ հայրը ոգևորված շշնջաց նրա ականջին։

— Սպասի՛ր, Սմերդյակով, լռիր մի րոպե,— գոռաց կրկին Ֆյոդոր Պավլովիչը։— Իվա՛ն, թեքվիր նորից, մի բան էլ ասեմ։

Իվան Ֆյոդորովիչը դարձյալ կատարելապես լուրջ դեմքով հակվեց նրա կողմը։

— Քեզ էլ եմ սիրում այնպես, ինչպես Ալյոշկային։ Մի՛ կարծիր, թե քեզ չեմ սիրում։ Կոնյակ լցնե՞մ։

— Տվեք։ «Բայց ինքդ կարգին հարբել ես»,— մտածեց Իվան Ֆյոդորովիչն ու սեղանն նայեց հորը։ Իսկ Սմերդյակովին դիտում էր մեծագույն հետաքրքրությամբ։

— Դու էս րոպեիս էլ նզովյալ ես ու անիծյալ,— սկսեց հանկարծ նախատինք թափել Գրիգորին,— և ինչպե՞ս ես դու համարձակվում, ստո՛ր արարած, դատողություններ անել դրանից հետո, եթե...

— Մի՛ հայհոյիր, Գրիգորի, մի՛ հայհոյիր,— ընդհատեց Ֆյոդոր Պավլովիչը։

— Մի քիչ էլ սպասեցեք, Գրիգորի Վասիլևիչ, թեկուզ նվազագույն մի պահ ևս, ու լսեցեք շարունակությունը, որովհետև ես չեմ վերջացրել իմ ամբողջ ասելիքը։ Ուրեմն՝ հենց այն վայրկյանին, որ ենթարկվեցի աստծո անմիջական անեծքին, ճիշտ այդ նույն, այդ նույն գերագույն վայրկյանին մեկ է թե հեթանոս դարձա արդեն, իմ մկրտությունը ետ առնվեց ինձնից և ի չիք համարվեց։ Գոնե այս այսպե՞ս է, թե չէ։

— Ամփոփի՛ր, ախպերս, շուտ արա, վերջացրո՛ւ,— շտապեցրեց Ֆյոդոր Պավլովիչը, մի մեծ կում ըմբոշխնելով ըմպանակից։

— Իսկ եթե քրիստոնյա չեմ այլևս, ուրեմն և սուտ չեմ ասել իմ տանջողներին, երբ նրանք հարցնում էին՝ քրիստոնյա՞ եմ ես, թե քրիստոնյա չեմ, որովհետև նույնինքն աստծո կողմից արդեն արտաքսված էի իմ քրիստոնեությունից՝ լոկ մտադրված լինելու պատճառով ու նույնիսկ տանջողներին իմ խոսքն ասելուց առաջ։ Եվ եթե շնորհազուրկ եմ արդեն, ապա ի՞նչ ձևով և ո՞ր արդարությամբ կարող են անդենական աշխարհում պատասխան պահանջել ինձնից, որպես քրիստոնյայից, թե ինչու եմ ուրացել Քրիստոսին, երբ դեռ ուրանալուց առաջ, միայն այդ միտքն ունենալուս համար, զրկված եմ եղել արդեն իմ մկրտությունից։ Եթե այլևս քրիստոնյա չեմ, ուրեմն չեմ էլ կարող ուրանալ Քրիստոսին, որովհետև ուրանալու ոչինչ չեմ ունենա այն ժամանակ։ Անօրեն թաթարից, Գրիգորի Վասիլևիչ, ո՞վ կարող է պատասխան պահանջել թեկուզ և երկընքում, որ նա քրիստոնյա չի ծնվել, և ո՞վ կարող է նրան պատժել դրա համար, եթե նկատի առնենք, որ մի եղից երկու կաշի չեն քերթի։ Եվ եթե մինչև անգամ նույնինքն ամենակալն աստված պատասխան պահանջի թաթարից՝ սրա մեռնելուց հետո, ապա կարծում եմ, որ նվազագույն մի պատիժ կտա (քանի որ չի կարելի անշուշտ բոլորովին անպատիժ թողնել նրան), դատելով, որ մեղադրելի չէ նա, եթե անօրեն ծնողներից է աշխարհ եկել որպես անօրեն։ Տեր աստված չի կարող անշուշտ բռնի վերցնել թաթարին ու ասել, թե նա ևս քրիստոնյա էր։ Այդ պիտի նշանակեր, որ ամենակալ տերն իսկական սուտ է ասել։ Բայց երկնի ու երկրի ամենակալ տերը կարո՞ղ է միթե սուտ խոսել։ Թեկուզ իր որևէ մի խոսքը կարո՞ղ է սուտ լինել, տիա՛ր։

Գրիգորին քարացել էր և աչքերը չռած նայում էր հռետորին։ Թեև լավ չէր հասկանում ասվածը, բայց հանկարծ ամբողջ այդ բանդագուշանքից բան-ինչ հասկացավ և կանգնեց այն մարդու նման, որն անակնկալորեն ճակատը խփում է պատին։ Ֆյոդոր Պավլովիչը մի շնչով դատարկեց ըմպանակը և ի սրտե քրքջաց իր սուր ծիծաղով։

— Ալյո՛շկա, Ալյո՛շկա, տեսա՞ր ինչ փաստաբան է, հը՞։ Ա՛խ, դո՛ւ, կազուի՛ստ։ Կա-չկա, սա մի տեղ ճիզվիտների հետ է եղել, իվա՛ն։ Ա՛խ դո՛ւ, գարշահոտ[1] ճիզվիտ, ո՞վ է քեզ սովորեցրել այդ բաները, հա՞։ Բայց թե՝ փչո՛ւմ ես, կազուիստ.

[1] Ռուսերեն՝ смердящий (սմերդյայշչի)։ Ծ. թ.։

փչո՛ւմ, փչում ու փչո՛ւմ ես։ Լաց մի՛ լինի, Գրիգորի, մենք այս նույն րոպեիս ջարդուփշուր կանենք նրան։ Դու իմ ա՛յս հարցին պատասխանիր, Բաղաամի է՛շ. ենթադրենք՝ դու իրավացի ես տանջողների առաջ, բայց չէ՞ որ այնուամենայնիվ ինքդ ես քո մեջ ուրացել քո հավատքը և ինքդ էլ ասում ես, որ այդ նույն ժամին նզովվել ու անիծվել ես. է՞, որ նզովքն իջել է արդեն գլխիդ, դժոխքում հո չեն շոյելու գլուխդ այդ նզովքի համար, չէ՞։ Սրա՞ մասին ինչ է կարծիքդ, ճիզվի՞տ իմ սքանչելի։

— Այո, կասկած չկա, որ ինքս եմ իմ մեջ ուրացել, բայց համենայն դեպս այդ պարագային էլ նմանապես ոչ մի հատուկ մեղք չի եղել, իսկ եթե եղել է մի փոքրիկ մեղք, ապա շատ ու շատ սովորական մի մեղք է դա։

— Ինչպե՞ս թե շա՞տ ու շատ սովորական։

— Ստո՛ւմ ես, ան-ն-նիծյալ արարած,— թշշաց Գրիգորին։

— Ինքներդ դատեցեք, Գրիգորի Վասիլևիչ,— շարունակեց Սմերդյակովը հանդարտ ու լրջմիտ, գիտակցելով իր հաղթանակը, բայց և կարծես մեծահոգություն անելով խորտակված հակառակորդի նկատմամբ,— ինքներդ դատեցեք, Գրիգորի Վասիլևիչ, չէ՞ որ ասված է սուրբ գրոց մեջ, որ եթե նույնիսկ մանանեխի ամենափոքր հատիկի չափ հավատք ունեք և ընդամին եթե ասեք սույն լեռան, որ սահի-ընկնի ծովի մեջ, ապա լեռը կսահի առանց դույզն հապաղման՝ ձեր առաջին իսկ հրամանով։ Էհ ուրեմն, Գրիգորի Վասիլևիչ, եթե ես անհավատ եմ, իսկ դուք՝ այնքան հավատացյալ, որ նույնիսկ անընդհատ նախատում եք ինձ, փորձեցեք ինքներդ ասել սույն լեռան, որ սահի-ընկնի ոչ թե ծովի մեջ (որովհետև այնտեղից հեռու է մինչև ծովը), այլ թեկուզ և մեր գարշահոտ գետակի մեջ, ա՛յ մեր այգու ետև հոսող գետակի, և ինքներդ կտեսնեք նույն վայրկյանին, թե ոչինչ չի շարժվի իր տեղից, այլ որքան էլ գոռաք՝ ամեն ինչ կմնա իր նախկին կարգ ու կանոնով։ Իսկ դա նշանակում է, որ դուք էլ չեք հավատում պատշաճ ձևով, Գրիգորի Վասիլևիչ, այլ լոկ ուրիշներին եք ամեն կերպ նախատում այդ կապակցությամբ։ Եվ դարձյալ՝ ի նկատի ունենալով, որ մեր օրերում ոչ ոք, ոչ միայն դուք, այլև բացարձակապես ոչ ոք, նույնիսկ ամենաբարձր դեմքերից սկսյալ մինչև ամենահետին գյուղացին, չի կարող լեռները շպրտել ծովի մեջ, բացի թերևս մի ոմն մար-

դուց ամբողջ երկրի երեսին, կամ առ առավելն երկու մարդուց, և նրանք էլ գուցե եգիպտական անապատի մի որևէ անկյունում թաքնված ճգնում են, այնպես որ անկարելի է նույնիսկ գտնել նրանց,— եթե այդպես է ուրեմն, եթե պարզվում է, որ բոլոր մնացյալներն անհավատ են, ապա միթե կանիծի՞ աստված բոլոր սուրբ մնացյալներին, այսինքն երկրի ամբողջ բնակչությունը, բացի այն ինչ-որ երկու ճգնավորներից, և իր այնքան հայտնի ողորմածությամբ չի՞ ների որևէ մեկին։ Արդ ուրեմն ես էլ հույս եմ տածում, որ մի անգամ տարակուսելուց հետո ներումն կստանամ, երբ զղջման արտասուք թափեմ։

— Կա՛ց,— ճչաց Ֆյոդոր Պավլովիչը՝ հրճվանքի գագաթնակետին հասած,— ուրեմն դու համենայն դեպս ենթադրում ես, որ կա՞ գոնե այդպիսի երկու հոգի, որ կարող են լեռներ շարժել։ Իվան, հիշիր այս կետը, գրի առ մոտդ. ահա՛ քեզ ռուս մարդն իր ամբողջ էությամբ։

— Բացարձակապես ճիշտ նկատեցիք, որ դա ժողովրդական բնորոշ գիծ է հավատքի մեջ,— համաձայնվեց Իվան Ֆյոդորովիչը՝ հավանություն տվող ժպիտով։

— Համաձա՞յն ես։ Ուրեմն ճիշտ որ այդպես է, եթե դու էլ ես համաձայնվում։ Ճիշտ է, չէ՞, Ալյոշկա։ Կատարելապես ռուսական է այդպիսի հավատքը, չէ՞։

— Ոչ, Սմերդյակովի հավատքը բոլորովին ռուսական չէ,— լուրջ ու հաստատ ասաց Ալյոշան։

— Ես ոչ թե նրա հավատքն եմ ասում, այլ այդ գիծը, այդ երկու ճգնավորների հարցը, միայն այդ մի փոքրիկ գծի մասին է իմ խոսքը. ռուսակա՞ն է այդ գիծը, չէ՞, ռուսակա՞ն։

— Այո, այդ գիծը կատարելապես ռուսական է,— ժպտաց Ալյոշան։

— Մի կլոր ոսկի արժե քո ասածը, Բաղաամի է՛շ, և այսօր իսկ կուղարկեմ քեզ այդ կլորիկ ոսկին, բայց գալով մյուս ասածներիդ՝ փչում ես համենայն դեպս, փչո՞ւմ ես ու փչում։ Գիտցի՛ր, հիմարի՛ գլուխ, պարզապես թեթևամտության երեսից է, որ այստեղ մենք չենք հավատում բոլորս էլ, որովհետև ժամանակ չունենք. նախ՝ գործերը թափվել են մեր գլխին, իսկ երկրորդ՝ աստված մեզ քիչ ժամանակ է տվել, միայն քսանչորս ժամ է սահմանել օրվա մեջ, այնպես որ մի կուշտ քնելու ժամանակ էլ չի մնում, էլ ո՞ւր մնաց թե ապաշխարելու։ Իսկ դու այդ տանջողների առաջ հավատքդ ես ուրանում, երբ էլ ոչ մի բանի մասին մտածելու կարիք չունես, բացի հավատքից, և երբ հենց պետք է քո հավա՛տքը ցույց տաս։ Իմ կարծիքով, ախպերս, այդպես է ստացվում, չէ՞։

— Ստացվելը՝ ստացվում է, բայց ինքներդ դատեցեք, Գրիգորի Վասիլևիչ, առավել ևս թեթևանում է իմ մեղքը, եթե այդպես է ստացվում։ Այո, եթե այդ պահին ես հավատայի բուն ճշմարտությանը, ինչպես որ պետք է հավատալ, ապա ուրեմն իսկույն մեղք գործած կլինեի, եթե իմ հավատքի համար չկրեի տանջանքները և ընդունեի մահմեդական պիղծ հավատքը։ Բայց չէ՞ որ այդ դեպքում գործը տանջանքներին չէր հասնի, որովհետև բավական կլիներ, որ այդ նույն վայրկյանին ասեի սուրբ լեռան՝ շարժվի՛ր ու ճզմի՛ր տանջողին, և լեռը կշարժվեր ու նույն վայրկյանին կճզմեր նրան ուտիճի պես, իսկ ես, իբրև թե ոչինչ չի պատահել, կթողնեի ու կգընայի, գովերգելով ու փառաբանելով աստծուն։ Իսկ եթե ես հենց նույն վայրկյանին փորձել եմ այդ բոլորը և նույնիսկ հատկապես գոռացել եմ սուրբ լեռան՝ ճզմի՛ր այս տանջողներին, բայց նա չի ճզմել, ապա ուրեմն, ասացեք խնդրեմ, ինչպե՞ս չտարակուսեի այդ ժամանակ, այն էլ մահվան մեծ երկյուղի այդպիսի սարսափելի պահին։ Առանց այդ էլ գիտեմ արդեն, որ լիովին չեմ արժանանալու երկնի արքայության (որովհետև չէ՞ որ լեռը չշարժվեց իմ խոսքով, նշանակում է՝ շատ էլ չեն վստահում այնտեղ իմ հավատքին, և շատ էլ մեծ մի վարձատրություն չի սպասում ինձ անդենական աշխարհում), ուրեմն ինչո՞ւ այլևս թողնեմ, որ մեկ էլ իմ կաշին քերթեն, երբ որևէ օգուտ չեմ ստանալու դրանից։ Որովհետև՝ եթե նույնիսկ մինչև կեսն էլ քերթեին իմ կոնակի կաշին, այդ դեպքում էլ սուրբ լեռը չէր շարժվի իմ խոսքով կամ իմ աղաղակով։ Եվ այդպիսի բոպեին ոչ թե միայն կասկած կարող է ընկնել մարդու սիրտը, այլև կարելի է նույնիսկ դատողությունը կորցնել վախից, այնպես որ մարդ մտածել անգամ չի կարողանա ամենևին։ Արդ ուրեմն ինչպե՞ս կարող եմ մի հատուկ մեղք գործած լինել, եթե, ոչ մի շահ կամ վարձատրություն չտեսնելով ո՛չ այս, ո՛չ էլ այն աշխարհում, գեթ իմ մորթը փրկեմ այդ պահին։ Ուստի, լիովին ապավինելով աստծո ողորմության, հույս եմ տածում, որ կատարյալ ներումն կստանամ...

VIII

ԿՈՆՅԱԿ ԽՄԵԼՈՎ

Վեճն ավարտվեց, բայց, տարօրինակ բան, Ֆյոդոր Պավլովիչը, որն այնքան զվարթ էր, վերջում խոժոռվեց հանկարծ։ Հոնքերը կիտեց ու մի բաժակ կոնյակ կոնծեց։ Եվ այդ բաժակն արդեն բոլորովին ավելորդ էր։

— Դե դո՛ւրս կորեք այստեղից, ճիզվիտնե՛ր,— գոռաց նա ծառաներին։— Չքվի՛ր, Սմերդյակով։ Այսօր կուղարկեմ իմ խոստացած ոսկեդրամը, իսկ հիմա չքվիր։ Մի՛ լացիր, Գրիգորի, գնա Մարֆայի մոտ, կմխիթարի և անկողին կդնի քեզ։ Սրիկանե՛ր, չեն թողնում, որ մարդ ճաշից հետո լուռ ու հանգիստ նըստի,— պոռթկաց հանկարծ վրդովմունքով, երբ ծառաներն անմիջապես հեռացան իր հրամանի վրա։— Հիմա Սմերդյակովն ամեն անգամ ճաշից հետո քիթը խցկում է այստեղ։ Դո՛ւ ես նրա հետաքրքրությունը շարժել այդքան, ինչո՞վ ես այդպես հրապուրել,— ավելացրեց նա, դառնալով Իվանին։

— Բացարձակապես ոչ մի բանով,— պատասխանեց Իվանը։— Խելքին փչել է հարգել ինձ։ Քծնողի ու գռեհիկի մեկն է։ Եվ սակայն առաջին գծի թնդանոթային միս՝ երբ ժամանակը հասնի։

— Առաջին գծի՞։

— Լինելու են ուրիշներ և ավելի լավերը, բայց լինելու են նաև այսպիսիներ։ Նախ այսպիսիներն են լինելու, իսկ սրանցից հետո՝ ավելի լավերը։

— Իսկ ե՞րբ է հասնելու ժամանակը։

— Հրթիռը կսկսի վառվել, բայց գուցե և մխա ու հանգչի։ Ժողովուրդն առայժմ շատ էլ չի սիրում լսել այս ապուր եփողներին։

— Ա՜յ, սիրելիս, հենց այն է, որ այսպիսի Բաղաամի էշը մտածում է, մտածում, և սատանան գիտե, թե ինչ բաների է հանգում իր այդ ուղեղում։

— Մտքեր է կուտակում,— ժպտաց Իվանը։

— Գիտե՞ս ինչ, ա՜յ ես վստահ եմ, որ նա ինձ էլ չի կարող հանդուրժել, ինչպես որ ոչ ոքի չի հանդուրժում, և քե՛զ էլ նմանապես, թեև դու կարծում ես, թե «խելքին փչել է հարգել» քեզ։ Իսկ Ալյոշկային՝ ավելի ևս, արհամարհում է Ալյոշկային։ Սակայն գողություն չի անի, ահա՛ խնդիրը. բամբասող չէ, լեզուն իրեն է պահում, տան գաղտնիքները դուրս չի տալիս, փառավոր է թխում ձկով կարկանդակը, բայց այդ բոլորով հանդերձ՝ գրո՞ղը տանի նրան, ճիշտն ասած, արժե՞ խոսել նրա մասին։

— Իհարկե չարժե։

— Իսկ գալով այն հարցին, թե ինչեր է մտմտում նա իր այդ խելապատիկում, պետք է ընդհանրապես դնգսել ռուս մուժիկին։ Ես միշտ էլ պնդել եմ այդ բանը։ Մեր մուժիկը խարդախ է, չարժե նրան խղճալ, և դեռ լավ է, որ հիմա էլ մեկ-մեկ ճիպոտո՞վ ծեծում են նրան։ Ռուսաց երկրի ամրությունն են ցարասու անտառները։ Եթե անտառները ոչնչացնեն, կկործանվի ռուսաց երկիրը։ Ես խելացի մարդկանց կողմն եմ։ Դադարեցինք մուժիկներին ծեծելուց, որովհետև խելքներս շատացել էր, բայց նրանք շարունակում են՝ իրենք իրենց ծեծել։ Եվ լավ են անում։ «Որով չափով չափէք, չափեսցի ձեզ», կամ ինչպե՞ս է ասված... Մի խոսքով՝ չափեսցի։ Իսկ Ռուսաստանը խոզություն է։ Սիրելիս, եթե իմանայի՞ր, թե ինչպես եմ ատում Ռուսաստանը... այսինքն ոչ թե Ռուսաստանը, այլ բոլոր այս արատները... բայց գուցե և Ռուսաստանը։ Tout cela c'est de la cochonnerie[1]։ Գիտե՞ս ինչ եմ սիրում։ Սրամտություն եմ սիրում։

— Նորից մի բաժակ խմեցիք։ Բավական է արդեն։

— Սպասի՞ր, դեռ մի բաժակ էլ, հետո է՛լի մի բաժակ, և վերջ։ Չէ՞, կա՛ց, կա՛ց, խոսքս կտրեցիր։ Անցնում էի Մոկրոեով, հարցրի մի ծերուկի, նա էլ թե՝ «Մենք, ասում է, ամենից շատ սիրում ենք, որ աղջիկներին ծեծի դատապարտենք, և ծեծելու գործն էլ միշտ թողնում ենք տղաներին։ Հետո էլ, էսօրվա ծեծած աղջկանը էգուց տղան կին է առնում, էնպես որ, մեզ մոտ, ասում է, էդ բանը հենց աղջիկներին է դուր գալիս»։ Ա՜յ թե մարկիզ դը Սադներ են, չէ՞։ Բայց ինչ ուզում եք ասեք, սրամիտ բան է։ Մե՞նք էլ գնայինք ու մի աչք գցեինք, հե՞։ Ալյոշկա, կարմրեցի՞ր։ Մի՛ ամաչիր, բալիկս։ Ափսո՞ս, որ ցերեկը ճաշի չնստեցի վանահոր մոտ և Մոկրոեի աղջիկների մասին չպատմեցի վանականներին։ Ալյոշկա, մի՛ նեղանա,

[1] Այդ ամբողջը խոզություն է (Ֆրանս.)։

որ այս առավոտ սաստիկ վիրավորեցի քո վանահորը։ Ջղայնությունս է գալիս, ախպե՛ր։ Եթե աստված կա, գոյություն ունի, դե՛հ, այդ դեպքում ես մեղավոր եմ անշուշտ և պատասխան պետք է տամ, բայց եթե բոլորովին չկա աստված, է՛, իմ արածը դեռ ի՞նչ է որ, պետք է մի լա՛վ դաս տալ նրանց, այդ քո հայրերին։ Ախր այդ դեպքում նրանց գլուխը կտրելն էլ քիչ է, որովհետև զարգացումն են կասեցնում նրանք։ Հավատո՞ւմ ես, Իվան, որ դա իմ զգացմունքներն է մորմոքում։ Ոչ, չես հավատում, աչքերիցդ եմ տեսնում, որ չես հավատում։ Դու հավատում ես մարդկանց ասածին, թե ես հենց խեղկատակ եմ միայն։ Ալյոշա, հավատո՞ւմ ես, որ ես միայն խեղկատակ չեմ։

— Հավատում եմ, որ միայն խեղկատակ չեք։

— Եվ ես էլ հավատում եմ, որ դու իրոք հավատում ես և անկեղծ ես խոսում։ Անկեղծ ես նայում և անկեղծ ես խոսում։ Իսկ Իվանը՝ ոչ։ Իվանը մեծամիտ է... Բայց համենայն դեպս ես վերջ կտայի քո այդ վանք ասածին։ Այդ ամբողջ միստիկայի գլխից կբռնեի և մի թափով արմատախիլ կանեի համայն ռուս հողից, որպեսզի վերջնականապես խելքի բերեի բոլոր հիմարներին։ Եվ որքա՜ն արծաթ, որքա՜ն ոսկի կմղներ փողերանոցը։

— Բայց ինչո՞ւ արմատախիլ անել,— ասաց Իվանը։

— Որ ավելի շուտ փայլի ճշմարտությունը, ահա թե ինչու։

— Լա՛վ, բայց եթե փայլի այդ ճշմարտությունը, ամենից առաջ ձե՛զ կկողոպտեն և հետո... արմատախիլ կանեն ձեզ։

— Բահո՛։ Գուցե իրոք, ճիշտ ես ասում, ճի՛շտ։ Վա՛յ, ի՛նչ էշի մեկն եմ ես,— վեր թռավ հանկարծ Ֆյոդոր Պավլովիչը, մի թեթև խփելով իր ճակատին։— Լավ ուրեմն, թող կանգուն մնա քո վանքը, Ալյոշկա, եթե այդպես է։ Իսկ մենք, խելացի մարդիկս, տաքուկ կնստենք ու մեր կոնյակը կվայելենք։ Գիտե՞ս, Իվան, հավանաբար, անկասկած, աստված ինքն է դիտմամբ այսպես կարգադրել։ Իվա՛ն, ասա՛ ինձ. աստված կա՞ թե չկա։ Սպասի՛ր. հաստատ ասա, լուրջ ասա։ Ի՞նչ ես նորից ծիծաղում։

— Ծիծաղս է գալիս, որ քիչ առաջ ինքներդ սրամտորեն նկատեցիք Սմերդյակովի հավատքն այն երկու ճգնավորների վերաբերյալ, որոնք կարող են լեռներ շարժել։

— Ինչ է, հիմա ես էլ նրա նմա՞ն եմ խոսում։

— Շատ նման։

— Է՜հ, ես էլ ուրեմն ռուս մարդ եմ, ես էլ ունեմ ռուսական այդ բնորոշ գիծը։ Դու փիլիսոփա ես, բայց կարելի է քո մեջ էլ այդ տեսակ մի գիծ բռնել։ Ուզում ես՝ բռնեմ, հա՞։ Գրազ գանք, որ վաղն ևեթ կբռնեմ։ Բայց ասա՛ այնուամենայնիվ՝ աստված կա՞ թե չկա։ Միայն թե լո՛ւրջ ասա։ Հիմա ինձ լուրջ պատասխան է պետք։

— Ոչ, չկա աստված։

— Ալյո՛շկա, աստված կա՞։

— Կա աստված։

— Իվա՛ն, իսկ անմահություն կա՛, դե մի որևէ տեսակի, ա՛յ թեկուզ մի փոքրիկ, մի պստլի՛կ անմահություն։

— Անմահություն էլ չկա։

— Ո՞չ մի։

— Ոչ մի։

— Այսինքն ամենակատարյալ զրո՞, թե մի որևէ բան։ Գուցե որևէ մի բան կա՞։ Բացարձակ ոչնչություն չէ համենայն դեպս։

— Կատարյալ զրո։

— Ալյո՛շկա, կա՞ անմահություն։

— Կա։

— Իսկ աստված և անմահությո՞ւն։

— Թե՛ աստված, թե՛ անմահություն։ Աստուծո մեջ է անմահությունը։

— Հը՜մ։ Ավելի հավանական է, որ Իվանն է ճիշտ։ Տե՛ր աստված, եթե մի րոպե մտածենք, թե մարդը որքա՜ն հավատք է նվիրել, որքա՜ն ամեն տեսակի ուժեր է վատնել այդ երազի համար, այն էլ քանի՜ հազար տարի է արդեն, և իզո՜ւր։ Բայց ո՞վ է այդպես ծիծաղում մարդու վրա։ Իվա՜ն։ Վերջին անգամ ասա և վճռականորեն. աստված կա՞ թե չկա։ Վերջի՜ն անգամ եմ հարցնում։

— Վերջին անգամ էլ՝ չկա՛։

— Իսկ ո՞վ է ծիծաղում մարդկանց վրա, Իվա՜ն։

— Սատանան թերևս,— ժպտաց Իվան Ֆյոդորովիչը։

— Իսկ սատանան կա՞։

— Ոչ, սատանան էլ չկա։

— Ափսո՜ս։ Սատանա՜ն տանի, այս բոլորից հետո՝ ի՜նչ

ասես չէի անի այն մարդուն, որ առաջինը հնարեց աստծուն։ Հուդայի ծառից կախելն էլ քիչ է նրան։

— Քաղաքակրթությունը բնավ չէր լինի, եթե չհնարեին աստծուն։

— Չէր լինի՞։ Ինչ է, առանց աստծո՞ւ չէր լինի։

— Այո։ Եվ կոնյակ էլ չէր լինի։ Բայց պետք է համենայն դեպս կոնյակը վերցնել ձեր առաջից։

— Սպասի՛ր, սիրելիս, սպասի՛ր, սպասի՛ր, մի բաժակ էլ։ Ես վիրավորեցի Ալյոշկային։ Չե՞ս բարկանում, Ալեքսեյ։ Իմ անուշի՛կ, իմ պստլի՛կ Ալեքսեյս։

— Ոչ, չեմ բարկանում։ Ես գիտեմ ձեր մտքերը։ Ձեր սիրտն ավելի լավ է, քան գլուխը։

— Ի՞մ սիրտն ավելի լավ է, քան գլուխը։ Տե՛ր աստված, այն էլ ո՞վ է ասում։ Իվա՛ն, սիրո՞ւմ ես Ալյոշկային։

— Սիրում եմ։

— Սիրի՞ր։ (Ֆյոդոր Պավլովիչը սաստիկ հարբել էր արդեն)։— Լսիր, Ալյոշա, այս առավոտ կոպտություն արեցի քո սրբահորը։ Բայց հուզված էի։ Իսկ այդ սրբահայրը սրամտություն ունեցող մարդ է, չէ՞, ի՞նչ ես կարծում, Իվան։

— Կարծես թե ունի, այո։

— Ունի, ունի, il y a du Piron là-dedans[1]։ Ճիզվիտ է, այսինքն ռուս ճիզվիտ։ Նրա մեջ, որպես ազնիվ արարածի, թաքուն զայրույթն է եռում, որովհետև ստիպված է ձևացնել... սրբության դիմակ հագնել։

— Բայց չէ՞ որ նա հավատո՛ւմ է աստծուն։

— Մազաչափ անգամ չի հավատում։ Ինչ է, չգիտեի՞ր։ Բայց նա ի՞նքն է ասում բոլորին, այսինքն ոչ թե ամեն մեկին, այլ իր մոտ եկող բոլոր մարդկանց։ Նահանգապետ Շուգին ուղղակի ասել է՝ կարճ ու կտրուկ. «Credo[2], բայց թե ինչ բանի՝ չգիտեմ»։

— Մի՞թե։

— Հենց այդպես։ Բայց հարգում եմ նրան։ Մեֆիստոֆելյան մի բան կա նրա մեջ կամ էլ, ավելի ճիշտ, «Մեր ժամանակի հերոսը» հիշեցնող մի բան... Արբե՞նին էր, թե ինչ էր անունը... այսինքն, գիտե՞ս ինչ, նա հեշտասեր է։ Այնքան հեշտասեր է, որ ես հիմա էլ կվախենայի, եթե իմ աղջիկը կամ կինը նրա մոտ խոստովանելու գնար։ Գիտե՞ս, հենց որ սկսում է անցած-դարձածից պատմե՛լ... Նախանցյալ տարի մեզ հրավիրեց թեյի՝ այն էլ լիկյորո՛վ (մեծ տիկինները նրան լիկյոր են ուղարկում), և մեկ էլ որ չսկսե՞ց հին օրերը ծաղկեցնել, վա՛յ, ուղղակի փորերս էինք բռնում... Հատկապես՝ թե ինչպես է բուժել մի անդամալույծ կնոջ։ «Եթե ոտքերս չցավեին, ասել է, ես ձեզ համար մի հատուկ պար կպարեի»։ Հե-հե՛, ո՞նց է, հը՞։ «Ես իմ օրում, ասում է, ինչե՞ր ասես չեմ արել»։ Վաթսուն հազար է թոցրել վաճառական Դեմիդովից։

— Ինչպե՞ս թե, գողացե՞լ է։

— Դեմիդովը բերել, նրան է տվել՝ իբրև լավ մարդու։ Ասել է «պահիր եղբայր իմ, վաղն ինձ մոտ խուզարկության են գալու»։ Նա էլ պահե՞լ է։ «Չէ՞ որ դու, ասում է, եկեղեցուն նվիրաբերեցիր»։ Ես էլ նրան ասացի՝ սրիկա ես դու, ա՛յ այդպես ասացի։ Չէ, ասում է, սրիկա չեմ, լայնամիտ եմ... Բայց չէ՞, նա չէր... Ուրիշն էր։ Ուրիշ մեկի հետ շփոթեցի նրան... և չեմ նկատում, որ շփոթել եմ։ Դե լավ, մի բաժակ էլ, և բավական է։ Վերցրու շիշը, Իվան։ Ես սուտ էի խոսում, ինչո՞ւ չկանգնեցրիր ինձ, Իվան... ինչո՞ւ չասացիր, որ սուտ եմ խոսում։

— Գիտեի, որ ինքներդ կանգ կառնեք։

— Սուտ ես ասում։ Չարությամբ ես լցված իմ դեմ, և միայն այդ չարությունից է, որ չկանգնեցրիր։ Դու արհամարհում ես ինձ։ Եկար մոտս և հենց իմ տանը արհամարհում ես ինձ։

— Դե լավ, կթողնեմ կգնամ։ Կոնյակն արդեն տաքացրել է ձեր գլուխը։

— Ի սեր Քրիստոսի խնդրեցի, որ Չերմաշնյա գնաս... մեկ կամ երկու օրով, իսկ դու չես գնում։

— Վաղը կգնամ, եթե այդքան պնդում եք։

— Չես գնա։ Ուզում ես մնալ այստեղ և աչքդ վրաս պահել։ Ահա՛ քո ուզածը, չարսիրտ տղա, հենց դրա համար էլ չես գնում, հա՞։

Ներուկը շարունակում էր բորբոքվել։ Հասել էր գինովության այն աստիճանին, ուր որոշ հարբեցողներ, մինչ այդ հան-

[1] Պիրոնի նման մի բան կա նրա մեջ (ֆրանս.)։ Ալեքսիս Պիրոն՝ 18-րդ դարի ֆրանսիացի բանաստեղծ, որ հայտնի էր իր սրամտությամբ ու զուր ծաղրով։ Ս. Թ.։

[2] Հավատում եմ (լատ.)։

գիստ մնալուց հետո, հանկարծ ուզում են կովի բռնվել անպայման և ցույց տալ իրենց։

— Ի՞նչ ես նայում ինձ։ Այդ ի՞նչ աչքեր են։ Աչքերդ նայում են ինձ ու ասում. «Հարբած ռե՛խ»։ Կասկածելի են քո աչքերը, քամահրող են քո աչքերը... Դու ինչ-որ հաշիվներով ես եկել։ Տե՛ս, Ալյոշկան նայում է և փայլում են աչքերը։ Չի արհամարհում ինձ Ալյոշան։ Ալեքսե՛յ, մի՛ սիրիր Իվանին...

— Մի՛ բարկանաք եղբորս վրա։ Վերջ տվեք այդ վիրավորական խոսքերին,— ասաց հանկարծ Ալյոշան հաստատ շեշտով։

— Դե լավ, քո ուզածը լինի։ Ո՛ւֆ, գլուխս է ցավում։ Վերցրու կոնյակը, Իվա՛ն, երրորդ անգամն եմ ասում։— Նա մտածեց մի պահ և հանկարծ դանդաղ, խորամանկ ժպտաց։

— Մի՛ բարկանա ուժից ընկած պառավի վրա, Իվա՛ն։ Գիտեմ, որ ինձ չես սիրում, բայց համենայն դեպս մի՛ բարկանա։ Պատճառ էլ չունես ինձ սիրելու։ Գնա Ջերմաշնյա, ինքս կգամ քեզ մոտ, նվեր կբերեմ։ Քեզ մի աղջնակ ցույց կտամ այնտեղ, վաղուց է աչքիս ընկել։ Առայժմ դեռ բոբիկ է ման գալիս։ Մի՛ վախենա բոբիկներից, մի՛ արհամարհիր. մարգարիտնե՛ր են նրանք...

Եվ նա չպպացնելով համբուրեց իր մատները։

— Ինձ համար,— աշխուժացավ նա հանկարծ, ասես վայրկենաբար սթափվելով, երբ խոսքը հասավ իր սիրած նյութին,— ինձ համար... է՛հ, ինչ ասեմ ձեզ, տղերք։ Երեխանե՛ր եք, պստլիկ խոճկորներ։ Ինձ համար... ոչ մի կին տգեղ չի եղել իմ ամբողջ կյանքում, ահա՛ իմ սկզբունքը։ Կարո՞ղ եք հասկանալ այս բանը։ Բայց որտեղի՞ց հասկանաք։ Ձեր երակներում դեռ կաթ է հոսում արյան տեղ, ձվից դուրս չե՞ք եկել։ Իմ սկզբունքով, ամեն մի կնոջ մեջ կարելի է չափազա՞նց, գրո՞ղը տանի, չափազանց հետաքրքրական բան գտնել, մի բան, որ ոչ մի ուրիշ կնոջ մեջ չես գտնի։ Միայն թե՝ պետք է կարողանաս գտնել, ա՛յ թե ինչն է խնդիրը։ Դա տաղանդ է։ Ինձ համար մովեզուհիներ[1] չկան. հենց միայն այն, որ կին է առաջդ, այդ մի փաստն արդեն գործի կեսն է...

[1] Մովեզուհի — ֆրանսերեն mauvaise բառից, որ նշանակում է՝ գեշ, տգեղ։

բայց դուք որտեղի՞ց կարող եք այդ հասկանալ։ Երբեմն նույնիսկ վիեյֆիյների[1] մեջ այնպիսի մի բան ես գտնում, որ ուղղակի զարմանում ես՝ ինչպե՞ս այլևայլ հիմարներ թողել են, որ աղջիկը պառավի, չեն նկատել նրան մինչև հիմա։ Բոբիկ աղջկանն ու մովեզուհուն պետք է նախ և առաջ զարմացնել. ահա՛ նրան ձեռք գցելու ձևը։ Ինչ է, չգիտեի՞ր։ Պետք է այնպես զարմացնել, որ նա սքանչանա, տակնուվրա լինի, ամաչի, որ այսպիսի աղան սիրահարվել է իր նման փնթի մի աղջկա։ Իսկապես հոյակապ բան է, որ աշխարհում միշտ էլ կան ու կլինեն ռամիկներ ու աղաներ, ուրեմն միշտ էլ կլինի հատակ սրբող մի աղախին ու կլինի նրա տերը, և ճիշտն ասած՝ հենց դա՛ է պետք կյանքի երջանկության համար։ Սպասիր մի րոպե... լսի՛ր, Ալյոշկա, ես միշտ զարմացնում էի քո հանգուցյալ մորը, միայն թե ուրիշ տեսակ։ Երբեք չէի փայփայում նրան, բայց մեկ էլ հանկարծ, երբ գալիս էր րոպեն, ուղղակի փուլ էի գալիս նրա առաջ, սողում էի ծնկների վրա, ոտքերն էի համբուրում և միշտ էլ, միշտ էլ,— ա՛յ, այսօրվա նման հիշում եմ,— նրան հասցնում էի այն վիճակին, որ սկսում էր մանր-մանր ծիծաղել այնպես, իր այն փշրվող, զնգուն, մեղմաձայն, ջղային, բացառիկ քրքիջով։ Միայն նրան էր հատուկ այդ ծիծաղը։ Գիտեի, որ նրա հիվանդության նոպան միշտ այդպես էր գալիս, գիտեի, որ վաղն ևեթ կսկսի դիվահարի նման ճչալ, և որ մանր-մանր ծիծաղելը ոչ մի հրճվանքի նշան չէ այդ րոպեին, բայց դե խաբկանք էլ լինի թեկուզ՝ էլի՛ հրճվանք է։ Ա՛յ թե ինչ է նշանակում ամեն մեկի մեջ մի յուրահատուկ բան գտնել։ Մի անգամ Բելյավսկին,— այստեղ մի այդպիսի սիրունիկ ու հարուստ երիտասարդ կար, մորդ շուրջն էր պտտվում և շուտ-շուտ գալիս էր մեր տուն,— հանկարծ ուրեմն նա, իմ սեփական տանը, մի ապտա՛կ տվեց ինձ մորդ ներկայությամբ։ Եվ մայրդ, այդպիսի հե՛զ ոչխարը... ի՞նչ ես ասում, կարծեցի, որ չարդուփշուր է անելու ինձ այդ ապտակի համար, այնպե՞ս հարձակվեց վրաս. «Հիմա դու ծեծ կերած մարդ ես, ծեծ կերած,— ասաց նա։— Ապտա՛կ կերար նրանից։ Դու,— ասաց,— ինձ ծախում էիր նրան... Ինչպե՞ս հանդգնեց խփել քեզ իմ աչքի առաջ։ Էլ չհամարձակվե՛ս մոտենալ ինձ, եր-

[1] Վիեյֆիյ— ֆրանսերեն vieille fille—պառաված օրիորդ։

բե՛ք, երբե՛ք։ Վազի՛ր, իսկույնևեթ, մենամարտի կանչիր նրան...»։ Դե ես այն ժամանակ նրան վանք տարա հանդարտացնելու համար, սուրբ հայրերը գլխին աղոթք կարդացին ու խելքի բերին։ Բայց ահա աստված վկա է, Ալյոշա, երբեք չեմ վիրավորել իմ խեղճ դիվահարին։ Գուցե միայն մեկ անգամ, այն էլ առաջին տարին. շա՜տ էր աղոթում այն ժամանակ, հատկապես ջերմեռանդորեն կատարում էր աստվածածնի տոնը և այդ օրերին ինձ դուրս էր անում իր սենյակից։ Մտքումս ասացի՝ արի՛ սրա գլխից դուրս քշեմ այդ միստիկան։ «Տեսնո՞ւմ ես,— ասացի,— տեսնո՞ւմ ես, ահա քո սրբապատկերը, ահա տե՛ս, հանում եմ տեղից։ Ա՜յ նայիր հիմա, դու հրաշագործ ես համարում սրան, իսկ ես այս բոպեիս կթքե՛մ սրա վրա, քո աչքի առաջ, և ինձ ոչի՛նչ չի լինի...»։ Երբ տեսավ իմ արածը, տե՛ր աստված, ինձ թվաց, թե հի՛մա կսպանի ինձ, բայց նա պարզապես տեղից վեր թռավ, ձեռքերն իրար զարկեց, հետո հանկարծ ձեռքերով ծածկեց դեմքը, ամբողջ մարմնով ցնցվեց և ընկավ հատակին... հենց ուղղակի փուլ եկավ... Ալյո՜շա, Ալյո՜շա։ Ի՞նչ պատահեց քեզ, ի՜նչ պատահեց։

Ծերունին վախեցած վեր ցատկեց։ Ալյոշան աստիճանաբար այլայլվում էր այն բոպեից, երբ ծերունին սկսեց խոսել նրա մոր մասին։ Կարմրեց նա, աչքերը փայլեցին, շրթունքները դողացին... Հարբած ծերուկը լորձունքն էր շաղ տալիս և ոչինչ չէր նկատում մինչև այն վայրկյանը, երբ հանկարծ մի շատ տարօրինակ բան պատահեց Ալյոշային. նույնությամբ կրկնվեց այն, ինչ հենց նույն բոպեին հայրը պատմում էր «դիվահարի» մասին։ Ալյոշան ընդոստ վեր թռավ աթոռից, ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես իր մայրն էր արել ըստ հոր պատմածի, ձեռքերը զարկեց իրար, հետո ծածկեց դեմքը, ուղղակի փուլ եկավ աթոռի վրա և ամբողջ մարմնով սկսեց ցնցվել՝ անակնկալ, մոլեգին և լուռ լացի հիստերիկ նոպայով բռնված։ Ծերունուն հատկապես ապշեցրեց այդ արտակարգ նմանությունը մոր և որդու միջև։

— Իվա՜ն, Իվա՜ն, ջուր բեր, շո՜ւտ։ Նրա նման եղավ, մոր նման, ճիշտ ու ճիշտ, ինչպես մայրը այն ժամանակ։ Թերևիցդ ջուր ցանիր վրան, ես այդպես էի անում մորը։ Իր մոր համար հուզվեց, իր մոր համար...— մրթմրթում էր նա Իվանին։

— Բայց ի՞մ մայրն էլ, կարծեմ, նրա մայրն է եղել, հը՞, ի՞նչ եք կարծում,— պոռթկաց հանկարծ Իվանն անդիմադրելիորեն զայրալից արհամարհանքով։ Ծերունին սարսռաց նրա փայլատակող հայացքից։ Բայց այդ պահին խիստ տարօրինակ մի բան էր պատահել, թեև, ճիշտ է, մի վայրկյան տեվեց այդ. կարծես թե իսկապես ծերունու մտքից թռել էր այն իրողությունը, թե Ալյոշայի մայրը նաև Իվանի մայրն էր...

— Ինչպե՞ս թե քո մայրը,— մրթմրթաց նա, չհասկանալով։— Ի՞նչ ես ուզում ասել։ Այդ ո՞ր մայրն է քո ասածը... Բայց մի՞թե նրա մայրը... Վա՜յ, գրո՜ղը տանի։ Քո՞ մայրն էլ է, այո, քո՞ մայրը։ Թյո՛ւ, գրողը տանի։ Է՜, այսպիսի ցնորում երբեք չէր եղել, սիրելիս, ներիր։ Իսկ ես կարծում էի, Իվան... Հե՜-հե՜-հե՜։— Նա կանգ առավ։ Դեմքը լայնացավ հարբածի դանդաղ, կիսովին անիմաստ քմծիծաղով։ Եվ ահա այդ նույն վայրկյանին հանկարծ սարսափելի աղմուկ ու դղրդյուն բարձրացավ նախասենյակում, կատաղի գոռգոռոցներ լսվեցին, դուռը շոնդյունով բացվեց, և ներս խուժեց Դմիտրի Ֆյոդորովիչը։ Ծերունին, սարսափած, վազեց Իվանի մոտ։

— Կսպանի՞ ինձ, կսպանի՞։ Մի՞ թողնիր ինձ, մի՞ թողնիր,— ճչում էր նա, ամուր բռնելով Իվան Ֆյոդորովիչի բաճկոնի քղանցքը։

IX

ՀԵՏՏԱՄՈՒՆԵՐ

Դմիտրի Ֆյոդորովիչի ետեւից իսկույն ներս վազեցին նաև Գրիգորին ու Սմերդյակովը։ Նրանք էին նախասենյակում դիմադրում Դմիտրիին, ներս չէին թողնում նրան, կատարելով այն հրահանգը, որ հենց Ֆյոդոր Պավլովիչն էր տվել մի քանի օր առաջ։ Օգտվելով այն հանգամանքից, որ Դմիտրին, ներխուժելուց հետո, մի պահ կանգ առավ շուրջը նայելու համար, Գրիգորին վազելով շրջանցեց սեղանը, փակեց երկու փեղկերը հանդիպակաց դռան, որ տանում էր դեպի ներքին սենյակները, և կանգնեց փակ դռան առաջ, թևերը խաչաձև տարածելով և պատ-

բաստվելով, այսպես ասած, մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանելու մուտքը։ Տեսնելով այդ, Դմիտրին ոչ թե գոռաց, այլ մի տեսակ սուր ոռնոց արձակեց ու նետվեց Գրիգորիի վրա։

— Ուրեմն այնտե՞ղ է։ Այնտե՞ղ եք պահել նրան։ Դե՛ն, սրիկա՛։— Նա հենց ուզում էր մի կողմ շպրտել Գրիգորիին, բայց ծերունին ետ մղեց նրան։ Կատաղությունից կորցնելով իրեն, Դմիտրին ձեռքը տարավ-բերեց ու ամբողջ ուժով խփեց Գրիգորիին։ Ծերունին փուլ եկավ պարկի նման, իսկ Դմիտրին, ցատկելով նրա վրայից, դուռը հրեց ու ներս վազեց։ Սմերդյակովը մնում էր հյուրասրահի մյուս ծայրը, սփրթնած ու դողահար, կիպ կպած Ֆյոդոր Պավլովիչին։

— Այստե՞ղ է նա,— գոռում էր Դմիտրին,— ինքս տեսա, հենց հիմա շուռ եկավ դեպի այս տունը, բայց չհասա ետևից։ Ո՞ւր է նա։ Ո՞ւր է։

Անիմանալի տպավորություն գործեց Ֆյոդոր Պավլովիչի վրա այդ աղաղակը՝ «Այստե՞ղ է նա»։ Նրա ամբողջ սարսափը հօդս ցնդեց։

— Բռնե՛ք, բռնեցե՛ք նրան,— բղավեց ու սլացավ Դմիտրիի ետևից։ Մինչ այդ՝ Գրիգորին բարձրացել էր հատակից, բայց դեռ շշմածի պես էր։ Իվանն ու Ալյոշան վազեցին, որ հասնեն իրենց հորը։ Երրորդ սենյակից լսվեց, թե ինչպես հանկարծ մի բան ընկավ հատակին ու ջարդվեց զրնգալով. մարմարյա պատվանդանի վրա դրված ապակյա խոշոր մի անոթ էր (ոչ թանկարժեք), որին դիպել էր Դմիտրի Ֆյոդորովիչը, երբ վազելով անցնում էր մոտից։

— Հո՞շտ, հա՛փ նրան,— բղավեց ծերունին։— Օգնությո՛ւն։

Իվանն ու Ալյոշան հասան ծերունուն և բռնի վերադարձրին նրան հյուրասրահ։

— Ի՞նչ եք վազում նրա ետևից։ Կսպանի, իրոք կսպանի ձեզ տեղն ու տեղը,— զայրացած գոռաց Իվանը հոր վրա։

— Վա՛նեչկա, Լյո՛շեչկա, ուրեմն այստեղ է, այստե՞ղ է Գրուշենկան, ասում է՝ ինքն է տեսել, տեսել է նրա վազելը...

Նրա շունչը կտրվում էր։ Այս անգամ չէր սպասում Գրուշենկային և այդ անակնկալ լուրը, թե նա այստեղ է, միանգամից խելահան արեց ծերունուն։ Ամբողջ մարմնով դողում էր նա, ասես խելագարվել էր։

— Բայց ախր ինքներդ տեսաք, որ նա չեկա՞վ,— գոռում էր Իվանը։

— Գուցե մյո՞ւս դռնից, մյո՛ւս։

— Ախր փակ է մյուս դուռը, փակ, բանալին էլ ձեզ մոտ է...

Դմիտրին հանկարծ նորից երևաց հյուրասրահում։ Անշուշտ փակ էր գտել մյուս դուռը, և իրոք որ այդ փակ դուռն բանալին Ֆյոդոր Պավլովիչի գրպանումն էր։ Բոլոր սենյակների բոլոր լուսամուտները նույնպես փակ էին, ուստի Գրուշենկան ոչ մի տեղից չէր կարող ներս մտնել և ոչ մի տեղից չէր կարող դուրս փախչել։

— Բռնեցե՛ք նրան,— ճչաց Ֆյոդոր Պավլովիչը, հենց որ նորից տեսավ Դմիտրիին,— փողե՛րս գողացավ իմ ննջասենյակում։— Եվ, ճողոպրելով Իվանի ձեռքերից, կրկին նետվեց Դմիտրիի վրա։ Բայց Դմիտրին թափով բարձրացրեց ձեռքերը և հանկարծ ծերունուն բռնեց՝ քունքերին մնացած մազի վերջին փնջերից, ցնցեց նրան ու շրմփացրեց հատակին։ Հասցրեց նաև երկու կամ երեք անգամ կրունկով հարվածել նրա դեմքին։ Ծերունին սրտաճմլիկ մի տնքոց արձակեց։ Իվանը թեև Դմիտրիի չափ ուժեղ չէր, բայց գրկեց նրան թիկունքից և ամբողջ ուժով ետ քաշեց։ Ալյոշան էլ օգնեց նրան իր նվազ ուժերով, առջևից գրկելով Դմիտրիին։

— Խե՜նթ, սպանեցի՞ր նրան,— գոռաց Իվանը։

— Տե՛ղն է նրան,— բացականչեց Դմիտրին շնչասպառ։— Իսկ եթե չեմ սպանել, նորից կգամ և կսպանե՛մ։ Չե՞ք կարող պաշտպանել։

— Դմիտրի՛։ Հենց անմիջապես դո՛ւրս կորիր այստեղից,— հրամայականորեն գոռաց Ալյոշան։

— Ալեքսե՛յ։ Դո՛ւ ասա ինձ, միայն քեզ եմ հավատում. այստե՞ղ էր հիմա Գրուշենկան, թե ոչ։ Ինքս տեսա նրան քիչ առաջ, տեսա, թե ինչպես կողմնակի փողոցից այս կողմը սպրդեց՝ ճյուղորմի տակով։ Գոռացի, փախավ...

— Երդվում եմ, նա չի եղել այստեղ, և ոչ ոք այստեղ չէր սպասում նրան, ամենևի՛ն։

— Բայց ես տեսա նրան... Ուրեմն նա... Հի՛մա կիմանամ, թե որտեղ է... Ցտեսություն, Ալեքսե՛յ։ Եզոպոսին ոչ մի խոսք հիմա փողի մասին, իսկ Կատերինա Իվանովնային իսկույնևեթ գնա և անպայման ասա. «Ողջույններն է հղում,

ողջույնն՝ն է հղում, ողջույնն՝ը։ Հենց ողջույններն ու հրաժե՛շտը»։ Նկարագրիր այս տեսարանը։

Այդ միջոցին Իվանն ու Գրիգորին բարձրացրել էին ծերունուն և նստեցրել բազկաթոռի մեջ։ Դեմքն արյունոտված էր, բայց չէր կորցրել գիտակցությունը և ագահորեն լսում էր Դմիտրիի գոռգոռոցը։ Դեռ նրան թվում էր, թե Գրուշենկան իրոք տան մեջ է՝ մի որևէ անկյունում։ Դմիտրին, գնալով դեպի դուռը, ատելությամբ նայեց նրան։

— Ձե՛մ ղղջում, որ քո արյունն եմ թափել,— գոչեց նա,— զգուշացի՛ր, բիձուկ, քե՛զ պահիր քո երազը, որովհետև ե՛ս էլ իմ երազն ունեմ։ Ինքս եմ անիծում քեզ և բացարձակապես հրաժարվում եմ քեզնից...

Եվ նա սենյակից դուրս վազեց։

— Այստեղ է Գրուշենկան, այստե՛ղ է, վստահ եմ։ Սմերդյակո՛վ, Սմերդյակո՛վ,— խոխռում էր ծերունին հազիվ լսելի ձայնով և մատով կանչում էր Սմերդյակովին։

— Ո՞չ, այստեղ չէ նա, ոչ, ցնդա՛ծ ծերունի,— զայրալից գոռաց նրա վրա Իվանը։— Օհո՜, նվաղում է։ Ջո՛ւր, սրբի՛չ։ Շուտ արա, Սմերդյակո՛վ։

Սմերդյակովը վազեց ջուր բերելու։ Ի վերջո ծերունու հագուստները հանեցին, տարան ննջասենյակ ու պառկեցրին անկողնում։ Գլուխը կապեցին թաց սրբիչով։ Կոնյակից, ուժեղ հուզումներից ու հարվածներից թուլացած, նա աչքերը փակեց այն վայրկյանին, երբ գլուխն իջավ բարձի վրա, և իսկույն նիրհեց։ Իվանն ու Ալյոշան հյուրաբարհ վերադարձան։ Սմերդյակովը կոտրված անոթի բեկորներն էր դուրս տանում, իսկ Գրիգորին կանգնած էր սեղանի մոտ, մռայլ ու գլխահակ։

— Դու էլ գուցե գլուխդ կապեիր թաց լաթով ու անկողին մտնեիր,— դիմեց Ալյոշան Գրիգորիին։— Մենք այստեղ կխնամենք նրան։ Եղբայրս սոսկալի ուժեղ հարվածեց... գլխիդ։

— Նա ինձ անարգե՛ց,— մռայլ ու հատ-հատ ասաց Գրիգորին։

— Իր հորն էլ «անարգեց», ոչ թե միայն քեզ,— նկատեց Իվանը ծուռ ժպտալով։

— Ես նրան լողացրել եմ տաշտում... անարգե՛ց նա ինձ,— կրկնում էր Գրիգորին։

— Գրո՛ղը տանի, եթե ետ չքաշեի նրան, գուցե հենց տեղն

ու տեղը սպաներ։ Շա՞տ բան է պետք, որ Եղոպոսը շունչը փչի,— փսփսաց Իվանն Ալյոշային։

— Աստվա՞ծ մի արասցե,— բացականչեց Ալյոշան։

— Իսկ ինչո՞ւ աստված մի արասցե,— շարունակեց Իվանը նույն փսփսուքով, չարակամորեն ծամածռելով դեմքը։— Սողունի մեկը կուլ կտա մյուս սողունին, և երկուսն էլ արժանի են դրան։

Ալյոշան սարսռաց։

— Ես իհարկե չեմ թողնի, որ սպանություն կատարվի, ինչպես հիմա չթողեցի։ Մնա՛ այստեղ, Ալյոշա, ես գնամ ու մի քիչ ման գամ բակում, գլուխս սկսեց ցավել։

Ալյոշան մտավ հոր ննջասենյակը և շուրջ մեկ ժամ նստեց նրա սնարի մոտ, վարագույրի ետև։ Ծերունին մեկեն բացեց աչքերը և երկար ժամանակ լուռ նայեց Ալյոշային, երևի վերհիշելով պատահածն ու կշռադատելով։ Հանկարծ անսովոր մի հուզում երևաց նրա դեմքին։

— Ալյոշա,— շշնջաց նա շրջահայացորեն,— ո՞ւր է Իվանը։

— Բակ գնաց, գլուխն է ցավում։ Հսկում է այնտեղ։

— Տուր այդ հայելին, այնտեղ է ահա, տո՛ւր տեսնեմ։

Ալյոշան տվեց նրան այն փոքր, ծալովի, կլոր հայելին, որ դրված էր սեղանիկի վրա։ Ծերունին նայեց իր դեմքին. քիթն ահագին ուռել էր, իսկ ճակատին, ձախ հոնքի վերև, բավական խոշոր ու բոսորագույն մի այտուցք կար։

— Ի՞նչ է ասում Իվանը։ Ալյոշա, անուշիկս, իմ մի՛ակ զավակս, վախենում եմ Իվանից։ Ավելի եմ վախենում Իվանից, քան մյուսից։ Միայն քեզնից, մի՛այն ու միայն քեզնից չեմ վախենում...

— Իվանից էլ մի՛ վախենաք։ Իվանը բարկացած է, բայց կպաշտպանի ձեզ։

— Իսկ մյո՞ւսը, մյո՞ւսը, Ալյոշա։ Վազեց Գրուշենկայի մոտ։ Անուշիկ տղաս, հրեշտակս, ասա՛ ինձ ճշմարտությունը. քիչ առաջ այստե՞ղ էր Գրուշենկան, թե ոչ։

— Ոչ ոք չի տեսել նրան։ Դա խաբկանք էր, չի եղել այստեղ։

— Միտյան ախր ուզում է ամուսնանալ նրա հետ, ամուսնանա՞լ։

— Գրուշենկան կմերժի։

— Կմերժի, կմերժի, կմերժի, կմերժի, անպայմա՛ն կմեր-

ժի...— ամբողջ էությամբ թրթռաց ծերունին ուրախությունից, կարծես այդ րոպեին ուրիշ ոչ մի ավելի բերկրալի բան չէին կարող ասել իրեն։ Խելակորույս ցնծությամբ բռնեց Ալյոշայի ձեռքը և ուժգին սեղմեց իր սրտին։ Նույնիսկ արցունք պսպղաց նրա աչքերում։— Սրբապատկե՞րը, տիրամոր սրբապատկե՞րը, այն, որի մասին քիչ առաջ պատմեցի, վերցրո՞ւ, քոնը թող լինի, հետդ տար։ Եվ վերադարձիր վանք, թույլ եմ տալիս... կատակ էի անում քիչ առաջ, մի՞ բարկանա։ Գլուխս է ցավում, Ալյոշա... Լյո՞շա, ամոքի՞ր իմ սիրտը, իմ հրեշտակն եղիր, ասա՛ ինձ ճշմարտությունը։

— Դեռ նույն բա՞նն եք հարցնում՝ Գրուշենկան այստեղ էր կամ ո՞չ,— ասաց Ալյոշան վշտագին։

— Չէ, չէ, չէ, հավատում եմ քեզ։ Ուրիշ բան եմ ասում. ինքդ գնա Գրուշենկայի մոտ կամ մի կերպ տես նրան, շուտ. որքան կարելի է շուտ, և հարցրու, ինքդ քո աչքով դուշակիր՝ ո՞ւմ է ուզում նա, ի՞նձ թե նրան։ Հա՞։ Ի՞նչ է։ Կարո՞ղ ես, թե չես կարող։

— Եթե տեսնեմ, կհարցնեմ,— մրթմրթաց Ալյոշան շփոթված։

— Չէ, նա քեզ չի ասի,— ընդհատեց ծերունին,— թովռանի մեկն է։ Կսկսի քեզ համբուրել և կասի, թե քեզ է ուզում։ Խաբեբա է, անամոթ։ Չէ, դու չպետք է գնաս մոտը, չպետք է գնաս։

— Եվ լավ չի լինի, որ գնամ, հայրիկ, լավ չի լինի բնավ։

— Ո՞ւր էր ուղարկում քեզ քիչ առաջ, երբ դեռ չփախած գոռում էր՝ «Գնա՛»։

— Կատերինա Իվանովնային։

— Փողի՞ համար։ Փող ուզելո՞ւ։

— Ոչ, փողի համար չէ։

— Փող չունի Միտյան, կոպեկ անգամ չունի։ Լսիր, Ալյոշա, գիշերը կպառկեմ ու մի լավ կմտածեմ, թե ինչ եմ անելու, իսկ դու հիմա գնա։ Գուցե և հանդիպես Գրուշենկային... Միայն թե վաղն առավոտ անպայման արի ինձ մոտ։ Անպայման։ Վաղն առավոտ քեզ մի բան եմ ասելու։ Կգա՞ս։

— Կգամ։

— Երբ որ գաս, այնպես ձևացրու, թե ինքդ ես եկել, եկել ես իմ որպիսությունը հարցնելու։ Ոչ ոքի մի՛ ասա, թե ես եմ կանչել։ Իվանին ոչ մի բառ չասես։

— Լավ։

— Ցտեսություն, հրեշտակս, քիչ առաջ դու ինձ պաշտպանեցիր, հավիտյան չեմ մոռանա։ Վաղը մի բան եմ ասելու քեզ... բայց դեռ պետք է մտածեմ...

— Իսկ հիմա ինչպե՞ս եք զգում։

— Հենց վաղը, վաղն ևեթ կվերկենամ ու դուրս կգամ։ Բացարձակապես առողջ եմ, լրիվ առողջ, լրիվ, լրիվ առողջ...

Երբ անցնում էր բակով, Ալյոշան դարպասի մոտ հանդիպեց Իվանին, որ նստարանի վրա նստած՝ ծոցատետրում մի բան էր գրում մատիտով։ Ալյոշան հայտնեց Իվանին, թե ծերունին զարթնել է արդեն և գիտակցությունն էլ տեղն է, իսկ իրեն թույլ է տվել, որ գիշերի վանքում։

— Ալյոշա, մեծ հաճույքով կհանդիպեի քեզ վաղն առավոտ,— սիրալիր ասաց Իվանը վերկենալով։ Նրա սիրալիրությունը կատարյալ անակնկալ էր Ալյոշայի համար։

— Վաղը Խոխլակովաների մոտ եմ լինելու,— պատասխանեց Ալյոշան։— Գուցե Կատերինա Իվանովնային էլ գնամ վաղը, եթե հիմա չգտնեմ նրան...

— Իսկ հիմա այնուամենայնիվ գնում ես Կատերինա Իվանովնայի մոտ։ Այդ «ողջույններ՝ ողջույններ ու հրաժեշտն» ես տանո՞ւմ,— ժպտաց հանկարծ Իվանը։ Ալյոշան շփոթվեց։— Կարծեմ թե լրիվ հասկացա քիչ առաջվա բացականչությունները և մի քիչ էլ գլխի ընկա, թե ինչ է եղել դրանից առաջ։ Երևի Դմիտրին խնդրել է քեզ, որ գնաս իր հարսնացուի մոտ և հաղորդես, թե ինքը... ը՞... դե՛հ, մի խոսքով, «հրաժեշտ է տալի՞ս»։

— Եղբա՛յր։ Ինչո՞վ է վերջանալու այս ահավոր մղձավանջը հայրիկի ու Դմիտրիի միջև,— գոչեց Ալյոշան։

— Չի կարելի վստահ մի բան ասել։ Գուցե ոչինչ չպատահի, կրակը ինքն իրեն հանգի։ Գազան է այդ կինը։ Համենայն դեպս, ծերուկին պետք է տանը պահել, իսկ Դմիտրիին չթողնել, որ ներս մտնի։

— Եղբայր, թույլ տուր մի բան էլ հարցնեմ. մի՞թե որևէ մեկը, մնացյալ մարդկանց նայելով, իրավունք ունի որոշելու, թե ո՛վ է արժանի ապրելու և ո՛վ նվազ արժանի է։

— Բայց ի՞նչ գործ ունի այստեղ ըստ արժանիքի որոշելը։ Այդ հարցն առհասարակ մարդկանց սրտում լուծվում է ոչ երբեք արժանիքների հիմքի վրա, այլ ուրիշ, շատ ավելի բնական

շարժառիթների մղումով։ Իսկ եթե խոսենք իրավունքի մասին, է՜հ, ո՞վ իրավունք չունի ցանկանալու։

— Ոչ թե սակայն ուրիշի մահը։

— Թեկուզ և ուրիշի մահը, ի՞նչ կա որ։ Ինչո՞ւ մարդ խաբի ինքն իրեն, քանի որ բոլորն են այդպես ապրում և գուցե չեն էլ կարող ուրիշ կերպ ապրել։ Դու ակնարկում ես քիչ առաջվա իմ խո՞սքը, թե «երկու սողուն կուլ են տալու իրար»։ Այդ դեպքում թույլ տուր, որ ես էլ քեզ մի բան հարցնեմ. արդյոք ի՞նձ ևս, ինչպես Դմիտրիին, ընդունակ ես համարում Եզոպոսի արյունը թափելու, դե՜հ, ասենք սպանելու նրան, հը՞։

— Ի՞նչ ես ասում, Իվա՜ն։ Այդ բանը մտքովս անգամ չի անցել, երբե՜ք։ Եվ Դմիտրիին էլ չեմ համարում...

— Գոնե դրա համար շնորհակալ եմ,— ժպտաց Իվանը։— Գիտցի՛ր, որ ես միշտ կպաշտպանեմ նրան։ Բայց տվյալ դեպքում ինձ իրավունք եմ վերապահում լիակատար ազատություն տալու իմ ցանկություններին։ Ցտեսություն, վաղը կտեսնվենք։ Մի՛ դատապարտիր և մի՛ նայիր ինձ որպես չարագործի,— ավելացրեց նա ժպտալով։

Ամուր սեղմեցին իրար ձեռք, մի բան, որ առաջ երբեք չէին արել։ Ալյոշան զգաց՝ առաջինը եղբայրն էր, որ մի քայլ մոտեցավ իրեն և մի որոշ նպատակով արեց այդ բանը, անպայման ինչ-որ դիտավորություն կար դրա մեջ։

X

ԵՐԿՈՒՔԸ ՄԻԱՍԻՆ

Բայց հոր տանից դուրս գալուց հետո Ալյոշայի հոգեվիճակն ավելի ևս վշտաբեկ էր ու ճնշված, քան այնտեղ մտնելու պահին։ Նրա միտքը նույնպես փշրվել ու ցաքուցրիվ էր եղել կարծես, բայց նա միաժամանակ զգում էր, որ վախենում է միակցել ցիրուցան բեկորները և մի ընդհանուր եզրակացություն հանել օրվա ընթացքում ունեցած բոլոր տանջալի ու հակասական ապրումներից։ Հուսահատության հասնող մի բան կար Ալյոշայի սրտում, ուր առաջ երբեք այդպիսի զգացողություն չէր եղել։ Բոլոր մտահոգությունների վրա սարի նման կանգնած էր գլխավոր, ճակատագրական և անլուծելի հարցը՝ ինչո՞վ է վերջանալու իր հոր ու ավագ եղբոր

բախումն այդ սարսափելի կնոջ առնչությամբ։ Հիմա արդեն ինքն էր վկա։ Ինքն էր ներկա եղել ու տեսել նրանց հանդիպումը դեմ առ դեմ։ Բայց դժբախտությունը, լիակատար ու սարսափելի դժբախտությունը կարող էր գալ միա՛յն Դմիտրիի գլխին. անխուսափելի փորձանք էր սպասում նրան։ Պարզվեց, որ կան նաև ուրիշ մարդիկ, որոնց նույնպես վերաբերում է այդ ամբողջը և գուցե շատ ավելի մեծ չափով, քան մինչ այդ կարող էր կարծել Ալյոշան։ Նույնիսկ առեղծվածային մի բան էր դառնում այս խնդիրը։ Իվանը վերջապես արեց այն քայլը, որ այնքան երկար ժամանակ ցանկանում էր Ալյոշան։ Բայց հիմա, չգիտես ինչու, Ալյոշան զգում էր, որ մերձեցման այդ քայլը վախեցրեց իրեն։ Իսկ այդ կանա՞յք։ Տարօրինակ բան, ցերեկը մեծագույն վարանումով էր գնում դեպի Կատերինա Իվանովնայի տունը, իսկ այժմ ոչ մի շփոթմունք չէր զգում, այլ ընդհակառակը՝ ինքն էր շտապում նրա մոտ, կարծես նրանից ցուցմունք գտնելու ակնկալությամբ։ Սակայն եղբոր հանձնարարածն ակներևորեն ավելի դժվար էր հաղորդել նրան հիմա, քան առաջ. երեք հազար ռուբլու խնդիրը վերջնականապես պարզվել էր, և Դմիտրին, այժմ արդեն խայտառակված զգալով իրեն և էլ ոչ մի հույս չունենալով, անշուշտ կանգ չի առնի այլևս ու թավալգլոր կգնա դեպի կործանում։ Եվ դեռ, ավելին, պատվիրել էր նաև պատմել Կատերինա Իվանովնային այն տեսարանը, որ հենց նոր էր տեղի ունեցել հոր և իր միջև։

Ժամը յոթն էր արդեն և մութն ընկնում էր, երբ Ալյոշան մտավ Մեծ փողոցի վրա գտնվող այն շատ ընդարձակ ու հարմարավետ տունը, որ վարձել էր Կատերինա Իվանովնան։ Ալյոշան գիտեր, որ նա ապրում է երկու մորաքույրների հետ։ Նրանցից մեկը, սակայն, միայն նրա քրոջ՝ Ագաֆյա Իվանովնայի մորաքույրն էր, այն լուռումունջ կինը, որ Ագաֆյայի հետ խնամել էր նրան, երբ նա կրթական հաստատությունից եկել էր հոր տունը։ Իսկ մյուս մորաքույրը մոսկվացի զանգվածեղ ու ծանրաբարո, թեև չքավորության մեջ ընկած մի տիկին էր։ Ասում էին, թե երկուսն էլ ամեն հարցում ենթարկվում են Կատերինա Իվանովնային և լոկ կենցաղավարական պատշաճությունները պահպանելու համար են մնում նրա մոտ։ Իսկ Կատերինա Իվանովնան ենթարկվում էր միայն իր բարեբարուհուն՝ գեներալի այրուն, որ հիվանդության պատճառով մնացել էր Մոսկվայում, և որին նա պարտավոր էր շաբաթը երկու նամակ

ուղարկել՝ մանրամասն տեղեկություններ տալով իր մասին։

Երբ Ալյոշան նախասենյակ մտավ և դուռը բացող աղախնից խնդրեց ծանուցել իր մասին, հյուրասրահում ըստ երևույթին գիտեին արդեն, որ ինքն է եկողը (գուցե նկատել էին պատուհանից). համենայն դեպս, Ալյոշան ինչ-որ աղմուկ լսեց հանկարծ, վազող կանանց ոտնաձայներն ու հագուստի շրշյունը հասան նրա ականջին։ Գուցե երկու կամ երեք կին շտապեցին հեռանալ հյուրասենյակից։ Ալյոշային տարօրինակ թվաց, որ իր ժամանումն այդպիսի իրարանցում կարող էր առաջ բերել։ Բայց նրան իսկույն հյուրասրահ առաջնորդեցին։ Դա մի ընդարձակ սենյակ էր՝ առատորեն ու վայելուչ կահավորված, սակայն ոչ ամենևին գավառական ճաշակով։ Բազմաթիվ մեծ ու փոքր բազմոցներ կային, օթոցներ, այլազան չափի սեղաններ. պատերին նկարներ էին կախված, ծաղկանոթներ ու լամպեր էին դրված սեղանների վրա, առատ ծաղկեփնջեր կային, նույնիսկ ակվարիում կար պատուհանի մոտ։ Երեկոյան մթնշաղը պատել էր սենյակը։ Ալյոշան նկատեց, որ մետաքսե կանացի մի վերնազգեստ էր նետված բազմոցի վրա, ուր դեռ մի քանի առանձնատեղ. բազմոցի առջև դրված սեղանին երկու բաժակ շոկոլադ կար, որի կեսն էին դեռ խմել, կային նաև բիսկվիտներ, բյուրեղապակյա մի պնակ՝ կապույտ չամիչով լեցուն, և մի ուրիշ պնակ էլ՝ կոնֆետով լեցուն։ Երևում էր՝ հյուրեր էին նստած։ Ալյոշան հասկացավ, որ անժամանակ է եկել, և խոժոռվեց։ Բայց նույն վայրկյանին դռան վարագույրը բարձրացավ և արագ, փութացող քայլերով ներս մտավ Կատերինա Իվանովնան, ժպտալով ուրախ ու հրճվալից, երկու ձեռքերը մեկնելով Ալյոշային։ Եվ նույն րոպեին էլ աղախինը երկու վառված մոմ բերեց ու դրեց սեղանին։

— Փա՜ռք աստծո, վերջապես եկաք։ Ամբո՜ղջ օրվա ընթացքում ձեր գալն էի միայն խնդրում աստծուց։ Նստեցե՛ք։

Կատերինա Իվանովնայի գեղեցկությունն արդեն զարմացրել էր Ալյոշային, երբ Դմիտրին, երեք շաբաթ առաջ, կատարելով իր հարսնացուի բացառիկ ցանկությունը, եղբորն առաջին անգամ բերել էր ներկայացնելու և ծանոթացնելու։ Սակայն այդ տեսակցության ժամանակ Կատերինա Իվանովնան ու Ալյոշան գրեթե ոչ մի խոսք չէին փոխանակել իրար հետ։ Ենթադրելով, որ Ալյոշան շատ ամոթահար է զգում իրեն, Կատերինա Իվանովնան ձարժես խնայել էր նրան և անընդհատ Դմիտ-

րի Ֆյոդորովիչի հետ էր խոսել։ Ալյոշան լուռ էր մնացել, բայց շատ բան ուշադիր դիտել ու լավ հասկացել էր։ Նրան զարմացրել էին գոռոզ աղջկա իշխող բնավորությունը, հպարտ սանձարձակությունն ու ինքնավստահությունը։ Ու չէր կարելի տարակուսել, որ նա իրոք այդպիսին է։ Ալյոշան զգում էր, որ ինքը չի չափազանցնում։ Գտավ, որ նրա խոշոր, սև, կրակոտ աչքերը գեղեցիկ են և հատկապես վայելում են նրա գունատ, նույնիսկ մի քիչ դեղնորակ ու երկարավուն դեմքին։ Սակայն այդ աչքերի, ինչպես և նրա հրաշալի շրթունքների գծագրության մեջ կար մի բան, որին անշուշտ կարող էր սաստիկ սիրահարվել իր եղբայրը, բայց որ չէր կարելի գուցե երկար սիրել։ Գրեթե ուղղակի ասաց նա իր մտածածը, երբ այցելությունից հետո Դմիտրին կպավ նրա օձիքից և աղաչեց չթաքցնել այն տպավորությունը, որ կրել էր իր հարսնացուին տեսնելով։

— Երջանիկ ես լինելու նրա հետ, բայց գուցե... անհանգիստ երջանիկ։

— Հենց այդ է, եղբայր։ Այսպիսիները այսպես էլ մնում են, գլուխ չեն խոնարհում ճակատագրի առաջ։ Ուրեմն կարծիքդ այն է, թե չե՞մ կարողանա հավիտյան սիրել նրան։

— Ոչ, գուցե հավիտյան սիրելու ես նրան, բայց գուցե միշտ երջանիկ չես լինելու նրա հետ։

Այդ օրն Ալյոշան կարմրելով ասաց իր կարծիքը և վրդովվեց ինքն իր դեմ, որ զիջել էր եղբոր խնդրանքին և այդպիսի «հիմար» մտքեր հայտնել։ Որովհետև՝ իր կարծիքն իրեն իսկ սոսկալի հիմար թվաց ասելուց անմիջապես հետո։ Եվ ամաչեց էլ, որ այդպես ինքնավստահորեն կարծիք էր հայտնել մի կնոջ մասին։ Ուստի ավելի մեծ եղավ նրա զարմանքը հիմա, երբ իրեն ընդառաջ վազող Կատերինա Իվանովնային տեսնելով՝ առաջին իսկ հայացքից զգաց, թե գուցե շատ էր սխալվել այն ժամանակ։ Այս անգամ նրա դեմքից ճառագայթում էր սրտաբուխ ու պարզհոգի բարությունը, ուղղամիտ ու ջերմագին անկեղծությունը։ Ամբողջ այն «հպարտությունն ու գոռոզությունը», որ առաջին հանդիպման ժամանակ այնպես զարմացրել էր Ալյոշային, հիմա նրա մեջ արտահայտվում էր լոկ իբրև համարձակ, ազնիվ մի զորություն և ինչ-որ պայծառ, հզոր հավատ սեփական անձի նկատմամբ։ Ալյոշան առաջին հայացքից, առաջին իսկ խոսքերից հասկացավ, որ Կատերինա Իվանովնայի համար գաղտնիք չէ իր վիճակի ամբողջ ողբերգակա-

նությունն այն մարդու առնչությամբ, որին այնքան շատ է սիրում և գուցե ամեն ինչ գիտե արդեն, ամեն ինչ բացարձակապես։ Եվ սակայն, հակառակ դրան, այնքա՜ն լույս կար նրա դեմքին, այնքա՜ն հավատ ապագայի նկատմամբ։ Ալյոշան հանկարծ լրջորեն մեղավոր զգաց նրա առաջ՝ իր կանխակալ կարծիքի համար։ Անմիջապես նվաճված ու գերված էր արդեն։ Բացի այդ բոլորից, Կատերինա Իվանովնայի առաջին իսկ խոսքերից նկատեց, որ մի ուժեղ հուզմունք էր տիրում նրան, գուցե նրա համար շատ անսովոր մի հուզմունք, որ համարյա նման էր մի տեսակ ցնծության։

— Այնպե՜ս էի սպասում ձեզ, որովհետև միայն ձեզնից կարող եմ այժմ իմանալ ամբողջ ճշմարտությունը, ուրիշ ո՜չ ոքից։

— Ես եկա...— մրմնջաց Ալյոշան շփոթվելով,— ես... ինձ նա ուղարկեց...

— Հա՜, նա՜ ուղարկեց ձեզ։ Դե՜հ, հենց այդպես էլ նախազգում էի։ Ամե՜ն ինչ գիտեմ հիմա, ամե՜ն ինչ,— բացականչեց Կատերինա Իվանովնան, և հանկարծ կայծկլտացին աչքերը։— Սպասեցեք մի վայրկյան, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, նախօրոք ասեմ, թե ինչու էի այնքան սպասում ձեզ։ Հասկանո՜ւմ եք, ես գուցե շատ ավելին գիտեմ, քան նույնիսկ դուք. նորություններ չէ, որ ուզում եմ ձեզնից։ Ասեմ, թե ինչ եմ ուզում։ Ուզում եմ իմանալ ձեր սեփական, ձեր անձնական վերջին տպավորությունը նրա մասին, ուզում եմ, որ ինձ պատմեք ամենից ավելի ուղղակի, անպաճույճ, նույնիսկ կոպիտ (օ՜, ինչքա՜ն ուզեք կոպիտ) ձևով, թե դուք ինքներդ ինչ եք մտածում հիմա նրա մասին, նրա վիճակի մասին՝ այսօրվա ձեր հանդիպումից հետո։ Դա գուցե ավելի լավ կլինի, քան եթե ինքս անձնապես բացատրվեմ նրա հետ, երբ նա այլևս չի ուզում գալ ինձ մոտ։ Հասկացա՞ք, թե ինչ եմ ուզում ձեզնից։ Դե՜հ, ասացե՜ք հիմա, ի՞նչ լուր ուղարկեց նա ձեր միջոցով (ես այդպես էլ գիտեի, որ ձե՜զ կուղարկի ինձ մոտ), պարզ ասացեք, ամենահետին բառն անգամ մի՜ թաքցրեք...

— Պատվիրեց ասել, թե ձեզ... ողջույններն է հղում, և թե երբեք չի գա այլևս... բայց ձեզ ողջույններն է հղում։

— Ողջույնն՞երը։ Հենց այդպես էլ ասա՞ց, հենց այդպե՞ս արտահայտվեց։

— Այո։

— Գուցե պատահաբար, հարևանցիորեն, սխալ մի բա՞ռ ասաց, պետք եղած բառը չօգտագործե՞ց գուցե։

— Ոչ, հենց պատվիրեց, որ ճիշտ այդ բառն ասեմ՝ «ողջույնները»։ Մի երեք անգամ խնդրեց, որ չմոռանամ ասելու։

Կատերինա Իվանովնան բռնկվեց հանկարծ։

— Օգնեցե՛ք հիմա ինձ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, հենց հիմա է, որ ձեր օգնության կարիքն ունեմ։ Ասեմ ձեզ իմ մտածածը, իսկ դուք ասեք միայն՝ ճի՞շտ եմ մտածում, թե ոչ։ Լսեցե՛ք, եթե նա հարևանցիորեն ուղարկեր իր ողջույնները, առանց պնդելու, որ այդ բառն ինձ հաղորդեք, եթե չշեշտեր այդ բառը, ամեն ինչ վերջացած կլիներ... Կարելի էր արդեն խաչ քաշել, ու վե՜րջ։ Բայց եթե նա հատկապես պնդեց այդ բառը, եթե հատկապես պատվիրեց ձեզ, որ չմոռանաք հաղորդելու ինձ այդ ողջույնը, ուրեմն նա հուզվա՞ծ էր գուցե, կորցրե՞լ էր իրեն։ Տվել է իր որոշումը և վախեցե՞լ այդ որոշումից։ Հաստատ քայլերով չի հեռացել ինձնից, այլ գլուխը բռնել ու փախել է։ Այդ բառը շեշտելը կարող է պարզապես հոխորտանքի նշան լինել...

— Այո՜, այո՜,— հաստատեց Ալյոշան եռանդով,— ինձ էլ հիմա այդպես է թվում։

— Եթե այդպես է, ուրեմն նա կորած չէ՜ դեռ։ Պարզապես հուսահատության մեջ է ընկել, բայց դեռ կարող եմ փրկել նրան։ Հա՜, սպասեցեք մի րոպե, որևէ բան չասա՞ց ձեզ փողի մասին՝ երեք հազար ռուբլու մասին։

— Ոչ միայն ասաց, այլև այդ հարցը գուցե ամենից ավելի էր մորմոքում նրան։ Ասաց, թե կորցրել է պատիվը և այլևս ոչ մի բան նշանակություն չունի հիմա,— պատասխանեց Ալյոշան կաթոգին, ամբողջ հոգով զգալով, որ սիրտը հույսով է լցվում և որ իրոք, գուցե, մի ելք ու փրկություն կա իր եղբոր համար։— Բայց միթե դուք... գիտե՞ք այդ փողի մասին,— ավելացրեց նա և հանկարծ ձայնը կտրեց։

— Վաղուց գիտեմ, հաստատ գիտեմ։ Հեռագրեցի Մոսկվա, հարցրի և վաղուց իմացա, որ փողը չեն ստացել։ Նա չի ուղարկել փողը, բայց ես ոչինչ չասացի։ Այս վերջին շաբաթն էլ ականջիս հասավ, որ դեռ խիստ կարիք ունի փողի... Այս բոլորի մեջ իմ միակ նպատակն այն էր, որ նա իմանա, թե ո՜ւմ մոտ պետք է գա նորից, ո՜վ է նրա ամենահավատարիմ բարեկամը։ Ոչ, նա չի ուզում հավատալ, որ ե՜ս եմ իր

ամենահավատարիմ բարեկամը։ Ջուզեց ինձ ճանաչել, ինձ նայում է միայն որպես կնոջ։ Ամբողջ շաբաթ տանջվում էի այն սոսկալի մտահոգությամբ, թե ինչպե՞ս անեմ, որ նա ինձնից չամաչի այդ երեք հազարը վատնելու համար։ Այսինքն թող ամաչի ինքն իրենից և մյուս բոլոր մարդկանցից, բայց թող ինձնի՛ց չամաչի։ Աստծուն հո ասո՞ւմ է ամեն ինչ, առանց ամաչելու։ Իսկ ինչո՞ւ մինչև հիմա չգիտե, թե ես ամեն ինչ կարող եմ հանդուրժել նրա սիրուն։ Ինչո՞ւ, ինչո՞ւ չի ճանաչում ինձ, ինչպե՞ս է համարձակվում չճանաչել ինձ մեր այն բոլոր անցյալ դարձերից հետո։ Ուզում եմ փրկել նրան առհավետ։ Թող մոռանա՞, որ ես իր հարսնացուն եմ։ Եվ ահա խնդրեմ, նա վախենում է, որ իր պատի՞վը կկորցնի իմ աչքին։ Բայց չէ՞ որ նա չի վախեցել իր սիրտը բանալու ձեզ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Ի՞նչն է պատճառը, որ ես մինչև հիմա չարժանացա նույն բանին։

Վերջին բառերը նա լալով ասաց. արցունքը ժայթքեց նրա աչքերից։

— Պետք է ձեզ հայտնեմ,— նույնպես դողացող ձայնով ասաց Ալյոշան,— թե ինչ պատահեց հիմա նրա և մեր հոր միջև։— Եվ նա պատմեց ամբողջ տեսարանը, պատմեց, թե Դմիտրին իրեն ուղարկել էր հոր մոտ՝ փող խնդրելու, և թե ինչպես հետո նա ներս խուժեց, ծեծեց հորը և ապա հատկապես շեշտեց և պնդեց նորից, որ ինքը, Ալյոշան, գա և «ողջույնները» հաղորդի...— Այդ կնոջ մոտ գնաց...— ավելացրեց Ալյոշան մեղմ ձայնով։

— Իսկ դուք կարծում եք, թե չե՞մ կարող հանդուրժել այդ կնոջը։ Այդպե՞ս է կարծում նա, չե՞մ կարող հանդուրժել։ Բայց նա չի ամուսնանա այդ կնոջ հետ,— հանկարծ ջղային ծիծաղեց Կատերինա Իվանովնան,— կարո՞ղ է Կարամազովը հավիտյան վառվել այդպիսի կրքով։ Դա կիրք է, ոչ թե սեր։ Նա չի ամուսնանա, որովհետև այդ աղջիկը չի համաձայնվի ամուսնանալ նրա հետ...— նորից տարօրինակորեն ծիծաղեց հանկարծ Կատերինա Իվանովնան։

— Գուցե կամուսնանա Միտյան,— տրտմորեն ասաց Ալյոշան, աչքերը խոնարհելով։

— Չի՞ ամուսնանա, ասում եմ ձեզ։ Այդ աղջիկը հրեշտակ է, գիտե՞ք այս բանը։ Գիտե՞ք, գիտե՞ք,— բացականչեց հանկարծ Կատերինա Իվանովնան արտակարգ եռանդով։—

Հեքիաթային արարածներից ամենահեքիաթայինն է նա։ Գիտեմ, թե որքան գայթակղիչ է, բայց գիտեմ նաև, թե որքա՞ն բարի է, հաստատակամ, ազնիվ։ Ի՞նչ եք այդպես նայում ինձ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Գուցե զարմանո՞ւմ եք իմ խոսքերի վրա, գուցե չե՞ք հավատում։ Ագրաֆենա Ալեքսա՛նդրովնա, հրեշտա՛կ իմ,— կանչեց նա հանկարծ, նայելով դեպի մյուս սենյակը,— եկե՛ք մեզ մոտ, հոգի մարդ է սա, Ալյոշան է, ամեն ինչ գիտե մեր հարցի մասին, երևացե՛ք նրան։

— Ես էլ հենց սպասում էի վարագույրի ետև, որ կկանչեք ինձ,— ասաց մի քնքուշ կանացի ձայն, որ նույնիսկ քաղցրավուն էր մի քիչ։

Բարձրացավ դռան վարագույրը, և... նույն ինքն Գրուշենկան, խնդուն և ուրախ, մոտեցավ սեղանին։ Կարծես մի բան գալարվեց Ալյոշայի մեջ։ Հայացքը սևեռեց նրան ու չէր կարողանում աչքերը հեռացնել։ Ահա նա, ահա այն սարսափելի կինը՝ «գազանը», ինչպես հորջորջեց նրան Իվանը կես ժամ առաջ։ Եվ սակայն թվում էր, թե արտաքուստ ամենասովորական ու պարզ էակն էր կանգնած Ալյոշայի դիմաց՝ բարի, համակրելի մի կին, որն այո, գեղեցիկ էր, բայց այնքա՞ն նման էր բոլոր մյուս «սովորական» գեղեցիկ կանանց։ Ճիշտ է, շատ լավիկն էր, շա՞տ, ուներ այն ռուսական գեղեցկությունը, որ շատերն են սիրում այնպիսի՞ հրայրքով։ Բավական բարձրահասակ կին էր, թեև մի քիչ կարճ էր Կատերինա Իվանովնայից, որի հասակն արդեն չափից ավելի էր բարձր։ Գիրուկ էր Գրուշենկան, մարմնի շարժումները փափուկ էին և կարծես նույնիսկ անլսելի, մի տեսակ յուրահատուկ քաղցրավունություն ստանալու չափ քնքշացած՝ իր ձայնի նման։ Մոտեցավ ոչ թե Կատերինա Իվանովնայի զորեղ, առույգ քայլվածքով, այլ, ընդհակառակը, անձայն։ Ոտքերն այնպես էր դնում հատակին, որ քայլերը բոլորովին չէին լսվում։ Մեղմորեն սուզվեց բազկաթոռի մեջ, սև մետաքսե շքեղ շրջազգեստի մեղմ շրշյունով, և կաթնափրփուրի պես սպիտակ ու գիրգ վիզն ու լայն ուսերը քնքշավայել պարուրեց բրդյա սև, թանկարժեք շալով։ Քսաներկու տարեկան էր նա, և դեմքը ճիշտ ու ճիշտ այդ տարիքն էր ցույց տալիս։ Շատ սպիտակ էր երեսը, իսկ այտերին բաց վարդագույնի թեթև մի երանգ կար։ Դիմագծերը կարծես թե չափազանց լայն էին, իսկ ստորին կզակը նույնիսկ փոքր-ինչ առաջ էր ընկած։ Վերին շրթունքը բարակ էր, իսկ

ներքևինը, որ մի քիչ դուրս էր ցցված, կրկնակի լիքն էր ու կարծես ուռել էր։ Սակայն հրաշալիորեն փարթամ, մուգ շագանակագույն մազերը, մուգ, թավշանման հոնքերը և երկար թարթիչներով, լուրթ-մոխրագույն դյութական աչքերն անպայման կըստիպեին կանգ առնել ամենից ավելի անտարբեր ու մտացիր մարդուն՝ նույնիսկ բազմության մեջ, զբոսավայրում կամ ժխորի մեջ, կստիպեին նայել նրա դեմքին ու հետո հիշել երկար տարիներ։ Ալյոշային ամենից ավելի զարմացրեց այդ դեմքի մանկական, պարզասիրտ արտահայտությունը։ Երեխայի նայվածք ուներ Գրուշենկան, երեխայի նման ուրախանում էր չգիտես ինչի համար։ Նա հենց «ուրախանալով» մոտեցավ սեղանին, ասես նույն րոպեին մի բան ակնկալելով՝ ուղղակի մանկական, անհամբեր ու դյուրահավատ հետաքրքրությամբ։ Նրա հայացքն ուրախացնում էր մարդու սիրտը,-- Ալյոշան զգաց այդ։ Դեռ նրա մեջ մի բան էլ կար, որն Ալյոշան չէր կարողանում որոշել, բայց որ գուցե անգիտակցորեն ազդում էր նաև իր վրա, այսինքն այդ փափկությունը դարձյալ, մարմնական շարժումների հեշտալի քնքշությունը, կատվային անձայն այդ նազելիությունը։ Եվ սակայն դա զորեղ, փարթամ մարմին էր։ Շալի տակ զգացվում էին լայն ու լեցուն ուսերը, բարձր ու դեռ միանգամայն աղջկնային կուրծքը։ Այդ մարմինը գուցե Միլոսյան Վեներայի բարեձև գծերն ուներ, թեև հիմա էլ, անտարակույս, համաչափությունն սկսել էր կոպտանալ, և դա զգալի էր արդեն։ Ռուս կնոջ գեղեցկությանը գիտակ մարդիկ, նայելով Գրուշենկային, կկարողանային անսխալորեն գուշակել, որ այդ թարմ, դեռ պատանեկան գեղեցկությունը, հասնելով երեսուն տարեկանին, կկորցնի իր ներդաշնակությունը, կճապաղի. կթառամի դեմքը, շատ շուտով մանր կնճիռներ կերևան աչքերի շուրջ ու ճակատի վրա, երեսի գույնը կկոպտանա, կարմիր կդառնա գուցե, մի խոսքով՝ ակնթարթային գեղեցկություն էր դա, վաղանցուկ գեղեցկություն, որն այնքան հաճախադեպ է հենց ռուս կնոջ մոտ։ Ալյոշան, իհարկե, չէր մտածում դրա մասին, բայց հմայված լինելով հանդերձ, մի տեսակ տհաճ զգացողությամբ ու կարծես ցավելով հարցնում էր ինքն իրեն, թե ինչո՞ւ Գրուշենկան այդպես ծոր է տալիս բառերը և չի կարող բնական խոսել։ Երևում էր, որ նա, այդպես անելով, մի առանձին գեղեցկություն է գտնում վանկերի և հնչյունների այդ երկարաձգման ու շեշտված կերպով քաղցրավուն երանգավորման մեջ։ Դա ան-

շուշտ տգեղ, անբարեկիրթ մի սովորություն էր պարզապես, որ վկայում էր նրա ցածր դաստիարակությունն ու վայելուչ վարվելակերպի այն գռեհիկ հասկացողությունը, որ յուրացրել էր մանկությունից։ Բայց և այնպես, Ալյոշային թվում էր, թե խոսելու այդ եղանակն ու առոգանությունը գրեթե անկարելիորեն հակասում էին դեմքի այդ մանկորեն պարզամիտ և ուրախ արտահայտությանը, աչքերի այդ մեղմ, երջանիկ, մանկաժպիտ փայլին։ Կատերինա Իվանովնան իսկույն նստեցրեց նրան բազկաթոռին, Ալյոշայի դիմաց, և հրճվանքով համբուրեց նրա ժպտուն շրթունքները մի քանի անգամ։ Կարծես սիրահարվել էր Գրուշենկային։

— Մենք առաջին անգամն ենք հանդիպում իրար, Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— ասաց Կատերինա Իվանովնան արբեցությամբ,— ուզեցի ճանաչել նրան, տեսնել նրան, ուզում էի գնալ մոտը, բայց հազիվ էի հայտնել իմ ցանկությունը, և ահա ինքը եկավ։ Այնպես էլ գիտեի, որ ամեն ինչ կլուծենք նրա հետ, ամե՞ն ինչ։ Հենց սիրտս էր վկայում... Խնդրեցին, թախանձեցին, որ չանեմ այս քայլը, բայց ես նախազգում էի արդյունքը և չսխալվեցի։ Գրուշենկան ամեն ինչ բացատրեց ինձ, բացատրեց իր բոլոր մտադրությունները։ Բարի հրեշտակի նման թռավ իջավ այստեղ, խաղաղություն և ուրախություն բերեց...

— Չխորշեցիք ինձնից, սիրելի, մեծարժան օրիորդ,— ծոր տալով ասաց Գրուշենկան նույն քաղցր, ուրախ ժպիտով։

— Չհամարձակվե՞ք այդպիսի խոսքեր ասել ինձ, հմայի՜չ էակ, կախարդուհի՜։ Ձեզանի՞ց խորշել։ Ահա մի անգամ էլ համբուրում եմ ձեր ներքևի շրթունքը։ Ձեր այս շրթունքն ուռածի նման է, թող է՛լ ավելի ուռչի ուրեմն, ահա՜, է՛լ ավելի, է՛լ ավելի... Տեսեք, ինչպե՜ս է ծիծաղում, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, մարդու սիրտն է ուրախանում, երբ նայում ես այս հրեշտակին...

Ալյոշան կարմրում էր ու դողում աննկատելի, թեթև սարսուռով։

— Փայփայում եք դուք ինձ, օրիորդ, բայց ես գուցե բոլորովին արժանի չեմ ձեր գգվանքին։

— Արժանի չէ՞։ Այն էլ՝ նա՜ արժանի չէ,— բացականչեց Կատերինա Իվանովնան նորից նույն հրայրքով։— Իմացեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, որ մեր այս սիրունիկ գլուխը քմահաճ բաներ է երևակայում, մեր այս անուշիկ սիրտը կամակոր է, բայց հպարտ, շա՜տ հպարտ։ Ասեմ ձեզ, Ալեքսեյ Ֆյոդորո-

վիչ, ազնիվ ենք մենք, մեծահոգի, գիտե՞ք թե չէ։ Պարզապես դժբախտ ենք եղել։ Խիստ պատրաստակամ ենք եղել ամեն տեսակ զոհաբերություն անելու՝ գուցե անարժան կամ էլ թեթևամիտ մի մարդու համար։ Եղել է այդպիսի մեկը, մի սպա նույնպես, սիրել ենք նրան, ամեն ինչ զոհել նրա համար, վաղո՞ւց, հինգ տարի առաջ, իսկ նա մոռացավ մեզ, ամուսնացավ։ Այրիացել է հիմա, նամակ է գրել, գալիս է այստեղ, և իմացիք, որ մի՞ այն նրան, միայն ու միայն նրա՞ն ենք սիրում մինչև հիմա և սիրել ենք մեր ամբողջ կյանքում։ Կգա նա, և Գրուշենկան նորից երջանիկ կլինի, իսկ ամբողջ հինգ տարի դժբախտ է եղել։ Բայց ո՞վ կարող է կշտամբել Գրուշենկային, ո՞վ կարող է հոխորտալ, որ նրա բարեհաճ վերաբերմունքն է վայելում։ Այդ անդամալույծ ծերունին միայն, վաճառականը, բայց նա էլ մեր հայրն է եղել ավելի, մեր բարեկամը, մեր պաշտպանը։ Նա մեզ այն ժամանակ գտավ հուսահատության մեջ, տանջանքների մեջ կորած, երբ մեզ լքել էր այն մարդը, որին այնքա՞ն սիրում էինք... Գրուշենկան ախր ուզում էր ջուրը նետվել այն ժամանակ, խեղդվել, և փրկե՞ց նրան այդ ծերունին, փրկե՞ց։

— Բայց շատ եք ինձ պաշտպանում. սիրելի օրիորդ, շատ եք վռազում ամեն ինչում,— ծոր տվեց նորից Գրուշենկան։

— Պաշտպանում ե՞մ։ Բայց մի՞թե ես պետք է պաշտպանեմ ձեզ, կարո՞ղ եմ միթե հանդգնությունն ունենալ պաշտպանելու։ Գրուշենկա, հրեշտա՞կ, տվեք ձեր ձեռքը, նայեցե՛ք այս փափլիկ, փոքրիկ հրաշալի ձեռքին, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Տեսնո՞ւմ եք, ահա այս ձեռքը երջանկություն բերեց ինձ, կենդանացրեց ինձ, և ես հիմա համբուրելու եմ ահա այս ձեռքը, թե՛ երեսից, թե՛ ափից, ահա՛, ահա՛, ահա՛։— Եվ նա, մի տեսակ հափշտակված, երեք անգամ համբուրեց Գրուշենկայի իրոք հրաշալի, թեև գուցե չափից ավելի փափլիկ ձեռքը։ Իսկ Գրուշենկան, մեկնելով այդ ձեռքը, ջղային, զրնգուն, դյութական մի ծիծաղով նայում էր «սիրելի օրիորդին» և ակներևորեն հաճույք էր զգում, որ այդպես համբուրում են իր ձեռքը։ «Գուցե չափազանց շատ է այս հիացմունքը»,— անցավ Ալյոշայի մտքով։ Նա կարմրեց։ Մի հատուկ անհանգստություն կար նրա սրտում շարունակ։

— Ինձ չեք ամաչեցնի ախր, սիրելի օրիորդ, որ այսպես իմ ձեռքն եք համբուրում Ալեքսեյ Ֆյոդորովիչի առաջ։

— Բայց միթե դրանով ամաչեցնե՞լ էի ուզում ձեզ,— ասաց

Կատերինա Իվանովնան փոքր-ինչ զարմացած։— Ա՜խ, սիրելիս, ինչ վա՞տ եք հասկանում ինձ։

— Բայց դո՛ւք էլ գուցե այնքան լավ չեք հասկանում ինձ, սիրելի օրիորդ, ես գուցե շատ ավելի վատն եմ, քան թվում եմ ձեզ։ Ես վատ սիրտ ունեմ, քմահաճ եմ, ինքնակամ։ Այդ օրը պարզապես ձեռք առնելու համար հրապուրեցի խեղճ Դմիտրի Ֆյոդորովիչին։

— Իսկ հիմա հենց դուք էլ նրան փրկելու եք, չէ՞։ Խոսք տվեցիք։ Կբացատրեք նրան իրողությունը, կհայտնեք, որ սիրում եք ուրիշին, վաղուց եք սիրում, և որ այդ ուրիշը հիմա իր ձեռքն է առաջարկում ձեզ...

— Օ՜ հ, այդպիսի խոսք չեմ տվել։ Ինքներդ ինձ ասացիք այդ բոլորը, իսկ ես խոսք չտվեցի։

— Ուրեմն լավ չեմ հասկացել ձեզ,— ասաց Կատերինա Իվանովնան մեղմորեն, մի թեթև գունատվելով։— Դուք խոստացաք...

— Օ՜ հ, հրեշտակ օրիորդ, ոչինչ չեմ խոստացել,— ընդհատեց Գրուշենկան մեղմ ու հավասարակշիռ ձայնով, նույն ուրախ և անմեղ արտահայտությունը դեմքին։— Ահա տեսնո՞ւմ եք հիմա, մեծարժան օրիորդ, ինչ վատ ու ինքնիշխան եմ ես ձեր համեմատությամբ։ Ինչ ուզում եմ, այն էլ անում եմ։ Քիչ առաջ գուցե խոստացել եմ մի բան, իսկ հիմա նորից եմ մտածում՝ վայ թե հանկարծ նորից դուր գա ինձ Միտյան... չէ՞ որ մի անգամ շատ է դուր եկել արդեն, համարյա մի ամբողջ ժամ դուր է եկել։ Ա՜յ հիմա գուցե գնամ ու ասեմ նրան, որ այս օրվանից մնա ինձ մոտ... Տեսնո՞ւմ եք ինչ անկայուն եմ ես...

— Քիչ առաջ դուք... բոլորովին ուրիշ բան էիք ասում...— հազիվ մրմնջաց Կատերինա Իվանովնան։

— Օ՜հ, քիչ առա՜ջ։ Բայց ախր ես փափկասիրտ, հիմար աղջիկ եմ։ Ապա մտածեցե՛ք մի րոպե, թե նա ինչե՞ր է քաշել իմ երեսից։ Դե որ տուն գնամ ու մեկ էլ հանկարծ խղճա՞մ նրան։ Ի՞նչ անեմ այն ժամանակ։

— Չէի սպասում...

— Է՜հ, օրիորդ, դուք որքա՞ն բարի ու ազնիվ եք ուրեմն իմ համեմատությամբ։ Ա՜յ հիմա հասկացաք իմ բնավորությունը և գուցե է՛լ չսիրեք ինձ՝ այսպիսի թեթևամիտ աղջկան։ Տվեք ձեր անուշիկ ձեռքը, հրեշտակ օրիորդ,— քնքշորեն խնդ-

բեց Գրուշենկան և կարծես երկյուղածությամբ վերցրեց Կատերինա Իվանովնայի ձեռքը։— Ահա, սիրելի օրիորդ, վերցնում եմ ձեր ձեռքը և հիմա կհամբուրեմ այնպես, ինչպես դուք իմը համբուրեցիք։ Դուք երեք անգամ համբուրեցիք, իսկ ես դրա դիմաց պետք է երեք հարյուր անգամ համբուրեմ, որ հաշիվը հավասար լինի։ Ինչ արած, թո՛ղ այսպես լինի, իսկ հետո՝ թո՛ղ աստծո կամքը լինի հետո։ Գուցե լրիվ ձեր ստրուկը դառնամ և ուզենամ ամեն ինչում ստրկորեն հաճոյանալ ձեզ։ Թո՛ղ լինի այնպես, ինչպես աստված ուզում է, առանց մեր մեջ որևէ համաձայնության ու խոստումների։ Այս ի՞նչ անուշիկ ձեռք ունեք, ի՞նչ անուշիկ, անուշի՞կ ձեռք։ Թանկագի՞ն օրիորդ, չքնաղների չքնա՞ղը, չտեսնվա՞ծ իմ գեղեցկուհի։

Նա հուշիկ բարձրացրեց այդ ձեռքն իր շրթունքներին, ճիշտ է՝ համբույրների «հաշիվը հավասարեցնելու» տարօրինակ նպատակով։ Կատերինա Իվանովնան ետ չքաշեց իր ձեռքը. երկչոտ մի հույսով լսեց Գրուշենկայի վերջին ասածն «ստրկորեն» հաճոյանալու մասին, թեև այդ խոստումն էլ շատ տարօրինակ ձևով էր արտահայտված։ Լարված նայում էր Գրուշենկայի աչքերին. դեռ նույն պարզամիտ, դյուրահավատ արտահայտությունն էր տեսնում այդ աչքերի մեջ, նույն պայծառ ուրախությունը... «Գուցե չափազանց միամիտ է»,— հույսի մի շող պլպլաց Կատերինա Իվանովնայի սրտում։ Իսկ այդ միջոցին Գրուշենկան, ասես «անուշիկ ձեռքից» զմայլված, դանդաղորեն բարձրացնում էր այն իր շրթունքներին։ Բայց հենց շրթունքների մոտ հանկարծ երկու կամ երեք վայրկյան պահեց այդ ձեռքը, ասես մի ուրիշ բան մտածելով։

— Բայց գիտե՞ք ինչ, հրեշտակ օրիորդ,— մեկեն ծոր տվեց նա ամենաքնքուշ և շատ ավելի քաղցրավուն ձայնով,— գիտե՞ք ինչ, ա՛յ մեկ էլ խելքիս փչեց, որ չհամբուրեմ ձեր ձեռքը, հա՞։— Եվ նա մի փոքրիկ, շատ ուրախ ծիծաղ արձակեց։

— Ինչպես ուզում եք... Ի՞նչ պատահեց ձեզ,— սարսռաց հանկարծ Կատերինա Իվանովնան։

— Դե՛հ, թող այնպես էլ մնա ձեզ հիշատակ, որ դուք իմ ձեռքը համբուրեցիք, իսկ ես չհամբուրեցի ձերը։

Հանկարծ մի բան փայլատակեց Գրուշենկայի աչքերում։ Նա սոսկալի սևեռուն հայացքով նայեց Կատերինա Իվանովնային։

— Լի՛ր,— գոչեց հանկարծ Կատերինա Իվանովնան, ասես

մի բան կռահելով իսկույն։ Նա կաս-կարմիր եղավ և ընդոստ վեր թռավ տեղից։ Առանց շտապելու վեր կացավ նաև Գրուշենկան։

— Հենց այսպես էլ կպատմեմ հիմա Միտյային, թե ինչպես դուք համբուրեցիք իմ ձեռքը, իսկ ես՝ ես բոլորովին չհամբուրեցի ձերը։ Եվ ինչպե՞ս է նա ծիծաղելու։

— Գարշելի՞, դո՞ւրս կորիր այստեղից։

— Օ՜, ինչ ամո՞թ, օրիորդ, օ ի՞նչ ամոթ, ձեզ բոլորովին վայել չեն այդպիսի բառերը, սիրելի օրիորդ։

— Դո՞ւրս կորիր, ծախո՞ւ արարած,— բղավեց Կատերինա Իվանովնան։ Նրա լրիվ այլայլված դեմքի ամեն մի գիծը դողում էր։

— Հա՞, ծախո՞ւ։ Դե հա՞, ինքներդ մի ժամանակ կավալերների տունն էիք գնում փողի համար, իրիկվա մթանը, այն էլ կո՞ւյս օրիորդ, ձեր գեղեցկությունն էիք տանում ծախելու։ Ախր գիտեմ, չէ՞։

Կատերինա Իվանովնան ճչաց և քիչ էր մնում հարձակվեր Գրուշենկայի վրա, բայց Ալյոշան ամբողջ ուժով ետ պահեց նրան.

— Ո՛չ մի քայլ, ո՛չ մի խոսք։ Մի՛ խոսեք, ոչինչ մի՛ պատասխանեք, կգնա, հիմա կգնա։

Լսելով Կատերինա Իվանովնայի ճիչը, նույն րոպեին ներս վազեցին նրա երկու ազգականուհիները, աղախինն էլ ներս վազեց։ Բոլորը շտապեցին նրա մոտ։

— Այո, կգնամ,— ասաց Գրուշենկան, վերցնելով իր թեթև վերնազգեստը բազմոցի վրայից։— Ալյոշա, սիրելիս, ուղեկցի՛ր ինձ։

— Գնացե՛ք դուրս, շո՛ւտ գնացեք,— ազերսեց Ալյոշան, ձեռքերն իրար միացնելով։

— Սիրելի Ալյոշենկա, ուղեկցի՛ր։ Ճանապարհին մի լավ, շա՛տ լավ բան եմ ասելու քեզ։ Այս տեսարանը քե՛զ համար սարքեցի, Ալյոշենկա։ Ուղեկցիր, ջանիկս, գոհ կմնաս հետո։

Ալյոշան երեսը մյուս կողմ դարձրեց, ախուվախ անելով։ Գրուշենկան զրնգուն մի ծիծաղ արձակեց ու դուրս վազեց տնից։

Կատերինա Իվանովնան ջղային նոպա ունեցավ։ Հեկեկում էր, ցնցվում ջղաձգումներից։ Բոլորն իրար էին անցել նրա շուրջը։

— Նախազգուշացնում էի ձեզ,— ասաց նրան ավագ մո-

բաքույրը,— ետ էի պահում ձեզ այս քայլից... շատ տաքարյուն եք... կարելի՞ էր միթե այսպիսի քայլի դիմել։ Դուք չգիտեք այս անպիտան արարածներին, իսկ սրա մասին ասում են, թե վատից էլ վատն է... Չէ՞, չափից դուրս քմահաճ եք դուք։

— Վա՜գր է նա,— բղավեց Կատերինա Իվանովնան։— Ինչո՞ւ ինձ բռնեցիք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, կծեծեի՞ նրան, կծեծեի՞։

Նա չէր կարողանում զսպել իրեն Ալյոշայի առաջ, գուցե և չէր ուզում զսպել։

— Պետք է մտրակո՞վ ծեծել նրան, կառափնարանում, հրապարակա՜վ, դահիճի՞ ձեռքով։

Ալյոշան ետ-ետ գնաց դեպի դուռը։

— Աստվա՜ծ իմ,— ճչաց հանկարծ Կատերինա Իվանովնան, ձեռքերն իրար զարկելով,— իսկ նա՜, նա՜, ձեր եղբա՜յրը։ Այնքա՞ն անազնիվ կարող էր լինել, այնքան անմարդկայի՞ն։ Պատմե՞լ է այս ստոր արարածին այն դեպքը, այն ճակատագրական, այն անիծյա՞լ, ընդմի՞շտ անիծյալ օրվա դեպքը։ «Գնացել էիք ձեր գեղեցկությունը ծախելու, սիրելի օրիորդ»։ Ուրեմն, գիտե՞։ Սրիկա՜ է ձեր եղբայրը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։

Ալյոշան ուզում էր մի բան ասել, բայց ոչ մի բառ չէր գտնում։ Սիրտը ճմլվում էր ցավից։

— Գնացե՛ք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Մեռնում եմ ամոթից, սոսկալի է, սոսկալի՞։ Վաղը... խնդրում եմ ծնկաչոք, եկեք վաղը։ Մի՛ դատապարտեք, ներեցեք, էլ չգիտե՞մ, թե ինչ կանեմ ինքս ինձ։

Ալյոշան կարծես երերալով դուրս եկավ փողոց։ Նա էլ ուզում էր լաց լինել Կատերինա Իվանովնայի նման։ Հանկարծ աղախինը հասավ ետևից։

— Օրիորդը մոռացավ հանձնել ձեզ տիկին Խոխլակովայի նամակը. ճաշից ի վեր մնում էր օրիորդի մոտ։

Ալյոշան մեքենաբար վերցրեց փոքրիկ վարդագույն ծրարը և, գրեթե առանց գիտակցելու, գրպանը դրեց։

XI

ՄԻ ԼԱՎ ԱՆՈՒՆ ԵՎՍ ՓՁԱՆՈՒՄ Է

Քաղաքից մինչև վանք մի վերստ կլիներ, մի քիչ էլ ավելի։ Ալյոշան շտապ գնում էր ճանապարհով, որ այդ ժամին

ամայի էր։ Համարյա գիշեր էր արդեն, դժվար էր զանազանել իրերը երեսուն քայլից։ Ճանապարհի կեսին մի խաչմերուկ կար։ Խաչմերուկի մոտ, մենավոր ուռենու տակ, մարդկային մի կերպարանք երևաց։ Հազիվ էր Ալյոշան հասել խաչմերուկին, երբ այդ կերպարանքն առաջ նետվեց, վազեց նրա վրա և գոռաց կատաղի ձայնով.

— Քսա՜կդ կամ կյա՜նքդ։

— Ա՜հ, դու ես ուրեմն, Մի՜տյա,— զարմացավ Ալյոշան, որ սակայն սաստիկ ցնցվել էր։

— Հա՜-հա՜-հա՜։ Չէի՞ր սպասում։ Մտածեցի՝ որտե՞ղ սպասեմ քեզ։ Նրա տան մո՞տ։ Երեք ճանապարհ կա այնտեղից, և կարող էի աչքիցս փախցնել քեզ։ Վերջապես որոշեցի այստեղ սպասել, որովհետև հենց այստեղից անպայման կանցնի, մտածեցի, ուրիշ ճանապարհ չկա դեպի վանք։ Դե՛հ, հայտնիր ճըշմարտությունը, ճզմիր ինձ ուտիճի պես... Բայց ի՞նչ է պատահել քեզ։

— Ոչինչ, եղբայր... պարզապես վախեցա։ Ա՜խ Դմիտրի։ Հայրիկի արյո՞ւնը քիչ առաջ,— սկսեց արտասվել Ալյոշան։ Վաղուց էր ուզում լաց լինել, և հիմա կարծես հանկարծ մի բան փրթավ նրա հոգում։— Քիչ մնաց սպանեիր նրան... անիծեցիր նրան... իսկ հիմա... հիմա... կատակներ ես անում... քսակդ կամ կյանքդ...

— Դե լա՜վ, ի՞նչ կա որ։ Անվայել է, հա՞։ Հարմար չէ՞ իմ վիճակին։

— Ո՜չ... հենց այնպես ասացի...

— Կա՜ց։ Նայիր այս գիշերին. տեսնո՞ւմ ես, ինչ մռայլ գիշեր է, տե՛ս ինչ ամպեր են, ինչ քամի է բարձրացել։ Թաքնվել էի այստեղ, ուռենու տակ, քեզ էի սպասում, և հանկարծ մտածեցի (ահա աստվա՜ծ է վկա), մտածեցի՝ էլ ինչո՞ւ քարշ տամ այս տանջանքը, էլ ի՞նչ ունեմ սպասելու։ Ահա՜ ուռենին, թաշկինակ էլ կա, շապիկ էլ, կարելի է պարան շինել իսկույն, մի զույգ էլ տաբատակալ կա և... էլ ինչո՞ւ շարունակեմ բեռ լինել երկրի վրա, ինչո՞ւ անպատվեմ երկիրն իմ ստոր ներկայությամբ։ Մեկ էլ լսում եմ՝ դու ես գալիս... աստվա՜ծ իմ, կարծես հանկարծ լույս իջավ իմ վրա. կա՜ ուրեմն, կա՜ մի մարդ, որին սիրում եմ, ահա՜ նա, ահա՜ այն մարդը, իմ սիրելի ախպերիկը, որին ամենից ավելի եմ սիրում աշխարհիս վրա, միա՜կ մարդը, որին սիրում եմ, միա՜-

կը։ Եվ այնքա՜ն սիրեցի քեզ, այնքա՜ն սիրեցի այդ բոպեին, որ մտածեցի՝ հի՛մա փաթաթվեմ վզին։ Բայց մի հիմար միտք էլ եկավ. «Զվարճացնեմ նրան, վախեցնեմ»։ Եվ ապուշի պես գոռացի՝ «Քսակդ»։ Ներիր այդ գժությունը, պարզապես տրխմարություն էր, իսկ իմ հոգում... իմ հոգում էլ ինչպես հարկը է... Բայց դե գրողի ծո՜ցն այդ բոլորը, դու ասա՛ ինձ՝ ի՞նչ եղավ այնտեղ։ Ի՞նչ ասաց Կատյան։ Ճշմի՛ր ինձ, ջախջախի՛ր ինձ՝ մի՛ խնայիր։ Կատաղե՞ց, փրփրե՞ց։

— Ոչ, ուրիշ բան եղավ... Բոլորովին ուրիշ բան, Միտյա։ Այնտեղ... երկուսին էլ հիմա գտա այնտեղ։

— Ո՞ր երկուսին։

— Գրուշենկային՝ Կատերինա Իվանովնայի տանը։

Դմիտրին ապշած մնաց։

— Անկարելի՛ է,— գոռաց նա,— զառանցո՜ւմ ես։ Գրուշենկան նրա մո՞տ։

Ալյոշան պատմեց ամեն ինչ, որ տեղի էր ունեցել այն վայրկյանից, երբ ինքը մտել էր Կատերինա Իվանովնայի տունը։ Տասը բոպե պատմեց. չի կարելի ասել, թե սահուն ու հարթ էր նկարագրում, բայց կարծես հստակ պատկերացում տվեց, հիշելով ամենակարևոր խոսքերը, ամենակարևոր շարժումները և հաճախ մի վառ գծով էլ իր սեփական զգացումները հայտնելով։ Դմիտրին լուռ լսում էր, սոսկալիորեն անշարժ ու սևեռուն հայացքով, բայց Ալյոշայի համար պարզ էր, որ նա ամեն ինչ հասկացել է արդեն, ըմբռնել է կատարված փաստի ամբողջ իմաստը։ Սակայն, պատմության ընթացքի հետ, նրա դեմքը ոչ թե պարզապես մռայլվում էր, այլ կարծես սպառնալից էր դառնում։ Հոնքերը կիտեց, ատամները սեղմեց, անշարժ հայացքը կարծես ավելի անշարժացավ, ավելի սևեռուն, ավելի սարսափելի դարձավ... Ուստի առավել ևս մեծ եղավ անակնկալը, երբ նրա զայրալից ու կատաղի դեմքը միանգամից փոխվեց անհավատալի արագությամբ, բացվեցին սեղմված շրթունքները, և Դմիտրի Ֆյոդորովիչը հանկարծ քահ-քահ ծիծաղեց՝ ամենեն անզուսպ, ամենեն սրտագին խնդությամբ։ Անկուշտ քրքջում էր տառացիորեն, նույնիսկ երկար ժամանակ չէր կարողանում մի բառ ասել։

— Այնպես էլ չհամբուրե՞ց ձեռքը։ Այնպես էլ չհամբուրե՞ց ուրեմն, այնպես էլ փախա՜վ,— բացականչում էր նա շարունակ՝ մի տեսակ հիվանդագին հրճվանքով. կարելի էր նաև

ասել՝ լկտի հրճվանքով, եթե այնքան սրտաբուխ չլիներ այդ հրճվանքը։— Ուրեմն մյուսը գոռում էր՝ վա՜գր է։ Վա՜գր է, այո՜։ Ուրեմն կառափնարա՞ն պետք է տանել նրան, մտրակե՞լ։ Այո՜, այո՜, պետք է, պետք է, ես էլ եմ կարծում, որ պետք է, վաղուց պետք է։ Գիտե՞ս ինչ, եղբայր, թո՜ղ կառափնարան տանեն, բայց նախ և առաջ պետք է ազատվեմ այս ցավից։ Հասկանո՜ւմ եմ լկտիության թագուհուն, ինքն է ոտից գլուխ, իր ամբողջ էությունն է դուրս տվել այդ ձեռք համբուրելու հարցում, ա՜խ այդ դևի՜ ծնունդը։ Պատկերացրու աշխարհի բոլոր դիվային կանանց, այդ բոլորի թագուհի՜ն է նա։ Իր տեսակի մեջ մի սքանչելի՜ք։ Ուրեմն տո՞ւն վազեց։ Հիմա ես... ա՜խ... Դե՜հ, թռնում եմ մոտը։ Ալյոշկա, մի՜ մեղադրիր ինձ, համաձայն եմ ախր, որ խեղդելն էլ քիչ է նրան...

— Բայց Կատերինա Իվանովնա՜ն,— բացականչեց Ալյոշան տխրագին։

— Նրան էլ եմ հասկանում, նրա էլ ամբողջ էությունն եմ տեսնում, և այնպե՜ս եմ տեսնում, ինչպես երբե՜ք։ Մի ամբողջ հայտնագործություն է դա, միանգամից աշխարհի չորս, այսինքն հի՜նգ ցամաքամասերի գյուտը։ Ա՛յ քեզ հանդուգն քա՜յլ։ Ճիշտ այն Կատենկան է, այն դեռատի ուսանողուհին, որն իր հորը փրկելու վեհանձն գաղափարից մղված՝ չվախեցավ գալ ու կանգնել մի անկիրթ, կոպիտ սպայի առաջ, սիրտ արեց սարսափելի վիրավորանք կրել նրանից։ Բայց դե հա՜, մարդկային հպարտությո՜ւնը, վտանգը դիմագրավելու պահա՜նջը, այո՜, մարտահրավե՜ր ճակատագրի դեմ, չափ ու սահման չճանաչող մարտահրավերը։ Ասում ես, այդ մորաքույրն աշխատել է ե՞տ պահել նրան։ Գիտե՞ս, այդ մորաքույրն ինքը ինքնիշխան կին է, հարազատ քույրն է այն գեներալի այրու, որ ապրում է Մոսկվայում, և նրանից ավելի շատ էր քիթը ցցում, բայց ամուսինը բռնվեց պետական փողեր հափշտակելու մեջ, ամեն ինչից զրկվեց, կալվածից ու ամեն ինչից, և հպարտ կինը հանկարծ քիթն իջեցրեց, իսկ դրանից հետո է՛լ չկարողացավ մեջքն ուղղել։ Ուրեմն աշխատում էր զսպե՞լ Կատյային, իսկ Կատյան չլսե՞ց նրան։ Այսինքն թե՝ «Ամեն ինչ կարող եմ հաղթահարել, ամեն ինչ կարող եմ ենթարկել ինձ, եթե ուզեմ՝ Գրուշենկային էլ կկախարդեմ», և... հը՜... ինքն էլ ախր հավատացել է դրան, ինքն իր դեմ է աքլորացել, է՜հ, ո՞վ է մեղավոր։ Կարծում ես դիտմա՞մբ ինքն է առաջինը Գրուշենկայի ձեռքը համբուրել, խո-

րամանկ հաշի՞վ է ունեցել։ Ո՛չ, նա իրոք, իրո՛ք սիրահարվել է Գրուշենկային, այսինքն ոչ թե Գրուշենկային, այլ իր սեփական ցնորքին, իր զառանցանքին, որովհետև՝ դե տեսե՛ք, սա իմ ցնորքն է, իմ զառանցանքը։ Բայց Ալյոշա, սիրելիս, ինչպե՞ս կարողացար ազատվել նրանցից, այդպիսի՜ կանանցից։ Կապայիդ փեշերը հավաքեցիր ու փախա՞ր, ինչ է։ Հա՜-հա՜-հա՜։

— Եղբա՛յր, ինձ թվում է՝ դու ուշադրություն անգամ չդարձրիր, թե ինչ վիրավորանք ես հասցրել Կատերինա Իվանովնային, երբ Գրուշենկային պատմել ես այդ օրվա դեպքը։ Հիմա Գրուշենկան նրա երեսով տվեց, ասաց՝ «ինքներդ թաքուն գնացել եք կավալերների մոտ ձեր գեղեցկությունը ծախելու»։ Եղբա՛յր, կարելի՞ է ավելի մեծ վիրավորանք հասցրնել։

Ալյոշային ամենից ավելի տանջում էր այն միտքը, թե եղբայրը կարծես ուրախ է Կատերինա Իվանովնայի ստորացման համար, թեև չէր կարող անշուշտ այդպիսի բան լինել։

— Բահո՜,— սոսկալի խոժոռվեց հանկարծ Դմիտրի Ֆյոդորովիչը և ափով խփեց ճակատին։ Հիմա միայն ուշադրություն դարձրեց, թեև քիչ առաջ Ալյոշան ամեն ինչ պատմել էր միանգամից, հիշելով և՛ այդ վիրավորանքը, և՛ Կատերինա Իվանովնայի ճիչը՝ «Սրիկա՛ է ձեր եղբայրը»։— Այո, իսկապես, գուցե և պատմել եմ Գրուշենկային այդ «ճակատագրական օրվա» մասին, ինչպես ասում է Կատյան։ Այո, ճիշտ է, պատմել եմ, հիշում եմ հիմա։ Հենց այդ օրն էր, Մոկրոեում, հարբած էի, գնչուհիները երգում էին... Բայց հեկեկում էի, հեկեկում էի այն ժամանակ, ծնկաչոք աղոթում էի Կատյայի պատկերին, և Գրուշենկան հասկանում էր այդ։ Ամեն ինչ հասկացավ այդ ժամանակ, հիշում եմ, ինքն էլ լաց էր լինում... Է՜հ, գրո՛ղը տանի։ Կարո՞ղ էր այլ կերպ լինել հիմա։ Այդ օրը լաց էր լինում, իսկ հիմա... Հիմա «դաշույնը սրտին»։ Այդպես են կնիկները։

Նա հայացքը խոնարհեց ու մտածմունքի մեջ ընկավ։

— Այո՛, սրիկա եմ։ Կատարյա՛լ սրիկա,— ասաց նա հանկարծ մռայլ ձայնով։— Միևնույն է, լաց եմ եղել կամ ոչ՝ սրիկա՛ եմ, միևնույն է։ Ասա՛ այնտեղ, որ ընդունում եմ այդ հորջորջումը, եթե դա կարող է մխիթարել նրան։ Դե լա՛վ, բավական է, մնաս բարով։ Ի՞նչ օգուտ շատախոսելուց։ Ոչ մի ուրախ բան չկա։ Դու քո ճամփով գնա, ես էլ իմ ճամփով։ Եվ չեմ էլ

ուզում այլևս հանդիպել քեզ, քանի դեռ չի եկել ամենավերջին, օրհասական վայրկյանը։ Մնաս բարով, Ալեքսե՛յ։— Նա ամուր սեղմեց Ալյոշայի ձեռքը և, հայացքը դեռ խոնարհած, առանց գլուխը բարձրացնելու, կարծես պոկ եկավ տեղից և արագ քայլեց դեպի քաղաք։ Ալյոշան եղբոր ետևից նայեց, չհավատալով, որ նա կարող է այդպես հանկարծ թողնել ու գնալ։

— Սպասի՛ր, Ալեքսեյ, մի խոստովանություն ևս, միայն քե՛զ,— հանկարծ ետ դարձավ Դմիտրի Ֆյոդորովիչը։— Նայիր ինձ, ուշադիր նայիր։ Տեսնո՞ւմ ես, ահա այստե՛ղ, այստե՛ղ սոսկալի մի անպատվություն է պահված այստեղ։ («Ահա այստեղ» ասելով, Դմիտրի Ֆյոդորովիչը բռունցքով խփում էր իր կրծքին՝ այնպիսի տարօրինակ մի արտահայտությամբ, որ կարծես անպատվությունը հենց իր կրծքի վրա էր պահված, ինչ-որ մի տեղ, գուցե գրպանում, կամ էլ մի բանի մեջ կարված ու կախված էր վզից)։ Դու հիմա գիտես ինձ արդեն. սրիկա եմ, հայտնի՛ սրիկա։ Բայց իմացիր, ինչ էլ արած լինեմ անցյալում, ինչ էլ անեմ հիմա կամ առաջիկայում, ո՛չ մի բան, ո՛չ մի բան իր ստորությամբ չի կարող համեմատվել այն անպատվության հետ, որ հենց հիմա, հենց այս րոպեիս կրում եմ այս իմ կրծքի վրա՝ ահա այստե՛ղ, այստե՛ղ, մի անպատվություն, որ կատարվում է արդեն, այնինչ լրիվ ինձնից է կախված դադարեցնելը։ Կարող եմ դադարեցնել կամ կատարել, նկատի՛ ունեցիր։ Դե լավ, գիտցի՛ր ուրեմն, որ կատարելու եմ, չեմ դադարեցնելու։ Ամեն ինչ պատմեցի քեզ մի քանի ժամ առաջ, բայց այս մեկը չպատմեցի, որովհետև ե՛ս անգամ չկարողացա այդքան պնդերես լինել։ Կարող եմ դեռ կանգ առնել, և եթե կանգ առնեմ, կարող եմ վաղն ևեթ վերադարձնել իմ կորած պատվի մի ամբողջ կեսը։ Բայց կանգ չեմ առնի, կիրագործեմ իմ ստոր մտադրությունը, և դու այս րոպեից վկա եղիր, որ ես նախօրոք եմ ասում այս բանը, գիտակցորեն։ Կործանո՞ւմ ու խավա՞ր։ Կարիք չկա բացատրելու։ Երբ ժամանակը գա՝ կիմանաս։ Գարշահոտ գռիհն ու դիվային կի՞նը։ Մնաս բարով։ Մի՛ աղոթիր ինձ համար, արժանի չեմ, և պետք էլ չէ, բոլորովին պետք չէ... կարիք չունեմ, բնա՛վ։ Հեռո՛ւ ինձանից...

Եվ նա հանկարծ թողեց ու հեռացավ, այս անգամ արդեն վերջնականապես։ Ալյոշան դեպի վանք գնաց։ «Ինչպե՞ս թե, ինչպե՞ս թե երբեք չեմ տեսնելու նրան, ի՞նչ է ասում,— արտառոց թվաց այդ գաղափարն Ալյոշային,— հենց վաղն ևեթ

կտեսնեմ անպայման, կփնտրեմ, դիտմամբ կփնտրեմ ու կգտնեմ նրան, այդ ի՞նչ բան էր ասածը...»։

Նա շրջանցեց վանքը և սոճու պուրակի միջով ուղղակի մենաստան գնաց։ Դուռը բացեցին նրա առաջ, թեև այդ ժամին ոչ ոքի ներս չէին թողնում։ Նրա սիրտը դողում էր, երբ մտավ սրբահոր խուցը. «Ինչո՞ւ, ինչո՞ւ դուրս եկա, ինչո՞ւ նա ինձ ուղարկեց «աշխարհ»։ Այստեղ խաղաղություն է, սրբություն է այստեղ, իսկ այնտեղ՝ շփոթ, խավար, որի մեջ կարող ես իսկույն կորցնել ճանապարհդ ու մոլորվել...»։

Խուցում նորընծա Պորֆիրին կար և աբեղա հայր Պախսին, որ ժամը մեկ գալիս էր ամբողջ օրվա ընթացքում՝ հայր Զոսիմայի առողջության մասին տեղեկանալու։ Ալյոշան վախով իմացավ, որ սրբահոր վիճակն ավելի ու ավելի էր վատանում։ Նույնիսկ միաբանության հետ երեկոյան սովորական զրույցը չէր կարող տեղի ունենալ այս անգամ։ Սովորաբար ամեն երեկո, ժամերգությունից հետո, նախքան գիշերային քունը, վանական միաբանությունը հավաքվում էր սրբահոր խուցը, և ամեն մեկը բարձրաձայն խոստովանում էր նրան նույն օրվա իր մեղանչումները, մեղսալից ըղձանքներն ու մտքերը, գայթակղությունները, նույնիսկ վեճերն ու գժտությունները, եթե որևէ այդպիսի բան ունեցել էր։ Ոմանք ծնկաչոք էին խոստովանում։ Սրբահայրը թողություն էր տալիս, հաշտեցնում էր, խրատում, ապաշխարանքի ենթարկում, օրհնում էր և արձակում։ Ահա ճիշտ այս համախումբ «խոստովանանքների» դեմ էին ընդվզում սրբահայրության կարգի հակառակորդները, ասելով, որ դա խոստովանանքի խորհուրդի անարգումն է, համարյա սրբապղծություն, թեև բոլորովին այլ բնույթ ունեին այս զրույցները սրբահոր հետ։ Նույնիսկ թեմական առաջնորդին խնդիր էին ներկայացնում, թե այդպիսի խոստովանանքները ոչ միայն չեն հասնում բարի նպատակի, այլև իսկապես ու լայնորեն դուռ են բացում մեղքի ու գայթակղության առաջ։ Իբրև թե միաբաններից շատերը չեն ուզում սրբահոր մոտ գնալ, բայց գնում են ակամա, հետևելով մյուսներին, որպեսզի հպարտ ու խռովամիտ չնկատվեն։ Պատմում էին, թե միաբաններից ոմանք, երեկոյան խոստովանանքի գնալուց առաջ, նախօրոք պայմանավորվում են իրար հետ՝ «ես կասեմ, որ առավոտյան զայրացել եմ քո դեմ, իսկ դու հաստատիր»,— որպեսզի ասելու բան

ունենան և գլուխներն ազատեն պարզապես։ Ալյոշան գիտեր, որ երբեմն իրոք այդպես է պատահում։ Գիտեր նույնպես, թե միաբաններից ոմանց խիստ վրդովում էր այն սովորությունը, որի համաձայն վանականների ծնողներից եկած նամակներն անգամ նախ տանում էին սրբահորը, որպեսզի նա բանա ու ծանոթանա դրանց՝ հասցեատերերին հանձնելուց առաջ։ Անշուշտ ենթադրվում էր, որ այդ ամբողջը պետք է կատարվի ազատորեն ու ինքնաբուխ կերպով, ի խորոց սրտի, հանուն անկաշկանդ խոնարհության ու փրկարար խրատման, բայց պարզվում էր, որ իրականության մեջ երբեմն բացակայում է անկեղծությունը, շատ բան արվեստակյալ է ու կեղծ։ Սակայն ավագ ու ամենափորձառու միաբանները պնդում էին իրենց տեսակետը, պատճառաբանելով, թե «անձի նվիրաբերման ու հնազանդության այս սխրանքն անտարակույս փրկարար կլինի և մեծ օգուտ կբերի նրանց, ովքեր անկեղծորեն են փակվել այս պատերի մեջ՝ վասն հոգու փրկության։ Իսկ ով որ, ընդհակառակը, ճնշվում է և տանջվում, միևնույն է թե վանական չէ գոգցես և իզուր է վանք մտել. աշխարհիկ կյանքն է նրա տեղը։ Եվ ոչ միայն աշխարհիկ կյանքում, այլև տաճարում չես կարող ապահով լինել մեղքից ու սատանայից, ուստի և հարկ չկա նեղողամիտ լինել մեղքի նկատմամբ»։

— Տկարացավ, քնկոտություն եկավ վրան,— շշնջաց հայր Պախսին՝ օրհնելով Ալյոշային։— Զարթնեցնելն անգամ դժվար է։ Բայց և կարիք չկա զարթնեցնելու։ Մոտ հինգ րոպե արթուն էր քիչ առաջ, խնդրեց իր օրհնությունը հաղորդել միաբանության, իսկ իր համար գիշերային աղոթքներ հայցեց միաբաններից։ Մտադիր է կրկին հաղորդություն առնել առավոտյան։ Քեզ հիշեց, Ալեքսեյ, հարցրեց, թե գնացե՞լ ես դու։ Պատասխանեցինք, որ դու քաղաքում ես։ «Ա՛յդ առաքելության համար իմ օրհնությունը տվեցի նրան. այնտեղ է նրա տեղն առայժմ, ոչ թե այստեղ»,— ահա թե ինչ ասաց քո մասին։ Սիրով էր հիշում քեզ, հոգածությամբ. հասկանո՞ւմ ես, թե ինչ գնահատանքի ես արժանացել։ Բայց ինչպե՞ս է, որ քեզ համար սահմանել է աշխարհիկ կյանքում ապրել որոշ ժամանակ։ Նշանակում է՝ մի բան է նախատեսում քո ճակատագրում։ Հասկացիր, Ալեքսեյ, որ եթե վերադառնաս աշխարհիկ կյանքին, ապա ուրեմն քո սրբահոր հանձնարարած հորդորը կատարելու համար է, այլ ոչ

թե ունայն թեթևամտության և աշխարհիկ զվարճության համար...

Հայր Պահսին դուրս գնաց։ Ալյոշան տարակույս չուներ, որ վախճանվում է արդեն սրբահայրը, թեև մեկ կամ երկու օր էլ կարող էր ապրել տակավին։ Հակառակ այն խոստումին, որ Ալյոշան տվել էր իր հորը, Խոխլակովաներին, եղբորն ու Կատերինա Իվանովնային, նա հաստատապես ու սրտանց վճռեց՝ բնավ դուրս չգալ հաջորդ օրը վանքից և մինչև վերջին վայրկյանը մնալ իր սրբահոր մոտ։ Սիրտն սկսեց տոչորվել սիրով, և նա դառնորեն հանդիմանեց ինքն իրեն, որ կարողացել էր քաղաքում թեկուզ մի ակնթարթ մոռանալ նրան, ում թողել էր վանքում՝ մահվան անկողնի մեջ, և որին ամենից բարձր էր դասում աշխարհիս երեսին։ Մտավ սրբահոր նընջասենյակը, ծունկի եկավ և մինչև գետին խոնարհվեց սրբահոր առաջ։ Հանգիստ ու անշարժ քնած էր սրբահայրը, համաչափ ու գրեթե աննկատելի շնչելով։ Խաղաղ էր նրա դեմքը։

Վերադառնալով մյուս սենյակը, հենց այն սենյակը, ուր սրբահայրն առավոտյան ընդունել էր հյուրերին, Ալյոշան կոշիկները հանեց ու պառկեց կաշեպատ, կոշտ ու նեղ բազմոցի վրա, ուր վաղուց քնում էր ամեն գիշեր։ Միայն իր բարձն էր բերում ու դնում գլխի տակ, իսկ այն ներքնակը, որի մասին հայրը գոռացել էր առավոտյան, վաղուց մոռացել էր արդեն։ Հանում էր միայն կապան, որով ծածկվում էր վերմակի փոխարեն։ Բայց քնելուց առաջ ծնրադրում էր ու երկար աղոթում։ Այդ ջերմեռանդ աղոթքում աստծուց չէր խնդրում փարատել իր խռովքը, այլ լոկ ցնծագին խանդաղատանք էր տենչում, նախկին օրերի այն խանդաղատանքը, որ միշտ այցելում էր իր հոգուն՝ աստուծո ուղղված գովքից ու փառաբանությունից հետո, և սովորաբար իր գիշերային աղոթքի բովանդակությունն էլ աստուծո գովքն ու փառաբանությունն էր լինում։ Իրեն ալեելած այդ ցնծությունը թեթև ու խաղաղ քուն էր բերում նրան։ Եվ հիմա էլ աղոթում էր այդպես, երբ հանկարծ պատահաբար գրպանում շոշափեց այն փոքրիկ վարդագույն ծրարը, որ Կատերինա Իվանովնայի աղախինն էր տվել՝ հասնելով իր ետևից։ Խռովք զգաց, բայց ավարտեց աղոթքը։ Այնուհետև, փոքր-ինչ տատանվելուց հետո, ծրարը բացեց։ Մեջը մի նամակ կար իրեն ուղղված, և նամակն ստորագրել էր Lise-ը, տիկին Խոխլակո-

վայի այն դեռահաս դուստրը, որ այնպես ծիծաղել էր իր վրա առավոտյան՝ սրբահոր ներկայությամբ։

«Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— գրում էր նա,— բոլորից գաղտնի եմ գրում ձեզ, մամայից էլ գաղտնի, և գիտեմ, թե որքան վատ է դա։ Բայց ես չեմ կարող այլևս ապրել, եթե չասեմ ձեզ այն, ինչ ծնունդ է առել իմ սրտում, և մի որոշ ժամանակ ոչ ոք պետք չէ իմանա այս բանը, բացի մեր երկուսից։ Բայց ինչպե՞ս ասեմ ձեզ այն, ինչ այնպե՞ս ուզում եմ ասել ձեզ։ Ասում են, թուղթը չի կարմրում. հավատացնում եմ ձեզ, որ դա ճիշտ չէ, և որ թուղթն էլ կարմրում է ճիշտ այնպես, ինչպես հիմա ինքս եմ կարմրել ամբողջովին։ Սիրելի՜ Ալյոշա, սիրում եմ ձեզ, դեռ մանկության օրերից եմ սիրում, Մոսկվայի օրերից, երբ դուք բոլորովին այն չէիք, ինչ հիմա եք, և սիրում եմ ցկյանս։ Իմ սրտով եմ ընտրել ձեզ, որպեսզի միանանք իրար և ծերության օրերին միասին վերջացնենք մեր կյանքը։ Անշուշտ այն պայմանով, որ դուրս եք գալու վանքից։ Իսկ ինչ վերաբերում է մեր տարիքին, կսպասենք այնքան, որքան պահանջում է օրենքը։ Մինչ այդ ես պիտի անպայման առողջանամ, պիտի քայլեմ ու պարեմ։ Այդ մասին խոսք չի կարող լինել։

Տեսնո՞ւմ եք, ինչպես եմ կշռադատել ամեն ինչ, միայն մի բան չեմ կարողանում պատկերացնել. ի՞նչ եք մտածելու իմ մասին, երբ կարդաք։ Ես միշտ ծիծաղում եմ ու չարաճճիություն անում, այս առավոտ բարկացրի ձեզ, բայց հավատացնում եմ, որ հիմա, գրիչը ձեռքս առնելուց առաջ, աղոթեցի աստվածածնի պատկերի առաջ ու այս րոպեիս էլ աղոթում եմ և համարյա լաց լինում։

Իմ գաղտնիքը ձեր ձեռքումն է հիմա։ Չգիտեմ, թե ինչպես եմ նայելու ձեզ վաղը, եթե գաք։ Ա՜խ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, եթե նորի՞ց չկարողանամ զսպել ինձ հիմարի պես և նորից ծիծաղե՞մ ձեզ նայելով, ինչպես այս առավոտ։ Չէ՞ որ ինձ կհամարեք մի զզվելի աղջիկ, որ ծաղրում է ձեզ, և չեք հավատա իմ նամակին։ Ուրեմն խնդրում եմ ձեզ, սիրելիս, եթե որևէ չափով կարեկցում եք ինձ, վաղը, ներս մտնելիս, շատ ուղղակի մի՛ նայեք իմ աչքերի մեջ, որովհետև ես, հանդիպելով ձեր աչքերին, գուցե անպայման ծիծաղեմ հանկարծ, մանավանդ որ այդ երկար հագուստով եք լինելու... Նույնիսկ հիմա, երբ մտածում եմ այդ մասին, սարսուռ է անցնում ամ-

բողջ մարմնովս, ուստի երբ գաք վաղը, մի որոշ ժամանակ բնավ մի՛ նայեք ինձ, այլ նայեցեք մամային կամ լուսամուտին...

Ահա սիրային նամակ գրեցի ձեզ, աստվա՜ծ իմ, ի՜նչ արեցի։ Ալյոշա, մի՛ աբհամարհեք ինձ, և եթե շատ վատ բան արեցի ու վշտացրի ձեզ, ներեցեք ինձ։ Ձեր ձեռքումն է հիմա իմ լավ կամ վատ անվան, գուցե ընդմիշտ փչացած իմ անվան գաղտնիքը։

Այսօր անպայման լաց եմ լինելու։ Ցտեսություն՝ մինչև մեր սարսափելի տեսակցությունը։ Lise։

P. S. Ալյոշա, միայն թե անպայման, անպայման, անպայմա՛ն եկեք։ Lise»։

Ալյոշան զարմանքով կարդաց, կարդաց երկու անգամ, մտածեց և հանկարծ մեղմ, քաղցր ծիծաղեց։ Ու ցնցվեց մեկենն, այդ ծիծաղը մեղսալի թվաց նրան։ Բայց հաջորդ վայրկյանին զարձյալ ծիծաղեց նույնքան մեղմ ու նույնքան երջանիկ։ Նամակը դանդաղորեն դրեց փոքրիկ ծրարի մեջ, խաչակնքեց երեսը և պառկեց։ Հոգու խռովքն անցավ հանկարծ։ «Տե՛ր, ողորմյա՛ բոլորին, որ տեսա այսօր, պահպանիր նրանց՝ դժբախտ ու փոթորկահույզ հոգիներին, և առաջնորդիր նրանց։ Քոնն են ուղիները բոլոր։ Եվ փրկիր նրանց քո ընտրած ուղիներով։ Դո՛ւ ես սերը, դու ուրախություն ես կուղարկես բոլորին»,— մրմնջում էր Ալյոշան խաչակնքելով ու սուզվում էր անվրդով քնի մեջ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Գիրք չորրորդ

ՋԼԱՏՈՒՄՆԵՐ

I

ՀԱՅՐ ՖԵՐԱՊՈՆՏ

Ալյոշային արթնացրին առավոտ կանուխ, դեռ լուսաբացից առաջ։ Սրբահայրը զարթնել էր և շատ տկար էր զգում իրեն, թեև ուզեց վեր կենալ անկողնից ու նստել բազկաթոռին։ Գիտակցությունը լրիվ տեղն էր, դեմքը շատ հոգնած էր թեպետ, բայց պայծառ էր, գրեթե ուրախ, իսկ հայացքը զվարթ էր, բարեհամբույր, սիրակոչ։ «Գուցե և չտեսնեմ այս նոր ծագող օրվա երեկոն»,— ասաց նա Ալյոշային։ Ապա ցանկացավ իր խոստովանանքը կատարել ու հաղորդություն ընդունել անմիջապես։ Նրա խոստովանահայրը միշտ հայր Պաիսին էր եղել։ Երբ կատարվեցին խոստովանանքի և հաղորդության սուրբ խորհուրդները, վերջին օծման արարողությունն սկսվեց։ Հավաքվեցին աբեղաները, խուցն աստիճանաբար լցվեց մենաստանի ճգնավորներով։ Մինչ այդ՝ լույսը բացվեց։ Վանքից էլ սկսեցին միաբաններ դալ։ Երբ արարողությունը վերջացավ, սրբահայրն ուզեց բոլորին հրաժեշտ տալ և սկսեց համբուրել յուրաքանչյուրին։ Խուցի նեղ լինելու պատճառով, ավելի շուտ մտած մարդիկ դուրս էին գալիս և տեղը զիջում մյուսներին։ Ալյոշան կանգնել էր սրբահոր մոտ, որ կրկին նստել էր բազկաթոռին։ Որքան կարող էր՝ խոսում էր սրբահայրը և ուսուցանում. ձայնը թեև թույլ, բայց դեռ կորովի էր բավական։ «Այնքա՜ն երկար տարիներ ուսուցանել եմ ձեզ, ուստի և այնքա՜ն երկար տարիներ բարձրաձայն եմ խոսել,

որ կարծես սովորություն եմ դարձրել խոսելը, իսկ խոսելով՝ նաև ուսուցանելը, և այն աստիճան, որ լուռ մնալն ինձ համար ավելի դժվար կլիներ, քան խոսելը հիմա, նույնիսկ այս իմ տկար վիճակում, հայրեր ու եղբայրներ իմ սիրեցյալ»,— կատակեց նա, խանդաղատալից նայելով իր շուրջը հավաքվածներին։ Ալյոշան հետագայում բան ինչ հիշեց այն խոսքերից, որ սրբահայրն ասաց այդ պահին։ Թեև նա պարզորոշ էր խոսում ու բավական կորովի ձայնով, բայց նրա զրույցն զգալիորեն անկապ էր։ Շատ բաների մասին խոսեց, կարծես ուզում էր ամեն ինչ ասել, ուզում էր մոտալուտ մահից առաջ կրկնել այն բոլորը, որ չէր կարողացել լրիվ արտահայտել իր կյանքում, և ոչ թե միայն ուսուցանելու սիրույն, այլ կարծես տենչալով բաժանել իր բերկրանքն ու ցնծությունը բոլոր մարդկանց և արար աշխարհի հետ, կյանքում մի անգամ ևս զեղել իր սիրտը...

«Սիրեցե՛ք զմիմյանս, հայրե՛ր,— ուսուցանում էր սրբահայրը (որքան որ հիշեց հետագայում Ալյոշան)։— Սիրեցեք աստուծո ժողովրդին։ Մենք աշխարհականներից ավելի սուրբ չենք վասն այնորիկ, որ եկել ենք այստեղ ու փակվել սույն պատերի մեջ, այլ ընդհակառակն, այստեղ եկող ամեն ոք իր գալու փաստովն իսկ խոստովանել է ինքն իրեն, որ ինքը վատթար է բոլոր աշխարհականներից ու երկրի վրա գոյություն ունեցող ամեն ինչից... Եվ վանականը որքան ավելի երկար ապրի իր պատերի մեջ մեկուսացած, այնքան ավելի սուր կերպով պետք է գիտակցի այս իրողությունը։ Քանզի այլապես նա պատճառ չէր ունենա այստեղ գալու։ Իսկ երբ գիտակցի, թե ինքը ոչ միայն վատթար է քան բոլոր աշխարհականները, այլև բոլոր մարդկանց առաջ մեղավոր է բոլորի և ամեն ինչի համար, մարդկային բոլոր մեղքերի համար, լինեն դրանք համայնական թե անձնական, ահա լոկ հայնժամ կհասնենք վանական միաբանության նպատակին։ Քանզի գիտցե՛ք, սիրեցյալներ իմ, որ մեզնից ամեն ոք, անտարակույս, մեղավոր է այս երկրի վրա բոլորի և ամեն ինչի համար, ոչ միայն աշխարհի համայնական մեղքի հետևանքով, այլև ամեն ոք անձնապես մեղավոր է ամբողջ մարդկության և յուրաքանչյուր մարդու համար։ Սույն գիտակցությունը պսակն է վանական կյանքի և առհասարակ ամեն մի մարդկային կյանքի՝ այս երկրի վրա։ Քանզի վանականները տարբեր մարդիկ չեն, այլ լոկ այնպիսի մարդիկ, ինչպիսիք պետք է բոլորը լինեին աշխարհում։ Այդպիսով է միայն, որ մեր սիրտը կլեցվեր անհուն,

տիեզերական, անհագ սիրո խանդաղատանքով։ Հայնժամ ձեզնից յուրաքանչյուրն ի զորու կլիներ ամբողջ աշխարհը վաստակելու սիրո շնորհիվ և աշխարհի մեղքերը լվանալու իր արցունքներով... Յուրաքանչյուրդ թող աչալուրջ հսկի իր սրտի վրա, յուրաքանչյուրդ թող անդադար խոստովանի ինքն իրեն։ Մի՛ երկնչիք ձեր սեփական մեղքից, եթե նույնիսկ գիտակցեք այն, միայն թե զղջումն անպակաս լինի, բայց աստուծո առաջ պայման մի՛ դնեք։ Դարձյալ ասում եմ՝ մի՛ հպարտանաք։ Մի՛ հպարտանաք փոքրերի առաջ, մի՛ հպարտանաք և մեծերի առաջ։ Մի՛ ատեք նաև ձեզ մերժողներին, ձեզ անարգողներին, ձեզ նախատողներին ու զրպարտողներին։ Մի՛ ատեք՝ անաստվածներին, չարուսույցներին, նյութապաշտներին. բազում են բարի մարդիկ նրանց մեջ, մեր օրերում նամանավանդ, և ոչ միայն բարիներին, այլև չարերին մի՛ ատեք։ Ձեր աղոթքի մեջ հիշատակեցեք նրանց այսպես. փրկիր, ո՜վ տեր, բոլոր նրանց, ովքեր աղոթող չունեն իրենց համար, փրկիր և նրանց, ովքեր չեն ուզում աղոթել քեզ։ Եվ ավելացրեք իսկույնևեթ. ոչ հպարտությամբ եմ աղերսում բանն այս, ո՜վ տեր, զի ես անձամբ իսկ քստմնելի եմ առավել քան բոլորն ու ամենայն ինչ... Սիրեցեք աստուծո ժողովրդին, մի՛ թողնեք, որ եկվոր մարդիկ խլեն հոտը ձեզնից, զի եթե նիրհեք ձեր ծուլությամբ, ձեր խորշող հպարտությամբ ու նամանավանդ շահատենչությամբ, ապա կգան բոլոր կողմերից ու կխլեն ձեր հոտը ձեզնից։ Անդադար մեկնաբանեցեք ավետարանը ժողովրդին... Մի՛ գոփեք վաշխառությամբ ու կաշառակերությամբ... Մի՛ սիրեք ոսկի և արծաթ, մի՛ պահեք դրանք ձեզ մոտ... Հավատք ունեցեք ու հավատարիմ եղեք դրոշին։ Բարձր պահեցեք դրոշը ձեր...»։

Սակայն սրբահայրը խոսում էր ավելի անկապակից, քան շարադրված է այստեղ ըստ Ալյոշայի հետագա գրառման։ Երբեմն նա բոլորովին ընդհատում էր իր խոսքը, կարծես ուժերն էր հավաքում, հևում էր շնչասպառ, բայց մի տեսակ ցնծության մեջ էր։ Հուզմունքով էին լսում նրան, թեև շատերը զարմանում էին նրա խոսքերի վրա և մութ իմաստ էին տեսնում դրանց մեջ... Հետագայում բոլորը հիշեցին այդ խոսքերը։ Երբ պետք եղավ, որ Ալյոշան մի բոպեով դուրս գա խուցից, նա ապշեց՝ տեսնելով խուցի ներսն ու դուրսը ժողովված միաբանների ընդհանուր հուզմունքն ու սպասողական վիճակը։ Ոմանք գրեթե տագնապով էին սպասում, իսկ ուրիշները՝ հանդիսավոր բա-

բեպաշտությամբ։ Բոլորն էլ ակնկալում էին, որ անմիջական ու մեծ մի բան է կատարվելու սրբահոր ննջումից հետո։ Այդ ակնկալությունը համարյա թեթևամիտ բան էր մի տեսակետից, բայց նույնիսկ ամենախստաբարո վանականները ենթարկվում էին դրա ազդեցության։ Ամենից ավելի խիստ էր աբեղա հայր Պախսիի դեմքը։

Ալյոշան խուցից դուրս եկավ լոկ այն պատճառով, որ Ռակիտինը խորհրդավոր կերպով կանչել էր իրեն մի վանականի միջոցով։ Քաղաքից էր եկել Ռակիտինը և տարօրինակ մի նամակ էր բերել տիկին Խոխլակովայից։ Տիկինը մի հետաքրքրական ու ճիշտ ժամանակին հասնող լուր էր հաղորդում Ալյոշային։ Խնդիրն այն էր, որ նախորդ օրը, սրբահոր աջն համբուրելու և նրա օրհնությունն ստանալու համար եկած ռամիկ ու հավատացյալ կանանց մեջ քաղաքաբնակ մի պառավ կար՝ ենթասպայի այրի Պրոխորովան։ Նա հարցրել էր սրբահորը, թե կարո՞ղ է արդյոք եկեղեցում հոգեհանգիստ կարդալ տալ իր որդու համար, որպես հանգուցյալի, քանի որ իր Վասենկան ծառայության համար գնացել էր Սիբիրի հեռավոր մի անկյունը՝ Իրկուտսկ, և արդեն մի տարի է, ինչ ոչ մի լուր չկար նրանից։ Եվ սրբահայրը խստությամբ էր պատասխանել նրան առ այդ, արգելելով և կախարդության նման մի բան նկատելով այդպիսի հոգեհանգիստը։ Բայց այնուհետև, անգիտության համար ներելով նրան, ավելացրել էր, «կարծես ապագայի մատյանը կարդալով» (ինչպես արտահայտվում էր տիկին Խոխլակովան իր նամակում), նաև այն մխիթարությունը, «թե նրա որդին, Վասյան, ողջ է անտարակույս, և թե շուտով գալու է անձամբ կամ էլ նամակ է ուղարկելու, ուստի մայրը թող գնա տուն և սպասի նրան։ Եվ ի՞նչ եք կարծում,— ավելացնում էր տիկին Խոխլակովան ոգևորությամբ,— մինչև իսկ տառացիորեն կատարվեց մարգարեությունը և նույնիսկ ավելին»։ Հազիվ էր պառավը տուն վերադարձել, երբ իսկույն նրան հանձնեցին Սիբիրից եկած նամակը, որ արդեն ստացվել էր մինչև նրա գալը։ Բայց դեռ ավելին. նամակում, որ գրված էր ճանապարհից՝ Եկատերինբուրգից, Վասյան տեղեկացնում էր մորը, թե ինքն անձամբ գալիս է Ռուսաստան, վերադառնում է մի աստիճանավոր պաշտոնյայի հետ, և թե նամակն ստացվելուց երեք շաբաթ հետո «հույս ունի գրկելու իր մորը»։ Տիկին Խոխլակովան ջերմորեն ու թախանձագին աղերսում էր, որ Ալյոշան անմիջապես վանահորն

ու ամբողջ միաբանությանը հայտնի այս նոր կատարված «կանխատեսման հրաշքը»։ Վերջացնելով իր նամակը, նա բացականչում էր. «Սա պետք է հայտնի դառնա բոլորին, բոլորի՞ն»։ Նամակը գրված էր արագ, հապճեպ, գրողի հուզմունքը երևում էր ամեն մի տողում։ Բայց Ալյոշան պետք չուներ այլևս որևէ բան հայտնելու, որովհետև միաբաններն արդեն ամեն ինչ գիտեին։ Ռակիտինն իր ուղարկած վանականին հանձնարարել էր նաև «ամենայն պատկառանոք հաղորդել նորին գերաշնորհություն հայր Պախսիին, որ ինքը՝ Ռակիտինը մի որոշ գործ ունի նրա հետ առնչված, բայց այնքան կարևոր մի գործ, որ չի համարձակվի մի բոպե անգամ հետաձգել դրա կատարումը, իսկ իր հանդգնության համար ծնրադիր խնդրում է ներել իրեն»։ Վանականը հայր Պախսիին ավելի շուտ էր հայտնել Ռակիտինի խնդրանքը, քան Ալյոշային, ուստի Ալյոշան, դուրս գալով ու կարդալով նամակը, տեսավ, որ իրեն մնում էր անմիջապես հայր Պախսիին ներկայացնել այդ գրությունն իբրև սոսկ փաստաթուղթ։ Եվ ահա նույնիսկ այդ խստաբարո և դժվարահավատ մարդը, «հրաշքի» լուրը խոժոռադեմ կարդալուց հետո, չկարողացավ լիովին զսպել իր ներքին ինչ-որ զգացմունքը։ Աչքերը փայլեցին, ծանրախոհ ու խորիմաստ մի ժպիտ երևաց հանկարծ շրթունքներին։

— Մեծամեծ ևս բաներ պիտի տեսնենք, քան այս,— գոչեց նա կարծես ակամա։

— Մեծամե՞ծ ևս բաներ, մեծամե՞ծ բաներ պիտի տեսնենք,— կրկնեցին վանականները չորս կողմից, բայց հայր Պախսին, նորից հոնքերը կիտելով, խնդրեց բոլորին, որ գոնե մի որոշ ժամանակ ոչ ոքի չհայտնեն լուրը, «մինչև որ ավելի ևս հաստատվի, որովհետև շատ է աշխարհիկ մարգկանց թեթևամտությունը, և բացի այդ՝ տույն դեպքը կարող է բնական ձևով պատահած լինել»,— ավելացրեց նա զգուշությամբ, կարծես իր խիղճը հանգստացնելու համար, բայց ինքն էլ համարյա չհավատալով իր վերապահությանը, մի բան, որ նրա ունկնդիրները ևս շատ պարզ նկատեցին։ Անշուշտ նույն ժամին «հրաշքը» հայտնի դարձավ ամբողջ միաբանությանը և նույնիսկ այն բազմաթիվ աշխարհականներին, որոնք ժամերգության էին եկել։ Բայց կատարված հրաշքը կարծես թե ամենից ավելի ապշեցրել էր այն վանականին, որ գեռ երեկ ժամանել էր հեռավոր հյուսիսի «սուրբ Սբելվեստրից», Օրգորսկի մի փոքր վանքից։ Երեկ նա, տիկին Խոխլակովայի կոչքին կանգնած, ողջույն էր տվել սրբա-

հորը և, մատնացույց անելով այդ տիկնոջ «բուժված» աղջկան, հարցրել էր ազգու և հանդիսավոր շեշտով. «Ինչպե՞ս եք հանդգնում այսպիսի գործեր անել»։

Խնդիրն այն է, որ եկվոր վանականն այժմ որոշ տարակուսանքի մեջ էր ընկել ու համարյա չգիտեր, թե ո՞ր մեկին հավատա։ Երեկ իրիկուն այցելել էր վանքի միաբան հայր Ֆերապոնտին, որի առանձին խուցը գտնվում էր փեթականոցի մյուս կողմը, և այդ տեսակցությունն արտակարգ, զարհուրելի տպավորություն էր գործել ու շշմեցրել էր նրան։ Հայր Ֆերապոնտը հենց այն զառամյալ վանականն էր, այն մոլեռանդ ծոմապահն ու լռակյացը, որին արդեն հիշել ենք որպես սրբահայր Զոսիմայի հակառակորդի։ Նա գլխավորաբար դեմ էր բուն սրբահայրության կարգին, որ վնասակար ու թեթևամիտ նորամուծություն էր համարում։ Չափազանց վտանգավոր հակառակորդ էր նա, չնայած որ, լռակյաց լինելով, գրեթե ոչ մի բառ չէր փոխանակում որևէ մեկի հետ։ Իսկ նա վտանգավոր էր հատկապես այն պատճառով, որ բազմաթիվ միաբաններ լիովին համակրում էին նրան, այցելող աշխարհականներից էլ շատ-շատերը նրան պատվում էին որպես մեծ արդարակյացի ու ճգնավորի, թեև տեսնում էին անտարակույս, որ նա կրոնախև է։ Բայց հենց այդ խևությունն էր նրա հմայքը։ Այս հայր Ֆերապոնտը երբեք չէր գնում սրբահայր Զոսիմայի մոտ, թեև մենաստանում էր ապրում, բայց շատ էլ չէին անհանգստացնում նրան մենաստանի ներքին կանոնադրությամբ, և դարձյալ այն պատճառով, որ նա ուղղակի խևի պես էր պահում իրեն։ Յոթանասունհինգ տարեկան էր, եթե ոչ ավելի, և ապրում էր մենաստանի փեթականոցից այն կողմ, պատի անկյան մոտ, փայտե հին, գրեթե փուլ եկած մի խուցի մեջ, որ շինված էր շատ տարիներ առաջ, դեռ անցյալ դարում, նույնպես մի մեծ ծոմապահ ու լռակյաց ճգնավորի՝ հայր Իոնայի համար, որ հարյուր հինգ տարի էր ապրել և որի սրբագործությունների մասին մինչև օրս էլ բազմաթիվ հետաքրքրական պատմություններ էին շրջում վանքում ու մոտակա շենքերում։ Հայր Ֆերապոնտը յոթ տարի առաջ հասել էր իր նպատակին՝ վերջապես իրեն էլ տեղավորել էին այդ նույն մենավոր խուցի մեջ։ Դա մի խրճիթ էր պարզապես, բայց շատ նման էր մատուռի, որովհետև չափազանց շատ սրբապատկերներ կային այնտեղ. հավատացյալների ընծայաբերած այդ սրբապատկերների առջև օր ու գիշեր վառվում էին նույնպես ընծայաբերված կանթեղները, և հայր Ֆերապոնտը մի տեսակ հսկիչ ու լուսարար էր կարգված դրանց վրա։ Ասում էին (և դա ճշմարիտ էր), որ նա ընդամենը երկու ֆունտ հաց էր ուտում երեք օրվա ընթացքում, ոչ ավելի. երեք օրը մեկ՝ այդ հացը բերում էր մեղվապանը, որ հենց փեթականոցում էր ապրում, բայց իրեն սպասարկող այդ մեղվապանին անգամ հայր Ֆերապոնտը հազվադեպ էր մի որևէ խոսք ասում։ Նրա շաբաթական ամբողջ սնունդը այդ չորս ֆունտ հացն էր՝ կիրակնօրյա նշխարի հետ միասին, որ վանահայրը պատարագից հետո ճշտապահորեն ուղարկում էր աստուծո երանելուն։ Իսկ ամեն օր թարմ ջուր էին լցնում նրա գավաթի մեջ։ Նա հազվադեպ էր երևում պատարագին։ Այցելության եկող երկրպագուները տեսնում էին, թե ինչպես նա երբեմն ամբողջ օրն աղոթում էր ծնրադիր, առանց վերկենալու և առանց շուրջը նայելու։ Իսկ եթե երբևիցե պատասխաններ այցելուներին, ապա խոսում էր կարճ ու կտրուկ, տարօրինակ ու գրեթե միշտ կոպիտ։ Շատ հազվադեպորեն, սակայն, ինքն էլ մի խոսք էր ուղղում եկողներին, բայց մեծ մասամբ տարօրինակ մի բան էր ասում միայն՝ կատարյալ մի առեղծված իր խոսակցի համար, իսկ հետո, որքան էլ խնդրեին, լուռ էր մնում ու ոչ մի բացատրություն չէր տալիս։ Քահանայական կարգ չուներ, հասարակ վանական էր պարզապես։ Շատ տարօրինակ մի լուր էր շրջում,— ամենատգետ մարդիկ էին սակայն այդ լուրը տարածողները,— թե հայր Ֆերապոնտը հաղորդակցության մեջ է երկնային ոգիների հետ, միայն նրանց հետ է զրուցում, և ահա այդ պատճառով է, որ լուռ է մնում մարդկանց մոտ։

Օրդորսկցի վանականը փեթականոց մտավ մեղվապանի՝ նույնպես լռակյաց ու մռայլ այդ վանականի առաջնորդությամբ, հետո գնաց այն անկյունը, ուր գտնվում էր հայր Ֆերապոնտի խուցը։ «Գուցե խոսի քեզ հետ՝ որպես եկվորի, բայց գուցե և ոչինչ չիմանաս նրանից»,— նախազգուշացրեց մեղվապանը։ Վանականը, ինչպես ինքն էր պատմում հետո, մեծագույն ահով մոտեցավ ճգնավորին։ Ուշ իրիկուն էր արդեն։ Հայր Ֆերապոնտն այդ պահին նստած էր խուցի դռանը՝ ցածլիկ աթոռակի վրա։ Մի հին ու հսկա կնձնի մեղմ սոսափում էր վերևում։ Օդը զովանում էր երեկոյան թարմությամբ։ Օրդորսկցի վանականը երեսնիվայր ընկավ երանելու առաջ և նրա օրհնությունը խնդրեց։

— Ուզում ես, որ ե՞ս էլ երկիր պագանեմ առաջի քո, վանակա՛ն,— ասաց հայր Ֆերապոնտը։— Վե՛ր կաց։

Վանականը վեր կացավ։

— Օրհնելով՝ օրհնյալ լեր։ Նստի՛ր մոտն իմ։ Ո՞ր կողմերից ես հասել այստեղ։

Խեղճ վանականին ամենից ավելի զարմանք պատճառեց այն, որ հայր Ֆերապոնտը, հակառակ իր անտարակուսելիորեն խրոտագույն ծոմապահության և այնքան զառամյալ տարիքին, արտաքուստ դեռ առույգ, բարձրահասակ մի ծերունի էր, որ ուղիղ էր պահում մարմինը, չէր կռանում երբեք, ու թարմ էր դեմքը՝ թեև նիհար, բայց առողջ։ Անտարակուսելի էր նաև, որ զգալի ուժի տեր է տակավին։ Ըմբիշի կազմվածք ուներ։ Չնայած այնքան մեծ տարիքին, նույնիսկ լրիվ չէր սպիտակել, դեռ շատ խիտ էին մազերն ու մորուքը, որոնք կատարելապես սև էին եղել մի ժամանակ։ Աչքերը մոխրագույն էին, խոշոր, փայլուն, սակայն արտակարգորեն չոված, մի բան, որ նույնիսկ շշեմցնող տպավորություն էր գործում։ Խոսում էր գավառական կոպիտ շեշտադրությամբ։ Հագել էր գյուղական երկար ու կարմրավուն վերնազգեստ՝ այն կոշտ մահուդից, որ առաջ կալանավորական էր կոչվում, իսկ մեջքին մի հաստ պարան էր կապել։ Վիզն ու կուրծքը մերկ էին։ Վերնազգեստի տակ երևում էր չափազանց հաստ կտավից կարված շապիկը, որ ամիսներով մնում էր նրա վրա և համարյա սևացել էր կեղտից։ Ասում էին, թե նա երեսուն ֆունտ կշռող շղթաներ է կրում մարմնին՝ վերնազգեստի տակ։ Իսկ մերկ ոտքերին հնամաշ, գրեթե լիովին քայքայված հողաթափեր կային։

— Օբդորսկի փոքր վանքից, սուրբ Սիլվեստրից,— խոնարհաբար պատասխանեց եկվոր վանականը, իր փոքրիկ, արագաշարժ, հետաքրքրասեր, թեև մի քիչ վախեցած աչքերով դիտելով ճգնավորին։

— Եղել եմ քո Սիլվեստրի մոտ։ Ապրել եմ այնտեղ։ Ողջառո՞ղջ է այդ քո Սիլվեստրը։

Վանականը տատամսելով կմկմաց։

— Անհասկացո՛ղ մարդիկ եք դուք։ Ո՞րպես եք պաս պահում։

— Մեր կերակրոց ցանկը կազմված է ըստ վանական հին կարգի, այսպես. քառասնորդաց պահոց երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը սեղան չեն դնում։ Երեքշաբթի և հինգշաբթի՝ սպիտակ հաց, մեղրով բուսաջուր, ճախնամորի կամ աղած կաղամբ ու մանրաձավար լափա։ Շաբաթ օրը՝ սպիտակ կաղամբապուր, սիսեռով արիշտա, մրգահյութով շիլա, բոլորը յուղով։ Ի շաբաթու մեկ անգամ՝ չոր ձուկ և շիլա, կաղամբապուրի հետ։ Իսկ հավագ շաբաթու երկուշաբաթի առավոտուց մինչ ի կիրակմուտ, վեց օր, ոչինչ եփեն, և ուտեմք միայն հաց և ըմպեմք ջուր, և այս ևս ժույժ ունելով. ըստ կարելվույն՝ ոչ ամենայն օր առնուլ զսոսա, այլ որպես և ասացյալ է՝ վասն առաջնույն շաբաթու քառասնորդաց պահոց։ Իսկ հավուրն ավագ ուրբաթու ոչինչ ուտեմք ամենևին, որպես և հավուրն ավագ շաբաթու պարտ եմք ծոմ պահել մինչ հերրորդ ժամու, և հայնժամ ճաշակեմք սակավ ինչ հաց և ըմպեմք ջուր, և բաժակ մի գինի։ Իսկ հավուրն ավագ հինգշաբաթի ուտեմք զկերակուրս եփյալս, առանց յուղո, և ոչ իսկ եփյալս և ըմպեմք գինի։ Քանզի ժողովն Լավոդիկյան այս կերպ ասե վասն ավուր ավագ հինգշաբաթի. «Չէ արժան ի քառասներորդն յաւագ շաբաթուն հինգշաբաթի օր բերան լուծանել, զի մի՛ ամենայն պահք քառասներորդացն անարգեսցին»։ Ահա այսպես ենք պաս պահում։ Բայց ի՞նչ է որ այս՝ ձեզ հետ համեմատած, հա՛յր մեծագործ,— ավելացրեց վանականը սրտապնդված,— քանզի դուք ամբողջ տարին, նույնիսկ սուրբ զատկին, ոնվում եք լոկ հացով ու ջրով, և մեր երկու օրվա հացը ձեզ բավարարում է մի ամբողջ շաբաթ։ Հրաշալի է արդարև այսպիսի մեծ ժուժկալությունը ձեր։

— Իսկ պղպեղասո՞ւնկ,— հարցրեց հանկարծ հայր Ֆերապոնտը, «ղ» տառն արտասանելով «խ»-ի նման։

— Պղպեղասո՞ւնկ,— կրկնեց զարմացած վանականը։

— Այո, իսկ և իսկ։ Ես կարող եմ հրաժարվել նրանց հացից, որ ինձ չէ պիտո ամենևին, կարող եմ գնալ թեկուզ անտառ, և այնտեղ պղպեղասունկով կապրեմ և կամ հատապտղով։ Իսկ նրանք չեն հրաժարվի իրենց հացից, արդ ուրեմն սատանային են կապյալ։ Անօրեններն այժմ բարբառում են, թե հարկ չէ այսքան ծոմ պահել։ Գոռոզական ու պիղծ է սույն դատողությունը նոցա։

— Օ՜հ, ճշմարիտ է,— հառաչեց վանականը։

— Իսկ նրանց մոտ սատանաներ տեսա՞ր,— հարցրեց հայր Ֆերապոնտը։

— Նրանց... այսինքն ո՞ւմ մոտ,— ուզեց իմանալ վանականը վախվխելով։

— Անցյալ տարի հիսնականաց պահքին բարձրացա վա-

նահոր մոտ, և այդ օրից չեմ գնացել այլևս։ Տեսա, մեկի կրծքին էր նստել սատանան, պահվում էր սքեմի տակ, միայն եղջյուրներն էին դուրս ցցված։ Մի ուրիշի գրպանից էր դուրս նայում, աչքերն արագ-արագ շարժում էր, ինձնի՞ց էր վախենում։ Մի ուրիշի փորն էր մտել, տեղավորվել էր ամենապիղծ որովայնի մեջ, իսկ մեկի էլ վզից էր կախվել ուղղակի, փաթաթվել էր, և այդպես էլ մարդը կրում էր սատանային, բայց չէր տեսնում նրան։

— Դուք... տեսնո՞ւմ եք,— հարցրեց վանականը։

— Ասացի քեզ՝ տեսնում եմ, ուղն ու ծուծը տեսնում։ Երբ վանահոր մոտից դուրս էի գալիս, մեկ էլ նայեմ՝ մի սատանա թաքնվում է ինձնից դռան ետին, և այսպիսի մի խոշո՞ր սատանա, հասակը մեկուկես կանգուն կամ ավելի, իսկ պոչը՝ հաստ, թուխ, երկար։ Եվ տեսնեմ՝ պոչի ծայրը դռան ճեղքն է ընկել։ Իսկ ես հիմար չեղա, հանկարծ դուռը չրխկացրի և պոչը ճմլեցի ճեղքի մեջ։ Ինչպե՞ս ճչաց, սկսեց մաքառել, իսկ ես նշանով խաչին կնքեցի նրան երիցս։ Ու տեղն ու տեղը սատակեց, ճզմված սարդի նման։ Այժմ պետք է որ նեխած լինի այդ անկյունում, գարշահոտում է, բայց նրանք չեն տեսնում, հոտը չեն առնում։ Մի տարի է՝ չեմ գնացել այնտեղ։ Միայն քեզ եմ հայտնում, որպես օտարականի։

— Զարհուրելի՜ են խոսքերը ձեր։ Բայց, հա՛յր պատվական ու երանելի,— ավելի ու ավելի համարձակ էր դառնում վանականը,— ճի՞շտ է այն մեծ համբավը, որ ձեր մասին շրջում է մինչև իսկ հեռավոր աշխարհներում՝ որպես թե դուք անդադար հաղորդակցություն ունեք սուրբ ոգու հետ։

— Իջնում է։ Մերթ ընդ մերթ։

— Իսկ ինչպե՞ս է իջնում։ Ի՞նչ տեսքով։

— Թռչունի։

— Սուրբ ոգին իբրև զաղավնի՞։

— Մերթ սուրբ ոգին, մերթ Հոգին սուրբ։ Հոգին սուրբ այլ է, սա կարող է նաև ուրիշ թռչունի տեսքով իջնել. մերթ ծիծեռնակի, մերթ կարմրակատարիկի, մերթ երաշտահավի։

— Իսկ ինչպե՞ս եք նրան տարբերում բուն երաշտահավից։

— Խոսում է։

— Ինչպե՞ս է խոսում, ի՞նչ լեզվով։

— Մարդկային։

— Եվ ի՞նչ է ասում ձեզ։

— Այսօր ահա ազդարարեց, որ մի հիմար կայցելի ինձ և անհարկի բաներ կհարցնի։ Շատ բան ես ուզում իմանալ, վանակա՜ն։

— Ահավոր են խոսքերը ձեր, երանելագույն և սրբազնագույն հայր,— գլուխը շարժեց վանականը։ Բայց և նրա երկչոտ աչքերում կասկածանք երևաց։

— Իսկ տեսնո՞ւմ ես ծառն այս,— հարցրեց հայր Ֆերապոնտը, մի պահ լուռ մնալուց հետո։

— Տեսնում եմ, երանելագույն հայր։

— Ըստ քեզ՝ կնձնի է, բայց ինձ համար այլ է պատկերը։

— Ի՞նչ պատկեր է,— հարցրեց վանականը, որ լուռ և ապարդյուն սպասել էր բացատրության։

— Պատահում է ի գիշերի։ Տեսնո՞ւմ ես սույն երկու ճյուղերը։ Քրիստոս է ի գիշերի մեկնում սույն թևքն յուր առ իս և թևերովն այդ փնտրում է ինձ։ Բացահայտորեն տեսնում եմ ու դողում։ Սոսկալի է, օ՜, սոսկալի։

— Բայց ի՞նչ սոսկալի բան կա, եթե Քրիստոս է նույնինքն։

— Կրունի ու վեր կտանի։

— Ողջ-ո՞ղջ։

— Եղիայի ոգով ու փառքով, չե՞ս լսել, ինչ է, կգրկի ու կտանի...

Թեև օբդորսկցի վանականն այս խոսակցությունից հետո խիստ տարակուսած մտքով վերադարձավ իրեն հատկացված խուցը, ուր ապրում էր միաբաններից մեկի հետ, բայց նրա սիրտն այնուամենայնիվ հակված էր ավելի հայր Ֆերապոնտի կողմը, քան հայր Զոսիմայի։ Օբդորսկցի վանականն ամենից առաջ ծոմապահության կողմնակից էր, և նրա համար զարմանալի չէր, որ հայր Ֆերապոնտի նման մեծ ծոմապահը «զհրաշս տեսանէ»։ Նրա խոսքերն անշուշտ անհեթեթ էին թվում, բայց աստված գիտե, թե ինչ խորհուրդ էր թաքնված այդ խոսքերի մեջ. ավելի ևս տարօրինակ խոսքեր ու արարքներ են ցուցաբերում բոլոր սրբազան խենթերը, որոնք խևանում են ի սեր Քրիստոսի։ Վանականը պատրաստ էր հոգևին ու գոհունակությամբ հավատալու մինչև իսկ սատանայի պոչի ճզմվելուն՝ ոչ միայն այլաբանական, այլև ուղղակի իմաստով։ Բացի այդ, նախօրոք ևս, դեռ վանք գալուց առաջ, նա խիստ կանխակալ վերաբերմունք ուներ սրբահայրության կարգի դեմ, որի մասին, մինչ այդ, զրույցներից էր գաղափար կազմել և որը վնասակար նո-

բամուծություն էր համարում վճռականորեն՝ հետևելով ուրիշների կարծիքին։ Արդեն մեկ օր ապրելով վանքում, նա կարողացել էր նաև նկատել մի քանի թեթևամիտ, սրբահայրության կարգին անհամակիր միաբանների թաքուն տրտունջը։ Բնավորությամբ էլ նա ժիր էր, այս ու այն կողմ վազող, ամեն ինչի ականջ էր դնում մեծագույն հետաքրքրությամբ։ Ահա թե ինչու նա արտակարգ շփոթության մատնվեց, լսելով սրբահայր Զոսիմայի կատարած նոր «հրաշքի» մեծամեծ լուրը։ Ալյոշան հետագայում հիշեց, թե ինչպես սրբահոր մոտ ու նրա խուցի առաջ խճողված վանականների մեջ բազմիցս իր աչքին երևացել էր օբդորսկցի հետաքրքրասեր հյուրը, որ անընդհատ այս կամ այն խմբի մոտ էր վազում, ամեն ինչի ականջ էր դնում և հարցեր տալիս բոլորին։ Բայց այն ժամանակ Ալյոշան քիչ ուշադրություն դարձրեց նրան և միայն հետագայում էր, որ հիշեց ամեն ինչ... Եվ նրանով զբաղվելու ժամանակ էլ չուներ. սրբահայր Զոսիման, որ նորից հոգնություն էր զգացել ու վերադարձել էր անկողին, հանկարծ, երբ արդեն փակում էր աչքերը, հիշել էր նրան ու ասել, որ կանչեն իր մոտ։ Ալյոշան անմիջապես վազեց։ Սրբահոր մոտ միայն երեք հոգի կար՝ հայր Պաիսին, աբեղա հայր Իոսիֆը և մեկ էլ նորընծա Պորֆիրին։ Բանալով իր հոգնած աչքերը և սևեռուն նայելով Ալյոշային, սրբահայրը հարցրեց մեկեն.

— Սպասո՞ւմ են քեզ քո հարազատները, որդյակ։

Ալյոշան կմկմաց։

— Կարիք չունե՞ն արդյոք քեզ։ Երեկ խոստացե՞լ ես որևէ մեկին, որ լինելու ես այսօր մոտը։

— Խոսք եմ տվել... հորս... եղբայրներիս... ուրիշներին ևս...

— Տեսնո՞ւմ ես։ Անպայման գնա։ Մի՛ տրտմիր։ Գիտցիր, որ չեմ մեռնի, մինչև քո ներկայությամբ չասեմ իմ վերջին խոսքը երկրի վրա։ Քե՛զ եմ ասելու այդ խոսքը, որդյա՛կ, ու քեզ եմ այն կտակելու։ Քե՛զ, որդյակ իմ քաղցրիկ, վասնզի սիրում ես ինձ։ Իսկ այժմ գնա նրանց մոտ, որոնց խոստացել ես։

Ալյոշան անմիջապես հնազանդվեց, թեև ծանր էր հեռանալը։ Բայց նրա հոգուն ցնծության սարսուռ տվեց այն խոստումը, թե ինքը լսելու է սրբահոր վերջին խոսքը երկրի վրա, մանավանդ որ այդ խոսքը կարծես կտակվելու է իրեն՝ Ալյոշային։ Նա շտապեց, որպեսզի քաղաքում վերջացնի բոլոր գործերը և շուտով վերադառնա։ Հայր Պաիսին ևս ասաց ողջերթի խոս-

քեր, որոնք շատ ուժեղ և անակնկալ տպավորություն գործեցին Ալյոշայի վրա։ Երկուքն էլ արդեն դուրս էին եկել սրբահոր խուցից, երբ հայր Պաիսին դիմեց նրան.

— Հիշի՛ր անդադար, պատանյակ,— սկսեց նա ուղղակի, առանց որևէ առաջաբանի,— որ աշխարհիկ գիտությունը, ի մի գալով ու մեծ զորություն դառնալով, հատկապես վերջին դարում վերլուծել է երկնային ամեն ինչ, որ կտակվում է սուրբ գրոց մեջ, և դաժան վերլուծումից հետո՝ սույն աշխարհի գիտնականները բացարձակապես ոչինչ չեն թողել հնավանդ սրբություններից։ Բայց նրանք վերլուծել են մաս առ մաս, իսկ ամբողջությունը չեն նկատել, և այնքա՜ն կուրորեն, որ նույնիսկ արժան է զարմանքի։ Մինչդեռ ամբողջությունը նրանց իսկ աչքերի առաջ կանգնած է ցարդ անսասան, որպես և էր ի հնուց, և դարպասք դժոխոց չեն հաղթահարի նրան։ Միթե այդ կենդանի ուժը չի՞ ապրել տասնինը դար, միթե չի՞ ապրում և այժմ՝ անհատ հոգիների շարժման մեջ ու նաև շարժմանց մեջ ժողովրդական զանգվածների։ Մինչև իսկ նույն այդ մարդկանց՝ ամեն ինչ կործանած անաստվածների հոգեկան շարժմանց մեջ ապրում է նա ու մնում անսասան, ինչպես և առաջ։ Քանզի և՛ քրիստոնեությունն ուրացողները, և՛ նրա դեմ ընդվզողներն իրենց իսկ էության խորքում պահպանում են Քրիստոսի նույն այն օրինակը, որին հետևում էին առաջ, մնացել են նույնը, զի ցարդ ո՛չ նրանց իմաստությունը, ո՛չ և նրանց սրտի ավյունը ի վիճակի չի եղել ստեղծելու մի այլ, ավելի բարձր օրինակ հաչս մարդու և նրա արժանապատվության, քան այն օրինակը, որ ցույց է տվել Քրիստոս ի հնուց անտի։ Իսկ եղած փորձերից՝ միայն ու միայն այլանդակություններ են ծնվել։ Հիշի՛ր այս մեկը հատկապես, պատանյա՛կ, քանզի քո վախճանվող սրբահոր կողմից առաքվում ես դեպի աշխարհ։ Թերևս, հիշելով օրն այս մեծ, չմոռանաս նաև խոսքերն իմ այս, որոնք քեզ սրտագին ողջերթ մաղթելու սիրույն ասվեցին, զի այր ես դեռատի, իսկ ծանր են գայթակղություններն աշխարհում, և քո ուժերից վեր է տոկալ դրանց։ Է՛հ, գնա այժմ, մանուկ որբացյալ։

Այս հորդորով հայր Պաիսին օրհնեց նրան։ Ալյոշան, երբ դուրս էր գալիս վանքից ու մտորում բոլոր այդ անակնկալ խոսքերի մասին, հանկարծ հասկացավ, որ այժմ մի նոր, անսպասելի բարեկամ է գտնում, իրեն ջերմորեն սիրող մի առաջնորդ՝ հանձին այս խստաշունչ վանականի, որ մինչ այդ անդիջող էր

եղել իր նկատմամբ։ Թվում էր, թե սրբահայր Զոսիման, վախճանվելուց առաջ, նրա խնամքին էր հանձնում Ալյոշային։ «Բայց գուցե իրո՞ք այդպես էլ խոսել են իրար մեջ»,— մտածեց հանկարծ Ալյոշան։ Իսկ այն անակնկալ ու իմաստասիրական դատողությունները, որոնք նա լսեց հիմա, ոչ թե ուրիշ այս կամ այն, այլ հենց ա՛յդ իսկ դատողությունները պարզապես վկայում էին, թե հայր Պաիսին ջերմ սիրտ ունի. արդեն նա շտապում էր հնարավորին չափ շուտ զինել դեռատի միտքը՝ գայթակղությունների դեմ պայքարելու համար, և իր խնամքին հանձնված այդ մատղաշ հոգին ամրապատել այնպիսի մի պարբսպով, որից ավելի ամուր պաշտպանություն չէր էլ կարող երևակայել։

II

ՀՈՐ ՄՈՏ

Ալյոշան ամենից առաջ հոր մոտ գնաց։ Երբ մոտենում էր տանը, հիշեց՝ նախորդ օրը հայրը շատ էր պնդել, որ մի կերպ Իվանից թաքուն ներս մտնի։ «Իսկ ինչո՞ւ,— անցավ հիմա հանկարծ Ալյոշայի մտքով։— Եթե հայրիկն ուզում է մի բան ասել անձնապես ինձ, մյուսներից թաքուն, ինչո՞ւ նաև պետք է թաքուն ներս մտնեմ։ Հավանական է, երեկ այդ հուզված վիճակում ուրիշ բան էր ուզում ասել, բայց չկարողացավ»,— որոշեց Ալյոշան։ Այնուամենայնիվ նա շատ ուրախ եղավ, երբ Մարֆա Իգնատևնան, որ այգու դռնակը բացեց իր առաջ (պարզվեց, որ Գրիգորին հիվանդացել ու պառկել է ծառայանոցում), իր հարցին պատասխանելով ասաց, թե Իվան Ֆյոդորովիչն արդեն երկու ժամ է, ինչ դուրս է եկել։

— Իսկ հայրի՞կը։

— Վեր կացել, սուրճ է խմում,— մի տեսակ չոր պատասխանեց Մարֆա Իգնատևնան։

Ալյոշան ներս մտավ։ Ներունին մենակ նստել էր սեղանի առաջ, մի հին, թեթև վերարկու և հողաթափեր հագած, ինչ-որ հաշվեցուցակներ էր նայում, բայց առանց հատուկ ուշադրության, պարզապես զբաղվելու համար։ Բոլորովին մենակ էր ամբողջ տան մեջ (Սմերդյակովը նույնպես դուրս էր գնացել՝ ճաշի համար գնումներ անելու)։ Սակայն հաշիվները չէ, որ հետաքրքրում էին նրան։ Թեև առավոտյան շուտ էր ելել անկողնից և աշխատում էր առույգ պահել իրեն, բայց այնուամենայնիվ հոգնած ու թույլ էր երևում։ Ճակատը, որի վրա հսկա բոսորագույն այտուցներ էին առաջացել գիշերվա ընթացքում, կարմիր թաշկինակով էր կապված։ Քիթը նույնպես ահագին ուռել էր գիշերը, և դրա վրա էլ գոյացել էին մի քանի այտուցային բծեր, որոնք աննշան էին, բայց մի տեսակ հատկապես քինոտ ու ջղային տեսք էին տվել նրա ամբողջ դեմքին։ Ներունը ինքն էլ գիտեր այդ բանը և անբարյացակամ նայեց Ալյոշային, երբ նա սենյակ էր մտնում։

— Սուրճը պաղ է,— գոռաց նա կտրուկ,— չեմ հրամցնում։ Այսօր ինքս էլ եղած-չեղածը պասուց ձկնապուրով եմ անցկացնելու, ախպեր ջան, և ոչ ոքի չեմ հրավիրում։ Ինչո՞ւ ես եկել։

— Իմանալու, թե ինչպես է ձեր առողջությունը,— ասաց Ալյոշան։

— Հա՜։ Եվ բացի դրանից՝ ի՞նքս երեկ պատվիրեցի, որ գաս։ Հիմարությո՛ւն է այդ ամբողջը։ Իզուր ես բարեհաճել նեղություն քաշել։ Բայց այնպես էլ գիտեի, որ իսկույն փեշերդ կհավաքես ու վազ կտաս այստեղ...

Ուղղակի թշնամական զգացումով ասաց նա այդ բանը։ Միաժամանակ վեր կացավ ու մտահոգ նայեց հայելու մեջ (առավոտից ի վեր գուցե քառասուներորդ անգամ) իր քթին։ Սկսեց նաև ավելի վայելուչ ձևով հարմարեցնել կարմիր թաշկինակը ճակատին։

— Կարմիրն ավելի լավ է, սպիտակ կապես՝ հիվանդանոցի նման կլինի,— նկատեց նա խրատական շեշտով։— Է՜, ի՞նչ կա-չկա քո վանքում։ Ի՞նչ օրի է քո սրբահայրը։

— Շատ վատ է վիճակը, գուցե այսօր մահանա,— պատասխանեց Ալյոշան, բայց հայրը չլսեց նույնիսկ, և արդեն իր տված հարցն էլ իսկույն մոռացել էր։

— Իվանը դուրս գնաց,— ասաց նա հանկարծ։— Ձեռքից եկածն անում է, որ Միտյայից պոկի նրա հարսնացուին, դրա համար էլ ապրում է այստեղ,— ավելացրեց նա չարակամորեն և բերանը ծամածռելով նայեց Ալյոշային։

— Ինչ է, անձամբ ի՞նքն է այդպես ասել ձեզ,— հարցրեց Ալյոշան։

— Այո, և դեռ վազուց է ասել։ Բա ի՞նչ ես կարծում, երեք

շաբաթ առաջ էր, որ ասաց։ Հո նա էլ ինձ թաքուն-թաքուն սպանելու չի՞ եկել այստեղ։ Ուրեմն ինչ-որ նպատակ ունի, որ եկել է, հը՞։

— Ա՜յդ ինչ խոսք է։ Ինչո՞ւ եք այդպիսի բան ասում,— սոսկալի խռովք զգաց Ալյոշան։

— Փող չի խնդրում, ճիշտ է, բայց մեկ է՝ մի ասեղ անգամ չի ստանա ինձնից։ Ես միտք ունեմ հնարավորին չափ երկար ապրել այս աշխարհում, թանկագի՛ն Ալեքսեյ Ֆյոդորովիչ, լա՛վ իմացեք այդ, դրա համար էլ ամեն մի կոպեկը պետք է ինձ, և որքան ավելի ապրեմ, այնքան ավելի է պետք գալու,— շարունակեց նա անկյունից անկյուն երթուդարձ անելով սենյակում, ձեռքերն իր լայն, կեղտոտ, ամառային դեղին կտորից կարված վերարկուի գրպանները դրած։— Առայժմ դեռ տղամարդ եմ համենայն դեպս, հիսունհինգ տարեկան ընդամենը, ուզում եմ մի քսան տարի էլ տղամարդավայել կյանք ապրել. իսկ որ ծերացա՝ գարշելի մի բան կլինեմ, անզգամները հոժար կամքով չեն գա մոտս, ա՜յ հենց այդ ժամանակ էլ փողերս ինձ պետք կգան։ Դե, ես էլ ուրեմն կուտակում եմ հիմա, ավելի ու ավելի կուտակում՝ միայն ի՛նձ համար, սիրելի որդյակ իմ Ալեքսեյ Ֆյոդորովիչ, լա՛վ իմացեք այդ, որովհետև ուզում եմ մինչև վերջին րոպեն իմ այս անառակ կյանքով ապրել, լա՛վ իմացեք այդ։ Անառակ կյանքն ավելի քաղցր է։ Բոլորը պախարակում են դա, բայց բոլորն էլ դրանով են ապրում, միայն թե թաքուն-թաքուն, իսկ ես՝ բացեիբաց։ Ա՜յ, հենց իմ այս անկեղծության համար է, որ բոլոր հանած-վարածները իմ վրա են հարձակվել։ Ու չե՞մ էլ ուզում քո դրախտը գնալ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, լա՛վ իմացիր այդ. անհարմար էլ է, որ կարգին մարդը քո այդ դրախտը գնա, եթե նույնիսկ այդ դրախտ ասված բանը կա այնտեղ։ Իմ կարծիքով՝ մի օր քնում եմ ու չեմ զարթնում, և վե՛րջ, ուրիշ ոչինչ չկա։ Ուզում եք՝ հոգեհանգիստ կարդացեք ինձ համար, իսկ թե չեք ուզում՝ ձեր հե՛րն էլ անիծած, գրողի ծո՛ցը գնացեք։ Ահա՛ իմ փիլիսոփայությունը։ Իվանը երեկ լավ էր խոսում այստեղ, թեև բոլորս էլ հարբած էինք։ Պոռոտախոս է Իվանը, և ոչ մի այդպիսի գիտուն-միտուն էլ չէ... մի հատուկ կրթություն էլ չի ստացել, բերանը փակած նստում է և լուռ-լուռ ծիծաղում մարդու վրա. ա՜յ հենց դրանով է միայն իր էշը քշում։

Ալյոշան լսում էր առանց որևէ բան ասելու։

— Ինչո՞ւ չի խոսում ինձ հետ։ Իսկ թե խոսեց՝ սկսում է

ձևեր թափել։ Սրիկա՛ է քո Իվանը։ Իսկ Գրուշկայի հետ իսկույն կամուսնանամ, եթե ուզեմ։ Որովհետև եթե փող ունես, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, բավական է հենց ուզես մի բան, և ամեն ինչ կլինի։ Հենց դրանից է վախենում Իվանը և կանգնել է գլխիս, որ չամուսնանամ, իսկ Միտյային էլ դրդում է հենց այն մտքով, որ նա ամուսնանա Գրուշկայի հետ։ Այդպիսով ուզում է մի կողմից ի՛նձ ետ պահել Գրուշկայից (կարծես թե ես նրան փո՞ղ եմ թողնելու, եթե չամուսնանամ Գրուշկայի հետ), իսկ մյուս կողմից՝ եթե Միտյան Գրուշկայի հետ ամուսնանա, Իվանը նրա հարուստ հարսնացուին իր ձեռը կգցի, ա՜յ թե ինչ հաշիվներ է անում։ Սրիկա՛ է քո Իվանը։

— Որքա՞ն դյուրագրգիռ եք։ Երեկվա հետևանքն է։ Լավ կլիներ՝ գնայիք ու պառկեիք,— ասաց Ալյոշան։

— Ա՜յ, դու ասում ես այդ բանը,— նկատեց հանկարծ ծերունին, կարծես առաջին անգամն էր, որ նման մի միտք էր ծագում իր գլխում,— ասում ես, բայց չեմ բարկանում քեզ վրա, իսկ եթե Իվանն ասեր ինձ նույն բանը, նրա վրա կբարկանայի։ Միայն քեզ հետ է, որ լավ պահեր եմ ունեցել, թե չէ՝ ես չա՞ր մարդ եմ ախր։

— Ոչ թե չար մարդ եք, այլ խեղաթյուրված,— ժպտաց Ալյոշան։

— Լսի՛ր, ուզում էի այդ ավազակ Միտյային բանտ նստեցնել այսօր, և հիմա էլ դեռ չգիտեմ, թե ինչ կորոշեմ։ Իհարկե, հիմիկվա դարում նորաձևություն է հայրերին ու մայրերին նախապաշարմունք համարելը, բայց կարծեմ օրենքները մեր այս դարում էլ թույլ չեն տալիս, որ պառաված հորդ քաշ տաս մազերից, գետին գցես ու կրունկներով հասցնես մռութին, այն էլ իր սեփակա՛ն տանը, հետո էլ հոխորտաս, թե կգաս ու վերջնականապես կսպանես, և այդ բոլորը՝ վկաների առաջ։ Եթե ուզենայի, մի լավ կոլորեի նրա վիզը և երեկվա արածի համար կարող էի բանտ նստեցնել այսօր։

— Ուրեմն չեք ուզում նրա դեմ գանգատ տալ, չէ՞։

— Իվանը ետ պահեց ինձ։ Ես կթքեի Իվանի վրա, բայց ինքս էլ մի բան նկատի ունեմ...

Ու թեքվելով դեպի Ալյոշան, նա շարունակեց խորհրդապահ կիսաշշուկով.

— Եթե բանտ նստեցնեմ նրան, սրիկային, Գրուշենկան կլսի, որ նրան բանտ եմ նստեցրել, և իսկույն կվազի մոտս։ Իսկ

եթե այսօր լսի, որ նա մեռցնելու չափ ծեծել է ինձ, այսպիսի տկար ծերունուն, գուցե թե ձեռք քաշի նրանից և գա ինձ այցելի։ Ա՜յ, այդպիսի բնավորություն է՝ ամեն ինչի հակառակը պետք է անի անպայման։ Հինգ մատներիս պես գիտեմ Գրուշենկային։ Ինչ է, կոնյակ չե՞ս խմի։ Դե սառը սուրճ վերցրու, մի քառորդ ըմպանակի չափ կոնյակ լցնեմ մեջը, սքանչելի համ կտա, սիրելիս։

— Ոչ, պետք չէ, շնորհակալ եմ։ Ահա այս մի կտոր հացը կվերցնեմ հետս, եթե թույլ տաք,— ասաց Ալյոշան ու երեք-կոպեկանոց ֆրանսիական մի նկանակ վերցրեց ու դրեց կապայի գրպանը։— Եվ լավ կլիներ, որ դուք էլ կոնյակ չխմեիք,— զգուշորեն խորհուրդ տվեց նա, ուշադիր նայելով ծերունու դեմքին։

— Ճիշտ է ասածդ, գրգռում է, ոչ թե հանգստացնում։ Բայց մի փոքրիկ բաժակ միայն... Հենց ուղղակի պահարանից...

Նա բանալիով բացեց պահարանը, լցրեց մի ըմպանակ, խմեց, հետո պահարանը կողպեց ու բանալին նորից դրեց գրպանը։

— Այսքանը հերիք է. մեկ բաժակից հո պայտերս չեմ տնկի։

— Այ հիմա ավելի բարեսիրտ դարձաք,— ժպտաց Ալյոշան։

— Հը՞մ։ Ես քեզ առանց կոնյակի էլ եմ սիրում, իսկ սրիկաների հետ ե՞ս էլ սրիկա եմ։ Իվանը Ջերմաշնյա չի գնում. ինչո՞ւ։ Ուզում է լրտեսել՝ արդյոք շա՞տ եմ տալու Գրուշենկային, եթե գալու լինի։ Սրիկա՜ են բոլորն էլ։ Իսկ Իվանին բնավ չեմ ընդունում։ Որտեղի՞ց է բուսել այդ տիպը։ Բոլորովին ուրիշ մարդ է, խորթ է մեր հոգուն։ Հը՞, իբր թե բա՞ն եմ թողնելու նրան։ Է՜, կտակ էլ չեմ թողնելու առհասարակ, լա՜վ իմացեք այդ։ Իսկ Միտյային ճզմելու եմ ուտիճի պես։ Գիշերը սև ուտիճներին եմ ճզմում հողաթափիս տակ. հենց կոխեցիր վրան՝ մի ճը՞րթ ձայն է հանում։ Քո Միտյան էլ այդպես կճրթա։ Քո Միտյան, որովհետև դու սիրում ես նրան։ Ա՜յ, դու սիրում ես Միտյային, բայց ես չեմ վախենում, որ նրան սիրում ես։ Իսկ եթե Իվանը սիրեր, ես իմ կյանքի համար կվախենայի, որ նա սիրում է Միտյային։ Բայց Իվանը ոչ ոքի չի սիրում, Իվանը մեր մարդը չէ, Իվանի նման մարդիկ, սիրելիս, մեզ խորթ մարդիկ են, գետնից բարձրացած փոշի են նրանք... Քամին կփչի՞, և

փոշին կանցնի-կգնա... Երեկ մի հիմարություն էր մտել գլուխս, երբ պատվիրեցի, որ գաս այսօր. ուզում էի քո միջոցով իմանալ Միտյայի մասին՝ եթե մի հազար ռուբլի տամ հիմա ձեռքը, դե ասենք երկու հազար տամ, կհամաձայնվի՞ այդ մուրացկանն ու թշվառականը փասա-փուսան քաշել ու կորչել-գնալ այստեղից մի հինգ տարով, ավելի լավ կլիներ՝ երեսունհինգ տարով, բայց Գրուշենկային չտանի՞ հետը և վերջնականապես ձեռք քաշի նրանից, հը՞։

— Ես... կհարցնեմ նրան...— մրմնջաց Ալյոշան։— Եթե լրիվ երեք հազար տաք, գուցե այդ դեպքում նա...

— Փչո՞ւմ ես։ Էլ հիմա կարիք չկա հարցնելու, էլ ոչի՞նչ պետք չէ։ Միտքս փոխել եմ։ Մի տխմարություն էր, որ երեկ հիմարաբար մտել էր այս գանգիս մեջ։ Ոչի՞նչ չեմ տա, ո՜չ մի փշրանք, ես ինքս կարիք ունեմ իմ փողերին,— ձեռքը թափ տվեց ծերուկը։— Առանց այդ էլ կճզմեմ նրան՝ ուտիճի պես։ Ոչինչ մի՛ ասա նրան, թե չէ՝ մեկ էլ դեռ կսկսի հույս դնել։ Եվ դո՛ւ էլ ոչ մի գործ չունես այստեղ, դե գնա՛։ Իսկ այդ հարսնացուն, այդ Կատերինա Իվանովնան, որին այնպես ուշիուշով թաքցնում էր ինձնից այսքան ժամանակ, ամուսնանալո՞ւ է Միտյայի հետ, թե չէ։ Դու երեկ կարծեմ նրա մո՞տ էիր գնացել։

— Նա ոչ մի կերպ չի ուզում հրաժարվել Միտյայից։

— Ա՜յ, այդպիսիներին են սիրում այդ քնքուշ օրիորդները, նրա նման ցոփ ու ստոր տիպերին։ Ասեմ քեզ՝ անպետք բաներ են այդ դալկահար օրիորդները. կարելի՞ է համեմատել... Հե՜, եթե նրա երիտասարդ տարիքն ունենայի, մեկ էլ այն ժամանակվա իմ դեմքը (որովհետև նրանից ավելի լավ քիթ ու մռութ ունեի քսանութ տարեկանիս), ես էլ ճիշտ նրա պես կտրիճ կդառնայի։ Սրիկայի՜ մեկն է նա։ Բայց միևնույն է՝ Գրուշենկան նրա ձեռքը չի ընկնի, չի՜ ընկնի... Փոշի՜ կդարձնեմ նրան։

Վերջին բառերն ասած ժամանակ նորից կատաղեց։

— Դու էլ գնա՜, ոչ մի գործ չունես այսօր այստեղ,— վրա տվեց կարճ ու կտրուկ։

Ալյոշան մոտեցավ հրաժեշտ տալու և համբուրեց նրա ուսը։

— Ա՞յդ ինչ է,— մի փոքր զարմացավ ծերունին։— Դեռ կտեսնվե՞նք ախր։ Ինչ է, քեզ թվում է, որ էլ չե՞նք տեսնի իրար։

— Ո՜չ, մտքովս էլ չանցավ։ Հենց այնպես համբուրեցի, պատահմամբ։

— Դե ես էլ հենց այնպես ասացի, հենց այնպես... ոչինչ...—

նայում էր ծերունին Ալյոշային։— Լսի՛ր, լսի՛ր,— գոռաց նրա ետևից,—մի օր արի՛, հենց մոտ օրերս արի ձկնապուր ուտելու։ Հատուկ ձկնապուր կպատրաստեմ քեզ համար, ոչ թե այսօրվա պես, արի՛, անպայմա՛ն արի։ Հենց վաղը, լսո՞ւմ ես, վաղն արի։

Եվ հազիվ էր Ալյոշան դռնից դուրս եկել, երբ նա նորից մոտեցավ պահարանին և մի կես բաժակ էլ կոնծեց։

— Էլ չեմ խմելու,— մրթմրթաց նա փնչալով, նորից կողպեց պահարանը, նորից գրպանը դրեց բանալին, հետո գնաց ննջասենյակ, ուժասպառ ընկավ անկողնի վրա և նույն վայրկյանին քնեց։

III

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՂԱՆԵՐԻ ՀԵՏ Է ԿԱՊՎՈՒՄ

«Փառք աստուծո, Գրուշենկայի մասին չհարցրեց,— մտածեց իր հերթին Ալյոշան, դուրս գալով հոր մոտից և գնալով դեպի Խոխլակովայի տունը,— թե չէ՝ գուցե ստիպված լինեի պատմել երեկվա հանդիպումը Գրուշենկայի հետ»։ Ալյոշան ցավով զգաց, թե ախոյանները նոր ուժ են հավաքել գիշերվա ընթացքում և նրանց սրտերը նորից քարացել են այսօր։ «Հայրիկը բորբոքված է ու չարացած, մի բան է դրել միտքը և կպել դրան։ Իսկ Դմիտրի՞ն։ Նա էլ գոտեպնդված կլինի մինչև առավոտ, երևի նույնպես բորբոքված է ու չարացած և նույնպես, անշուշտ, որոշել է մի բան... Օ՜հ, այսօր անպայման պետք է գտնեմ նրան, ի՞նչ գնով էլ լինի...»։

Բայց Ալյոշան չկարողացավ երկար մտածել. ճանապարհին հանկարծ պատահեց մի դեպք, որ թեև շատ էլ կարևոր մի բան չէր երևութապես, բայց ուժեղ տպավորություն գործեց նրա վրա։ Հենց որ հրապարակն անցավ ու թեքվելով մտավ նրբանցք, որպեսզի դուրս գա Միխայլովսկայա փողոցը, որ զուգահեռ է Մեծ փողոցին, բայց միայն մի ձորակով է անջատված դրանից (մեր ամբողջ քաղաքը կտրատված է ձորակներով), դպրոցականների մի փոքր խումբ տեսավ ներքևում կամուրջի մոտ։ Բոլորն էլ մանկահասակ էին, ինչից տասներկու տարեկան, ոչ ավելի։ Դպրոցից ելել ու գնում էին իրենց տները՝ ոմանք թիկնապայուսակները շալակած, ուրիշներ կաշվե պայուսակներն ուսերից

կախած, ոմանք կարճ բաճկոններով, ուրիշներ՝ թեթև վերարկուներով, մի քանիսն էլ հագել էին երկարաճիտ ու ծալքավոր կոշիկներ, որոնցով հատկապես սիրում են պարծենալ ունևոր հայրերի երես առած տղաները։ Ամբողջ խումբն աշխուժորեն խոսում էր մի բանի մասին, երևի խորհրդակցում էին։ Ալյոշան երբեք չէր կարող անտարբեր անցնել երեխաների կողքով, Մոսկվայում էլ այդպիսին էր, ու թեև ամենից ավելի սիրում էր երեք տարեկան կամ մոտավորապես այդ տարիքի փոքրիկներին, բայց տասը, տասնմեկ տարեկան դպրոցականներն էլ շատ էին դուր գալիս նրան։ Ուստի, որքան էլ մտահոգ էր հիմա, հանկարծ ուզեց իջնել տղաների մոտ ու խոսել նրանց հետ։ Մոտենալով, նայում էր նրանց կարմրաթշիկ, վառվռուն երեսներին, և մեկեն նկատեց, որ բոլորն էլ մի-մի քար ունեին իրենց ձեռքը, ոմանք նույնիսկ երկու քար էին վերցրել։ Իսկ ձորակի մյուս կողմը, խմբից մոտ երեսուն քայլ հեռու, ցանկապատի տակ կանգնած էր մի ուրիշ տղա, նույնպես դպրոցական և նույնպես պայուսակն ուսից կախած, հասակից դատելով՝ տասը տարեկան, ոչ ավելի, կամ նույնիսկ դրանից էլ փոքր։ Դժգույն, հիվանդագին տեսք ուներ նա ու սև, կայծկլտուն աչքեր։ Ուշադիր ու աչալուրջ դիտում էր խմբված վեց դպրոցականներին, որոնք հայտնապես նրա դասընկերներն էին ու նրա հետ միասին էին դուրս եկել քիչ առաջ դպրոցից, բայց որոնց հանդեպ թշնամություն ուներ երևի։ Ալյոշան մոտեցավ և, դիմելով մի գանգրահեր, շեկ, վարդերես տղայի, որ սև բաճկոն էր հագել, նկատեց.

— Երբ ես էլ ա՛յ այսպիսի պայուսակ էի գործածում ձեզ նման, ձախ ուսիցս էի կախում, որպեսզի կարողանամ հեշտ բացել աջ ձեռքով։ Իսկ դուք պայուսակն աջ կողմից եք կախել, այդպես դժվար է բացելը։

Ալյոշան, առանց որևէ դիտավորյալ հնարամտության, ուղղակի այդ գործնական դիտողությունից սկսեց, և արդեն հենց այդ ձևով պետք է սկսի խոսել չափահաս մարդը, եթե ուզում է միանգամից շահել երեխայի ու մանավանդ երեխաների մի ամբողջ խմբի վստահությունը։ Պետք է սկսել հենց լուրջ ու գործնական մոտեցումով, այնպես անել, որ կատարելապես հավասարե-հավասար լինի խոսակցությունը։ Ալյոշան բնազդով էր հասկանում այդ։

— Բայց նա ձախլիկ է,— պատասխանեց անմիջապես մի

ուրիշ տղա, որ կորովի էր ու առողջ, տասնմեկ տարեկան։ Մյուս հինգ տղաներն աչքերը հառեցին Ալյոշային։

— Քարն էլ ձախով է գցում,— նկատեց մի երրորդ տղա։

Եվ հենց այդ վայրկյանին մի քար թռավ խմբի մեջ, բայց պարզապես մի թեթև կպավ ձախլիկ տղային ու պարապի անցավ, թեև ճարպկորեն ու թափով էր նետված։ Նետողը ձորակի մյուս կողմը կանգնած տղան էր։

— Տո՛ւր նրան, հասցրո՛ւ գլխին, Սմուրով,— գոռացին բոլորը։ Բայց Սմուրովը (ձախլիկ տղան) առանց այդ էլ պարտքի տակ չմնաց, իսկույն պատասխանը տվեց. մի քար նետեց տղայի վրա, բայց անհաջող էր, քարը գետնին կպավ։ Տղան անմիջապես մի քար էլ արձակեց խմբի վրա, այս անգամ ուղղակի Ալյոշայի կողմը և բավական ուժեղ հարված հասցրեց նրա ուսին։ Տղան պատրաստի քարերով էր լցրել գրպանները. երեսուն քայլ հեռվից երևում էր դա, որովհետև վերարկուի գրպաններն ուռել էին։

— Ձեզ է խփում, ձե՛զ, դիտմամբ ձե՛զ է նշան առնում։ Դուք հո Կարամազով եք, Կարամա՛զով,— գոռացին տղաները քրքջալով։— Դե բոլորս միանգամից, տղերք, կրա՛կ։

Եվ նույն վայրկյանին վեց քար թռավ մյուս տղայի վրա։ Քարերից մեկը դիպավ նրա գլխին։ Տղան ընկավ, բայց իսկույն վեր կացավ և սկսեց կատաղորեն պատասխանել։ Երկու կողմերից էլ անընդհատ քարեր էին տեղում։ Պարզվեց, որ խմբի տղաներից շատերը նույնպես լցրել էին իրենց գրպանները նախօրոք։

— Ի՞նչ եք անում։ Ամոթ չէ՞, պարոնա՛յք։ Վեցը մեկի դե՞մ։ Կսպանե՞ք դուք նրան,— գոռաց Ալյոշան։

Նա առաջ ընկավ ու կանգնեց թռչող քարերի դիմաց, որպեսզի իր անձով պաշտպանի մյուս տղային։ Երեք կամ չորս հոգի հանգիստ մնացին մի րոպե։

— Առաջինը ի՞նքն սկսեց,— գոռաց կարմիր շապիկ հագած մի տղա մանկական գրգռված ձայնով,— ավազակի մեկն է, քիչ առաջ դասարանում Կրասոտկինին խփեց գրպանի դանակով, արյուն եկավ։ Կրասոտկինը պարզապես չուզեց մատնել, բայց մի լավ պետք է դնգսել նրան...

— Բայց ինչո՞ւ։ Երևի դուք ինքներդ եք նրան ջղայնացնում։

— Ա՛յ, նորից քարով տվեց ձեր մեջքին։ Նա ձեզ գիտի՞,—

գոռացին երեխաները։— Հիմա ձե՛զ վրա է գցում, ոչ թե մեզ։ Դե նորի՛ց բոլորս միասին, փուստ չխփե՞ս, Սմո՛ւրով։

Եվ նորից քարերն սկսեցին տեղալ, այս անգամ, շատ վայրագ թափով։ Մի քար կպավ միայնակ տղայի կրծքին. նա ճչաց, սկսեց լաց լինել և վազեց դարիվեր՝ դեպի Միխայլովսկայա փողոցը։ Խմբում գոռգոռոց բարձրացավ. «Օհո՛, վախեցա՛վ, փախչում է, ճիլո՛պ, ճիլո՛պ»։

— Դուք դեռ չգիտեք ինչ ավազակ է նա, Կարամազով, սատկեցնելն էլ քիչ է նրան,— կրկնեց բաճկոն հագած մի տղա, որ կրակոտ աչքեր ուներ և բոլորից մեծ էր երևում։

— Ի՞նչ է արել,— հարցրեց Ալյոշան։— Մատնի՞չ է, թե ինչ։

Տղաներն իրար նայեցին՝ կարծես հեգնանքով։

— Դո՞ւք էլ այդ կողմն եք գնում, Միխայլովսկայայի կո՞ղմը,— շարունակեց նույն տղան։— Դե հասեք նրա ետևից... Ըհը՛, տեսնո՞ւմ եք, նորից կանգ առավ, սպասում ու ձեզ է նայում։

— Ձե՛զ է նայում, ձե՛զ է նայում,— վրա տվեցին տղաները։

— Դե, գնացեք ու հարցրեք նրան՝ բաղնիքի ճիլոպ սիրո՞ւմ է, քրքրված ճիլոպ։ Լսո՞ւմ եք, հենց այդպես էլ հարցրեք։

Մի ընդհանուր ծիծաղ պայթեց։ Ալյոշան նայում էր տղաներին, նրանք էլ՝ Ալյոշային։

— Ձգնա՞ք, կխփի ձեզ,— զգուշացրեց Սմուրովը։

— Պարոնայք, ճիլոպի մասին չեմ հարցնի, երևի դրանով ձեռ եք առնում նրան։ Բայց կհարցնեմ ու կիմանամ, թե ինչու եք նրան այդքան ատում...

— Դե, իմացե՛ք, իմացե՛ք,— ծիծաղեցին տղաները։

Ալյոշան կամուրջն անցավ ու ցանկապատի տակով բարձրացավ ուղղակի դեպի հալածված տղան։

— Լա՛վ նայեցեք,— գոռացին ետևից նախազգուշացնելով,— նա չի վախենա ձեզնից, հանկարծ կխփի դանակով, գողտուկ կխփի... ինչպես Կրասոտկինին արեց։

Տղան սպասում էր Ալյոշային, առանց տեղից շարժվելու։ Ընդհուպ մոտենալով, Ալյոշան իր առաջ տեսավ հազիվ ինը տարեկան մի երեխայի, որ թուլակազմ էր ու թերահասակ։ Դեմքը գունատ էր, նիհարիկ ու երկարուկ, խոշոր ու մուգ աչ-

քերը քինախնդիր նայում էին Ալյոշային։ Հագել էր մի հին, բավական մաշված վերարկու, որ արդեն անճոռնիորեն փոքրացել էր նրա վրա։ Մերկ թևերը դուրս էին ընկել թեզանիքներից։ Տաբատի աջ ծնկին մի մեծ կարկատան կար, իսկ աջ կոշիկի քթին, բթամատի վրա, կաշին ծակվել էր, և երևում էր, որ այդ մեծ ծակը թունդ սևացրել են թանաքով։ Վերարկուի երկու ուռած գրպանները քարերով էին ծանրացած։ Ալյոշան կանգնեց տղայից երկու քայլ հեռու, հարցական նայելով նրան։ Իսկույն կռահելով Ալյոշայի աչքերից, որ նա չի ուզում իրեն ծեծել, տղան նույնպես իջեցրեց փուքսը և նույնիսկ ինքն սկսեց խոսել։

— Ես մենակ եմ, իսկ նրանք՝ վեց հոգի... Մենակս կչարդեմ բոլորին էլ,— ասաց նա հանկարծ, և աչքերը կայծկլտացին։

— Քարերից մեկը երևի շատ ուժեղ կպավ ձեզ ու ցավացրեց,— նկատեց Ալյոշան։

— Իսկ ես Սմուրովի գլխին հասցրի,— գոռաց տղան։

— Նրանք ասացին, որ դուք ճանաչում եք ինձ և ինչ-որ պատճառով քա՞ր նետեցիք իմ վրա,— հարցրեց Ալյոշան։

Տղան մռայլորեն նրան նայեց։

— Ես ձեզ չեմ ճանաչում։ Իսկ դուք ինձ ճանաչո՞ւմ եք իրոք,— շարունակեց հարցնել Ալյոշան։

— Հանգի՛ստ թողեք ինձ,— գոռաց հանկարծ տղան ջղային շեշտով, բայց չշարժվեց տեղից, կարծես դեռ մի բան էր սպասում, և նորից աչքերը փայլատակեցին քինախնդրությամբ։

— Լավ, գնում եմ,— ասաց Ալյոշան,— միայն թե ես չեմ ճանաչում ձեզ ու չեմ ծաղրում։ Նրանք ինձ ասացին, թե ինչպես են ծաղրում ձեզ, բայց ես չեմ ուզում ձեզ ծաղրել։ Մնա՛ք բարով։

— Մետաքսե վարտիքով վանակա՞ն,— գոռաց տղան, նույն քինախնդիր ու կովարար հայացքով նայելով Ալյոշայի ետևից, և նույնիսկ կռվելու պատրաստ դիրք ընդունեց, մտածելով, որ Ալյոշան հիմա անպայման կհարձակվի իր վրա։ Բայց Ալյոշան դարձավ, նայեց և շարունակեց հեռանալ։ Բայց դեռ երեք քայլ էլ չէր արել, երբ նրա թիկունքին մի սաստիկ հարված իջավ։ տղան իր գրպանի ամենամեծ քարն էր արձակել նրա վրա։

— Ուրեմն ետևից, հա՞։ Ուրեմն ճի՞շտ են ասում ձեր մասին, թե գաղտագողի եք հարձակվում,— դարձավ նորից Ալյոշան, բայց այս անգամ տղան կատաղորեն մի քար էլ նետեց

ուղղակի Ալյոշայի դեմքին։ Ալյոշան ճիշտ ժամանակին հասցրեց ծածկել երեսը, և քարն արմունկին կպավ։

— Ձեզ ամաչո՞ւմ։ Ի՞նչ եմ արել ձեզ,— գոռաց նա։

Տղան, լուռ ու կռվելու պատրաստ, սպասում էր, որ ա՛յ հիմա արդեն Ալյոշան ուղղակի կհարձակվի իր վրա։ Բայց տեսնելով, որ նա հիմա էլ չի հարձակվում, լրիվ կատաղեց՝ գազանի ձագի նման. առաջ վազեց ու ինքը նետվեց Ալյոշայի վրա, և դեռ Ալյոշան չէր հասցրել որևէ շարժում անել, երբ գազազած լանը գլուխը ծռեց, երկու ձեռքով բռնեց նրա ձախ ձեռքն ու սաստիկ կծեց միջնամատը։ Ատամներն ամուր խրեց և տասը վայրկյան պահեց այդպես։ Ալյոշան սկսեց գոռալ ցավից, ամբողջ ուժով ետ քաշելով մատը։ Տղան վերջապես բաց թողեց նրա ձեռքն ու ետ թռավ, կանգնեց նախկին հեռավորության վրա։ Խածվածքը շատ խորն էր, հասել էր մինչև ոսկորը, ճիշտ եղունգի մոտ. սկսեց արյուն հոսել։ Ալյոշան թաշկինակը հանեց և ամուր կապեց վիրավոր ձեռքը։ Գրեթե մի ամբողջ բոպե զբաղվեց կապելով։ Տղան այդ միջոցին կանգնած սպասում էր։ Վերջապես Ալյոշան իր մեղմ հայացքը բարձրացրեց ու նայեց նրան։

— Դե լավ,— ասաց նա,— տեսնո՞ւմ եք ինչ վատ կծեցիք ինձ, էլ բավական է, չէ՞։ Հիմա ասացեք ուրեմն, ի՞նչ եմ արել ձեզ։

Տղան զարմացած նայեց։

— Թեև բոլորովին չեմ ճանաչում և առաջին անգամն եմ տեսնում ձեզ,— նույն հանգստությամբ շարունակեց Ալյոշան,— բայց չի կարող պատահել, որ ոչինչ արած չլինեմ, թե չէ՝ իզուր չէիք տանջի ինձ այսպես։ Ուրեմն ի՞նչ եմ արել և ինչո՞վ եմ մեղավոր ձեր առաջ, ասացե՛ք։

Պատասխանելու փոխարեն, տղան հանկարծ սկսեց ամբողջ ձայնով լաց լինել ու մեկեն վազելով փախավ։ Ալյոշան նրա ետևից հանդարտ քայլեց դեպի Միխայլովսկայա փողոցը և հետո դեռ երկար ժամանակ տեսավ, թե ինչպես էր տղան վազում հեռվում՝ միշտ նույն արագությամբ, առանց ետ նայելու և հավասարաբար շարունակելով իր բարձրաձայն լացը։ Եվ Ալյոշան որոշեց անպայման գտնել նրան, հենց որ ժամանակ ունենա, և պարզել այս հանելուկը, որ չափազանց զարմացրել էր իրեն։ Իսկ այս րոպեիս ժամանակ չուներ դրա համար։

IV

ԽՈԽԼԱԿՈՎԱՆԵՐԻ ՄՈՏ

Շուտով նա հասավ տիկին Խոխլակովայի տունը՝ քարաշեն, սեփական, երկհարկանի, գեղեցիկ մի տուն, որ մեր քաղաքի լավագույններից էր։ Թեև տիկին Խոխլակովան մեծ մասամբ ապրում էր մի ուրիշ նահանգում, ուր կալված ուներ, և կամ Մոսկվայում, ուր սեփական տուն ուներ, բայց մեր քաղաքում ևս ուներ իր տունը, որ ժառանգել էր պապերից։ Մեր գավառում ունեցած կալվածն էլ ամենամեծն էր իր երեք կալվածներից, և այնուամենայնիվ նա շատ հազվադեպ էր եկել մեր նահանգը մինչև հիմա։ Դեռ նախասենյակում նա ընդառաջ վազեց Ալյոշային։

— Ստացա՞ք, ստացա՞ք նամակս նոր հրաշքի մասին,— արագ ու նյարդային սկսեց խոսել նա։

— Այո, ստացա։

— Տարածեցի՞ք, ցույց տվի՞ք բոլորին։ Որդուն մո՞ր վերադարձրեց նա։

— Այսօր նա կմահանա,— ասաց Ալյոշան։

— Լսեցի, գիտեմ, օ՜հ, որքա՜ն եմ ուզում խոսել ձեզ հետ։ Խոսել այս բոլորի մասին՝ ձեզ կամ որևէ մեկի։ Ո՜չ, ձե՜զ, ձե՜զ հետ։ Եվ ափսո՜ս, որ ոչ մի կերպ չեմ կարող նրան տեսնել։ Ամբողջ քաղաքն է հուզված, բոլորն էլ սպասման մեջ են։ Բայց հիմա... գիտե՞ք, որ հիմա Կատերինա Իվանովնան նստած է մեզ մոտ։

— Օ՜, բարեբախտությո՜ւն է դա,— բացականչեց Ալյոշան։— Հի՜մա նրա հետ կտեսակցեմ ձեզ մոտ։ Երեկ ինձ պատվիրեց, որ անպայման այցելեմ իրեն այսօր։

— Գիտեմ, ամեն ինչ գիտեմ։ Մանրամասն լսեցի, թե ինչ է կատարվել երեկ նրա տանը... և իմացա բոլո՜ր այդ սարսափելի բաները... այդ արարածի առնչությամբ։ C'est tragique[1], և ես նրա տեղը լինեի՞... չգիտե՞մ, թե ինչ կանեի, եթե նրա տեղը լինեի։ Բայց ձեր եղբա՜յրը, ձեր այդ Դմիտրի Ֆյոդորովիչը այդ ի՜նչ տեսակ մարդ է, աստվա՜ծ իմ։ Ալեքսեյ Ֆյոդորովիչ, շեղվում եմ ու մոռանում ասել՝ պատկերացրե՞ք, ձեր եղբայրն այս-

[1] Ցնցող բան է (ֆրանս.)։

տեղ է հիմա, այսինքն ոչ թե այն մեկը, ոչ թե երեկվա այդ սարսափելի եղբայրը, այլ մյուսը՝ Իվան Ֆյոդորովիչը, ներսը նստած խոսում է Կատերինա Իվանովնայի հետ։ Հանդիսավոր խոսակցություն է... Եվ եթե մի բոպե պատկերացնեիք, թե ի՜նչ է կատարվում հիմա նրանց միջև... սարսափելի՜ բան է. ասում եմ ձեզ՝ հոգեկան ջլատում է դա, մի ահավոր հեքիաթ, որին անհնար է հավատալ։ Երկուսն էլ խորտակում են իրենց կյանքը, և ինչու՝ չես հասկանում։ Իրենք էլ գիտեն, որ այդպես է, և իրենք իսկ հաճույք են զգում դրանից։ Ես սպասո՜ւմ էի ձեզ։ Սրտատրոչո՜ր սպասում էի ձեզ։ Ես չեմ կարող դիմանալ դրան, ա՜յս է ահավորը։ Իսկույն կպատմեմ ձեզ ամեն ինչ, բայց հիմա մի ուրիշ բան ասեմ՝ ամենակարևորը... ա՜խ, նույնիսկ մոռացել էի, որ սա է ամենակարևորը. ասացեք ինձ, ինչո՞ւ Lise-ի հիստերիկ նոպան է բռնել։ Հենց որ լսեց, թե գալիս եք, իսկույն հիստերիկ նոպան սկսեց։

— Maman, դուք եք հիմա հիստերիկ նոպայի մեջ, ոչ թե ես,— ծլվլաց հանկարծ Lise-ի բարալիկ ձայնը կողքի սենյակի դռան ճեղքից։ Շատ փոքրիկ մի ճեղք էր դա, իսկ աղջկա ձայնը կոտրատուն էր, ճիշտ այնպես, ինչպես երբ ուզում ես ծիծաղել, բայց բոլոր ուժերդ լարում ես, որ զսպես ծիծաղը։ Ալյոշան իսկույն նկատեց այդ ճեղքը. Lise-ը վստահաբար իրեն էր նայում այդտեղից՝ բազկաթոռում նստած, բայց ինքն անշուշտ չէր կարող տեսնել նրան։

— Զարմանալի չէ, Lise, զարմանալի չէ.. հենց քո քմահաճույքների երեսից ես էլ հիստերիկ եմ դառնալու, բայց գիտե՞ք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, այնպե՜ս հիվանդ է նա, ամբողջ գիշերն այնպե՜ս հիվանդ էր, տաքության մեջ, տնքում էր։ Հազիվհազ լուսացրի, սպասեցի Հերցենշտուբեին։ Նա ասում է, որ ոչինչ չի կարողանում հասկանալ, և որ պետք է համբերենք։ Այդ Հերցենշտուբեն միշտ այսպես գալիս ու ասում է, որ ոչինչ չի կարողանում հասկանալ։ Հենց որ դուք մոտեցաք մեր տանը, Lise-ը ճչաց և նոպան բռնեց. հրամայեց, որ իրեն փոխադրենք այստեղ, այս իր նախկին սենյակը...

— Մամա, ես բոլորովին չգիտեի, որ նա մոտենում է, բնավ էլ նրա պատճառով չէր, որ ուզեցի այս սենյակը փոխադրվել։

— Այդ արդեն ճիշտ չէ, Lise, Ցուլիան վազեց մոտ նսեալու, որ Ալեքսեյ Ֆյոդորովիչն է գալիս. նա քեզ համար պահակություն էր անում։

— Անուշի՜կ աղավնյակ իմ մամա, սոսկալի անմիտ բան էր ձեր ասածը։ Իսկ եթե ուզում եք ուղղել ձեր սխալը և շատ խելացի մի բան ասել, անուշիկ մամաս, ասացեք ողորմած տեր Ալեքսեյ Ֆյոդորովիչին՝ նա իր նրբամտությունն չունենալն ապացուցեց հենց միայն այն փաստով, որ երեկվա դեպքից հետո հանդգնեց մեզ մոտ գալ այսօր, չնայած որ բոլորը ծիծաղում են իր վրա։

— Lise, համբ հանո՜ւմ ես արդեն, և հավատացնում եմ քեզ, որ ի վերջո խիստ միջոցների կդիմեմ։ Ո՞վ է նրա վրա ծիծաղում։ Ես այնքա՜ն ուրախ եմ, որ եկավ, ես նրա կարիքն ունեմ, ուղղակի անհրաժեշտ է նա ինձ։ Օ՜հ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ես չափազա՜նց դժբախտ եմ։

— Բայց ի՞նչ է պատահել ձեզ, աղավնյա՜կ իմ մամա։

— Ա՜խ, այդ քո քմահաճույքները, Lise, այդ քո փոփոխականությունը, քո հիվանդությունը, այսօրվա սոսկալի գիշերը քո այդ տաքությամբ, այդ սոսկալի, այդ միշտ նո՜ւյն Հերցենշտուբեն, միշտ նո՜ւյնը մանավանդ, միշտ նո՜ւյնը, նո՜ւյնը։ Եվ վերջապես ամե՜ն ինչ, ամե՜ն ինչ... Եվ վերջապես, նույնիսկ այդ հրա՜շքը։ Օ՜, ինչպե՜ս շշմեցրեց, ինչպես ցնցե՜ց ինձ այդ հրաշքը, սիրելի՜ Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Եվ հիմա էլ հյուրասենյակում այդ ողբերգությունը, որին չեմ կարող դիմանալ, չե՜մ կարող, նախօրոք հայտարարում եմ ձեզ՝ չե՜մ կարող։ Կատակերգություն է գուցե, ոչ թե ողբերգություն։ Ասացե՜ք, Զոսիման դեռ կապրի՞ մինչև վաղը, կապրի՞։ Օ՜ աստված իմ։ Ի՞նչ է պատահում ինձ։ Ամեն րոպե փակում եմ աչքերս ու տեսնում, որ ամեն ինչ անիմաստ է, ամե՜ն ինչ անիմաստ։

— Շատ կխնդրեի,— ընդհատեց հանկարծ Ալյոշան,— մի կտոր մաքուր լաթ տայիք՝ մատս կապելու։ Դեշ վիրավորվեց և սոսկալի ցավում է հիմա։

Ալյոշան բացեց իր խածված մատը։ Արյունը թանձրացել էր թաշկինակի վրա։ Տիկին Խոխլակովան ճչաց և աչքերը փակեց։

— Աստվա՜ծ իմ, այդ ի՜նչ վերք է, սարսափելի՜ բան։

Բայց Lise-ը հենց որ Ալյոշայի մատը տեսավ ճեղքից, իսկույն ամբողջ թափով բացեց դուռը։

— Եկե՜ք, եկե՜ք այստեղ, ինձ մոտ,— սկսեց գոռալ նա համառորեն ու հրամայական շեշտով,— էլ կարիք չկա հիմարությունների։ Օ՜ տեր աստված, ի՞նչ էիք կանգնել այսքան ժամանակ ու բան չէիք ասում։ Կարող էր արյունաքա՜մ լինել, մամա՜։ Որտե՞ղ եք արել, ինչպե՞ս եք արել։ Ջո՜ւր ամենից առաջ։ Պետք է լվանալ վերքը, պարզապես պաղ ջրի մեջ դնել, որ ցավը կտրվի, և այդպես պահել, այդպես պահել... Շո՜ւտ, ջուր բերեք, մամա՜, ողողման թասիկով բերեք, շո՜ւտ։ Բայց դե շո՜ւտ արեք,— վերջացրեց նա ջղայնորեն։ Կատարելապես վախեցած էր. սոսկումնահար էր եղել Ալյոշայի վերքից։

— Արդյոք չկանչե՞նք Հերցենշտուբեին,— բացականչեց տիկին Խոխլակովան։

— Սպանո՜ւմ եք ինձ, մամա՜։ Ձեր Հերցենշտուբեն կգա ու կասի, թե չի՜ կարողանում հասկանալ։ Ջո՜ւր, ջո՜ւր։ Մամա, ի սեր աստծո, ինքներդ գնացեք, շտապեցրեք Յուլիային, կա-չկա՝ ցցվել-մնացել է մի տեղ, երբե՜ք չի կարող շուտ գալ։ Բայց դե շո՜ւտ, մամա, թե չէ կմեռնեմ...

— Բայց սա չնչին բան է,— գոչեց Ալյոշան, նրանց ախուվախից վախեցած։

Յուլիան վազելով ջուր բերեց։ Ալյոշան մատը դրեց ջրի մեջ։

— Մամա, ի սեր աստծո, ծվատ բերեք, ծվատ, և մեկ էլ այն այրող, պղտոր հեղուկը վերքերի համար... է՜, ի՞նչ էին ասում դրան։ Մենք ունենք դրանից, ունենք, ունենք... Մամա, ինքներդ գիտեք որտեղ է շիշը, ձեր ննջասենյակում՝ աջ կողմի պահարանում, մի մեծ շիշ կա այնտեղ, ծվատ էլ կա...

— Հիմա կբերեմ ամեն ինչ, Lise, միայն թե մի՜ գոռա և մի՜ իրար անցնի։ Տեսնո՞ւմ ես, ի՜նչ քաջությամբ է Ալեքսեյ Ֆյոդորովիչը դիմանում իր դժբախտությանը։ Բայց ո՞ւր կարող էիք այդպես սարսափելի վիրավորել ձեր մատը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։

Տիկին Խոխլակովան շտապ դուրս եկավ։ Lise-ն էլ հենց դրան էր սպասում։

— Նախ և առաջ պատասխանեցեք այս հարցին,— արագարագ սկսեց խոսել նա,— որտե՞ղ եք բարեհաճել այդպես վիրավորել ձեր մատը։ Իսկ հետո բոլորովին այլ բանի մասին եմ խոսելու ձեզ հետ։ Դե՞հ։

Ալյոշան բնազդով զգաց, որ նրա համար թանկ է ժամանակը մինչև մամայի վերադարձը, և շտապ պատմեց իր առեղծվածային հանդիպումը դպրոցականների հետ, շատ բան զանց առնելով ու համառոտելով, բայց և ճիշտ ու հստակ նկարագրելով դեպքը։ Lise-ը, լսելուց հետո, ձեռքերն իրար զարկեց։

— Բայց մի՞թե կարելի է, մի՞թե կարելի է գլուխ դնել լա-կոտների հետ, այն էլ այսպիսի հագուստով,— բարկացավ նա, կարծես թե նույնիսկ իրավունքներ ուներ Ալյոշայի վրա։— Ուրեմն ինքներդ էլ փոքրիկ տղա եք, եթե այդպիսի բան եք անում, ուղղակի ամենափոքրի՞կ տղան, որ կարող է լինել։ Բայց անպայման մի կերպ իմացեք այդ զզվելի տղայի մասին և ամեն ինչ պատմեցեք ինձ, որովհետև ինչ-որ մի գաղտնիք կա այստեղ։ Հիմա երկրորդ բանը, բայց նախ մի հարց, Ալեքսեյ Ֆյոդորովիչ. կարո՞ղ եք, ցավից տանջվելով հանդերձ, խոսել ամենադատարկ բաների մասին, բայց խելամտորեն խոսել։

— Շատ լավ կարող եմ, արդեն այնքան էլ չի ցավում հիմա։

— Որովհետև ջրի մեջ է ձեր մատը։ Պետք է անմիջապես փոխել ջուրը, շուտով կտաքանա։ Յո՛ւլիա, վազիր շուտ, մի կտոր սառույց բեր մառանից և մի նոր թաս ջուր։ Է՛հ, նա էլ գնաց հիմա, գործից խոսեմ. շո՛ւտ, սիրելի Ալեքսեյ Ֆյոդորովիչ, հաճեցեք ետ տալ իմ նամակը, որ երեկ ուղարկեցի ձեզ, շո՛ւտ արեք, որովհետև մաման այս րոպեիս կարող է գալ, իսկ ես չեմ ուզում...

— Նամակը մոտս չէ։

— Ճիշտ չեք ասում, ձեզ մոտ է։ Հենց գիտեի, որ այդպես եք պատասխանելու։ Ձեր այդ գրպանումն է նամակը։ Ամբողջ գիշերն այնպե՞ս եմ զղջացել այդ անմիտ կատակի համար։ Դե իսկույն ետ տվեք նամակը, տվե՛ք։

— Թողել եմ այնտեղ։

— Բայց իմ այդ նամակից հետո, այդ հիմա՞ր կատակից հետո չեք կարող վերջապես մի փոքրիկ աղչկա տեղ դնել ինձ, պստլի՞կ-պստլիկ մի աղջնակ համարել։ Ներողություն եմ խնդրում անմիտ կատակի համար, բայց նամակն անպայման բերեք ինձ, եթե իրոք ձեզ մոտ չէ հիմա, հենց այսօր բերեք, անպայման, անպայմա՞ն։

— Այսօր ոչ մի կերպ չեմ կարող. վանք վերադառնալուց հետո երկու, երեք, գուցե և չորս օր չեմ գալու այլևս ձեզ մոտ, որովհետև հայր Զոսիման...

— Չորս օ՞ր։ Ի՞նչ անմտություն։ Լսեցե՛ք, շա՞տ ծիծաղեցիք իմ վրա։

— Մազաչափ անգամ չեմ ծիծաղել։

— Իսկ ինչո՞ւ։

— Որովհետև լրիվ հավատացի ձեր բոլոր գրածներին։

— Վիրավորո՞ւմ եք ինձ։

— Բնավ երբեք։ Կարդացի թե չէ՝ մտածեցի, որ հենց այդպես էլ լինելու է ամեն ինչ, որովհետև ես, հայր Զոսիմայի վախճանվելուց անմիջապես հետո, պարտավոր եմ դուրս գալ վանքից։ Կշարունակեմ ուսումս և քննություն կտամ, իսկ երբ օրենքով սահմանված տարիքը հասնի՝ կամուսնանանք։ Ես պիտի սիրեմ ձեզ։ Թեև մտածելու ժամանակ չեմ ունեցել տակավին, բայց հավատում եմ, որ ձեզնից լավ կին չեմ կարող գտնել, իսկ սրբահայրս ինձ պատվիրում է ամուսնանալ...

— Բայց ես տխեղծ եմ, բազկաթոռով են ինձ ման ածում,— ծիծաղեց Լիզան՝ այտերը կաս-կարմիր կտրած։

— Ինքս ձեզ պիտի ման ածեմ բազկաթոռով, բայց վստահ եմ, որ դուք կառողջանաք մինչ այդ։

— Բայց խենթ եք դուք,— նյարդայնորեն ասաց Լիզան,— մի կատա՞կ էր, և հանկարծ այսպիսի անմիտ բաներ եք հանում դրանից... Օ՜յ, ահա մաման, գուցե և ճիշտ ժամանակին եկավ։ Մամա՛, ինչպե՞ս եք ուշանում միշտ, կարելի՞ է այսքան երկար սպասեցնել։ Ա՜յ, Յուլիան էլ արդեն սառույցն է բերում։

— Օ՜հ, Lise, մի՛ ճչա, ամենից առաջ՝ դու մի՛ ճչա։ Այդ ճչոցները իմ հոգին... Ի՞նչ կարող էի անել, երբ ինքդ մի ուրիշ տեղ ես խցկել ծվատը... Փնտրեցի՛, փնտրեցի... Կասկածում եմ, որ դիտմամբ այդպես արեցիր։

— Բայց ես ախր չէի կարող իմանալ, որ նա վիրավոր մատով կգա, թե չէ՝ գուցե իրոք դիտմամբ անեի։ Հրեշտակ մամա, սկսում եք չափազանց սրամիտ բաներ ասել։

— Լա՜վ, թող սրամիտ բաներ ասած լինեմ, բայց Lise, այդ ի՞նչ զգացմունքներ ես արտահայտում Ալեքսեյ Ֆյոդորովիչի մատի և այս բոլորի վերաբերյալ։ Ա՜խ, սիրելի Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ոչ թե առանձին երևույթներ են ինձ սպանում, ոչ թե մի ոմն Հերցենշտուբե, այլ բոլորը միասին, ամբողջությամբ վերցրած, ահա սրա՞ն է, որ չեմ կարող դիմանալ։

— Բավական է, մամա, բավական է Հերցենշտուբեի մասին,— ուրախ ծիծաղեց Լիզան,— տվե՛ք շուտ այդ ծվատը, մամա, հեղուկն էլ տվեք։ Սա պարզապես կապարի թրջոց է, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, հիմա հիշեցի անունը, բայց հիանալի բան է այս թրջոցը։ Երևակայեցեք, մամա, գալու ժամանակ փոքր տղաների հետ է կռվել փողոցում, և այդ տղաներից մեկն է կծել մատը, դե ինքն էլ մի փոքրի՞կ, մի պստլի՞կ երեխա չէ՞ միթե,

հա՞։ Եվ նա կարո՞ղ է դրանից հետո ամուսնանալ, մամա։ Որովհետև նա, երևակայեցե՞ք, մամա, նա ամուսնանա՞լ է ուզում։ Պատկերացրեք, որ նա ամուսնացած մարդ է, օ՜յ, ծիծաղելի է, սարսափելի է, չէ՞։

Եվ Lise-ն անընդհատ ծիծաղում էր իր նյարդային, մանրաքրքիջ ծիծաղով, խորամանկորեն նայելով Ալյոշային։

— Է՜, ինչպե՞ս թե ամուսնացած, Lise, որտեղի՞ց հնարեցիր այդ բանը։ Բոլորովին անտեղի էր ասածդ... այնինչ այդ տղան կարող է կատաղած լինել։

— Վա՜յ, մամա՜։ Միթե լինո՞ւմ են կատաղած տղաներ։

— Իսկ ինչո՞ւ չեն լինում, Lise, կարծես հիմարություն եմ ասել։ Դիցուք մի կատաղած շուն է կծել ձեր այդ տղային, նա էլ դարձել է մի կատաղած տղա և ահա իր շրջապատում ուրիշ մեկին է կծում իր հերթին։ Lise-ն ինչ լա՜վ է կապել ձեր մատը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ես երբեք չէի կարողանա այդպես։ Ցավ զգո՞ւմ եք հիմա։

— Շատ թեթև։

— Իսկ ջրից չե՞ք վախենում,— հարցրեց Lise-ը։

— Դե բավական է, Lise, գուցե իրոք շատ հապճեպ մի բան էր կատաղած տղայի մասին ասածս, բայց դու էլ իսկույն պոչից բռնեցիր։ Կատերինա Իվանովնան հենց որ իմացավ ձեր գալը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ուղղակի վազեց մոտս, տենդագին սպասում է ձեզ, տենդագին։

— Է՜հ, մամա՜։ Դուք առանձին գնացեք այնտեղ, իսկ նա չի կարող հիմա գնալ, ցավը շատ է տանջում նրան։

— Բոլորովիչն չի տանջում, շատ հանգիստ կարող եմ գնալ...— ասաց Ալյոշան։

— Ի՞նչ։ Գնո՞ւմ եք։ Այդպե՞ս ուրեմն։ Այդպե՞ս։

— Ի՞նչ կա որ։ Երբ վերջացնեմ այնտեղ, նորից կգամ, և մենք նորից կարող ենք խոսել, որքան որ ուզեք։ Իսկ ես կփափագեի իսկույն տեսնել Կատերինա Իվանովնային, որովհետև, համենայն դեպս, շատ եմ ուզում այսօր հնարավորին չափ շուտ վերադառնալ վանք։

— Մամա՜, վերցրեք ու շուտով տարեք նրան։ Ալեքսեյ Ֆյոդորովիչ, նեղություն մի՛ քաշեք ինձ մոտ գալու։ Կատերինա Իվանովնային տեսնելուց հետո, այլ ուղիղ գնացեք ձեր վանքը, ա՜յդ է ձեր տեղը։ Իսկ ես քնել եմ ուզում, ամբողջ գիշերը չեմ քնել։

— Ա՜խ, Lise, կատակներ ես անում պարզապես, բայց ի՞նչ լավ կլիներ, որ իրոք քնեիր,— բացականչեց տիկին Խոխլակովան։

— Չգիտեմ, թե ի՞նչ էր իմ... Դեռ երեք րոպե էլ կմնամ, եթե ուզեք՝ նույնիսկ հինգ րոպե,— մրմնջաց Ալյոշան։

— Նույնիսկ հի՜նգ։ Դե տարե՞ք շուտով նրան այստեղից, մամա, հրե՜շ է նա։

— Lise, խելքդ հո չե՞ս թոցրել։ Գնանք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, նա չափազանց քմահաճ է այսօր, վախենում եմ, որ ջղայնացնեմ նրան։ Օ՜, դժբախտություն է ջղային կնոջ հետ գործ ունենալը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Բայց գուցե իրոք նրա քունը եկավ ձեզ տեսնելով։ Ինչպե՞ս այդքան շուտ քուն բերեցիք նրա աչքերին, և ի՜նչ բարեբախտություն է դա։

— Ա՜խ, մամա, ի՜նչ սիրուն բաներ սկսեցիք ասել, հոմբուրում եմ ձեզ դրա համար, մայրի՜կս։

— Ես էլ քեզ, Lise։ Լսեցեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— սկսեց արագ-արագ փսփսալ տիկին Խոխլակովան խորհրդավոր ու բանիմաց շեշտով, Ալյոշայի հետ դուրս գալով սենյակից,— ես ոչինչ չեմ ուզում ներշնչել ձեզ, ոչ էլ պարզել նրանց գաղտնիքը, բայց դուք մտեք և ինքներդ կտեսնեք, թե ինչե՞ր են կատարվում այնտեղ։ Ահավոր բան է, ամենաֆանտաստիկ զավեշտն է դա։ Նա սիրում է ձեր եղբորը՝ Իվան Ֆյոդորովիչին, և կաշվից դուրս է գալիս համոզելու համար ինքն իրեն, թե սիրում է ձեր մյուս եղբորը՝ Դմիտրի Ֆյոդորովիչին։ Ահավո՞ր բան է։ Ես ձեզ հետ ներս կմտնեմ, և եթե դուրս չանեն ինձ՝ կմնամ մինչև վերջ։

V

ՋԼԱՏՈՒՄ ՀՅՈՒՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԵՋ

Բայց հյուրասենյակում զրույցը վերջանում էր արդեն։ Կատերինա Իվանովնան սաստիկ հուզված էր, թեև վճռականություն կար դեմքին։ Երբ Ալյոշան ու տիկին Խոխլակովան ներս մտան, Իվան Ֆյոդորովիչն արդեն վեր էր կենում հրաժեշտ տալու։ Դեմքը գունատ էր մի քիչ, և Ալյոշան մտահոգ նայեց եղբորը։ Այս րոպեիս պետք է լուծում գտներ Ալյոշայի կասկածներից մեկը՝ հոգեխռով մի առեղծված, որ որոշ ժամանակից ի վեր տանջում էր նրան։ Մեկ ամսվա ընթացքում արդեն մի քա-

նի անգամ ու տարբեր մարդիկ ներշնչել էին նրան այն միտքը, թե Իվանը սիրում է Կատերինա Իվանովնային և որ, մանավանդ, մտադիր է իրոք Միտյայից «խլել» նրա հարսնացուին։ Դեռ մինչև երեկ հրեշային մի բան էր թվում այդ միտքը, թեև շատ էր մտահոգում նրան։ Ալյոշան իր երկու եղբայրներին էլ սիրում էր ու սարսափում նրանց միջև այդպիսի մրցակցությունից։ Եվ հանկարծ երեկ Դմիտրին ինքն էր ուղղակի հայտարարել, թե ուրախ է նույնիսկ, որ Իվանն իր մրցակիցն է, և որ դա մեծապես կօգնի իրեն՝ Դմիտրիին։ Ի՞նչ բանի կօգնի։ Գրուշենկայի հետ նրա ամուսնանալո՞ւն։ Բայց Ալյոշան վտանգավոր ու ծայրահեղ մի բան էր համարում այդ խնդիրը։ Բացի այդ, մինչև երեկ իրիկուն Ալյոշան անհողդողդ հավատում էր, որ Կատերինա Իվանովնան մեծ հրայրքով ու համառորեն սիրում է Դմիտրիին, բայց հավատում էր մինչև երեկ իրիկուն միայն։ Ավելին, չգիտես ինչու նրան միշտ թվացել էր, որ Կատերինա Իվանովնան չի կարող սիրել Իվանի պես մարդուն, այլ սիրում է Դմիտրիին հենց ինչպես որ է նա, հակառակ այդպիսի սիրո ամբողջ արտառոցությանը։ Իսկ երեկ, երբ ներկա եղավ Գրուշենկայի հետ հանդիպման տեսարանին, իրողությունը հանկարծ այլ կերպ պատկերացավ նրան։ «Ջլատում» բառը, որ հենց նոր արտասանեց տիկին Խոխլակովան, համարյա սարսուռ պատճառեց Ալյոշային, որովհետև հենց այս գիշեր, կիսովին զարթնելով առավոտյան դեմ, նա հանկարծ բացականչել էր՝ «Ջլատո՜ւմ, ջլատո՜ւմ», երևի արձագանքելով իր տեսած երազին։ Իսկ ամբողջ գիշեր իր երազում կրկնվել էր այդ տեսարանը Կատերինա Իվանովնայի և Գրուշենկայի միջև։ Հիմա հանկարծ Ալյոշային շշմեցրեց տիկին Խոխլակովայի բացորոշ ու վճռական հավաստիացումը, թե Կատերինա Իվանովնան սիրում է Իվանին և պարզապես դիտմամբ խաբում է ինքն իրեն, մի տեսակ խաղ անելով, «ջլատելով» իր սեփական հոգին, և Դմիտրիի հանդեպ իր կարծեցյալ սիրով տանջում է ինքն իրեն, իբրև թե ինչ-որ երախտապարտությունից մղված։ «Այո,— մտածեց նա,— գուցե ամբողջ ճշմարտությունը հենց այդ խոսքերի մեջ է»։ Բայց այդ դեպքում ի՞նչ դրության մեջ է Իվանը։ Ալյոշան բնազդով զգում էր, որ Կատերինա Իվանովնայի բնավորությունն ունեցող կինը անպայման պետք է իշխի, և նա կարող է իշխել միայն Դմիտրիի նման մեկի վրա, այլ բնավ երբեք Իվանի։ Որովհետև միայն Դմիտրին կարող էր (ասենք թեկուզ երկար ժամանակի

ընթացքում) հնազանդվել ի վերջո նրան՝ «իրեն իսկ երջանկություն բերելով» (մի բան, որ նույնիսկ ցանկալի էր Ալյոշայի համար), բայց Իվանը՝ ո՞չ, չէր կարողանա հնազանդվել նրան, և այդպիսի հնազանդությունը երջանկություն էլ չէր տա Իվանին։ Էլ չգիտես ինչու՝ Ալյոշան ակամա այդպիսի կարծիք էր կազմել Իվանի մասին։ Եվ ահա բոլոր այս տատանումներն ու խորհրդածությունները վայրկենաբար առկայծեցին ու անցան նրա մտքով հիմա, երբ մտնում էր հյուրասենյակ։ Եվ մի ուրիշ միտք էլ առկայծեց՝ հանկարծակի և անդիմադրելիորեն. «Իսկ գուցե նա ո՞չ մեկին չի սիրում, ո՞չ Իվանին, ոչ էլ Դմիտրիի՞ն»։ Նշեմ, որ Ալյոշան մի տեսակ ամաչում էր իր այդպիսի մտքերից և հանդիմանում էր ինքն իրեն, երբ դրանք հաճախում էին վերջին ամսվա ընթացքում։ «Է՜հ, ի՞նչ եմ հասկանում ես սիրո և կանանց խնդիրներից և ինչպե՞ս կարող եմ այսպիսի եզրակացություններ հանել»,— մտածում էր նա կշտամբելով իրեն՝ իր ամեն մի այդպիսի մտքից կամ ենթադրությունից հետո։ Եվ սակայն անկարելի էր չմտածել։ Բնազդով հասկանում էր, որ հիմա, օրինակ, այդ մրցակցությունը չափազանց կարևոր հարց է իր երկու եղբայրների ճակատագրում և շատ-շատ բան է կախված դրանից։ «Մի սողունը կուլ կտա մյուս սողունին»,— ասաց երեկ Իվանը, ջղայնացած խոսելով իրենց հոր ու Դմիտրիի մասին։ Ուրեմն Դմիտրին սողուն է նրա աչքում և գուցե արդեն վաղո՞ւց է սողուն։ Գուցե այն օրի՞ց, երբ Իվանը ճանաչեց Կատերինա Իվանովնային։ Այդ բառերն անշուշտ ակամա թռան երեկ Իվանի բերնից, բայց հենց կարևորն էլ այն է, որ ակամա թռան։ Եթե այդպես է, էլ ի՞նչ հաշտություն։ Ընդհակառակը, նոր պատճառներ չե՞ն ծագում ատելության ու թշնամության համար՝ իրենց ընտանիքի մեջ։ Բայց մանավանդ՝ ո՞ւմ կարեկցի ինքը, Ալյոշան։ Եվ ի՞նչ ցանկանա եղբայրներից յուրաքանչյուրին։ Երկուսն էլ սիրում է, բայց այսպիսի ահավոր հակասությունների մեջ ի՞նչ մաղթի ամեն մեկին։ Այս խառնաշփոթության մեջ կարելի է բոլորովին շվարել, իսկ Ալյոշայի սիրտը չէր կարող անորոշություն հանդուրժել, որովհետև նրա սերը միշտ գործնական բնույթ ուներ։ Նա չէր կարող սիրել ու ձեռքերը ծալած մնալ, սիրելուց հետո անմիջապես գործի էր անցնում և սկսում օգնել։ Իսկ դրա համար պետք է մի նպատակ դներ, պետք է հաստատ իմանար, թե ինչն է լավ ու անհրաժեշտ նրանցից յուրաքանչյուրին, և նպատակի ճշտությանը համոզվելուց հետո պետք է ամեն մեկին

օգներ բնականաբար։ Բայց հաստատուն նպատակի փոխարեն, անորոշություն ու շփոթ էր տեսնում ամեն կողմ։ «Ջլատո՞ւմ». հիմա արդեն ասվե՛ց բառը։ Սակայն ինքը ի՞նչ կարող էր հասկանալ թեկուզ այդ ջլատումից։ Այս ամբողջ խառնակության մեջ առաջին բառն իսկ չի հասկանում։

Տեսնելով Ալյոշային, Կատերինա Իվանովնան փութով և ուրախությամբ ասաց Իվան Ֆյոդորովիչին, որն արդեն վեր էր կացել գնալու.

— Մի րոպե։ Մի րոպե ևս մնացեք։ Ուզում եմ ահա ա՛յս մարդու կարծիքը լսել, մի մարդու, որին վստահում եմ իմ ամբողջ էությամբ։ Կատերինա Օսիպովնա, դուք էլ մի՛ գնացեք,— ավելացրեց նա, դառնալով տիկին Խոխլակովային։ Ալյոշային նստեցրեց իր մոտ, իսկ Խոխլակովան նստեց դիմացը՝ Իվան Ֆյոդորովիչի կողքին։

— Այստեղ բոլորն էլ իմ բարեկամներն են, իմ սիրելի բարեկամները, ուրիշ մարդ չունեմ աշխարհում,— ջերմորեն սկսեց նա այնպիսի ձայնով, որի մեջ տառապյալի անկեղծ արցունքներն էին դողում, և Ալյոշայի սիրտն իսկույն նրա կողմը հակվեց նորից։— Դուք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, դուք երեկ ականատես եղաք այդ... զարհուրանքին և տեսաք, թե ինչպիսին էի ես։ Դուք չտեսաք այդ բանը, Իվան Ֆյոդորովիչ, նա տեսավ։ Ի՞նչ մտածեց իմ մասին երեկ՝ չգիտեմ, գիտեմ միայն մի բան, որ եթե նույնը կրկնվեր այսօր, այս րոպեիս, երեկվա նույն զգացմունքները կարտահայտեի նորից. նույն զգացմունքները, նույն խոսքերը և նույն շարժումները։ Հիշում եք իմ շարժումները, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, դուք ինքներդ արգելք եղաք հատկապես իմ մի շարժմանը... (Ասելով այդ, Կատերինա Իվանովնան կարմրեց և աչքերը փայլեցին)։ Հայտարարում եմ ձեզ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, որ ես ոչ մի բանի հետ չեմ կարող հաշտվել։ Լսեցեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, նույնիսկ չգիտեմ, թե սիրո՞ւմ եմ արդյոք նրան հիմա։ Խղճալի դարձավ նա ինձ համար, դա սիրո վատ վկայություն է։ Եթե սիրեի նրան, եթե շարունակեի սիրել, գուցե հիմա չէի խղճա, այլ ընդհակառակը՝ կատեի նրան...

Նրա ձայնը դողաց, և արցունքի կաթիլներ պսպղացին թարթիչներին։ Ալյոշան սարսռաց ներքուստ։ «Այս աղջիկը ճշմարտասեր է ու անկեղծ,— մտածեց նա,— և... և այլևս չի՞ սիրում Դմիտրիին»։

— Ճի՛շտ է, ճի՛շտ,— բացականչեց տիկին Խոխլակովան։

— Սպասեցեք, սիրելի Կատերինա Օսիպովնա, ես գլխավորը չասացի, չասացի այն վերջնական որոշումը, որ ընդունեցի այս գիշեր։ Զգում եմ, որ իմ որոշումն ահավոր բան է՝ ի՛նձ համար, բայց և նախազգում եմ, որ այլևս ոչ մի կերպ չեմ փոխի, ո՛չ մի կերպ, հենց այդպես էլ լինելու է իմ ամբողջ կյանքում։ Իմ սիրելի, իմ բարի, իմ մշտական ու մեծահոգի խորհրդատուն ու խորաթափանց սրտախույզը, իմ միա՛կ բարեկամը, որ ունեմ աշխարհում՝ Իվան Ֆյոդորովիչը հավանություն է տալիս ինձ ամեն ինչում և դրվատում է իմ որոշումը... Նա իմ որոշումը գիտե արդեն։

— Այո, հավանություն եմ տալիս,— ասաց Իվանը մեղմ, բայց աներեր ձայնով։

— Բայց ես ցանկանում եմ, որ Ալյոշան էլ (ա՛խ Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ներեցեք, որ պարզապես Ալյոշա կոչեցի ձեզ), ցանկանում եմ, որ Ալեքսեյ Ֆյոդորովիչն էլ հենց հիմա ասի ինձ իմ երկու բարեկամների առաջ՝ ճի՞շտ եմ ես, թե ոչ։ Բնազդորեն նախազգում եմ, որ դուք, Ալյոշա, սիրելի եղբայր իմ (որովհետև դուք սիրելի եղբա՛յր եք ինձ համար),— ոգեշնչված խոսեց նա նորից, Ալյոշայի պաղ ձեռքն առնելով իր տաք ձեռքերի մեջ,— նախազգում եմ, որ ձեր որոշումը, ձեր հավանությունը, չնայած իմ բոլոր տանջանքներին, հանգստություն կտա ինձ, որովհետև ձեր խոսքերից հետո կխաղաղվեմ ես ու կհաշտվեմ, նախազգո՛ւմ եմ այդ։

— Չգիտեմ, թե ինչ եք հարցնելու,— ասաց Ալյոշան կարմրած դեմքով,— գիտեմ միայն, որ սիրում եմ ձեզ և այս րոպեիս ձեզ ավելի՛ եմ երջանկություն ցանկանում, քան ինքս ինձ... Բայց չէ՞ որ ես ոչինչ չեմ հասկանում այսպիսի խնդիրներից...— հանկարծ, չգիտես ինչու, շտապեց ավելացնել նա։

— Այսպիսի խնդիրներում, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, այսպիսի խնդիրներում գլխավորը պատիվն ու պարտականությունն է հիմա, և դեռ մի բան էլ, չգիտեմ ինչ, բայց ավելի բարձր մի բան, գուցե նույնիսկ պարտականությունից էլ բարձր։ Սիրտս է ինձ թելադրում այդ անհաղթահարելի զգացումը և այդ զգացումն անդիմադրելիորեն քաշում է ինձ։ Բայց այդ ամբողջը երկու բառով կարելի է ասել. որոշել եմ արդեն,— հանդիսավոր կերպով սկսեց Կատերինա Իվանովնան,— եթե նույնիսկ նա ամուսնանա այդ... արարածի հետ, որին երբեք, երբեք չեմ կարող ներել, այնուամենայնիվ չեմ լքի նրան։ Այսուհետև երբեք, երբե՛ք այլևս չեմ

լքի նրան,— ասաց նա մի տեսակ տմուլն, բռնազբոսիկ հափշտակությամբ ջլատելով ինքն իրեն։— Այսինքն ոչ թե քարշ եմ գալու նրա ետևից, ոչ թե ամեն րոպե երևալու եմ աչքին, ոչ թե տանջելու եմ նրան, օ ո՜չ, մի ուրիշ քաղաք կգնամ, ո՜ւր որ ուզեք, բայց իմ ամբողջ կյանքում, իմ ամբո՜ղջ կյանքում պիտի աչքս վրան պահեմ անդուլ, անդադար։ Իսկ երբ նա դժբախտ դառնա այդ կնոջ հետ, և դա այդպես է լինելու անպայման և անմիջապես, թո՛ղ գա ինձ մոտ և կգտնի բարեկամ, կգտնի քույր... Միմիայն քույր, անշուշտ, և միայն այդպես՝ առհավե՜տ, բայց նա վերջապես կհամոզվի, որ այդ քույրն իրոք նրա քույրն է, նրան սիրող ու նրա համար իր ամբողջ կյանքը զոհաբերած քույրը։ Ես համառորեն կհետապնդեմ, կհասնեմ այն բանին, որ նա վերջապես ճանաչի ինձ և սիրտը լրի՜վ բանա իմ առաջ առա՜նց ամաչելու,— բացականչեց նա մի տեսակ մոլուցքի մեջ ընկած։—Կլինեմ նրա աստվածը, որին աղոթելու է նա, և գոնե այդքանը պարտական է ինձ՝ իր դավաճանության փոխարեն, այն տառապանքի փոխարեն, որ կրեցի երեկ նրա պատճառով։ Եվ թող իր ամբողջ կյանքում տեսնի, որ ես իմ ամբո՜ղջ կյանքի ընթացքում հավատարիմ եմ լինելու նրան և իմ մե՛կ անգամ տված խոսքին, չնայած որ նա անհավատարիմ եղավ ու դավաճանեց։ Ես պիտի... Ես պարզապես միջոց պիտի դառնամ նրա երջանկության համար և կամ, ինչպե՞ս ասեմ, գործիք դառնամ, մեքենա դառնամ նրա երջանկության համար՝ իմ ամբողջ կյանքում, ամբո՜ղջ կյանքում, և այնպես, որ նա՛ էլ իր ամբողջ կյանքում տեսնի այդ բանը։ Ա՛յս է ահա իմ որոշումը։ Իվան Ֆյոդորովիչը ծայր աստիճան հավանություն է տալիս ինձ։

Նրա շունչը կտրվում էր։ Գուցե կուզենար շատ ավելի արժանավայել, ճարտար ու բնական կերպով արտահայտել իր միտքը, բայց չափազանց հապճեպ ու չափազանց մերկապարանոց մի բան դուրս եկավ։ Նրա խոսքը լի էր երիտասարդական տաքարյունությամբ, շատ բան էլ երեկվա նրա հուզագրգիռ վիճակից էր գալիս պարզապես, իր հպարտությունը ցույց տալու պահանջից։ Ինքն էլ զգաց այդ։ Դեմքը մի տեսակ մռայլվեց հանկարծ, աչքերի արտահայտությունն անախորժ դարձավ։ Ալյոշան իսկույն նկատեց այդ ամբողջը, և նրա սիրտը շարժվեց կարեկցանքով։ Դա բավական չէր, մի բան էլ Իվանն ավելացրեց։

— Ես իմ միտքը հայտնեցի միայն,— ասաց նա։— Որևէ մի ուրիշ օրիորդ ասեր այս բոլորը՝ շինծու կլիներ, բռնազբոսիկ, բայց ձեր պարագային՝ ոչ։ Ուրիշն իրավացի չէր լինի, բայց դուք իրավացի եք։ Զգիտեմ, թե ինչպես պատճառաբանեմ, բայց տեսնում եմ, որ վերին աստիճանի անկեղծ եք դուք, ուստի և իրավացի եք...

— Բայց ախր միայն ա՛յս րոպեիս է այդպես... Իսկ ի՞նչ է նշանակում այս րոպեն։ Պարզապես երեկվա վիրավորանքը, ուրիշ ոչինչ։ Ահա՛ թե ինչ է նշանակում,— վրա բերեց մեկեն տիկին Խոխլակովան, որ ակներևորեն չէր ուզում միջամտել, բայց չդիմացավ ու շատ ճշմարիտ մի միտք արտահայտեց հանկարծ։

— Այդպես է, այդպես,— ընդհատեց Իվանն անակնկալորեն տաքանալով ու հայտնապես դժգոհ, որ կտրեցին իր խոսքը,— այդպես է, բայց ուրիշի համար այս րոպեն երեկվա տապավորության հետևանքը կլիներ միայն, և մեկ րոպե կլիներ պարզապես, իսկ Կատերինա Իվանովնայի բնավորությամբ՝ այս րոպեն տևելու է նրա ամբողջ կյանքում։ Այն, ինչ ուրիշների համար մի խոստում է լոկ, նրա համար հավիտենական, ծանր, գուցե և մռայլ, բայց անդուլ պարտականություն է։ Եվ նա այդ պարտականությունը կատարելու զգացումով է սնվելու։ Ձեր կյանքը, Կատերինա Իվանովնա, սրանից հետո անցնելու է սեփական զգացումների, սեփական սխրագործության ու սեփական վշտի տառապագին զննումով, բայց հետագայում այդ տառապանքը կմեղմանա, և ձեր կյանքն այլևս կդառնա մի քաղցր հայեցողություն, որով կմբոշխնեք ձեր միանգամ ընդմիշտ իրագործած աննկուն ու հպարտ մտադրությունը՝ իր տեսակի մեջ իսկապես հպարտ, համենայն դեպս անհուսալիորեն հանդուգն, բայց ձեզ համար հաղթանակ դարձած մտադրությունը։ Եվ այդ գիտակցությունն ի վերջո ամենալիակատար գոհունակությունը կպարգևի ձեզ և կհաշտվեք մնացյալ բոլոր բաների հետ...

Ողղակի մի տեսակ քինախնդրությամբ ասաց նա այս բոլորը, երևի դիտմամբ, գուցե նույնիսկ չուզելով թաքցնել իր միտումը, այսինքն՝ որ դիտմամբ է ասում ու հեգնում է։

— Օ՜ աստված իմ, ինչ սխա՜լ է այդ ամբողջը,— բացականչեց նորից տիկին Խոխլակովան։

— Ալեքսեյ Ֆյոդորովիչ, դո՜ւք ասացեք։ Ես տանջալիորեն պետք ունեմ իմանալու, թե դո՜ւք ինչ կասեք ինձ,— բացա-

կանչեց Կատերինա Իվանովնան և հանկարծ սկսեց ողորմագին արտասվել։ Ալյոշան վեր կացավ բազմոցից։

— Բան չկա, բան չկա,— շարունակեց նա լալով,— ջղերս քայքայվել են պարզապես, գիշերը չեմ քնել, բայց ձեզ ու ձեր եղբոր նման բարեկամների կողքին դեռ ամուր եմ զգում ինձ... որովհետև գիտեմ... երկուսդ էլ ինձ չեք լքի երբեք...

— Դժբախտաբար ես վաղն իսկ գուցե Մոսկվա մեկնեմ ու երկար ժամանակով հեռանամ ձեզնից... Եվ դա անխուսափելի է դժբախտաբար...— ասաց հանկարծ Իվան Ֆյոդորովիչը։

— Վա՜ղը, Մոսկվա՜,— այլայլվեց հանկարծ Կատերինա Իվանովնայի ամբողջ դեմքը,— բայց... բայց աստվա՜ծ իմ, ի՜նչ բարեբախտություն է դա,— աղաղակեց նա վայրկենապես փոխված ձայնով և վայրկենապես կտրեց լացը, այնպես որ արցունքի հետքն էլ չմնաց։ Հենց վայրկենապես կատարվեց նրա մեջ այդ տարօրինակ փոփոխությունը, որ չափազանց զարմացրեց Ալյոշային. խեղճ, վիրավորված աղջկա փոխարեն, որ հենց նոր արտասվում էր՝ մի տեսակ ջլատվելով ներքուստ, հանկարծ երևաց կատարելապես ինքնազուսպ կինը, որ նույնիսկ չափազանց գոհ էր, կարծես հանկարծ ուրախացել էր մի բանից։

— Օ՜, բարեբախտությունը ոչ թե այն է, որ ես հեռու եմ լինելու ձեզնից, իհա՜րկե ոչ,— կարծես հանկարծ շտկեց նա իր խոսքը, նրբակիրթ օրիորդի քաղցր ժպիտով,— ձեզ նման բարեկամը չի կարող այդպիսի բան մտածել։ Ընդհակառակը, ես չափազանց դժբախտ եմ, որ զրկվում եմ ձեզնից (նա հանկարծ թափով նետվեց դեպի Իվան Ֆյոդորովիչը, բռնեց նրա երկու ձեռքերն ու սեղմեց կաթոգին)։ Իմ ասած բարեբախտությունն այն է, որ հիմա դուք ինքներդ, անձամբ, առիթ կունենաք իմ վիճակի մասին պատմելու Մոսկվայում, մորաքրոջս ու Ագաշային, նկարագրելու այս ամբողջ մղձավանջը, որի մեջ գտնվում եմ ներկայիս, կատարելապես անկեղծ լինելով Ագաշայի հետ, բայց խնայելով սիրելի մորաքրոջս, այնպես, ինչպես դո՜ւք կարող եք անել։ Ձեք կարող պատկերացնել, թե ի՜նչ դժբախտ էի երեկ և այս առավոտ, երբ շվարել մնացել էի, թե ինչպե՞ս գրեմ նրանց այդ սարսափելի նամակը... որովհետև նամակում երբեք, ոչ մի կերպ չես կարող նկարագրել այս բաները... Իսկ հիմա ինձ համար հեշտ կլինի գրելը, որովհետև դուք անձամբ ներկա կլինեք այնտեղ ու ամեն ինչ կբացատրեք։ Օ՜, որքան ուրախ եմ։ Բայց մի՜այն դրա համար եմ ուրախ, հա-

վատացեք ինձ դարձյալ։ Դուք, հենց դուք ինձ համար անփոխարինելի եք անշուշտ... Իսկույն վազեմ նամակը գրելու,— վերջացրեց նա հանկարծ և նույնիսկ սենյակից դուրս գալու մի քայլ արեց։

— Բայց Ալյո՞շան։ Ալեքսեյ Ֆյոդորովիչի կարծի՞քը, որ այնպե՞ս ուզում էիք լսել անպայման,— գոչեց տիկին Խոխլակովան։ Խայթող ու զայրացկոտ մի շեշտ կար նրա ասածի մեջ։

— Չեմ մոռացել,— կանգ առավ հանկարծ Կատերինա Իվանովնան,— իսկ ինչո՞ւ այդքան թշնամաբար եք վերաբերվում ինձ այսպիսի բոպեին, Կատերինա Օսիպովնա,— ասաց նա դառն, բորբոքուն հանդիմանանքով։— Ասածս պնդում եմ նորից։ Անհրաժեշտ է ինձ նրա կարծիքը, ավելին՝ նրա որոշումն է ինձ հարկավոր։ Նա ինչ որ ասի, այնպես էլ պիտի լինի. ահա թե ինչ աստիճան, ընդհակառակը, ծարավի եմ ձեր խոսքին, Ալեքսեյ Ֆյոդորովիչ... Բայց ի՞նչ է պատահել ձեզ։

— Երբե՛ք մտքովս չէր անցնում, չե՞մ կարող հասկանալ այս բանը,— վշտագին բացականչեց հանկարծ Ալյոշան։

— Ի՞նչը, ի՞նչը։

— Նա Մոսկվա է գնում, իսկ դուք աղաղակ եք բարձրացնում, թե ուրա՞խ եք։ Դիտմա՛մբ այդպես արեցիք։ Իսկ հետո անմիջապես սկսեցիք բացատրել, թե դրա համար չէ, որ ուրախ եք, այլ ընդհակառակը՝ ցավում եք, որ... կորցնում եք ձեր բարեկամին։ Բայց այդ էլ դիտմամբ արեցիք... կարծեք թատրոնում... կատակերգության մեջ դե՛ր խաղացիք...

— Թատրոնո՞ւմ։ Ինչպե՞ս թե... Սա՞ ինչ բան է,— բացականչեց Կատերինա Իվանովնան խորապես զարմացած, կատարմիր դառնալով ու հոնքերը կիտելով։

— Բայց որքան էլ հավատացնեք նրան, թե ձեզ ցավ է պատճառում բարեկամից զրկվելը, համենայն դեպս ուղղակի նրա երեսին պնդում եք, որ նրա մեկնելն է բարեբախտությունը...— ասաց Ալյոշան՝ արդեն բոլորովին շնչակտուր։ Նա կանգնած էր սեղանի մոտ ու չէր նստում։

— Ի՞նչ է ձեր ասածը, չեմ հասկանում...

— Ինքս էլ չգիտեմ... Կարծես հանկարծ մի լույս ծագեց մտքիս մեջ... Գիտեմ, որ լավ չեմ ասում, բայց համենայն դեպս ասեմ ամեն ինչ,— շարունակեց Ալյոշան նույն զողացող, սայթաքուն ձայնով։— Այդ լույսի տակ տեսնում եմ, որ դուք գուցե բնավ չեք սիրում Դմիտրիին... հենց սկզբից... Եվ Դմիտրին էլ

նույնպես, գուցե բնավ չի սիրում ձեզ... հենց սկզբից... այլ միայն հարգում է... Ես, ճիշտն ասած, չգիտեմ, թե հիմա ինչպես եմ հանդգնում ասելու այս բոլորը, բայց պե՛տք է որ մեկն ու մեկը ճշմարտությունն ասի... որովհետև այստեղ ոչ ոք չի ուզում ասել ճշմարտությունը....

— Ի՞նչ ճշմարտություն,— ճչաց Կատերինա Իվանովնան, և հիստերիկ մի բան զնգաց նրա ձայնի մեջ։

— Ասեմ, թե ինչ,— թոթովեց Ալյոշան այնպիսի զգացումով, որ կարծես տանիքից վար էր գլորվում,— կանչեցեք հիմա Դիմիտրիին... ես կգտնեմ նրան... և թող գա այստեղ, բռնի ձեր ձեռքից, հետո բռնի Իվանի ձեռքից և միացնի ձեր ձեռքերը։ Որովհետև դուք տանջում եք Իվանին՝ պարզ այն պատճառով, որ սիրում եք նրան... և տանջում եք, որովհետև Դիմիտրիին սիրում եք հոգեկան ջլատումով... ոչ թե իսկական սիրով... որովհետև ինքներդ այդպես համոզել եք ձեզ...

Ալյոշան ընդհատեց իր խոսքն ու լռեց։

— Դուք... դուք... կրոնախև երեխա՛ եք դուք, ա՛յ թե ինչ եք,— կարճ ու կոպիտ պատասխանեց Կատերինա Իվանովնան՝ արդեն գունատված դեմքով ու զայրույթից ծամածռված շրթունքներով։ Իվան Ֆյոդորովիչը հանկարծ ծիծաղեց ու վերկացավ։ Գլխարկը ձեռքին էր։

— Սխալվեցիր, իմ բարի Ալյոշա,— ասաց նա այնպիսի արտահայտությամբ, որ Ալյոշան դեռ երբեք չէր տեսել նրա դեմքին. երիտասարդական անկեղծություն և ուժեղ, անդիմադրելիորեն բացսիրտ զգացում կար այդ արտահայտության մեջ։— Կատերինա Իվանովնան երբեք չի սիրել ինձ։ Միշտ էլ գիտեր, որ ես սիրում եմ իրեն, թեև երբեք մի բառ անգամ չեմ ասել իմ սիրո մասին, գիտեր, բայց ինքը չի սիրել ինձ։ Բարեկամն էլ չեմ եղել ոչ մի անգամ, ոչ մի օր հպարտ օրիորդը կարիք չուներ իմ բարեկամության։ Ինձ իր մոտ պահում էր, որպեսզի մշտապես վրեժ լուծի։ Ինձնից և իմ գլխին է վրեժ լուծել այն բոլոր վիրավորանքների համար, որ անընդհատ և ամենրոպե կրել է Դմիտրիից այսքան ժամանակ, վիրավորանքներ՝ նրանց առաջին իսկ հանդիպումից սկսած... Որովհետև՝ հենց այդ առաջին հանդիպումն էլ որպես վիրավորանք է մնացել նրա սրտում։ Ահա՛ թե ինչպիսին է նրա սիրտը։ Մինչև հիմա՝ նստել ու Դմիտրիի հանդեպ նրա սիրո խոսքերն եմ լսել շարունակ, ուրիշ ոչինչ։ Հիմա գնում եմ այլևս, բայց գիտցեք, Կատերինա

Իվանովնա, դուք իսկապես նրա՛ն եք սիրում միայն։ Եվ որքան ավելի վիրավորի ձեզ, այնքան ավելի ու ավելի եք սիրելու։ Այս է ահա ձեր ջլատումը։ Ինչպես որ է նա, հենց այնպես էլ սիրում եք նրան, ձեզ վիրավորո՛ղ Դմիտրիին եք սիրում։ Եթե նա ուղղվեր, դուք անմիջապես կլքեիք նրան և բոլորովին կդադարեիք սիրելուց։ Բայց նա ձեզ պետք է, որպեսզի անընդհատ ներհայեցությամբ ըմբոշխնեք ձեր հավատարմության սխրանքը և նրան կշտամբեք անհավատարմության համար։ Եվ այս ամբողջը գալիս է ձեր հպարտությունից։ Օ՜, ինչքան ասես նվաստացում և ստորացում կա դրա մեջ, բայց հպարտությունից է գալիս այդ ամբողջը... Ես չափից ավելի ջահել եմ և չափից ավելի ուժեղ եմ սիրել ձեզ։ Գիտեմ, որ այս բանը պետք չէ ասեի ձեզ, և որ ինձ համար ավելի արժանավայել կլիներ պարզապես ցտեսություն ասել ձեզ ու դուրս գնալ. ձեզ համար էլ այնքան վիրավորական չէր լինի։ Բայց ի՞նչ արած, հեռու տեղ եմ գնում և այլևս երբեք չեմ գալու։ Գնում եմ առհավետ... Չեմ ուզում... նստել ջլատման կողքին... Բայց էլ չեմ կարողանում կարգին խոսել, ամեն ինչ ասացի... Մնաք բարով, Կատերինա Իվանովնա։ դուք չեք կարող ինձ վրա բարկանալ, որովհետև ես ձեզնից հարյուրապատիկ ավելի եմ պատժված. պատժված եմ արդեն միայն նրանով, որ էլ երբեք չեմ տեսնելու ձեզ։ Մնաք բարով։ Կարիք չունեմ ձեր ձեռքը սեղմելու։ Դուք այնքան գիտակցորեն եք ինձ տանջել, որ այս պահիս չեմ կարող ներել ձեզ։ Հետագայում կներեմ, իսկ հիմա չեմ ուզում ձեր ձեռքը։

Den Dank, Dame, begehr ich nicht[1],—

ավելացրեց նա ծռմռված ժպիտով, բայց և բոլորին անընդհատ ապացուցելով, որ նույնպես կարող է Շիլլեր կարդալ անգիր անելու չափ, մի բան, որին դժվար թե հավատար Ալյոշան մինչ այդ։ Նա դուրս ելավ սենյակից, առանց հրաժեշտ տալու նույնիսկ տանտիրուհուն՝ տիկին Խոխլակովային։ Ալյոշան ձեռքերն իրար զարկեց։

— Իվա՜ն,— գոռաց նրա ետևից, ասես գլուխը կորցնելով,— ե՜տ դարձիր, Իվա՜ն։ Չէ՜, չէ՜, հիմա էլ ոչ մի կերպ ետ չի գա,— բացականչեց նա նորից վշտագին պայծառատեսությամբ,— բայց ես եմ, ե՜ս եմ մեղավորը, ե՜ս սկսեցի։ Իվանը ոխով էր

[1] Վարձատրություն չեմ հայցում, տիկի՛ն (գերմ.)։

խոսում, լավ չէր դա, լավ չէր։ Անարդար էր, քինախնդիր... Նա նորից պետք է գա այստեղ, պետք է վերադառնա, վերադառնա՜...— բացականչում էր Ալյոշան խելահեղորեն։

Կատերինա Իվանովնան հանկարծ մյուս սենյակը գնաց։

— Դուք ոչ մի վատ բան չարեցիք, դուք հրաշալի վարվեցիք, հրեշտակի նման,— արագ-արագ ու հիացմունքով շշնջաց տիկին Խոխլակովան վշտահար Ալյոշային։— Ես ամեն ջանք ի գործ կդնեմ, որ Իվան Ֆյոդորովիչը մնա, չմեկնի...

Նրա դեմքը փայլում էր ուրախությամբ, մեծագույն դառնություն պատճառելով Ալյոշային։ Բայց հանկարծ վերադարձավ Կատերինա Իվանովնան։ Ձեռքին երկու վարդագույն հարյուրանոց բանկոտոմս կար։

— Մի մեծ խնդրանք ունեմ ձեզնից, Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— սկսեց նա, ուղղակի դիմելով Ալյոշային, երևութապես հանդարտ ու հավասարակշիռ ձայնով, ասես իրոք ոչինչ չէր պատահել։— Մի շաբաթ առաջ, այո, կարծեմ մի շաբաթ առաջ էր, Դմիտրի Ֆյոդորովիչը մի անզուսպ ու անարդարացի բան արեց, շատ այլանդակ մի բան։ Այստեղ մի գինետուն կա՝ այլանդակ մի վայր։ Այդ գինետանը նա հանդիպել է այն պաշտոնաթող սպային, այն փոխկապիտանին, որին ձեր հայրիկն օգտագործում էր իր որոշ գործերի համար։ Չգիտես ինչու զայրանալով փոխկապիտանի վրա, Դմիտրի Ֆյոդորովիչը բռնել է նրա մորուքից և, բոլորի առաջ, այդպես ստորացուցիչ ձևով քաշել-հանել է նրան փողոց ու փողոցում էլ դեռ բավական ժամանակ քարշ է տվել։ Եվ ասում են՝ այդ փոխկապիտանի տղան, դեռ մի փոքր երեխա, որ սովորում է այստեղի դպրոցում, տեսել է այդ բանը և շարունակ վազել է նրանց կողքից, բարձրաձայն լալով աղաչել է իր հոր համար, այս ու այն կողմ է նետվել ու խնդրել բոլորից, որ պաշտպանեն նրան, այնինչ բոլորն էլ ծիծաղել են։ Ներեցեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ես չեմ կարող առանց վրդովմունքի հիշել նրա այդ ամոթալի արարքը... այնպիսի մի արարք, որի նման բաները միայն ու միայն Դմիտրի Ֆյոդորովիչը կարող է անել իր զայրույթի պահին... և իր կրքերի՞ց մոլեգնած։ Պատմել անգամ չեմ կարող, ի վիճակի չեմ... խոսք չեմ գտնում ասելու։ Հարցուփորձ արեցի այդ անարգյալի մասին և իմացա, որ շատ աղքատ մարդ է։ Սենեգիրյով է ազգանունը։ Ինչ-որ հանցանք է գործել ծառայության մեջ, հեռացրել են բանակից. չեմ կարող ձեզ պատմել նրա արածը։ Եվ հիմա նա ստրկաբարոյական աղ-

քատության մեջ է ընկել իր ընտանիքի հետ, իր դժբախտ ընտանիքի հետ՝ հիվանդ երեխաներ ու կին, և կարծեմ կինն էլ խելագար է։ Արդեն վաղուց է ապրում այստեղ, քաղաքում, ինչ-որ գործ է անում, մի տեղ գրագիր է եղել, իսկ հիմա հանկարծ ոչինչ չեն վճարում նրան։ Երբ մի հայացք նետեցի ձեզ վրա... այսինքն մտածեցի... չգիտեմ, մի տեսակ շփոթվում եմ... գիտե՞ք, ուզում էի խնդրել ձեզ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, իմ բարի, շա՜տ բարի Ալեքսեյ Ֆյոդորովիչ, որ գնայիք նրա մոտ, մի պատրվակ գտնեիք, մտնեիք նրանց տունը, այսինքն այդ փոխկապիտանի տունը,— օ՜ աստված իմ, ինչպե՜ս եմ սայթաքում,— և նրբանկատորեն, զգուշությամբ, հենց ինչպես դո՛ւք միայն կարող եք անել (Ալյոշան հանկարծ կարմրեց), մի կերպ տայիք նրան այս օժանդակությունը, ահա, երկու հարյուր ռուբլի։ Կընդունի անկասկած... այսինքն, համոզեիք, որ ընդունի... Կամ էլ՝ չէ, ի՞նչ էի ուզում ասել։ Հասկանո՞ւմ եք, սա ոչ թե փոխհատուցում է հաշտության համար, որպեսզի նա գանգատ չներկայացնի (որովհետև ուզում էր, կարծեմ, գանգատ ներկայացնել), այլ պարզապես կարեկցանքի նշան է, օգնելու ցանկություն, իմ կողմից, ի՛մ կողմից, Դմիտրի Ֆյոդորովիչի հարսնացուի՛ կողմից, ոչ թե նրա... Մի խոսքով, դուք կարող եք ձևը գտնել... Ինքս կգնայի, բայց դուք ինձնից շատ ավելի լավ կկարողանաք։ Նա ապրում է Օզերնայա փողոցի վրա, Կալմիկովա անունով քաղքենուհու տանը... Ի սեր աստծո, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, արե՛ք ինձ համար այս բանը, իսկ հիմա... հիմա ես մի քիչ... հոգնած եմ։ Ցտեսություն...

Նա հանկարծ այնքան արագ շրջվեց ու նորից անհայտացավ դռան վարագույրի ետին, որ Ալյոշան չհասցրեց նույնիսկ մի բառ ասել, իսկ նա խոսել էր ուզում։ Ուզում էր ներողություն խնդրել, մեղադրել ինքն իրեն, մի որևէ բան ասել վերջապես, որովհետև սիրտը լցված էր և ոչ մի կերպ չէր ուզում սենյակից դուրս գալ առանց դրա։ Բայց տիկին Խոխլակովան բռնեց նրա ձեռքից և իր հետ դուրս տարավ։ Նախասենյակում նորից կանգնեցրեց նրան, ինչպես քիչ առաջ։

— Հպարտ աղջիկ է, ինքն իր դեմ է մաքառում, սակայն բարի՜ է, հմայիչ, վեհա՜նձն,— կիսաշշուկով բացականչում էր տիկին Խոխլակովան։— Օ՜, ինչպե՜ս եմ սիրում նրան, երբեմն հատկապես սիրում, և հիմա որքա՜ն ուրախ եմ նորից ամեն ինչի, ամե՜ն ինչի համար։ Սիրելի՜ Ալեքսեյ Ֆյոդորովիչ, դուք

չգիտեք ախր, հիմա գիտցե՛ք ուրեմն՝ մենք բոլորս, բոլորս՝ ես, նրա երկու մորաքույրերը, մի խոսքով բոլորս, նույնիսկ Lise-ը, արդեն մի ամբողջ ամիս է ահա՝ միայն մի բան ենք ցանկանում և աղոթում դրա համար, ցանկանում ենք, որ նա բաժանվի ձեր սիրելի Դմիտրի Ֆյոդորովիչից, որը նրան ճանաչել անգամ չի ուզում ու բնավ չի սիրում, և ամուսնանա Իվան Ֆյոդորովիչի հետ՝ զարգացած ու հոյակապ մի երիտասարդ, որն աշխարհում ամենից ավելի սիրում է Կատերինա Իվանովնային։ Մենք մի ամբողջ դավադրություն ենք սարքել, և ես նույնիսկ հենց դրա համար գուցե չեմ մեկնում այստեղից...

— Բայց չէ՞ որ նա լաց էր լինում, վիրավորվե՞լ էր նորից,— գոչեց Ալյոշան։

— Մի՛ հավատաք կնոջ արցունքներին, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ես միշտ էլ կանանց դեմ եմ այդպիսի դեպքում, կողմնակից եմ տղամարդկանց։

— Մամա՛, դուք նրան փչացնում ու կործանում եք,— լսվեց Lise-ի բարակիկ ձայնը դռան ետևից։

— Չէ՞, ե՛ս եմ այս բոլորի պատճառը, սոսկալի մեղավոր եմ ես,— կրկնում էր անմխիթար Ալյոշան, իր անխոհեմ արարքի համար զգացած ամոթից տանջահար, նույնիսկ ձեռքերով ծածկելով երեսը։

— Ընդհակառակը, հրեշտակի նման վարվեցիք, հրեշտակի նման, ես պատրաստ եմ հազար ու հազար անգամ կրկնելու այդ բանը։

— Մամա՛, ի՞նչ է արել, որ հրեշտակի նման է վարվել,— լսվեց Lise-ի ձայնը նորից։

— Երբ նայում էի նրանց, չգիտեմ ինչու հանկարծ ինձ թվաց,— շարունակեց Ալյոշան, կարծես Լիզային չէր էլ լսել,— թվաց, թե նա սիրում է Իվանին, և մեկ էլ ահա այդ հիմարությունն ասացի... Իսկ ի՞նչ է լինելու հիմա։

— Բայց ո՞ւմ է ինչ լինելու, ո՞ւմ,— բացականչեց Lise-ը։— Մամա, դուք իսկապես ուզում եք մեռցնել ինձ։ Հարցնում եմ, չեք պատասխանում։

Այդ պահին ներս վազեց աղախինը։

— Կատերինա Իվանովնան վատ է զգում... Լաց է լինում... հիստերիկա... գալարվում է։

— Ի՞նչ է պատահել,— գոռաց Lise-ն արդեն տագնապահար ձայնով։— Մամա, ի՛մ հիստերիկան է բռնելու հիմա, ոչ թե նրա։

— Lise, մի՛ գոռա, ի սեր աստծո, հոգիս մի՛ հանի։ Դու դեռ այն տարիքում ես, որ չի կարելի մեծերին վերաբերող ամեն բան իմանալ։ Հետո կգամ, ամեն ինչ կպատմեմ, ինչ որ կարելի է ասել քեզ։ Օ՜ աստված իմ։ Գալիս եմ, գալիս եմ... Հիստերիկան լավ նշան է, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Հիանալի է, որ հիստերիկ նոպա է ունենում։ Հենց այդպես է պետք։ Այս դեպքում ես միշտ կանանց դեմ եմ, դեմ եմ բոլոր այդ հիստերիկ նոպաներին ու կանացի արցունքներին։ Յուլիա, վազիր ու ասա, որ հի՛մա գալիս եմ։ Իսկ թե Իվան Ֆյոդորովիչն այդպե՞ս դուրս գնաց, դե՛հ, Կատերինա Իվանովնան ինքն է մեղավոր դրա համար։ Բայց ձեր եղբայրը չի մեկնի։ Lise, ի սեր աստծո, մի՛ գոռա։ Օ՜հ, այո, այո՛, դու չես գոռում, ես եմ գոռացողը, ներիր մամայիդ, բայց ես հրճվանքի մեջ եմ, հրճվանքի՜, հրճվանքի՜։ Իսկ նկատեցի՞ք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ինչպիսի՜ երիտասարդական ավյունով էր, որ քիչ առաջ Իվան Ֆյոդորովիչը թողեց ու դուրս գնաց... ասաց այդ ամբողջն ու դուրս գնաց։ Կարծում էի՝ գիտնական է այնպես, ակադեմիկոս, և հանկարծ՝ այնպե՞ս տաքարյուն, կրակոտ, բացսիրտ ու ջահել, անփորձ ու ջահել, ի՞նչ հիանալի է այդ ամբողջը, ի՞նչ հիանալի, ճիշտ ձեզ նման... Եվ այդ գերմաներեն բանաստեղծությունն ասաց, ա՜յ ճիշտ ու ճիշտ ձեզ նման։ Բայց վազեմ, վազեմ Կատերինայի մոտ։ Ալեքսեյ Ֆյոդորովիչ, շտապեցե՛ք, շուտ կատարեցեք այդ հանձնարարությունը և շուտ վերադարձեք։ Lise, բանի պետք ունե՞ս։ Ի սեր աստծո, ոչ մի րոպե մի՛ ուշացնի Ալեքսեյ Ֆյոդորովիչին, նա իսկույն կվերադառնա քեզ մոտ...

Տիկին Խոխլակովան վերջապես վազեց գնաց։ Ալյոշան ուզում էր դուրս գալուց առաջ դուռը բացել ու տեսնել Lise-ին։

— Ո՛չ մի դեպքում,— գոռաց Lise-ը,— հիմա արդեն ո՜չ մի դեպքում։ Այդտեղից խոսեցեք, դռան ետևից։ Ի՞նչ արեցիք, որ հրեշտակ դարձաք։ Ա՛յդ միայն ուզում եմ իմանալ։

— Մի սոսկալի հիմարություն էր, Lise։ Ցտեսություն։

— Չհամարձակվեք այդպես թողնել ու գնալ,— սկսեց ճչալ Lise-ը։

— Lise, լուրջ է իմ վիշտը։ Իսկույն կվերադառնամ, բայց մի մեծ, մե՜ծ վիշտ ունեմ։

Եվ նա սենյակից դուրս վազեց։

VI

ԶԱՍՏՈՒՄ ԽՐՃԻԹԻ ՄԵՋ

Իսկապես լուրջ էր նրա վիշտը, այնպիսի մի վիշտ, որի նմանը հաղվադեպ էր զգացել մինչ այդ։ Հանկարծ մեջ ընկավ ու «հիմարություն արեց», և ի՞նչ հարցում. սիրայի՞ն զգացմունքների։ «Բայց ես ի՞նչ եմ հասկանում դրանից, ինչպե՞ս կարող եմ գլուխ հանել այդպիսի գործերից,— հարյուրերորդ անգամ կրկնում էր նա ինքնիրեն, կարմրելով։— Օ՜հ, ամոթ զգալը դեռ ոչի՞նչ, ամոթն իմ արժանի պատիժն է պարզապես։ Ցավն այն է, որ հիմա ես, անկասկած, նոր դժբախտությունների պատճառն եմ լինելու... Իսկ սրբահայրս ինձ առաքեց, որպեսզի հաշտեցնեմ ու միացնեմ նրանց։ Այսպե՞ս են միացնում»։ Հանկարծ նորից հիշեց, թե ինչպես էր «միացնում ձեռքերը» և նորից սոսկալի ամոթ զգաց։ «Թեև անկեղծորեն արեցի այդ ամբողջը, բայց հետայսու պետք է ավելի խելոք վարվեմ»,— եզրակացրեց նա հանկարծ և նույնիսկ չժպտաց իր այդ եզրակացության վրա։

Կատերինա Իվանովնայի հանձնարարությամբ պետք է գնար Օզերնայա փողոցը, իսկ Դմիտրին հենց այդ կողմն էր ապրում, Օզերնայա փողոցի մոտ՝ մի նրբանցքում, որ իր ճանապարհի վրա էր։ Ալյոշան որոշեց համենայն դեպս հանդիպել եղբորը՝ փոխկապիտանի մոտ գնալուց առաջ, թեև նախազգում էր, որ տանը չի գտնի նրան։ Կասկածում էր, որ նա հիմա, գուցե, դիտմամբ մի կերպ թաքնվի իրենից, բայց ամեն գնով պետք էր գտնել նրան։ Իսկ ժամանակն անցնում էր. վանքից դուրս գալուց հետո Ալյոշան ոչ մի րոպե, ոչ մի վայրկյան չէր դադարում մտածել իր վախճանվող սրբահոր մասին։

Կատերինա Իվանովնայի հանձնարարության մեջ կար մի կողմնակի հանգամանք, որ նույնպես չափազանց հետաքրքրել էր Ալյոշային. երբ Կատերինա Իվանովնան խոսում էր փոխկապիտանի որդու՝ այն փոքր, դպրոցական տղայի մասին, որ բարձրաձայն լալով վազել է հոր կողքից, հենց այդ րոպեին էլ հանկարծ Ալյոշայի մտքով անցավ, թե այդ տղան հավանաբար նույն այն դպրոցականն է, որ իր մատը կծեց, երբ ինքը հարցնում էր, թե ինչ վնաս է հասցրել նրան։ Իսկ հիմա Ալյոշան գրեթե վստահ էր իր ենթադրության վրա, թեև ինքն էլ չգիտեր, թե ինչու է վստահ։ Այսպես, կողմնակի խորհրդածություններով տարված, նա թեթևացավ ու որոշեց «չմտածել» իր պատճառած «աղետի» մասին, չտանջել իրեն զղջման զգացումով, այլ իր գործն անել, իսկ մնացյալը թողնել բախտին։ Այդ միտքը վերջնականապես սրտապնդեց նրան։ Ի դեպ, մտնելով այն նրբանցքը, ուր Դմիտրին էր ապրում, նա քաղց զգաց, գրպանից հանեց հոր սեղանից առած նկանակը և, շարունակելով քայլել, կերավ։ Դա կազդուրեց նրան։

Դմիտրին տանը չէր։ Տանտերը՝ մի ծերունի հյուսն, նրա որդին ու պառավ կինը նույնիսկ կասկածանքով նայեցին Ալյոշային։ «Արդեն երեք օր է, որ գիշերն էլ չի գալիս, գուցե հեռու մի տեղ է գնացել»,— պատասխանեց ծերունին Ալյոշայի համառ հարցումներին։ Ալյոշան հասկացավ, որ նա պատասխանում է ըստ տրված հրահանգի։ Իսկ երբ հարցրեց՝ «Գրուշենկայի մոտ չէ՞ արդյոք կամ էլ գուցե նորի՞ց Ֆոմայի մոտ է թաքնվել» (Ալյոշան դիտմամբ այդպես բացեիբաց խոսեց), տանտերը նույնիսկ վախվխելով նայեցին նրան։ «Ուրեմն սիրում են Միտյային, նրա կողմն են բռնում,— մտածեց Ալյոշան,— լավ է»։

Վերջապես Օզերնայա փողոցում նա գտավ քաղքենուհի Կալմիկովայի տունը՝ խարխուլ, մի կողմ թեքված, խղճուկ մի տնակ, որ ընդամենը երեք լուսամուտ ուներ փողոցի վրա. ցեխոտ բակի մեջտեղում միայնակ մի կով էր կանգնած։ Մուտքը բակից էր. դուռը բացվում էր միջանցքի վրա, որի ձախ կողմը պառավ տանտիրուհին էր ապրում իր պառավ դստեր հետ, և կարծես երկուսն էլ խուլ էին։ Ալյոշան մի քանի անգամ դրկնեց իր հարցը փոխկապիտանի մասին, և վերջապես նրանցից մեկը, հասկանալով, որ վարձակալներին են հարցնում, մատը տնկեց ու ցույց տվեց միջանցքի մյուս կողմի դուռը՝ իսկական խրճիթի դուռ։ Փոխկապիտանի բնակարանն, իրոք, հասարակ մի խրճիթ էր պարզապես։ Ալյոշան արդեն ձեռքը դրել էր երկաթե բռնակին, որ դուռը բանա, երբ հանկարծ նրան զարմացրեց արտակարգ լռությունը դռան ետև։ Բայց Կատերինա Իվանովնայի ասածից գիտեր, որ պաշտոնաթող փոխկապիտանը ընտանիքի տեր մարդ է։ «Կա՞մ բոլորն էլ քնած են, և կամ գուցե լսեցին իմ գալը և սպասում են, որ դուռը բանամ։ Ավելի լավ կլինի, որ նախ թակեմ դուռը»,— և նա թակեց։ Պատասխան ստացավ, բայց ոչ թե անմիջապես այլ գուցե մի տասը վայրկյան հետո։

— Ո՞վ է,— գոռաց մեկը բարձր ու խիստ զայրացած ձայնով։

Այդ ժամանակ Ալյոշան բացեց դուռը և շեմքից ներս անցավ։ Իրեն գտավ մի խրճիթում, որ թեև բավական ընդարձակ էր, բայց չափազանց խճողված էր և՛ մարդկանցով, և՛ այլազան տնային պիտույքներով։ Ձախ կողմը ռուսական մեծ վառարան կար։ Վառարանից մինչև ձախ պատուհանը, ամբողջ սենյակի միջով, ձգված էր մի պարան, որի վրա զանազան լաթեր էին կախված։ Աջ և ձախ պատերի տակ մեկական մահճակալ կար՝ հյուսած ծածկոցներով։ Ձախակողմյան մահճակալի վրա բրգաձև դարսված էին չորս չթե բարձեր՝ մեկը մյուսից փոքր։ Իսկ աջակողմյան մահճակալի վրա մի շատ փոքրիկ բարձ կար միայն։ Հանդիպակաց անկյունը առանձնացված էր վարագույրով կամ սավանով, որ նույնպես կապված էր շեղակի ձգված պարանից։ Վարագույրի կողքից երևում էր մի ուրիշ անկողին, որ փռված էր այդ անկյունում՝ նստարանի ու աթոռի վրա։ Փայտե հասարակ ու կոպիտ, քառակուսի մի սեղան անկյունից քաշել էին դեպի միջին պատուհանը։ Երեք պատուհանները, որոնցից ամեն մեկը բաղկացած էր չորս փոքրիկ, կանաչ ու բորբոսնած ապակիներից, շատ աղոտ լույս էին տալիս և պինդ փակված էին, այնպես որ օդը բավական ծանր էր սենյակում և լույսն էլ քիչ էր։ Սեղանի վրա մի տապակ կար՝ չհարած ձվածեղի մնացորդներով, հացի մի կտոր՝ կեսը կերված, ու նաև օղու մի փոքր շիշ, որի հատակին այդ երկրային բարիքի հետքերն էին հազիվ մնացել։ Ձախակողմյան մահճակալի մոտ, աթոռի վրա նստած էր չթե հագուստով մի կին, որ նման էր բարեկիրթ տիկնոջ։ Դեմքը շատ նիհար էր ու դեղնած. խիստ փոս ընկած այտերն առաջին իսկ հայացքից վկայում էին նրա հիվանդագին վիճակը։ Բայց Ալյոշային ամենից ավելի զարմացրեց խեղճ կնոջ հայացքը՝ շեշտակիորեն հարցական ու միաժամանակ սոսկալի գոռոզ մի հայացք։ Եվ երբ Ալյոշան տանտիրոջ հետ էր բացատրվում միայն, կինը դեռ լուռ էր մնում և իր խոշոր ու խած աչքերը շարունակ ուղղում էր խոսողներից մեկին կամ մյուսին՝ նույն գոռոզ ու հարցական հայացքով։ Այս տիկնոջ կողքին, ձախ պատուհանի մոտ, կանգնել էր բավական տգեղ դեմքով, կարմրավուն ու նոսր մազերով մի երիտասարդ աղջիկ, որ աղքատ, բայց շատ մաքուր էր հագնված։ Խորշանքով էր դիտում նա Ալյոշային։ Աջ կողմը, նույնպես անկողնի մոտ, մի ուրիշ կանացի կերպարանք էր նստած։ Շատ խեղճուկրակ մի արարած էր նա՝ նույնպես երիտասարդ աղջիկ, շուրջ քսան տարեկան,

բայց կուզ ու տխեղծ, ոտքերը չորացած, ինչպես ասացին հետո Ալյոշային։ Նրա անթացուպերը դրված էին կողքը, անկյունում, մահճակալի ու պատի միջև։ Խեղճ աղջկա զարմանալիորեն գեղեցիկ ու բարի աչքերը մի տեսակ մեղմանուշ հեզությամբ էին նայում Ալյոշային։ Սեղանի առաջ նստած էր մոտ քառասունհինգ տարեկան մի պարոն, որ ձվածեղն էր վերջացնում. կարճահասակ էր նա, վտիտ, թուլակազմ, կարմրավուն մազերով, կարմրավուն ու նոսր մորուքով, որը շատ նման էր քրքրված ճիլոպի (այս համեմատությունը և հատկապես «ճիլոպ» բառը, չգիտես ինչու, առաջին իսկ հայացքից փայլատակեց Ալյոշայի մտքում. հետո նա հիշեց այդ)։ Պարզ է, հենց այս պարոնն էր «ո՛վ է» գոռացողը ներսից, քանի որ սենյակում ուրիշ տղամարդ չկար։ Բայց երբ Ալյոշան ներս մտավ, նա կարծես ուղղակի պոկվեց աթոռից, որի վրա նստած ճաշում էր, շտապ սրբեց բերանը ծակ անձեռոցով և նետվեց դեպի Ալյոշան։

— Վանականը եկել է բան խնդրելու վանքի համար։ Գտե՞լ է խնդրելու տեղը։— բարձրաձայն ասաց ձախ անկյունում կանգնած աղջիկը։

Բայց Ալյոշային ընդառաջ վազող պարոնը վայրկենապես շրջվեց կրնկի վրա և հուզված, բեկբեկուն ձայնով պատասխանեց աղջկան.

— Ո՜չ, Վարվառա Նիկոլավնա, այդպես չէ, սխա՜լ ենթադրեցիք։ Թույլ տվեք, ես էլ իմ հերթին հարցնեմ,— հանկարծ նորից դարձավ նա Ալյոշային,— ի՞նչը ձեզ մղեց այցելել... այս խորքերը։

Ալյոշան ուշադիր նայում էր նրան. առաջին անգամն էր տեսնում այս մարդուն։ Կոշտուկոպիտ, փութկոտ ու նյարդային մի բան կար նրա մեջ։ Թեև ակներևորեն խմել էր հենց հիմա, բայց հարբած չէր։ Մի տեսակ ծայրահեղորեն լկտի հանդգնություն կար նրա դեմքին, և միաժամանակ, տարօրինակ բան, ակնհայտ վախկոտություն կար։ Նա նման էր այն մարդուն, որ երկար ժամանակ հլու-հնազանդ է եղել և համբերությամբ տարել է ամեն ինչ, բայց հանկարծ ընդվզել է և ուզում է ցույց տալ իրեն։ Եվ կամ, ավելի ճիշտ, նման էր մի մարդու, որ սոսկալի ուզում է խփել ձեզ, բայց սաստիկ վախենում է, որ դո՛ւք կխփեք նրան։ Նրա սուր ձայնի ելևէջների, նրա խոսքերի մեջ մի տեսակ խենթավուն հումոր էր զգացվում՝ մերթ չարախինդ, մերթ երկչոտ, անկայուն ու սայթաքող։ Երբ «խորքերի» մասին

իր հարցն էր տալիս, ամբողջ մարմնով դողում էր կարծես, աչքերը չռել էր և այնպես խոյացել ուղղակի Ալյոշայի քթի տակ, որ վերջինս մի քայլ ետ քաշվեց ակամա։ Հագել էր մուգ գույնի նանկինե հնամաշ մի վերարկու, որի վրա կարկատաններ ու բծեր կային։ Տաբատը խիստ բաց գույնի էր, քառակուսի գծերով ու շատ բարակ մի կտորից. այդ ձևի տաբատ ոչ ոք չի հագնում վաղուց։ Այնքան էր ճմռթվել տաբատը ներքևից, որ դեպի վեր էր կծկվել, ասես նա աճել էր փոքր տղայի նման և հագուստն արդեն կարճ էր գալիս։

— Ես... Ալեքսեյ Կարամազովն եմ...— սկսեց պատասխանել Ալյոշան։

— Շատ լավ կարող եմ հասկանալ այդ բանը, տիա՛ր,— անմիջապես վրա տվեց պարոնը, ուզելով ցույց տալ, որ առանց այդ էլ գիտե նրա ով լինելը։— Ես էլ փոխկապիտան Սնեգիրյովն եմ իմ հերթին։ Բայց համենայն դեպս ցանկալի է իմանալ, թե ի՞նչն է ձեզ մղել հատկապես...

— Չէ, հենց այնպես եմ եկել։ Ճիշտն ասած, ուզում էի իմ կողմից մի բան ասել ձեզ... Եթե անշուշտ թույլ կտաք...

— Այդ դեպքում, ահա աթոռը, տիա՛ր, հաճեցեք գրավել ձեր տեղը։ Հին կատակերգությունների մեջ էին այսպես ասում. «Հաճեցեք գրավել ձեր տեղը...»— և փոխկապիտանն ազատ մի աթոռ վերցրեց արագ շարժումով (հասարակ ու կոպիտ մի աթոռ էր՝ ամբողջովին փայտե ու չերեսապատված) և դրեց համարյա սենյակի մեջտեղը. հետո իր համար էլ մի նույնպիսի աթոռ վերցրեց ու նստեց Ալյոշայի դիմացը, նորից այնքան կիպ մոտենալով, որ նրանց ծնկները գրեթե հպվում էին իրար։

— Նիկոլայ Իլյիչ Սնեգիրյով, տիա՛ր, ռուսական հետևակազորի նախկին փոխկապիտան, թեև իր մոլորությունների պատճառով խայտառակված, բայց այնուամենայնիվ՝ փոխկապիտան։ Ավելի ճիշտ կլիներ ասել՝ փոխկապիտան Տիարասով, և ոչ թե Սնեգիրյով, որվհետև իմ կյանքի երկրորդ կեսին միայն սկսեցին «տիար» ասել։ «Տի-ար» բառն սկսում ես գործածել, երբ նվաստացած ես։

— Շատ ճիշտ է,— ժպտաց Ալյոշան,— միայն թե՝ ակամա՞ ես սկսում գործածել, թե դիտմամբ։

— Աստված վկա, դիտմամբ չէ։ Երբեք չէի ասում, ամբողջ կյանքումս չէի ասում «տիար» բառը, հանկարծ թավալգլոր ընկա և երբ ոտքի ելա՝ բերանս «տիար» ասեց։ Մի գերագույն

ուժ է ստիպում այդ բանը։ Տեսնում եմ, ժամանակակից հարցերով եք հետաքրքրվում։ Սակայն ինչո՞վ կարող էի նման հետաքրքրություն հարուցել, երբ ապրում եմ այնպիսի պայմաններում, որ անհնար են դարձնում հյուրընկալությունը։

— Եկել եմ... այն հարցով...

— Այն ո՞ր հարցով,— անհամբեր ընդհատեց փոխկապիտանը։

— Իմ եղբոր՝ Դմիտրի Ֆյոդորովիչի հետ ձեր այն հանդիպման առիթով,— անճարակորեն վրա բերեց Ալյոշան։

— Ի՞նչ հանդիպում, տիա՛ր։ Չլինի՞ ա՛յն հանդիպումն եք ուզում ասել։ Ուրեմն խոսքը ճիլոպի՞ մասին է, բաղնիքի ճիլոպի՞,— հանկարծ նա առաջ շարժվեց այնպես, որ այս անգամ իր ծնկներն ուղղակի բախվեցին Ալյոշային։ Շրթունքներն անսովոր կերպով սեղմվեցին, թելի նման բարակ դարձան։

— Ինչպե՞ս թե ճիլոպ,— մրմնջաց Ալյոշան։

— Ինձ վրա գանգատվելու է եկել, հայրի՛կ,— գոչեց անկյունի վարագույրի ետևից տղայական մի ձայն, որն արդեն ծանոթ էր Ալյոշային։— Քիչ առաջ ես նրա մատը կծեցի։

Վարագույրը ետ քաշվեց, և Ալյոշան տեսավ քիչ առաջվա իր թշնամուն, որ պառկած էր անկյունը՝ նստարանի ու աթոռի վրա փռված փոքրիկ անկողնում, սրբապատկերների տակ։ Տղան ծածկված էր իր վերարկուով ու մի հին, բամբակե փոքրիկ վերմակով։ Երևում էր, որ անառողջ է և, դատելով վառվող աչքերից, ջերմություն ուներ։ Հիմա ոչ թե առաջվա նման, այլ անվախ հայացքով էր նայում Ալյոշային, կարծես ուզում էր ասել՝ «Ասենն եմ հիմա, էլ չես կարող ձեռք տալ ինձ»։

— Ինչպե՞ս թե մատը կծեցիր,— աթոռից վեր թռավ փոխկապիտանը։— Ձե՞ր մատն է կծել, տիա՛ր։

— Այո, իմ մատը։ Քիչ առաջ փողոցում նա և տղաները քարկոծում էին իրար. մյուսները վեց հոգով էին նետում, իսկ նա՝ առանձին։ Մոտեցա նրան, բայց ինձ էլ քար զցեց, հետո նետվեց և ուժեղ կծեց մատս, չգիտեմ ինչու։

— Հի՛մա ծեծեմ նրան, տիա՛ր։ Ա՛յս րոպեիս ծեծեմ, ա՛յս րոպեիս,— այս անգամ արդեն ուղղակի վեր ցատկեց փոխկապիտանը։

— Բայց ես ամենևին չեմ գանգատվում, պարզապես դեպքը պատմեցի... Բնավ չեմ ուզում, որ նրան ծեծեք։ Եվ կարծես նա հիվանդ էլ է հիմա...

— Իսկ դուք ենթադրում էիք, թե ծեծելո՞ւ եմ նրան, տիա՛ր։ Ինչ է, Իլյուշկային վերցնեի ու ծեծեի՞ հիմա ձեր աչքի առաջ, որպեսզի լիակատար գոհացո՞ւմ տայի ձեզ։ Հենց իսկո՞ւյն է պետք այդ գոհացումը ձեզ, տիա՛ր,— ասաց փոխկապիտանը, այնպիսի մի շարժումով հանկարծ դառնալով Ալյոշային, որ կարծես ուզում էր հարձակվել նրա վրա։— Ցավում եմ ձեր մատի համար, տիա՛ր, բայց չէի՞ք ուզենա, որ Իլյուշկային ծեծելուց առաջ իմ չորս մատները կտրեմ հենց այս դանակով, ա՛յ հենց հիմա կտրեմ ձեր աչքի առաջ, արդար գոհացում տալու համար ձեզ։ Կարծում եմ, չորս մատը բավական կլինի ձեր վրիժառության ծարավը հագեցնելու, հինգերորդ մատն էլ չե՞ք պահանջի...— Նա հանկարծ կանգ առավ, ասես շնչահեղձ լինելով։ Դեմքի ամեն մի գիծը շարժվում էր ու ցնցվում, իսկ աչքերի մեջ չափազանց հանդուգն արտահայտություն կար։ Կատաղել էր մի տեսակ։

— Կարծես թե ամեն ինչ հասկացա հիմա,— մեղմ ու տրտում պատասխանեց Ալյոշան, շարունակելով նստած մնալ։— Ուրեմն ձեր տղան բարի տղա է, սիրում է իր հորը և ինձ վրա հարձակվեց՝ որպես ձեզ անարգած մարդու եղբոր վրա... Հիմա հասկանում եմ այդ,— կրկնեց նա մտածկոտ։— Բայց իմ եղբայրը՝ Դմիտրի Ֆյոդորովիչը, զղջում է իր արարքի համար, հաստատ գիտեմ, և եթե միայն հնարավոր է, որ նա գա ձեզ մոտ, կամ էլ, առավել ևս, նորից նույն այդ վայրում հանդիպի ձեզ հետ, բոլորի առաջ ներողություն կխնդրի ձեզնից... եթե ցանկանաք։

— Այսինքն թե՝ մորուքդ պոկեցի և ներողությո՞ւն եմ խընդրում, հա՞... Այսինքն ամեն ինչ վերջացավ, գոհացո՞ւմ ստացանք։ Ա՞յդ եք ուզում ասել, տիա՛ր։

— Օ ո՜չ, ընդհակառակը, կանի ամե՞ն ինչ որ ուզեք և ինչպես որ ուզեք։

— Ուրեմն եթե խնդրեի նորին պայծառափայլությանը, որ իմ առաջ ծնկի գա այդ նույն գինետան մեջ— «Մայր քաղաք» է կոչվում այդ վայրը— և կամ հրապարակում, ծնկի կգա՞ ուրեմն, տիա՛ր։

— Այո, նույնիսկ ծնկի կգա։

— Ճմլեցիք իմ սիրտը, տիա՛ր։ Արցունք բերեցիք աչքերիս ու ճմլեցի՛ք իմ սիրտը։ Չափազանց տրամադիր եմ զգացվելու այդպիսի վեհանձնությունից։ Ուրեմն թույլ տվեք հանգամանորեն

ներկայանալ. իմ ընտանիքը, իմ երկու դուստրերը և իմ որդին՝ իմ ձագո՛ւկը, տիա՛ր։ Եթե մեռնեմ, ո՞վ է սիրելու նրանց։ Իսկ քանի դեռ ապրում եմ, ո՞վ կսիրի ինձ նման թշվառականին, բացի նրանցից։ Մեծ բան է սա, որ աստված շնորհել է իմ ճակատագիրն ունեցող ամեն մի մարդու, տիա՛ր։ Որովհետև պե՛տք է լինի գեթ որևէ մեկը, որ կարողանա սիրել նույնիսկ ի՛նձ նման մարդուն...

— Ա՜խ, կատարելապես ճշմարիտ է,— բացականչեց Ալյոշան։

— Դե վերջապես հերի՛ք է միմոսություն անեք։ Հիմարի մեկն է գալիս, և դուք խայտառակո՛ւմ եք մեզ,— անակնկալորեն գոռաց պատուհանի մոտ կանգնած աղջիկը, խորշանքով ու արհամարհանքով լի արտահայտությամբ դիմելով հորը։

— Համբերեցեք մի քիչ, Վարվառա Նիկոլավնա, թույլ տվեք, որ ընթանամ իմ ճանապարհով,— գոռաց հայրը, ու թեև նրա շեշտը հրամայական էր, բայց հույժ հավանություն տվող հայացքով նայեց աղջկան։— Ի՜նչ անես, այդպես է բնավորությունը, տիա՛ր,— դարձավ նորից Ալյոշային։—

Եվ բնության մեջ համայն
Չկար մի բան, որ նա սիրեր։

Այսինքն տվյալ դեպքում այդ «նա»-ն թող լինի ոչ թե բանաստեղծության հերոսը, այլ մի աղջիկ։ Բայց թույլ տվեք, որ այժմ ձեզ էլ իմ կողակցին ներկայացնեմ. ահա, տիա՛ր, Արինա Պետրովնան, անդամալույծ տիկին է, քառասուներեք տարեկան, կարող է ոտքերը շարժել, բայց հազիվհազ։ Խոնարհ դասից է, տիա՛ր։ Արի՛նա Պետրովնա, շտկեցեք ձեր դեմքը. ահա՛, Ալեքսեյ Ֆյոդորովիչ Կարամազովն է։ Ոտքի ելեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— փոխկապիտանը բռնեց Ալյոշայի ձեռքը և հանկարծ վեր քաշեց այնպիսի ուժով, որ նույնիսկ անսպասելի էր նրանից։— Դուք տիկնոջ եք ներկայանում, պետք է ոտքի ելնեք, տիա՛ր։ Սա այն Կարամազովը չէ, մայրիկ, որ... հը՛մ... և այլն, սա նրա եղբայրն է, որ փայլում է խոնարհ առաքինություններով։ Թույլ տվեք, Արինա Պետրովնա, թույլ տվեք, մայրիկս, թույլ տվեք ձեր ձեռքը համբուրել նախ և առաջ։

Եվ ակնածանքով, նույնիսկ քնքշորեն համբուրեց նա իր կնոջ ձեռքը։ Պատուհանի մոտ կանգնած աղջիկը, զայրացած, թիկունք դարձրեց այդ տեսարանին։ Կնոջ գոռոզաբար հարցա-

կան դեմքը հանկարծ արտակարգորեն սիրալիր արտահայտություն ստացավ։

— Բարև ձեզ, նստեցեք, պարոն Զերնոմազով,— ասաց նա։

— Կարամազով, մայրիկ, Կարամազով (խոնարհ դասից, տիա՛ր),— շշնջաց նորից փոխկապիտանը։

— Դե լավ, Կարամազով է թե ինչ է, իսկ ես միշտ էլ Զերնոմազով եմ ասում... Բայց նստեք։ Եվ ինչի՞ նա ձեզ տեղից հանեց որ։ Ասում է՝ ես անդամալույծ տիկին եմ, բայց չէ, անդամալույծ չեմ, միայն թե ոտերս են ուռել տակառի պես, իսկ ինքս չորացել, փետ եմ դառել։ Մի ժամանակ էնպե՞ս չաղ էի որ, իսկ հիմի տես՝ ոնց որ ասեղ եմ կուլ տվել...

— Խոնա՞րհ դասից, տիա՛ր, խոնարհ դասից,— մի անգամ էլ հուշեց կապիտանը։

— Հայրի՛կ, ա՛խ հայրիկ,— ասաց մեկեն կուզ աղջիկը, որ մինչ այդ լուռ նստել էր իր աթոռին, և հանկարծ աչքերը ծածկեց թաշկինակով։

— Խեղկատա՛կ,— շրպպացրեց պատուհանի մոտ կանգնած աղջիկը։

— Տեսնո՞ւմ եք, ինչ նոր լուրեր ունենք,— թևերը տարածեց մայրիկը, ցույց տալով իր աղջիկներին,— ոնց որ ամպեր են գալիս. ամպերը կանցնեն-կգնա՞ն, և էլի մեր երգն ու պարը կլինի։ Առաջ որ զինվորական էինք, էսպես հյուրեր շատ էին գալիս։ Ես համեմատելու համար չեմ ասում, հեր օրհնած։ Ով ում որ սիրում է, նրան էլ թող սիրի։ Էն ժամանակ սարկավագի կինը գալիս էր ու ասում. «Ալեքսանդր Ալեքսանդրովիչը ուղղակի ոսկի սիրտ ունի, բայց Նաստասիա Պետրովնան, ասում է, դժոխքի ծնունդ է»։— «Դե լա՛վ, ասում եմ, նայած թե ով ում է պաշտում, դո՛ւ էլ մի բան չես, բայց հուտածի մեկն ես»։— «Իսկ քեզ, ասում է, պետք է էնպես պահել, որ ձենդ դուրս չգա»։— «Ա՛խ դու սև դանակ,— ասում եմ նրան,— էդ ո՞ւմ ես բան սովորեցնում, հա՞»։— «Ես, ասում է,— մաքուր օդ եմ շնչում, իսկ քոնը կեղտոտ է»։— «Դե գնա,— պատասխանում եմ նրան,— հարցրու մեր բոլոր սպաներին՝ իմ շունչը մաքո՞ւր է թե մի ուրիշ բան»։ Եվ էդ ասածն էնպես է հոգումս նստել էն օրից, որ մի երկու օր առաջ ա՛յ էստեղ նստել էի ոնց որ հիմի, և մեկ էլ տեսնեմ՝ գեներալն է ներս մտնում, էն գեներալը, որ սուրբ զատկին էր էստեղ եկել։ «Ինչ է, ձերդ գերազանցություն,— ասում եմ նրան,— ազնվական տիկինը չի՞ կարող

մաքուր օդ շնչել»։— «Այո,— պատասխանում է,— լավ կլիներ, որ օդանցքը կամ դուռը բացեիք, հենց որովհետև օդը մաքուր չէ էստեղ»։ Ա՛յ, բոլո՞րն էլ էդպես են ասում։ Իսկ նրանց ի՞նչ բանն է իմ շնչած օդը։ Մեռելներից ավելի՛ վատ հոտ է գալիս։ «Ես ձեր օդը չեմ փչացնի,— ասում եմ,— ինձ համար մաշիկներ կպատվիրեմ ու կգնամ էստեղից»։ Աղավնյակնե՞րս, ձեր հոգո՞ւն մատաղ, մի՛ նախատեք ձեր հարազատ մորը։ Նիկոլայ Իլյիչ, հեր օրհնած, քեզ ի՞նչ եմ արել, որ սրտովդ չեմ։ Ախր միայն Իլյուշկաս է, որ դպրոցից գալիս ու սիրում է ինձ։ Երեկ խնձոր բերեց։ Ներեցեք, ձեր հոգո՞ւն մատաղ, ներեցեք ձեր հարազատ մորը, աղավնյակներս, ներեցեք ինձ՝ մենե-մենակ կին եմ, ինչո՞ւ իմ շնչած օդը զզվելի է դառել ձեզ համար։

Եվ խեղճ կինը փղձկաց հանկարծ, արցունքն աղբյուրի նման հորդեց աչքերից։ Փոխկապիտանը մի շնչով վազեց նրա մոտ։

— Մայրիկ ջան, մայրի՛կ, բավական է, աղավնյակս, բավակա՞ն է։ Մենե-մենակ չես դու, բոլորն էլ սիրում են քեզ, պաշտում են բոլորն էլ։— Եվ կապիտանն սկսեց նորից համբուրել կնոջ երկու ձեռքերը, քնքշորեն շոյել նրա երեսն իր ափերով։ Հետո հանկարծ վերցրեց անձեռոցը և սկսեց արցունքը սրբել նրա դեմքից։ Ալյոշային նույնիսկ թվաց, թե կապիտանի աչքերն էլ արցունքով լցվեցին։— Էհ, տեսնո՞ւմ եք, տիա՛ր։ Լսո՞ւմ եք, տիա՛ր,— հանկարծ մի տեսակ կատաղությամբ դարձավ նա Ալյոշային, ձեռքով ցույց տալով խեղճ, տկարամիտ կնոջը։

— Տեսնում եմ ու լսում,— մրմնջաց Ալյոշան։

— Հայրի՛կ, հայրի՛կ։ Ի՞նչ ես նրա հետ... Ձե՞ռք քաշի նրանից, հայրիկ,— գոչեց հանկարծ տղան, մի փոքր բարձրանալով անկողնում և վառվող աչքերով նայելով հորը։

— Դե վերջապես հերի՛ք է միմոսություն անեք, հերի՛ք է ցույց տաք ձեր հիմար կապիկությունները, որ երբեք էլ արդյունք չեն տալիս...— գոռաց իր անկյունից Վարվառա Նիկոլաևնան՝ արգեն բոլորովին գազազած, և նույնիսկ ոտքը զարկեց հատակին։

— Կատարելապես արդար է այս անգամ ձեր զայրույթը, Վարվառա Նիկոլավնա, և ես ամենայն փութկոտությամբ կգահացնեմ ձեզ։ Դրեք ձեր թասակը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ես էլ ահա իմ գլխարկն եմ վերցնում, և գնա՛նք, տիա՛ր։ Պետք է մի լուրջ խոսք ասեմ ձեզ, միայն թե՝ այս պատերից դուրս։ Ահա այս

նստած աղջիկը իմ դուստրն է՝ Նինա Նիկոլաևնան, տի՛ր, մոռացա նրան ներկայացնել ձեզ։ Աստծո հրեշտակն է մարմնացյալ... իջել է մահկանացուների մեջ... եթե միայն կարող եք հասկանալ այդ բանը...

— Ախր ուղղակի ցնցվում է ոտից գլուխ, ասես ջղաձգությունն է բռնել,— զայրույթով շարունակում էր Վարվառա Նիկոլաևնան։

— Իսկ այս մեկն ահա, որ հիմա ոտքը հատակին է զարկում և քիչ առաջ միմոս հորջորջելով պախարակեց ինձ, այս մեկը նույնպես աստծո հրեշտակ է մարմնացյալ և իրավունք ունի ինձ այդպես հորջորջելու։ Դե՛հ, գնանք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, պետք է վերջացնել գործը, տի՛ր...

Եվ, բռնելով Ալյոշայի ձեռքից, ուղղակի փողոց տարավ նրան։

VII

ԵՎ ՄԱՔՈՒՐ ՕԴՈՒՄ

— Մաքո՞ւր է օդը, տի՛ր, իսկ իմ ապարանքում իրոք որ ուղղակի ապականած է օդը, բոլոր իմաստներով։ Դանդաղ քայլելով գնանք մի քիչ, տի՛ր։ Շատ կուզենայի ձեր հետաքրքրությունը գրավել։

— Ինքս էլ մի չափազանց կարևոր գործ ունեմ ձեզ հետ...— նկատեց Ալյոշան,— միայն թե չգիտեմ՝ ինչպես սկսեմ։

— Պարզ երևում է, որ գործ ունեք ինձ հետ, տի՛ր։ Եթե գործ չունենայիք, երբեք չէիք այցելի ինձ։ Բայց գուցե իրո՞ք եկել եք պարզապես գանգատվելու իմ տղայից։ Չէ, դա անհավանական բան է, տի՛ր։ Եվ ի դեպ, տղայի մասին ասեմ. այնտեղ չէի կարող ամեն ինչ բացատրել, իսկ այստեղ հիմա նկարագրեմ ձեզ այդ օրվա տեսարանը։ Հասկանո՞ւմ եք, այս իմ ճիլոպն ավելի խիտ էր, ընդամենը դեռ մի շաբաթ առաջ, այսինքն իմ մորուքի մասին է խոսքս, տի՛ր։ Իմ մորուքին է, որ ճիլոպ են ասում, հատկապես դպրոցականները։ Եվ ահա ուրեմն, այդ օրը ձեր եղբայր Դմիտրի Ֆյոդորովիչն իմ մորուքից բռնեց ու քարշ տվեց ինձ, և առանց պատճառի. խելառությունն էր բռնել, իսկ ես պատահաբար աչքին ընկա։ Գինետնից հանեց հրապարակ, և ճիշտ այդ բոպեին տղաները դուրս էին գալիս դպրոցից, Իլյուշան էլ նրանց հետ էր։ Հենց որ ինձ տեսավ այդ վիճակում, ուղղակի վազեց մոտս, «Հայրի՛կ,— ճչաց,— հայրի՛կ»։ Թաթիկներով բռնում էր ինձ, գրկում էր, ուզում էր ազատել իր հորը, գոռում էր ինձ տանջողի երեսին. «Թողե՛ք, թողե՛ք, իմ հայրի՛կն է, իմ հայրի՛կը, ներեցե՛ք նրան»։ Այո, հենց այդպես էլ գոռում էր. «Ներեցե՛ք»։ Իր թաթիկներով նրան էլ բռնեց, նրա ձե՛ռքը, հենց այդ ձե՛ռքը բռնեց ու սկսեց համբուրել... Հիշում եմ ի՞նչ էր դարձել նրա պստլիկ դեմքն այդ բոպեին, չեմ մոռացել ու երբե՛ք չեմ մոռանա, տի՛ր...

— Երդվո՛ւմ եմ,— բացականչեց Ալյոշան,— եղբայրս ամենայն անկեղծությամբ ու լիուլի կարտահայտի իր զղջումը, թեկուզ նույնիսկ ծնկի գալով այդ նույն հրապարակում... Կստիպեմ նրան, այլապես նա իմ եղբայրը չէ։

— Էհե՛, ուրեմն դա դեռ ծրագրվում է միայն։ Ոչ թե ուղղակի նրանից է գալիս, այլ պարզապես ձեր տաքարյուն սրտի ազնվությունից։ Այդպես էլ ասեի՛ք, տի՛ր։ Չէ՛, այդ դեպքում թույլ տվեք, որ պատմեմ նաև ձեր եղբոր ասպետական ու սպայական գերագույն վեհանձնության մասին, որովհետև նույն պահին ցուցաբերեց այդ բանը։ Ի վերջո բաց թողեց իմ ճիլոպը, դադարեց ինձ քարշ տալուց, ազատ արձակեց։ «Դու սպա ես,— ասաց,— ես էլ սպա եմ, եթե կարող ես մի պարկեշտ մարդ գտնել, որ քո մարտավկան լինի, ուղարկիր մոտս. գոհացում կտամ, թեև սրիկայի մեկն ես»։ Ահա՛ թե ինչ ասաց, տի՛ր։ Ճշմարի՛տ ասպետական ոգի։ Իլյուշան ու ես թողեցինք ու գնացինք, բայց մեր ընտանեկան տոհմագրության այդ կենդանի պատկերը առհավետ դրոշմվեց Իլյուշկայի հոգեկան աշխարհում։ Չէ՛, էլ մեր ի՞նչ բանն է ազնվական մնալը։ Եվ ինքներդ դատեցեք, տի՛ր, դուք հիմա բարեհաճեցիք մտնել իմ ապարանքը, և ի՞նչ տեսաք։ Նստած են երեք կին, մեկը՝ անդամալույծ ու տկարամիտ, մյուսը՝ անդամալույծ ու կուզ, իսկ երրորդն էլ անդամալույծ չէ, բայց դե չափից դուրս խելացի է, ուսանողուհի, վառվում է Պետերբուրգ վերադառնալու ցանկությամբ, որպեսզի այնտեղ, Նևայի ափերին, ռուս կնոջ իրավունքները որոնի։ Իլյուշայի մասին չեմ խոսում, ինը տարեկան է եղած-չեղածը, մեն-մենակ է տղան, որովհետև եթե ես մեռա՝ ի՞նչ է լինելու այդ թշվառականի վիճակը. հենց միայն ա՛յս հարցը տամ ձեզ, տի՛ր։ Իսկ եթե այդպես է, և ես էլ դիցուք մենամարտի կանչեցի նրան, ու մեկ էլ, ասենք, տեղն ու տեղը սպանեց ինձ, է՞, հետո՞։ Նրա՞նց վիճակն ինչ է լինելու այդ

դեպքում։ Ավելի վատ, եթե չսպանի, այլ պարզապես հաշմանդամ դարձնի ինձ. աշխատել չեմ կարողանա, բայց բերանս, միևնույն է, կմնա բերան, և ո՞վ է կերակրելու իմ բերանն այդ ժամանակ, ո՞վ է նրանց բոլորին կերակրելու, տիա՛ր։ Կամ էլ, ի՞նչ է, Իլյուշային դպրոցից զրկեմ ու ամեն օր ուղարկեմ ողորմությո՞ւն խնդրելու։ Ահա՛ թե ինձ համար ինչ է նշանակում նրան մենամարտի կանչելը, տիա՛ր։ Հիմար խոսքեր են դրանք, ուրիշ ոչինչ, տիա՛ր։

— Նա ձեզնից ներողություն պիտի խնդրի, հրապարակի մեջտեղում պիտի խոնարհի ձեր ոտքերի առաջ,— գոչեց նորից Ալյոշան բռնկված հայացքով։

— Ուզում էի նրան դատի տալ,— շարունակեց փոխկապիտանը,— սակայն բացեք մեր օրենսգիրքը, տեսեք իմ կրած անձնական վիրավորանքի համար ի՞նչ մի մեծ հատուցում պետք է ստանամ անարգողից։ Եվ մեկ էլ, մյուս կողմից, հանկարծ Ագրաֆենա Ալեքսանդրովնան կանչում է ինձ ու գոռում. «Չհամարձակվե՛ս այդպիսի բան մտածել։ Եթե նրան դատի տաս, քեզ այնպիսի օրի կգցեմ, որ արար աշխարհ կիմանա, թե նա քեզ ծեծել է հենց քո խարդախության համար, և այն ժամանակ քե՛զ դատի կքաշեն»։ Բայց աստված միայն տեսնում է, թե ումի՛ց էր գալիս այդ խարդախությունը և ո՛ւմ հրամանով էի գործում ես՝ որպես չնչին մի մարդ. հենց իր կարգադրությամբ չէ՞ր, մեկ էլ Ֆյոդոր Պավլովիչի։ Եվ հետո ավելացրեց. «Մեկ էլ իմացիր,— ասաց,— միանգամ ընդմիշտ կվռնդեմ քեզ, և սրանից հետո ոչ մի կոպեկ չես վաստակի ինձնից։ Իմ վաճառականին էլ կասեմ (հենց այդպես էլ կոչում է իր այդ պառավին՝ «իմ վաճառակա՛նը»), և նա էլ քեզ կքշի»։ Եվ ահա մտածեցի՝ եթե այդ վաճառականն էլ ինձ վռնդի, ի՞նչ եմ անելու հետո, ումի՞ց եմ վաստակելու իմ հացը։ Չէ՞ որ այդ երկուսն են միայն մնացել իմ հույսը, քանի որ Ֆյոդոր Պավլովիչը՝ ձեր հայրիկը, ոչ միայն դադարել է ինձ վստահելուց՝ մի ուրիշ պատճառով, այլև նախօրոք ձեռք է բերել իմ ստացագրերը և ինքն է ուզում դատարան քաշել ինձ։ Այս բոլորի հետևանքով էլ ձայնս կտրեցի, և դուք տեսա՛ք մեր խորքերը, տիա՛ր։ Իսկ այժմ թույլ տվեք հարցնել՝ շա՞տ ուժեղ կծեց ձեր մատն Իլյուշան։ Մեր ապարանքում, նրա ներկայությամբ, սիրտ չարեցի այդ մանրամասնության մեջ մտնել։

— Այո, շատ ուժեղ, և նա շատ էր բորբոքված։ Ձեր վրեժն

էր լուծում ինձնից, որովհետև ես էլ Կարամազով եմ. հիմա դա պարզ է ինձ համար։ Բայց եթե տեսնեիք, թե ինչպե՛ս էին նա և իր դպրոցական ընկերները քարկոծում իրար։ Շատ վտանգավոր է, նրանք կարող են սպանել ձեր տղային։ Երեխաներ են, հիմար են, նետված քարը կարող է գլուխ ջարդել։

— Այդպես էլ եղել է այսօր, գլխին չէ, բայց կրծքին, սրտից մի քիչ վերև, կապտել էր։ Եկավ, լաց էր լինում, ախ էր քաշում, և ահա հիվանդացավ։

— Եվ գիտե՞ք, նա ինքն է առաջինը հարձակվում բոլորի վրա, գազազել է ձեր այդ հարցից։ Մյուսներն ասում են, որ այսօր նա Կրասոտկին անունով մի տղայի կողքին է խփել գըրպանի դանակով։

— Դրա մասին էլ լսել եմ, վտանգավոր է։ Կրասոտկինն այստեղացի պաշտոնյա է, գուցե դեռ ուրիշ գլխացավանք էլ դուրս գա դրանից...

— Ես ձեզ խորհուրդ կտայի,— եռանդով շարունակեց Ալյոշան,— որ մի որոշ ժամանակ բոլորովին չուղարկեիք նրան դպրոց, մինչև որ սիրտը խաղաղվի... և անցնի նրա այդ ցասումը...

— Ցասո՞ւմը,— կրկնեց իսկույն փոխկապիտանը,— այո, հենց ցասո՞ւմը, տիա՛ր։ Փոքրիկ մի արարած, բայց վիթխարի ցասո՞ւմ կա մեջը։ Դուք չգիտեք այդ բոլորը, տիա՛ր։ Թույլ տվեք հատկապես բացատրեմ այս պատմությունը։ Խնդիրն այն է, որ այդ դեպքից հետո դպրոցի բոլոր տղաներն սկսեցին «ճիլոպ» ասելով ծաղրել նրան։ Դպրոցական երեխաներն անգութ ժողովուրդ են. ամեն մեկն առանձին՝ աստծո հրեշտակ է, բայց երբ միասին են, հատկապես դպրոցներում, շատ հաճախ անգութ են դառնում։ Սկսեցին ծաղրել Իլյուշային, և նրա մեջ ազնիվ ոգին զարթնեց։ Մի սովորական տղա լիներ, մի թուլամորթ որդի՝ գլուխը կծռեր, կսկսեր ամաչել իր հոր համար, բայց նա, ի սեր իր հոր, մեն-մենակ ըմբոստացավ բոլորի դեմ։ Ի սեր իր հոր և ի սեր ճշմարտության, տիա՛ր, ի սեր արդարության։ Որովհետև այն, ինչ նա զգաց այդ օրը, երբ ձեր եղբոր ձեռքերն էր համբուրում ու ճչում՝ «Ներեցե՛ք հայրիկիս, ներեցե՛ք հայրիկիս», աստված միայն գիտե, մեկ էլ՝ ես։ Եվ ահա այսպես է, որ մեր զավակները, այսինքն ոչ թե ձեր, այլ մե՛ր՝ արհամարհված, սակայն ազնվագի չքավորների զավակները, դեռ ինը տարեկանից ճշմարտությո՛ւնն են ճանաչում այս աշխարհում, տիա՛ր։

Հարուստների ի՞նչ բանն է դա. նրանք այսպիսի խորխորատների մեջ չեն թափանցում իրենց ամբողջ կյանքի ընթացքում, իսկ իմ Իլյուշկան հենց այն րոպեին, երբ այդ հրապարակում համբուրում էր նրա ձեռքը, հենց ա՛յդ րոպեին ամբողջ ճշմարտությունն ըմբռնեց։ Մտավ այդ ճշմարտությունը նրա մեջ ու ջախջախեց նրան մի անգամ ընդմիշտ, տիա՛ր,— գոչեց փոխ-կապիտանը տաքացած, նորից մի տեսակ կատաղելով և միաժամանակ իր աջ բռունցքով հարվածեց ձախ ափին, կարծես ուզելով ակնբախորեն ցույց տալ, թե ինչպես է «ճշմարտությունը» ջախջախել իր Իլյուշային։— Այդ նույն օրը նա տենդ ունեցավ, ամբողջ գիշերը զառանցեց։ Ամբողջ օրվա ընթացքում քիչ էր խոսում ինձ հետ, բոլորովին լռում էր նույնիսկ, միայն թե նկատում էի, որ նայում, նայում էր ինձ անկյունից, թեև ավելի շատ լուսամուտին էր թեքվում ու ձևացնում էր, թե դաս է սովորում։ Բայց ես տեսնում էի, որ դասերը չեն ուշքն ու միտքը։ Հաջորդ օրը խմեցի և շատ բան չեմ հիշում, մեղավոր մարդ եմ, տիա՛ր, ինչ արած, վշտից խմեցի։ Մեր մայրիկն էլ սկսեց լաց լինել (ես շատ եմ սիրում մեր մայրիկին, տիա՛ր) է՞հ, ես էլ վիշտս խեղդելու համար կոնծեցի մինչև վերջին կոպեկը։ Դուք ինձ մի՛ արհամարհեք, տիա՛ր. խմողները ամենաբարի մարդիկն են մեր Ռուսաստանում։ Հենց ամենաբարի մարդիկն են ամենից ավելի խմում մեզ մոտ։ Պառկել-մնացել էի այդ օրը և շատ էլ չեմ հիշում, թե ինչ էր անում Իլյուշան, բայց հենց այդ օրն առավոտից տղաներն սկսել են ծաղրել նրան դպրոցում։ «Ճիլո՞պ,— գոռացել են նրա երեսին,— քո հոր ճիլոպից բռնել, քաշ էին տալիս գինետնից դուրս, դու էլ կողքից վազում, ներողություն էիր խնդրում»։ Երրորդ օրն էր, նորից տուն եկավ դպրոցից, տեսնեմ՝ գույն չկա երեսին, սփրթնել է։ Ի՞նչ է պատահել, ասում եմ։ Լռում է։ Բայց դե մեր ապարանքում էլ խոսել չէր լինի, մեր մայրիկն ու օրիորդները իսկույն պետք է մեջ ընկնեին, մանավանդ որ օրիորդներն ամեն ինչ իմացել էին արդեն, դեռ նույնիսկ առաջին օրից։ Իսկ Վարվառա Նիկոլավնան սկսել էր արդեն գոմռալ. «Խեղկատակնե՞ր, միմոսնե՞ր, կարո՞ղ է ձեր արածը խելքը-գլխին մի բան լինի»։— «Շատ ճիշտ է, Վառվառա Նիկոլավնա,— ասում եմ,— կարո՞ղ է մեր արածը խելքը-գլխին մի բան լինել»։ Դրանով էլ օձիքս ազատեցի այդ անգամ։ Երեկոյան, ուրեմն, տղային դուրս հանեցի՝ միասին ման գալու։ Պետք է իմանաք, տիա՛ր, որ դրանից առաջ էլ ամեն իրիկուն նրա հետ

դուրս էինք գալիս պտույտի, քայլում էինք ճիշտ այս նույն ուղիով, որով հիմա գնում ենք ձեզ հետ՝ մեր դռնակից մինչև ա՛յ այն խոփ-խոշոր քարը, որ մեն-մենակ կանգնած է ճանապարհին, ահա այնտեղ, ցանկապատի տակ։ Քաղաքի արոտավայրն է սկսում այնտեղից. ամայի ու գեղեցիկ տեղ է, տիա՛ր։ Քայլում էինք Իլյուշայի հետ, բռնել էի նրա թաթիկից, ինչպես միշտ. պստլիկ է նրա ձեռքը, մատիկները՝ բարալիկ, պաղո՞ւկ-պաղուկ, ախր թոքերից է տառապում երեխաս։ «Հայրի՛կ,— ասաց,— հայրի՛կ»։— «Ի՞նչ է»,— ասացի։ Տեսնում եմ՝ վառվում են աչուկները։ «Հայրի՛կ, ինչպե՞ս էր նա քեզ... այն օրը, հայրի՛կ»։— «Ի՞նչ անես, Իլյուշա»,— ասացի։ «Չհաշտվես նրա հետ, հայրի՛կ, չհաշտվես։ Երեխաները դպրոցում ասում են, որ նա քեզ տասը ռուբլի է տվել դրա համար»։— «Չէ, Իլյուշա,— ասացի,— հիմա էլ ո՛չ մի դեպքում նրանից փող չեմ վերցնի»։ Ուղղակի սկսեց դողալ ամբողջ մարմնով, երկու թաթիկներով բռնեց իմ ձեռքը և նորից համբուրում է։ «Հայրի՛կ,— ասում է,— հայրի՛կ, մենամարտի կանչիր նրան, դպրոցում ինձ ձեռ են առնում, որ դու վախկոտ ես և նրան չես կանչի մենամարտի, նրա տասը ռուբլին կվերցնես»։— «Մենամարտի չեմ կարող կանչել նրան, Իլյուշա,— պատասխանեցի և մեկ-երկու խոսքով բացատրեցի նրան այն ամբողջը, որ ձեզ էլ ասացի. հիմա այդ մասին։ Լսեց մինչև վերջ։ «Հայրի՛կ,— ասաց,— հայրի՛կ, մեկ է՝ չհաշտվես. ես կմեծանամ, ինքս կկանչեմ նրան ու կսպանեմ»։ Եվ փայլատակում են աչուկները, վառվում են։ է՞հ, չնայած այդ բոլորին, հայր եմ ես և պետք է որ ճշմարիտ խոսք ասեի նրան։ «Սպանելը մեղք է,— ասացի,— թեկուզ և մենամարտում՝ մեղք է»։— «Հայրի՛կ,— ասաց,— հայրի՛կ, ես նրան գետին կգցեմ, երբ որ մեծանամ, իմ թրով կթռցնեմ նրա թուրը ձեռքից, կհարձակվեմ վրան, գետին կգցեմ, թուրս կբարձրացնեմ գլխին ու կասեմ՝ կարող էի քեզ սպանել հիմա, բայց ներում եմ, դե ա՛ռ քեզ»։ Տեսնո՞ւմ եք, տեսնո՞ւմ եք, տիա՛ր, ինչե՞ր են անցել ու դարձել նրա փոքրիկ գլխում այս երկու օրվա մեջ. գիշեր-ցերեկ հենց այդ վրիժառության, թրով վրեժ լուծելու մասին է մտածել, և գիշերն էլ երևի դրա մասին էր զառանցում։ Միայն թե՝ սկսեցի նկատել, որ դպրոցից գալիս է սոսկալի ծեծկռտված, երկու օր առաջ իմացա այդ բոլորը, և իրավունք ունեք, տիա՛ր. էլ չեմ ուղարկի նրան այդ դպրոցը։ Իմացա, որ մեն-մենակ ելնում է ամբողջ դասարանի դեմ և ինքն է բոլորին հրավեր կար-

դում, չարացել է, սիրտն է վառվել. վախեցա, որ մի փորձանք կգա գլխին։ Նորից գնացինք ման գալու։ «Հայրի՛կ,— հարցրեց,— հայրի՛կ, աշխարհում ամենից ուժեղը հարուստներն են, չէ՞»։— «Այո,— ասացի,— Իլյուշա, հարուստից ուժեղը չկա աշխարհում»։— «Հայրի՛կ,— ասաց,— ես կհարստանամ, ապա կդառնամ ու բոլորին ջարդուփշուր կանեմ, թագավորն ինձ շքանշան կտա, կգամ այստեղ, և մեկ էլ ոչ ոք չի համարձակվի։— Հետո լռեց, բայց ասես դեռ խոսում էր, շրթունքները շարունակում էին դողդողալ։— Հայրի՛կ,— ասաց,— ի՞նչ վատ քաղաք է մեր քաղաքը, հայրի՛կ»։— «Այո,— ասացի,— Իլյուշկա, շատ էլ լավ քաղաք չէ մեր քաղաքը»։— «Հայրիկ, մի ուրիշ քաղաք գնանք, մի լավ քաղաք,— ասաց,— որտեղ ոչ ոք չգիտի մեր մասին»։— «Գնանք,— ասացի,— գնանք, Իլյուշա, միայն թե՝ նախ փող հավաքեմ»։ Ուրախացա, որ առիթից օգտվելով կշեղեմ նրան մռայլ մտքերից, և սկսեցինք երազել, թե ինչպես ենք մի ուրիշ քաղաք փոխադրվելու, մեզ համար ձի ու կառք ենք գնելու։ Մայրիկին ու քույրիկին կնստեցնենք կառքը, կծածկենք նրանց, իսկ մենք կողքից կքայլենք, մեկ-մեկ քեզ էլ կնստեցնեմ, իսկ ես կքայլեմ հենց կողքիցդ, որովհետև պետք է խնայենք մեր ձին, բոլորս հո չենք նստելու։ Ա՛յ այդպես էլ կճանապարհվենք։ Զմայլվեց նա, մանավանդ այն մտքից, որ մեր ձին ենք ունենալու և ինքն էլ քշելու է։ Դեհ, հայտնի բան է, ռուս տղան հենց ծնված օրից էլ ձի է երազում։ Խոսեցի՛նք ու խոսեցինք, փառք աստծո, մտածեցի, արդեն ցրեցի նրա մտքերը, մխիթարեցի։ Դա երեկ չէ, առաջի իրիկունն էր, իսկ երեկ իրիկուն արդեն ուրիշ բան դուրս եկավ։ Առավոտյան նորից այդ դպրոցն էր գնացել, մռայլ եկավ տուն, շատ-շատ մռայլ։ Երեկոյան բռնեցի ձեռքից, դուրս եկանք ման գալու, լռում է, չի խոսում։ Քամին էր սկսել այդ ժամին, արևը ծածկվել էր, աշնան հոտ էր փչում, և արդեն մութն էլ ընկնում էր։ Քայլում էինք, երկուսս էլ տխուր։ «Է՜հ, տղաս,— ասացի,— ինչպե՞ս ենք պատրաստվելու մեր ճանապարհորդության»։ Միտքս այն էր, որ նախորդ օրվա խոսակցության բերեմ նրան։ Չխոսեց։ Միայն զգացի, որ մատիկները դողդղացին իմ ձեռքում։ Է՜, մտածեցի, լավ չէ՜, մի նոր բան կա։ Հասանք հենց այս քարին, ա՛յ ինչպես հիմա, նստեցինք այս քարի վրա, իսկ երկնքում այնքա՜ն օդապարուկներ կային, ֆոֆռում ու ճռճռում էին օդում, մի երեսուն հատ կլիներ։ Չէ՞ որ հենց օդապարուկ թռցնելու եղանակն է հիմա, տիա՛ր։ «Այ, տեսնո՞ւմ ես, Իլյուշա,— ասացի,— ժամանակն է, որ մենք էլ անցյալ տարվա մեր օդապարուկը թռցնենք։ Դե մի քիչ նորոգեմ օդապարուկը, որտե՞ղ ես պահել»։ Չի պատասխանում տղաս, ուրիշ կողմ է նայում, կանգնել է՝ կողքը ինձ դարձրած։ Մեկ էլ հանկարծ քամին ոռնաց, ավազը քշեց գետնից... Տղաս հանկարծ ամբողջ մարմնով գիրկս նետվեց, երկու թաթիկներով գրկեց վիզս, սեղմեց, սեղմեց ինձ։ Գիտե՞ք, եթե երեխաները չխոսկան են լինում և հպարտ, եթե երկար ժամանակ զսպում են իրենց արցունքները, մեկ էլ որ մի մեծ վիշտ է գալիս և հանկարծ փլվում է նրանց հոգին՝ էլ արցունքները ոչ թե հոսում, այլ ժայթքում են աղբյուրի պես, տիա՛ր։ Ա՛յ հենց այդ տաք արցունքներով հանկարծ թրջեց իմ ամբողջ երեսը։ Հեկեկում էր, ցնցվում, ասես ջղաձգվում էր ամբողջ մարմնով, սեղմում էր ինձ իր կրծքին, իսկ ես նստել էի քարի վրա։ «Հայրի՛կ,— գոչում էր աղիողորմ,— հայրիկ ջա՛ն, իմ անուշի՛կ հայրիկս, ինչպե՞ս նա անպատվեց քեզ»։ Ու դրա վրա ես էլ սկսեցի հեկեկալ, տիա՛ր, նստել ու ցնցվում էինք իրար գրկած։ «Հայրի՛կ,— ասում էր,— հայրիկ ջա՛ն»։— «Իլյուշա,— ասում էի ես էլ,— իմ պստլի՛կ Իլյուշաս»։ Ոչ ոք չտեսավ մեզ այն ժամանակ, տիա՛ր, աստված միայն տեսավ, գուցե թե ինձ մտցնի իր ցուցակի մեջ։ Շնորհակալություն հայտնեցեք ձեր եղբորը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ Ո՜չ, տիա՛ր, ես իմ մանչուկին չե՞մ ծեծի՝ ձեզ գոհացում տալու համար, տիա՛ր։

Վերջին խոսքերը նորից իր քիչ առաջվա զայրացկոտ ու խենթավուն, արտառոց շեշտով ասաց։ Ալյոշան զգաց սակայն, որ նա վստահում է այլևս իրեն, և եթե իր փոխարեն ուրիշ մեկը լիներ, այս մարդն այս ձևով չէր «խոսակցի» այդ ուրիշի հետ և չէր ասի այն ամբողջը, որ ասաց իրեն հիմա։ Դա խրախուսեց Ալյոշային, որի սիրտը դողում էր արտասվալից։

— Ա՜խ, ինչպե՞ս կուզեի հաշտվել ձեր մանչուկի հետ,— բացականչեց նա։— Եթե կարգադրեիք այդ բանը...

— Շատ լավ, տիա՛ր,— մրթմրթաց փոխկապիտանը։

— Բայց հիմա այդ չէ իմ ասելիքը, ուրիշ բան է, բոլորովին ուրիշ բան, լսեցեք,— շարունակեց ոգևորվել Ալյոշան,— լսեցե՛ք։ Ես մի հանձնարարություն ունեմ ձեր նկատմամբ։ Հենց այդ իմ եղբայրը, այդ Դմիտրին, վիրավորանք հասցրեց նաև իր հարսնացուին, որ ազնվագույն մի աղջիկ է, նրա մասին լսել եք հավանաբար։ Ես իրավունք ունեմ հայտնելու ձեզ

նրա կրած վիրավորանքը, նույնիսկ պետք է, որ այդպես անեմ, որովհետև նա, լսելով ձեր կրած վիրավորանքի մասին և իմանալով ամեն ինչ, որ վերաբերում է ձեր դժբախտ վիճակին, ինձ հանձնարարեց այսօր... հենց քիչ առաջ... որ այս օժանդակությունը բերեմ տամ ձեզ նրա կողմից... բայց միայն նրա՛ կողմից, ոչ թե Դմիտրիի, որ նրան լքեց, ո՞չ, ո՞չ, ոչ էլ իմ կողմից, այսինքն Դմիտրիի եղբոր, և ուրիշ որևէ մեկի կողմից էլ չէ, այլ նրա՛, միայն ու միայն նրա կողմից։ Նա աղաչում է, որ ընդունեք իր օժանդակությունը... երկուսդ էլ վիրավորանք եք կրել նույն մարդուց... Նա հենց այն ժամանակ միայն հիշեց ձեր մասին, երբ նույնպիսի վիրավորանք կրեց Դմիտրիից, այսինքն նույնքան ծանր մի վիրավորանք, ինչպիսին դուք եք կրել։ Դա նշանակում է, որ քույրը օգնության է գալիս իր եղբորը... Հենց այդպես էլ ինձ հանձնարարեց համոզել ձեզ, որ ահա այս երկու հարյուր ռուբլին ընդունեք նրանից՝ որպես քրոջից։ Ոչ ոք չի իմանա սրա մասին, ոչ մի անարդար բամբասանք չի կարող լինել... ահա այս երկու հարյուր ռուբլին, և, երդվում եմ, պետք է ընդունեք, այլապես... այլապես ուրեմն աշխարհում բոլո՞ր էլ պետք է որ թշնամի լինեն իրար։ Բայց չէ՞ որ այս աշխարհում էլ կան եղբայրներ, կա՛ն... Դուք ազնիվ հոգի ունեք... դուք պետք է հասկանաք այս բանը, պետք է հասկանաք...

Եվ Ալյոշան երկու հատ նոր, վարդագույն հարյուրանոց բանկոտոմս մեկնեց նրան։ Այդ պահին երկուսն էլ կանգնած էին հենց խոշոր քարի առաջ, ցանկապատի մոտ, և շուրջը ոչ ոք չկար։ Բանկոտոմսերը կարծես ահռելի մի տպավորություն գործեցին փոխկապիտանի վրա. ցնցվեց նա, բայց սկզբում կարծես թե միայն զարմանքից, որովհետև նման մի բանի պատրանքն անգամ չէր ունեցել և բնավ չէր սպասում, որ այդպիսի ելքի կհասնի խնդիրը։ Օգնությո՞ւն որևէ մեկից, այն էլ այնքա՞ն մեծ մի օգնություն՝ երազում անգամ չէր ունեցել այդ ցնորքը։ Նա վերցրեց բանկոտոմսերը և մի րոպե համարյա չէր էլ կարողանում պատասխանել, բոլորովին նոր մի բան երևաց նրա դեմքին։

— Ի՞նձ համար է սա, ի՞նձ, տիար, այսքա՞ն փողը, երկո՞ւ հարյուր ռուբլի։ Հանուն հո՞ր և որդվո։ Բայց արդեն չորս տարի է՝ այսքան փող չեմ տեսել, տե՞ր աստված։ Եվ ասում է՝ քո՞ւյր... և ճշմարի՞տ է դա, ճշմարի՞տ։

— Երդվում եմ, ամեն ինչ, որ ասացի, ճշմարիտ է,— գոչեց Ալյոշան։

Փոխկապիտանը կարմրեց։

— Լսեցեք, սիրելիս, լսեցեք, տիա՞ր իմ, եթե հիմա վերցնեմ այս փողը, հո սրիկա չե՞մ լինի, հա՞։ Ձե՛ր աչքում, ձե՛ր, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, սրիկա չե՞մ լինի, չե՞մ լինի, հա՞։ Չէ, չէ, լսեցեք ինչ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, լսեցեք,— աճապարում էր նա, երկու ձեռքով շարունակ դիպչելով Ալյոշային,— ա՛յ դուք ինձ համոզում եք, որ ընդունեմ, ասելով, որ մի «քույր» է ուղարկողը, բայց դուք ձեր ներսում, ձեր հոգում արհամարանք չե՞ք զգալու իմ հանդեպ, եթե վերցնեմ, հա՞։

— Ո՞չ, ո՞չ։ Իմ հոգու փրկությամբ եմ երդվում՝ ո՞չ։ Եվ ոչ ոք էլ երբեք չի իմանա, միայն մենք՝ ես, դուք և նա, մեկ էլ մի տիկին՝ նրա շատ մոտիկ բարեկամը...

— Տիկինը ոչի՞նչ։ Լսեցեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, լսեցեք մինչև վերջ, այնպիսի մի բոպե է հասել հիմա, որ պետք է մինչև վերջ լսեք ինձ, որովհետև դուք չեք էլ կարող հասկանալ, թե հիմա ինչ է նշանակում ինձ համար այս երկու հարյուր ռուբլին,— շարունակում էր խեղճ չքավորը, աստիճանաբար հասնելով մի տեսակ խառնաշփոթ, գրեթե վայրի ցնծության։ Թվում էր, թե կապը կորցրել էր, խոսում էր չափազանց շտապ, աճապարելով, կարծես վախենում էր, որ թույլ չեն տա ասելու իր ամբողջ ասելիքը։— Բացի այն, որ սա աղնվորեն ձեռք բերված փող է՝ այնքան հարգելի և սուրբ մի «քրոջ» ուղարկածը, գիտե՞ք նաև, որ հիմա սրանով մեր մայրիկին կարող եմ բուժել, Նինոչկային բուժել՝ իմ կուզիկ հրեշտակին, իմ աղջկան։ Եկավ ինձ մոտ դոկտոր Հերցենշտուբեն, իր սրտի բարությունից եկավ, մի ամբողջ ժամ քննեց երկուսին էլ, «Ոչինչ չեմ հասկանում» ասաց, բայց դե այն հանքային ջուրը, որ նա նշանակեց (կա՛ այդ ջուրն այստեղի դեղատանը), անպայման օգուտ կտա մեր մայրիկին, և մեկ էլ ոտքերի լոգանք նշանակեց ինչ-որ դեղերով։ Երեսուն կոպեկ արժի այդ հանքային ջուրը, և գուցե մի քառասուն սափոր պետք է խմի դրանից։ Դե ես էլ այդ դեղատոմսը վերցրի ու դարակի վրա դրի՝ սրբապատկերների տակ, այնտեղ էլ մնում է։ Իսկ Նինոչկային լոգանք նշանակեց ինչ-որ լուծույթի մեջ, տաք լոգանքներ այնպես, այն էլ ամեն օր առավոտ և իրիկուն, դե մենք որտեղի՞ց կարողանայինք այդպիսի բուժում հնարել տանը, տիա՛ր, մեր այդ ապարանքում, առանց ծառաների, առանց

օգնության, առանց ամանների և առանց ջրի։ Իսկ Նինոչկան ոտից գլուխ հոդացավով է տառապում, այս բանը դեռ չեմ ասել ձեզ. գիշերները նրա ամբողջ աջ կողմը ցավում է, տանջվում է խեղճը և, կհավատա՞ք, աստծո հրեշտա՞կը, զսպում է իրեն, որ մեզ չանհանգստացնի, չի տնքում, որ չարթնացնի մեզ։ Ուտում ենք ինչ որ ընկնում է ձեռքներս, ինչ որ ճարվում է, և նա ամենահետին պատառն է վերցնում, այն, որ միայն շան առաջ կարելի է գցել։ «Արժանի չեմ այդ պատառին, ձեր բերանից եմ կտրում, բեռ եմ ձեր վզին»,— ահա՞ թե ինչ են ուզում արտահայտել նրա հրեշտակային աչքերը։ Սպասարկում ենք նրան, բայց ճնշվում է մեր ծառայությունից. «Արժանի չեմ դրան, արժանի չեմ, անարժան, անօգուտ մի անդամալույծ եմ»։ Եվ այն էլ նա՞ արժանի չլինի, տիա՞ր, երբ իր հրեշտակային հեզությամբ մեր բոլորի բարեխոսն է աստծո առաջ։ Առանց նրան, առանց նրա քաղցր խոսքերի դժոխք կլինի մեր տունը, նույնիսկ Վարյային էլ փափկեցրեց նա։ Եվ Վարվառա Նիկոլավնային էլ մի՛ մեղադրեք, տիար, նա նույնպես հրեշտակ է, նույնպես հրեշտակ է, նույնպես բախտից տուժած։ Ամառը եկավ մեզ մոտ և տասնվեց ռուբլի ուներ, դաս տալով էր վաստակել ու խնայել էր, որ ճանապարհածախս լինի, որ սեպտեմբերին, այսինքն հիմա, այդ փողով Պետերբուրգ վերադառնա։ Իսկ մենք նրա այդ փողը վերցրինք ու ծախսեցինք ապրուստի վրա, և նա հիմա կոպեկ չունի, որ վերադառնա, ա՞յ թե ինչ, տիա՞ր։ Բայց այդպես էլ չլիներ, մեկ է՝ չի կարող ետ գնալ, որովհետև տաժանակիր աշխատանք է անում մեզ համար, մենք ախր նրան լծել ենք ուժից ընկած ձիու նման ու նստել ենք գլխին. խնամում է բոլորիս, կարկտում է, լվացք անում, հատակը սրբում, մայրիկին անկողին է դնում, իսկ մայրիկը քմահաճ է, տիա՞ր, լալկան է մայրիկը, խելագա՞ր է մայրիկը... Ա՛յ ուրեմն, հիմա այս երկու հարյուր ռուբլով ես սպասուհի կարող եմ վարձել, հասկանո՞ւմ եք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, կարող եմ իմ սիրելի էսքիզների բուժումն սկսել, իմ ուսանողուհուն Պետերբուրգ կուղարկեմ, տավարի միս կգնեմ, կարգին սնո՞ւնդ կտամ նրանց, տիա՞ր։ Բայց երա՞զ է սա, տե՞ր աստված։

Ալյոշան սոսկալի ուրախ էր, որ այնքան երջանկություն էր պատճառել նրան, և որ խեղճ չքավորը համաձայնվել էր ընդունել այդ երջանկությունը։

— Սպասեցեք. Ալեքսեյ Ֆյոդորովիչ, սպասեցեք,— նորից

սկսեց փոխկապիտանը, հանկարծ մի նոր երազանքից տարված, և նորից կարկուտի պես վրա տվեց մոլեգին արագությամբ,— գիտե՞ք, գիտե՞ք, որ հիմա գուցե իրո՛ք Իլյուշայի հետ իրագործենք մեր երազը. ձի ու սայլ կգնենք, այն էլ սև ձի, նա խընդրեց, որ անպայման սև ձի լինի, և ճանապարհ կընկնենք, ինչպես որ պատկերացնում էինք երկու օր առաջ։ Կ—նահանգում մի ծանոթ փաստաբան ունեմ, մանկության ընկեր է, մի վստահելի մարդու միջոցով ինձ հայտնեցին, որ եթե այնտեղ գնամ, նա իբր թե գրագրի պաշտոն է տալու ինձ իր գրասենյակում, այնպես որ, ո՞վ գիտե, գուցե և տա... Օ՜խ, մայրիկին հենց սայլը նստեցնեի, Նինոչկային էլ հետը, սանձն էլ Իլյուշայի ձեռքը տայի, իսկ ես ոտքո՞վ, ոտքո՞վ, և բոլորին էլ տանեի... Աստված իմ, այստեղ մի կորած պարտք ունեմ ստանալիք, եթե այդ էլ առնեի, գուցե նույնիսկ դրան էլ հերիքեր փողը։

— Կհերիքի՛, կհերիքի՛,— բացականչեց Ալյոշան,— Կատերինա Իվանովնան դեռ ավելին կուղարկի ձեզ, որքան որ ուզեք, և գիտե՞ք, ես էլ փող ունեմ, վերցրեք որքան որ պետք է ձեզ, որպես եղբայր, որպես բարեկամ, հետո կվերադարձնեք... (Դուք կհարստանաք, կհարստանա՞ք)։ Եվ գիտե՞ք, ձեր վիճակում ոչ մի ավելի լավ բան չէիք էլ կարող մտածել, քան այդ տեղափոխությունը մի ուրիշ նահանգ։ Այդ է ձեր փրկությունը, մանավանդ ձեր տղայի փրկությունը, և գիտե՞ք, լավ կլիներ, որ շուտ գնայիք, ձմեռը չեկած, ցրտերը չընկած, և գրեիք մեզ այնտեղից, միշտ եղբայրներ մնայինք... Ո՞չ, դա երազ չէ՞։

Ալյոշան ուզում էր գրկել նրան, այնքա՞ն էր գոհ։ Բայց, նայելով նրան, հանկարծ կանգ առավ։ Մարդը կանգնել էր՝ վիզը երկարած, շրթունքները երկարած, մոլեգնահար ու գունատված դեմքով, և շրթունքները փսփսում էին մի տեսակ, ասես ուզում էր մի բան ասել. ձայն չէր դուրս գալիս, բայց նա շարունակում էր փսփսալ շրթունքներով, տարօրինակ էր մի տեսակ։

— Ի՞նչ պատահեց ձեզ,— ցնցվեց հանկարծ Ալյոշան, չգիտես ինչու։

— Ալեքսե՛յ Ֆյոդորովիչ... ես... դուք...— մրթմրթում էր ու կարկամում փոխկապիտանը, տարօրինակ ու վայրի հայացքով նայելով նրան շեշտակի՝ հուսահատ մի քայլի դիմող մարդու տեսքով,— ես... դուք, տիա՞ր... Իսկ չէի՞ք ուզենա, որ մի փոքրիկ խաղ խաղայի հիմա ձեր աչքի առաջ,— ասաց նա հանկարծ արագ, ամուր փսփսուքով, առանց այլևս կարկամելու։

— Ի՞նչ խաղ։

— Մի փոքրիկ խաղ, մի այսպես սիրունիկ խաղ,— շարունակում էր փսփսալ փոխկապիտանը։ Նրա բերանը դեպի ձախ էր ծռվել, ձախ աչքը կկոցվել էր, անշեղորեն նայում էր Ալյոշային, կարծես հայացքը մեխել էր նրա աչքերի մեջ։

— Բայց ի՞նչ է պատահել ձեզ, ի՞նչ խաղ,— գոռաց Ալյոշան, արդեն կարգին վախեցած։

— Ա՜յ թե ինչ խաղ, նայեցե՛ք,— ճչաց հանկարծ փոխկապիտանը։

Եվ Ալյոշային ցույց տալով երկու վարդագույն բանկոտոմսերը, որոնք ամբողջ խոսակցության ընթացքում աջ ձեռքի բթամատով ու ցուցամատով բռնել էր մի ծայրից՝ երկուսը միասին, նա հանկարծ մի տեսակ կատաղությամբ վերցրեց ու ճմրթեց դրանք և ամուր սեղմեց իր աջ բռունցքի մեջ։

— Տեսա՞ք, տիա՜ր, տեսա՞ք,— ճչաց նա Ալյոշայի երեսին, գունատ ու գազազած, և հանկարծ բռունցքը վեր տարավ ու ամբողջ թափով շպրտեց երկու ճմրթված բանկոտոմսերն ավազի վրա։— Տեսա՞ք,— ճչաց նորից, մատով ցույց տալով նրանք,— ա՜յ այսպես, ահա՜, տիա՜ր...

Եվ հանկարծ բարձրացնելով աջ ոտքը, վայրագ զայրույթով սկսեց կոխկրտել դրանք կրունկի տակ, ոտքի ամեն մի հարվածի հետ հևալով ու բացականչելով.

— Ահա՜ ձեր փողը։ Ա՜հա ձեր փողը։ Ա՜հա ձեր փողը։ Ա՜հա ձեր փողը։

Հանկարծ նա ետ ցատկեց և ուղիղ կանգնեց Ալյոշայի առաջ։ Նրա ամբողջ երևույթն անասելի հպարտություն էր արտահայտում։

— Ասացե՛ք ձեզ ուղարկողներին, որ ճիլոպն իր պատիվը չի՜ ծախում, տիա՜ր,— գոռաց նա, թևը տարածելով օդի մեջ։ Հետո արագ շուռ եկավ ու սկսեց վազել. բայց դեռ հինգ քայլ չէր վազել, երբ հանկարծ ամբողջ մարմնով շրջվեց նորից և ձեռքով արեց Ալյոշային։ Բայց հետո կրկին, հազիվ հինգ քայլ վազելով, վերջին անգամ ետ դարձավ, և այս անգամ նրա դեմքն արդեն ոչ թե ծամածռվել էր ծիծաղից, այլ ընդհակառակը՝ ամբողջովին դողում էր արցունքներից։ Լացող, բեկբեկուն, շնչապառ ձայնով գոռաց նա հևիհև.

— Իսկ ի՞նչ ասեի իմ մանչուկին, եթե ձեզնից փող վերցնեի մեր կրած նախատինքի համար։

Այդ ասաց ու սկսեց թափով վազել, առանց այլևս ետ դառնալու։ Ալյոշան անասելի տրտմությամբ նայում էր նրա ետևից։ Օ՜, նա հասկանում էր, որ մարդը ինքն էլ մինչև ամենավերջին վայրկյանը չգիտեր, թե պիտի ճմրթի ու շպրտի բանկոտոմսերը։ Այլևս ոչ մի անգամ ետ չնայեց նա, և Ալյոշան այնպես էլ գիտեր, որ նա ետ չի նայելու։ Չուզեց ետևից վազել ու կանչել նրան, և գիտեր ինչու։ Իսկ երբ մարդը հեռացավ տեսողության սահմանից, Ալյոշան գետնից վերցրեց երկու բանկոտոմսերը։ Դրանք պարզապես խիստ ճմրթված էին, տրորված ու ավազի մեջ խրված, բայց բոլորովին վնասված չէին և նույնիսկ խշրտացին նոր թղթադրամի նման, երբ Ալյոշան բացում ու հարթում էր դրանք։ Հարթելուց հետո նա ծալեց բանկոտոմսերը, գրպանը դրեց և գնաց Կատերինա Իվանովնային՝ նրա տված հանձնարարության արդյունքի մասին զեկուցելու։

Գիրք հինգերորդ

PRO ԵՎ CONTRA

I

ԽՈՍՔԵՆԱԳ

Տիկին Խոխլակովան նորից առաջինն էր, որ դիմավորեց Ալյոշային։ Աճապարում էր նա. կարևոր բան էր պատահել՝ Կատերինա Իվանովնայի հիստերիկան վերջացել էր ուշագնացությամբ, հետո «մի ահավոր, սարսափելի թուլություն էկավ վրան, պառկեց, աչքերը փակեց և սկսեց զառանցել։ Հիմա ջերմություն ունի, մարդ ուղարկեցինք Հերցենշտուբեին կանչելու, մորաքույրերին կանչելու։ Մորաքույրերն այստեղ են արդեն, իսկ Հերցենշտուբեն դեռ չեկավ։ Բոլորը նստել են նրա սենյակում և սպասում են։ Ի՞նչ է լինելու, գիտակցությունը կորցրել է։ Իսկ եթե հանկարծ տենդա՞խտ լինի»։

Տիկին Խոխլակովան լրջորեն վախեցած տեսք ուներ, երբ բացականչում էր այդ բոլորը։ «Սա արդեն լո՞ւրջ է, լո՞ւրջ»,— ավելացնում էր նա ամեն մի բառից հետո, կարծես դրանից

առաջ պատահած բաներից ոչ մեկը լուրջ չէր եղել։ Ալյոշան կսկիծով լսեց նրան։ Հենց սկսում էր պատմել նաև իր գլխին եկածները, բայց տիկինն առաջին իսկ բառերից ընդհատեց. լսելու ժամանակ չուներ։ Խնդրեց, որ Ալյոշան նստի Lise-ի մոտ և Lise-ի մոտ էլ սպասի իրեն։

— Lise-ը, շատ սիրելի Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— շշնջաց նա համարյա Ալյոշայի ականջին,— Lise-ը տարօրինակորեն զարմացրեց ինձ հիմա, բայց և գութս շարժեց, դրա համար էլ սիրտս ամեն ինչ ներում է նրան։ Երևակայեցեք, ձեր գնալուց անմիջապես հետո հանկարծ անկեղծորեն սկսեց զղջալ, որ իբր թե երեկ և այսօր ծիծաղել է ձեզ վրա։ Բայց նա չէր ծիծաղում, չէ՞, կատակ էր անում պարզապես։ Եվ սակայն շատ լրջորեն էր զղջում, համարյա լալու չափ, այնպես որ զարմացա։ Առաջ երբեք լրջորեն չէր զղջում նա, երբ ինձ վրա էր ծիծաղում, այլ միշտ կատակի էր տալիս։ Եվ գիտե՞ք, ամեն րոպե նա ծիծաղում է ինձ վրա։ Իսկ հիմա լուրջ է ահա, հիմա ամեն ինչ լուրջ դարձավ նրա համար։ Չափազանց շատ է գնահատում ձեր կարծիքը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, և եթե կարող եք՝ մի՛ նեղանաք ու մի՛ դժգոհեք նրանից։ Ես ինքս էլ միշտ ու միշտ խնայում եմ նրան, որովհետև այնքա՞ն խելոք է, կհավատա՞ք։ Քիչ առաջ ասում էր, դուք նրա մանկության ընկերն եք, «իմ մանկության ամենալուրջ ընկերը», պատկերացրե՞ք դուք, ամենալո՞ւրջ ընկերը. հապա ե՞ս, ե՞ս։ Այդ իր մանկության նկատմամբ չափազանց լուրջ զգացումներ ունի, նույնիսկ հիշատակներ, և մանավանդ այդ խոսքե՞րն ու բառերը, այդ բոլորովին անսպասելի բառե՞րը, այնպես որ բնավ չես սպասում, բայց մեկ էլ տեսար՝ հանկարծ բառը դուրս թռավ։ Ա՛յ վերջերս, օրինակ, եղևնու մասին. նրա վաղ մանկությանը մեր այգում մի եղևնի կար, գուցե հիմա էլ դեռ կա, այնպես որ միտք չունի անցյալ ժամանակով խոսելը։ Եղևնիները մարդիկ չեն, երկար ժամանակ անփոփոխ են մնում, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։ «Մամա,— ասում է,— հիշում եմ այդ եղևնին, ասես երազում եղև լինի», այսինքն թե՝ «եղևնի, եղև լինի», միայն թե մի ուրիշ տեսակ ասաց, որովհետև խառնափընթոր բան է ստացվում, «եղև լինի»-ն անիմաստ խոսք է։ Բայց այդ առթիվ այնքա՞ն ինքնատիպ մի բան ասաց, որ ես ուղղակի չեմ կարող նույնությամբ վերարտադրել։ Եվ մոռացա էլ նույնիսկ։ Դե ցտեսություն, ես շատ, շա՞տ ցնցված եմ ու խելագարվում եմ երևի։ Ա՜խ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, կյանքումս երկու անգամ

խելագարվում էի, և ինձ բուժեցին։ Գնացեք Lise-ի մոտ։ Սիրտ տվեք նրան, ինչպես դուք միշտ կարողանում եք անել հրաշալիորեն։ Lise,— գոչեց նա, մոտենալով աղջկա դռանը,— ահա քեզ մոտ բերեցի Ալեքսեյ Ֆյոդորովիչին, որին այնպես վիրավորել ես դու, բայց նա բոլորովին չի բարկանում, հավատացնում եմ քեզ, ընդհակառակը, զարմանում է, որ դու ինչպե՞ս կարող էիր այդ բանը մտածել։

— Merci, maman, մտե՛ք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ։

Ալյոշան մտավ։ Lise-ը մի տեսակ շփոթված էր նայում և հանկարծ կաս-կարմիր կտրեց։ Երևի ամաչում էր մի բանից, և, ինչպես միշտ լինում է նման դեպքերում, սկսեց արագ-արագ խոսել բոլորովին կողմնակի նյութի շուրջ, կարծես այդ կողմնակի նյութն էր միայն հետաքրքրում նրան այդ րոպեին։

— Մաման հենց նոր պատմեց ինձ այդ երկու հարյուր ռուբլու ամբողջ պատմությունը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, և ձեզ տրված հանձնարարությունը... այդ խեղճ սպային... պատմեց ամբողջ այդ սոսկալի դեպքը, թե ինչպես են անարգել նրան, և գիտե՞ք, մաման թեև շատ խառնափնթոր է պատմում... անընդհատ մի բանից թռնում է մյուսին... բայց ես լսում էի և լաց լինում։ Հետո ի՞նչ եղավ, ինչպե՞ս, տվեցի՞ք այդ փողը, և ի՞նչ է անում հիմա այդ դժբախտը...

— Հենց խնդիրն էլ այն է, որ չտվեցի, և դա երկար պատմություն է,— պատասխանեց Ալյոշան, կարծես ինքն էլ ամենից ավելի մտահոգված էր հենց այն հարցով, թե չի տվել փողը, այնինչ Lise-ը շատ լավ նկատեց, որ նա՛ ևս ուրիշ կողմ է նայում և երևի նույնպես աշխատում է կողմնակի նյութից խոսել։ Ալյոշան նստեց սեղանի մոտ և սկսեց պատմել, բայց առաջին իսկ խոսքերից բոլորովին անցավ նրա շփոթությունը, և նա Lise-ին էլ գրավեց իր պատմածով։ Խոսում էր ուժեղ զգացման ու իր կրած արտակարգ տպավորության ազդեցությամբ, և կարողացավ հանգամանալից ու լավ պատմել։ Առաջ էլ, դեռ Մոսկվայում, Lise-ի մանկության օրերին, Ալյոշան սիրում էր գալ նրա մոտ և պատմել՝ մերթ նոր պատահած մի դեպք, մերթ այն, ինչ կարդացել էր, ու մերթ իր հուշերը մանկության տարիներից։ Երբեմն նույնիսկ երազում էին միասին և ամբողջ վեպեր էին հորինում երկուսով, բայց մեծ մասամբ զվարթ ու ծիծաղաշարժ բաներ։ Հիմա երկուսն էլ հանկարծ իրենց զգացին մոսկովյան անցած օրերում, երկու տարի առաջ։ Lise-ը չափա-

զանց հուզվել էր նրա պատմածից։ Ալյոշան կարողացավ ջերմ զգացումով պատկերել «Իլյուշկայի» կերպարը։ Իսկ երբ նա ամենայն մանրամասնությամբ նկարագրեց այն տեսարանը, թե ինչպես դժբախտ մարդը փողերն էր կոխկրտում, Lise-ը ձեռքերը զարկեց իրար և բացականչեց, չկարողանալով զսպել իր զգացումը.

— Ուրեմն չտվեցի՞ք փողը, ուրեմն այնպես էլ թողեցիք, որ նա փախչի։ Աստվա՜ծ իմ, գոնե ինքներդ վազեիք ետևից ու հասնեիք նրան...

— Ոչ, Lise, ավելի լավ, որ չվազեցի,— ասաց Ալյոշան, վերկացավ աթոռից ու մտահոգ քայլեց սենյակում։

— Ինչպե՞ս թե ավելի լավ, ինչո՞վ է ավելի լավ։ Հիմա նրանք առանց հացի մնացին և կկորչե՞ն։

— Չեն կորչի, որովհետև այս երկու հարյուր ռուբլին այնուամենայնիվ կհասնի նրանց ձեռքը։ Ինչպես էլ լինի, վաղը կվերցնի այս փողը։ Հենց վաղը կվերցնի անկասկած,— ասաց Ալյոշան, մտախոհ քայլելով։— Գիտե՞ք Lise,— շարունակեց նա, հանկարծ կանգ առնելով աղջկա առաջ,— ինքս մի սխալ բան արեցի, բայց այդ սխալն անգամ ավելի լավ արդյունքի կհասցընի։

— Ի՞նչ սխալ և ինչո՞ւ ավելի լավ արդյունքի։

— Ասեմ, թե ինչու։ Այդ մարդը երկչոտ ու թույլ է իր բնավորությամբ։ Այնքա՜ն տանջված և շատ բարի։ Ահա շարունակ մտածում եմ հիմա՝ ինչու նա հանկարծ վիրավորվեց այդպես և կոխկրտեց փողը. հավատացնում եմ ձեզ, մինչև ամենավերջին վայրկյանը չգիտեր, որ կոխկրտելու է։ Եվ հիմա ինձ թվում է, որ շատ բաներից վիրավորվեց... և ուրիշ կերպ չէր էլ կարող լինել նրա վիճակում... Նախ և առաջ, վիրավորված զգաց այն բանից, որ իմ ներկայությամբ չափազանց ուրախացավ փողի համար և չթաքցրեց ինձնից այդ ուրախությունը։ Եթե այնքան շատ չուրախանար, ցույց չտար իր զգացածը, եթե փողն առնելու ժամանակ ձևեր թափեր ուրիշների նման, կոտրատվեր, դե այդ դեպքում կարող էր դեռ հանդուրժել ու վերցնել փողը։ բայց նա շատ անկեղծորեն ուրախացավ, և հենց դա էլ խոցեց նրա սիրտը։ Ա՜խ, Lise, նա ճշմարտասեր ու բարի մարդ է, և ահա ա՛յդ է ամբողջ ցավն այսպիսի դեպքերում։ Խոսած ժամանակ ձայնը միշտ էլ այնքա՜ն թույլ էր, բեկբեկուն, և այնպես արագ-արագ էր խոսում, անընդհատ քրքջում էր մի տեսակ՝ այն-

պիսի մի խնդությամբ, և կամ լա՞ց էր լինում արդյոք... իսկապես, լաց էր լինում, այնքա՜ն մեծ էր իր ցնծությունը... իր աղջիկների մասին խոսեց... և այն պաշտոնի մասին, որ նրան տալու են մի ուրիշ քաղաքում... Եվ հազիվ էր սիրտը բացել, մեկ էլ հանկարծ ամոթ զգաց, որ այդպես ցույց տվեց ինձ իր ամբողջ հոգին։ Ա՜յ հենց նույն րոպեին էլ ատեց ինձ։ Նա այն չքավորներից է, որոնք սոսկալի ամոթխած են լինում։ Եվ ամենից ավելի նրան խոցողը այն էր, որ չափազանց շուտ ինձ իր բարեկամը նկատեց և շուտով անձնատուր եղավ. սկզբում կոտոշներն էր ցույց տալիս, վախեցնում էր, և ահա հանկարծ, հենց որ փողը տեսավ, սկսեց գրկել ինձ։ Այո, գրկում էր իսկապես, անընդհատ դիպչում ձեռքերով։ Ա՜յ հենց այդ ձևով է, որ նա պետք է զգացած լինի ամբողջ իր նվաստացումը, և մեկ էլ ահա՝ այդ սխալն արեցի ես, շատ կարևոր մի սխալ. ելա հանկարծ ասացի, որ եթե փողը չհերիքի ուրիշ քաղաք տեղափոխվելու համար, դեռ ավելին էլ կտան, և նույնիսկ ես ինքս կտամ իմ փողերից՝ որքան որ ուզե։ Ահա ա՜յս էր, որ հանկարծ ցնցեց նրան. այսինքն թե՝ ինչո՞ւ ե՞ս էլ մեջ ընկա օգնելու իրեն։ Գիտե՞ք, Lise, վիրավորված մարդու համար որքա՜ն ծանր է, սոսկալի ծանր, երբ բոլորն սկսում են բարերարի աչքով նայել նրան... ես լսել եմ այդ մասին, իմ սրբահայրն է ասել ինձ։ Գիտեմ ինչպես արտահայտեմ, բայց հաճախ ինքս էլ տեսել եմ այդ բանը։ Եվ ինքս էլ, այո, ինքս էլ ճիշտ այդպես եմ զգում։ Իսկ գլխավորն այն է, որ նա, ճիշտ է, մինչև ամենավերջին վայրկյանը չգիտեր, թե կոխկրտելու է բանկոտոմսերը, բայց այնուամենայնիվ նախազգում էր այդ, անպայման, վստահ եմ։ Նրա ցնծությունն էլ այնքան ուժեղ էր հենց այն պատճառով, որ նախազգում էր այդ բանը... Եվ ահա, թեև շատ վատ է այս ամբողջը, բայց համենայն դեպս ավելի լավ արդյունքի կհասցընի։ Նույնիսկ այնպես եմ կարծում, որ շատ-շատ լավ կլինի արդյունքը, ավելի լավ բան չէր էլ կարող լինել...

— Ինչո՞ւ, ինչո՞ւ ավելի լավ բան չէր էլ կարող լինել,— գոչեց Lise-ը, խիստ զարմացած նայելով Ալյոշային։

— Որովհետև, Lise, եթե նա չկոխկրտեր, այլ առներ այդ փողը, տուն գալուց հետո մի ժամ չանցած լաց կլիներ իր նվաստացման համար։ Հենց այդպես էլ կպատահեր անպայման։ Լաց կլիներ և, հավանական է, վաղն առավոտյան, հազիվ լույսը բացված, գար մոտս, գուցե բանկոտոմսերը նետեր

իմ առաջ և կոխկրտեր ինչպես արեց այսօր։ Իսկ հիմա գնաց սոսկալի հպարտ ու հաղթական, թեև գիտե, որ «կործանեց իրեն»։ Ուրեմն հիմա ամենից հեշտ բանն է նրան ստիպել, որ վաղն ևեթ ընդունի այս երկու հարյուր ռուբլին, որովհետև արդեն հաստատեց իր պատիվը, շպրտեց փողերն ու կոխկրտեց... Հո չէր կարող կոխկրտելու ժամանակ իմանալ, որ վաղը նորից այդ փողը բերելու եմ նրան։ Ու չէ՞ որ նա սոսկալի կարիք ունի այդ փողին։ Թեև հիմա հպարտ է զգում իրեն, բայց այնուամենայնիվ այսօր իսկ պիտի մտածի, թե ինչպիսի՜ օգնությունից զրկվեց։ Գիշերը ավելի տենդագին պիտի մտածի, պիտի երազում տեսնի, և վաղը առավոտ գուցե պատրաստ լինի վազելու մոտս և ներողություն խնդրելու։ Եվ ես էլ ահա հենց այդ պահին կհայտնվեմ ու կասեմ. «Դուք հպարտ մարդ եք, այո, հաստատեցիք այդ, դե հիմա ուրեմն վերցրեք ահա և ներեցեք մեզ»։ Ա՛յ հենց այդ ժամանակ կվերցնի։

Ալյոշան մի տեսակ արբեցությամբ ասաց վերջին խոսքը՝ «Ա՛յ հենց այդ ժամանակ կվերցնի»։ Lise-ը ծափ տվեց։

— Ա՜խ, ճիշտ է դա, ա՜խ, սոսկալի՜ հասկացա հանկարծ։ Ա՜խ, Ալյոշա, ինչպե՞ս է, որ դուք գիտեք այդ բոլորը։ Այնքա՜ն երիտասարդ, և արդեն գիտե, թե ինչ է կատարվում մարդու հոգում... Իմ մտքով երբեք չէր անցնի այդ բանը...

— Գլխավորը հիմա նրան համոզելն է, որ նա մեզ բոլորիս հետ հավասար գետնի վրա է կանգնած, հակառակ որ մեզնից փող է առնում,— շարունակեց Ալյոշան նույն արբեցությամբ,— և ոչ միայն հավասար, այլ նույնիսկ ավելի բարձր գետնի վրա։

— «Ավելի բարձր գետնի վրա»-ն հիանալի՜ էր, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, բայց խոսեցեք, խոսեցե՛ք։

— Այսինքն ճիշտ չէ՞ր այդ դարձվածքը... «բարձր գետնի վրա»... բայց վնաս չունի, որովհետև...

— Ա՜հ, վնաս չունի, վնաս չունի, անշո՜ւշտ։ Ներեցեք, Ալյոշա, սիրելիս... Գիտե՞ք, ես մինչև հիմա գրեթե չէի հարգում ձեզ... այսինքն հարգում էի, բայց հավասար գետնի վրա, իսկ հիմա պիտի ավելի բարձր գետնի վրա հարգեմ... Մի՛ բարկանաք, սիրելիս, որ ես «սրամտում եմ»,— իսկույն վրա բերեց նա ուժեղ զգացմունքով։— Ես ծիծաղելի եմ ու փոքր, իսկ դուք, դուք... Լսեցեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, արդյոք մեր այս ամբողջ դատողության մեջ, այսինքն ձե՛ր... դե ոչ, ավելի լավ է ասենք՝

մե՛ր դատողության մեջ... արհամարհանք չկա՞ նրա հանդեպ, այդ դժբախտ մարդու հանդեպ... երբ հիմա այսպես վերլուծում ենք նրա հոգին, ասես վերևից, հա՞... երբ այնքան վստահորեն վճռեցինք հիմա, որ նա կառնի փողը, հա՞։

— Ոչ, Lise, ոչ մի արհամարհանք,— հաստատ պատասխանեց Ալյոշան, կարծես արդեն պատրաստ էր այդ հարցին,— ինքս էլ դրա մասին խորհում էի այստեղ գալու ժամանակ։ Մտածեցեք, ի՞նչ արհամարհանք կարող է լինել այստեղ, երբ մենք ինքներս էլ նրա նման ենք, երբ բոլորն էլ նրա նման են։ Որովհետև, այո, մենք էլ նույնն ենք, ավելի լավ չենք նրանից։ Եվ եթե նույնիսկ ավելի լավ լինեինք, այնուամենայնիվ մենք էլ նույնը կդառնայինք նրա վիճակում... Չգիտեմ դուք ինչպես, Lise, բայց ես կարծում եմ, որ ինքս շատ հարցերում մանր հոգի ունեմ։ Իսկ նրա հոգին մանր չէ, ընդհակառակը, շատ նրբազգաց է... Ոչ, Lise, այստեղ ոչ մի արհամարհանք չկա նրա հանդեպ։ Գիտե՞ք, Lise, իմ սրբահայրը մի անգամ ասաց, որ շատ հաճախ մարդկանց պետք է հոգ տանել այնպես, ինչպես երեխաներին, իսկ ոմանց էլ՝ ինչպես հիվանդանոցի հիվանդներին...

— Ա՜խ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ա՜խ, սիրելիս, եկեք մարդկանց մասին հոգանք այնպես, ինչպես հիվանդներին պիտի խնամեինք։

— Լավ, Lise, պատրաստ եմ ես, միայն թե ինքս իմ մեջ լրիվ պատրաստ չեմ։ Երբեմն շատ անհամբեր եմ, երբեմն էլ աչք չունեմ, որ տեսնեմ։ Դուք տարբեր եք։

— Ա՜խ, չեմ հավատում դրան։ Ալեքսեյ Ֆյոդորովիչ, որքա՜ն երջանիկ եմ։

— Ինչ լա՜վ է, որ այդպես եք ասում, Lise։

— Ալեքսեյ Ֆյոդորովիչ, զարմանալիորեն լավն եք դուք, բայց երբեմն կարծես թե ձևապաշտություն եք անում... այնինչ նայում եմ՝ բնավ էլ ձևապաշտ չեք։ Մոտեցեք դռան, կամացուկ բացեք ու նայեցեք, մաման ականջ չի՞ դնում,— փսփրսաց հանկարծ Lise-ը մի տեսակ նյարդային, փութկոտ շշուկով։

Ալյոշան գնաց, մի փոքր բացեց դուռը և հայտնեց, որ ոչ ոք ականջ չի դնում։

— Եկեք այստեղ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ,— շարունակեց Lise-ը, ավելի ու ավելի կարմրելով,— տվեք ձեր ձեռքը, ա՛յ

այսպես։ Լսեցեք, մի մեծ խոստովանություն պիտի անեմ ձեզ։ Երեկվա նամակը ոչ թե կատակով գրեցի, այլ լրջորեն...

Եվ նա ձեռքով ծածկեց իր աչքերը։ Երևում էր, որ շատ էր ամաչում այդ խոստովանությունից։ Հանկարծ բռնեց Ալյոշայի ձեռքը և թափով համբուրեց երեք անգամ։

— Ա՜խ, Lise, ինչ հիանալի՜ է,— ուրախ բացականչեց Ալյոշան։— Այո, ես կատարելապես վստահ էի, որ լրջորեն եք գրել։

— Վստա՜հ էր, երևակայեցե՜ք,— հեռացրեց Lise-ն Ալյոշայի ձեռքը, առանց սակայն բաց թողնելու իր ձեռքից, ասոսկալի կարմրեց ու ծիծաղեց փոքր, երջանիկ ծիծաղով։— Ես նրա ձեռքն եմ համբուրում, իսկ նա ասում է՝ «ինչ հիանալի՜ է»։

Բայց արդարացի չէր նրա հանդիմանությունը. Ալյոշան խիստ շփոթվել էր նույնպես։

— Ես կցանկանայի միշտ դուր գալ ձեզ, Lise, բայց չգիտեմ, թե ինչպես անեմ,— մրմնջաց նա մի կերպ և նույնպես կարմրեց։

— Ալյոշա, սիրելիս, դուք սառն եք ու հանդուգն։ Տեսե՜ք խնդրեմ։ Նա բարեհաճել է ինձ ընտրել որպես իր կինը և դրանով էլ հանգստացել է։ Արդեն վստահ է եղել, որ ես լրջորեն եմ գրել իրեն, տեսեք է՞։ Բայց դա հանդգնություն է ուղղակի, ա՛յ թե ինչ։

— Բայց միթե վա՞տ է, որ վստահ էի,— ծիծաղեց Հանկարծ Ալյոշան։

— Ա՜խ, ընդհակառակը, Ալյոշա, սոսկալի լավ է,— քնքշորեն ու երջանկությամբ լի նայեց նրան Lise-ը։ Ալյոշան մնում էր կանգնած, իր ձեռքը դեռ նրա ձեռքի մեջ պահելով։ Հանկարծ նա թեքվեց ու համբուրեց ուղղակի նրա շրթունքները։

— Ա՞յս ինչ բան է։ Ի՞նչ եք անում,— ճչաց Lise-ը։ Ալյոշան բոլորովին կորցրեց իրեն։

— Վա՜յ, ներեցեք, եթե լավ չէր... Գուցե սոսկալի հիմար մի բան... Դուք ասացիք, որ ես սառն եմ, ես էլ համբուրեցի... Բայց տեսնում եմ, որ հիմար բան դուրս եկավ...

Lise-ն սկսեց ծիծաղել ու ձեռքերով ծածկեց երեսը։

— Եվ այդ հագուստո՞վ,— բացականչեց նա իր խայտանքի մեջ, բայց հանկարծ դադարեց ծիծաղելուց և բոլորովին լրջացավ, համարյա խիստ դեմք ընդունեց։

— Դե լավ, Ալյոշա, համբույրները մի կողմ թողնենք, որովհետև երկուսս էլ դեռ ընդունակ չենք այդ բանին, և դեռ շատ երկար ժամանակ պետք է սպասենք,— եզրակացրեց նա հանկարծ։— Ավելի լավ կլինի ասեք, թե ինչո՞ւ եք ընտրում ինձ նման հիմարին, ինձ նման հիվանդ ու անմիտ աղջկան, դուք որ այնքան խելացի եք, այնպե՞ս կարող եք մտածել, այնպե՞ս դիտել։ Ա՜խ, Ալյոշա, սոսկալի երջանիկ եմ, որովհետև բնավ արժանի չեմ ձեզ։

— Արժանի եք, Lise։ Այս օրերս բոլորովին դուրս եմ գալու վանքից։ Երբ վերադառնամ աշխարհիկ կյանքին, պետք է ամուսնանամ, հաստատ գիտեմ։ Նա էլ ինձ այդպես պատվիրեց։ Ձեզնից լավ ո՞ւմ կարող եմ առնել... և ձեզնից բացի ո՞վ կառնի ինձ։ Արդեն մտածել եմ այդ մասին։ Նախ, դուք ինձ մանկությունից գիտեք, և երկրորդ, ձեր մեջ կան շատ-շատ հատկություններ, որոնք ես բոլորովին չունեմ։ Դուք ավելի զվարթ հոգի ունեք, քան ես, և մանավանդ՝ ինձնից ավելի անմեղ եք, իսկ ես արդեն շատ, շա՜տ բաների հետ եմ շփվել... է՜հ, դուք չգիտեք, ե՛ս էլ Կարամազով եմ։ Ի՞նչ փույթ թե դուք ծիծաղում եք ու կատակներ անում և ինձ էլ չեք խնայում։ Ընդհակառակը, ծիծաղեցեք, ես այնքա՜ն ուրախ եմ դրա համար... Բայց դուք ծիծաղում եք փոքրիկ աղջկա նման, իսկ ձեր ներսում մտածում եք որպես տառապյալ...

— Որպես տառապյա՞լ։ Այսինքն ինչպե՞ս։

— Այո, Lise, քիչ առաջվա ձեր հարցը, թե արդյոք մեր մեջ արհամարհանք չկա՞ այդ դժբախտ մարդու հանդեպ, երբ այդպես անդամահատում ենք նրա հոգին, այդ հարցն ահա տառապյալ սիրտը կարող է տալ... Հասկանո՞ւմ եք, ոչ մի կերպ չեմ կարողանում արտահայտել միտքս, բայց ո՛ւմ որ այդպիսի հարցեր են հաճախում՝ ինքն է ընդունակ տառապելու։ Այս բազկաթոռում նստած, դուք հիմա էլ արդեն շատ բաների մասին մտածած կլինեք...

— Ալյոշա, տվեք ձեր ձեռքը, ինչո՞ւ եք ետ քաշում,— ասաց Lise-ը, երջանկությունից թուլացած ու մի տեսակ նվաղուն ձայնով։— Լսեցեք, Ալյոշա, ի՞նչ եք հագնելու, երբ վանքից դուրս գաք, ինչպիսի՞ զգեստ։ Մի՛ ծիծաղեք, մի՛ բարկանաք, դա շատ, շա՜տ կարևոր է ինձ համար։

— Զգեստի մասին դեռ չեմ մտածել, Lise, բայց ինչ որ ուզում եք, այն էլ կհագնեմ։

— Ուզում եմ, որ մուգ կապույտ թավշյա բաճկոն լինի ձեզ

վրա, սպիտակ պիկե բաճկոնակ և մոխրագույն, փափուկ ֆետրե գլխարկ... Ասացեք, քիչ առաջ երբ հրաժարվեցի իմ երեկվա նամակից, հենց ուղղակի հավատացի՞ք, որ ձեզ չեմ սիրում։

— Ոչ, չհավատացի։

— Օ՜, անտանելի՜ մարդ, անուղղա՜ մարդ։

— Այսինքն գիտեի, որ դուք ինձ... կարծես սիրում եք, բայց ձևացրի, որ հավատում եմ ձեզ, թե չեք սիրում, որպեսզի ձեզ ավելի... հարմար լինի...

— Է՛լ ավելի վատ։ Թե՛ ավելի վատ, թե՛ լավից էլ լավ։ Ալյոշա, սոսկալի սիրում եմ ձեզ։ Առավոտյան, ձեր գալուց առաջ, գուշակություն արեցի. մտածեցի՝ ետ ուզեմ երեկվա նամակը, և եթե հանգիստ հանի ու տա (ինչպես որ միշտ էլ կարելի է սպասել ձեզնից), ուրեմն բոլորովին չի սիրում ինձ, ոչինչ չի զգում, պարզապես հիմար ու անարժան մի երեխա է, և ես խորտակված եմ։ Բայց դուք նամակը թողել եք խուցում, և դա ինձ սիրտ տվեց։ Դե ճիշտ ասեք, նախազգում էիք, որ ես նամակը ետ եմ պահանջելու, և հենց դրա համար էլ այնտեղ թողեցիք, որպեսզի չտաք, չէ՞։ Այդպե՞ս է։ Այդպես է, չէ՞։

— Օ՜հ, Lise, բնավ էլ այդպես չէ։ Մոտս է նամակը հիմա, քիչ առաջ էլ մոտս էր, ահա այս գրպանումս։ Տեսե՛ք ահա։

Ալյոշան ծիծաղելով հանեց նամակը և ցույց տվեց հեռվից։

— Միայն թե ձեզ չեմ տա, հեռվից նայեցեք։

— Ի՞նչ։ Ուրեմն սո՞ւտ խոսեցիք առավոտյան։ Վանական եք ու սո՞ւտ խոսեցիք։

— Թեկուզ և սուտ խոսեցի,— ծիծաղեց նաև Ալյոշան։— Սուտ խոսեցի, որ նամակը ետ չտամ։ Ինձ համար շատ թանկ է այս նամակը,— ավելացրեց նա հանկարծ բուռն զգացմունքով և նորից կարմրեց։— Եվ հավիտյան թանկ է լինելու, ոչ ոքի չեմ տա, երբե՛ք։

Lise-ը հրճվանքով նայում էր նրան։

— Ալյոշա,— սկսեց շշնջալ նորից,— դուռը բաց արեք ու նայեցեք, մաման ականջ չի՞ դնում։

— Լավ, կնայեմ, Lise, բայց ավելի լավ չի՞ լինի, որ չնայեմ, հա՞։ Ինչո՞ւ կասկածել որ ձեր մայրն այդպիսի անազնիվ բան կանի։

— Ինչպե՞ս թե անազնիվ։ Ի՞նչ անազնիվ։ Աղջկա խոսակցությո՞ւնն է գաղտնի լսում. բայց դա նրա իրավունքն է, ոչ

թե անազնիվ բան,— բռնկվեց Lise-ը։— Վստահ եղեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, երբ ինքս մայր դառնամ և ի՛նձ նման էլ աղջիկ ունենամ, անպայման լրտեսելու եմ նրան։

— Մի՞թե, Lise։ Դա լավ բան չէ։

— Ա՜խ աստված իմ, ի՞նչ անազնիվ բան կա այստեղ։ Եթե որևէ մի սովորական աշխարհիկ խոսակցության ականջ դնեի, անազնվություն կլիներ, բայց այստեղ հարազատ աղջիկդ է սենյակում փակվել մի երիտասարդի հետ... Լսեցե՛ք, Ալյոշա, գիտցե՛ք, ես ձեզ էլ պիտի լրտեսեմ՝ հենց որ պսակվենք, ու գիտցեք նաև, որ ձեր բոլոր նամակները պիտի բանամ ու ամեն ինչ պիտի կարդամ... Այնպես որ, նախապես իմացեք։

— Այո, անշուշտ, եթե այդպես է...— մրթմրթաց Ալյոշան,— միայն թե լավ բան չէ...

— Օ՜, ինչ արհամարհա՜նք։ Ալյոշա, սիրելիս, չգժտվենք հենց առաջին օրից։ Ավելի լավ է՝ ասեմ ձեզ ամբողջ ճշմարտությունը. դե իհարկե, շատ վատ բան է լրտեսելը, և անշուշտ թե ես իրավացի չեմ, դուք եք իրավացի, բայց ես համենայն դեպս լրտեսելու եմ ձեզ։

— Դե լավ, արեք։ Ոչ մի գաղտնիք-բան չեք գտնի,— ծիծաղեց Ալյոշան։

— Իսկ ենթարկվելո՞ւ եք ինձ, Ալյոշա։ Դա էլ պետք է նախօրոք որոշել։

— Մեծ սիրով, Lise, անպայման, բայց ոչ ամենագլխավոր հարցում։ Եթե ամենագլխավոր հարցում դուք համաձայն չլինեք ինձ հետ, համենայն դեպս կանեմ այն, ինչ պարտքն է ինձ թելադրում։

— Այդպես էլ պետք է։ Դե իմացեք ուրեմն, որ ես էլ, ընդհակառակը, պատրաստ եմ ոչ միայն ամենագլխավոր հարցում ենթարկվելու, այլև ամեն ինչում զիջելու ձեզ, և հենց հիմա էլ երդվում եմ՝ ամե՛ն ինչում և ամբո՛ղջ կյանքումս,— գոչեց Lise-ը կաթոգին։— Եվ երջանկությո՞ւն է լինելու դա ինձ համար, երջանկությո՞ւն։ Ավելին ասեմ. երդվում եմ, որ երբեք չեմ լրտեսելու ձեզ, երբեք, ո՛չ մի անգամ, ձեր ո՛չ մի նամակը չեմ կարդալու, որովհետև դուք իրավացի եք, իսկ ես՝ ոչ։ Ու թեև լրտեսելու սոսկալի ցանկություն եմ ունենալու, գիտեմ, բայց այնուամենայնիվ չեմ անելու այդ բանը, որովհետև դուք անազնիվ եք համարում դա։ Դուք կարծես թե իմ նախախնամությունը լինեք հիմա... Լսեցեք, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ինչո՞ւ այդպես

տխուր եք այս օրերս, երեկ էլ, այսօր էլ, գիտեմ, որ հոգսեր ու ցավեր ունեք, սակայն տեսնում եմ, որ դրանից բացի մի ուրիշ հատուկ տրտմություն կա ձեր մեջ, գուցե թաքուն մի տրտմություն, հա՞։

— Այո, Lise, թաքուն մի տրտմություն էլ ունեմ,— ասաց Ալյոշան տխրագին։— Տեսնում եմ՝ սիրում եք ինձ, քանի որ կռահեցիք այդ բանը։

— Իսկ ի՞նչ տրտմություն է։ Ի՞նչն է պատճառը։ Կարո՞ղ եք ասել,— հարցրեց Lise-ը վարանոտ թախանձանքով։

— Հետո կասեմ, Lise... հետո...— շփոթվեց Ալյոշան։— Հիմա գուցե հասկանալի էլ չլինի։ Եվ ինքս էլ գուցե չեմ կարողանա պարզ ասել։

— Բացի այդ, գիտեմ, որ ձեզ տանջում են նաև ձեր եղբայրները, ձեր հայրը, չէ՞։

— Այո, եղբայրներս էլ,— ասաց Ալյոշան մի տեսակ մտամոլոր։

— Ես չեմ սիրում ձեր եղբորը՝ Իվան Ֆյոդորովիչին, Ալյոշա,— նկատեց հանկարծ Lise-ը։

Ալյոշան որոշ զարմանքով ընդունեց այդ դիտողությունը, բայց պատասխան չտվեց։

— Եղբայրներս խորտակում են իրենց կյանքը,— շարունակեց նա,— հայրս՝ նույնպես։ Եվ ուրիշներին էլ խորտակում են իրենց հետ։ Այստեղ գործում է «կարամազովյան հողեղեն ուժը», ինչպես հայր Պաիսին ասաց անցյալ օր, հողեղեն ու անտաշ մոլեգին ուժը... Եվ նույնիսկ չգիտեմ՝ աստվածային ոգին շրջո՞ւմ է արդյոք այդ ուժի վերևում։ Գիտեմ միայն, որ ինքս էլ Կարամազով եմ... Վանակա՞ն եմ ես, վանակա՞ն։ Վանակա՞ն եմ ես, Lise։ Կարծեմ քիչ առաջ ասացիք, որ վանակա՞ն եմ ես։

— Այո, ասացի։

— Իսկ ես գուցե հենց աստծուն էլ չեմ հավատում։

— Ձեք հավատո՞ւմ, ի՞նչ է պատահել ձեզ,— մեղմ ու զգույշ ասաց Lise-ը։ Բայց Ալյոշան չպատասխանեց։ Նրա այդ վերջին խիստ անակնկալ խոսքի մեջ չափազանց խորհրդավոր ու չափազանց ներանձնական մի բան կար, որ գուցե իրեն համար էլ պարզ չէր, բայց արդեն անտարակուսելիորեն տանջում էր նրան։

— Եվ ահա հիմա, ի վերա այսր ամենայնի, գնո՞ւմ է իմ բարեկամը, աշխարհի առաջնագույն մարդը, հեռանում է երկրային կյանքից։ Եթե իմանայիք, եթե իմանայի՞ք, Lise, թե ինչպե՞ս եմ կապված, ինչպես եմ հոգեպես միաձուլվել այդ մարդու հետ։ Եվ ահա առանձին եմ մնալու... Ձեզ մոտ կգամ, Lise... Այսուհետև միասին կլինենք...

— Այո՞, միասին, միասի՞ն։ Այսուհետև մի՛շտ միասին՝ մեր ամբողջ կյանքում։ Լսեցեք, Ալյոշա, համբուրեցեք ինձ, թույլ եմ տալիս։

Ալյոշան համբուրեց նրան։

— Դե հիմա գնացեք, Քրիստոս ընդ ձեզ։ (Եվ նա խաչակնքեց Ալյոշային)։ Շտապեցեք նրա մոտ, քանի դեռ կենդանի է։ Տեսնում եմ, որ անխղճորեն ուշացրի ձեզ։ Այսօր ես պիտի աղոթեմ նրա և ձեզ համար։ Ալյոշա, մենք երջանիկ կլինենք։ Կլինե՞նք երջանիկ, կլինե՞նք։

— Կարծում եմ՝ կլինենք, Lise։

Դուրս գալով Lise-ի սենյակից, Ալյոշան անպատեհ համարեց տեսնել տիկին Խոխլակովային և, առանց նրան հրաժեշտ տալու, դուրս էր գնում տնից։ Բայց հենց որ դուռը բացեց, ոտքը դրեց սանդուղքի վրա, հանկարծ, չգիտես որտեղից, նրա դիմաց ելավ ինքը՝ տիկին Խոխլակովան։ Առաջին իսկ բառերից Ալյոշան կռահեց, որ նա հատկապես սպասում էր իրեն այնտեղ։

— Ալեքսե՛յ Ֆյոդորովիչ, սոսկալի է սա։ Երեխայական պարապ բաներ են այդ բոլորը, անմտություն։ Հույս ունեմ, որ դուք երազներով չեք տարվի... Հիմարությո՛ւն է, հիմարությո՛ւն,— հարձակվեց նա Ալյոշայի վրա։

— Միայն թե նրան մի՛ ասեք այդ բանը,— ասաց Ալյոշան,— թե չէ՝ կհուզվի, իսկ դա հիմա վնասակար է նրա համար։

— Ողջամիտ երիտասարդից ողջամիտ խոսք եմ լսում։ Արդյոք այնպե՞ս հասկանամ, որ ինքներդ կարեկցելով նրա հիվանդագին վիճակին՝ համաձայնվեցիք նրա հետ, որովհետև պարզապես չէիք ուզում ձեր հակաճառությամբ բարկացնել նրան։

— Օ՜ոչ, ոչ երբեք, ես կատարելապես լուրջ էի խոսում նրա հետ,— հաստատապես հայտարարեց Ալյոշան։

— Լրջությունն անկարելի է, աներևակայելի է այս հարցում, և այլևս ոչ մի անգամ չեմ ընդունի ձեզ իմ տունը։ դա՝ մեկ, իսկ երկրորդ՝ կգնամ այստեղից և կտանեմ նրան, գիտցե՛ք այդ։

— Բայց ինչո՞ւ,— ասաց Ալյոշան,— դա դեռ այնքան հեռավոր բան է, գուցե դեռ մեկուկես տարի պետք է սպասենք։

— Ա՜խ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, դա ճիշտ է անշուշտ, և մեկուկես տարում հազար անգամ առիթ կունենաք գժտվելու և բաժանվելու։ Բայց ես այնքա՜ն դժբախտ եմ, այնքան դժբախտ։ Թեկուզ պարապ բան է այդ ամբողջը, բայց այնպիսի՜ հարված էր ինձ համար։ Հիմա ես կարծեք Ֆամուսովը լինեմ վերջին տեսարանում[1], դուք՝ Զացկին, իսկ նա՝ Սոֆյան, և երևակայեցեք, դիտմամբ վազեցի այստեղ՝ սանդուղքի վրա ձեզ հանդիպելու, չէ՞ որ պիեսում էլ ճակատագրական դրվագը տեղի է ունենում սանդուղքի վրա։ Ամեն ինչ լսեցի, հազիվ դիմացա։ Ահա թե ուրեմն ինչո՞վ են բացատրվում այս գիշերվա սարսափները և նրա հիստերիկ բռնկումները այսօր։ Աղջկա համար՝ սեր, իսկ մոր համար՝ մահ։ Մնում է ուղղակի գերեզման մտնել։ Հիմա երկրորդ և ամենակարևոր հարցը. այդ ի՞նչ նամակ է, որ նա գրել է ձեզ, ցո՛ւյց տվեք անմիջապես, անմի՜ջապես։

— Ոչ, պետք չէ։ Ասացեք, ինչպե՞ս է Կատերինա Իվանովնայի առողջությունը, ինձ շատ անհրաժեշտ է իմանալ։

— Դեռ պառկած զառանցում է, ուշքի չեկավ։ Մորաքույրներն այստեղ են, ախ են քաշում միայն ու հպարտություն են ծախում իմ գլխին, իսկ Հերցենշտուբեն եկավ և այնպես վախեցավ, որ չգիտեի ինչ անեմ, ինչպես նրան էլ փրկեմ, ուզում էի նույնիսկ բժիշկ կանչել։ Նրան իմ կառքով ետ տարան։ Եվ հանկարծ, ի լրումն ամենայնի, հանկարծ դո՜ւք և այս նամակը։ Ճիշտ է, դեռ մեկուկես տարի կա այդ ամբողջի համար։ Հանուն բոլոր վեհ ու սուրբ բաների, հանուն ձեր վախճանվող սրբահոր՝ ցո՛ւյց տվեք ինձ այդ նամակը, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, ցույց տվեք ի՛նձ, մո՛րը։ Եթե ուզում եք, մատներով բռնեցեք նամակը իմ առաջ, ես այդպես կկարդամ ձեր ձեռքից։

— Ոչ, չեմ ցույց տա, Կատերինա Օսիպովնա, թեկուզ նա էլ թուլատրի, չեմ ցույց տա։ Վաղը կգամ, և եթե ուզեք՝ շատ բաների մասին կխորհրդակցենք, բայց հիմա՝ ցտեսությո՛ւն։

Եվ Ալյոշան վազեց սանդուղքն ի վար՝ դեպի փողոց։

---

[1] Խոսքը Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսի մասին է։ Ս. Թ.

II

ՍՄԵՐԴՅԱԿՈՎԸ ԿԻԹԱՌ Է ՆՎԱԳՈՒՄ

Եվ իրոք, նա ժամանակ էլ չուներ։ Դեռ Lise-ին հրաժեշտ տալու պահին մի միտք էր ծագել նրա գլխում՝ թե ի՞նչ բացառիկ հնարամտությամբ գտնի հիմա Դմիտրիին, որ ըստ երևույթին խուսափում է իրեն հանդիպելուց։ Օրվա երկրորդ կեսն էր արդեն, ժամը երկուսն անց էր։ Ալյոշան իր ամբողջ էությամբ ձգտում էր դեպի վանք՝ իր «մեծ» մահամերձի մոտ, բայց Դմիտրիին տեսնելու պահանջը գերակշիռ դարձավ. ժամ առ ժամ ուժեղանում էր Ալյոշայի մտքում այն համոզմունքը, թե ուր որ է մի անխուսափելի, ահավոր աղետ է կատարվելու։ Գուցե ինքն էլ չկարողանար որոշակի բացատրել, թե հատկապես ի՞նչ բնույթի աղետ է կատարվելիքը և ինչ կուղենար ասել իր եղբորն այդ որոպեին։ «Թեկուզ իմ բացակայությանը վախճանվի իմ բարերարը, բայց գոնե ես ինձ չեմ կշտամբի ամբողջ կյանքում, որ կարող էի գուցե փրկել մի բան և չեմ փրկել, կողքով եմ անցել, շտապել եմ տուն։ Այսպես անելով, նրա մեծ պատգամի համաձայն գործած կլինեմ»։

Ալյոշայի ծրագիրն այն էր, որ անակնկալի բերի իր եղբորը, այսինքն երեկվա նման անցնի այն ցանկապատի վրայով, մտնի այգի և դարանակալ սպասի այն տաղավարում։ «Եթե ինքը այնտեղ չէ,— մտածում էր Ալյոշան,— առանց Ֆոմային կամ տանտիրուհիներին երևալու կպահվեմ տաղավարում ու կսպասեմ թեկուզ մինչև իրիկուն։ Եթե նա առաջվա նման հսկում է Գրուշենկայի գալուն, ուրեմն շատ հավանական է, որ տաղավար էլ մտնի...»։ Եվ սակայն Ալյոշան շատ երկար-բարակ չմտածեց իր ծրագրի մանրամասնությունների մասին, այլ որոշեց իրագործել, նույնիսկ եթե դրա համար ստիպված լիներ վանք չհասնել այսօր...

Ամեն ինչ կատարվեց առանց խոչընդոտի. ճյուղորմի վրայով անցավ համարյա այն նույն տեղից, որտեղից երեկ էր անցել, և գաղտագողի գնաց ու մտավ տաղավարը։ Չէր ուզում, որ իրեն նկատեն. և՛ տանտիրուհիները, և՛ Ֆոման (եթե այստեղ է նա) կարող էին եղբոր կողմը բռնել և անսալ նրա հրամաններին, ուստի Ալյոշային չթողնել, որ այգի մտնի, կամ էլ ժամանակին լուր տալ եղբորը, թե նրան են փնտրում ու հարցնում։

Տաղավարում ոչ ոք չկար։ Ալյոշան նստեց իր երեկվա տեղը և սկսեց սպասել։ Շուրջը նայեց, և տաղավարը, չգիտես ինչու, շատ ավելի խարխուլ թվաց, քան նախորդ օրը, անպետք մի բան երևաց նրա աչքին այս անգամ։ Բայց երեկվա նման պայծառ էր օրը։ Կանաչ սեղանի վրա մի փոքր, կլոր հետք էր մնացել երեկվա ըմպանակից, որից կոնյակը թափթփվել էր ըստ երևույթին։ Դատարկ ու գործին անհարիր մտքեր էին գալիս նրա գլուխը, ինչպես միշտ լինում է ձանձրալի սպասման ժամանակ. օրինակ, թե ինչո՞ւ հիմա, մտնելով այստեղ, նստեց ճիշտ ու ճիշտ այն տեղը, ուր երեկ էր նստել և ինչո՞ւ մի ուրիշ տեղ չնստեց։ Ի վերջո շատ տխուր զգաց իրեն, տխրեց տագնապալի անորոշության հետևանքով։ Բայց դեռ քառորդ ժամ էլ չէր նստել, երբ հանկարծ, շատ մոտիկ մի տեղից, կիթառի ակորդ լսվեց։ Ոչ ավելի, քան քսան քայլ հեռու իրենից, թփերի մեջ մի տեղ, մարդիկ էին նստած և կամ հենց նոր մեկը նստեց։ Ալյոշան վայրկենապես հիշեց որ երեկ, երբ եղբորը թողնելով հեռանում էր տաղավարից, ձախ կողմից ցանկապատի տակ մի կանաչ, ցածլիկ ու հին նստարան էր տեսել կամ աչքին էր երևացել թփերի մեջ։ Ուրեմն հենց այնտեղ էլ նստեցին հիմա եկողները։ Իսկ ովքե՞ր են արդյոք։ Տղամարդու մի ձայն հանկարծ սկսեց երգել քաղցրավուն ֆալցետով, կիթառի վրա նվագակցելով ինքն իրեն.

Անդիմադրելի ուժով
Կապվել եմ սիրած յարիս։
Տե՛ր, ողո-ո՛-որմյա
Ե՛վ նրան, և՛ ինձ,
Ե՛վ նրան, և՛ ինձ,
Ե՛վ նրան, և՛ ինձ։

Ձայնը կանգ առավ։ Քծնողական տենոր էր, երգի դարձվածքներն էլ շինծու էին, քծնողական։ Հանկարծ մի ուրիշ, արդեն կանացի ձայն, փաղաքշական ու մի տեսակ երկչոտ շեշտով, բայց և ակնհայտ սեթևեթանքով ասաց.

— Ինչո՞ւ այսքան երկար ժամանակ չեք գալիս մեզ մոտ, Պավել Ֆյոդորովիչ, ինչո՞ւ միշտ արհամարհում եք մեզ։

— Բնա՜վ,— պատասխանեց տղամարդու ձայնը, թեև քաղաքավարի կերպով, բայց ամենից առաջ վճռականորեն շեշտելով իր արժանապատվությունը։ Ըստ երևույթին տղամարդն

էր գերակշռողը, իսկ կինը դարպասում էր։ «Տղամարդը կարծեմ Սմերդյակովն է,— մտածեց Ալյոշան,— գոնե ձայնից դատելով, իսկ օրիորդը հավանաբար այս տանտիրուհու աղջիկն է, այն, որ եկել է Մոսկվայից, երկար պոչով հագուստ է հագնում և ապուրի համար Մարֆա Իգնատևնայի մոտ է գնում...»։

— Սոսկալի սիրում եմ ամեն տեսակի ոտանավորները, եթե ներդաշնակ են,— շարունակեց կանացի ձայնը։— Ինչո՞ւ չեք շարունակում։

Տղամարդու ձայնը նորից երգեց.

Թագավորի թագն ի՞նչ անեմ,
Միայն թե յարս առողջ լինի։
Տե՛ր, ողո-ո՛-որմյա,
Ե՛վ նրան, և՛ ինձ,
Ե՛վ նրան, և՛ ինձ,
Ե՛վ նրան, և՛ ինձ։

— Անցյալ անգամ է՛լ ավելի լավ էր ստացվում,— նկատեց կանացի ձայնը։— Թագավորի թագից հետո երգում էիք՝ «Անուշիկ յարս առողջ լինի»։ Այդպես ավելի քնքուշ էր լինում, երևի այսօր մոռացել եք։

— Ոտանավոր ասածդ հիմար բան է,— կարճ կտրեց Սմերդյակովը։

— Օ ո՜չ, ես ոտանավոր շատ եմ սիրում։

— Ոտանավորը ոտանավոր է, ուրեմն հիմարություն է ոտից գլուխ։ Ինքներդ դատեցեք. աշխարհիս երեսին ո՞վ է հանգերով խոսում։ Եվ եթե բոլորս սկսեինք հանգերով խոսել, թեկուզ նույնիսկ իշխանությունները այդպես հրամայած լինեին, ինչ է, շա՞տ բան կկարողանայինք ասել։ Ոտանավորը բանի պետք չէ, Մարյա Կոնդրատևնա։

— Ինչպե՞ս է որ դուք այնքան խելոք եք ամեն մի հարցում, ինչպե՞ս է որ թափանցել եք ամեն ինչի մեջ,— ավելի ու ավելի փաղաքշական էր դառնում կանացի ձայնը։

— Ես դեռ ավելին կարող էի, դեռ ավելի շատ բան կիմանայի, եթե հենց մանկուց ուրիշ լիներ իմ բախտը։ Ես մենամարտում ատրճանակով կսպանեի նրան, ով կհանդգներ ինձ ասել, թե ես ստոր արարած եմ, որովհետև Սմերդյաշչայայից եմ ծնվել առանց հոր։ Բայց Մոսկվայում էլ իմ աչքն էին կոխում այդ բանը, այստեղից էր լուրը սողոսկել, շնորհիվ Գրիգորի

Վասիլևիչի։ Գրիգորի Վասիլևիչը նախատում է ինձ, որ ընդվզում եմ ծնվելուս դեմ։ «Դու,— ասում է,— նրա ծոցից դուրս եկար»։ Ծոցը ծոց, բայց ես թույլ կտայի, որ դեռ սաղմի մեջ սպանեին ինձ, միայն թե բոլորովին աշխարհ չգայի։ Շուկայում ինձ ասացին, ձեր մայրիկն էլ իր ահավոր աննրբանկատությամբ ելավ ինձ պատմելու, թե նա մազերը խռիվ էր ման գալիս, հասակն էլ ընդամենը երկու կանգունից մի պուճուր ավելի էր։ Իսկ ինչո՞ւ մի պուճուր, երբ կարելի է պարզապես «մի քիչ» ասել, ինչպես բոլորն են ասում։ Ուզում էր լացկան խոսել, բայց ախր դա գեղջկական լացկանություն է այսպես ասած, հենց գյուղացու զգացմունքներ են դրանք։ Ռուս գյուղացին կարո՞ղ է զգացմունքներ ունենալ կրթված մարդու համեմատությամբ։ Հենց իր անկրթության պատճառով ոչ մի զգացմունք չի կարող ունենալ։ Դեռ մանկուց, երբ հանկարծ լսում եմ «մի պուճուր» խոսքը», կատաղությունից պայթելս է գալիս ուղղակի։ Ատո՛ւմ եմ ամբողջ Ռուսաստանը, Մարյա Կոնդրատևնա։

— Եթե բանակային յունկեր լինեիք կամ էլ նորատի մի հուսար, այսպես չէիք խոսի, այլ թուրը կքաշեիք և կսկսեիք պաշտպանել ամբողջ Ռուսաստանը։

— Ես ոչ միայն չեմ ուզում հուսար լինել, Մարյա Կոնդրատևնա, այլև ցանկանում եմ, ընդհակառակը, որ բոլոր զինվորները վերանան աշխարհից։

— Իսկ ո՞վ պիտի պաշտպանի, երբ թշնամին գա։

— Բնավ էլ կարիք չկա պաշտպանելու։ Տասներկու թվականին ֆրանսիացիների Նապոլեոն առաջին կայսրը, հիմիկվա Նապոլեոնի հայրը, մեծ արշավանք արեց Ռուսաստանի վրա, և լավ կլիներ, եթե այն ժամանակ մեզ նվաճեին հենց այդ ֆրանսիացիները. խելացի ազգը շատ հիմար մի ազգ նվաճած կլիներ ու կկցեր իրեն։ Բոլորովին այլ կարգեր կհաստատվեին նույնիսկ։

— Իբր թե նրանք մերոնցից շա՞տ ավելի լավ են իրենց երկրում։ Մեր մի շքեղ տղային չեմ փոխի երեք այդպիսի երիտասարդ անգլիացու հետ,— քնքշորեն ասաց Մարյա Կոնդրատևնան, երևի այդ վայրկյանին շափազանց նվաղուն մի հայացք միացնելով իր խոսքերին։

— Նայած թե ով ինչ է սիրում։

— Բայց դուք էլ ճիշտ օտարերկրացու նման եք, ուղղակի

ամենից ազնվական օտարերկրացու նման, ասեմ ձեզ այդ, չնայած ամոթ է, որ ասում եմ։

— Եթե ուզում եք իմանալ, անառակության մեջ բոլորը նման են իրար՝ նրանք էլ, մերոնք էլ։ Բոլորն էլ ստահակ են, միայն թե այնտեղի ստահակը՝ լաքած կոշիկներով է ման գալիս, իսկ մեր աղքատ սրիկան լողում է գարշահոտության մեջ և դրանում ոչ մի վատ բան չի տեսնում։ Պետք է մտրակի քաշել ռուս ժողովուրդը, ինչպես Ֆյոդոր Պավլովիչն էր ասում երեկ և ճիշտ էր ասում, թեև նա խելագարի մեկն է, տղաներն էլ հետը։

— Ինքներդ էիք ասում, որ հարգում եք Իվան Ֆյոդորովիչին։

— Բայց նա իմ վերաբերմամբ ասաց, որ հոտած ծառա եմ։ Կարծում է, թե կարող եմ գլուխ բարձրացնել։ Սխալ է կարծում։ Գրպանումս մի այնպիսի գումար լիներ, վաղուց գնացած կլինեի այստեղից։ Դմիտրի Ֆյոդորովիչը որևէ մի ծառայից էլ վատ է թե՛ իր վարքով, թե՛ իր խելքով, թե՛ իր աղքատությամբ, և ոչ մի բան էլ չի գալիս ձեռքից, բայց նրան, ընդհակառակը, բոլորն էլ հարգում են։ Ասենք թե ես ապուր եփող եմ միայն, բայց եթե բախտս բանի, կարող եմ Մոսկվայում կաֆե-ռեստորան բանալ Պետրովկայի վրա։ Որովհետև՝ ես ընտիր բաներ եմ եփում, իսկ Մոսկվայում ոչ ոք, օտարերկրացիներից բացի, չի կարող ընտիր բաներ մատուցել։ Դմիտրի Ֆյոդորովիչը խուժանի մեկն է, բայց եթե նա ամենից առաջնակարգ կոմսի որդուն մենամարտի հրավիրի, կընդունեն նրա հրավերը։ Իսկ ինչո՞վ է նա ինձանից լավ։ Որովհետև՝ նա անհամեմատ ավելի հիմար է, քան ես։ Որքա՜ն փող քամուն տվեց առանց որևէ օգուտ ստանալու։

— Մենամարտը, ինձ թվում է, շատ գեղեցիկ բան է,— նկատեց հանկարծ Մարյա Կոնդրատևնան։

— Իսկ ինչո՞վ է գեղեցիկ։

— Սարսափելի և քաջարի մի բան է այնպես, մանավանդ եթե երիտասարդ սպաներ, ատրճանակը ձեռքներին՝ իրար դեմ կրակում են մի որևէ օրիորդի համար։ Ուղղակի գեղեցիկ տեսարան։ Ա՜խ, եթե աղջիկներին թույլ տային նայելու, սոսկալի կուզենայի տեսնել մի անգամ։

— Լավ է, եթե մարդ ինքն է նշան բռնում, բայց եթե հենց իր մռութին են ուղղում ատրճանակը, այդ դեպքում ավելի հի-

մար զգացողություն չի կարող լինել։ Կթողնեք ու կփախչեք, Մարյա Կոնդրատևնա։

— Մի՞թե դուք կփախչեիք։

Բայց Սմերդյակովը շնորհ չարեց պատասխանելու։ Մի որոշ լռություն տիրեց, հետո նորից լսվեց կիթառի ակորդը և ֆալցետային ձայնը գեղգեղեց երգի վերջին տունը.

Որքան էլ ջանք թափես,
Գնալու եմ ես,
Կյանքն ուրախ է այնպե՜ս-ես
Մայրաքաղաքում։
Չեմ տխրի այնտեղ,
Երբեք չեմ տխրի այնտեղ,
Բնավ միտք չունեմ տխրելու այնտեղ։

Եվ հետո մի անակնկալ բան պատահեց. Ալյոշան հանկարծ փռշտաց։ Վայրկենապես լռեցին նրանք։ Ալյոշան վերկացավ ու գնաց նրանց կողմը։ Իրոք, Սմերդյակովն էր. զուգվել-զարդարվել էր, մազերին անուշահոտ յուղ էր քսել, գանգրացրել էր համարյա, լաքած կոշիկներ էր հագել։ Կիթառը նստարանի վրա էր դրված։ Իսկ օրիորդը Մարյա Կոնդրատևնան էր, տանտիրուհու դուստրը. բաց կապույտ էր նրա շրջազգեստը, փեշը երկու կանգուն երկարություն ուներ։ Նորատի աղջիկ էր տակավին և տգեղ էլ չէր կարծես, բայց թե շատ կլոր էր դեմքը և սոսկալի պեպենոտ։

— Դմիտրին շո՞ւտ կվերադառնա,— ասաց Ալյոշան, որքան կարելի է հանգիստ շեշտով։

Սմերդյակովը դանդաղ վերկացավ նստարանից. վերկացավ նաև Մարյա Կոնդրատևնան։

— Իսկ ինչո՞ւ ես պետք է տեղյակ լինեի Դմիտրի Ֆյոդորովիչի մասին։ Ուրիշ բան, թե որ նրա պահապանը լինեի,— պատասխանեց Սմերդյակովը հանդարտորեն, հատիկ-հատիկ ու քամահրանքով։

— Բայց ես պարզապես հարցրի՝ գիտե՞ք կամ ոչ,— բացատրեց Ալյոշան։

— Ոչինչ չգիտեմ նրա որտեղ լինելու մասին և չեմ էլ ուզում իմանալ։

— Բայց եղբայրս ասել է ինձ, թե հենց դուք եք նրան լուր տալիս ամեն ինչի մասին, որ կատարվում է տանը, և խոստա-

ցել եք հայտնել նրան, երբ Ագրաֆենա Ալեքսանդրովնան գա։

Սմերդյակովը մի դանդաղ, անվրդով հայացք նետեց նրա վրա։

— Իսկ դուք ինչպե՞ս բարեհաճեցիք ներս մտնել այս անգամ, քանի որ արդեն մի ժամ է, ինչ փականով փակված է այստեղ դարպասը,— հարցրեց նա, սևեռուն նայելով Ալյոշային։

— Ցանկապատի վրայով անցա ետևի փողոցից և ուղղակի տաղավար եկա։ Հույս ունեմ, որ դուք ինձ կներեք դրա համար,— դարձավ նա Մարյա Կոնդրատևնային,— պետք է շտապ գտնեի եղբորս։

— Ա՜խ, մի՞թե մենք կարող ենք նեղանալ ձեզնից,— ծոր տվեց Մարյա Կոնդրատևնան, Ալյոշայի ներողություն խնդրելուց շոյված,— քանի որ Դմիտրի Ֆյոդորովիչն էլ հաճախ այդ ձևով է տաղավար մտնում. մենք լուր էլ չունենք, բայց նա նստած է լինում այնտեղ։

— Ես հիմա շատ եմ փնտրում նրան, շատ կցանկանայի նրան տեսնել կամ էլ ձեզնից իմանալ, թե որտեղ է նա հիմա։ Հավատացե՛ք, հենց նրան վերաբերող շատ կարևոր մի գործ կա։

— Նա մեզ ոչինչ չի հայտնում,— թոթովեց Մարյա Կոնդրատևնան։

— Թեև որպես հարևան ու ծանոթ եմ գալիս այստեղ,— սկսեց նորից Սմերդյակովը,— բայց նա այստեղ էլ ինձ անողորմաբար ճնշում էր, անընդհատ հարցուփորձ անելով մեր տիրոջ մասին՝ թե ի՞նչ նոր բան կա, ի՞նչ է անցնում-դառնում այնտեղ, ո՞վ է գալիս, ո՞վ է գնում, և թե չե՞մ կարող տակավին ուրիշ բաներ էլ հաղորդել։ Երկու անգամ նույնիսկ մահվամբ սպառնաց ինձ։

— Ինչպե՞ս թե մահվամբ,— զարմացավ Ալյոշան։

— Իսկ նրա համար միթե մե՞ծ բան է դա՝ այդ իր բնավորությամբ, որ դուք ինքներդ բարեհաճեցիք դիտել երեկ։ Եթե, ասում է, ներս թողնես Ագրաֆենա Ալեքսանդրովնային և նա այստեղ գիշերի, առաջինը դու ողջ չես մնա։ Շատ եմ վախենում նրանից, և պետք է որ նրա մասին հայտնեի քաղաքային իշխանություններին, բայց այդ քայլն ավելի ևս վախեցնում է ինձ։ Էլ ասված գիտե ինչե՞ր կարող է անել հետո։

— Անցյալ օր Դմիտրի Ֆյոդորովիչը նրան ասաց՝ «սանդի մեջ կփշրեմ քեզ»,— ավելացրեց Մարյա Կոնդրատևնան։

— Է՜հ, եթե սանդի մեջ փշրելն է խնդիրը, դա գուցե խոսք է պարզապես...— նկատեց Ալյոշան։— Եթե կարողանայի հիմա նրան հանդիպել, այդ մասին էլ մի որևէ բան կասեի...

— Ահա միակ բանը, որ կարող եմ հայտնել,— կարծես հանկարծ մի նոր բան մտածեց Սմերդյակովը։— Ես որպես մըշտական հարևան ու ծանոթ գալիս եմ այստեղ, և ինչո՞ւ չգամ որ։ Մյուս կողմից, Իվան Ֆյոդորովիչն այսօր առավոտ կանուխ ինձ ուղարկեց նրա բնակարանը՝ այդ Օզերնայա փողոցի վրա, առանց նամակի, այլ բերանացի հայտնելու համար Դմիտրի Ֆյոդորովիչին, որ նա անպայման գա հրապարակի գինետունը՝ միասին ճաշելու։ Գնացի, բայց Դմիտրի Ֆյոդորովիչին չգտա իր բնակարանում, թեև ժամը ութն էր տակավին։ «Այստեղ էր,— ասացին,— բայց հիմա չկա»։ Հենց այս բառերով պատասխանեցին նրա տանտերերը։ Կարծես մի տեսակ պայմանավորվածություն կա նրանց միջև՝ երկուստեք։ Իսկ հիմա, հենց այս րոպեիս, գուցե նա գինետանը նստել է Իվան Ֆյոդորովիչի հետ, քանի որ Իվան Ֆյոդորովիչը տուն չեկավ ճաշելու, իսկ Ֆյոդոր Պավլովիչը մեկ ժամ առաջ առանձին ճաշեց և հիմա պառկեց հանգստանալու։ Սակայն խիստ թախանձագին խնդրում եմ, որ ոչինչ չասեք նրան իմ մասին և այս իմ հայտնած բաների մասին, որովհետև առանց այլևայլի կսպանի։

— Իվանն այսօր գինետո՞ւն հրավիրեց Դմիտրիին,— վերստին հարցրեց Ալյոշան արագորեն։

— Ճիշտ այդպես։

— «Մայր քաղաք» գինետո՞ւնը, հրապարակի վրա՞։

— Ճիշտ այդ գինետունը։

— Շա՜տ հնարավոր է,— բացականչեց Ալյոշան խիստ հուզված։— Շնորհակալ եմ ձեզ, Սմերդյակով, կարևոր լուր է, անմիջապես կգնամ այնտեղ։

— Մի՛ մատնեք ինձ,— ասաց նրա ետևից Սմերդյակովը։

— Օ ո՜չ, գինետուն կհանդիպեմ՝ իբր թե պատահաբար, հանգիստ եղեք։

— Բայց ո՞ւր այդպես, սպասեցե՛ք, դռնակը բանամ,— գոռաց Մարյա Կոնդրատևնան։

— Չէ, այստեղից ավելի մոտ է, ցանկապատի վրայով նորից։

Այդ լուրը սոսկալի ցնցեց Ալյոշային։ Նա վազեց դեպի գինետուն։ Իր վանական հագուստով գինետուն մտնելն անպատշաճ էր, բայց կարող էր սանդուղքի վրա հարցնել նրանց մասին ու դուրս կանչել։ Սակայն հազիվ էր մոտեցել գինետանը, երբ հանկարծ մի լուսամուտ բացվեց, և Իվանն ինքը ձայն տվեց նրան վերևից.

— Ալյո՜շա, կարո՞ղ ես հիմա գալ այստեղ ինձ մոտ, թե չէ։ Սոսկալի երախտապարտ կլինեմ։

— Շատ լավ էլ կարող եմ, միայն թե չգիտեմ՝ այս իմ հագուստով...

— Ես էլ հենց առանձին սենյակում եմ, գնա մուտքի մոտ, կվազեմ ներքև՝ դիմավորելու...

Մեկ րոպե հետո Ալյոշան նստած էր եղբոր մոտ։ Իվանը մենակ էր ճաշում։

III

ՆՂԲԱՅՐՆԵՐԸ ՊՏԵՐՄԱՆՈՒՄ ԵՆ

Սակայն առանձին սենյակում չէր Իվանը։ Դա պարզապես վարագույրով անջատված մի տեղ էր լուսամուտի մոտ, բայց կողմնակի մարդիկ, այնուամենայնիվ, չէին կարող տեսնել վարագույրի ետև նստողներին։ Այդ սենյակը առաջինն էր դռնից, կողքի պատի տակ բուֆետ կար։ Ամեն րոպե սուրում-անցնում էին մատուցողները։ Միայն մեկ հաճախորդ կար այնտեղ՝ ծերունի, պաշտոնաթող մի զինվորական, որ թեյ էր խմում անկյունում։ Բայց գինետան մյուս սենյակներում տիրում էր սովորական աղմուկը, գոռալով կանչում էին մատուցողներին, լսվում էր շշերից հանվող խցանների ձայնը, բիլյարդի գնդակների թխկոցը, երգեհոնը զնգում էր։ Ալյոշան գիտեր, որ Իվանը գրեթե երբեք չի հաճախել այս գինետունը և ընդհանրապես գինետների սիրահար չէ։ Ուրեմն, մտածեց, Իվանն այստեղ եկել է հենց միայն Դմիտրիին հանդիպելու համար, ըստ պայմանագրության։ Եվ սակայն Դմիտրին չկար։

— Քեզ համար ինչպե՞ս պատվիրեմ, թե մի ուրիշ բան։ Հո միայն թեյով չես ապրում, չէ՞,— գոռաց Իվանը, երևի սոսկալի ուրախացած, որ իր մոտ քաշեց Ալյոշային։ Ինքն արդեն վերջացրել էր ճաշը և թեյ էր խմում։

— Թող ձկնապուր լինի, հետո էլ թեյ, քաղցած եմ,— ուրախ ասաց Ալյոշան։

— Իսկ բալի անո՞ւշ։ Ունեն այստեղ։ Հիշո՞ւմ ես, ինչպես էիր բալի անուշ սիրում, երբ փոքր էիր, Պոլենովի տանը։

— Դու հիշո՞ւմ ես այդ։ Դե անուշ էլ պատվիրիր, հիմա էլ դեռ սիրում եմ։

Իվանը կանչեց մատուցողին և պատվիրեց ձկնապուր, թեյ և բալի անուշ։

— Ես ամեն ինչ հիշում եմ, Ալյոշա, քեզ հիշում եմ մինչև քո տասնմեկ տարեկանը, ես այն ժամանակ տասնհինգի մեջ էի։ Տասնհինգ ու տասնմեկ՝ այնպիսի տարբերություն է, որ եղբայրներն այդ տարիքին երբեք ընկերներ չեն լինում։ Նույնիսկ չգիտեմ, սիրո՞ւմ էի քեզ արդյոք։ Երբ Մոսկվա գնացի, առաջին տարիներին բոլորովին չէի էլ հիշում քեզ։ Հետո երբ ինքդ Մոսկվա եկար, կարծեմ միայն մեկ անգամ հանդիպեցինք ինչ-որ մի տեղ։ Իսկ հիմա արդեն չորրորդ ամիսն է ապրում եմ այստեղ, և դեռ մի բառ չենք փոխանակել իրար հետ։ Վաղը մեկնում եմ և հիմա այստեղ նստած մտածում էի՝ ինչպե՞ս արդյոք տեսնեմ քեզ, որ մնաս բարով ասեմ, մեկ էլ հանկարծ դու անցար։

— Իսկ դու շա՞տ էիր փափագում ինձ տեսնել։

— Շատ։ Ես ուզում եմ մի անգամ ընդմիշտ ծանոթանալ քեզ հետ և իմ անձն էլ քեզ ներկայացնել։ Եվ հետո ասել մնաս բարով։ Ըստ իս, ամենից լավը՝ բաժանվելուց առաջ ծանոթանալն է։ Ես տեսնում էի, թե ինչպես էիր ինձ նայում ամբողջ երեք ամիս. աչքերիդ մեջ անընդհատ ինչ-որ ակնկալություն կար, բայց հենց այդ բանը ես չեմ կարող տանել, և այդ պատճառով է, որ չմոտեցա քեզ։ Սակայն ի վերջո սովորեցի քեզ հարգել. մտածեցի՝ ամուր կանգնել է մարդուկը։ Թեև հիմա ծիծաղում եմ, բայց նկատի ունեցիր, որ լուրջ եմ խոսում։ Դու իրոք ամուր ես կանգնած, չէ՞։ Ես սիրում եմ այսպիսի ամուր մարդկանց՝ ինչի վրա էլ կանգնած լինեն, անգամ եթե փոքր տղաներ են քեզ նման։ Քո ակնկալող հայացքը բնավ անտանելի չէր թվում այլևս, ընդհակառակը, վերջ ի վերջո սիրեցի քո այդ ակնկալող հայացքը... Կարծեմ դու ինձ սիրո՞ւմ ես ինչ-որ պատճառով, Ալյոշա։

— Սիրում եմ, Իվան։ Դմիտրին քո մասին ասում է՝ գերեզման է Իվանը։ Ես քո մասին ասում եմ՝ Իվանը առեղծված է։ Դու հիմա էլ ինձ համար առեղծված ես, բայց արդեն մի բան

հասկանում եմ քո մեջ, և ա՛յս առավոտ միայն սկսեցի հասկանալ։

— Եվ ի՞նչ է այդ բանը,— ծիծաղեց Իվանը։

— Չե՞ս նեղանա,— ծիծաղեց նաև Ալյոշան։

— Ասա տեսնենք։

— Որ դու ճիշտ այնպիսի երիտասարդ ես, ինչպես բոլոր մյուս քսաներեքամյա երիտասարդները, նույնպիսի ջահել, նորատի, թարմ ու հիանալի տղա ես, դե ուղղակի դեղնակտուց մի տղա։ Ինչ է, հո շատ չվիրավորեցի՞ քեզ։

— Ընդհակառա՜կը, շշմեցնո՞ղ զուգադիպություն էր,— ուրախ ու եռանդագին աղաղակեց Իվանը։— Կհավատա՞ս, որ ես, Կատերինա Իվանովնայի մոտ մեր այսօրվա հանդիպումից հետո, միայն դրա մասին էի մտածում, այդ իմ քսաներեքամյա դեղնակտուցության մասին, և հիմա հանկարծ գուշակեցիր կարծես այդ բանը և հենց դրանից էլ սկսում ես։ Հիմա ես, այստեղ նստած, գիտե՞ս ինչ էի ասում ինքս ինձ. որ նույնիսկ եթե չհավատամ կյանքին, եթե կորցնեմ հավատքս սիրած կնոջ նկատմամբ, կորցնեմ հավատքս աշխարհի կարգ ու սարքի նկատմամբ, նույնիսկ եթե համոզվեմ, որ ամեն ինչ, ընդհակառակը, խառնաշփոթ, անիծյալ և գուցե դիվային քաոս է, թեկուզ և մարդկային հիասթափության բոլոր սարսափները հարվածեն գլխիս,— մեկ է՝ այնուամենայնիվ ես կուզենամ ապրել, և մի անգամ որ կպա այդ բաժակին՝ էլ չեմ պոկվի, մինչև ամբո՛ղջը չխմեմ։ Թեև, երբ հասնեմ երեսունիս, հավանաբար դեն գցեմ բաժակը, թեկուզ և լիովին խմած չլինեմ, և հեռանամ... չգիտեմ ուր։ Բայց մինչև երեսուն տարեկանս, հաստատ գիտեմ, իմ երիտասարդությունը կհաղթահարի ամեն ինչ՝ ամեն մի հիասթափություն, կյանքի նկատմամբ որևէ զզվանք։ Ես ինձ շատ անգամ հարց եմ տվել՝ արդյոք կա՞ աշխարհում այնպիսի մի հուսահատություն, որ կարողանա հաղթահարել իմ մեջ կյանքի այդ մոլեգին և գուցե անվայել ծարավը, և եկել եմ այն համոզման, որ չկա, այսինքն դարձյալ մինչև երեսուն տարեկան, իսկ հետո արդեն ինքս կհրաժարվեմ, այդպես է ինձ թվում։ Որոշ հյուծախտավոր համբակ-բարոյախոսներ, մանավանդ բանաստեղծներ, հաճախ ստոր են անվանում կյանքի այդ ծարավը։ Ճիշտ է, դա մասամբ կարամազովյան գիծ է՝ կյանքի այդ ծարավը, որ ոչ մի բան հաշվի չի առնում, և քո մեջ էլ անպայման նստած է այդ գիծը, բայց ինչո՞ւ է դա ստոր։ Կենտրոնաձիգ ուժը

դեռ սոսկալի շատ է մեր մոլորակի վրա, Ալյոշա։ Ապրել եմ ուզում, և թեկուզ տրամաբանության հակառակ՝ ապրում եմ։ Թո՛ղ չհավատամ աշխարհի կարգուսարքին, բայց ինձ համար թանկ են գարնանը բողբոջող կպչուն տերևիկները, թանկ է կապույտ երկինքը, թանկ են որոշ մարդիկ, որոնց երբեմն, հավատա՛ ինձ, չգիտես էլ, թե ինչու ես սիրում, թանկ են որոշ մարդկային սրիխրագործություններ, որոնց գուցե արդեն վաղուց դադարել եմ հավատալ, բայց որոնք մարդ գնահատում է սրտով, ըստ հին սովորության։ Ահա քեզ ձկնապուր բերեցին, կե՛ր, անուշ լինի։ Սքանչելի ձկնապուր է, լավ են պատրաստում։ Ես ուզում եմ Եվրոպա գնալ, Ալյոշա, այստեղից էլ հենց ճանապարհ կընկնեմ։ Եվ գիտե՞մ, որ պարզապես մի գերեզմանոց է իմ գնալիք տեղը, բայց ամենաթանկ, ամենաթա՞նկ գերեզմանոցը, ա՛յ թե ինչ։ Սիրելի ննջեցյալներ են հանգչում այնտեղ, նրանց վրա դրված յուրաքանչյուր քար խոսում է անցած այնպիսի՞ ջերմեռանդ կյանքի մասին, հիշեցնում է նրանց այնպիսի՞ կրքոտ հավատքը իրենց սխրագործության, իրենց ճշմարտության, իրենց պայքարի և իրենց գիտության նկատմամբ, որ ես, գիտե՞մ, նետվելու եմ գետին և համբուրելու եմ այդ քարերը, լաց եմ լինելու նրանց վրա, թեև միաժամանակ ի սրտե համոզված լինելով, որ այդ բոլորն արդեն վաղուց գերեզմանոց է և ոչ ավ ինչ։ Եվ ոչ թե հուսահատությունից եմ արտասվելու, այլ պարզապես որովհետև երջանիկ եմ զգալու իմ թափած արցունքներով։ Իմ սեփական խանդաղատանքով եմ արբենալու։ Գարնան կպչուն տերևիկնե՞րը, կապույտ երկի՞նքն եմ սիրում, ահա՛։ Այստեղ ո՞չ խելքի հարց է, ո՞չ տրամաբանության, այստեղ քո ընդերքով, քո որովայնով ես սիրում, սիրում ես քո ջահելության առաջին ուժերը... Որևէ բան հասկանո՞ւմ ես իմ դատարկաբանությունից, Ալյոշա, թե չես հասկանում,— ծիծաղեց հանկարծ Իվանը։

— Ջափազանց լավ եմ հասկանում, Իվան։ Մարդ ուզում է իր ընդերքով ու որովայնով սիրել. շատ գեղեցիկ ասացիր, և ես սոսկալի ուրախ եմ, որ այդպիսի ուժեղ ցանկություն ունես ապրելու,— բացականչեց Ալյոշան։— Ես կարծում եմ, որ բոլորն էլ պետք է ամենից առաջ կյանքը սիրեն աշխարհում։

— Կյանքը սիրեն ավելի՞, քան դրա իմաստը։

— Հենց այդպես, սիրեն տրամաբանելուց առաջ, ինչպես դու ասում ես, հենց անպայման տրամաբանելուց առաջ, և միայն

այդ դեպքում է, որ մարդ իմաստն էլ կհասկանա։ Արդեն վաղուց ինձ այդպես է թվում։ Քո գործի կեսն արված է ու ձեռք բերված, Իվան. դու սիրում ես ապրել։ Հիմա պետք է ջանաս երկրորդ կեսն անել, և փրկված ես։

— Ա՛յ արդեն սկսեցիր փրկե՞լ, բայց ես գուցե չէի էլ կործանվում։ Իսկ ո՞րն է տեսնենք քո այդ երկրորդ կեսը։

— Այն, որ պետք է հարություն տալ քո ննջեցյալներին, որոնք թերևս երբեք էլ չեն մահացել։ Դե, ո՛ւր է թեյը։ Ուրախ եմ, որ զրուցում ենք, Իվան։

— Տեսնում եմ, ներշնչվել ես մի տեսակ։ Սոսկալի սիրում եմ այսպիսի professions de foi[1] լսել՝ ահա այսպիսի... նորընծաներից։ Ամուր մարդ ես դու, Ալեքսեյ։ Ճի՞շտ է, որ վանքից ուզում ես դուրս գալ։

— Ճիշտ է։ Սրբահայրս ինձ առաքում է աշխարհ։

— Ուրեմն աշխարհում էլ հենց կտեսնվենք դեռ, կհանդիպենք մինչև երեսուն տարեկան, երբ ես արդեն կսկսեմ պոկ գալ բաժակից։ Բայց մեր հայրն ահա չի ուզում պոկ գալ իր բաժակից մինչև յոթանասուն տարեկան, նույնիսկ երազում է մինչև ութսուն տարեկան ըմբոշխնել, ինքն էր ասում։ Թեև խեղկատակ է նա, բայց չափազանց լուրջ է մտադրությունը։ Իր հեշտասիրության վրա է կանգնել, կարծես նույնպես ամուր քարի վրա... Թեև երեսունից հետո, ճիշտն ասած, դրանից բացի ոչինչ չկա գուցե, որի վրա կարողանաս կանգնել... Սակայն մինչև յոթանասունը՝ ստորություն է, ավելի լավ է մինչև երեսուն. մարդ կարող է, խաբելով ինքն իրեն, «ազնվության երանգ» պահպանել։ Այսօր չե՞ս տեսել Դմիտրիին։

— Ոչ, չեմ տեսել, բայց Սմերդյակովին տեսա։— Եվ Ալյոշան արագ ու մանրամասն պատմեց եղբորը Սմերդյակովի հետ իր հանդիպման մասին։ Իվանը հանկարծ սկսեց շատ մտահոգ լսել, նույնիսկ հարցուփորձ արեց։

— Միայն խնդրեց, որ Դմիտրիին չասեմ, թե ինքը խոսել է նրա մասին,— ավելացրեց Ալյոշան։

Իվանը հոնքերը կիտեց և մտածմունքի մեջ ընկավ։

— Սմերդյակովի պատճառո՞վ խոժոռվեցիր,— հարցրեց Ալյոշան։

— Այո, նրա պատճառով։ Նրա հերն էլ անիծած։ Իսկապես

[1] Հավատո խոստովանություն (ֆրանս.)։

ուզում էի տեսնել Դմիտրիին, բայց հիմա էլ կարիք չկա...— դժկամ ասաց Իվանը։

— Իսկ դու իրո՞ք այսքան շուտ մեկնում ես, եղբայր։

— Այո։

— Ի՞նչ է լինելու Դմիտրիի և հայրիկի հարցը։ Ինչո՞վ է վերջանալու,— տագնապահար ասաց Ալյոշան։

— Դու էլ միշտ քո երգն ես երգում։ Ե՞ս ինչ գործ ունեմ նրանց հետ։ Իմ եղբայր Դմիտրիի պահապա՞նն եմ, ինչ է,— ջղայնացած կտրեց Իվանը, բայց հանկարծ մի տեսակ դառն ժպտաց։— Կայենի պատասխանը աստծուն՝ իր սպանված եղբոր մասին, չէ՞։ Գուցե ա՞յդ ես մտածում այս րոպեին։ Բայց, գրո՛ղը տանի, չեմ կարող վերջապես այստեղ մնալ ու հսկել նրանց։ Գործերս վերջացրի և գնում եմ։ Չլինի՞ մտածում ես թե խանդում եմ Դմիտրիին, թե այս երեք ամսվա ընթացքում նրանից խլում էի իր գեղեցկուհի Կատերինա Իվանովնային։ Է՛, հիմարություն է, ես իմ գործերն ունեի։ Վերջացրի գործերս և գնում եմ։ Հենց նոր վերջացրի գործերս, դու էլ ականատես եղար։

— Կատերինա Իվանովնայի մո՞տ։

— Այո, նրա մոտ, և միանգամից օձիքս ազատեցի։ Հետո՞ ինչ։ Ես ի՞նչ գործ ունեմ Դմիտրիի հետ։ Դմիտրին այստեղ ոչ մի կապ չունի։ Կատերինա Իվանովնայի հետ ես միա՛յն իմ սեփական գործերը պետք է դասավորեի։ Ինքդ գիտես, որ, ընդհակառակը, Դմիտրին իրեն այնպես պահեց, կարծես խոսք մեկ էր արել ինձ հետ։ Ախր ես նրանից ոչինչ չէի խնդրել, իսկ ինքը հանդիսավոր կերպով Կատերինա Իվանովնային հանձնեց ինձ և օրհնեց։ Շատ զվարճալի է այդ բոլորը։ Չէ՞, չէ՞, Ալյոշա, եթե իմանայի՞ր, թե որքան թեթև եմ հիմա զգում ինձ։ Ահա այստեղ նստած ճաշում էի և, կհավատա՞ս, քիչ մնաց շամպայն պատվիրեի՝ ազատության առաջին ժամս տոնելու համար։ Թյո՛ւ, համարյա կես տարի տևեց, և հանկարծ միանգամից, ամե՛ն ինչ միանգամից դեն գցեցի։ Նույնիսկ երեկ կարո՞ղ էի ենթադրել, որ ամենահեշտ բանն է վերջ տալ դրան, եթե ուզենամ։

— Դու քո սիրո՛ մասին ես խոսում, Իվան։

— Այո, սիրո մասին, եթե ուզում ես. սիրահարվել էի մի օրիորդի, մի ուսանողուհու։ Տանջվում էի նրա համար, և նա էլ տանջում էր ինձ։ Կպել էի նրան... և հանկարծ ամեն ինչ

հոգս ցնդեց։ Այնտեղ ներշնչումով էի խոսում, իսկ երբ դուրս եկա՝ ծիծաղից պայթեցի, կհավատա՞ս։ Չէ, ճիշտ եմ ասում, ուղղակի ծիծաղեցի։

— Դու հիմա էլ այնպե՞ս ուրախ ես խոսում դրա մասին,— նկատեց Ալյոշան, դիտելով նրա դեմքը, որն իրոք զվարթացել էր հանկարծ։

— Դե՛հ, ի՞նչ իմանայի, որ բոլորովին չեմ սիրում նրան։ Հա՛-հա՛։ Եվ ահա պարզվեց, որ չեմ սիրում։ Բայց որքա՞ն էր նա ինձ դուր գալիս։ Որքա՞ն էր դուր գալիս նույնիսկ այս առավոտ, երբ ճառ էի կարդում։ Եվ գիտե՞ս, հիմա էլ սոսկալի դուր է գալիս, բայց և ի՞նչ հեշտ է նրանից հեռանալը։ Կարծում ես սնապարծությո՞ւն եմ անում։

— Ոչ։ Միայն թե՝ գուցե դա սեր չէր։

— Ալյոշա,— ծիծաղեց Իվանը,— մի՛ սկսիր դատողություններ անել սիրո մասին։ Քեզ վայել չէ։ Առավոտյան ինչպե՞ս հանկարծ խոսքի մեջ ընկար, ինչպե՞ս։ Մոռացա էլ քեզ համբուրել դրա համար... Իսկ ինչպե՞ս էր նա ինձ տանջում։ Իրոք որ ջլատման կողքին էի նստած։ Օ՜, նա գիտեր, որ ես սիրում եմ իրեն։ Նա ինձ էր սիրում, ոչ թե Դմիտրիին,— ուրախ պնդեց Իվանը։— Դմիտրիի նկատմամբ նա իր հոգին է ջլատում պարզապես։ Ամեն ինչ, որ ասացի նրան այս առավոտ, կատարյալ ճշմարտություն է։ Միայն թե, և այս է ամենագլխավորը, գուցե տասնհինգ կամ քսան տարի է պետք, որպեսզի նա գլխի ընկնի, թե բնավ չի սիրում Դմիտրիին, այլ սիրում է միայն ինձ. ինձ, որին տանջում է։ Եվ գուցե երբեք էլ գլխի չի ընկնի, նույնիսկ չնայած այն դասին, որ ստացավ այսօր։ Դե ավելի լավ՝ ես էլ արդեն վերջնականապես մնաս բարով ասացի։ Ի դեպ, ի՞նչ է անում հիմա։ Ի՞նչ տեղի ունեցավ իմ գնալուց հետո։

Ալյոշան պատմեց Կատերինա Իվանովնայի հիստերիկ նոպայի մասին և ասաց, որ, իր լսելով, նա հիմա գիտակցությունը կորցրել է և զառանցում է։

— Իսկ չի՞ ստում Խոխլակովան։

— Կարծում եմ՝ ոչ։

— Պետք է ստուգել։ Թեև, հիստերիկայից ոչ ոք էլ չի մեռել երբեք։ Ի՞նչ կա որ, աստված է կանանց ուղարկել հիստերիկան՝ նրանց սիրելուց։ Բոլորովին էլ չեմ գնա այնտեղ։ Ինչո՞ւ նորից գլուխս փորձանքի մեջ գցեմ։

— Բայց այս առավոտ նրան ասացիր, որ ինքը երբեք չի սիրել քեզ։

— Դիտմամբ ասացի։ Ալյոշկա, արի շամպայն պատվիրեմ, խմենք իմ ազատության կենացը։ Ա՜խ, եթե իմանայիր, թե որքա՜ն եմ ուրախ։

— Ոչ, եղբայր, ավելի լավ է չխմենք,— ասաց հանկարծ Ալյոշան,— առանց այդ էլ՝ մի տեսակ տխուր եմ։

— Այո, դու վաղուց տխուր ես, նկատել եմ արդեն։

— Ուրեմն անպայմա՞ն պետք է մեկնես վաղը առավոտյան։

— Առավոտյա՞ն։ Ես չասացի՝ առավոտյան... Բայց գուցե և առավոտյան մեկնեմ։ Կհավատա՞ս, այսօր այստեղ ճաշեցի պարզ այն պատճառով, որ մեր ծերուկի հետ չճաշեմ, այնքա՜ն զզվում եմ այլևս նրանից։ Եթե միայն նա լիներ, արդեն վաղուց կթողնեի նրան ու կգնայի։ Իսկ դու ինչո՞ւ ես այդքան անհանգստանում իմ մեկնելով։ Դեռ աստված գիտե որքան ժամանակ ունենք մինչև հրաժեշտի պահը։ Մի ամբո՞ղջ հավիտենականություն, անմահություն։

— Եթե վաղը մեկնում ես, էլ ի՞նչ հավիտենականություն։

— Բայց դա ի՞նչ նշանակություն ունի մեր երկուսիս համար,— ծիծաղեց Իվանը,— միևնույն է՝ մենք կհասցնենք մեր հարցերից խոսել, մե՛ր հարցերից, որոնց համար էլ հենց եկել ենք այստեղ, չէ՞։ Ի՞նչ ես այդպես զարմացած նայում։ Պատասխանի՛ր, ինչո՞ւ մենք հանդիպեցինք այստեղ։ Որպեսզի խոսենք Կատերինա Իվանովնայի հանդեպ իմ սիրո՞ մասին, ծերուկի և Դմիտրիի՞ մասին։ Արտասահմանի՞ մասին։ Ռուսաստանի ճակատագրական դրությա՞ն մասին։ Իմպերատոր Նապոլեոնի՞ մասին։ Այդպե՞ս, դրա՞ համար ենք հանդիպել։

— Ոչ, դրա համար չէ։

— Ուրեմն ինքդ էլ հասկանում ես, թե ինչի համար։ Ուրիշներին մի բան է հետաքրքրում, իսկ մեզ՝ դեղնակտուցներիս՝ մի այլ բան. մենք ամենից առաջ պետք է հավիտենական հարցերը լուծենք, ահա մեր հոգսը։ Հիմա ամբողջ երիտասարդ Ռուսաստանը միայն ու միայն հավիտենական հարցերի մասին է խոսում, հենց հիմա, երբ բոլոր ծերերը հանկարծ սկսեցին գործնական հարցերով զբաղվել։ Դու ինչո՞ւ ամբողջ երեք ամիս ինձ նայում էիր ակնկալությամբ։ Որպեսզի հարց տաս ինձ. «Որպե՞ս հավատաս, և կամ թե ո՞չ հավատաս ամենևին»։ Ահա՛ թե ինչ իմաստ ունեին ձեր հայացքները երեք ամիս շարունակ, Ալեքսեյ Ֆյոդորովիչ, այդպես է, չէ՞։

— Գուցե և այդպես է,— ժպտաց Ալյոշան։— Ինձ վրա հո չե՞ս ծիծաղում հիմա, եղբա՛յր։

— Ես ծիծաղե՞մ։ Չեմ ուզում վշտացնել իմ ախպերիկին, որ երեք ամիս նայում էր ինձ այդպիսի ակնկալությամբ։ Ալյոշա, շիտակ նայիր ինձ. ախր ես ինքս էլ ճիշտ ու ճիշտ քեզ նման փոքրիկ տղա եմ, գուցե լոկ այն տարբերությամբ, որ նորընծա չեմ։ Եվ ի՞նչ է ռուս տղաների արած գործը մինչև հիմա, այսինքն որոշ տղաների։ Ահա այս գարշահոտ գինետունը, օրինակ, գալիս հավաքվում են այստեղ, նստում անկյունում։ Ամբողջ կյանքում իրար չեն ճանաչել, իսկ երբ դուրս գան գինետնից՝ էլի քառասուն տարի չեն հանդիպելու իրար։ Եվ ի՞նչ, նրանք ինչի՞ մասին են դատողություններ անելու, երբ մի թռուցիկ պահ են որսացել գինետանը։ Համաշխարհայի՛ն հարցերի մասին, և ոչ այլ ինչի. աստված կա՞, անմահություն կա՞, Իսկ ովքեր չեն հավատում, դե նրանք էլ կխոսեն սոցիալիզմի ու անարխիզմի մասին, ամբողջ մարդկությունն ըստ նոր կարգի վերափոխելու մասին, այնպես որ նույն զահրումարն է դուրս գալիս, նույն հարցերը՝ միայն թե մյուս ծայրից։ Եվ բազմաթիվ, բազմաթիվ ամենաինքնատիպ ռուս տղաների արած գործը միայն այն է, որ հավիտենական հարցերի մասին են խոսում մեր այս օրերին։ Մի՞թե այդպես չէ։

— Այո, իսկապես ռուսների համար այդ հարցերը՝ կա՞ արդյոք աստված և կա՞ արդյոք անմահություն, կամ էլ, ինչպես ահա ինքդ ես ասում, մյուս ծայրից դիտված հարցերը, իհարկե, սկզբնական են և գալիս են ամեն բանից առաջ, և այդպես էլ պետք է լինի,— ասաց Ալյոշան, միշտ նույն մեղմ ու զննող ժպիտով դիտելով եղբորը։

— Գիտե՞ս ինչ, Ալյոշա, երբեմն բնավ խելոք բան չէ ռուս մարդ լինելը, բայց էլի դժվար է պատկերացնել ավելի հիմար բան, քան այն, ինչով զբաղվում են հիմա ռուս տղաները։ Բայց մի ռուս տղայի, Ալյոշային, սոսկալի սիրում եմ։

— Ի՞նչ հիանալի հարմարեցրիր,— ծիծաղեց հանկարծ Ալյոշան։

— Դե ասա ուրեմն, ինչի՞ց սկսենք, ինքդ հրամայիր։ Աստծո՞ւց։ Գոյություն ունի՞ աստված. այս հարցի՞ց։

— Ինչից ուզում ես սկսիր, թեկուզ «մյուս ծայրից»։ Չէ՞ որ երեկ հայրիկի մոտ հայտարարեցիր, որ աստված չկա,— քթնախույզ նայեց Ալյոշան եղբորը։

— Երեկ ծերուկի մոտ ճաշելիս դիտմամբ ասացի այդ՝ քո հոգու հետ խաղալու համար, և տեսա, թե ինչպես աչուկներդ վառվեցին։ Բայց հիմա բոլորովին դեմ չեմ քեզ հետ բանակցելու, և սա շատ լուրջ եմ ասում։ Ուզում եմ քեզ հետ մտերմանալ, Ալյոշա, որովհետև բարեկամներ չունեմ, ուզում եմ փորձել։ Դե լավ ուրեմն, պատկերացրո՛ւ, գուցե ես էլ ընդունում եմ աստծուն,— ծիծաղեց Իվանը,— քեզ համար անակնկալ է, չէ՞։

— Այո, ինչպես, միայն եթե հիմա էլ չես կատակում։

— Կատակո՞ւմ։ Սրբահոր մոտ ասացին երեկ, թե ես կատակում եմ։ Գիտե՞ս ինչ, սիրելիս, տասնութերորդ դարում կար մի ծեր մեղապարտ, որ հայտարարեց, թե եթե չլիներ աստված պետք էր հնարել նրան, s'il n'existait pas Dieu, il faudrait l'inventer։ Եվ իրոք մարդը հնարեց աստծուն։ Եվ ոչ թե այն է տարօրինակը, հրաշալի կլիներ ոչ թե այն, որ աստված իսկապես գոյություն ունենար, այլ հրաշալին այն է, որ այդպիսի մի գաղափար, աստծո անհրաժեշտության գաղափարը, կարողացել է մտնել այնպիսի մի վայրի ու չար կենդանու գլուխը, ինչպիսին մարդն է. այնքա՞ն որ սրբազան է այդ գաղափարը, այնքա՞ն հուզիչ, այնքա՞ն իմաստուն և այնքա՞ն պատիվ է բերում մարդուն։ Գալով ինձ, ես արդեն վաղուց որոշել եմ չմտածել՝ մա՞րդն է ստեղծել աստծուն, թե աստված՝ մարդուն։ Պարզ է, ես չեմ սկսի տնտղել ռուս տղաների բոլոր ժամանակակից աքսիոմները այդ նյութի շուրջ, աքսիոմներ, որոնք ամբողջությամբ քաղված են եվրոպական վարկածներից. այն, ինչ վարկած է այնտեղ, ռուս տղայի համար անմիջապես դառնում է աքսիոմ, և ոչ միայն տղաների, այլև նրանց պրոֆեսորների համար, որովհետև ռուս պրոֆեսորներն էլ հիմա շատ հաճախ նույն ռուս տղաներն են։ Ուստի զանց եմ առնում բոլոր վարկածները։ Ի՞նչ է հիմա մեր խնդիրը։ Այն, որ ես կարողանամ հնարավորին չափ շուտ բացատրել քեզ իմ էությունը, այսինքն թե ի՛նչ մարդ եմ ես, ի՛նչ բանի եմ հավատում և ինչի՛ վրա եմ դնում իմ հույսը, այս է, ա՛յս է խնդիրը, չէ՞։ Ուստի և հայտարարում եմ, որ ուղղակի և պարզապես ընդունում եմ աստծուն։ Բայց պետք է նշեմ ահա հետևյալը. եթե աստված կա և եթե իրոք նա ստեղծել է երկիրը, ապա, ինչպես բացարձակորեն հայտնի է մեզ, ստեղծել է ըստ էվկլիդյան երկրաչափության, իսկ մարդկային միտքը՝ տարածության լոկ երեք չափերի հասկացությամբ։ Այնինչ եղել են և նույնիսկ հիմա էլ կան երկրաչափներ ու փիլիսոփաներ, անգամ ամենակարկառուն դեմքերից, որոնք տարակուսում են, որ ամբողջ տիեզերքը կամ, ավելի լայն առումով, ամբողջ գոյությունը ստեղծված լինի միայն ըստ էվկլիդյան երկրաչափության. նրանք նույնիսկ հանդգնում են երազել, թե երկու զուգահեռ գծեր, որոնք ըստ էվկլիդի ոչ մի կերպ չեն կարող իրար հանդիպել երկրի վրա, գուցե հանդիպեն անհունության մեջ որևէ մի տեղ։ Ես, սիրելիս, եկել եմ այն եզրակացության, որ եթե նույնիսկ ա՛յդ չեմ կարող հասկանալ, էլ ո՞ւր մնաց որ աստծո մասին որևէ բան հասկանամ։ Եվ խոնարհաբար գիտակցում եմ, որ ոչ մի ընդունակություն չունեմ այսպիսի հարցեր լուծելու, իմ խելքը էվկլիդյան է, երկրային, ուստի մեր ի՞նչ բանն է լուծել հարցեր, որոնք այս աշխարհին չեն պատկանում։ Եվ քեզ էլ խորհուրդ եմ տալիս երբեք չմտածել այդ մասին, սիրելիդ իմ Ալյոշա, և նամանավանդ աստծո մասին՝ կա՞, թե չկա։ Դրանք բոլորը բացարձակապես խորթ հարցեր են այն խելքի համար, որ ստեղծված է միայն երեք չափերի հասկացողությամբ։ Այսպես ուրեմն, ընդունում եմ աստծուն և ոչ միայն ուրախությամբ, այլև, ավելին, ընդունում եմ և իմաստությունը նրա, նպատակը նրա, որոնք բացարձակապես անծանոթ են մեզ, հավատում եմ կյանքի կարգուսարքին, իմաստին, հավատում եմ հավիտենական ներդաշնակության, որի մեջ իբրև թե միաձուլվելու ենք բոլորս, հավատում եմ Բանին, որին ձգտում է ամբողջ տիեզերքը, և որ է «առ աստված», և որ ինքն է աստված, դե և այլն, և այլն, և այլն մինչև անհունություն։ Այս բոլորի մասին բազում խոսքեր են հորինված։ Կարծես թե ճիշտ ճանապարհի վրա եմ, չէ՞։ Դե հիմա պատկերացրու, որ վերջին հաշվով աստծո այս աշխարհը չեմ ընդունում, ու թեև գիտեմ, որ գոյություն ունի, բայց մեկ է՝ բոլորովին չեմ ընդունում։ Ես ոչ թե աստծուն չեմ ընդունում, հասկացի՛ր դու ինձ, ես նրա ստեղծած աշխարհը՝ աստծո աշխա՛րհը չեմ ընդունում և չեմ կարող համաձայն լինել ընդունելու։ Ավելի պարզ ասեմ։ Երեխայի նման հավատում եմ, որ տառապանքները կամոքվեն ու կհարթվեն, մարդկային հակասությունների ամբողջ վիրավորական զավեշտը կանհետանա ողորմելի միրաժի նման, իբրև մարդու սակավազոր և ատոմի չափ փոքր էվկլիդյան խելքի նողկալի հնարանք, և վերջապես աշխարհի ավարտին, հավերժական ներդաշնակության պահին, տեղի կունենա և կհայտնվի այնքա՞ն թանկագին մի բան, որ

լիուլի կբավարարի բոլոր սրտերը, կհանգստացնի բոլոր վրդովմունքները, կքավի մարդկանց բոլոր չարագործությունները, նրանց թափած ամբողջ արյունը, և հնարավոր կդարձնի ոչ միայն ներել, այլև արդարացնել ամեն ինչ, որ եկել է մարդկանց գլխին,— թո՛ղ լինի, թո՛ղ լինի ու հայտնվի այդ ամբողջը, բայց ես չե՛մ ընդունում այդ և չեմ ուզում ընդունել։ Թող նույնիսկ զուգահեռ գծերը հանդիպեն և ինքս տեսնեմ այդ. կտեսնեմ ու կասեմ, որ հանդիպել են, բայց այնուամենայնիվ չեմ ընդունի։ Ահա իմ էությունը, Ալյոշա՛, ահա իմ թեզը։ Սա արդեն լուրջ եմ ասում քեզ։ Ես դիտմամբ մեր խոսակցությունն սկսեցի այնպես, որ ավելի հիմար ձևով չէր էլ կարելի սկսել, բայց հասցրի իմ խոստովանության, որովհետև հենց այդ էլ քո ուզածն է։ Դու ոչ թե աստծո մասին էիր ուզում լսել, այլ ուզում էիր իմանալ, թե ինչով է ապրում քո սիրած եղբայրը։ Ես էլ ահա ասացի։

Իվանը իր երկար ճառն ավարտեց ինչ-որ հատուկ և անսպասելի զգացմունքով։

— Իսկ ինչո՞ւ սկսեցիր այնպես, որ «ավելի հիմար ձևով չէր էլ կարելի սկսել»,— հարցրեց Ալյոշան, մտածկոտ նայելով նրան։

— Դե, նախ և առաջ, թեկուզ ռուսականության սիրույն. այսպիսի նյութերի մասին ռուսական խոսակցություններն արվում են այնպես, որ ավելի հիմար ձևով չի էլ կարելի անել։ Եվ երկրորդ՝ դարձյալ որքան ավելի հիմար է մի բան, այնքան ավելի մոտ է բուն խնդրին։ Որքան ավելի է հիմար, այնքան ավելի պարզ է։ Հիմարությունը կարճ է և պարզամիտ, իսկ խելոքությունը խորամանկ խաղեր է անում և թաքնվում է։ Խելոքությունը ստոր է, իսկ հիմարությունը շիտակ է և ազնիվ։ Ես բանը հասցրի իմ հուսահատության, և որքան ավելի հիմար ներկայացրի, այնքան ավելի նպաստավոր է ինձ համար։

— Կբացատրե՞ս ինձ, թե ինչու «չես ընդունում աշխարհը»,— ասաց Ալյոշան։

— Իհարկե կբացատրեմ, գաղտնիք չէ, հենց դրան էլ բերում էի խոսքը։ Իմ թանկագին ախպերիկ, ես ոչ թե քեզ այլասերել ու քո խարսխից պոկել եմ ուզում, այլ գուցե ի՛նձ եմ ուզում բուժել քո միջոցով,— ժպտաց հանկարծ Իվանը՝ ճիշտ մի փոքրիկ, հեզ տղայի նման։ Ալյոշան դեռ երբեք այդպիսի ժպիտ չէր տեսել նրա դեմքին։

IV

ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆ

— Ես քեզ մի բան պետք է խոստովանեմ,— սկսեց Իվանը։— Երբեք չեմ կարողացել հասկանալ, թե ինչպես կարելի է սիրել մերձավորներին։ Հենց մերձավորներին էլ, ըստ իս, անհնար է սիրել, իսկ հեռավորներին՝ գուցե։ Ժամանակին, չեմ հիշում որտեղ, մի պատմություն եմ կարդացել «Հովհան Ողորմածի» մասին (մի սուրբի). երբ անոթի, սառած մի անցորդ գալիս է մոտը և խնդրում տաքացնել իրեն, սուրբը նրա հետ պառկում է նույն անկողնում, գրկում է և սկսում շունչ տալ նրա բերանին, որ սարսափելի մի հիվանդությունից թարախակալվել էր և գարշելի հոտում էր։ Համոզված եմ, որ նա այդ արել է կեղծիքի ճնշման տակ, պարտականության հարկադրած սիրո դրդումով, հանձն առած ապաշխարանքի ստիպմամբ։ Որպեսզի սիրես մարդուն, պետք է նա թաքնվի. բավական է, որ դեմքը ցույց տա մի քիչ՝ կորա՞վ սերը։

— Հայր Զոսիման քանիցս խոսել է այդ մասին,— նկատեց Ալյոշան,— նա ևս ասել է, որ շատերի համար, ովքեր անփորձ են սիրո մեջ, մարդու դեմքը հաճախ արգելք է լինում սիրելու։ Բայց և մարդկության մեջ շատ-շատ է սերը, և համարյա քրիստոսանման սերը, ես այդ ինքս գիտեմ, Իվան...

— Է՜հ, իսկ ես դեռ չգիտեմ այդ բանը և չեմ էլ կարող հասկանալ, և ինձ հետ՝ անթիվ-անհամար մարդիկ նույնպես։ Հարցն այն է, որ արդյոք դրա պատճառը մարդկանց վատ հատկություններ՞ն են, թե հենց նրանց բնությունն է այդպես։ Ըստ իս, մարդկանց նկատմամբ Քրիստոսի սերը մի տեսակ անկարելի հրաշք է այս երկրի վրա։ Ճիշտ է, նա աստված էր։ Բայց հո մենք աստվածներ չենք։ Ենթադրենք, թե ես, օրինակ, խորապես տառապում եմ, բայց ուրիշը երբեք չի կարող իմանալ, թե որքան ուժեղ է իմ տառապանքը, որովհետև նա ուրիշ է, ոչ թե ես. և բացի այդ՝ մարդը հազիվ թե համաձայն լինի ընդունելու, որ ուրիշը տառապում է (կարծես դա մի արժանիք լինի)։ Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ չի ընդունի։ Որովհետև, օրինակ, վատ հոտ է գալիս ինձնից, որովհետև ես հիմար դեմք ունեմ, կամ որովհետև մի ժամանակ նրա ոտքն եմ կոխել։ Հետո, տառապանք կա, տառապանք էլ կա. նվաստ տառապանքը, որ ինձ ստորաց-

նում է, ասենք քաղցը, դեռ կարող է ընդունելի լինել իմ բարեբարի համար. բայց եթե մի քիչ ավելի բարձր տառապանք է, ասենք հանուն գաղափարի, ո՞չ, նա հազիվ թե ընդունի այդ, որովհետև, դիցուք, կնայի ինձ և հանկարծ կտեսնի, որ իմ դեմքը բոլորովին էլ այն չէ, ինչ ըստ նրա երևակայության պետք է լինի այսինչ գաղափարի համար տառապող մարդու դեմքը։ Եվ ահա, անմիջապես ինձ կզրկի իր շնորհներից, նույնիսկ առանց որևէ չարասրտության։ Մուրացկանները, հատկապես ազնիվ մուրացկանները, երբեք չպետք է դրսում երևան, այլ թերթերի միջոցով ողորմություն խնդրեն։ Մարդ դեռ կարող է վերացականորեն սիրել մերձավորին, երբեմն նույնիսկ հեռվից սիրել, բայց մոտից՝ գրեթե երբեք։ Եթե ամեն ինչ լիներ այնպես, ինչպես բեմի վրա, բալետում, ուր մուրացկանները դուրս են գալիս մետաքսե ցնցոտիներ ու պատռած ժանյակներ հագած և ողորմություն են խնդրում շնորհալի պարելով, դե այդ դեպքում կարելի կլիներ սիրով նայել նրանց։ Սիրով նայել, բայց, համենայն դեպս, ոչ թե սիրել։ Սակայն բավական է այս մասին։ Իմ նպատակն էր պարզապես քեզ մոտեցնել իմ տեսակետին։ Ես ուզում էի խոսել ընդհանրապես մարդկության տառապանքի մասին, բայց ավելի լավ է կանգ առնենք միայն երեխաների տառապանքի վրա։ Դրանով իմ փաստարկության չափերը տասնապատիկ պակաս կլինեն, բայց դե ավելի լավ է խոսենք միայն երեխաներից։ Պարզ է, դա նվազ նպաստավոր է ինձ համար։ Սակայն, նախ և առաջ, երեխաներին կարելի է սիրել նույնիսկ մոտից, նույնիսկ երբ կեղտոտ են, նույնիսկ եթե տգեղ են դեմքով (թեև ես կարծում եմ, որ երեխաները երբեք տգեղ չեն լինում)։ Եվ հետո, մեծերի մասին չեմ խոսելու նաև այն պատճառով, որ նրանք, սիրո անարժան և զզվելի լինելուց բացի, հատուցում էլ են ստացել. կերել են խնձորը, իմացել չարն ու բարին և դարձել «իբրև զաստուածս»։ Եվ հիմա էլ շարունակում են ուտել։ Իսկ փոքրիկները ոչինչ չեն կերել և դեռ լրիվ անմեղ են։ Սիրո՞ւմ ես երեխաներին, Ալյո՜շա։ Գիտեմ, որ սիրում ես, և դու կհասկանաս, թե ինչու հիմա ուզում եմ միայն նրանց մասին խոսել։ Եթե նրանք նույնպես սարսափելի տառապում են երկրի վրա, ապա անշուշտ տառապում են իրենց հայրերի մեղքով, պատժված են իրենց հայրերի համար, որոնք խնձորն են կերել. բայց այդ տրամաբանությունը մյուս աշխարհին է պատկանում և մարդկային սրտին անհասկանալի է այս-

տեղ՝ երկրի վրա։ Անմեղը չպետք է տառապի ուրիշի մեղքով, այն էլ այդպիսի՜ անմեղը։ Զարմացի՜ր ինձ վրա, Ալյոշա, ես նույնպես սոսկալի սիրում եմ փոքրիկներին։ Եվ նկատի ունեցիր, որ դաժան մարդիկ, կրքոտ, գիշատիչ, կարամազովյան մարդիկ երբեմն շատ են սիրում երեխաներին։ Երեխաները, քանի դեռ երեխա են, մինչև յոթ տարեկան օրինակ, սոսկալի տարբերվում են մարդկանցից. ասես բոլորովին ուրիշ էակներ լինեն՝ ուրիշ բնությամբ։ Բանտում ճանաչում էի մի ավազակի, որն իր հանցագործությունների ընթացքում, գիշերները կողոպուտի համար մտնելով տները, ամբողջ ընտանիքներ կոտորելով, միաժամանակ սպանել է նաև մի քանի երեխայի։ Սակայն երբ նստած էր բանտում, նա տարօրինակ կերպով սիրում էր նրանց։ Լուսամուտից անընդհատ նայում էր բանտի բակում խաղացող երեխաներին։ Մի փոքրիկ տղայի սովորեցրել էր գալ իր մոտ, լուսամուտի տակ, և տղան կարգին բարեկամացավ նրա հետ... Գգիտե՞ս ինչու եմ այս բոլորն ասում, Ալյոշա։ Գլուխս ցավում է մի տեսակ և տխուր եմ։

— Տարօրինակ տեսքով ես խոսում,— անհանգիստ նկատեց Ալյոշան,— կարծես մի տեսակ ցնորվել ես։

— Ի դեպ, վերջերս Մոսկվայում մի բուլղարացի ինձ պատմում էր,— շարունակեց Իվան Ֆյոդորովիչը, ասես նույնիսկ լսելով եղբորը,— թե ինչպես թուրքերն ու չերքեզներն այնտեղ, Բուլղարիայում, համատարած խժդժություններ են անում, վախենալով սլավոնների ընդհանուր ապստամբությունից. այսինքն այրում են, կոտորում, բռնաբարում են կանանց ու երեխաներին, գերիների ականջները գամում են ցանկապատին և այդպես թողնում մինչև առավոտ, իսկ առավոտյան կախում են նրանց. և նման շատ բաներ, որ երևակայելն անգամ անհնար է։ Իրոք, երբեմն խոսում են մարդու «գազանային» դաժանությունների մասին, բայց դա սոսկալի անարդարություն ու վիրավորանք է գազանների նկատմամբ. գազանը երբեք չի կարող այնքան դաժան լինել, որքան մարդը, այնպես արտիստաբար, այնպես գեղարվեստորե՞ն դաժան։ Վագրը պարզապես հոշոտում է, պատառոտում, և ա՛յդ միայն կարող է անել։ Նրա մտքովն անգամ չէր անցնի մարդկանց ականջները գամել ցանկապատին և ամբողջ գիշերը թողնել այդպես, եթե նույնիսկ ի վիճակի լիներ անելու այդ բանը։ Իսկ այդ թուրքերը, ի միջի այլոց, հեշտասիրությամբ տանջել են նաև երեխաներին, մոր արգանդից դա-

շուլնով կտրել-հանելուց սկսած մինչև ծծկեր երեխաներին վեր նետելը և սվինի ծայրով բռնելը՝ այն էլ մո՜ր աչքերի առաջ։ Հենց բուն հեշտանքն էլ մո՜ր աչքերի առաջ անելն էր։ Բայց ահա այսպիսի մի տեսարան հատկապես հետաքրքրել է ինձ։ Պատկերացրու. ծծկեր մանկիկը՝ դողահար մոր ձեռքերին, շուրջը՝ ներխուժած թուրքեր։ Նրանք մի զվարճալի խաղ են սկսել. փայփայում են փոքրիկին, ծիծաղում են, որպեսզի նրան էլ ծիծաղեցնեն, և հաջողում են, մանկիկը ծիծաղում է։ Այդ րոպեին թուրքը նրա վրա ատրճանակ է ուղղում՝ դեմքից չորս մատնաչափ հեռավորությամբ։ Մանկիկը ուրախ ծլվլում է, թաթիկները երկարում, որ բռնի ատրճանակը, և արտիստը հանկարծ շրջացնում է բլթակը ուղիղ նրա երեսին, ջախջախում նրա գլխիկը... Արվեստ է, այնպես չէ՞։ Ի դեպ, ասում են, որ թուրքերը քաղցրավենիք շատ են սիրում։

— Եղբա՜յր, ինչո՞ւ ես պատմում այդ բոլորը,— հարցրեց Ալյոշան։

— Ես կարծում եմ, որ եթե սատանան գոյություն չունի և ուրեմն մարդն է ստեղծել նրան, ապա ստեղծել է իր կերպարանքով ու նմանությամբ։

— Ուրեմն այնպես, ինչպես ստեղծել է աստծուն։

— Դու զարմանալիորեն կարողանում ես շուտ տալ բառերը, ինչպես ասում է Պոլոնիուսը «Համլետում»,— ծիծաղեց Իվանը։— Ինձ խոսքի վրա բռնեցիր. լա՜վ, թող այդպես լինի, ուրախ եմ։ Հիանալի՜ է ուրեմն քո աստվածը, եթե նրան մարդն է ստեղծել իր կերպարանքով ու նմանությամբ։ Դու հիմա հարցրիր, թե ինչու եմ պատմում այս բոլորը։ Գիտե՞ս ինչ, ես սիրում ու հավաքում եմ որոշ աննշան փաստեր, և կհավատա՞ս, որ նույնիսկ գրի եմ առնում որոշ տեսակի անեկդոտներ թերթերից ու զրույցներից, որտեղ պատահի, և արդեն մի լավ հավաքածու ունեմ։ Թուրքերն անշուշտ մտել են հավաքածուի մեջ, բայց նրանք օտարներ են։ Ես հայրենի նմուշներ էլ ունեմ և նույնիսկ ավելի լավ, քան թուրքականները։ Գիտես, մեզ մոտ ավելի շատ է ծեծը՝ ճիպոտն ու մտրակը, և դա ազգային հատկանիշ է։ Ականջ գամելն աներևակայելի բան է մեզ մոտ, մենք այնուամենայնիվ եվրոպացիներ ենք, բայց ճիպոտը, բայց մտրակը՝ այդ արդեն մե՛զ հատուկ բան է, ոչ ոք չի կարող խլել մեզնից։ Արտասահմանում, թվում է, բնավ չեն ծեծում հիմա, դե՜հ, մի գուցե բարքերն են ազնվացել կամ էլ գուցե այնպիսի

օրենքներ են դրել, որ կարծես թե մարդն այլևս չի համարձակվում ծեծել մարդուն։ Բայց դրա տեղը հանել են մի ուրիշ բանով, որ նույնպես զուտ ազգային է, ինչպես մերը, և այնքան ազգային, որ դրա կիրառումն ասես անհնար է մեզ մոտ, թեև, ճիշտ ասած, կարծեմ մեզ մոտ էլ դա հող է գտնում, մանավանդ այն օրից, երբ մեր բարձր դասի մեջ սկսվեց կրոնական շարժումը։ Ես մի հիանալի գրքույկ ունեմ, ֆրանսերենից թարգմանված, ուր պատմվում է, թե ինչպես Ժնևում, հենց վերջերս, ընդամենը հինգ տարի առաջ, մահապատժի են ենթարկել Ռիշար անունով մի չարագործի ու մարդասպանի՝ կարծեմ քսաներեքամյա մի պատանու, որ զղջացել ու քրիստոնեական հավատքին է հարել հենց կառափնարանի շեմին։ Այս Ռիշարն ինչ-որ մեկի ապօրինի զավակ է եղել, և դեռ վեց տարեկան երեխա՝ ծնողները նրան նվիրել են ինչ-որ շվեյցարացի լեռնական հովիվների, սրանք էլ մեծացրել են նրան, որ աշխատեցնեն իրենց մոտ։ Եվ տղան մեծացել է գազանի ձագի նման, հովիվները նրան ոչինչ չեն սովորեցրել, ընդհակառակը, արդեն յոթ տարեկանից, ուղարկել են հոտն արածեցնելու, թացին ու ցրտին, համարյա մերկ և համարյա անոթի թողնելով նրան։ Եվ, իհարկե, նրանցից ոչ մեկն իր արածի վրա չէր մտածում ու չէր զղջում, ընդհակառակը, լրիվ իրավացի էր համարում իրեն, որովհետև նրանք Ռիշարին ստացել էին իբրև մի իր և նույնիսկ անհրաժեշտ չէին գտնում նրան կերակրել։ Ռիշարն ինքը վկայում է, որ այդ տարիներին, ավետարանի անառակ որդու նման, սոսկալի ուզում էր ուտել գոնե այն խառնակերը, որով կերակրում էին ծախու խոզերին, բայց այդ էլ չէին տալիս և նույնիսկ ծեծում էին, երբ նա կերը գողանում էր խոզերից։ Եվ այդպես անց է կացնում իր ամբողջ մանկությունն ու ամբողջ պատանեկությունը, մինչև մեծանում է, ուժեղանում և գնում գողությամբ զբաղվելու։ Վայրենի տղան սկսում է գրամ շահել օրավարձով աշխատելով Ժնևում, շահածը խմում է, ապրում ճիվազի նման և վերջը լինում է այն, որ սպանում ու կողոպտում է ինչ-որ ծերունու։ Նրան բռնում են, դատում և դատապարտում մահվան։ Այնտեղ հո զգացմունքներով չեն շարժվում։ Եվ ահա բանտում անմիջապես նրան շրջապատում են պաստորները և զանազան քրիստոսասեր եղբայրությունների անդամները, բարեգործ տիկինները և այլն։ Բանտում նրան կարդալ ու գրել են սովորեցնում, մեկնում են ավետարանը, հորդորում, համոզում, ճնշում,

նեղում, հոգին հանում, և վերջապես նա ինքը հանդիսավոր կերպով խոստովանում է իր ոճիրը։ Նա ուղղվում է, անձամբ գրում դատարանին, որ ինքը ճիվաղ է, բայց որ վերջ ի վերջո ինքն էլ արժանի եղավ լուսավորվելու աստծո շնորհով։ Ամբողջ ժնևը հուզվում է, ամբողջ բարեգործ ու բարեպաշտ ժնևը։ Բարձր դասի և բարեկիրթ բոլոր մարդիկ վազում են նրան տեսնելու բանտում։ Համբուրում են, գրկում Ռիշարին. «Դու եղբա՞յրն ես մեր, շնո՞րհ իջավ քո վրա»։ Իսկ Ռիշարը խանդաղատանքով լաց է լինում միայն. «Այո, շնո՞րհ իջավ իմ վրա։ Իմ ամբողջ մանկությանն ու պատանեկությանը ուրախանում էի խոզի կերի համար, իսկ հիմա իմ վրա ևս շնորհ իջավ, մեռնում եմ ի Տեր»։— «Այո՛, այո՛, Ռիշար, մեռի՛ր ի Տեր, դու արյուն թափեցիր և պետք է մեռնես ի Տեր։ Ի՞նչ փույթ թե դու մեղք չունեիր, որ բոլորովին չէիր ճանաչում Տիրոջ, երբ նախանձում էիր խոզերի կերին և երբ քեզ ծեծում էին նրանց կերը գողանալուդ համար (և շատ վատ էիր անում, վասնզի գողանալն արգելված է), բայց դու արյուն թափեցիր և պետք է մեռնես»։ Եվ ահա հասնում է վերջին օրը։ Ռիշարը, ուժասպառ, լաց է լինում անընդհատ և ամեն րոպե կրկնում. «Իմ կյանքի լավագույն օրն է այսօր, գնում եմ Տիրոջ մոտ»։— «Այո՛,— գոռում են պաստորները, դատավորները և բարեգործ տիկինները,— երջանկագո՛ւյն օրն է քո կյանքի, վասնզի գնում ես Տիրո՛ջ մոտ»։ Եվ այդ ամբողջ թափորը, անարգանքի սայլի ետևից, որի մեջ տանում են Ռիշարին, շարժվում է դեպի կառափնարան՝ հետիոտն, կառքերով։ Հասնում են կառափնարան։ «Մեռի՛ր, եղբայր մեր,— գոռում են Ռիշարին,— մեռի՛ր ի Տեր, վասնզի քո վրա ևս շնորհ իջավ»։ Եվ ահա, եղբայրների համբույրներով ծածկված եղբայր Ռիշարին քարշ են տալիս կառափնարան, բերում գիլյոտինի մոտ և հենց եղբայրաբար էլ թոցնում են գլուխը, որովհետև նրա՞ վրա ևս շնորհ էր իջել։ Չէ՞, դա բնորոշ բան է։ Մեր բարձր դասի ինչ-որ բարեգործներ, որոնք տարված են լութերականությամբ, ռուսերեն են թարգմանել այդ գրքույկը և ձրի տարածել թերթերի ու այլ հրատարակությունների հետ՝ ռուս ժողովրդի լուսավորության համար։ Ռիշարի դեպքը հետաքրքրական է նրանով, որ ազգային է։ Թեև մեզ մոտ անհեթեթ բան է գլուխը կտրել լոկ այն պատճառով, որ նա մեր եղբայրն է դարձել և շնորհ է իջել նրա վրա, բայց, կրկնում եմ, մենք էլ մեզ հատուկ

բաներ ունենք, և համարյա նույնքան հետաքրքրական։ Ծեծելով տանջելը մեր պատմական, մեր անմիջական հաճույքն է։ Նեկրասովն իր մի բանաստեղծության մեջ պատմում է, թե ինչպես մուժիկը մտրակով խփում է իր ձիու աչքերին, «հեզ աչքերին»։ Ո՞վ չի տեսել այդ։ Տիպիկ ռուսական բան։ Նկարագրված է, թե ինչպես մի վատուժ ձիուկ կքել է չափազանց ծանր բեռի տակ և չի կարողանում քարշ տալ։ Մուժիկը ծեծում է նրան, ծեծում մոլեգնորեն, վերջապես ծեծում է առանց հասկանալու, թե ինչ է անում, ծեծելուց հարբած տալիս է ու տալիս մտրակով. «Թեկուզ վեր է ուժիցդ, բայց քաշի՛, մեռի, բայց քաշի՛»։ Խեղճ ձիուկը ձգվում է առաջ, և ահա մուժիկը սկսում է մտրակով խփել անպաշտպան կենդանու լացող աչքերին, «հեզ աչքերին»։ Ցավից խենթացած, ձիուկը պոկվում է տեղից, տանում բեռը, գնում ամբողջ մարմնով դողալով, շունչը պահած, մի տեսակ թեք, ոստոստուն, մի տեսակ անբնական ու ամոթալի ձևով. սարսափելի է նկարագրում Նեկրասովը։ Բայց դա դեռ ձի է միայն, աստված ինքը ձիերին ստեղծել է ծեծի համար։ Թաթարներն այդպես բացատրեցին մեզ և մտրակն էլ նվիրեցին ի հիշատակ։ Սակայն մարդկանց էլ ախր կարելի է ծեծել։ Եվ ահա ուրեմն մի զարգացած, բարեկիրթ պարոն և իր տիկինը ճիպոտներով ծեծում են իրենց սեփական երեխային՝ յոթ տարեկան մի աղջնակի։ Ես մանրամասն գրած ունեմ այդ դեպքը։ Հայրիկն ուրախ է, որ ճիպոտների վրա ոստեր կան։ «Ավելի լավ կդաղի», ասում է նա և սկսում «դաղել» իր հարազատ աղջկան։ Եվ վստահ գիտեմ, կան ծեծողներ, որ յուրաքանչյուր հարվածից գրգռվում են, հասնում հեշտասիրության, բառացիորեն հեշտասիրության, ամեն մի հաջորդ հարվածից ավելի ու ավելի են տաքանում, հարաճուն կերպով։ Ծեծում են մի րոպե, ծեծում հինգ րոպե, տասը րոպե, ավելի արագ, ավելի, ավելի, թափով, ուժգին, վայրագ։ Երեխան ճչում է, ճչում, ի վերջո էլ չի կարողանում ճչալ, աղաչում է շնչահեղձ. «Հայրի՛կ, հայրի՛կ, հայրի՛կ ջա՛ն, հայրի՛կ»։ Գործն իբրև սարսափելի անվայել մի դեպք հասնում է դատարան։ Փաստաբան է վարձվում։ Ռուս ժողովուրդն արդեն վաղուց փաստաբանին կոչել է «վարձու խիղճ»։ Փաստաբանը կոկորդն է պատռում իր պաշտպանյալի օգտին։ Թե՝ «այնքա՞ն պարզ բան է, ընտանեկան հասարակ պատմություն, հայրը դնգստել է աղջկան, և ամո՞թ մեր ապրած ժա-

մանակին, որ սա հասնում է դատարան»։ Ատյանը համոզվում է և արդարացնող վճիռ արձակում։ Հասարակությունը ոռնում է ուրախությունից, որ արդարացրին տանջողին։ Ախ ափսո՜ս, ես այնտեղ չէի. ես էլ իմ առաջարկությունը կբղավեի, որ մի թոշակ հաստատեն տանջողի պատվին... Գեղեցի՜կ տեսարաններ են։ Բայց երեխաների մասին է՛լ ավելի լավ բաներ ունեմ, ես շատ, շատ պատմություններ եմ հավաքել ռուս երեխաների մասին, Ալյոշա։ Հինգ տարեկան մի փոքրիկ աղջնակի ատում են հայրն ու մայրը՝ «մեծահարգ ու բարձրաստիճան մարդիկ, բարեկիրթ ու զարգացած»։ Հասկանո՞ւմ ես, կրկնում ու պնդում եմ նորից, որ մարդկության մեջ շատ-շատերն ունեն այդ բնորոշ հատկությունը՝ սիրում են տանջել երեխաներին և միայն երեխաներին։ Այդ նույն տանջողները, որպես զարգացած ու մարդասեր եվրոպացիներ, հեզ ու բարեհաճ վերաբերմունք ունեն մարդկային ցեղի բոլոր մյուս ներկայացուցիչների նկատմամբ, բայց շատ են սիրում տանջել երեխաներին, և երեխաներին էլ հենց այդ կերպ են սիրում։ Տանջողներին գայթակղեցնում է այդ փոքրիկ արարածների հենց անպաշտպան լինելը. երեխան հրեշտակային վստահություն ունի, ոչ մի տեղ չի կարող գնալ, ոչ ոքի չի կարող ապավինել, և հենց այդ էլ բորբոքում է տանջողի գարշելի արյունը։ Ամեն մի մարդու մեջ, անշուշտ, գազան է թաքնված, ցասկոտության գազանը, տանջվող զոհի ճիչերից հեշտասիրաբար բորբոքվող գազանը, շղթայից պոկված, սանձարձակ գազանը, անառակ կյանքի մեջ վաստակած հոդատապի, լյարդի բորբոքման և այլ հիվանդությունների գազանը։ Այդ կրթված ծնողները ամեն տեսակ տանջանքի են ենթարկում հինգ տարեկան այս խեղճ աղջնակին։ Ծեծում են, ձաղկում, ոտքերով խփում, ինչո՞ւ, իրենք էլ չգիտեն, և կապտեցնում են աղջնակի ամբողջ մարմինը։ Վերջապես հասնում են նաև դաժանության ամենանրբին ձևին. ցրտին, սառնամանիքին բանտարկում են նրան արտաքնոցում, ամբողջ գիշեր, և որովհետև երեխան գիշերը չի ասել, թե բնական պետք ունի (կարծես թե հինգ տարեկան երեխային կարելի է դեռ այն էլ սովորեցնել, որ այդ տարիքին զարթնի իր հրեշտակային խորունկ քնից և ասի, թե բնական պետք ունի), նրա ամբողջ երեսին քսում են իր սեփական կղկղանքը, ստիպում են նաև այդ կղկղանքն ուտել, և մա՜յրն է, մա՜յրն է ստիպում։ Եվ այդ մայրը կարող է հանգիստ

քնել, երբ գիշերը նրան հասնում էին խեղճ մանկիկի տնքոցները, այդ անարգ տեղում բանտարկվա՜ծ մանկիկի։ Դու հասկանո՞ւմ ես, ինչ է դա. մի փոքրի՜կ էակ, որ դեռ չի կարող ըմբռնել, թե ինչ են անում իրեն, իր մանրիկ բռունցքով ծեծում է իր տանջահար կրծքիկն այդ կեղտոտ տեղում, մթանը և ցրտին, և իր արյունախառն, անչար, հեզ արցունքներով լաց է լինում «աստվածիկին», որ նա պաշտպանի իրեն։ Հասկանո՞ւմ ես արդյոք այդ բանդագուշանքը, սիրելիդ իմ բարեկամ ու եղբայր իմ, աստծո հեզ ու խոնարհ դու նորընծա, հասկանո՞ւմ ես արդյոք, թե ինչի՞ է պետք, ինչո՞ւ է ստեղծվել այդ բանդագուշանքը։ Ասում են, առանց դրան մարդը չէր էլ կարող գոյատևել երկրի վրա, որովհետև չէր կարողանա ճանաչել չարն ու բարին։ Իսկ ինչո՞ւ ճանաչել այդ դժոխքի ծնունդ չարն ու բարին, երբ այդքան ծանր է դրա գինը։ Այո՛, իմացության ամբո՞ղջ աշխարհը չարժե՛ այդ մանկիկի արցունքները «աստվածիկին» ուղղված։ Ես չեմ խոսում մեծերի տառապանքի մասին, նրանք խնձոր են կերել, և նրանց հերն էլ անիծած, գրո՞ղը տանի դրանց բոլորին, բայց այս փոքրիկնե՜րը, փոքրիկնե՜րը։ Տանջում եմ քեզ, Ալյոշա, երևում է, որ հուզված ես։ Վերջ տամ, եթե ուզում ես։

— Ոչինչ, ես էլ ուզում եմ տանջվել,— մրմնջաց Ալյոշան։

— Մի պատկեր ևս, միայն մեկը, այն էլ զուտ հետաքրքրության համար, որովհետև շատ բնորոշ է, և գլխավորը՝ հենց նոր եմ կարդացել մեր հնությունների մի ժողովածուում, «Արխիվո՞ւմ» էր, թե «Ստարինայում», պետք է ստուգել, նույնիսկ մոռացել եմ, թե որտեղ եմ կարդացել։ Դա պատահել է ճորտատիրության ամենամռայլ տարիներին, դարասկզբում, և կեցցե՛ ուրեմն ժողովրդի ազատարարը։ Այն ժամանակ եղել է մի գեներալ, մեծ կապեր ունեցող գեներալ ու մեծահարուստ կալվածատեր, բայց այն մարդկանցից (ճիշտ է, այն ժամանակ էլ արդեն քիչ էին կարծեմ այդպիսիները), որոնք, երկարամյա ծառայությունից հետո գնալով հանգստի, գրեթե համոզված են լինում, թե իրավունք են վաստակել իրենց ենթակաների կյանքն ու մահը տնօրինելու։ Այն ժամանակ կային այդպիսի մարդիկ։ Այս գեներալն ուրեմն ապրում է իր կալվածում, լինելով երկու հազար հոգու սեփականատեր, գոռոզություն է անում, իր փոքր հարևաններին քամահրում է որպես իր հաշվին ապրող հացկատակների և ծաղրածուների։ Ունի շնանոց հարյուրավոր շներով և հարյուրի չափ էլ շնապան՝ բոլորը համազգեստով,

բոլորը հեծյալ։ Եվ ահա մի անգամ, մի փոքրիկ ճորտ տղա, ընդամենը յոթ տարեկան մի մանչուկ, խաղալու ժամանակ քար է գցում և պատահաբար վիրավորում գեներալի սիրած որսկան շան ոտքը։ «Ինչո՞ւ իմ սիրելի շունը կաղում է»։ Զեկուցում են, թե ահա այս տղան շանը քար գցեց և վիրավորեց ոտքը։ «Ա՜, դու ես արել,— գեներալը հայացքով չափում է տղային։— Բռնե՛լ սրան»։ Եվ բռնում են, խլում մորից, ամբողջ գիշերը պահում կալանքի տակ։ Առավոտ կանուխ գեներալն իր լրիվ արդուզարդով դուրս է գալիս որսի, ձի նստում, նրան շրջապատում են ձրիակերները, շները, շնապանները, որսկանները՝ բոլորն էլ հեծյալ։ Խրատելու համար հավաքում են ծառաներին, բոլորի առջևում կանգնում է հանցավոր տղայի մայրը։ Տղային դուրս են բերում կալանավայրից։ Աշնանային մռայլ, ցուրտ, մշուշոտ օր է, իսկական որսի օր։ Գեներալը հրամայում է հանել տղայի հագուստները, և երեխային լրիվ մերկացնում են։ Նա դողում է, վախից խենթացած, չի համարձակվում ծպտուն հանել... «Քշե՛լ նրան»,— հրաման է տալիս գեներալը։ «Վազի՛ր, վազիր»,— գոռում են շնապանները, տղան վազում է... «Հա՛փ նրան»,— բղավում է գեներալը և շների ամբողջ ոհմակն արձակում երեխայի վրա։ Շները հասնում են, բռնում և մոր աչքերի առաջ բզիկ-բզիկ հոշոտում մանչուկին... Հետո կարծեմ գեներալի վրա խնամակալություն են հաստատում։ Է՜հ ուրեմն... ի՞նչ պատիժ տալ նրան։ Գնդակահարե՞լ։ Բարոյական զգացումը բավարարելու համար գնդակահարե՞լ։ Խոսի՛ր, Ալյոշկա։

— Գնդակահարե՛լ,— շշնջաց Ալյոշան, բարձրացնելով հայացքը և դժգույն, այլայլված ժպիտով նայելով եղբորը։

— Բռա՜վո,— աղաղակեց Իվանը մի տեսակ ուրախացած,— եթե այդ դո՜ւ ես ասում, նշանակում է... Ա՛յ քեզ սքեմավո՜ր։ Ուրեմն ահա՛ թե ինչ սատանայի ձագ է նստած քո սրտում, Ալյոշկա Կարամազով։

— Ես անհեթեթ բան ասացի, բայց...

— Հենց դա է, դա՛, այդ «բա՛յցը»,— գոռաց Իվանը։— Իմացի՛ր, նորընծա, անհեթեթությունները շատ ու շատ անհրաժեշտ են երկրի վրա։ Աշխարհն անհեթեթությունների վրա է կանգնած, և առանց դրանց գուցե ոչինչ էլ տեղի չունենար աշխարհում։ Գիտե՞նք ինչ որ գիտենք։

— Ի՞նչ գիտես։

— Ես ոչինչ չեմ հասկանում,— շարունակեց Իվանն ասես

զառանցանքի մեջ,— հիմա չեմ էլ ուզում որևէ բան հասկանալ։ Ես ուզում եմ կառչած մնալ փաստին։ Եվ վաղուց եմ որոշել չհասկանալ։ Եթե ուզեմ որևէ բան հասկանալ, ապա նույն վայրկյանին կդավաճանեմ փաստին, իսկ ես որոշել եմ մնալ փաստին կառչած...

— Ինչո՞ւ ես ինձ փորձում,— վշտահար բացականչեց Ալյոշան,— ասելո՞ւ ես վերջապես։

— Իհարկե ասելու եմ, հենց դրան էլ բերում էի իմ խոսքը։ Դու ինձ համար թանկ ես, չեմ ուզում քեզ բաց թողնել և քեզ չեմ զիջի քո Զոսիմային։

Իվանը մի բոպե լռեց, նրա դեմքը հանկարծ շատ տխուր դարձավ։

— Լսի՛ր ինձ։ Ես միայն երեխաներին վերցրի, որպեսզի ավելի ակնհայտ լինի ասածս։ Մարդկության մյուս արցունքների մասին, որոնցով ամբողջ երկիրը հագեցած է կեղևից մինչև կորիզը, ես ոչ մի խոսք չեմ ասում, դիտմամբ նեղացրի իմ նյութը։ Ես փայտոջիլ եմ և ընդունում եմ ամենայն նվաստությամբ, որ բնավ չեմ կարող հասկանալ՝ ինչո՞ւ այսպես է աշխարհի կարգը։ Մարդիկ, ուրեմն, իրենք են մեղավոր. դրախտն էր տրված նրանց, ազատություն ուզեցին և կրակ գողացան երկնքից, իրենք էլ իմանալով, որ ապերջանիկ են լինելու, ուստի կարիք չկա խղճալու նրանց։ Օ՜, իմ խելքով, իմ խեղճ, երկրային, էվկլիդյան խելքով գիտեմ միայն մի բան՝ որ կա տառապանք, որ մեղավորներ չկան, որ ամեն ինչ իրարից բխում է ուղղակի և պարզորեն, որ ամեն ինչ հոսում է ու հավասարակշռվում, բայց ախր դա էվկլիդյան անմտությո՞ւն է լոկ, այո՜, ես գիտեմ այդ և չեմ կարող համաձայն լինել ըստ դրան ապրելու։ Ի՞նչ անեմ, որ մեղավորներ չկան ու ես գիտեմ այդ. ինձ հատուցո՛ւմ է հարկավոր, այլապես կոչնչացնեմ ինքս ինձ։ Եվ հատուցում՝ ոչ թե անհունության մեջ որևէ մի տեղ և որևէ ժամանակ, այլ հենց այստե՛ղ, երկրի վրա, այնպես, որ ի՛նքս տեսնեմ։ Ես հավատացել եմ, ուստի ուզում եմ ինքս էլ տեսնել, իսկ եթե այդ ժամին արդեն մեռած լինեմ, թող ինձ հարություն տան, որովհետև եթե այդ ամբողջը տեղի ունենա առանց ինձ, չափազանց վիրավորական կլինի։ Ես տառապել եմ ոչ թե նրա համար, որ իմ անձով, իմ չարագործություններով ու տառապանքներով ապագա ներդաշնակության հողը պարարտացնեմ ուրիշ մեկի օգտին։ Ես ուզում եմ իմ աչքերով տեսնել, թե ինչպես եղնիկը պառկելու

է առյուծի կողքին և ինչպես սպանվածը վեր է կենալու և գրկելու է իրեն սպանողին։ Ես ուզում եմ ներկա լինել այն պահին, երբ բոլորը հանկարծ կիմանան, թե ինչ նպատակով էր աշխարհն այսպես ստեղծված։ Այդ ցանկության վրա են հիմնված աշխարհի բոլոր կրոնները, իսկ ես հավատացյալ եմ։ Բայց երեխանե՛ր, նրա՞նց նկատմամբ ինչպես վարվեմ այն ժամանակ։ Դա մի հարց է, որ չեմ կարող լուծել։ Կրկնում եմ հարյուրերորդ անգամ՝ հարցերը շա՜տ-շատ են, բայց ես վերցրի միայն երեխաներին, որովհետև նրանց պարագան անառարկելիորեն պարզ է դարձնում իմ ասելիքը։ Լսի՛ր։ Եթե բոլորը պետք է տառապեն, որպեսզի տառապանքով գնեն հավիտենական ներդաշնակությունը, ապա ի՞նչ գործ ունեն այստեղ երեխաները, ասա՛ խնդրեմ։ Բոլորովին հասկանալի չէ, թե ինչո՞ւ նրանք էլ պետք է տառապեն և ինչո՞ւ տառապանքով պետք է գնեն ներդաշնակությունը։ Ինչո՞ւ նրանք էլ, նրա՞նք էլ նյութ են դարձել՝ մի ուրիշի օգտին պարարտացնելու համար ապագա ներդաշնակությունը։ Մարդկանց միջև մեղքի համերաշխություն՝ հասկանում եմ, հասկանում եմ նաև հատուցման համերաշխությունը, բայց երեխաների՞ հետ մեղքի համերաշխություն՝ ո՞չ։ Եվ եթե ճշմարտությունն իրոք այն է, որ երեխաներն էլ պետք է համերաշխորեն պատասխանատու լինեն իրենց հայրերի բոլոր չարագործությունների համար, ապա այդ ճշմարտությունն այս աշխարհին չի՛ պատկանում անշուշտ և ինձ անհասկանալի է։ Կատակաբանի մեկը գուցե ասի, որ միևնույն է՝ երեխան կմեծանա և կհասցնի մեղք գործել, բայց ահա տես, որ չմեծացավ, նրան շների երախը նետեցին, երբ դեռ ութ տարեկան էր։ Օ՜ Ալյոշա, ես աստծուն չեմ հայհոյում։ Ես անշուշտ հասկանում եմ, թե ինչպես է սասանելու տիեզերքը, երբ երկնքից ու երկրի ընդերքից բարձրանա մի համաձույլ գովաբանական օրհներգություն և ամեն ինչ, որ ապրում է և ապրել է անցյալում, բացականչի. «Արդար ես, տե՛ր, վասնզի բացվել են քո ճամփաները»։ Երբ մայրը գրկախառնվի այն չարագործի հետ, որ շներով բզկտել էր նրա երեխային, և երեքը միասին բացականչեն արտասվելով՝ «Արդար ես, տե՛ր», այն ժամանակ, անշո՞ւշտ, հյուսված կլինի իմացության պսակը և ամեն ինչ կպարզվի։ Բայց հենց այս կետի վրա էլ կանգ առնենք, հենց այս է, որ ես չեմ կարող ընդունել։ Եվ քանի դեռ երկրի վրա եմ, շտապում եմ ձեռք առնել իմ միջոցները։ Գիտե՞ս ինչ, Ալյոշա, գուցե իրոք

այնպես պատահի, որ եթե ես ինքս մինչև այդ պահը ապրեմ և կամ հարություն առնեմ տեսնելու համար այդ պահը, հավանաբար ինքս էլ բոլորի հետ բացականչեմ, նայելով այն մորը, որ գրկախառնվում է իր երեխային տանջողի հետ. «Արդար ես, տե՛ր»։ Բայց ես չեմ ուզում բացականչել այդ պահին։ Քանի դեռ ժամանակ կա, ես շտապում եմ պատսպարել ինձ, ուստի բոլորովին հրաժարվում եմ գերագույն ներդաշնակությունից։ Այդ ներդաշնակությունը մի կաթիլ արցունքն էլ չարժե այն տանջված երեխայի, որ իր փոքրիկ բռունցքով կուրծքն էր ծեծում և այդ գարշահոտ անկյունում իր անհատույց արցունքներով աղաչում էր «աստվածիկին»։ Չարժե՛, որովհետև նրա արցունքները չհատուցված են մնում։ Պետք է հատուցվե՛ն դրանք, այլապես ներդաշնակությունն անկարելի է։ Բայց ինչո՞վ, ինչո՞վ կհատուցես։ Հնարավո՞ր բան է։ Միթե դրանց վրեժը լուծելով։ Իմ ինչի՞ն է պետք այդ վրեժը, իմ ինչի՞ն է պետք, որ դժոխքը կա տանջողների համար։ Դժոխքն ի՞նչ կարող է սրբագրել այստեղ, երբ երեխաներն արդեն տանջվել են։ Եվ ի՞նչ ներդաշնակություն, եթե կա դժոխքը։ Ես ներել եմ ուզում, գրկել եմ ուզում, ես չեմ ուզում, որ էլ տառապանք լինի։ Եվ եթե երեխաների տառապանքը գնում է լրացնելու տառապանքների այն գումարը, որն անհրաժեշտ է ճշմարտությունը գնելու համար, ապա ես կանխօրոք պնդում եմ, որ ամբողջ ճշմարտությանն անգամ չարժե այդպիսի գին վճարել։ Վերջապես չե՛մ ուզում, որ մայրը գրկախառնվի այն չարագործի հետ, որ շների կեր դարձրեց նրա որդուն։ Նա չի՛ համարձակվի ներել չարագործին։ Եթե ուզում է, թող ների ի՛ր հաշվին, թող ների իր մայրական անհուն տառապանքի համար, բայց իրավունք չունի՛ ներելու իր հոշոտված երեխայի տառապանքը, չի համարձակվի ներել չարագործին, եթե նույնիսկ երեխան ինքը նրան ների իր տառապանքի համար։ Իսկ եթե այդպես է, եթե նրանք չեն համարձակվի ներել, որտե՞ղ է ուրեմն ներդաշնակությունը։ Ամբողջ աշխարհում կա՞ արդյոք մի էակ, որ կարողանար և իրավունք ունենար ներել։ Չեմ ուզում ներդաշնակություն, մարդկությա՛ն սիրույն չեմ ուզում։ Նախընտրում եմ մնալ չհատուցված տառապանքների հետ։ Ավելի լավ է մնամ իմ չհատուցված տառապանքներով և իմ չամոքված վրդովմունքով, թեկուզև անիրավացի լինեմ։ Եվ չափազանց էլ թանկ է գնահատված ներդաշնակությունը, բնավ մեր գրպանի բանը չէ այդքան շատ

վճարել մտնելու համար։ Ուստի շտապում եմ վերադարձնել իմ մուտքի տոմսը։ Եվ եթե ես իրոք ազնիվ մարդ եմ, պարտավոր եմ հնարավորին չափ շուտ վերադարձնել։ Այդ է, որ անում եմ։ Ոչ թե աստծուն չեմ ընդունում, Ալյոշա, այլ պարզապես տոմսն եմ վերադարձնում նրան ամենայն պատկառանքով։

— Դա ըմբոստություն է,— ասաց Ալյոշան մեղմ, հայացքն իջեցնելով։

— Ըմբոստությո՞ւն։ Ես չէի ուզում քեզնից այդպիսի խոսք լսել,— խռովահույզ ասաց Իվանը։— Կարելի՞ է արդյոք ապրել ըմբոստությամբ։ Իսկ ես ուզում եմ ապրել։ Ինքդ ասա՛ ինձ ուղղակի, կոչ եմ անում քեզ, պատասխանի՛ր. պատկերացրո՛ւ, որ դու ինքդ ես կառուցում մարդկային ճակատագրի շենքը՝ նպատակ ունենալով վերջում երջանկացնել մարդկանց, ի վերջո խաղաղություն և հանգիստ տալ նրանց, բայց եթե դրա համար անհրաժեշտորեն և անխուսափելիորեն պետք լիներ տանջել թեկուզ մի հատիկ պստլիկ արարածի՝ ասենք հենց այն մանկիկին, որ իր փոքրիկ բռունցքով կուրծքն էր ծեծում, և նրա չհատուցված արցունքների վրա հիմնել այդ շենքը, արդյոք կհամաձայնվե՞ր դու այդ պայմաններով լինել ճարտարապետը, ասա՛ ու մի՛ ստիր։

— Ոչ, չէի համաձայնվի,— մեղմ ասաց Ալյոշան։

— Եվ կարո՞ղ ես ընդունել այն միտքը, թե մարդիկ, որոնց համար դու կառուցում ես, իրենք իսկ համաձայնեին ստանալ տանջված մանկիկի անհատույց արյան վրա հիմնված իրենց երջանկությունը, և ստանալով՝ հավիտյան երջանիկ մնալ։

— Ոչ, չեմ կարող ընդունել։ Եղբա՛յր,— ասաց հանկարծ Ալյոշան փայլող աչքերով,— դու հենց հիմա ասացիր՝ ամբողջ աշխարհում կա՞ արդյոք մի էակ, որ կարողանար և իրավունք ունենար ներել։ Բայց կա՛ այդ էակը, և նա կարող է ամե՛ն ինչ ներել, ներել բոլորին և ամեն ինչի համար, որովհետև նա ինքը իր անմեղ արյունը տվեց բոլորի և ամեն ինչի համար։ Դու մոռացար նրան, իսկ շենքը հենց նրա՛ վրա է հիմնված, և նրան է, որ բացականչելու են. «Արդար ես, տե՛ր, վասնզի բացվել են քո ճամփաները»։

— Հա՛, «միակ անմեղը», և իր արյո՞ւնը։ Ոչ, նրան չեմ մոռացել, ընդհակառակը, անընդհատ զարմանում էի, թե ինչո՞ւ այսքան ժամանակ դու մեջտեղ չես բերում նրան, որովհետև բոլոր ձերոնք, վիճաբանելիս, սովորաբար նրան են միշտ առաջ

քաշում։ Գիտե՞ս, Ալյոշա, մի՛ ծիծաղիր, ես մի պոեմ եմ գրել մոտ մեկ տարի առաջ։ Եթե կարող ես տասը րոպե ևս կորցնել ինձ հետ, կպատմեմ քեզ իմ պոեմը։

— Դու պոեմ ես գրե՞լ։

— Օ՜ ոչ, չեմ գրել,— ծիծաղեց Իվանը,— և նույնիսկ երկու տող բանաստեղծություն չեմ գրել երբևիցե իմ կյանքում։ Բայց պոեմը մտքումս եմ հորինել ու հիշել եմ։ Մեծ եռանդով եմ հորինել։ Դու իմ առաջին ընթերցողն ես լինելու, այսինքն ունկընդիրը։ Իսկապես, հեղինակն ինչո՞ւ կորցնի գեթ իր միակ ունկընդրին,— ժպտաց Իվանը։— Պատմե՞մ թե ոչ։

— Լսում եմ ամենայն սիրով,— ասաց Ալյոշան։

— Պոեմս կոչվում է «Մեծ հավատաքննիչը»։ Անմիտ բան է, բայց ուզում եմ պատմել քեզ։

V

ՄԵԾ ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉԸ

— Բայց ահա այստեղ էլ նորից առաջաբան է հարկավոր, այսինքն գրական առաջաբան, թո՜ւհ,— ծիծաղեց Իվանը։— Իսկ ես ի՞նչ մի հեղինակ եմ որ։ Մի խոսքով, իմ հորինած գործողությունը տեղի է ունենում տասնվեցերորդ դարում, իսկ այն ժամանակ,— թեև դա քեզ հայտնի պետք է լինի դեռ դպրոցական տարիներից,— այն ժամանակ հենց սովորություն կար երկնային զորությունները երկիր իջեցնել բանաստեղծական գործերի մեջ։ Դանթեի մասին չեմ էլ խոսում։ Ֆրանսիայում դատական գրագիրները, ինչպես և վանականները վանքերում տալիս էին կարգին ներկայացումներ, որոնց մեջ բեմ էին հանում աստվածամորը, հրեշտակներին, սրբերին, Քրիստոսին և նույնինքն աստծուն։ Այն ժամանակ շատ միամիտ էր այդ ամբողջը։ Վիկտոր Հյուգոյի «Notre Dame de Paris»[1]-ում, Լյուդովիկոս XI-ի օրերին, Ֆրանսիայի թագաժառանգի ծննդյանն ի պատիվ, Փարիզի քաղաքապետարանի դահլիճում ժողովրդի համար տրվում է խրատական ու ձրի ներկայացում, որ կոչվում է «Le bon jugement de la très sainte et gracieuse Vierge Marie»[2], և

[1] «Փարիզի Աստվածամոր տաճարը» (ֆրանս.)։

[2] «Ամենասուրբ և գթառատ կույսն Մարիամի բարեհաճ դատաստանը» (ֆրանս.)։

այնտեղ տիրամայրն անձամբ հայտնվում է բեմում և արտասանում իր bon jugement-ը։ Մեզ մոտ էլ, Մոսկվայում, նախապետրոսյան հին տարիներին, մերթ ընդ մերթ տեղի էին ունենում գրեթե նույնպիսի դրամատիկ ներկայացումներ՝ հատկապես Հին կտակարանից։ Սակայն, դրամատիկ ներկայացումներից բացի, այն ժամանակ ամբողջ աշխարհով շրջում էին բազմաթիվ պատումներ ու «քերթվածներ», որոնց մեջ հարկ եղած դեպքում հանդես էին գալիս սրբերը, հրեշտակները և երկնային բոլոր զորությունները։ Մեր վանքերում նույնպես զբաղվում էին նման պոեմներ թարգմանելով, ընդօրինակելով ու նույնիսկ հորինելով, այն էլ ե՜րբ. թաթարների տիրապետության տակ։ Կա, օրինակ, վանական մի պոեմ (անշուշտ հունարենից առնված)— «Հածմունք տիրամոր ի տառապանս», որն իր պատկերներով ու համարձակությամբ ետ չի մնում Դանթեի երկից։ Տիրամայրն այցելում է դժոխք, ուր Միքայել հրեշտակապետն է նրան առաջնորդում «ի տառապանս»։ Տեսնում է մեղավորներին ու նրանց տանջանքները։ Դժոխքում, ի միջի այլոց, հրավառ լճի մեջ տանջվող մեղավորների խիստ ուշադրավ մի կարգ կա. ոմանք այնպես են սուզվում լճի խորքը, որ այլևս չեն կարող վեր բարձրանալ, և «աստված մոռանում է այլևս նրանց»— մի արտահայտություն, որ չափազանց խոր է և ուժեղ։ Եվ ահա, ցնցված ու արտասվող տիրամայրն ընկնում է աստծո դահի առաջ և խնդրում է թողություն շնորհել դժոխքի բոլոր մեղավորներին, բոլորին, որ ինքը տեսել է այնտեղ, առանց խտրության։ Աստծո հետ նրա խոսակցությունն ահագնորեն հետաքրքրական է։ Աղաչում է տիրամայրը, աղաչում համառորեն, և երբ աստված մատնացույց է անում նրա որդու գամված ձեռքերն ու ոտքերը և հարցնում՝ նրան տանջողներին ինչպե՞ս ներեմ, ապա տիրամայրը հորդորում է բոլոր սրբերին, բոլոր նահատակներին, բոլոր հրեշտակներին ու հրեշտակապետերին՝ ծնկի ընկնել իր հետ և թողություն հայցել բոլորի համար անխտիր։ Եվ վերջապես նա աստծուց ձեռք է բերում տանջանքների դադարեցումն ամեն տարի՝ ավագ ուրբաթից մինչև երրորդության օրը, և մեղավորները դժոխքից անմիջապես իրենց շնորհակալությունն են հայտնում աստծուն և աղաղակում են. «Արդար ես, տե՜ր, զի այդպես դատեցեր»։ Դե՜հ, իմ պոեմն էլ նույնօրինակ մի բան կլիներ, եթե այն ժամանակ երևան գար։ Իմ պոեմի մեջ նա է հանդես գալիս. ճիշտ է, ոչինչ չի ասում, այլ միայն երևում ու անց-

նում է։ Արդեն տասնհինգ դար է բոլորվել այն օրից, երբ նա խոստացավ գալ իր զորությամբ ու փառոք բազմոք, տասնհինգ դար է, ինչ գրել է նրա մարգարեն. «Որ լինելոց է վաղվաղակի»։ «Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ո՛չ հրեշտակք երկնքից և ո՛չ Որդի, բայց միայն Հայր», ինչպես ինքն էլ ասաց, երբ դեռ գտնվում էր երկրի վրա։ Բայց մարդկությունն սպասում է նրան նախկին հավատքով ու նախկին խանդաղատանքով։ Օ՜, նույնիսկ ավելի մեծ հավատքով, որովհետև տասնհինգ դար է անցել այն օրից, երբ երկնային նշանները դադարեցին երևալ մարդուն.

Դու հավատա սրտի՛դ ձայնին,
Չկա նշան երկնային։

Եվ մնացել է լոկ հավատք սրտի՛ ասածի նկատմամբ։ Ճիշտ է, այն ժամանակ բազում հրաշքներ էլ կային։ Կային սրբերը, որ հրաշալի բուժումներ էին կատարում. որոշ արդարակյաց մարդկանց, ըստ նրանց կենսագրության, անձամբ այցելում էր երկնային թագուհին։ Բայց սատանան չի քնում, և մարդկության մեջ արդեն սկսել էր տարակույսի ենթարկվել այդ հրաշքների ճշմարտությունը։ Ճիշտ այդ ժամանակ էր, որ մի նոր սարսափելի հերձվածք երևան եկավ հյուսիսում՝ Գերմանիայում։ Մի հսկա աստղ «ջահի նման» (այսինքն եկեղեցու) «ընկավ ջրերի աղբյուրներին, և նրանք դարձան դառնահամ»։ Այդ հերձվածներն սկսեցին սրբապղծորեն ժխտել հրաշքները։ Բայց հավատարիմ մնացողներն ավելի ևս ջերմեռանդորեն փարվում են իրենց հավատքին։ Մարդկության արցունքներն առաջվա նման բարձրանում են դեպի նա, սպասում են նրան, սիրում են նրան, հույս են դնում նրա վրա, տենչում են տառապել ու մեռնել նրա համար, ինչպես առաջ... Եվ ահա այնքա՜ն երկար դարեր մարդկությունը հավատքով ու ջերմեռանդությամբ աղերսել է՝ «Ո՜վ տէր, յայտնեա մեզ զանձն քո», այնքա՜ն երկար դարեր կանչել է նրան, որ նա իր անհուն ողորմածությամբ ցանկանում է իջնել աղերսարկուների մոտ։ Մինչ այդ ևս իջել էր նա երկիր, այցելության էր եկել որոշ արդարակյացների, նահատակների և սուրբ ճգնավորների, ինչպես գրված է նրանց «վարքերում»։ Մեզ մոտ Տյուտչևը, որ խորապես հավատում էր իր խոսքերի ճշմարտության, ազդարարեց, որ

Կքած խալի մեծ բեռան տակ՝
Երկնի արքան, ճորտի տեսքով,
Հայրենի՛ք իմ, ծագե՛ ի ծագ
Շրջեց քո մեջ, քեզ օրհնելով։

Կարող եմ վստահ ասել քեզ, որ այդպես էլ եղել է անպայման։ Եվ ահա ուրեմն նա ցանկանում է գեթ մի ակնթարթ հայտնվել ժողովրդին՝ տանջվող, տառապող, մեղքերի մեջ փտած, բայց մանկորեն նրան սիրող ժողովրդին։ Իմ հորինած պատմությունը տեղի է ունենում Իսպանիայում՝ Սևիլ քաղաքում, հավատաքննության ամենասոսկալի շրջանին, երբ ամեն օր երկրում խարույկներ էին վառվում ի փառս աստծո և

Ավտոդաֆեներում այն փառահեղ
Այրվում էին նենգ հերետիկոսներ։

Օ՜, դա անշուշտ այն գալուստը չէր, որով նա հայտնվելու է, ըստ իր խոստման, ի կատարածն աշխարհի իր ամբողջ երկնային փառքով, և որ լինելու է հանկարծակի, «որպէս փայլակն որ ելանէ յարևելից և երևի մինչև յարևմուտս»։ Ոչ, նա ցանկանում է գեթ մի ակնթարթ այցելել իր զավակներին և հենց այն վայրում, ուր ճարճատում էին հերետիկոսներին այրող խարույկները։ Շնորհիվ իր անհուն ողորմածության, նա մի անգամ ևս հայտնվում է մարդկանց՝ ճիշտ այն մարդկային կերպարանքով, որով երեք տարի քայլել էր մարդկանց մեջ՝ տասնհինգ դար առաջ։ Նա իջնում է «տոթակեզ փողոցների մեջ» հարավային քաղաքի, հենց որտեղ դեռ նախորդ օրը, թագավորի, արքունիքի, ասպետների, կարդինալների և պալատական հմայափայլ տիկնանց ներկայության, ամբողջ Սևիլի բազմամարդ բնակչության առաջ, մեծ հավատաքննիչ կարդինալը «փառահեղ ավտոդաֆեում» միանգամից այրել էր գրեթե մի ամբողջ հարյուրյակ հերետիկոսների՝ ad majorem gloriam Dei[1]։ Նա հայտնվում է մեղմիվ, աննկատելի, և ահա բոլոր մարդիկ, տարօրինա՜կ բան, ճանաչում են նրան։ Դա կարող էր պոեմի լավագույն տեղերից մեկը լինել, այսինքն՝ թե ինչու հատկապես ճանաչում են նրան։ Ժողովուրդն անդիմադրելի մղումով վազում է նրա մոտ, շրջապատում նրան, բազմանում է նրա շուրջ, հետևում նրան։ Նա լուռ ընթանում է բազմության մեջ՝ անհուն ողորմածության

[1] Ի մեծագույն փառս աստուծո (լատ.)։

մեղմ ժիպտը դեմքին։ Սիրո արևն է փայլում նրա սրտում, լույսի, Պայծառացման ու Զորության ճառագայթներն են հոսում նրա աչքերից, ողողում մարդկանց և ցնցում նրանց սրտերը պատասխան սիրով։ Նա մեկնում է ձեռքերը, օրհնում մարդկանց, և երբ հպվում են նրան, թեկուզ միայն հանդերձներին, բուժիչ զորություն է ելնում նրանից։ Մանկությունից կույր մի ծերունի բացականչում է ամբոխի միջից՝ «Տե՛ր, բուժի՛ր ինձ, որ ես էլ քեզ տեսնեմ», և ահա կարծես թեփուկներն ընկնում են ծերունու աչքերից, և կույրը տեսնում է նրան։ Ժողովուրդը լաց է լինում և համբուրում երկիրը, որի վրա նա քայլում է։ Երեխաները ծաղիկներ են նետում նրա առաջ, երգում են և աղաղակում. «Ովսաննա՜»։ «Նա է, նա ինքն է,— կրկնում են բոլորը,— պետք է որ նա՛ լինի, ոչ այլ ոք, քան նա»։ Նա կանգ է առնում Սևիլի մայր եկեղեցու նախագավիթում՝ ճիշտ այն բոպեին, երբ ողբալով տաճար են բերում մանկական բաց, սպիտակ մի դագաղ։ յոթ տարեկան աղջնակ է պառկած դագաղում՝ ականավոր մի քաղաքացու միակ դուստրը։ Մահացած երեխան ամբողջովին ծածկված է ծաղիկներով։ «Նա հարությո՜ւն կտա քո երեխային»,— գոռում է ամբոխն արտասվող մորը։ Դագաղին ընդառաջ եկող ավագ քահանան նայում է վարանած և հոնքերը կիտում։ Բայց ահա լսվում է մահացած երեխայի մոր ողբուկոծը։ Կինը նետվում է նրա ոտքերը։ «Եթե դու ես, հարությո՜ւն տուր իմ մանկիկին»,— բացականչում է մայրը, ձեռքերը մեկնելով նրան։ Թափորը կանգ է առնում, փոքրիկ դագաղն իջեցնում են եկեղեցու նախագավիթում, նրա ոտքերի առաջ։ Նա նայում է կարեկցանքով, և նրա շրթները մեկ անգամ ևս արտասանում են՝ «Տալի՛թա, կո՜ւմի»— «և յարեաւ աղջիկն»։ Աղջնակը բարձրանում ու նստում է դագաղում և ժպտալով շուրջն է նայում իր զարմացած, խոշոր բացված աչուկներով։ Ձեռքերի մեջ բռնել է սպիտակ վարդերի մի փունջ, որով պառկած էր դագաղում։ Խլրտում է ժողովուրդը, աղաղակում, հեկեկում, և ահա ճիշտ այդ բոպեին հանկարծ մայր եկեղեցու հրապարակով անցնում է նույնինքն կարդինալ մեծ հավատաքննիչը։ Գրեթե իննսունամյա մի ծերունի է նա, բարձրահասակ և ուղղաթիկունք, չորացած դեմքով, փոս ընկած աչքերով, որոնց մեջ սակայն մի ցոլք է պսպղում տակավին՝ հրացայտ կայծի նման։ Օ՜, նա չի հանդերձավորվել իր կարդինալական փառահեղ զգեստով, որով փայլում էր երեկ ժողովրդի առաջ, երբ այ-

բում էին հռոմեական դավանանքի թշնամիներին,— ո՞չ, այդ բոպեին իր վանական հին ու կոպիտ սքեմն է լոկ հագել։ Կարդինալի ետևից, որոշ հեռավորությամբ, գալիս են նրա մոայլ օգնականներն ու ստրուկները և «սրբազան» պահակախումբը։ Նա կանգ է առնում ամբոխի առջև ու դիտում է հեռվից։ Ամեն ինչ տեսել է, տեսել է, թե ինչպես դագաղը դրին նրա ոտքերի առաջ, տեսել է, թե ինչպես հարյավ աղջիկը, և դեմքը մռայլվել է։ Կախում է սպիտակած թավ հոնքերը, աչքերը փայլատակում են չարագուշակ հրով։ Մեկնում է իր ցուցամատը և պահակախմբին հրամայում է ձերբակալել նրան։ Եվ ահա, այնքան հզոր է մեծ հավատաքննիչը, ժողովուրդն արդեն այն աստիճան վարժվել է ենթարկվելու նրան և դողահար հնազանդվելու, որ ամբոխն անմիջապես ճանապարհ է բացում, և պահակախումբը, վերահաս մեռելային լռության մեջ, ձերբակալում ու տանում է նրան։ Ամբոխը վայրկենաբար, մեկ մարդու նման, մինչև գետին խոնարհվում է մեծ հավատաքննիչի առաջ, իսկ նա լռելյայն օրհնում ժողովրդին ու հեռանում։ Պահակախումբը գերյալին բերում է դատական սրբազան ատյանի հնադարյան շենքը և բանտարկում նեղ ու մռայլ, կամարակապ բանտում։ Անցնում է օրը, իջնում է Սևիլի մութ, տաք և «անշունչ» գիշերը։ Օդը «դափնի ու կիտրոն է բուրում»։ Խոր մթության մեջ հանկարծ բացվում է բանտի երկաթե դուռը, և նույնինքն ծերունի մեծ հավատաքննիչը դանդաղ ներս է մտնում՝ աշտանակը ձեռքին։ Առանձին է, դուռն անմիջապես փակվում է նրա ետևից։ Կանգնում է շեմքին ու երկար, մեկ կամ երկու բոպե, դիտում է գերյալի դեմքը։ Վերջապես կամաց մոտենում է, աշտանակը դնում սեղանին և ասում նրան.

— Դո՞ւ ես, դո՞ւ— Սակայն, պատասխան չստանալով, շտապ ավելացնում է.— Մի՛ պատասխանիր, լուռ մնա։ Եվ ի՞նչ կարող էիր ասել արդյոք։ Ես չափազանց լավ գիտեմ, թե ինչ կասես։ Բայց դու իրավունք իսկ չունես որևէ բան ավելացնելու քո նախկին ասածի վրա։ Ուրեմն ինչո՞ւ եկար մեզ խանգարելու։ Վասնզի եկել ես խանգարելու մեզ, և ինքդ գիտես այդ։ Բայց գիտե՞ս արդյոք, թե ինչ է լինելու վաղը։ Ես չգիտեմ, թե ով ես դու, և չեմ էլ ուզում իմանալ՝ այդ դո՞ւ ես իրոք, թե լոկ նմանությունը նրա, սակայն վաղն ևեթ ես կդատապարտեմ ու կայրեմ քեզ խարույկի վրա, որպես հերետիկոսներից վատթարագույնին, և նույն այն ժողովուրդը, որ այսօր քո ոտքերն էր

համբուրում, վաղն ևեթ իմ ձեռքի մեկ նշանով կնետվի ածուխ կիտելու քո խարույկին, գիտե՞ս արդյոք։ Այո, գուցե գիտես,— ավելացրեց նա ներհուն մտորումով, հայացքը ոչ մի ակնթարթ չկտրելով իր գերյալից։

— Շատ էլ լավ չեմ հասկանում, Իվան, ի՞նչ է դա,— ժրպատաց Ալյոշան, որ ամբողջ ժամանակ լուռ լսել էր,— ուղղակի անանձ երևակայությո՞ւն է, թե ծերունու ինչ-որ մի սխալը, ինչ-որ անկարելի qui pro quo[1]։

— Համարիր, որ այդ վերջինն է թեկուզ,— ծիծաղեց Իվանը,— եթե ժամանակակից իրապաշտությունը քեզ փչացրել է այնքան և չես կարող որևէ երևակայական բան հանդուրժել։ Qui pro quo ես ուզում, թո՛ղ այդպես էլ լինի։ Ճիշտ է,— ծիծաղեց նա նորից,— ծերունին իննսուն տարեկան է և կարող էր վաղո՞ւց խելքը թռցրած լինել իր սևեռուն գաղափարի վրա։ Իսկ գերյալը կարող էր շշմեցնել նրան իր արտաքինով։ Եվ վերջապես գա կարող էր պարզ զառանցանք լինել, իննսունամյա ծերունու տեսիլքը մահվան շեմին, այն էլ գերագրգիռ վիճակում՝ նախորդ օրն այրված հարյուր հերետիկոսների ավտոդաֆեից հետո։ Բայց մեզ համար միևնույնը չէ՞, qui pro quo լինի, թե անսանձ երևակայություն։ Խնդիրն այստեղ պարզապես այն է, որ ծերունին պետք է իր ասելիքն ասի, վերջապես բարձրաձայն արտահայտի այն, ինչի մասին լո՞ւռ մտածել է ամբողջ իննսուն տարի։

— Իսկ գերյալն էլ լռո՞ւմ է։ Նայում է նրան և ոչ մի խոսք չի՞ ասում։

— Բայց այդպես էլ պետք է լինի բոլոր դեպքերում,— նորից ծիծաղեց Իվանը։— Ծերունին ինքը նկատել է տալիս, որ նա իրավունք էլ չունի որևէ բան ավելացնելու իր նախկին ասածի վրա։ Եթե ուզում ես, հենց այդ է հռոմեական կաթոլիկության ամենահիմնական գիծը, գեթ իմ կարծիքով։ «Ամեն ինչ,— ասում են նրանք,— դու հանձնեցիր պապին, և ամեն ինչ, ուրեմն, հիմա գտնվում է պապի ձեռքում, իսկ դու այլևս բոլորովին մի՛ գա թեկուզ, կամ գոնե մի՛ խանգարիր միաժամանակ»։ Այդ առումով ոչ միայն խոսում են նրանք, այլև գրում են, ֆեզվիտները համենայն դեպս։ Ինքս կարդացել եմ

[1] Մեկի տեղ մյուսը (լատ.), այսինքն՝ թյուրիմացություն։

նրանց աստվածաբանների գրվածքներում։ «Դու իրավունք ունե՞ս մեզ հայտնելու գեթ մի խորհուրդ այն աշխարհից, որտեղից եկել ես,— հարցնում է նրան իմ ծերունին և ինքը պատասխանում նրա փոխարեն.— Ոչ, չունես իրավունք, որպեսզի ոչինչ չավելացնես քո նախկին ասածին և որպեսզի մարդկանց չզրկես այն ազատությունից, որին եռանդով պաշտպան կանգնեցիր, երբ գտնվում էիր երկրի վրա։ Քո արած ամեն մի նոր հայտնությունը ոտնձգություն կլինի մարդկանց հավատքի ազատության դեմ, որովհետև կներկայանա իբրև հրաշք, իսկ նրանց հավատքի ազատությունը քեզ համար ամեն բանից թանկ էր դեռ այն ժամանակ՝ հազար հինգ հարյուր տարի առաջ։ Դու էի՞ր, որ այնքան հաճախ ասում էիր այդ օրերին. «Ուզում եմ ազատ դարձնել ձեզ»։ Բայց ահա տեսար այժմ այդ «ազա՜տ» մարդկանց,— ավելացնում է հանկարծ ծերունին խոհուն քմծիծաղով։— Այո, թանկ նստեց մեզ վրա,— շարունակում է՝ խստահայաց նայելով նրան,— բայց այդ գործն ավարտեցինք վերջապես հանուն քո։ Տասնհինգ դար տանջվեցինք այդ ազատության դեմ մաքառելով, բայց այժմ արդեն ավարտված է գործը և առընդմիշտ ավարտված։ Դու չե՞ս հավատում, որ առընդմիշտ է ավարտված։ Դու ինձ հեզորեն նայում ես և նույնիսկ շնորհ չես անում վրդովվելո՞ւ իմ դեմ։ Բայց իմացի՛ր, որ այդ մարդիկ հիմա, հենց այժմ ավելի քան երբեք համոզված են, որ ազատ են լրիվ, այնինչ իրենք իսկ բերին մեզ ազատությունն իրենց և խոնարհաբար դրին մեր ոտքերի առաջ։ Սակայն դա մե՛ր արած գործն էր, իսկ դու ա՞յս էիր ցանկանում, այսպիսի՞ ազատություն»։

— Ես նորից չեմ հասկանում,— ընդհատեց Ալյոշան,— հեգնո՞ւմ է նա, ծիծաղո՞ւմ է։

— Բնավ երբեք։ Նա հենց իր և յուրայինների արժանիքն է համարում այն, որ վերջապես հաղթահարել են ազատությունը, և այդ արել են, որպեսզի երջանկացնեն մարդկանց։ «Որովհետև այժմ միայն (այսինքն նա հավատաքննությունը նկատի ունի անշուշտ) հնարավոր դարձավ առաջին անգամ մտածել մարդկանց երջանկության մասին։ Մարդն ըմբոստ էր ստեղծված. ըմբոստները կարո՞ղ են միթե երջանիկ լինել։ Քեզ, նախազգուշացրին,— ասում է ծերունին նրան,— սակավ չէին նախազգուշացումներն ու հորդորները, բայց դու ունկն չդրիր նախազգուշացումներին, դու մերժեցիր այն միակ ուղին, որով կարելի էր

երջանիկ դարձնել մարդկանց։ Սակայն բարեբախտաբար, մեկնելով՝ գործը հանձնեցիր մեզ։ Դու խոստում տվիր, դու հաստատեցիր քո խոսքով, դու մեզ իրավունք տվիր կապելու և արձակելու, և այժմ անշուշտ չես կարող նույնիսկ մտածել այդ իրավունքը մեզնից ետ առնելու մասին։ Ուրեմն ինչո՞ւ եկար մեզ խանգարելու»։

— Իսկ ի՞նչ է նշանակում «սակավ չէին նախազգուշացումներն ու հորդորները»,— հարցրեց Ալյոշան։

— Հենց դա էլ ծերունու գլխավոր ասելիքն է։

«Սարսափելի և իմաստուն ոգին, ոգին ինքնաոչնչացման ու չգոյության,— շարունակում է ծերունին,— մեծն ոգին խոսեց քեզ հետ անապատում, և գրքերում մեզ հաղորդված է, որ իբրև թե «փորձեց» քեզ նա։ Այդպե՞ս է արդյոք։ Եվ կարելի՞ էր միթե ասել որևէ ավելի ճշմարիտ բան, քան այն, որ նա հայտնեց քեզ երեք հարցի մեջ, և որ դու մերժեցիր, և որ գրքերում կոչված է «փորձություն»։ Այնինչ, եթե երկրի վրա երբևիցե կատարվել է իսկապես որոտաձայն մի հրաշք, ապա դա եղել է ճիշտ ա՛յդ օրը, այդ երեք փորձությունների օրը։ Հենց այդ երեք հարցերի հայտնակերպումն էր հրաշքը։ Եթե հնարավոր լիներ ենթադրել, լոկ իբրև փորձ ու օրինակ, թե սարսափելի ոգու այդ երեք հարցերն անհետ կորել են գրքերից, և թե պետք է վերականգնել դրանք, վերստին հղանալ ու երկնել, որպեսզի կրկին մտցվեն գրքերի մեջ, և այդ անելու համար պետք է հավաքել երկրի բոլոր իմաստուններին՝ կառավարիչներին, քահանայապետերին, գիտնականներին, փիլիսոփաներին, բանաստեղծներին և նրանց խնդիր առաջադրել— մտածեցեք, ստեղծեցեք երեք հարց, բայց այնպիսի հարցեր, որոնք ոչ միայն համապատասխանեն դեպքի տարողությանը, այլև, ավելին, երեք խոսքի մեջ, մարդկային լոկ երեք նախադասության մեջ արտահայտեն աշխարհի և մարդկության ամբողջ ապագա պատմությունը,— ապա կարծո՞ւմ ես դու արդյոք, որ երկրի ամբողջ գերիմաստությունը, ի մի եկած, կարողանա գտնել գեթ որևէ բան՝ ուժով ու խորությամբ նման այն երեք հարցերին, որ այն ժամանակ հզոր և իմաստուն ոգին իսկապես առաջարկեց քեզ անապատում։ Արդեն միայն այդ հարցերից, դրանց լոկ հայտնակերպման հրաշքից կարելի է հասկանալ, որ գործ ունես ոչ թե մարդկային ընթացիկ խելքի, այլ հավիտենական ու բացարձակ իմաստության հետ։ Վասնզի այդ երեք հարցերի մեջ մարդկու-

թյան ամբողջ հետագա պատմությունն է կարծես ի մի բերված ու նախագուշակված, և հայտնված է երեք պատկեր, որոնց մեջ համատեղվում են մարդկային բնության բոլոր անլուծելի պատմական հակասություններն ամբողջ երկրի վրա։ Այն ժամանակ դա չէր կարող այնքան պարզ երևալ տակավին, վասնզի անհայտ էր ապագան, իսկ այժմ, երբ անցել է տասնհինգ դար, մենք տեսնում ենք՝ այդ երեք հարցերի մեջ ամեն ինչ այնքան ճիշտ է կռահված ու նախագուշակված և այդ ամբողջն այնպես արդարացավ, որ այլևս ոչինչ կարելի չէ ավելացնել այդ հարցերին կամ զեղջել դրանցից։

Արդ ուրեմն՝ ինքդ որոշիր, թե ով էր ճշմարիտ. դո՞ւ, թե նա, որ հարցեր տվեց քեզ այն ժամանակ։ Հիշիր առաջին հարցը, թեև ոչ տառացի, բայց իմաստն այս էր. «Դու ուզում ես գնալ աշխարհ և գնում ես դատարկ ձեռքերով, ազատության ինչ-որ խոստումով, որը մարդիկ, իրենց պարզությամբ ու բնածին իրենց անկարգությամբ, չեն կարող նույնիսկ ըմբռնել, որից վախենում են նրանք ու սարսափում, քանզի մարդու և մարդկային հասարակության համար ո՞չ մի բան այնքան անտանելի չի եղել երբեք, որքան ազատությունը։ Իսկ տեսնո՞ւմ ես սույն քարերն այս մերկ ու շիկացած անապատում։ Հացի վերածիր սրանք, և քո ետևից մարդկությունը կվազի ոչխարների հոտի նման, շնորհակալ ու հնազանդ, թեև հավիտյան դողալով այն վախից, թե կհեռացնես դու ձեռքը քո և կդադարի քո տված հացը»։ Բայց դու չուզեցիր մարդուն զրկել ազատությունից և մերժեցիր առաջարկը, վասնզի ի՞նչ ազատություն, մտածեցիր, եթե հացով պետք է գնվի հնազանդությունը։ Դու առարկեցիր, թե ոչ հացով միայն կեցցե մարդ, բայց գիտե՞ս արդյոք, որ հանուն երկրային այդ հացի՝ քո դեմ կծառանա երկրի ոգին և կմարտնչի քո դեմ ու կհաղթի քեզ, և բոլորը կհետևեն նրան, բացականչելով. «Ո՞վ է նման սույն գազանին, նա մեզ հո՞ւր տվեց հերկնից»։ Գիտե՞ս արդյոք, որ կանցնեն դարեր, և մարդկությունն իր գերիմաստության ու գիտության շրթներով կհայտարարի, թե չկա հանցագործություն, ուստի չկա և մեղսագործություն, այլ կան միայն սովյալներ։ «Կերակրիր, հետո՝ միայն առաքինություն պահանջիր մարդկանցից»,— ահա՝ թե ինչ են գրելու այն դրոշի վրա, որ բարձրացնելու են քո դեմ, և որով կործանվելու է տաճարը քո։ Քո տաճարի տեղում կկառուցվի մի նոր շենք, կրկին

կբարձրանա բաբելոնյան սոսկալի աշտարակը, ու թեև այս մեկն էլ, նախորդի նման, իր ավարտին չի հասնի, բայց այնուամենայնիվ դու կարող էիր կանխել նոր աշտարակաշինությունը և հազար տարով կրճատել մարդկանց տառապանքները, որովհետև նրանք, հազար տարի իրենց աշտարակով տանջվելուց հետո, մեզ են դիմելու կրկին։ Եվ հայնժամ մեզ փնտրելու են նորից գետնի տակ, կատակոմբներում (որովհետև մենք նորից թաքնվելու ենք հալածանքներից ու տանջանքներից), գտնելու են մեզ և աղերսելու են. «Կերակրեցեք մեզ, զի նրանք, որոնք խոստացան հուր տալ մեզ հերկնից, չտվին»։ Եվ ահա ա՛յդ ժամանակ մենք կավարտենք նրանց աշտարակը, քանզի կավարտի նա, ով կկերակրի, և միայն մենք ենք, որ կկերակրենք հանուն քո, և ստած կլինենք, թե կերակրում ենք հանուն քո։ Օ՜, երբեք, երբե՜ք նրանք չեն կարող իրենք իրենց կերակրել առանց մեզ։ Ոչ մի գիտություն հաց չի տա նրանց, քանի ազատ մնան, բայց վերջ ի վերջո նրանք կդնեն իրենց ազատությունը մեր ոտքերի առաջ և մեզ կասեն. «Ավելի լավ է՝ ստրկացրեք մեզ, բայց կերակրեցեք»։ Վերջապես իրե՞նք կհասկանան, թե աներևակայելի բան է յուրաքանչյուրի համար բավականաչափ ապահովել ազատությունն ու երկրային հացը միասին, վասնզի երբեք, երբե՜ք չեն կարող նրանք հավասար բաժանում կատարել իրար միջև։ Կհամոզվեն նույնպես, որ երբեք չեն կարող նաև ազատ լինել, որովհետև թերուժ են, արատավոր, չնչին ու ըմբոստ։ Դու նրանց երկնային հաց խոստացար, բայց, կրկնում եմ նորից, մարդկային տկար, հավերժ արատավոր և հավերժ անշնորհակալ ցեղի աչքին կարո՞ղ է քո խոստացածը համեմատվել երկրային հացի հետ։ Եվ եթե հանուն երկնային հացի հազարներ ու տասնյակ հազարներ հետևեն քեզ, ապա ի՞նչ կլինի վիճակը միլիոնավոր և տասնյակ հազար միլիոնավոր էակների, որոնք ուժ չեն ունենա արհամարհելու երկրային հացը հանուն երկնային։ Կամ թե քեզ համար թանկ են լոկ տասնյակ հազարավոր մեծերն ու զորավորնե՞րը. իսկ ծովի ավազի պես անհամար միլիոնները, որոնք տկար են, բայց սիրում են քեզ, պետք է միայն նյո՞ւթ ծառայեն մեծերին ու զորավորներին։ Ոչ, մեզ համար թանկ են նաև տկարները։ Արատավոր են նրանք և ըմբոստ, բայց վերջ ի վերջո նրաք ևս կդառնան հնազանդ։ Պիտի զարմանան նրանք մեր վրա և աստվածներ պիտի համարեն մեզ,

երբ տեսնեն, թե մենք, գլխավորելով նրանց, համաձայնվում ենք ինքներս կրել ազատության բեռը և իշխել նրանց վրա. այնքա՞ն սարսափելի բեռ է դառնալու ազատ լինելը նրանց համար ի վերջո։ Բայց մենք կասենք, թե քեզ ենք ծառայում և իշխում ենք հանուն քո։ Եվ նորից խաբած կլինենք, քանզի չենք թողնի այլևս, որ դու գաս մեզ մոտ։ Այդ խաբեությունն է լինելու մեր տառապանքը, որովհետև հարկադրված պիտի լինենք ստելու։ Ահա թե ինչ էր նշանակում այդ առաջին հարցն անապատում, և ահա թե ինչը մերժեցիր դու հանուն ազատության, որն ամեն բանից վեր դասեցիր։ Այնինչ՝ այս աշխարհի մեծ խորհուրդն էր պարփակված այդ հարցում։ Ընտրելով «հացը», դու փարատած կլիներիր ինչպես անհատ մարդու, այնպես էլ ամբողջ մարդկության համընդհանուր և հավերժական անձկությունը, այն է՝ թե «ո՞ւմ երկրպագել»։ Քանի մարդն ազատ է մնում, նրա համար չկա ավելի տևական ու ավելի տանջալից մտահոգություն, քան այն, որ շուտով գտնի մեկին, որին կարողանա երկրպագել։ Բայց մարդը ձգտում է երկրպագության առարկա դարձնել այն, ինչ անվիճելի է արդեն, այնքան անվիճելի, որ բոլոր մարդիկ միանգամից համաձայն լինեն համորեն երկրպագելու նրան։ Վասնզի այդ խղճալի արարածների մտահոգությունն է ոչ միայն մեկի կամ մյուսի համար երկրպագության առարկա գտնել, այլ գտնել մի բան, որին բոլորը հաստատ հավատան ու երկրպագեն, և անպայման բոլորը միասին երկրպագեն։ Ահա այդ ընդհանրական երկրպագության պահանջն է, որ ամեն մի անհատ մարդու և ամբողջ մարդկության գլխավորագույն տանջանքն է եղել ի սկզբանե անտի։ Համընդհանուր երկրպագության համար նրանք իրար են բնաջնջել հրով ու սրով։ Նրանք աստվածներ են ստեղծել և կոչ արել միմյանց. «Թողե՛ք ձեր աստվածներին և եկեք մերիններին երկրպագելու, ապա թե ոչ՝ մա՛հ ձեզ և ձեր աստվածներին»։ Եվ այսպես է լինելու մինչև վախճանն աշխարհի, նույնիսկ այն ժամանակ, երբ աստվածներն էլ անհետանան աշխարհից. միևնույն է՝ կուռքերի առաջ ծնկի կընկնեն։ Դու գիտեիր, դու չէիր կարող չգիտենալ մարդկային բնության այդ հիմնական գաղտնիքը, բայց դու մերժեցիր միակ բացարձակ դրոշը՝ դրոշը երկրային հացի, որ առաջարկվեց քեզ, որպեսզի բոլորին ստիպեիր անվիճելիորեն երկրպագել քո առաջ և մերժեցիր հանուն ազատության ու երկնային հացի։ Արդ՝ տե՛ս, թե ինչ արեցիր այնուհետև։ Եվ դարձյա՛լ հանուն ազատության։

Ասում եմ քեզ, մարդը չունի ավելի տանջալից մտահոգություն, քան գտնել մեկին, որին կարողանա շուտափույթ կերպով հանձնել ազատության այն շնորհը, որով ծնվում է այդ դժբախտ էակը։ Բայց մարդկանց ազատությանը կարող է տիրանալ միայն նա, ով նրանց խիղճը կհանգստացնի։ Հացը քեզ առաջարկվում էր իբրև անվիճելի դրոշ՝ հա՛ց տուր, և մարդը կերկրպագի, որովհետև չկա ավելի ստույգ բան, քան հացը. բայց եթե միաժամանակ, քեզնից անկախ, ուրիշ մեկը տիրանա նրա խղճին, օ՜, մարդը հայնժամ կնետի նույնիսկ հացը քո և կհետևի այն մեկին, ով գայթակղեցնում է խիղճը նրա։ Այդ առումով դու իրավացի էիր։ Վասնզի մարդկային գոյության խորհուրդը ոչ թե լոկ ապրելն է, այլ որոշ նպատակի համար ապրելը։ Առանց հաստատ պատկերացում ունենալու, թե ինչու է ապրում, մարդը չի համաձայնվի շարունակել իր կյանքը և ավելի շուտ կոչընչացնի իրեն, քան կմնա երկրի վրա, թեկուզ և նրա շուրջը ողողված լինի հացով։ Այդ այդպես է, բայց ի՞նչ տեղի ունեցավ. փոխանակ տիրանալու մարդկանց ազատության, դու ավելի՛ մեծ ազատություն տվիր նրանց։ Կամ թե մոռացա՞ր, որ մարդու համար ավելի թանկ է հանգստությունը և նույնիսկ մահը, քան ընտրելու ազատությունը՝ բարիքի և չարիքի իմացության հարցում։ Չկա ավելի գայթակղիչ բան մարդու համար, քան նրա խղճի ազատությունը, բայց և չկա ավելի տանջալի բան։ Եվ ահա, փոխանակ մարդկային խիղճն առհավետ հանգստացնելու համար ամուր հիմքեր տալու, դու ընտրեցիր ամենայն ինչ, որ արտակարգ է, առեղծվածային և անորոշ, ամենայն ինչ, որ վեր էր մարդկանց ուժերից, ուստի և այնպես վարվեցիր՝ կարծես բոլորովին չէիր սիրում նրանց— այն էլ դո՞ւ, որ եկել էիր քո կյա՛նքը տալու նրանց համար։ Փոխանակ տիրանալու մարդկային ազատության, դու բազմապատկեցիր այդ ազատությունը և դրա պատճառած տանջանքներով ծանրաբեռնեցիր մարդու հոգեկան թագավորությունն առհավետ։ Դու մարդու ազատ սերը ցանկացար, որպեսզի ազատորեն հետևի նա քեզ՝ քեզնով հրապուրված ու գերված։ Հնադարյան անխախտ օրենքին անսալու փոխարեն, մարդը հետայդու պետք է ինքն իր ազատ սրտով որոշեր, թե ո՛րն է բարին և ո՛րն է չարը, իր առաջ ուղեցույց ունենալով քո տիպարը միայն,— բայց միթե դու չմտածեցի՞ր, որ նա ի վերջո կմերժի և նույնիսկ կժխտի թե՛ քո տիպարը, թե՛ քո ճշմարտությունը, եթե ճնշված լինի այնպիսի սարսափելի

բեռան տակ, ինչպիսին ընտրելու ազատությունն է։ Նրանք ի վերջո կբացականչեն, որ դու չես ճշմարիտը, քանզի անկարելի էր ավելի մեծ շփոթության ու տանջանքի մատնել նրանց, քան դու արեցիր, այնքա՛ն հոգսեր ու անլուծելի խնդիրներ բարդելով նրանց վրա։ Այսպես ուրեմն, դու ինքդ քո սեփական թագավորության կործանման հիմքերը դրիր և ոչ ոքի մի՛ մեղադրիր այլևս։ Իսկ ո՞ւր էր արդյոք քեզ առաջարկվածը։ Կա երեք զորություն երկրի վրա, միայն ու միայն երեք զորություն, որոնք կարող են նվաճել ու գերել առհավետ այդ վատուժ ըմբոստների խիղճը՝ նրանց իսկ երջանկության համար. այդ զորություններն են՝ հրաշք, խորհուրդ և հեղինակություն։ Դու երեքն էլ մերժեցիր և ինքդ տվիր օրինակն այդ մերժման։ Երբ սարսափելի և խմաստուն ոգին կացույց քեզ ի վերա աշտարակի տաճարին և ասաց քեզ— «Եթե ուզում ես իմանալ, թե որդի՞ն ես իրոք աստուծո, ա՛րի ոքեզ ատաի ի վայր, վասնզի ասված է նրա մասին, թե հրեշտակներն իրենց ձեռքերի վրա կբռնեն նրան, և նա չի ընկնի ու չի ջախջախվի, և հայնժամ կիմանաս, թե իրոք որդին ես աստուծո, և կապացուցես հայնժամ, թե ինչ մեծ է քո հավատքը քո հոր նկատմամբ»,— դու լսեցիր, բայց մերժեցիր առաջարկը և տեղի չտվիր վար նետվելու փորձությանը։ Օ՜, դու անշուշտ հպարտորեն ու հոյակապ վարվեցիր իբրև աստված, բայց մարդի՛կ, տկար ու ընդվզող այդ ցե՛ղը՝ մի՞թե աստվածնե՞ր են նրանք։ Օ՜, դու հասկացար այն ժամանակ, որ եթե գեթ մի քայլ անեիր, վար նետվելու գեթ մի շարժում, նույն վայրկյանին փորձած կլինեիր աստուծուն և կորցրած կլինեիր ամբողջ հավատքդ նրա նկատմամբ ու կշախջախվեիր այն նույն երկրի վրա, որը փրկելու համար էիր եկել, և կցնծար քեզ փորձող խմաստուն ոգին։ Սակայն, կրկնում եմ, շա՞տ են արդյոք քեզ նմանները։ Եվ մի՞թե իրո՞ք կարող էիր գեթ մի րոպե ենթադրել, թե մարդի՝ նույնպես ի վիճակի կլինեն դիմադրելու նման փորձությանը։ Այնպե՞ս է արդյոք ստեղծված մարդկային բնությունը, որ կարողանա մերժել հրաշքը և կարողանա միայն սրտի աղաս վճռին ապավինել կյանքի այդպիսի ահավոր պահերին՝ իր հոգու հիմնական, տանջալից, ամենասարսափելի խնդիրները դիմագրավելու բոպեներին։ Օ՜, դու գիտեիր, որ քո սխրագործությունը կհամբերժանա դրքերում, կհասնի մինչև հեռավոր ժամանակները և ծայրագույն սահմանները երկրի, և հուսացիր, որ մարդը ևս, հեռանալով քեզ, կապավինի աստուծուն և կարիք չի ունենա հրաշ-

քի։ Սակայն դու չգիտեիր, որ եթե մարդն ամենադուրեղն չափով մերժի հրաշքը, նույնժամ այն կմերժի և աստուծուն, քանզի մարդը ոչ այնքան աստուծուն է կարոտ, որքան հրաշքների։ Եվ քանի որ մարդն ի վիճակի չէ առանց հրաշքի մնալու, նա իր համար կըստեղծի նոր, արդեն սեփական հրաշքներ, և այլևս կերկրպագի կախարդների հրաշագործությանը, վհուկների հմայքին, թեկուզ և հարյուրապատիկ ավելի ըմբոստ լինի, հերետիկոս և անաստված։ Դու չիջար խաչից, երբ անարգելով ու ծաղրելով գոռում էին քեզ. «Իջի՛ր խաչից և կհավատանք, որ դու ես այն»։ Դու չիջար, որովհետև դարձյալ չուզեցիր հրաշքի միջոցով ստրկացնել մարդուն և ցանկացար, որ հավատքն ազատ լինի, ոչ թե հրաշքի վրա հիմնված։ Ազատ սեր ցանկացար, և ոչ թե ստրուկի ստորաքարշ հիացմունքն այն զորության առջև, որ առհավետ ահաբեկել է նրան։ Բայց այստեղ ևս դու չափազանց բարձր գնահատեցիր մարդկանց, զի նրանք ստրուկներ են անշուշտ, թեև ըմբոստ են ստեղծված։ Նայի՛ր շրջա կողմդ և զատիր. տասնհինգդար է անցել ահա, և դնա՞ ու նայիր հիմա նրանց, տես՝ ո՞ւմ ես հասցրել քո բարձրության։ Երդվում եմ, մարդն ստեղծված է ավելի տկար և ստոր, քան դու նրան գնահատում էիր։ Կարո՞ղ է, կարո՞ղ է նա կատարել այն, ինչին դու ես ընդունակ։ Այնքա՞ն հարգելով հանգերձ մարդուն, դու այնպես վարվեցիր, որ կարծես չէիր կարեկցում այլևս նրան, որովհետև չափազանց շատ պահանջեցիր նրանից,— այն էլ գո՞ւ, որ նրան սիրեցիր քո անձից ավելի։ Նվազ հարգելով մարդուն, նվազ էլ կպահանջեիր նրանից, և դա ավելի նման կլիներ սիրո, որովհետև ավելի թեթև կլիներ մարդու բեռը։ Նա տկար է և անարգ։ Ի՞նչ փույթ թե նա հիմա ամենուրեք ընդվզում է մեր իշխանության դեմ և հպարտանում է իր ընդվզմամբ։ Դա երեխայի և գայրոցկանի հպարտություն է։ Փոքր երեխաներ են նրանք, որ ընդվզել են գատրանում և վտարել ուսուցչին։ Բայց վերջ կգտնի նաև մանկության ուրախությունը, և այդ ուրախությունը թանկ կնստի նրանց վրա։ Նրանք կկործանեն տաճարները և արյամբ կողողեն երկիրը։ Սակայն հիմար երեխաներն ի վերջո կհասկանան, որ թեև ըմբոստ են իրենք, բայց վատուժ ըմբոստներ են, որոնք չեն կարող իրենց սեփական ըմբոստությանը դիմանալ։ Իրենց հիմար արցունքները թափելով, նրանք վերջապես կդիտավորեն, թե նա, ով ըմբոստ է ստեղծել իրենց, անհասանելի ուզել է ծիծաղել իրենց վրա։ Նրանք հուսահատությամբ պիտի ասեն այդ, և նրանց

ասածը պիտի լինի աստվածուրացություն, որ պիտի ավելի խորացնի նրանց ապերջանկությունը, որովհետև մարդկային բնությունը չի կարող աստվածուրացություն հանդուրժել և վերջ ի վերջո ինքն է միշտ վրեժ լուծում դրա համար։ Այսպես ուրեմն, խռովք, շփոթ և ապերջանկություն՝ ահա մարդկանց վիճակն այժմ, նրանց ազատության համար քո կրած այնքան տառապանքներից հետո։ Քո մեծ մարգարեն տեսիլքով և այլաբանորեն ասում է, թե տեսել է առաջին հարության բոլոր մասնակիցներին, և թե յուրաքանչյուր պորտից տասներկու հազար հոգի կար այնտեղ։ Բայց եթե այդքան էին, ուրեմն նրանք ևս ոչ թե մարդիկ էին երևի, այլ աստվածներ։ Քո խաչն էին կրել նրանք, տասնյակ տարիներով տոկացել էին սովալլուկ ու մերկ անապատում, սնվել մորեխներով ու արմատներով, և դու անշուշտ կարող ես հպարտությամբ մատնացույց անել ազատության և ազատ սիրո այդ զավակներին, նրանց ազատ ու հոյակապ զոհաբերությունը հանուն քո։ Բայց հիշիր, որ նրանք ընդամենը մի քանի հազար էին, այն էլ աստվածներ, իսկ մնացյալնե՞րը։ Ի՞նչ մեղք ունեն մնացյալ տկար մարդիկ, եթե չեն կարողացել կրել այն, ինչ կրել են հզորները։ Ի՞նչ մեղք ունի տկար հոգին, եթե ի վիճակի չէ այնքան սոսկալի շնորհներ ընկալելու իր մեջ։ Եվ միթե իրո՞ք դու եկել էիր լոկ ընտրյալների մոտ և ընտրյալների համար։ Բայց եթե այդպես է, ապա մի խորհուրդ է դա, որ մենք չենք կարող ըմբռնել։ Իսկ եթե խորհուրդ է, ապա մենք ևս իրավունք ունենք խորհուրդ քարոզելու և ուսուցանելու, թե կարևոր է ոչ թե նրանց սրտերի ազատ վճիռը, ոչ թե սերը, այլ խորհուրդը, որին պետք է կուրորեն անսան, նույնիսկ անկախ իրենց խղճից։ Այդպես և արեցինք։ Սրբագրեցինք սխրագործությունը քո և հիմնեցինք հրաշքի, խորհուրդի և հեղինակության վրա։ Եվ մարդիկ ուրախացան, որ կրկին առաջնորդվում են ոչխարների հոտի նման, և որ վերջապես նրանց սրտերն ազատված են՝ այնքա՞ն տառապանքներ պատճառած սարսափելի շնորհից։ Իրավացի՞ էինք մենք այդպես ուսուցանելով և այդպես գործելով, ասա՛։ Միթե չէի՞նք սիրում մենք մարդկությանը, այնքան խոնարհաբար գիտակցելով տկարությունը նրա, սիրով թեթևացնելով նրա բեռը և թույլատրելով նրա անզոր բնությանը՝ մինչև անգամ մեղք գործել, բայց մե՛ր արտոնությամբ։ Արդ՝ ինչո՞ւ ես այժմ եկել մեզ խանգարելու։ Եվ ի՞նչ ես լուռ ու խորաթափանց նայում ինձ քո հեզ աչքերով։ Զայրացի՛ր։ Ես չեմ

ուզում քո սերը, որովհետև ինքս չեմ սիրում քեզ։ Եվ ի՞նչ ունեմ քեզնից թաքցնելու։ Կամ միթե չգիտե՞մ, թե ում հետ եմ խոսում։ Իմ բոլոր ասելիքներն արդեն հայտնի են քեզ, ես այդ կարդում եմ աչքերի մեջ քո։ Եվ ե՞ս եմ միթե թաքցնելու մեր խորհուրդը քեզնից։ Գուցե դու հատկապես ուզում ես ի՛մ շրթներից լսել այն։ Լսի՛ր ուրեմն. մենք ոչ թե քեզ հետ ենք, այլ նրա հետ, ահա՛ մեր խորհուրդը։ Արդեն վաղո՞ւց, արդեն ութ դար է, ինչ նրա հետ ենք, ոչ թե քեզ։ Ուղիղ ութ դար առաջ մենք նրանից վերցրինք այն, ինչ դու մերժեցիր վրդովմունքով, այն վերջին շնորհը, որ նա առաջարկեց քեզ, ցույց տալով երկրային բոլոր թագավորությունները. մենք նրանից վերցրինք Հռոմն ու Կեսարի թուրը և ինքներս մեզ հռչակեցինք թագավորներ երկրային, միահեծան թագավորներ, թեև չենք կարողացել մեր գործն իր լիակատար ավարտին հասցնել առ այսօր։ Բայց ո՞վ է մեղավորը։ Օ՜, մինչև այժմ այդ գործի սկիզբն է միայն դրված, բայց արդեն սկսվել է գործը։ Դեռ երկար պետք է սպասել ավարտին, և դեռ շատ տառապանքներ է կրելու երկիրը, բայց կհաղթանակենք մենք ու կդառնանք կեսարներ, և հետո արդեն կմտածենք մարդկանց համաշխարհային երջանկության մասին։ Այնինչ դու կարող էիր դեռ այն ժամանակ վերցնել Կեսարի թուրը։ Ինչո՞ւ մերժեցիր այդ վերջին շնորհը։ Ընդունելով հզոր ոգու այդ երրորդ խորհուրդը, դու կիրագործեիր ամենայն ինչ, որ մարդը տենչում է երկրի վրա, այսինքն՝ թե ո՛ւմ վստահել իր խիղճը և ի՛նչ ձևով վերջապես միանալ վեճ չհարուցող համընդհանուր ու համերաշխ մի մրջնանոցում, վասնզի համաշխարհային միավորման պահանջը երրորդ ու վերջին տանջանքն է մարդկանց։ Մարդկությունն իր ամբողջության մեջ միշտ ձգտել է համաշխարհային կարգ հաստատել անպայման։ Բազմաթիվ մեծ ժողովուրդներ են եղել իրենց մեծ պատմությամբ, բայց որքան ավելի բարձր էին այդ ժողովուրդները, այնքան ավելի ապերջանիկ էին, որովհետև մյուսներից ավելի խոր գիտակցում էին մարդկանց համաշխարհային միավորման պահանջը։ Մեծ աշխարհակալները, Թիմուրներն ու Չինգիզ-խաները մրրիկի նման անցել են երկրի երեսով, ձգտելով տիեզերքը նվաճել, բայց նրանք ևս, թեև անգիտակցորեն, արտահայտել են մարդկության այդ նույն մեծ պահանջը համաշխարհային և համընդհանուր միավորման։ Եթե ընդունեիր աշխարհն ու Կեսարի ծիրանին, դու համաշխարհային թագավորություն կհիմնեիր և կպար-

գևեիր համաշխարհային խաղաղություն։ Վասնզի ո՞վ պետք է տիրի մարդկանց, եթե ոչ նա, ով տիրում է նրանց խղճին, և որի ձեռքումն է գտնվում նրանց հացը։ Եվ մենք ահա վերցրինք Կեսարի թուրը և այդպիսով, անշուշտ, մերժեցինք քեզ ու հետևեցինք նրան։ Օ՜, դեռ բազում դարեր կտևի ազատ մտքի անկարողությունը, նրանց գիտության ու մարդակերության շփոթը, որովհետև, սկսելով իրենց բաբելոնյան աշտարակը կառուցել առանց մեզ, նրանք ի վերջո կհասնեն մարդակերության։ Բայց այդ ժամանակ է, որ գազանը պիտի գետնաքարշ մոտենա մեզ և լիզի ոտքերը մեր, պիտի ցողի դրանք իր աչքերի արյունոտ արցունքներով։ Եվ մենք կնստենք գազանի մեջքին ու կբարձրացնենք բաժակը, որի վրա գրված կլինի՝ «Խորհո՜ւրդ»։ Բայց ահա այն ժամանակ և միա՛յն այն ժամանակ կհասնի խաղաղության ու երջանկության թագավորությունը մարդկանց համար։ Դու հպարտանում ես քո ընտրյալներով, բայց դու միայն ընտրյալներ ունես, մինչ մենք հանգստություն կպարգևենք բոլորին։ Եվ դեռ՝ այդպե՞ս է արդյոք. քանի՞-քանիներն այդ ընտրյալներից, քանի՞-քանիներն այն հզորներից, որոնք կարող էին ընտրյալներ լինել, հոգնել են վերջապես քեզ սպասելով, և ա՛յլ դաշտի վրա են փոխադրել ու դեռ կփոխադրեն ուժերը իրենց ոգու և ջերմությունն իրենց սրտի և վերջ ի վերջո քո իսկ դեմ կբարձրացնեն ազատ դրոշն իրենց։ Բայց դու ինքդ բարձրացրիր այդ դրոշը։ Իսկ մեր ձեռքի տակ բոլորն են լինելու երջանիկ և այլևս ո՛չ ըմբոստանալու են, ոչ էլ իրար են ոչնչացնելու, ինչպես ամենուրեք անում են քո ընծայած ազատության շնորհիվ։ Օ՜, մենք կհամոզենք նրանց, որ ա՛յն ժամանակ միայն կդառնան ազատ, երբ հօգուտ մեզ հրաժարվեն իրենց ազատությունից և հնազանդվեն մեզ։ Եվ ի՞նչ, իրավո՞ւնք կունենանք, թե ստած կլինենք։ Իրենք իսկ կհամոզվեն, որ մենք իրավունք ունենք, քանզի կհիշեն, թե ստրկության ու խռովության ինչպիսի՜ արհավիրքներ է բերել քո ազատությունը նրանց գլխին։ Ազատությունը, ազատ միտքն ու գիտությունը նրանց կտանեն դեպի այնպիսի խորխորատներ և կկանգնեցնեն այնպիսի հրաշքների և անլուծելի խորհուրդների առջև, որ նրանցից ոմանք, ըմբոստներն ու կատաղիները, իրենք իրենց կոչնչացնեն, ուրիշ ըմբոստներ, թերուժ լինելով, կոչնչացնեն իրար, իսկ մնացյալները, վատուժ ու դժբախտ արարածներ, գետնաքարշ կմոտենան մեր ոտքերին ու ողբաձայն կաղաղակեն.

«Այո, դուք իրավունք ունեիք, դո՜ւք միայն գիտեք խորհուրդը նրա, և ձեզ ենք վերադառնում, փրկեցեք մեզ հենց մեզանից»։ Հաց ստանալով մեզնից, նրանք անշուշտ պարզորեն կտեսնեն, թե մենք նրանցից վերցնում ենք իրենց իսկ ձեռքերով հայթայթված հացը, որպեսզի իրենց իսկ բաժանենք՝ առանց որևէ հրաշքի։ Կտեսնեն, թե մենք քարերը չենք վերածել հացի, բայց նրանք ճշմարտապես ուրախանալու են ոչ այնքան բուն հացի համար, որքան այն բանի, որ մե՛ր ձեռքից են ստանում հացը։ Վասնզի շատ լավ են հիշելու, որ առաջ, առանց մեզ, նրանց հայթայթած հացն անգամ քար էր դառնում իրենց ձեռքերում, իսկ երբ վերադարձան մեզ, քարերն անգամ նրանց ձեռքերում հաց դարձան։ Զափազանց, չափազա՜նց թանկ են գնահատելու նրանք առընդմիշտ հնազանդվելու երանությունը։ Եվ մինչև մարդիկ չհասկանան այդ, ապերջանիկ են լինելու։ Ո՞վ ամենից ավելի նպաստեց, որ մարդիկ չհասկանան այդ, ասա՛։ Ո՞վ բաժան-բաժան արեց ոչխարների հոտը և ցրեց անծանոթ ուղիներով։ Բայց հոտը նորից կհավաքվի ու նորից կհնազանդվի, և այս անգամ արդեն առհավետ։ Հանյժամ մենք նրանց կպարգևենք խաղաղ, խոնարհ երջանկություն, երջանկությունն անզոր էակների, ինչպես որ են նրանք ի բնե։ Օ՜, մենք կհամոզենք նրանց վերջապես, որ հպարտ չլինեն, վասնզի դու բարձրացրիր նրանց և այդու սովորեցրիր հպարտ լինել։ Կապացուցենք նրանց, որ անզոր են, որ խեղճ երեխաներ են միայն, բայց որ մանկական երջանկությունը ամենից քաղցրն է։ Նրանք երկչոտ կդառնան և վախվխելով կնայեն մեզ ու կսեղմվեն մեր շուրջ, ինչպես ճտերը թխսկան հավի շուրջ։ Նրանք կսքանչանան մեզնով ու կզարհուրեն մեզնից և կհպարտանան, որ մենք այնքա՜ն հզոր ենք ու այնքա՜ն խելացի, որ կարողացել ենք սանձահարել այդպիսի անզուսպ հազարամիլիոն հոտը։ Նրանք ուժակորույս դողդողալու են մեր ցասումից, վեհերոտ է դառնալու նրանց միտքը, հեշտորեն արցունք են թափելու երեխաների ու կանանց նման, բայց և նույնքան հեշտորեն, մեր արած մի նշանով, անցնելու են զվարճության ու ծիծաղի, պայծառ խնդության ու մանկական երանավետ երգերի։ Այո, մենք նրանց կստիպենք աշխատել, բայց ազատ ժամերին նրանց կյանքը կդարձնենք մանկական խաղի նման՝ մանկական երգերով, խմբերգերով և անմեղ պարերով։ Օ՜, նրանց կթույլատրենք նաև մեղք գործել, տկար են նրանք և անզոր, և նրանք երեխաների նման կսիրեն մեզ այն

պատճառով, որ թույլ ենք տալիս մեղք գործել։ Մենք կասենք նրանց, որ որևէ մեղք թողություն է գտնելու, եթե գործվի մեր արտոնությամբ, և որ թույլ ենք տալիս մեղք գործել, որովհետև սիրում ենք նրանց, իսկ մեղքերի համար պատիժը հոժարակամ վերցնում ենք մեր վրա։ Եվ կվերցնե՞նք պատիժը մեր վրա, իսկ նրանք մեզ կպաշտեն որպես բարերարների, որոնք նրանց մեղքերը հանձն են առել աստծո առաջ։ Եվ նրանք ոչ մի գաղտնիք չեն ունենալու մեզնից։ Մենք նրանց թույլ ենք տալու կամ արգելելու ենք ապրել իրենց կանանց ու սիրուհիների հետ, ունենալ կամ չունենալ երեխաներ՝ նայած թե հնազանդ են կամ ոչ, և նրանք մեզ ենթարկվելու են խնդությամբ ու բերկրանքով։ Իրենց խղճի ամենատանջալից գաղտնիքները՝ ամե՞ն ինչ, ամե՞ն ինչ բերելու են մեզ, և մենք ամեն ինչ կլուծենք, և նրանք ուրախությամբ կհավատան մեր տված լուծմանը, որովհետև դա կփրկի նրանց՝ անձնապես և ազատորեն որոշում ընդունելու մեծ հոգսից ու սարսափելի տանջանքներից, որոնց ենթակա են այժմ։ Եվ բոլորը երջանիկ են լինելու, բոլոր այդ միլիոնավոր էակները, բացի նրանց ղեկավարող հարյուր հազարից։ Վասնզի մենք միայն, մենք, որ խորհուրդն ենք պահում, լոկ մենք ենք լինելու ապերջանիկ։ Միլիոնավոր ու միլիոնավոր երջանիկ մանուկներ են լինելու և հարյուր հազար տառապյալներ, որոնք հանձն են առել բարիքի ու չարիքի իմացության անեծքը։ Միլիոնները հանդարտորեն կմեռնեն, հանդարտորեն կհանգչեն հանուն քո և ի գերեզմանե անտի ոչ այլ ինչ կգտնեն, բայց միայն մահ։ Սակայն մենք կպահենք գաղտնիքը և երկնային ու հավիտենական պարգևով կհուսադրենք նրանց՝ իրենց իսկ երջանկության համար։ Վասնզի՝ եթե իրոք որևէ բան լիներ անդենական աշխարհում, անշուշտ կլիներ ոչ այնպիսիների համար, ինչպիսին նրանք են։ Ասում են ու մարգարեանում, թե դու կգաս ու կհաղթանակես կրկին, կգաս քո հպարտ ու հզոր ընտրյալներով, բայց մենք կասենք, որ ընտրյալներն իրենց անձը միայն փրկեցին, իսկ մենք փրկեցինք բոլորին։ Ասում են, թե խայտառակվելու է գաղանի վրա նստած պոռնիկը, որն իր ձեռքերում խորհուրդն է պահել, և թե կրկին ըմբոստանալու են անզորները, պատառոտելու են նրա ծիրանին և մերկացնելու են նրա «նողկալի» մարմինը։ Բայց ես ոտքի կելնեմ հայնժամ և ցույց կտամ քեզ միլիոնավոր ու միլիոնավոր մանուկներին, որոնք չեն էլ իմացել, թե ինչ բան է մեղքը։ Եվ մենք, որ հանձն ենք առել նրանց մեղքերը վասն նրանց երջանկության, կկանգնենք քո դիմաց ու կասենք. «Դատի՛ր մեզ, եթե կարող ես ու հանդգնում ես»։ Իմացի՛ր, որ ես չեմ վախենում քեզնից։ Իմացիր, որ ես նույնպես եղել եմ անապատում, նույնպես սնվել եմ մորեխներով ու արմատներով, նույնպես օրհնելով եմ ազատությունը, որով դու օրհնել ես մարդկանց, և ես պատրաստվում էի մտնելու քո ընտրյալների շարքը, հզորների և ուժեղների շարքը, «թիվը լրացնելու» տենչանքով։ Բայց ես սթափվեցի և չուզեցի ծառայել խելագարության։ Ես վերադարձա ու հարեցի նրանց դասին, ովքեր սրբագրել են քո սխրագործությունը։ Ես հեռացա հպարտներից ու վերադարձա խոնարհներին՝ այդ խոնարհների երջանկության համար։ Այն, ինչ ասում եմ քեզ, կկատարվի, և կկառուցվի մեր թագավորությունը։ Կրկնում եմ, վաղն ևեթ կտեսնես այն հնազանդ հոտը, որ իմ ձեռքի առաջին իսկ շարժումով կնետվի հրաշեկ ածուխներ կիտելու քո խարույկին։ Եվ այդ խարույկի վրա այրելու եմ քեզ վասն այնորիկ, որ եկել ես խանգարելու մեզ։ Քանզի եթե եղել է մեկը, որ առավել քան բոլորը արժանի է դարձել մեր խարույկին, այդ դո՛ւ ես։ Վաղն այրելո՛ւ եմ քեզ։ Dixi»[1]։

Իվանը կանգ առավ։ Նա տաքացել էր խոսելու ընթացքում և խոսում էր հափշտակված. իսկ երբ վերջացրեց, հանկարծ ժպտաց։

Ալյոշան, որ լուռ լսել էր նրան շարունակ, իսկ վերջում, չափազանց հուզված, բազմիցս մղվել էր ընդհատելու եղբոր խոսքը, բայց ըստ երևույթին զսպել էր իրեն, հանկարծ այնպես սկսեց խոսել՝ կարծես վեր թռավ տեղից։

— Բայց... անհեթե՛թ բան է դա,— գոռաց նա կարմրելով։— Քո պոեմը գովերգում է Հիսուսին, ոչ թե պարսավում... ինչպես ուզում էիր դու։ Եվ ո՞վ քեզ կհավատա ազատության հարցում։ Այդպե՞ս պետք է հասկանալ ազատությունը, այդպե՞ս։ Ա՞յդ ձևով է հասկանում ուղղափառ եկեղեցին... Հռո՛մն է դա, այն էլ ոչ թե ամբողջ Հռոմը, ճիշտ չէ՛, կաթոլիկների մեջ վատթարագույններն են նրանք՝ հավատաքննիչնե՛րը, ճիզվիտնե՛րը... Եվ բնավ չի կարող լինել այնպիսի ցնորական մի դեմք, ինչպիսին քո հավատաքննիչն է։ Այդ ո՞ր մեղքերն են մարդկանց, որ նրանք հանձն են առել։ Այդ ի՞նչ խորհուրդ կրողներ են, որ ինչ-որ

[1] Ասացի (լատ.)։

անեծք են հանձն առել մարդկանց երջանկության համար։ Ո՞վ և ե՞րբ է տեսել նրանց։ Գիտենք ճիզվիտներին, նրանց մասին վատ են խոսում, բայց ա՞յն են նրանք, ինչ դու ես ներկայացնում։ Բոլորովին այն չեն, ոչ, ամենևին ոչ... Նրանք պարզապես հռոմեական բանակն են, ձգտում են երկրի վրա ստեղծել ապագա համաշխարհային մի թագավորություն, որի գլխին նստելու է Հռոմի քահանայապետն իբրև կայսր... ահա՛ նրանց իդեալը, բայց ոչ մի խորհուրդ ու վեհ տրտմություն չկա դրա մեջ... Ամենահասարակ մի տենչանք՝ տիրելու, երկրային կեղտոտ բարիքներ վայելելու, ստրկացնելու... մի տեսակ ապագա ճորտատիրություն, որտեղ նրանք կալվածատերեր կդառնան... ահա՛ նրանց ամբողջ ուզածը։ Գուցե նրանք աստծուն էլ չեն հավատում։ Քո տառապող հավատաքննիչը ցնորք է միայն...

— Սպասի՛ր, սպասի՛ր,— ծիծաղեց Իվանը,— ինչպե՞ս բոնկվեցիր մեկեն։ Ցնորք է, ասում ես, թո՛ղ այդպես լինի։ Իհարկե ցնորք է։ Բայց ասա՛ խնդրեմ՝ դու իրո՞ք կարծում ես, թե վերջին դարերի այդ ամբողջ կաթոլիկ շարժումը պարզապես տիրելու տենչանք է արդարև՝ հենց միայն կեղտոտ բարիքներ վայելելու համար։ Հայր Պաիսի՞ն է քեզ այդպես սովորեցնում։

— Ոչ, ոչ, ընդհակառակը, հայր Պաիսին մի անգամ նույնիսկ քո ասածի նման մի բան ասաց... բայց անշուշտ նույն բանը չէր, բնավ նույնը չէր,— հանկարծ գլխի ընկավ Ալյոշան։

— Այնուամենայնիվ՝ թանկագին վկայություն, չնայած քո «բնավ նույնը չէր» ասելուն։ Ես հենց հարց եմ տալիս քեզ, ինչո՞ւ պարզապես նյութական կեղտոտ բարիքների համար են միավորվել քո ճիզվիտներն ու հավատաքննիչները։ Ինչո՞ւ նրանց մեջ չի կարող լինել ոչ մի տառապյալ, որ տվայտում է մեծ վշտով և սիրում է մարդկությանը։ Գիտե՞ս ինչ, ենթադրիր, թե եղել է գեթ մեկ հոգի այն բոլորի մեջ, որոնք միայն նյութական կեղտոտ բարիքներ են ցանկանում, միայն մեկ հոգի, որն իմ ծերունի հավատաքննիչի նման արմատներ է կերել անապատում և մոլեգնորեն ճգնել է հաղթահարել իր մարմինը՝ ազատ ու կատարյալ դարձնելու համար իր անձը, բայց և իր ամբողջ կյանքում սիրել է մարդկությունը և հանկարծ սթափվել ու տեսել է, թե մի մեծ բարոյական երանություն չէ ազատ կամքի կատարելության հասնելը, եթե միաժամանակ համոզվում ես, որ աստծո մնացյալ միլիոնավոր արարածները մնում են լոկ իբրև ծաղր ստեղծված, որ նրանք երբեք ի վիճակի չեն լինի գլուխ հանելու իրենց ազատությունից, որ խեղճ ըմբոստները երբեք չեն դառնա հսկաներ՝ ավարտելու համար աշտարակը, և թե մեծ գաղափարապաշտն այդպիսի սագերի համար չէ, որ երազել է իր ներդաշնակությունը։ Հասկանալով այդ բոլորը, նա վերադարձել է և հարել... խելացի մարդկանց։ Չէ՞ր կարող միթե այդպիսի բան պատահել։

— Ո՞ւմ է հարել, ո՞ր խելացի մարդկանց,— բացականչեց Ալյոշան համարյա կրակ կտրած։— Ո՛չ մի այդպիսի խելք չունեն նրանք, ո՛չ էլ այդպիսի խորհուրդներ ու գաղտնիքներ... Գուցե միայն ու միայն անաստվածություն, ահա՛ նրանց ամբողջ գաղտնիքը։ Քո հավատաքննիչը չի հավատում աստծուն, ահա՛ նրա ամբողջ գաղտնիքը։

— Թեկուզ և այդպե՛ս։ Վերջ ի վերջո գլխի ընկար։ Եվ իրոք այդպես է, իրոք ա՛յդ է միայն ամբողջ գաղտնիքը, բայց մի՞թե տառապանք չէ դա, գոնե նրա նման մարդու համար, որ իր ամբողջ կյանքն է փչացրել անապատում ճգնելով և չի բուժվել մարդկության հանդեպ սեր տածելուց։ Իր կյանքի վերջալույսին գալիս է այն հստակ համոզման, թե մեծ ու սարսափելի ոգու տված խորհուրդնե՛րը միայն կարող էին թեկուզ որոշ չափով տանելի կյանք ստեղծել անզոր ըմբոստների համար, այդ «անկատար, փորձնական արարածների, որոնք իբրև ծաղր են ստեղծված»։ Եվ ահա, այդպիսի համոզման գալով, նա տեսնում է, որ պետք է գնալ իմաստուն ոգու՝ մահվան ու կործանման սարսափելի ոգու ցույց տված ճանապարհով, ուստի և պետք է ընդունել սուտն ու խաբեությունը և արդեն գիտակցորեն մարդկանց տանել դեպի մահ ու կործանում, ընդ որում խաբել նրանց ամբողջ ճանապարհին, որպեսզի նրանք որևէ կերպ չկարողանան նկատել, թե որտեղ են տանում իրենց, և որպեսզի այդ խեղճ կույրերը գոնե ճանապարհին իրենց երջանիկ համարեն։ Եվ նկատի ունեցիր, խաբեություն՝ հանուն նրա, որի իդեալին այնքա՞ն ջերմեռանդորեն հավատացել է ծերունին իր ամբո՞ղջ կյանքում։ Միթե տառապանք չէ՞ դա։ Եվ եթե այդպիսի մե՛կ հոգի թեկուզ գլխավորեր այդ ամբողջ բանակը, որ «տենչում է տիրել՝ միայն կեղտոտ բարիքներ վայելելու համար», միթե բավական չէ՞ր լինի այդ մեկ հոգին, որ դա ողբերգություն լիներ։ Ավելին. այդպիսի մեկի գլխավորելը բավական է, որ վերջապես Հռոմի գործը, իր բոլոր բանակներով ու ճիզվիտներով, ունենա իր իսկական առաջնորդող գաղափարը, այդ գործի գերագույն գաղափարը։ Ուղ-

ղակի ասեմ քեզ, ես հաստատ հավատում եմ, որ շարժման գլուխը կանգնածների մեջ միշտ էլ եղել է այդպիսի եզակի մարդ։ Ո՞վ գիտե, գուցե և Հռոմի քահանայապետերի մեջ եղել են այդ եզակիները։ Ո՞վ գիտե, գուցե այդ անիծյալ ծերունին, որ այնպես համառորեն և այնպես յուրովի սիրում է մարդկությանը, հիմա էլ գոյություն ունի՝ այդպիսի բազմաթիվ եզակի ծերունիների մի ամբողջ կաճառի ձևով, և գոյություն ունի ոչ թե պատահականորեն, այլ ըստ համաձայնության, որպես գաղտնի միություն, որն արդեն վաղուց կազմակերպվել է՝ պահելու համար խորհուրդը, պահելու համար ապերջանիկ ու անզոր մարդկանցից, որպեսզի երջանիկ դարձնի նրանց։ Այդ այդպես է անպայման, և այդպես էլ պետք է լինի։ Ինձ թվում է, թե նույնիսկ մասոններն այդ խորհուրդի նման մի բան ունեն իրենց հիմքում, և թե այդ պատճառով է, որ կաթոլիկներն այդպես ատում են մասոններին, նրանց մեջ տեսնելով մրցակիցների, տեսնելով միասնական գաղափարի տրոհումը, այնինչ պետք է լինի մի հոտ և մի հովիվ... Բայց, իմ միտքը պաշտպանելով, ես նմանվում եմ մի հեղինակի, որ չի հանդուրժել քո քննադատությունը։ Բավական է այս մասին։

— Գուցե ի՛նքդ մասոն ես,— թռավ հանկարծ Ալյոշայի բերնից։— Դու չես հավատում աստծուն,— ավելացրեց նա, բայց արդեն խորունկ տրտմությամբ։ Բացի այդ, նրան թվաց, որ եղբայրը հեգնանքով է նայում իրեն։— Ինչպե՞ս է վերջանում քո պոեմը,— հարցրեց նա հանկարծ, գետին նայելով,— կամ թե վերջացա՞վ արդեն։

— Ուզում էի այսպես վերջացնել. երբ լսում է հավատաքննիչը, որոշ ժամանակ սպասում է, թե ինչ կպատասխանի իր գերյալը։ Նրա լռությունը ճնշում է հավատաքննիչին։ Տեսավ, թե ինչպես գերյալն ամբողջ ժամանակ լսում էր հանգիստ ու խորաթափանց, նայելով ուղիղ նրա աչքերի մեջ և, ըստ երևույթին, չցանկանալով որևէ առարկություն անել։ Ծերունին կուզենար, որ նա որևէ բան ասեր, թեկուզ և դառն, սարսափելի մի բան։ Բայց նա հանկարծ լուռ մոտենում է ծերունուն և մեղմիվ համբուրում նրա իննսունամյա անարյուն շրթունքները։ Ահա ամբողջ պատասխանը նրա։ Ծերունին ցնցվում է։ Դողդողում են նրա շրթունքների ծայրերը։ Գնում է դեպի դուռը, բացում է և ասում նրան. «Գնա՛ և մի՛ գա այլևս... բնա՛վ մի գա...

երբե՛ք, երբե՛ք»։ Եվ արձակում է նրան «քաղաքի մութ փողոցների» մեջ։ Գերյալը գնում է։

— Իսկ ծերունի՞ն։

— Համբույրը վառվում է նրա սրտում, բայց ծերունին մնում է իր նախկին գաղափարին կառչած։

— Եվ դո՞ւ էլ նրա հետ, դո՞ւ էլ,— ցավագին բացականչեց Ալյոշան։

Իվանը ծիծաղեց։

— Բայց ախր դատարկ բան է այս ամբողջը, Ալյոշա, պարզապես անմիտ մի պոեմը անմիտ մի ուսանողի, որը նույնիսկ երկու տող բանաստեղծություն չի գրել երբեք։ Ինչո՞ւ ես այդքան լուրջ ընդունում։ Չլինի՞ մտածում ես, թե հիմա ուղղակի գնալու եմ այնտեղ, ճիզվիտների մոտ, որ մտնեմ նրա սխրագործությունը սրբագրող մարդկանց շարքերը։ Իմ ի՞նչ գործն է, ի սեր աստծու։ Ասացի քեզ, չէ՞, մինչև երեսուն տարեկանս հասնեմ միայն... իսկ հետո՝ կշպրտե՛մ բաժակը գետին։

— Իսկ կպչուն տերևիկնե՞րը, թանկագին գերեզմաննե՞րը, կապույտ երկի՞նքը, սիրելի կի՞նը։ Ինչպե՞ս ես դու ապրելու, ինչպե՞ս ես սիրելու նրանց։— վշտագին բացականչեց Ալյոշան։— Միթե կարելի՞ է ապրել ու սիրել՝ այդպիսի դժոխք ունենալով կրծքում ու գլխի մեջ։ Ո՞չ, դու հենց գնում ես, որ նրանց միանաս... ապա թե ոչ, ինքդ քեզ կսպանես, չե՞ս կարող դիմանալ։

— Կա մի ուժ, որով ամեն ինչի կարելի է դիմանալ,— ասաց Իվանն արդեն սառն քմծիծաղով։

— Ի՞նչ ուժ։

— Կարամազովյան ուժը... կարամազովյան ստորության ուժը։

— Անառակությա՞ն մեջ մխրճվել, հոգիդ խեղդե՞լ ապականության մեջ, հա՞, հա՞։

— Թերևս ա՛յդ էլ... միայն թե՝ գուցե մինչև երեսուն տարեկանս խուսափեմ, իսկ հետո...

— Բայց ինչպե՞ս կխուսափես։ Ի՞նչ միջոցով։ Անկարելի բան է, քանի այդ գաղափարներով ես տարված։

— Դարձյալ կարամազովյան ձևով։

— «Ամեն ինչ թույլատրելի է» ուզում ես ասե՞լ։ Ամեն ինչ թույլատրելի է, չէ՞, այդպե՞ս։

Իվանը հոնքերը կիտեց և հանկարծ տարօրինակ գունատվեց։

— Ա՜, դու բռնեցիր երեկվա խոսքի՞ց, որն այնպես վիրավորեց Միուսովին... և որ Դմիտրին այնպես մխիթարեն վերցրեց ու պարզաբանեց հանկարծ,— ծուռ ժպտաց նա։— Այո, ինչո՞ւ չէ, «ամեն ինչ թույլատրելի է», քանի արդեն ասվել է խոսքը։ Չեմ հրաժարվում։ Միայայի պարզաբանած ձևով էլ վատ չէ։

Ալյոշան լուռ նայում էր նրան։

— Ես, եղբայր իմ, մեկնելով այստեղից, մտածում էի, թե գոնե քե՛զ ունեմ ամբողջ աշխարհում, —անակնկալ զգացմունքով ասաց հանկարծ Իվանը։— Իսկ հիմա տեսնում եմ, որ քո սրտում էլ տեղ չունեմ, իմ սիրելի՛ ճգնավոր։ «Ամեն ինչ թույլատրելի է» բանաձևից չեմ հրաժարվի, դե՜հ ուրեմն, դո՞ւ ինձնից կհրաժարվես դրա համար, հա՞։ Այո՞։

Ալյոշան վերկացավ, մոտեցավ նրան և լուռ համբուրեց նրա շրթունքները մեղմիվ։

— Գրագողությո՛ւն,— գոռաց Իվանը, խիստ ոգևորվելով հանկարծ։— Իմ պոե՛մից գողացար։ Բայց և այնպես, շնորհակալ եմ։ Վե՛ր կաց, Ալյոշա, գնանք, ժամանակ է և՛ ինձ, և՛ քեզ համար։

Նրանք դուրս եկան, բայց կանգնեցին գինետան մուտքի առաջ։

— Լսի՛ր ինձ, Ալյոշա,— ասաց Իվանը կորովի ձայնով,— եթե իրոք կարողանամ անտարբեր չմնալ կպչուն տերևիկների հանդեպ, քեզ հիշելով է միայն, որ սիրելու եմ դրանք։ Ինձ համար բավական է, որ դու կաս այստեղ որևէ մի անկյունում, և չեմ կորցնի դեռ ապրելու ցանկությունը։ Բավակա՞ն է դա քեզ համար։ Եթե ուզում ես, ընդունիր իբրև սիրո խոստովանություն թեկուզ։ Իսկ այժմ՝ դու դեպի աջ, ես դեպի ձախ, և բավական է այլևս, լսո՞ւմ ես, բավակա՞ն է։ Այսինքն, եթե նույնիսկ վաղը չմեկնեմ (կարծում եմ, որ կմեկնեմ անպայման) և մենք նորից հանդիպենք մի կերպ, այլևս ինձ հետ ոչ մի խոսք այս բոլոր նյութերի շուրջ։ Թախանձագին խնդրում եմ։ Եվ Դմիտրիի մասին էլ, հատուկ խնդրում եմ, երբեք այլևս խոսք չբացես իմ առաջ,— ավելացրեց նա հանկարծ ջղագրգիռ,— ամեն ինչ ասվել է, ամեն ինչ ասվել պրծել է, այնպես չէ՞։ Ես էլ իմ կողմից մի խոստում եմ տալիս դրա դիմաց. երբ երեսունիս հասնեմ և ուզենամ «բաժակը գետին շպրտելս», որտեղ էլ լինես դու՝ կգամ մի անգամ ևս խոսելու քեզ հետ... Թեկուզ նույնիսկ Ամերիկայից՝ կգամ, վստահ եղիր։ Հատկապես կգամ։ Շատ հետաքրքրական կլինի մի հայացք նետել քո վրա այդ ժամանակ՝ տեսնենք դու էլ ինչպիսի՞ն ես լինելու։ Տեսնո՞ւմ ես, բավական հանդիսավոր խոստում է։ Եվ գուցե իսկապես յոթ կամ տասը տարով բաժանվում ենք իրարից։ Դե հիմա գնա քո Pater Seraphicus-ի[1] մոտ, մահամերձ է նա։ Եթե քո բացակայության մեռնի, մեկ էլ դեռ կարող ես բարկանալ ինձ վրա, որ ուշացրի քեզ։ Ցտեսություն, նորից համբուրիր ինձ, ա՛յ այդպես, դե գնա՛...

Իվանը հանկարծ շուռ եկավ ու գնաց իր ճանապարհով, առանց այլևս ետ նայելու։ Այնպես, ինչպես երեկ Դմիտրին բաժանվեց Ալյոշայից, թեև երեկ բոլորովին այլ կերպ էր։ Այդ տարօրինակ նմանությունը հանկարծ փայլատակեց Ալյոշայի մտքում, որ այդ րոպեին լի էր տրտմությամբ ու վշտով։ Նա մի քիչ սպասեց, նայելով եղբոր ետևից։ Չգիտես ինչու, հանկարծ նկատեց, որ Իվանը քայլում է մի տեսակ օրորվելով, և որ նրա աջ ուսը, ետևից նայելիս, թվում է ավելի ցածր, քան ձախը։ Առաջ երբեք չէր նկատել այդ։ Բայց մեկեն ինքն էլ շուռ եկավ ու համարյա վազեց դեպի վանք։ Արդեն մութն ընկնում էր, և նա գրեթե վախեցավ. մի նոր բան էր աճում նրա հոգում, և չէր կարող տակավին հստակորեն որոշել, թե ինչ է դա։ Նորից քամի բարձրացավ, ինչպես երեկ, և դարավոր սոճիներն սկսեցին մռայլորեն խշխշալ նրա շուրջ, երբ մտավ մենաստանի պուրակը։ Համարյա վազում էր։ «Pater Seraphicus»... այս անունը վերցրել է մի տեղից՝ ո՞րտեղից,— անցավ հանկարծ Ալյոշայի մտքով։— Իվան, խե՜ղճ Իվան, մեկ էլ ե՞րբ կտեսնեմ քեզ նորից... Ահա՜ մենաստանը, ատամա՜ծ իմ։ Այո, այո, նա է, նա՝ Pater Seraphicus-ը, նա կփրկի ինձ... նրանից և առհավետ»։

Հետագայում նա մեծապես տարակուսելով հիշեց մի քանի անգամ իր կյանքում, թե ինչպե՞ս կարող էր, Իվանից բաժանվելուց հետո, հանկարծ այդպես բոլորովին մոռանալ Դմիտրիին, երբ դեռ այդ առավոտ, ընդամենը մի քանի ժամ առաջ, վճռել էր անպայման գտնել նրան և շղթարձրեցնել որոնումները, եթե նույնիսկ ստիպված լիներ վանք չվերադառնալ այդ գիշեր։

[1] Հայր Սերովբեական (հրեշտականման) (լատ.)։

VI

ԱՌԱՋԻՄ ԴԵՌ ՇԱՏ ՄԹԻՆ ՄԻ ԲԱՆ

Իսկ Իվան Ֆյոդորովիչը, բաժանվելով Ալյոշայից, տուն գնաց՝ Ֆյոդոր Պավլովիչի տունը։ Բայց տարօրինակ բան, հանկարծ անտանելի տրտմություն իջավ նրա վրա. և մանավանդ, որքան ավելի էր մոտենում տանը, տրտմությունն ավելի ու ավելի էր սաստկանում ամեն մի քայլի հետ։ Տարօրինակ էր ոչ թե տրտմությունը, այլ այն, որ Իվան Ֆյոդորովիչը ոչ մի կերպ չէր կարողանում որոշել, թե ինչն է իր տրտմության պատճառը։ Առաջ էլ հաճախ տրտմության պահեր էր ունենում, և զարմանալի չէր, որ այդպիսի մի պահ էր եկել հիմա, երբ պատրաստվում էր միանգամից կապերը խզել բոլոր այն բաների հետ, որոնք իրեն քաշել-բերել էին այստեղ, և վաղն ևեթ մի կտրուկ շրջադարձ կատարել նորից ու ոտք դնել մի նոր, բոլորովին անծանոթ ճանապարհի վրա՝ կրկին մեն-մենակ, ինչպես առաջ, մեծ հույսեր ունենալով, բայց չիմանալով, թե ինչի վրա են հիմնվում դրանք, շատ, չափազանց շատ բան սպասելով կյանքից, բայց ինքն էլ չկարողանալով որևէ պարզորոշ գաղափար կազմել ո՛չ իր ակնկալությունների, ոչ էլ նույնիսկ իր ցանկությունների մասին։ Ու թեև այդ բոպեին նրա հոգում իսկապես կար նորի և անծանոթի տրտմությունը, բայց այնուամենայնիվ այդ չէր, որ տանջում էր նրան։ «Արդյոք հայրական տան նկատմամբ զզվա՞նքն է,— մտածեց ինքնիրեն։— Կարծես թե այդ է, այդ այնքա՞ն եմ զզվել։ Ու թեև այսօր վերջին անգամն եմ ներս մտնելու այդ պիղծ շեմքից, բայց համենայն դեպս զզվելի է...»։ Բայց չէ, այդ էլ չէր։ Արդյոք Ալյոշայից բաժանվե՞լն էր և նրա հետ ունեցած խոսակցությո՞ւնը։ «Քանի տարի է բերանս փակել էի ամբողջ աշխարհի դեմ և արժանի չէի համարում խոսել, և հանկարծ ի՞նչ հիմարաբանություններ դուրս տվի»։ Իրոք, դա կարող էր երիտասարդական անփորձության ու երիտասարդական սնափառության վրդովմունքը լինել, երիտասարդական վրդովմունք այն բանից, որ չկարողացավ իր ասելիքն ասել, այն էլ Ալյոշայի նման մի էակի առաջ, որի նկատմամբ նրա սիրտը մեծ հույսեր էր տածում անտարակույս։ Անշուշտ, այդ էլ կար, այսինքն այդ վրդովմունքը, նույնիսկ պետք է լիներ անպայման, բայց այդ չէր պատճառը, ուրիշ բան էր, ուրիշ բան։ «Սիրտ խոսող տրտմություն է, բայց չեմ կարողանում որոշել, թե ինչ է ուզածս։ Գուցե ավելի լավ է չմտածել...»։

Իվան Ֆյոդորովիչը փորձեց «չմտածել», բայց դա էլ չօգնեց։ Այդ տրտմությունը նրան վրդովում ու ջղայնացնում էր մանավանդ այն պատճառով, որ մի տեսակ պատահական, բացարձակապես արտաքին բնույթի էր. զգաց այդ բանը։ Ինչոր մի արարած կամ մի առարկա ցցվել-կանգնել էր մի տեղ, ինչպես երբեմն մի որևէ բան շարունակ երևում է աչքիդ, և երկար ժամանակ, գործով կամ տաք խոսակցությամբ տարված, չես նկատում այդ բանը, այնինչ դա հայտնապես ջղայնացնում, գրեթե տանջում է քեզ, մինչև որ ի վերջո գլխի ես ընկնում և աչքիցդ հեռացնում անպետք առարկան, որ հաճախ շատ դատարկ ու ծիծաղելի մի մանրուք է՝ տեղը չդրված ու մոռացված մի իր, հատակին ընկած մի թաշկինակ, գրապահարանը չդրված մի գիրք և այլն, և այլն։ Վերջապես Իվան Ֆյոդորովիչը խիստ վատ ու գրգռված տրամադրությամբ հասավ հոր տունը և մոտավորապես տասնհինգ քայլ էր մնացել, երբ հանկարծ, նայելով այգու դարպասին, միանգամից հասկացավ, թե ինչն էր այդպես տանջում ու խռովում իրեն։

Դարպասի մոտ, նստարանի վրա նստած, երեկոյան զով օդին հովանում էր ծառա Սմերդյակովը, և Իվան Ֆյոդորովիչն առաջին իսկ հայացքից հասկացավ, որ իր հոգում էլ նստել էր ծառա Սմերդյակովը, և որ հենց այդ մարդուն չի կարողանում հանդուրժել իր հոգին։ Հանկարծ մի լույս ծագեց և ամեն ինչ պարզ դարձավ։ Դեռ մի ժամ առաջ, երբ Ալյոշան պատմում էր Սմերդյակովի հետ իր հանդիպման մասին, մոայլ ու գարշելի մի բան մխրճվել էր հանկարծ իր սիրտը և անմիջապես փոխադարձ զայրույթ էր առաջացրել։ Հետո, խոսակցության մեջ, Սմերդյակովը մոռացվել էր առժամապես, բայց այնուամենայնիվ մնացել էր իր հոգում, և հենց որ Իվան Ֆյոդորովիչը բաժանվել էր Ալյոշայից և տուն էր գնում առանձին, մոռացված զգացողությունն իսկույն ևեթ սկսել էր արագորեն մակերես բարձրանալ նորից։ «Բայց մի՞թե այս շնչին, անպիտան արարածը կարող է այս աստիճան խռովել ինձ»,— մտածեց նա անտանելի զայրույթով։

Խնդիրն այն է, որ իրոք, Իվան Ֆյոդորովիչը վերջերս, հատկապես վերջին մի քանի օրերի ընթացքում, ուժեղ հակակրանք էր զգում այդ մարդու հանդեպ։ Մինչև իսկ ինքն էր սկսել իր

մեջ նկատել, որ օրըստօրե համարյա ատում է այդ արարածին։ Գուցե ատելությունն այդպիսի սուր ընթացք էր ստանում հենց այն պատճառով, որ սկզբում, երբ դեռ Իվան Ֆյոդորովիչը նոր էր եկել մեզ մոտ, բոլորովին այլ բան էր տեղի ունեցել։ Այն ժամանակ Իվան Ֆյոդորովիչը մի հատուկ հետաքրքրություն ցուցաբերեց հանկարծ Սմերդյակովի նկատմամբ, նույնիսկ գտավ, որ նա շատ ինքնատիպ մարդ է։ Ինքն առիթ տվեց, որ նա հաճախ խոսի իր հետ, բայց միշտ էլ զարմանում էր նրա մտքի որոշ խառնափնթորության կամ, ավելի ճիշտ, որոշ անհանգստության վրա և չէր հասկանում, թե ինչը կարող էր այդպես հարատևորեն ու կրնկակոխ անհանգստացնել «այդ հայեցողին»։ Փիլիսոփայական հարցերից էլ խոսեցին, նույնիսկ այն մասին, թե ինչո՞ւ առաջին օրը լույս կար աշխարհում, երբ արևը, լուսինը և աստղերը չորրորդ օրն են միայն ստեղծվել, և թե ինչպե՞ս պետք է հասկանալ այդ։ Բայց Իվան Ֆյոդորովիչը շուտով համոզվեց, որ արևը, լուսինն ու աստղերը չէին կարևորը, և որ արևը, լուսինն ու աստղերը թեև հետաքրքրական, բայց Սմերդյակովի համար բացարձակապես հետին կարգի խնդիր են. նրա ուզածը բոլորովին ուրիշ բան էր։ Այսպես թե այնպես, համենայն դեպս սկսեց ի հայտ գալ ու քողազերծվել նրա անսահման ինքնասիրությունը, ըստ որում վիրավորված ինքնասիրությունը։ Դա խիստ անախորժ թվաց Իվան Ֆյոդորովիչին։ Եվ դրանից էլ ծնունդ առավ նրա զզվանքը։ Հետագայում ընտանեկան խռովություններն սկսվեցին տանը, Գրուշենկան մեջտեղ եկավ, ծայր առան Դմիտրիի հետ կապված պատմությունները, գլխացավանքները շատացան. այդ մասին էլ խոսեցին, ու թեև Սմերդյակովը մեծ հուզմունքով էր արտահայտվում միշտ այդ հարցերի շուրջը, բայց դարձյալ ոչ մի կերպ հնարավոր չեղավ հասկանալ, թե նա անձնապես ի՞նչ ելք է ցանկանում այդ բոլորից։ Նույնիսկ զարմանալ կարելի էր, թե որքան անտրամաբանական ու խառնաշփոթ էին նրա որոշ ցանկությունները, որոնք ակամա ի հայտ էին գալիս և միշտ էլ նույն անորոշ ձևով էին արտահայտվում։ Սմերդյակովն անընդհատ հարցուփորձ էր անում, ինչ-որ կողմնակի, ակնհայտորեն մտացածին հարցեր էր տալիս, բայց թե ի՞նչ նպատակով՝ չէր բացատրում, և սովորաբար իր իսկ սկսած հարցուփորձի ամենատաք պահին հանկարծ լռում էր կամ անցնում բոլորովին ուրիշ մի նյութի։ Բայց գլխավոր բանը, որ վերջնականապես գրգռեց Իվան Ֆյոդորովի-

չին և այդպիսի զզվանքով լցրեց նրա սիրտը, այն մի տեսակ խորշելի և յուրահատուկ մտերմականությունն էր, որ Սմերդյակովն օրըստօրե ավելի ու ավելի շեշտված կերպով ցուցաբերում էր նրա նկատմամբ։ Ոչ թե հանդգնում էր անքաղաքավարի լինել, ընդհակառակը՝ միշտ էլ չափազանց հարգալից էր խոսում, բայց նրանց հարաբերություններն այնպիսի բնույթ ստացան, որ ի վերջո Սմերդյակովը, աստված գիտե ինչու, սկսեց ակնհայտորեն սեպել, թե ինքը ինչ-որ հարցում մի տեսակ համերաշխ է Իվան Ֆյոդորովիչի հետ. միշտ խոսում էր այնպիսի շեշտով, որ կարծես թե իրենց միջև արդեն փոխադարձ պայմանավորվածություն կա ինչ-որ խնդրի շուրջ, ինչ-որ մի գաղտնիք, ժամանակին երկու կողմից էլ ասված մի բան, որ միայն իրենց է հայտնի, իսկ իրենց շուրջը խլրտացող մահկանացուներին հասկանալի անգամ չէ։ Սակայն Իվան Ֆյոդորովիչը դրանից հետո էլ երկար ժամանակ չէր հասկանում իր հարատուն զզվանքի բուն պատճառը, և միայն այս վերջին օրերին էր, որ կարողացավ ի վերջո կռահել, թե ինչն է խնդիրը։

Հիմա նա, պժգանքի զգացումով լցված ու ջղայնացած, ուզում էր լռելյայն անցնել ու մտնել դարպասից, առանց Սմերդյակովին նայելու, բայց Սմերդյակովը նստարանից վերկացավ, և միայն այդ շարժումից արդեն Իվան Ֆյոդորովիչը վայրկենապես հասկացավ, որ նա ցանկանում է հատուկ խոսակցություն ունենալ իր հետ։ Իվան Ֆյոդորովիչը նայեց նրան ու կանգ առավ, և հենց այն փաստը, որ այդպես կանգ առավ հանկարծ ու չանցավ-չգնաց, ինչպես դեռ մի րոպե առաջ ուզում էր անել, կատաղելու աստիճան զայրացրեց իրեն։ Ցասումով ու նողկանքով նայում էր նրա ներքինիական չոր, արյունազուրկ դեմքին, քունքերի վրա առաջ սանրված մազերին ու ճակատի վերև ցցված փոքրիկ մազափնջին։ Սմերդյակովի ձախ աչքը, մի թեթև կկոցված, թարթվում էր ու ժպտում, կարծես ասելով՝ «Ո՞ւր ես գնում, չես կարող անցնել։ Տեսնում ես, որ մենք երկուսս, խելացի մարդիկ, խոսելու բան ունենք»։ Իվան Ֆյոդորովիչը ցնցվեց։

«Դե՜ն, անպետք արարած, ես ո՞վ, դո՞ւ ով, հիմա՛ր»,— քիչ մնաց թոցներ բերանից, սակայն մեծագույն զարմանքով զգաց, որ լեզվի ծայրից բոլորովին ուրիշ մի բան թռավ։

— Ի՞նչ է անում հայրիկը, քնա՞ծ է թե զարթնեց,— ասաց նա մեղմ ու համեստ շեշտով, իր համար էլ անսպասելիորեն,

և հանկարծ, նույնպես բոլորովին անսպասելիորեն, նստեց նստարանին։ Համարյա թե սարսափ զգաց մի վայրկյան. հետագայում հիշեց այդ վայրկյանը։ Սմերդյակովը կանգնած էր իր դիմաց, ձեռքերը մեջքին, և նայում էր վստահորեն, համարյա խստադեմ։

— Քնած է տակավին,— արտասանեց նա անշտապ։ (Այսինքն թե՝ «Առաջինը ինքդ սկսեցիր խոսել, ոչ թե ես»)։— Զարմանում եմ ձեր վրա, տեր իմ,— ավելացրեց նա մի փոքր լռելուց հետո. աչքերը մի տեսակ սեթևեթանքով խոնարհել էր, աջ ոտքն առաջ էր տարել և իր լաքած կոշիկի քիթն էր խաղացնում։

— Ինչո՞ւ ես զարմանում իմ վրա,— խիստ ու կտրուկ հարցրեց Իվան Ֆյոդորովիչը, մեծ ճիգով զսպելով իրեն, և հանկարծ զզվանքով հասկացավ, որ սաստիկ հետաքրքրություն է զգում և ոչ մի կերպ չի հեռանա այստեղից, մինչև չգուշակի այն։

— Ինչո՞ւ Չերմաշնյա չեք գնում, տեր իմ,— հանկարծ աչքերը վեր առավ Սմերդյակովը և մտերմավարի ժպտաց։ «Իսկ թե ինչո՞ւ ժպտացի, ինքդ պետք է հասկանաս, եթե խելացի մարդ ես», ասում էր կարծես նրա կկոցված ձախ աչքը։

— Ինչո՞ւ պետք է Չերմաշնյա գնամ,— զարմացավ Իվան Ֆյոդորովիչը։

Սմերդյակովը նորից լուռ մնաց։

— Նույնիսկ ինքը՝ Ֆյոդոր Պավլովիչն այնքան աղաչում էր ձեզ, որ գնաք,— ասաց նա վերջապես, առանց շտապելու, և կարծես ինքն էլ նշանակություն չտալով իր պատասխանին, այսինքն թե՝ անկարևոր մի պատճառաբանությամբ օձիքս ազատում եմ, պարզապես մի բան ասած լինելու համար։

— Է՜, գրո՜ղը տանի, պարզ ասա, ի՞նչ է ուզածդ,— գոռաց Իվան Ֆյոդորովիչն ի վերջո զայրացած, համեստ շեշտից անցնելով կոպտության։

Սմերդյակովն իր աջ ոտքը ետ տարավ ձախի մոտ, ավելի ուղիղ կանգնեց, բայց շարունակեց նայել նույն հանդարտությամբ և նույն թեթև ժպիտով։

— Ոչ մի էական բան... հենց այնպես, խոսքի բերումով...

Նորից լռություն տիրեց։ Համարյա մեկ րոպե չխոսեցին։ Իվան Ֆյոդորովիչը գիտեր, որ ինքը հիմա պետք է վեր կենար ու իր բարկությունը թափեր, իսկ Սմերդյակովը կանգնել էր

նրա առաջ ու կարծես սպասում էր. «Ա՜յ, տեսնեմ հիմա կբարկանա՞ս, թե չէ»։ Այդպես էր թվում գոնե Իվան Ֆյոդորովիչին։ Վերջապես նա շարժվեց, որ վերկենա։ Սմերդյակովը ճիշտ որսաց վայրկյանը։

— Սոսկալի է իմ վիճակը, Իվան Ֆյոդորովիչ, նույնիսկ չգիտեմ, թե ինչ ճար գտնեմ,— ասաց նա հանկարծ հաստատ ու որոշակի և վերջին բառի վրա հառաչեց։ Իվան Ֆյոդորովիչն իսկույն նստեց նորից։

— Երկուսն էլ բացարձակապես ցնդել են, երկուսն էլ կամակոր երեխա են դարձել ուղղակի,— շարունակեց Սմերդյակովը։— Խոսքս ձեր ծնողի և ձեր եղբոր՝ Դմիտրի Ֆյոդորովիչի մասին է։ Ա՜յ հիմա կվերկենա, այսինքն Ֆյոդոր Պավլովիչը, և իսկույն կսկսի բկիս կպչել ամեն րոպե. «Ի՞նչ է, չեկա՞վ։ Ինչո՞ւ չեկավ»։ Եվ այդպես մինչև կեսգիշեր, նույնիսկ կեսգիշերից էլ հետո։ Իսկ եթե Ագրաֆենա Ալեքսանդրովնան չգա (որովհետև նա, հավանական է, բոլորովին էլ միտք չունի երբևիցե գալու), վաղը առավոտ նորից կհարձակվի վրաս. «Ինչո՞ւ չեկավ։ Ի՞նչ պատճառով չեկավ, ե՞րբ է գալու»։ Կարծես թե մի բանով էլ ես եմ մեղավոր դուրս գալիս նրա առաջ։ Մյուս կողմից էլ նույն փորձանքը. հենց որ մութն ընկնում է, և դրանից էլ առաջ, ձեր եղբայրը զենքը ձեռքին հայտնվում է մոտերքում. «Դե տե՜ս, ստահակի մեկը, ապո՜ւր եփող. եթե աչքիցդ փախցնես ու լուր չտաս ինձ, որ եկել է, ամենից առաջ քե՜զ կսպանեմ»։ Անցնում է գիշերը, առավոտյան նա էլ Ֆյոդոր Պավլովիչի նման սկսում է տանջելով տանջել ինձ. «Ինչո՞ւ չեկավ, ե՞րբ է երևալու, շուտո՞վ»։ Եվ կարծես թե նրա առաջ էլ դարձյալ մեղավոր եմ դուրս գալիս, որ իր օրիորդը չի երևացել։ Եվ երկուսն էլ ավելի ու ավելի են գազազում օրեցօր, ժամեժամ, այնպես որ երբեմն րոպեներ են լինում՝ մտածում եմ կյանքիս վերջ տամ, այնքան վախենում եմ։ Չեմ վստահում նրանց, տեր իմ։

— Իսկ ինչո՞ւ խառնվեցիր։ Ինչո՞ւ սկսեցիր լուրեր տանել Դմիտրի Ֆյոդորովիչին,— ասաց Իվան Ֆյոդորովիչը, ջղայնորեն։

— Իսկ ինչպե՞ս անեի, որ չխառնվեի։ Եվ ինքս բնավ էլ չէի խառնվում, եթե ուզում եք ամեն ինչ ճիշտ ու ճիշտ իմանալ։ Հենց սկզբից էլ լուռ էի մնում, չհամարձակվելով դեմ խոսել, բայց նա ինքը կարգադրեց ինձ, որ ես սուսուփուս ծառայեմ իրեն։ Այդ օրից էլ միշտ նույն խոսքն է նրա բերանում. «Կսպանե՜մ քեզ, ստահակի մեկը, եթե աչքիցդ բաց թողնես նրանց»։

Հաստատ ենթադրում եմ, տեր իմ, որ վաղը երկար ժամանակով ընկնելու եմ։

— Ինչպե՞ս թե երկար ժամանակով ընկնելու ես։

— Ընկնավորության երկար մի նոպա այնպես, չափազանց երկար։ Մի քանի ժամ է տևում, կամ էլ գուցե մեկ օր, երկու օր։ Մի անգամ երեք օր տևեց, ձեղունից ընկա այն ժամանակ։ Ցնցումները դադարում էին, բայց հետո նորից սկսում, և ամբողջ երեք օր խելքս գլուխս չէր գալիս։ Հերցենշտուբեին՝ այստեղի բժշկին, կանչեց Ֆյոդոր Պավլովիչը այն ժամանակ, նա էլ սառույց էր դնում գլխիս, մի ուրիշ միջոց էլ փորձեց... Կարող էի մեռնել։

— Բայց ասում են՝ հնարավոր չէ նախօրոք իմանալ, թե ընկնավորության նոպան այսինչ ժամին է լինելու։ Իսկ դու ինչպե՞ս ես ասում, որ վաղն է գալու քո նոպան,— հարցրեց Իվան Ֆյոդորովիչը մի յուրահատուկ, ջղային հետաքրքրությամբ։

— Ճիշտ է, որ չի կարելի նախօրոք իմանալ։

— Եվ բացի այդ՝ ձեղունից ես ընկել այդ ժամանակ։

— Ամեն օր ձեղուն եմ մագլցում, վաղն էլ կարող եմ ձեղունից ընկնել։ Եթե ձեղունից չեղավ, նկուղը կընկնեմ։ Ամեն օր նույնպես կարիք ունեմ նկուղ իջնելու։

Իվան Ֆյոդորովիչը երկար նայեց նրան։

— Հիմարություններ ես դուրս տալիս, տեսնում եմ. և ինչ-որ չեմ հասկանում քեզ,— ասաց նա մեղմ, բայց մի տեսակ սպառնալից։— Ի՞նչ է, երեք օրվա նոպա՞ ես ուզում կեղծել վաղը, հը՞։

Սմերդյակովը, որ գետին էր նայում և իր աջ ոտքի քիթն էր խաղացնում նորից, ետ տարավ աջ ոտքը, ձախն առաջ բերեց, գլուխը վեր առավ և ասաց քմծիծաղ տալով.

— Եթե նույնիսկ կարողանայի այդ տեսակ մի խաղ խաղալ, այսինքն նոպա կեղծել, և քանի որ դա բոլորովին էլ դժվար չէ փորձառու մարդու համար, այդ դեպքում էլ լիակատար իրավունք կունենայի այդ միջոցն օգտագործելու, որպեսզի կյանքս փրկեմ մահից։ Որովհետև՝ երբ ես հիվանդ պառկել եմ, թեկուզ և Ագրաֆենա Ալեքսանդրովնան գա նրա հոր մոտ, հո նա չի կարող հիվանդ մարդուց պահանջել՝ «ինչո՞ւ լուր չտվիր»։ Ինքը կամաչի։

— Է՛, գրո՛ղը տանի,— հանկարծ վրա տվեց Իվան Ֆյոդորովիչը զայրույթից այլայլված դեմքով։— Ի՞նչ ես անընդհատ

կյանքիցդ վախենում։ Դմիտրիի բոլոր այդ սպառնալիքները տաքգլուխ խոսքեր են, ուրիշ ոչինչ։ Չի սպանի քեզ. ասենք կըսպանի, բայց ո՛չ թե քեզ։

— Ճանճի պես կսպանի, և ամենից առաջ՝ ինձ։ Բայց դրանից էլ ավելի մի ուրիշ բանից եմ վախենում. որ ինձ նրա մեղսակիցը համարեն, երբ նա մի խենթ բան անի իր ծնողի գլխին։

— Ինչո՞ւ քեզ մեղսակից պետք է համարեն։

— Մեղսակից կհամարեն, որովհետև հենց այդ նշանները հայտնեցի նրան, մեծ գաղտնիք է։

— Ի՞նչ նշաններ։ Ո՞ւմ հայտնեցիր։ Գրո՞ղը տանի քեզ, պա՛րզ խոսիր։

— Պետք է բացարձակապես խոստովանեմ,— երկար-բարակ սկսեց Սմերդյակովն անվրդով բծախնդրությամբ,— որ ես Ֆյոդոր Պավլովիչի հետ մի գաղտնիք ունեմ այս հարցում։ Ինչպես դուք ինքներդ գիտեք (միայն թե՝ եթե իսկապես գիտեք), արդեն մի քանի օր է, որ նա, հենց որ այսինքն գիշերն է իջնում կամ նույնիսկ երեկոն, իսկույն ներսից կողպում է դուռը։ Վերջերս դուք սկսեցիք ամեն իրիկուն կանուխ բարձրանալ վերև, ձեր սենյակը, իսկ երեկ բոլորովին դուրս չեկաք տնից, և դրա համար էլ գուցե չգիտեք, թե ինչպես նա հիմա սկսել է ամենայն խնամքով փակվել գիշերը տան մեջ։ Ու թեկուզ անձամբ Գրիգորի Վասիլևիչն էլ գա, մինչև ձայնից չճանաչի նրան, չի բանա դուռը։ Բայց Գրիգորի Վասիլևիչը չի գալիս, որովհետև հիմա ե՛ս եմ միայն սպասարկում տան ներսում. ինքը այդպես որոշեց հենց այն րոպեից, երբ այս Ագրաֆենա Ալեքսանդրովնայի պատմությունը հնարեց։ Հիմա ես էլ գիշերը, իր կարգադրությամբ, դուրս եմ գալիս և մնում եմ բակի շենքում, այն պայմանով, որ մինչև կեսգիշեր չքնեմ, այլ հսկեմ՝ վերկենամ ու շրջեմ բակում, սպասեմ, թե երբ է գալու Ագրաֆենա Ալեքսանդրովնան, որովհետև արդեն քանի օր է՝ սպասում է նրան խելագարի պես։ Եվ ահա թե ինչպես է պատճառաբանում. ասում է՝ Ագրաֆենա Ալեքսանդրովնան վախենում է նրանից, այսինքն Դմիտրի Ֆյոդորովիչից (Միտյա է կոչում նրան), դրա համար էլ ուշ գիշերին կգա ինձ մոտ, ետևի կողմից. իսկ դու, ասում է, աչքդ բաց պահիր մինչև կեսգիշեր և նույնիսկ ավելի։ Եվ եթե գա, վազիր շուտով ու թխկացրու իմ դռանը, կամ էլ այգու կողմից լուսամուտին, ձեռքով թխկացրու այսպես՝ սկզբ-

բում երկու անգամ, հատ-հատ՝ մեկ-երկու, իսկ հետո իսկույն երեք անգամ, արագ-արագ՝ թըք-թըք-թըք։ Եվ ես, ասում է, անմիջապես կհասկանամ, որ նա է եկել, և դուռը կամացուկ կբանամ քո առաջ։ Մի ուրիշ նշան էլ ասաց, սա էլ այն դեպքում, երբ արտակարգ մի բան պատահի. սկզբում երկու անգամ, արագ-արագ՝ թըք-թըք, հետո մի քիչ դադար, և մի հատ էլ՝ շատ ավելի ուժեղ։ Եվ նա կհասկանա, որ անակնկալ մի բան է պատահել, վռազ պետք է տեսնեմ իրեն, և նույնպես կբանա դուռը, ես էլ կմտնեմ ու կզեկուցեմ։ Սա այն դեպքում, երբ Ագրաֆենա Ալեքսանդրովնան կարող է ինքը չգալ, բայց մարդ ուղարկել՝ մի որևէ լուր հաղորդելու. դրանից բացի, Դմիտրի Ֆյոդորովիչը նույնպես կարող է գալ, ուրեմն այդ դեպքում էլ պետք է լուր տամ, որ նա տան մոտերքն է։ Սոսկալի վախենում է Դմիտրի Ֆյոդորովիչից, այնպես, որ եթե նույնիսկ Ագրաֆենա Ալեքսանդրովնան արդեն եկած լինի և նրանք փակված լինեն ներսում, իսկ Դմիտրի Ֆյոդորովիչն էլ այդ ժամանակ երևա մոտիկ մի տեղ, այդ դեպքում էլ անպայման պարտավոր եմ վռազ հայտնել, երեք անգամ թխկացնելով։ Այնպես որ առաջին նշանը, հինգ թխկոց, նշանակում է՝ «Ագրաֆենա Ալեքսանդրովնան եկել է», իսկ երկրորդ նշանը, երեք թխկոց, թե «վռազ մի բան կա»։ Այս բոլորն ինքը մի քանի անգամ ցույց տվեց իր ձեռքով և բացատրեց ինձ։ Եվ քանի որ ամբողջ տիեզերքում ես և ինքը միայն գիտենք այդ նշանների մասին, ուրեմն էլ առանց դես-դեն կասկածելու կբանա դուռը և ձայն էլ չի տա ներսից (շատ է վախենում որևէ ձայն հանելուց)։ Ահա հենց այս նշաններն են, որ հիմա Դմիտրի Ֆյոդորովիչին էլ հայտնի դարձան։

— Ինչո՞ւ հայտնի դարձան։ Դո՞ւ հաղորդեցիր։ Ինչպե՞ս համարձակվեցիր հաղորդել։

— Հենց այդ վախից։ Եվ ինչպե՞ս համարձակվեի բերանս փակ պահել նրա առաջ։ Դմիտրի Ֆյոդորովիչն ամեն օր ինձ նեղում էր. «Դու խաբո՞ւմ ես ինձ, դու մի բա՞ն ես թաքցնում ինձանից, հա՞։ Երկու ոտքե՛րդ կկոտրեմ»։ Դե ես էլ այդ գաղտնի նշանները հայտնեցի նրան, որպեսզի գոնե տեսնի իմ ստրկական ծառայությունը և այդպիսով համոզվի, որ չեմ խաբում իրեն, այլ ամեն ձևով տեղեկություն եմ տալիս։

— Եթե ենթադրում ես, որ այդ նշաններից օգտվելով կշանա ներս մտնել, մի՛ թողնիր նրան։

— Բայց երբ ինքս հիվանդ պառկած լինեմ, ինչպե՞ս կկարողանամ ներս չթողնել այդ դեպքում, եթե նույնիսկ, իմանալով նրա այնքան կատաղի բնավորությունը, ասենք թե հանդգնեցի ներս չթողնել։

— Է՜, գրո՛ղը տանի։ Ինչո՞ւ ես այդքան վստահ, որ նոպա ես ունենալու, գեթի՛նը մտնես։ Ծիծաղո՞ւմ ես ինձ վրա, ինչ է։

— Ինչպե՞ս կարող էի հանդգնել ծիծաղել ձեր վրա, և մարդ սի՞րտ կունենա ծիծաղելու, երբ այսպիսի վախ է մտել փորը։ Զգում եմ, որ գալու է նոպան, այդպիսի նախազգացում ունեմ, հենց միայն վախից եմ ընկնելու։

— Է՜, գրո՛ղը տանի։ Եթե դու հիվանդ պառկես, Գրիգորին կհսկի։ Նախօրոք զգուշացրու Գրիգորիին. վստահ եմ, որ նա չի թողնի։

— Առանց իմ տիրոջ հրամանի ոչ մի կերպ չեմ համարձակվի նշանների մասին հայտնել Գրիգորի Վասիլևիչին։ Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե Գրիգորի Վասիլևիչը կլսի նրա գալը և ներս չի թողնի, այն էլ ասեմ, որ նա հենց երեկվանից հիվանդացավ և պառկել է այսօր, Մարֆա Իգնատևնան էլ մտադրվում է վաղը բուժում անել։ Քիչ առաջ այդպես պայմանավորվեցին։ Իսկ նրանց այդ բուժումը մի շատ զարմանալի բան է։ Մի տեսակ ջրաթուրմ է պատրաստում Մարֆա Իգնատևնան և միշտ պահում է տանը. թունդ բան է, ինչ-որ խոտից է պատրաստում, ինքը գիտե գաղտնիքը։ Եվ այդ գաղտնի դեղով տարին երեք անգամ բուժում է Գրիգորի Վասիլևիչին, երբ սրա գոտկատեղին փայտանում է լրիվ, ասես մի տեսակ կաթված է իջնում, տարին երեք անգամ։ Այդ ժամանակ Մարֆա Իգնատևնան վերցնում է սրբիչը և թրջում այդ ջրաթուրմով, կես ժամ շփում է նրա ամբողջ մեջքը, մինչև լրիվ չորանա, նույնիսկ մի լավ կարմրի և ուռչի. հետո շշի մեջ մնացածը տալիս է նրան խմելու՝ մի որոշ աղոթք կարդալով, բայց ամբողջը լրիվ չի տալիս, որովհետև մի փոքր մասն իրեն է թողնում այդ հազվադեպ առիթով և ինքն էլ է խմում։ Եվ երկուսն էլ, ասեմ ձեզ, խմող մարդիկ չեն, դրա համար էլ իսկույն գլորվում ու շատ երկար ժամանակ պինդ քնում են։ Եվ երբ Գրիգորի Վասիլևիչը զարթնում է դրանից հետո, համարյա միշտ էլ առողջ է լինում, իսկ Մարֆա Իգնատևնան որ զարթնում է՝ միշտ էլ գլուխն է ցավում դրանից։ Ա՜յ ուրեմն, եթե վաղը Մարֆա Իգնատևնան իր

այդ մտադրությունը կատարի, հազիվ թե նրանք մի բան լսեն ու ներս չթողնեն Դմիտրի Ֆյոդորովիչին։ Քնած կլինեն։

— Ա՜յս ինչ ցնդաբանություն է։ Կարծես դիտմամբ, այդ բոլորը հենց միանգամից զուգադիպում են. դու նոպա՞ ես ունենում, նրանք էլ երկուսը միասին ուշագնաց են լինում,— գոռաց Իվան Ֆյոդորովիչը։— Բայց գուցե ի՞նքդ ես ուզում այնպես դասավորել, որ զուգադիպեն դրանք,— պոռթկաց նա հանկարծ և սպառնալից կիտեց հոնքերը։

— Ինչպե՞ս կարող եմ դասավորել... և ինչո՞ւ դասավորեմ, երբ այստեղ ամեն ինչ կախված է հենց միայն Դմիտրի Ֆյոդորովիչից և միայն նրա մտադրություններից... Եթե ուզենա մի բան անել՝ կանի, իսկ եթե ոչ, հո ես դիտմամբ չեմ քաշի-բերի նրան, որ հրեմ-գցեմ ծնողի վրա։

— Իսկ նա ինչո՞ւ պետք է հոր մոտ մտնի, այն էլ թաքուն, եթե Ագրաֆենա Ալեքսանդրովնան բոլորովին չի գալու, ինչպես ինքդ ես ասում,— շարունակեց Իվան Ֆյոդորովիչը, զայրույթից գունատվելով։— Այո, հենց ինքդ ես ասում այդ բանը, և ես էլ, այստեղ ապրելով, միշտ համոզված եմ եղել, որ դա բիձուկի ցնորքն է պարզապես, այդ արարածը չի գա նրա մոտ։ Իսկ ինչո՞ւ Դմիտրին պետք է հոր տունը ներխուժի, եթե չի գալու այդ արարածը։ Դե ասա՛։ Ուզում եմ քո մտքե՛րն իմանալ։

— Ինքներդ բարեհաճորեն գիտեք, թե ինչու է գալու Դմիտրի Ֆյոդորովիչը. այստեղ ի՞նչ գործ ունեն իմ մտքերը։ Կգա պարզապես ոխից դրդված, կամ էլ դիցուք իմ հիվանդանալու դեպքում կասկածամտությունը կբռնի, սիրտը կասկած կընկնի և անհամբերությունից ներս կվազի՝ սենյակներում փնտրելու, ինչպես երեկ եղավ. այսինքն թե կուզենա նայել՝ արդյոք Ագրաֆենա Ալեքսանդրովնան մի կերպ ներս չի՞ անցել, իրենից թաքուն։ Կատարելապես լավ գիտե նաև, որ Ֆյոդոր Պավլովիչը մի մեծ ծրար է պատարստել, մեջը երեք հազար ռուբլի, երեք կնիքով կնքել է, մի բարակ ժապավենով կապել և իր ձեռքով գրել է վրան՝ «Իմ հրեշտակ Գրուշենկային, եթե ցանկանա գալ», իսկ երեք օր հետո էլ տակն ավելացրել է՝ «և ճուտիկին»։ Հենց այս բանն էլ ուրեմն կասկածի տեղիք է տալիս։

— Հիմարությո՛ւն,— գոռաց Իվան Ֆյոդորովիչը, գրեթե կատաղած։— Դմիտրին չի գնա փող թալանելու. և մեկ էլ հո՞րը սպանի դրա համար։ Կարող էր երեկ Գրուշենկայի համար սպա-

նել նրան, զայրույթից կատաղել ու հիմարացել էր, բայց չի՞ գնա թալանելու։

— Հիմա նա շատ-շատ կարիք ունի փողի, ծայր աստիճան կարիք ունի, Իվան Ֆյոդորովիչ։ Դուք նույնիսկ չգիտեք, թե որքան կարիք ունի,— բացատրեց Սմերդյակովը չափազանց հանգիստ և զարմանալիորեն որոշակի կերպով։— Բացի դրանից, հենց այդ երեք հազարը մի տեսակ իր սեփական փողն է համարում և ինքը ինձ այսպես պատճառաբանեց. «Հայրս,— ասաց,— դեռ ուղիղ երեք հազար ռուբլի պարտք է մնում ինձ»։ Իսկ այդ բոլորից բացի, ինքներդ դատեցեք, Իվան Ֆյոդորովիչ, մի որոշ բան էլ կա, որ զուտ ճշմարտություն է. ախր համարյա թե հաստատ բան է, պետք է ասել՝ Ագրաֆենա Ալեքսանդրովնան, եթե միայն ինքը անձամբ ուզենա, անպայման կստիպի նրան, որ ամուսնանա իր հետ, այսինքն հենց իմ տիրոջը կըստիպի, Ֆյոդոր Պավլովիչին, միայն թե ուզենա... դե՜հ, գուցե և ուզենա իրոք։ Ես հենց այնպես ասում եմ, որ չի գա, բայց նա գուցե դրանից էլ ավելին է ցանկանում, այսինքն ուզում է ուղղակի տիրուհի դառնալ այս տան մեջ։ Ես ինքս գիտեմ՝ նրա այդ վճռառական Սամսոնովը բացեիբաց ասել է նրան, որ դա բնավ էլ հիմար բան չի լինի, և միաժամանակ ծիծաղել է։ Իսկ Ագրաֆենա Ալեքսանդրովնան ինքն էլ շատ խելքով կին է։ Դմիտրի Ֆյոդորովիչի պես տկլորի հետ ամուսնացողը չէ նա։ Ա՜յ ուրեմն հիմա հաշվի առնելով այս բանը, ինքներդ դատեցեք, Իվան Ֆյոդորովիչ, որ այդ դեպքում ո՛չ Դմիտրի Ֆյոդորովիչին, ո՛չ էլ նույնիսկ ձեզ ու ձեր եղբորը՝ Ալեքսեյ Ֆյոդորովիչին, բացարձակապես ոչինչ չի մնա ձեր ծնողի մահից հետո, ո՛չ մի ռուբլի, որովհետև Ագրաֆենա Ալեքսանդրովնան նրա հետ կամուսնանա հենց այն նպատակով, որ ամեն ինչ իր անունի վրա գրել տա և եղած-չեղած ամբողջ դրամագլուխն իր վրա փոխանցի։ Իսկ եթե ձեր ծնողը հիմա մեռնի, երբ դեռ ոչ մի այդպիսի բան չի եղել, ապա ձեզնից ամեն մեկին մի քառասուն հազար ապահով կհասնի իսկույն, նույնիսկ Դմիտրի Ֆյոդորովիչին, որին նա այնպես ատում է. կհասնի, որովհետև չէ՞ որ նա դեռ կտակ չի գրել... Այս բոլորը քաջ հայտնի է Դմիտրի Ֆյոդորովիչին...

Մի տեսակ աղավաղվեց ու սարսռաց Իվանի դեմքը։ Նա կարմրեց հանկարծ։

— Ուրեմն ինչո՞ւ այդ բոլորից հետո,— ընդհատեց հանկարծ Սմերդյակովին,— դու ինձ խորհուրդ ես տալիս Չերմաշ-

նյա գնալ։ Ի՞նչ էիր ուզում ասել դրանով։ Իմ գնալուց հետո ա՞յ թե ինչեր են պատահելու այս տանը,— Իվան Ֆյոդորովիչը դժվարությամբ էր շունչ քաշում։

— Միանգամայն ճիշտ է,— ասաց Սմերդյակովը մեղմ ու խոհեմ շեշտով, սակայն աչալուրջ հետևելով Իվան Ֆյոդորովիչին։

— Ինչպե՞ս թե միանգամայն ճիշտ է,— հարցրեց Իվան Ֆյոդորովիչը. նա ճիգ էր անում, որ զսպի իրեն, և աչքերն սպառնագին փայլատակում էին։

— Ձեզ ափսոսալուց է, որ ասացի։ Ձեր տեղը եթե ես ինքս լինեի, իսկույն ձեռք կքաշեի այս բոլորից... փոխանակ նստելու և այսպիսի գործի հետ գլուխ դնելու...— պատասխանեց Սմերդյակովը, ուղղակի բացահայտ մի արտահայտությամբ նայելով Իվան Ֆյոդորովիչի փայլատակող աչքերին։ Երկուսն էլ լռեցին։

— Ինձ թվում է, դու կատարյալ ապուշ ես և... անշուշտ... ահավոր մի սրիկա՛,— վերկացավ հանկարծ Իվան Ֆյոդորովիչը նստարանից։ Հետո անմիջապես ուզեց գնալ դարպասից ներս, բայց մեկեն կանգ առավ ու դարձավ Սմերդյակովին։ Տարօրինակ մի բան պատահեց. Իվան Ֆյոդորովիչը, ջղաձգվելով մի տեսակ, հանկարծ շրթունքը կծեց, բռունցքները սեղմեց ու... ևս մի վայրկյան, և անշուշտ պիտի նետվեր Սմերդյակովի վրա։ Համենայն դեպս Սմերդյակովը նույն ակնթարթին նկատեց այդ, սարսռաց և ամբողջ մարմնով ետ քաշվեց։ Բայց այդ վայրկյանը բարեհաջող անցավ Սմերդյակովի համար, և Իվան Ֆյոդորովիչը լռելյայն, թեև կարծես վարանելով մի տեսակ, շուռ եկավ դեպի դարպասը։

— Ես վաղը Մոսկվա եմ գնում, եթե ուզում ես իմանալ, վաղը՝ առավոտ կանուխ։ Վե՛րջ,— ասաց նա հանկարծ զայրույթով՝ հստակ ու բարձրաձայն, և հետագայում ինքն էլ զարմացավ, թե այդ պահին ո՞ր կարիքն ստիպեց իրեն այդ բանն ասելու Սմերդյակովին։

— Ամենալավն էլ այդ է,— վրա բերեց իսկույն Սմերդյակովը, կարծես հենց սպասում էր դրան,— միայն թե այն կա, որ այստեղից հեռագրով կարող են անհանգստացնել ձեզ Մոսկվայում, եթե որևէ այդպիսի դեպք լինի։

Իվան Ֆյոդորովիչը նորից կանգ առավ և նորից արագորեն

դարձավ Սմերդյակովին։ Բայց կարծես Սմերդյակովին էլ մի բան էր պատահել։ Ամբողջ նրա մտերմավարի և անփույթ վարվելակերպը մի վայրկյանում հօդս էր ցնդել. ծայրահեղ ուշադրության և սպասման արտահայտություն էր ստացել նրա դեմքը, բայց արդեն երկչոտ և ստորաքարշ մի արտահայտություն էր դա։ «Արդյոք դեռ մի ուրիշ բան էլ չունե՞ս ասելու, ավելացնելիք բան չունե՞ս»,— կարելի էր կարդալ նրա ուշադիր հայացքում, որն ուղղակի սևեռել էր Իվան Ֆյոդորովիչի վրա։

— Իսկ ինչ է, չե՞ն կարող ինձ Ձերմաշնյայից էլ կանչել... որևէ այդպիսի դեպքում,— բղավեց հանկարծ Իվան Ֆյոդորովիչը, չգիտես ինչու ձայնը սոսկալի բարձրացնելով։

— Ձերմաշնյայում էլ նույնպես... կանհանգստացնեն...— մրթմրթաց Սմերդյակովը համարյա շշուկով, կարծես կորցնելով իրեն, բայց շարունակելով սևեռուն, սևեռուն հայացքով նայել ուղղակի Իվան Ֆյոդորովիչի աչքերի մեջ։

— Միայն թե Մոսկվան հեռու է, Ձերմաշնյան՝ ավելի մոտ. և ի՞նչ է, Ձերմաշնյայի վրա պնդելով՝ ավելորդ ճանապարհածա՞խսն ես ափսոսում, թե ինձ ես ափսոսում, որ այդքան երկար ճամփով եմ դառնալու։

— Միանգամայն ճիշտ է...— մրթմրթաց Սմերդյակովն արդեն կերկերուն ձայնով. նողկալի մի ժպիտ կար երեսին, և նորից ջղաձգորեն պատրաստվել էր ճիշտ ժամանակին ետ ցատկելու։ Բայց Իվան Ֆյոդորովիչը, ի զարմանս Սմերդյակովի, հանկարծ ծիծաղել սկսեց և արագորեն գնաց դարպասից ներս, շարունակելով ծիծաղել։ Ով որ այդ րոպեին նայեր նրա դեմքին, անշուշտ կհասկանար, որ բնավ էլ ուրախությունը չէր այդ ծիծաղի պատճառը։ Եվ ինքն էլ ոչ մի կերպ չէր կարողանա բացատրել, թե ինչ էր պատահել իրեն այդ րոպեին։ Կարծես ջղային կծկումներով էր շարժվում ու գնում առաջ։

VII

«ԽԵԼՈՔ ՄԱՐԴՈՒ ՀԵՏ ՔԱՐ ԿՐԻ, ԽԵՆԹԻ ՀԵՏ ՀԱՑ ՄԻ՛ ՈՒՏԻ»

Եվ նույն ձևով էլ խոսեց։ Հենց որ ներս մտավ, Ֆյոդոր Պավլովիչին հանդիպեց հյուրասրահում և հանկարծ գոռաց նրան, թևերը թափահարելով՝ «ես վերև եմ գնում, իմ սենյակը, ձեզ մոտ չեմ գալիս, ցտեսություն», և անցավ գնաց, ջանալով նույ-

նիսկ չնայել իր հորը։ Շատ հավանական է, որ այդ բոպեին ծերուկը չափազանց ատելի թվաց նրան, բայց թշնամական զգացման այդպիսի մերկապարանոց ցուցաբերումն անսպասելի էր նույնիսկ Ֆյոդոր Պավլովիչի համար։ Իսկ երևում էր, որ ծերուկը, հիրավի, ուզում էր մի բան ասել իսկույն, և դրա համար էլ դիտմամբ ելել էր հանդիպելու նրան հյուրասրահում։ Բայց այդպիսի սիրալիր մի ողջույն լսելով, հայրը լուռ կանգնեց և հեգնական արտահայտությամբ նայեց որդու ետևից, մինչև նա սանդուղքով բարձրացավ վերնատուն։

— Ի՞նչ է եղել նրան,— արագորեն հարցրեց նա Սմերդյակովին, որ ներս էր մտել Իվան Ֆյոդորովիչի ետևից։

— Բարկանում է ինչ-որ բանի վրա, մարդ չի հասկանում նրան,— քրթմնջաց Սմերդյակովը խուսափելով։

— Է՛հ, գրողի ծո՛ցը։ Թո՛ղ ինչքան ուզում է բարկանա։ Բե՛ր ինքնաեռը, և դու էլ շուտով դուրս կորիր, դե շո՛ւտ արա։ Նորություն չկա՞։

Եվ ծայր առավ հարցերի շարանը։ Դա մեկն էր հենց այն հարցուփորձերից, որոնց մասին Սմերդյակովը դեռ նոր գանգատվում էր Իվան Ֆյոդորովիչին, այսինքն միշտ նույն հարցերը՝ ակնկալվող այցելուհու վերաբերյալ, և մենք զանց կառնենք այստեղ դրանք։ Կես ժամից տունն արդեն փակված էր, և խելագար ծերուկը մեն-մենակ շրջում էր սենյակներում, սարսռագին սպասելով, որ ա՛յ, հիմա կլսվեն հինգ պայմանական թխկոցները. մերթ նայում էր մութ պատուհաններին, բայց միայն գիշերվա խավարն էր տեսնում այնտեղ։

Շատ ուշ էր արդեն, բայց Իվան Ֆյոդորովիչը չէր քնել տակավին և խորհրդածում էր։ Այդ գիշեր նա ուշ պառկեց՝ ժամը երկուսին։ Բայց մենք չենք նկարագրի հիմա նրա մտքերի ամբողջ ընթացքը, և դեռ ժամանակն էլ չէ, որ նայենք այդ հոգու խորքերը. նրա հերթն էլ կգա։ Եվ եթե նույնիսկ փորձեինք նկարագրել, շատ դժվար կլիներ այդ, որովհետև մտքեր չէին դրանք, այլ շատ անորոշ, մանավանդ չափազանց փոթորկահույզ մի բան։ Ինքն էլ զգում էր, որ կորցրել է իր բոլոր ուղղությունները։ Նրան տանջում էին նաև այլազան ցանկություններ, որոնք տարօրինակ էին և հայտնվում էին գրեթե բոլորովին անակնկալորեն. օրինակ, կեսգիշերն անցել էր արդեն, երբ հանկարծ անդիմադրելիորեն ուզեց վար իջնել անպայման, դուռը բանալ, գնալ բակի շենքը և ծեծել Սմերդյակովին, բայց եթե հարցնե-

ք՝ ինչո՞ւ, ինքն էլ ոչ մի կերպ չէր կարողանա որևէ որոշակի պատճառ բերել, բացի թերևս այն շարժառիթից, թե իր համար ատելի էր դարձել այդ ծառան՝ որպես աշխարհիս երեսին միակ մարդը, որն ամենածանր վիրավորանքն էր հասցրել իրեն։ Մյուս կողմից, այդ գիշեր մի քանի անգամ նրա հոգին լցվեց անբացատրելի և ստորացուցիչ մի երկյուղով, որ նույնիսկ (նա զգում էր այդ) հանկարծ մարմնապես թուլացնում էր իրեն մի տեսակ։ Գլուխը ցավում էր ու պտտվում։ Ատելության պես մի բան կըրծում էր սիրտը, կարծես պատրաստվում էր վրեժ լուծել ինչ-որ մեկից։ Ատում էր նույնիսկ Ալյոշային, հիշելով քիչ առաջվա խոսակցությունը նրա հետ, լինում էին բոպեներ, երբ սաստիկ ատում էր նաև ինքնիրեն։ Կատերինա Իվանովնայի մասին հարցրեց թե մոռացավ իսկ մտածել և հետագայում շատ էր զարմանում դրա համար, մանավանդ որ հաստատ հիշում էր, թե ինչպես այդ առավոտ, երբ Կատերինա Իվանովնայի առաջ մեծ թափով հոխորտում էր, որ վաղն ևեթ Մոսկվա է մեկնելու, նույն վայրկյանին հոգու խորքում փսփսացել էր ինքնիրեն. «Բայց հիմարություն է ասածդ, չես գնա, և քեզ համար այնքան էլ հեշտ չի լինի պոկվելն ու հեռանալը, ինչպես մեծ-մեծ պոռոտախոսում ես հիմա»։

Երկար ժամանակ հետո վերհիշելով այդ գիշերը, Իվան Ֆյոդորովիչը հատուկ նողկանքով էր մտաբերում, թե ինչպես հանկարծ վերկացավ բազմոցից և կամացուկ, ասես սոսկալի վախենալով, որ կտեսնեն իրեն, բացեց դուռը, ելավ սանդուղքի վրա և ականջ դրեց դեպի ներքև, թե ինչպես է Ֆյոդոր Պավլովիչը շարժվում ու շրջում ներքևի սենյակներում, լսեց երկար ժամանակ՝ մոտ հինգ բոպե, տարօրինակ մի հետաքրքրությամբ, շունչը պահած, սրտատրոփ. բայց թե ինչո՞ւ էր անում այդ բոլորը, ինչո՞ւ էր ականջ դնում՝ ինքն էլ չգիտեր անշուշտ։ Հետագայում իր ամբողջ կյանքի ընթացքում «նողկալի» էր կոչում նա այդ «արարքը» և իր հոգու ամենախոր, ամենաթաքուն ծալքերում ընդունում էր, որ իր ամբողջ կյանքի ամենաստոր արարքն էր դա։ Իսկ հենց Ֆյոդոր Պավլովիչի նկատմամբ ոչ մի ատելություն չէր զգում այդ բոպեներին, այլ պարզապես, չգիտես ինչու, ամբողջ էությամբ հետաքրքրվում էր, թե ինչպես է քայլում նա ներքևում, մոտավորապես ինչ է անում հիմա այնտեղ, ենթադրում էր ու պատկերացնում, թե ինչպես նա դուրս պետք է նայի պատուհաններից, հետո հանկարծ կանգ առնի սենյակի

մեջտեղում և սպասի, սպասի՝ չի՞ թխկացնելու արդյոք որևէ մեկը։ Իվան Ֆյոդորովիչը երկու անգամ դուրս ելավ ու կանգնեց սանդուղքի վրա, այդպես ականջ դնելու համար։ Երբ ամեն ինչ խաղաղվեց ու Ֆյոդոր Պավլովիչն էլ պառկեց արդեն, մոտավորապես ժամը երկուսին, Իվան Ֆյոդորովիչը նույնպես անկողին մտավ՝ իսկույն քնելու հաստատ մտադրությամբ, քանի որ սոսկալի տանջահար էր զգում իրեն։ Եվ իրոք, անմիջապես խոր քուն մտավ և քնեց առանց երազների, բայց կանուխ զարթնեց, ժամը յոթին, երբ արդեն լույսը բացվել էր։ Աչքերը բանալով, հանկարծ արտակարգ մի կորով զգաց իր մեջ և ինքն էլ զարմացավ դրա համար. իսկույն վեր թռավ ու արագորեն հագնվեց, ապա դուրս քաշեց ճամպրուկը և անհապաղ, հապճեպորեն սկսեց իրերը տեղավորել։ Լվացարարուհին հենց երեկ առավոտ լրիվ վերադարձրել էր սպիտակեղենը։ Իվան Ֆյոդորովիչը նույնիսկ ժպտաց. այնպես էր դասավորվել ամեն ինչ, որ ոչ մի բան չէր կասեցնում իր անակնկալ մեկնումը։ Իսկ իր մեկնումն իսկապես որ անակնկալ էր լինում։ Թեև Իվան Ֆյոդորովիչը երեկ ասել էր (Կատերինա Իվանովնային, Ալյոշային և հետո էլ Սմերդյակովին), թե մեկնելու է առավոտյան, բայց հիմա շատ լավ հիշում էր, որ գիշերը, երբ պառկում էր քնելու, չէր էլ մտածում մեկնելու մասին, գոնե այդ րոպեին մտքովն էլ չէր անցնում, թե առավոտյան, զարթնելուն պես, առաջին գործը պետք է լինի իրերը տեղավորել ճամպրուկի մեջ։ Վերջապես պատրաստ էին ճամպրուկը և ուղեպարկը. ժամը իննի մոտ էր արդեն, երբ Մարֆա Իգնատիևնան բարձրացավ նրա սենյակը՝ իր ամենօրյա սովորական հարցը տալու. «Որտե՞ղ եք բարեհաճում թեյ խմել, ձեր սենյակո՞ւմ, թե իջնելու եք ներքև»։ Իվան Ֆյոդորովիչը իջավ հյուրասրահ. գրեթե զվարթ էր երևում, թեև նրա խոսքերի ու շարժուձևերի մեջ ցաքուցրիվ ու անճապարող մի բան կար։ Սիրալիր ողջունելով հորը և նույնիսկ հատկապես հարցնելով նրա առողջության մասին, բայց և մինչև վերջ չլսելով պատասխանը, նա մեկեն հայտարարեց, որ մի ժամից մեկնում է Մոսկվա, վերջնականապես, և խնդրում է մարդ ուղարկել՝ ձիերը բերելու։ Մերունին առանց դույզն զարմանքի լսեց այդ լուրը, խիստ անպատշաճորեն մոռանալով իր վիշտը հայտնել որդու մեկնման առիթով։ Դրա փոխարեն հանկարծ արտակարգ եռուզեռի մեջ ընկավ, հենց տեղն ու տեղը հիշելով իր սեփական կարևոր մեկ գործը։

— Ա՜յ թե ինչ մարդ ես, հա՜։ Ձասացիր երեկ... Դե լավ, վնաս չունի, հիմա էլ կկարգադրենք։ Բարի եղիր, մի մեծ շնորհ արա ինձ, հոգուդ մատաղ, ճանապարհին Ձերմաշնյա հանդիպիր։ Հենց պարզապես ձախ ես թեքվելու Վոլովյա կայանից, եղած-չեղածը մի տասներկու վերստ է, և ա՜յ, հասար Ձերմաշնյա։

— Ի սե՞ր աստծո, չեմ կարող։ Մինչև երկաթուղին ութսուն վերստ է, իսկ Մոսկվայի գնացքը երեկոյան ժամը յոթին մեկնում է կայարանից։ Հազիվհազ ժամանակ կունենամ հասնելու։

— Վաղը կհասնես, կամ էլ մյուս օրը, իսկ այսօր թեքվիր Ձերմաշնյա։ Ի՞նչ կկորցնես, եթե հանգստացնես հորդ սիրտը։ Եթե այստեղ գործ չունենայի, ինքս վաղուց թռել-գնացել էի, որովհետև շտապ բան է այնտեղի գործը, արտակարգ բան, իսկ հիմա ինձ համար այնպիսի մի ժամանակ է այստեղ, որ... Հասկանո՞ւմ ես, մի պուրակ ունեմ այնտեղ՝ երկու ազատ հողամասի վրա, Բեգիչևում և Դյաչկինում։ Վաճառական Մասլովները, բիձուկն ու իր տղան, ընդամենը ութ հազար են տալիս, որ պուրակը կտրեն ու փայտն առնեն, իսկ դեռ անցյալ տարի մի ուրիշ գնորդ կպել էր, տասներկու հազար էր տալիս, բայց այստեղացի չէր, ա՜յ թե ինչն է խնդիրը։ Որովհետև այստեղ գնող չես գտնի հիմա։ Մասլովները, հայր ու որդի, հարյուր հազարը դիզել ու տեր ու տիրական են դարձել. ինչ տալիս են, այն էլ պետք է վերցնես, թե չէ՝ այստեղացիներից ոչ ոք չի էլ համարձակվում շափվել նրանց հետ։ Իսկ անցյալ հինգշաբթի հանկարծ Իլյինսկոյեի տերտերն ինձ նամակ է գրում, թե Գորստկինն է եկել. սա էլ վաճառական է, ճանաչում եմ, և սրա պատվական կողմն այն է, որ այստեղացի չէ, պրոգրեբովցի է, ուրեմն չի վախենում Մասլովներից, որովհետև այստեղացի չէ մարդը։ Ասում է՝ տասնմեկ հազար կտամ պուրակի համար։ Լսո՞ւմ ես։ Բայց դե ընդամենը մի շաբաթ է մնալու այստեղ, այդպես է գրում տերտերը։ Ա՜յ ուրեմն, գնայիր ու մի լեզու գտնեիր հետը...

— Է՜հ, գրեցեք տերտերին, նա էլ լեզու կգտնի։

— Չի կարող նա, բան եմ ասում քեզ։ Այդ տերտերն առուտուրի աչք չունի։ Ոսկի մարդ է, կարող եմ այս րոպեիս քսան հազար ռուբլի պահ տալ մոտը առանց ստացագրի, բայց աչքը ոչինչ չի տեսնում գործի մեջ, ասես մարդու ծնունդ չլինի անտերը, ագռավն էլ նրան կխաբի։ Եվ պատկերացրու, որ գիտուն էլ մարդ է։ Այդ Գորստկին ասածս գյուղացու տեսք ունի, կա-

պաւյտ բաճկոնակ է հագնում, միայն թե կատարյալ սրիկա է իր բնավորությամբ, և հենց դրանով էլ ցավ է դարձել բոլորիս գլխին. ստախոս է, ա՛յս է խնդիրը։ Մեկ-մեկ այնպիսի՞ մի սուտ է փչում, որ պարզապես զարմանում ես, թե ինչին էր պետք այդ սուտը։ Նախանցյալ տարի մի սուտ փչեց, թե կինը մահացել է և ինքն արդեն ուրիշի հետ է ամուսնացել, և պատկերացրու, ոչ մի այդպիսի բան չէր եղել. երբեք էլ չի մահացել իր կինը, հիմա էլ դեռ ապրում է և երեք օրը մեկ ծեծում է ամուսնուն։ Ա՛յ ուրեմն պետք է իմանալ հիմա՝ փչո՞ւմ է թե ճիշտ է ասում, որ ուզում է գնել պուրակը և տասնմեկ հազար տալ։

— Էհ ուրեմն իմ ձեռքից էլ ոչինչ չի գա այս գործում, ես էլ աչք չունեմ։

— Կա՛ց, սպասի՛ր, քո ձեռքից կգա, որովհետև հիմա քեզ կասեմ, թե ինչ նշաններից կարելի է հասկանալ նրան՝ այդ Գորստկինին, ես արդեն վաղուց եմ նրա հետ գործ ունեցել։ Գիտե՞ս ինչ, նրա մորուքին պետք է նայես. կարմիր, բարալիկ, զզվելի մի մորուք ունի։ Եթե մորուքը դողում է և ինքն էլ խոսում ու բարկանում, ուրեմն չվախենաս՝ ճիշտ է ասածը, ուզում է գործ անել։ Իսկ եթե մորուքն է շոյում ձախ ձեռքով և քթի տակին էլ ծիծաղում է, ուրեմն ուզում է խաբել, սրիկայություն է անում։ Աչքերին երբեք մի՛ նայիր, աչքերից ոչինչ չես հասկանա, մութ մարդ է, խաբեբա. դու մորուքի՛ն նայիր։ Քեզ մի երկտող կտամ, ցույց տուր իրեն։ Գորստկին են ասում նրան, բայց Գորստկին չէ անունը. Լյագավի[1] է, միայն թե դու նրան Լյագավի մի՛ ասա, կնեղանա։ Եթե լեզու գտնես հետը և տեսնես, որ ամեն ինչ կարգին է, իսկույն տեղեկացրու այստեղ։ Հենց ա՛յդ միայն գրիր, այսինքն՝ «Չի փչում»։ Տասնմեկ հազարի վրա մնա. կարող ես մի հազար զիջել, ավելի չզիջես։ Պատկերացրու, ութ և տասնմեկ՝ երեք հազարի տարբերություն։ Ուղղակի գտած փող է այդ երեք հազարը. գնորդ ճարելը հե՞շտ բան է։ Իսկ ես սոսկալի պետք ունեմ փողի։ Իմաց կտաս, որ լուրջ է խնդիրը, և այդ դեպքում ինքս այստեղից կվազեմ ու կվերջացնեմ գործը։ Ժամանակ կգտնեմ մի կերպ։ Իսկ հիմա ինչո՞ւ թռնեմ-գնամ այնտեղ, եթե այդ ամբողջը տերտերի հընարած բանն է։ Դե ասա, գնո՞ւմ ես թե չէ։

— Է՜, ժամանակ չկա, հանգիստ թողեք ինձ։

[1] Лягавый — որսկան շուն։

— Է՜խ, շնորհ արա հորդ, պարտքի տակ չեմ մնա։ Անսիրտ մարդիկ եք բոլորդ էլ, ա՛յ թե ինչ։ Մեկ կամ երկու օրը ի՞նչ է քեզ համար։ Ո՞ւր ես գնում հիմա, Վենետի՞կ։ Երկու օրում հո չի՞ քանդվելու քո Վենետիկը։ Ալյոշկային կարող էի ուղարկել, բայց Ալյոշկայից ի՞նչ օգուտ այդպիսի գործերում։ Ախր քեզ եմ ուղարկում հենց այն պատճառով, որ խելացի մարդ ես. ինչ է, չե՞մ տեսնում։ Փայտի առուտուր չես անում, բայց աչք ունես։ Այստեղ պարզապես պետք է տեսնել՝ մարդը լո՞ւրջ է խոսում թե չէ։ Ասում եմ քեզ՝ մորուքին նայիր. դողո՞ւմ է մորուքը, ուրեմն լուրջ է։

— Ուրեմն ինքնե՞րդ եք ինձ դրդում, որ այդ անիծյալ Ջերմաշնյան գնամ, հը՞,— գոչեց Իվան Ֆյոդորովիչը, չարախինդ ժպտալով։

Ֆյոդոր Պավլովիչը չնկատեց չարախնդությունը և կամ չնկատելու տվեց, բայց ժպիտը չփախավ նրա աչքից։

— Ուրեմն գնո՞ւմ ես, գնո՞ւմ ես։ Հենց հիմա կիսզբզեմ երկտողը, կտամ ձեռքդ։

— Չգիտեմ, կգնա՞մ թե չէ, չգիտեմ, ճանապարհին կորոշեմ։

— Ի՞նչ ճանապարհին, հի՛մա որոշիր։ Որոշի՞ր, հոգյա՛կս։ Եթե լեզու գտնես հետը, մի երկու տող գրիր ինձ, տերտերին տուր, նա մի բոպեում կուղարկի ինձ քո թղթիկը։ Իսկ էլ դրանից հետո թևիցդ չեմ բռնում, գնա՜ Վենետիկ։ Տերտերն իր ձիերով քեզ կտանի Վոլովյա կայանը...

Ծերունին հրճվում էր պարզապես. խզմզեց երկտողը, մարդ ուղարկեց ձիերը բերելու, մի թեթև նախաճաշ ու կոնյակ մատուցեցին։ Երբ ուրախ էր լինում ծերունին, միշտ էլ սկսում էր սիրտը զեղել, բայց այս անգամ իրեն զսպում էր կարծես թե։ Դմիտրի Ֆյոդորովիչի մասին, օրինակ, ոչ մի բառ չասաց։ Իսկ այս բաժանումը բոլորովին չէր հուզում նրան։ Ասես նույնիսկ խոսելու բան չէր գտնում։ Եվ Իվան Ֆյոդորովիչը շատ լավ նկատեց այդ. «Զանձրացրել եմ նրան այնուամենայնիվ»,— մտածեց ինքնիրեն։ Միայն արտասանդուղքի վրա, երբ արդեն ճանապարհ էր դնում որդուն, ծերունին կարծես սկսեց մի քիչ իրար անցնել, ուզեց համբուրել նրան։ Բայց Իվան Ֆյոդորովիչն շտապ ձեռքը մեկնեց հրաժեշտի համար, հայտնապես խուսափելով համբույրներից։ Ծերունին իսկույն հասկացավ ու վայրկենապես ետ քաշվեց։

— Դե՛հ, աստված քեզ հետ, աստված քեզ հետ,— կրկնում էր նա սանդուղքի վրայից։— Կյանքումդ հարկավ ժամանակ կգտնես նորից գալու, չէ՞։ Եկ, ե՛կ անպայման, միշտ էլ ուրախ կլինեմ։ Դե՛հ, Քրիստո՛ս քեզ հետ։

Իվան Ֆյոդորովիչը մտավ ուղեկառք։

— Գնաս բարո՛վ, Իվան, շատ էլ վատ աչքով մի՛ նայիր,— գոռաց վերջին անգամ հայրը։

Բոլոր տնեցիները դուրս էին եկել ճանապարհ դնելու՝ Սմերդյակովը, Մարֆան, Գրիգորին։ Իվան Ֆյոդորովիչն ամեն մեկին տասը ռուբլի նվիրեց։ Երբ արդեն տեղավորվել էր ուղեկառքի մեջ, Սմերդյակովը վեր ցատկեց գորգը շտկելու։

— Տեսնում ես... Չերմաշնյա եմ գնում...— ասաց հանկարծ Իվան Ֆյոդորովիչն ակամա. նորից, երեկվա պես, այդ խոսքն ինքն իրեն դուրս թռավ նրա բերնից, այն էլ մի տեսակ ջղային ծիծաղով։ Հետագայում նա երկար ժամանակ հիշեց այդ բանը։

— Ուրեմն ճիշտ են ասում՝ խելոք մարդու հետ քար կրի, խենթի հետ հաց մի՛ուտի,— հաստատ պատասխանեց Սմերդյակովը, խորաթափանց նայելով Իվան Ֆյոդորովիչին։

Կառքը շարժվեց ու սլացավ։ Շփոթ էր տիրում ուղևորի հոգում, բայց նա ագահորեն նայում էր շուրջը՝ դաշտերին, բլուրներին, ծառերին, պայծառ երկնքում բարձրից թռչող սագերի երամին։ Եվ հանկարծ այնքա՞ն լավ զգաց իրեն։ Փորձեց խոսակցություն բանալ կառապանի հետ, և գյուղացու տված պատասխանի մեջ մի բան սաստիկ հետաքրքրեց նրան, բայց մի րոպե հետո անդրադարձավ, որ ամեն ինչ մի ականջից մտել, մյուսից դուրս էր եկել, և որ, ճիշտն ասած, ինքը չէր էլ հասկացել այն, ինչ պատասխանել էր գյուղացին։ Լռեց. այդպես էլ լավ էր՝ օդը մաքուր, թարմ, սառնավուն, երկինքը պայծառ։ Մըտքում մի վայրկյան պատկերացան Ալյոշան և Կատերինա Իվանովնան, բայց նա մեղմ ժպտաց ու մեղմ փչեց սիրելի ուրվականների վրա, և թռան-գնացին նրանք։ «Դեռ կգա նրանց ժամանակը»,— մտածեց։ Շուտով հասան առաջին կայանը, ձիերը փոխեցին և սուրացին դեպի Վոլովյա։ «Ինչո՞ւ խելոք մարդու հետ քար կրի, ի՞նչ էր ուզում ասել դրանով,— մտածեց նա հանկարծ և ուղղակի շունչը կտրվեց։— Իսկ ես ինչո՞ւ նրան ասացի, որ Չերմաշնյա եմ գնում»։ Հասան Վոլովյա կայանը։ Իվան Ֆյոդորովիչն ուղեկառքից դուրս եկավ, և ձիապանները

շրջապատեցին նրան։ Սակարկում էին՝ տասներկու վերստ կողմնակի ճանապարհով Չերմաշնյա տանելու համար։ Պատվիրեց լծել ձիերը։ Կայանի շենքը մտավ, մի զննող հայացք նետեց շուրջը, նայեց վերակացուի կնոջը և հանկարծ դուրս եկավ նորից։

— Կարիք չկա Չերմաշնյա գնալու։ Չե՞մ ուշանա ժամը յոթի գնացքին, տղերք։

— Հենց իսկ և իսկ կհասցնենք։ Լծե՞նք կառքը, հա՞։

— Շտապ լծեք։ Ձեզնից մեկն ու մեկը քաղաք չի՞ գնալու վաղը։

— Դե իհարկե, ա՛յ, Միտրին է գնալու։

— Ձե՞ս կարող մի ծառայություն մատուցել, Միտրի։ Հանդիպիր հորս՝ Ֆյոդոր Պավլովիչ Կարամազովին, և ասա նրան, որ Չերմաշնյա չեմ գնացել։ Կարո՞ղ ես թե չէ։

— Ինչի՞ չեմ կարող, կհանդիպենք։ Ֆյոդոր Պավլովիչին շատ վաղուց ենք ճանաչում։

— Ահա այս էլ քեզ թեյի փող, որովհետև վայ թե նա ոչինչ չտա քեզ...— ուրախ ծիծաղեց Իվան Ֆյոդորովիչը։

— Հաստատ չի տա,— ծիծաղեց նաև Միտրին։— Շնորհակալ եմ, տեր իմ, անպայման կանենք...

Երեկոյան ժամը յոթին Իվան Ֆյոդորովիչը վագոն մտավ ու սլացավ դեպի Մոսկվա։ «Հեռո՛ւ ինձնից ամբողջ անցյալը, խաչ եմ քաշել նախկին աշխարհի վրա, ընդմի՛շտ, և այլևս ո՛չ լուր եմ ուզում այնտեղից, ոչ արձագանք։ Դեպի նո՛ր աշխարհ, նո՛ր վայրեր, առանց ետև նայելու»։ Բայց ցնծության փոխարեն հանկարծ այնպիսի մի խավար իջավ նրա հոգու վրա, և սիրտն այնպիսի մի թախիծով սկսեց մղկտալ, որ մինչ այդ երբեք նման բան չէր զգացել իր կյանքում։ Ամբողջ գիշեր մտմտաց. սուրում էր գնացքը, և միայն լուսաբացին, երբ արդեն Մոսկվա էր հասնում, կարծես հանկարծ սթափվեց նա։

— Սրիկա՛ եմ ես,— շշնջաց ինքնիրեն։

Իսկ Ֆյոդոր Պավլովիչը, ճանապարհ դնելով իր որդուն, շատ գոհ մնաց։ Ամբողջ երկու ժամ գրեթե երջանիկ էր զգում իրեն ու կոնյակ էր խմում շարունակ։ Բայց հանկարծ տան մեջ պատահեց մի շատ տխուր բան, որ չափազանց անախորժ էր բոլորի համար և Ֆյոդոր Պավլովիչին էլ մեծագույն շփոթության մատնեց անմիջապես։ Սմերդյակովն ինչ-որ գործով նկուղ գընաց և սանդուղքի առաջին աստիճանից ընկավ ներքև։ Լավ որ

այդ բոպեին Մարֆա Իգնատենան պատահաբար գտնվում էր բակում և ճիշտ ժամանակին լսեց։ Չտեսավ ընկնելը, բայց ճիչը լսեց, այն յուրահատուկ, տարօրինակ ճիչը, որ վաղուց ծանոթ էր իրեն, ընկնավորի այն ճիչը, որով նա ընկնում է նոպան բռնելու պահին։ Հնարավոր չէր որոշել, թե արդյոք նոպան բռնել էր ա՞յն պահին, երբ նա իջնում էր սանդուղքով, ուստի և, բնական է, պետք է իսկույն ցած գլորվեր անզգա վիճակում, թե՞ ընդհակառակը՝ անկումն ու ցնցումն էին եղել նոպայի պատճառը, քանի որ հայտնի էր արդեն, որ Սմերդյակովը տառապում է այդ հիվանդությամբ։ Համենայն դեպս, նրան գտան նկուղի հատակին. թպրտում էր ջղակծկումներից գալարված, բերանը փրփրել էր։ Սկզբում մտածեցին, թե անպայման կոտրված կլինի մի տեղը՝ ձեռքը կամ ոտքը, և վնասվածքներ կունենա, բայց «աստված պահել էր», ինչպես արտահայտվեց Մարֆա Իգնատենան. ոչ մի այդպիսի բան չէր եղել, միայն թե դժվար էր նրան վերցնելն ու նկուղից լույս աշխարհ հանելը։ Բայց հարևաններից օգնություն խնդրեցին ու գործը գլուխ բերեցին մի կերպ։ Ֆյոդոր Պավլովիչը ինքն էլ ներկա էր ամբողջ այդ արարողությանը, ինքն էլ օգնում էր՝ հայտնապես վախեցած ու կարծես գլուխը կորցրած։ Սակայն հիվանդն ուշքի չէր գալիս. ցնցումները որոշ ժամանակ դադարում էին, բայց հետո նորից էին սկսվում, և բոլորն էլ եկան այն եզրակացության, թե կատարվելու է ճիշտ այն, ինչ եղել էր անցյալ տարի, երբ նա նույնպես պատահաբար ընկել էր ձեզունից։ Հիշեցին, որ այն ժամանակ սառույց էին դրել գլխին։ Նկուղում դեռ սառույց կար, և Մարֆա Իգնատենան գործի անցավ, իսկ Ֆյոդոր Պավլովիչը երեկոյան դեմ մարդ ուղարկեց բժիշկ Հերցենշտուբեին, որն անմիջապես ժամանեց։ Հիվանդին ուշի-ուշով քննելուց հետո (ամբողջ նահանգում ամենից ավելի ճշտաջան և ուշադիր բժիշկն էր՝ խիստ պատվարժան մի ծերունի), նա եզրակացրեց, որ արտաքո կարգի մի նոպա է և «կարող է վտանգ սպառնալ», իսկ առայժմ ինքը, Հերցենշտուբեն, ամեն ինչ չի հասկանում տակավին, բայց որ վաղն առավոտյան, եթե չօգնեն այժմու բուժամիջոցները, կվճռի այլ բուժումների դիմել։ Հիվանդին պառկեցրին բակի շենքի մի սենյակում, որ կից էր Գրիգորիի և Մարֆա Իգնատենայի սենյակին։ Հետո Ֆյոդոր Պավլովիչն իրար ետևից դժբախտություններ միայն կրեց այդ օրը. ճաշը Մարֆա Իգնատենան պատրաստեց, և Սմերդյակովի եփածի հետ համեմատած՝ ապուրը «կարծես լվացքի ջուր» լի-

ներ, իսկ հավն այնքան էր չորացել տապակվելով, որ ծամելն անգամ ոչ մի կերպ հնարավոր չէր։ Մարֆա Իգնատենան իր տիրոջ դառն, թեև արդարացի կշտամբանքներին առարկեց, որ հավն առանց այդ էլ շատ ծեր էր արդեն, և որ ինքն էլ խոհարարություն չի սովորել։ Երեկոյան մի ուրիշ մտահոգություն էլ ավելացավ. Ֆյոդոր Պավլովիչին հայտնեցին, թե Գրիգորին, որն արդեն երկու օր է անառողջ էր, հիմա բոլորովին անկողին է ընկել, գոտկատեղը փայտացել է։ Ֆյոդոր Պավլովիչը հնարավորին չափ շուտ վերջացրեց իր ընթրիքը և առանձին փակվեց տանը։ Ահավոր ու տագնապալից սպասման մեջ էր նա։ Հենց այդ իրիկուն գրեթե հաստատապես սպասում էր Գրուշենկայի գալուն. համենայն դեպս Սմերդյակովը, դեռ վաղ առավոտյան, գրեթե հավաստիացրել էր, որ «նա արդեն անտարակուսելիորեն խոստացել է գալ»։ Անուղղա ծերունու սիրտը տագնապահար բաբախում էր. դատարկ սենյակներում շրջում էր նա և ուշադիր լսում։ Ականջը սրած պետք է պահեր. մի որևէ տեղ Դմիտրին կարող էր թաքնված լինել ու հետևել Գրուշենկային, ուստի հենց որ Գրուշենկան լուսամուտը ծեծեր (Սմերդյակովը դեռ երկու օր առաջ վստահացրել էր Ֆյոդոր Պավլովիչին, որ հայտնել է նրան, թե որտեղ և ինչ ձևով թխկացնի), պետք էր հնարավորին չափ շուտ բանալ դուռը և ոչ մի վայրկյան իզուր չսպասեցնել նրան գավիթում, որպեսզի, աստված չանի, մի որևէ բանից վախենալով չփախչի հանկարծ։ Մտահոգվելու շատ բան կար, բայց Ֆյոդոր Պավլովիչի սիրտը դեռ երբեք այդքան քաղցր հույսերով չէր ողողվել. չէ՞ որ համարյա վստահորեն կարելի էր ասել, թե այս անգամ արդեն անպատճառ կգա Գրուշենկան...

Գիրք վեցերորդ

ՌՈՒՍ ՎԱՆԱԿԱՆԸ

I

ՍԲԲԱՀԱՅՐ ԶՈՍԻՄԱՆ ԵՎ ԻՐ ՀՅՈՒՐԵՐԸ

Երբ Ալյոշան տագնապած ու վշտալի սրտով մտավ սրբահոր խուցը, գրեթե ապշահար կանգ առավ հանկարծ. վախենում էր, որ նրան կգտնի մահամերձ և գուցե արդեն ուշակորույս հի-

վանդի վիճակում, բայց տեսավ, որ նա նստած է բազկաթոռին, թեև տկարությունից ուժասպառ, բայց առույգ ու զվարթ դեմքով, հյուրերով շրջապատված և նրանց հետ խաղաղ ու պայծառ խոսակցությամբ զբաղված։ Սակայն նա Ալյոշայի գալուց ընդամենը քառորդ ժամ առաջ էր անկողնից վերկացել. հյուրերն արդեն նախօրոք հավաքվել էին նրա խուցի մեջ և սպասել նրա զարթնելուն, անսալով հայր Պաիսիի հաստատ հավաստիացման, թե «ուսուցիչը պիտի վերկենա անտարակույս, որպեսզի մեկ անգամ ևս խոսակցի իր սրտի սիրեցյալների հետ, ինչպես ինքն ասաց և ինքը խոստացավ դեռ առավոտյան»։ Հայր Պաիսին անպայմանորեն հավատում էր այդ խոստման, ինչպես և վախճանվող սրբահոր յուրաքանչյուր խոսքին. և այնքան էր հավատում, որ եթե բոլորովին ուշակորույս ու նույնիսկ անշնչացած տեսներ նրան, բայց ստացած լիներ նրա խոստումը, թե մեկ անգամ ևս պիտի վերկենա և հրաժեշտ տա իրեն, ապա թերևս բուն իսկ մահվան էլ հավատք չընծայեր, այլ սպասեր շարունակ, որ մահացյալը զարթնի և կատարի խոստացվածը։ Իսկ սրբահայր Զոսիման հաստատապես ասել էր նրան առավոտյան, երբ քուն էր մըտնում. «Չեմ մահանա, մինչև որ մեկ անգամ ևս արբենամ ձեզ հետ զրուցելով, սիրեցյալք իմ սրտի, նայեմ ձեր քաղցր երեսներին, կրկին անգամ զեղեմ իմ հոգին ձեր առաջ»։ Սրբահոր այս գուցե վերջին զրույցի համար հավաքված վանականները նրա անձնվիրագույն ու վաղեմի բարեկամներն էին։ Չորս հոգի էին նրանք. աբեղաներ հայր Իոսիֆն ու հայր Պաիսին, աբեղա հայր Միխայիլը, որ մենաստանի ավագն էր՝ տակավին ոչ շատ ծեր մարդ, ամենևին ոչ այնքան գիտնական, ծագումով խոնարհ, բայց ոգով ամուր, անսասանորեն ու պարզորեն հավատացյալ, արտաքուստ խստաշունչ, բայց սիրտը խորունկ խանդաղատանքով տոգորված, թեև ակնհայտորեն քողարկում էր իր խանդաղատանքը՝ մինչև իսկ մի տեսակ ամաչելու աստիճան։ Չորրորդ հյուրը, եղբայր Անֆիմը, բոլորովին արդեն ծերուկ մի վանական էր, չքավորագույն գյուղացիների դասից, համարյա թե նույնիսկ կիսագրագետ. հեզաբարո և լռակյաց էր նա, շատ հազվադեպ էր խոսում որևէ մեկի հետ, ամենախոնարհն էր խոնարհագույնների մեջ և ուներ երևույթը մի մարդու, որ կարծես հավիտենապես վախեցել է վիթխարի և ահավոր, իր խելքից վեր մի բանից։ Սրբահայր Զոսիման շատ էր սիրում այս կարծես երկյուղահար մարդուն և միշտ էլ արտասովոր հարգանքով էր վերաբերվել նրան,

թեև գուցե իր ամբողջ կյանքում ուրիշ ոչ ոքի հետ այնքան քիչ խոսք չէր փոխանակել, որքան նրա հետ, հակառակ որ ժամանակին երկար տարիներ նրա հետ միասին թափառել էր Ռուսաց ամբողջ սրբազան աշխարհում։ Շատ վաղուց էր այդ, քառասուն տարի առաջ, երբ սրբահայր Զոսիման նոր էր սկսել իր վանական սխրանքը Կոստրոմայի աղքատ, ոչ հանրածանոթ մի վանքում, և երբ, շատ չանցած, գնացել էր ուղեկցելու հայր Անֆիմին, որ ելել էր ուխտագնացության՝ նվիրատվություններ հանգանակելու հօգուտ իրենց փոքր ու աղքատ վանքի։

Բոլորը՝ տանտերն ու իր հյուրերը հավաքվել էին սրբահոր ննջասենյակում, որ, ինչպես ասել ենք արդեն, շատ փոքր էր, այնպես որ չորս վանականները (բացի հոտնկայս մնացած նորընծա Պորֆիրիից) հազիվ էին տեղավորվել սրբահոր բազկաթոռի շուրջ՝ առաջին սենյակից բերված աթոռների վրա։ Մութն իջնում էր արդեն, սենյակը լուսավորվում էր կանթեղներով ու սրբապատկերների առաջ վառվող մեղրամոմերով։ Տեսնելով Ալյոշային, որ ներս մտնելուց հետո շփոթվել ու կանգնել էր դռան մոտ, սրբահայրն ուրախ ժպտաց նրան ու ձեռքը մեկնեց.

— Ողջույն, մեղմաբարո որդյակ, ողջույն, քաղցրիկդ իմ, ահա դու ևս եկար։ Ու գիտեի, որ կհասնես։

Ալյոշան մոտեցավ նրան, մինչև գետին խոնարհվեց նրա առաջ ու արտասվեց։ Մի բան հորդում էր նրա սրտից, թրթռում էր հոգին, ուզում էր հեկեկալ։

— Ի՞նչ է, համբերիր, դեռ մի՛ սգար,— ժպտաց սրբահայրը, իր աջ ձեռքը դնելով նրա գլխին,— տեսնում ես, նստած զրուցում եմ, թերևս քսան տարի ապրեմ տակավին, ինչպես մաղթեց ինձ երեկ այն բարի, սիրելի կինը, որ եկել էր Վիշեգորյեից՝ իր փոքրիկ Լիզավետային գրկած։ Հիշյա՛, տե՞ր, և ողորմյա մորն ու մանկիկն Լիզավետային,— խաչակնքեց սրբահայրը։— Պորֆիրի, նրա ընծան տարա՞ր իմ ասած տեղը։

Նա հիշեց այն վաթսուն կոպեկը, որ զվարթ ուխտավորուհին նվիրաբերել էր երեկ, որպեսզի սրբահայրը տա «ինձնից աղքատ մեկին»։ Այդպիսի նվիրատվությունները կատարվում են որպես ապաշխարանք, որին մարդիկ, ինչ-ինչ պատճառներով, կամավորաբար ենթարկում են իրենց անձը, և այդ դրամն անպայման սեփական աշխատանքով է վաստակված լինում։ Սրբահայրը երեկ իրիկուն Պորֆիրիին ուղարկել էր մի այրի կնոջ մոտ, որի տունը դեռ վերջերս այրվել էր, և որ, երեխաների տեր լի-

նելով, հրդեհից հետո սկսել էր ողորմություն մուրալով ապրել։ Պորֆիրին շտապեց տեղեկացնել, որ գործն արդեն կատարված է, և որ նպաստը տվել է «անծանոթ բարերարուհու» կողմից, ինչպես պատվիրված էր իրեն։

— Վեր կաց, սիրելի որդյակ,— շարունակեց սրբահայրը, դառնալով Ալյոշային,— թող, որ նայեմ քեզ։ Եղա՞ր յուրայիններիդ մոտ ու տեսա՞ր եղբորդ։

Ալյոշային տարօրինակ թվաց, որ նա այդպես հաստատ ու որոշակի հարցնում է իր եղբայրներից միայն մեկի մասին. բայց ո՞ր մեկի։ Ուրեմն գուցե ա՛յդ եղբոր համար էր ուղարկել իրեն թե՛ երեկ, թե՛ այսօր։

— Եղբայրներիցս մեկին տեսա,— պատասխանեց Ալյոշան։

— Հարցնում եմ անդրանի՛կ եղբորդ մասին, որի առաջ մինչև գետին խոնարհվեցի երեկ։

— Նրան երեկ միայն տեսա, իսկ այսօր ոչ մի կերպ չկարողացա գտնել,— ասաց Ալյոշան։

— Աճապարիր գտնել, վաղը նորից գնա և աճապարիր, ամեն ինչ թո՛ղ և աճապարիր։ Գուցե տակավին հասցնես մի ահավոր բան կանխել։ Երեկ ես խոնարհվեցի նրա ապագա մեծ տառապանքին։

Նա հանկարծ լռեց և կարծես մտածմունքի մեջ ընկավ։ Տարօրինակ էին խոսքերը։ Հայր Իոսիֆը, որ երեկ վկա էր եղել սրբահոր այդ երկրպագության, մի հայացք փոխանակեց հայր Պահսիի հետ։ Ալյոշան չկարողացավ համբերել։

— Հայր և ուսուցի՛չ,— ասաց նա արտակարգորեն հուզված,— չափազանց մթին են ձեր խոսքերը... Ինչպիսի՞ տառապանք է սպասում նրան։

— Զսպիր հետաքրքրությունը քո։ Երեկ զարհուրելի մի բան երևաց աչքիս... կարծես նրա հայացքը ամբողջ նրա ճակատագիրն արտահայտեց երեկ։ Այդպիսի մի հայացք եկավ նրա աչքերի մեջ... այնպես որ վայրկենապես սարսափ զգացի իմ սրտում, տեսնելով, թե ի՞նչ բան է պատրաստում այդ մարդն իր գլխին։ Իմ կյանքում մեկ կամ երկու անգամ ոմանց դեմքին նույնպիսի արտահայտություն եմ տեսել... այդ մարդկանց ամբողջ ճակատագիրը ցույց տվող մի արտահայտություն, և նրանց ճակատագիրը, ավա՞ղ, ի կատար ածվեց։ Քեզ նրա մոտ ուղարկեցի, Ալեքսեյ, որովհետև մտածեցի, որ քո եղբայրական դեմքը կօգնի նրան։ Բայց ամեն ինչ հաստատուն է և նրա ձեռքն են

մեր ճակատագրերը բոլոր։ «Եթե ցորենի հատիկը երկիր ընկնելով չմեռնի, ինքը միայն կմնա. իսկ եթե մեռնի, բազում արդյունք կբերի»։ Հիշի՛ր այս։ Իսկ քեզ, Ալեքսեյ, բազմիցս իմ կյանքում օրհնել եմ մտովին քո դեմքի համար, իմացի՛ր այս,— ասաց սրբահայրը մեղմ ժպիտով։— Քո մասին մտածում եմ այսպես. պիտի ելնես արտաքս այս պատերից, բայց աշխարհիկ կյանքում պիտի ապրես որպես վանական։ Հակառակորդներ շատ պիտի ունենաս, բայց և քո ոսոխներն իսկ պիտի սիրեն քեզ։ Շատ դժբախտություններ պիտի բերի քեզ կյանքը, բայց դրանցո՛վ է, որ դու երջանիկ պիտի լինես ու կյա՛նքը պիտի օրհնես, ուրիշներին ևս պիտի ստիպես օրհնել այն— և այս վերջինն է ամենեն կարևորը։ Ահա թե ինչպիսինն ես դու։ Հայրե՛ր և ուսուցիչնե՛ր իմ,— գորովագին ժպտալով դիմեց նա իր հյուրերին,— մինչ այս օրս երբեք չեմ ասել ձեզ և ոչ իսկ նրան, թե ինչու այնքան սիրելի է իմ հոգուն դեմքն այս պատանյակի։ Այժմ ասեմ ահա. նրա դեմքն ինձ համար հիշեցում ու մարգարեություն է մի տեսակ։ Իմ կյանքի արշալույսին, երբ տակավին մանուկ էի ես, ունեի ավագ մի եղբայր, որ իմ աչքերի առաջ մեռավ դեռ պատանի՝ ընդամենը տասնյոթ տարեկան։ Եվ այնուհետև, անցնելով իմ կյանքի ուղին, համոզվեցի աստիճանաբար, որ այդ իմ եղբայրն ի վերուստ հայտնված ուղեցույց ու նախանշան էր իմ ճակատագրում, որովհետև եթե չհայտնվեր նա կյանքիս մեջ, եթե չլիներ նա ամենևին, ապա թե գուցե, այդպես եմ կարծում, վանական կարգ չընդունեի երբեք և չընտրեի թանկագին այս ուղին։ Այդ առաջին հայտնությունն իմ մանկության օրերին եղավ, և ահա արդեն իմ ճամփու վերջալույսին նրա կրկնությունն է կարծես հայտնվել ինձ ակներևորեն։ Հրաշալի է սա, հայրեր և ուսուցիչներ. ոչ այնքան շատ, այլ փոքր ինչ նման լինելով նրան դեմքով, Ալեքսեյն իմ աչքին այնքա՞ն նման երևաց նրան հոգեպես, որ այս պատանյակին բազմիցս նկատել եմ որպես ուղղակի ա՛յն պատանյակը՝ որպես եղբայրն իմ, որ խորհրդավոր կերպով եկել է ինձ մոտ իմ ճամփու ավարտին՝ վասն հիշեցման ու ներհայեցման. այնպես որ ինքս իսկ զարմացել եմ իմ վրա և այդպիսի տարօրինակ իմ երազանքի վրա։ Լսո՞ւմ ես այս, Պորֆիրի,— դարձավ սրբահայրն իրեն սպասարկող նորընծային։— Բազմիցս կարծես դառնություն եմ տեսել քո դեմքին վասն այնորիկ, որ Ալեքսեյին սիրում եմ ավելի, քան քեզ։ Այժմ գիտես, թե ինչու էր այդպես, բայց ես սիրում եմ քեզ,

գիտցի՛ր այդ, և վշտացել եմ բազմիցս, որ դառնանում ես դու։ Իսկ ձեզ, հյուրեր իմ սիրեցյալ, ուզում եմ պատմել այն պատանյակի՝ իմ եղբոր մասին, որովհետև իմ կյանքում չի եղել ավելի թանկագին, ավելի մարգարեական ու սրտահույզ երևույթ, քան այդ։ Խանդաղատանքով լի է սիրտն իմ այս բոպեիս, և դիտում եմ ամբողջ կյանքն իմ անցյալ, որպես թե վերստին ապրեի զայն լիովին...

Այստեղ պետք է նկատեմ, որ սրբահոր այս վերջին զրույցը՝ կյանքի վերջին օրն իրեն այցելած հյուրերի հետ ունեցած, մասամբ պահպանվել է գրավոր։ Գրի է առել Ալեքսեյ Ֆյոդորովիչ Կարամազովը, սրբահոր մահից որոշ ժամանակ հետո, հիշողությամբ։ Բայց ամբողջ գրվածքն այդ օրվա զրո՞ւյցն է լոկ, թե՞ նա իր գրառման մեջ բաներ է ավելացրել նաև իր ուսուցչի հետ ունեցած նախկին զրույցներից՝ այդ արդեն չեմ կարող որոշել, մանավանդ որ այս գրառման մեջ սրբահոր ամբողջ խոսքն ընթանում է մի տեսակ առանց ընդմիջման, կարծես թե նա, դիմելով իր բարեկամներին, իր կյանքը պատմել է վիպելու ձևով, այնինչ, ըստ հետագա տեղեկությունների, անտարակուսելի է, որ մի քիչ այլ կերպ է տեղի ունեցել իրականում, որովհետև այդ երեկո զրույցն ընդհանուր է եղել. ու թեև հյուրերը քիչ են ընդհատել տանտիրոջը, բայց այնուամենայնիվ իրենք էլ խոսել են, մասնակցել զրույցին, գուցե նույնիսկ իրենց կողմից պատմել են մի որևէ բան։ Բացի այդ, սրբահայրը չէր կարող այդպիսի անընդմեջ շարունակականությամբ պատմել, որովհետև մերթ ընդ մերթ շնչահեղձ էր լինում, ձայնը կտրվում էր, և նույնիսկ պառկում էր հանգստանալու իր անկողնի վրա, թեև չէր քնում, հյուրերն էլ չէին հեռանում իրենց տեղերից։ Մեկ կամ երկու անգամ զրույցն ընդհատվել է ավետարանի ընթերցմամբ, կարդացել է հայր Պաիսին։ Ուշագրավ է նաև այն, որ նրանցից ոչ ոք այդուհանդերձ չի ենթադրել, թե այդ նույն գիշերն իսկ կմահանա սրբահայրը, մանավանդ որ իր կյանքի այդ վերջին երեկոյին, ցերեկվա խորունկ քնից հետո, նա կարծես հանկարծ նոր ուժ էր գտել իր մեջ, և այդ ուժը զորավիգ էր եղել նրան՝ բարեկամների հետ ունեցած այդ երկար զրույցի ընթացքում։ Դա կարծես գորովագին սիրո վերջին ալիքն էր, որ վերակենդանացման անհավատալի մի շունչ էր տվել նրան, բայց միայն կարճ ժամանակով, որովհետև նրա կյանքը դադարեց հանկարծ...

Բայց այդ մասին՝ հետո։ Իսկ այժմ ուզում եմ հայտնել, որ նախընտրեցի չվերարտադրել զրույցի բոլոր մանրամասնությունները, այլ լոկ սահմանափակվել սրբահոր այն պատմածով, որ շարադրված է Ալեքսեյ Ֆյոդորովիչ Կարամազովի ձեռագրում։ Դա ավելի կարճ կլինի և ոչ այնքան հոգնեցուցիչ, թեև անշուշտ, կրկնում եմ, Ալյոշան շատ բան վերցրել է նաև նախկին զրույցներից և ի մի բերել այստեղ։

II

ԷՋԵՐ Ի ՏԵՐ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ՍՔԵՄԱԶԳՅԱՑ ԱԲԵԼԱ ՍՐԲԱՀԱՅՐ ԶՈՍԻՄԱՅԻ ՎԱՐՔԻՑ՝ ԿԱԶՄՎԱԾ ՅՈՒՐ ՍԵՓԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԻՑ, ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ԱԼԵՔՍԵՅ ՖՅՈԴՈՐՈՎԻՉ ԿԱՐԱՄԱԶՈՎԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ տեղեկություններ

ա) Սրբահայր Զոսիմայի պատանի եղբոր մասին

Սիրեցյալ հայրեր և ուսուցիչներ, ծնվել եմ հեռավոր մի նահանգում հյուսիսային, Վ. քաղաքում։ Ազնվական էր հայրս, բայց ոչ մեծազարմ և ոչ բարձրաստիճան։ Նա վախճանվեց, երբ ես ընդամենը երկու տարեկան էի, և չեմ հիշում նրան ամենևին։ Մի փոքր փայտաշեն տուն թողեց մորս և մի որոշ դրամագլուխ, որ մեծ չէր, սակայն բավարար էր՝ երեխաների հետ միասին բարեկեցիկ կյանք ապրելու։ Եվ ընդամենը երկու զավակ ուներ մայրս. ես էի (Զինովի էր անունս) և ավագ եղբայրն իմ՝ Մարկելը։ Ութ տարով մեծ էր նա ինձանից, տաքարյուն էր բնավորությամբ և դյուրաբորբոք, սակայն բարի, չէր հեգնում բնավ և տարօրինակորեն լռակյաց էր՝ հատկապես իր սեփական տանը, ինձ ու մորս և ծառաների հանդեպ։ Լավ էր սովորում գիմնազիայում, բայց չէր շփվում իր ընկերների հետ, թեև չէր էլ գժտվում. գոնե այդպես էր հիշում նրան մայրիկս։ Իր մահից կես տարի առաջ, երբ արդեն տասնյոթը բոլորել էր, սկսեց հաճախել մեր քաղաքում մեկուսի ապրող մի մարդու մոտ, որ քաղաքական աքսորյալ էր մի տեսակ՝ իր ազատամտության պատճառով Մոսկվայից մեր քաղաքն աքսորված։ Իսկ այդ աքսորյալը բավական մեծ գիտնական էր և ականավոր փիլիսոփա՝ համալսարանի դասախոս։ Չգիտես ինչու, նա սիրեց Մարկելին և սկսեց հաճախակի հյուրընկալել նրան։ Պատանին երեկոները շարու-

նակ նստում էր նրա մոտ, և այդպես՝ ամբողջ ամեռը, մինչև որ նա կանչեցին աքսորյալին՝ Պետերբուրգում պետական ծառայության մտնելու համար, ըստ իր սեփական խնդրանքի, որովհետև հովանավորներ ուներ։ Մեծ պահքն էր սկսել, բայց Մարկելը ծոմ պահել չէր ուզում, նախատական խոսքեր էր ասում և ծիծաղում էր ծոմապահության վրա. «Այդ ամբողջը ցնդաբանություն է,— ասում էր,— և ոչ մի աստված էլ չկա», այնպես որ սոսկում պատճառեց թե՛ մորս, թե՛ ծառաներին ու նաև ինձ՝ փոքրիկիս, որովհետև ես լոկ ինը տարեկան էի թեև, բայց լսելով խոսքերն այդ՝ մեծ երկյուղ կրեցի նույնպես։ Իսկ մենք չորս ծառա ունեինք, և ճորտ էին բոլորն էլ, մեզ ծանոթ մի կալվածատիրոջ անունով գնված։ Հիշում եմ տակավին, թե ինչպես իմ մայրիկը վաթսուն ռուբլի թղթադրամով ծախեց այդ չորս ծառաներից մեկին՝ խոհարարուհի Աֆիմյային, որ կաղ էր ու տարեց, և ազատ մի կնոջ վարձեց նրա փոխարեն։

Արդ ուրեմն, մեծ պահքի վեցերորդ շաբաթն էր, երբ հանկարծ եղբորս առողջությունը վատթարացավ։ Արդեն միշտ էլ վատառողջ էր նա, թուլակազմ, տկար էր կուրծքը և հյուծախտի հակամետ. բավական բարձրահասակ էր, սակայն նիհար և անուժ, իսկ դեմքը՝ հույժ գեղատեսիլ։ Մրսե՞լ էր թե ինչ, բայց համենայն դեպս բժիշկն եկավ ու շուտով շշնջաց մեր մայրիկի ականջին, որ սրընթաց թոքախտ է և գարունը չի հանի։ Սկսեց արտասվել մայրս և զգուշորեն, եղբորս վախ չպատճառելու մտահոգությամբ, խնդրեց, որ նա ապաշխարի և աստվածային սուրբ հաղորդության խորհուրդն ընդունի, վասնզի դեռ ոտքի վրա էր այն ժամանակ, կարող էր եկեղեցի գնալ։ Լսելով այդ, բարկացավ եղբայրս և նախատեց տաճարն աստծո, սակայն մտածմունքի մեջ ընկավ. կռահեց անմիջապես, որ վտանգավոր է իր հիվանդությունը և այդ իսկ պատճառով մայրն իրեն ուղարկում է ապաշխարանքի և հաղորդության, քանի դեռ ուժ ունի գնալու։ Համենայն դեպս ինքն էլ գիտեր, որ անառողջ է վաղուց, և արդեն մի անգամ, դեռ մեկ տարի առաջ, ճաշի վրա սառնասրտորեն ասել էր մորս ու ինձ. «Այս աշխարհում երկար չի լինելու իմ կյանքը ձեր մեջ, գուցե մեկ տարի էլ չապրեմ»։ Հիրավի, կարծես մարգարեացել էր այն ժամանակ։ Անցավ երեք օր, և հասավ շարշարանաց շաբաթը։ Եվ ահա, եղբայրս ավագ երեքշաբթի առավոտյան սկսեց եկեղեցի գնալ և ապաշխարել։ «Այս բանը, մայրիկ, հատկապես ձեզ համար եմ անում, որպեսզի ուրախացնեմ և հանգստացնեմ ձեզ»,— ասաց նա։ Արտասվեց մեր մայրիկն ուրախությունից ու նաև վշտից. «Ուրեմն մոտ է նրա վախճանը, եթե այդպիսի փոփոխություն կատարվեց նրա մեջ հանկարծ»։ Բայց նա քիչ անգամ կարողացավ եկեղեցի գնալ, անկողին ընկավ. այնպես որ ստիպված եղավ տանը խոստովանանք կատարել և հաղորդություն ընդունել։ Զատիկն ուշ եկավ այդ տարի, և պայծառ, վճիտ, բուրումնավետ օրեր էին։ Ամբողջ գիշերը, հիշում եմ, հազում էր նա, վատ էր քնում, բայց առավոտյան հագնվում էր միշտ և փորձում էր նստած մնալ փափուկ բազկաթոռի մեջ։ Այդպես և հիշում եմ նրան. խաղաղ նստած՝ ժպտում է հեզահամբույր, ինքը հիվանդ, բայց դեմքը զվարթ, ցնծագին։ Ներաշխարհն այլակերպվել էր լիովին՝ այնպիսի՜ հրաշալի մի հոգեփոխություն էր սկսվել նրա մեջ։ Մտնում էր նրա սենյակը ծեր դայակն ու ասում. «Թույլ տուր, հոգյակս, քո սենյակում էլ վառեմ կանթեղը սրբապատկերի առաջ»։ Մինչ այդ նա թույլ չէր տալիս, փչում ու մարում էր նույնիսկ։ Իսկ հիմա՝ «Վառիր, սիրելիս, վառիր, ճիվաղ էի ես, որ թույլ չէի տալիս առաջ։ Կանթեղը վառելով, դու աղոթում ես աստուծո, իսկ ես քեզ նայելով և ուրախանալով է, որ աղոթում եմ։ Ուրեմն աղոթում ենք միևնույն աստուծո»։ Տարօրինակ էին թվում այդ խոսքերը մեզ, իսկ մայրս գնում էր իր սենյակը և արտասվում շարունակ, միայն նրա մոտ մտնելու պահին էր սրբում արցունքը և զվարթ դեմք ընդունում։ «Մայրի՛կ, լաց մի՛ լինիր, հոգյակս,— ասում էր նա երբեմն,— դեռ շատ պիտի ապրեմ, շատ պիտի ուրախանամ ձեզ հետ, և կյա՜նքը, կյա՜նքը ուրախություն է, ցնծությո՜ւն»։— «Ա՜խ, անուշիկս, էլ ի՞նչ ուրախություն քեզ համար, երբ ամբողջ գիշերը վառվում ես ջերմության մեջ և այնպես ես հազում, որ քիչ է մնում կուրծքդ պատռվի»։— «Մայրի՛կ,— պատասխանում էր նա,— լաց մի՛ լինիր, դրախտ է կյանքը, և մենք բոլորս գտնվում ենք դրախտում, բայց չենք ուզում իմանալ այդ, իսկ եթե ուզեինք իմանալ, վաղն ևեթ դրախտ կդառնար ամբողջ աշխարհը»։ Եվ զարմանում էինք բոլորս նրա խոսքերի վրա, այնպե՜ս տարօրինակորեն և այնպե՜ս համոզված էր ասում նա. խանդաղատանքով էինք լցվում և արտասվում էինք։ Ծանոթներ էին այցելում մեզ։ «Սիրելինե՛ր,— ասում էր նա,— թանկագի՛ն բարեկամներ, ինչո՞վ եմ արժանի, որ դուք սիրում եք ինձ, վասն ի՞նչ բանի սիրում եք ինձ նման մեկին, և առաջ ինչպե՞ս չգիտեի այդ, ինչ-

պե՞ս չէի գնահատում»։ Իր մոտ մտնող ծառաներին ասում էր ամեն րոպե. «Սիրելինե՛ր իմ, թանկագիննե՛ր, ինչո՞ւ եք ծառայություն մատուցում ինձ, և արժանի՞ եմ արդյոք, որ ինձ ծառայություն մատուցեն։ Եթե շնորհ աներ աստված ու կենդանի թողներ ինձ, ի՞նքս կծառայեի ձեզ, որովհետև բոլորը պետք է ծառայեն իրար»։ Մեր մայրիկը, լսելով նրան, գլուխն էր շարժում. «Հիվանդությունից է, որ այդպես ես ասում, անուշիկ զավակս»։— «Մայրի՛կ,— ասում էր նա,— հոգեհատո՛ր մայրիկս, անհնար է, որ տերեր ու ծառաներ չլինեն, բայց թող ի՛նքս էլ ծառան լինեմ իմ ծառաների, ճիշտ այնպես, ինչպես նրանք են ինձ համար։ Եվ դեռ ասեմ քեզ, մայրի՛կ, մեղնից յուրաքանչյուրը մեղավոր է բոլորի առաջ և ամեն ինչի համար, և ես՝ բոլորից ավելի»։ Մեր մայրիկը նույնիսկ ժպտաց այդ խոսքի վրա, արտասվելով ժպտաց. «Է՜հ, ինչո՞ւ ես դու բոլորից ավելի մեղավոր բոլորի առաջ։ Մարդասպաններ կան, ավազակներ, իսկ դու դեռ ի՞նչ մի այնպիսի մեղք ես գործել, որ բոլորից ավելի մեղավոր ես համարում քեզ»։— «Մայրի՛կ, դու իմ սրտի՛կ սիրասուն,— ասաց նա (այդ ժամանակ սկսել էր նման քնքշալի բառեր գործածել, անսպասելի բառեր),— իմ սրտի՛կ սիրասուն, ուրախությո՛ւն իմ մայրիկ, հավատա՛, որ իսկապես յուրաքանչյուր ոք մեղավոր է բոլորի առաջ՝ բոլորի և ամե՛ն ինչի համար։ Չգիտեմ, թե ինչպես բացատրեմ քեզ, բայց զգում եմ, որ այդ այդպես է՝ մինչև իսկ տանջելու չափ։ Եվ ինչպե՞ս է որ ապրում էինք ու բարկանում և ոչինչ չգիտեինք մինչև հիմա»։ Այդպես նա զարթնում էր քնից, ամեն օր ավելի ու ավելի գորովալից և ցնծագին, ամբողջովին սիրով թրթռուն։ Գալիս էր բժիշկը՝ Էյզենշմիդտ անունով մի ծեր գերմանացի, մեկ էլ եղբայրս կատակում էր. «Է՜հ, դոկտո՛ր, դեռ մի հատիկ օր ևս կապրե՞մ այս աշխարհում»։— «Ոչ թե մեկ, այլ շատ օրեր կապրեք,— պատասխանում էր բժիշկը,— և դեռ ամիսներ, տարիներ կապրեք»։— «Տարինե՛րն ինչ, ամիսնե՛րն ինչ,— բացականչում էր նա,— կարիք կա՞ օրերը հաշվելու, մեկ օրն էլ բավական է մարդուն՝ ամբողջ երջանկությունը ճանաչելու համար։ Սիրելիներ իմ, ինչո՞ւ ենք կռվում իրար հետ, պարծենում միմյանց առաջ, քեն պահում մեկս մյուսի դեմ. գնանք ուղղակի պարտեզ, զբոսնենք ու խայտանք այնտեղ, սիրենք ու դրվատենք իրար, համբուրենք իրար և մեր կյանքն օրհներգենք»։— «Երկար չի ապրի ձեր որդին,— ասաց բժիշկը, երբ մայրիկն ուղեկցում էր նրան մինչև դրսի դուռը,—

հիվանդությունն արդեն խելացնորության է հասցնում նրան»։ Եղբորս սենյակի լուսամուտները պարտեզին էին նայում, իսկ մեր պարտեզն ստվերախիտ էր, հնամյա ծառերով, և ծառերի վրա գարնանային բողբոջներն էին բացվում, վերադարձել էին առաջին թռչնակները, ճռվողում էին, երգում նրա լուսամուտների առաջ։ Եվ եղբայրս, նայելով թռչնակներին ու սքանչանալով, հանկարծ սկսեց նրանցից ևս ներումն խնդրել. «Թռչնակնե՛ր աստուծո, թռչնակնե՛ր բերկրալի, դուք էլ ներեցեք ինձ, որովհետև ձեր դեմ նույնպես մեղանչել եմ ես»։ Այդ մեկն արդեն մեղանից ոչ ոք չէր կարող հասկանալ այն ժամանակ, իսկ նա արտասվում էր ուրախությունից. «Այո,— ասում էր,— աստուծո այսպիսի փառքն էր սփռված իմ շուրջ՝ թռչնակնե՛ր, ծառե՛ր, մարգագետիննե՛ր, երկնակամա՛ր, և միայն ե՛ս էի ամոթալի կյանք ապրում, միայն ե՛ս էի անարգում ամեն ինչ, իսկ այս բոլորի գեղեցկությունն ու փառքը չէի նկատում բնավ»։— «Է՜հ, շատ-շատ մեղքեր ես վերցնում քեզ վրա»,— ասում էր մայրիկն արտասվելով։ «Մայրի՛կ, ուրախությո՛ւն իմ մայրիկ, ես խնդությունից եմ արցունք թափում, ոչ թե վշտից. չեմ կարողանում բացատրել քեզ, բայց ինքս եմ ուզում մեղավոր լինել նրանց առաջ, որովհետև չգիտեմ, թե ինչպես սիրեմ նրանց։ Թող մեղավոր լինեմ բոլորի առաջ, սակայն և բոլորը ներեն ինձ. ահա՛ դրախտը։ Միթե ես այժմ դրախտի մեջ չե՞մ»։

Եվ դեռ շատ բաներ կային, որ ի վիճակի չեմ հիշելու և արձանագրելու։ Հիշում եմ, մի անգամ առանձին մտա նրա սենյակը, երբ մոտը ոչ ոք չկար։ Պայծառ երեկո էր, արևը մայր էր մտնում և ամբողջ սենյակը լուսավորված էր իրիկնային շեղ ճառագայթներով։ Տեսնելով ինձ, կանչեց. մոտեցա նրան, երկու ձեռքերը դրեց ուսերիս, նայեց իմ դեմքին՝ գորովանքով, սիրով։ Ոչինչ չխոսեց, միայն նայեց այդպես մի րոպե։ «Դե՜հ,— ասաց,— գնա այժմ, խաղա՛, ապրիր իմ փոխարեն»։ Ու ես դուրս եկա հայնժամ, գնացի խաղալու։ Իսկ հետո իմ կյանքի ընթացքում արտասուքով եմ հիշել բազում ու բազում անգամներ, թե ինչպես նա ինձ պատվիրեց ապրել իր փոխարեն։ Դեռ շատ այդպիսի զարմանահրաշ ու գեղեցիկ խոսքեր էր ասում, թեև դրանք հասկանալի չէին մեզ այն ժամանակ։ Վախճանվեց զատիկին հաջորդող երրորդ շաբթու մեջ։ Գիտակցությունը տեղն էր, ու թեև դադարել էր արդեն խոսելուց, բայց հոգեպես չփոխվեց մինչև իր ժամը վերջին. նայում էր ուրախ, աչքերի մեջ

խնդություն կար, հայացքներով մեզ էր փնտրում, ժպտում էր մեզ, մեզ էր կանչում։ Մինչև իսկ քաղաքում շատ խոսեցին նրա մահվան մասին։ Այն ժամանակ ցնցվեցի ես այդ բոլորից, բայց ոչ հույժ, թեև շատ արտասուք թափեցի, երբ թաղում էին նրան։ Մատղաշ էի, մանուկ, բայց այդ ամբողջն անջնջելիորեն մնաց իմ սրտում, անթեղվեց որպես զգացմունք։ Եվ երբ ժամանակը գար, պետք է զարթներ և արձագանք տար այդ զգացմունքը։ Այդպես և պատահեց արդարև։

բ) Սուրբ գրոց դերը սրբահայր Զոսիմայի կյանքում

Մնացինք մայրիկս ու ես։ Շուտով նրա բարյացակամ ծանոթները խորհուրդ տվեցին, ասելով. «Ահա մինուճար մի տղա մնաց ձեզ, և աղքատ չեք, դրամագլուխ ունեք, ուրեմն ինչո՞ւ ձեր տղային չտանեք Պետերբուրգ, հետևելով ուրիշների օրինակին, իսկ եթե այստեղ թողնեք, գուցե թե փայլուն մի ապագայից զրկած լինեք նրան։ Եվ հորդորեցին մայրիկիս, որ ինձ տանի Պետերբուրգ և տա կադետական դպրոց, որպեսզի հետագային կայսերական պահորդազոր մտնեմ։ Մայրիկս երկար ժամանակ տատանվում էր. ինչպե՞ս բաժանվեր իր վերջին մինուճար զավակից։ Բայց և վերջապես, առատ արտասուք թափելով հանդերձ, որոշում տվեց, մտածելով, թե այդպիսով նպաստած կլինի իմ երջանկության։ Տարավ ինձ Պետերբուրգ և տվեց կադետական դպրոց, և այնուհետև երբեք այլևս չտեսա նրան. վասնզի երեք տարի հետո ինքը ևս վախճանվեց, ամբողջ երեք տարի ողբում էր եղբորս ու դողում ինձ համար։ Թանկագին հիշատակներ լոկ մնացին ինձ ծնողական հարկից, քանզի մարդու համար չկան ավելի թանկագին հիշատակներ, քան առաջին մանկության օրերը ծնողական հարկի տակ, և այդ գրեթե միշտ այդպես է, եթե նույնիսկ ամենադույզն սերն ու միաբանությունը կա ընտանիքում։ Բայց և ամենավատթար ընտանիքից կարող են թանկագին հիշատակներ մնալ, միայն թե մարդու հոգին ընդունակ լինի փնտրելու և գտնելու թանկագինը։ Ընտանեկան հարկի իմ հուշերից եմ համարում նաև այն հիշատակները, որ ունեմ սուրբ գրոց մասին. թեև մանուկ էի, բայց դեռ ծնողական հարկի տակ մեծ հետաքրքրությամբ ուզում էի իմանալ սրբազան պատմությունը։ Այն ժամանակ սրբազան պատմության մի գիրք ունեի, որ սքանչելի պատկերներով էր նկարազարդված և կոչվում էր

«Հարյուր չորս սրբազան պատումներ հին և նոր կտակարանից», և այդ գրքով է, որ կարդալ սովորեցի։ Ու մինչև այժմ էլ մոտս է այդ գիրքը, այստեղ՝ գրադարակի վրա, պահում եմ որպես թանկագին հիշատակ։ Բայց և նախքան կարդալ սովորելս, հիշում եմ, թե ինչպես առաջին անգամ բարեպաշտության ջերմեռանդ մի զգացում թափանցեց իմ հոգին, երբ դեռ ութ տարեկան էի։ Մայրիկս ինձ առանձին տարավ տաճարն աստուծո (չեմ հիշում թե որտեղ էր եղբայրս այդ ժամանակ), տարավ պատարագի՝ ավագ երկուշաբթի օր։ Պայծառ էր օրը, և ես, հիշելով այժմ, կարծես կրկին տեսնում եմ հականե, թե ինչպես է խունկի ծուխը ելնում բուրվառից ու մեղմածուփ բարձրանում դեպի վեր, իսկ վերևից, գմբեթի նեղլիկ լուսամուտից, երկնային լուսո ճառագայթներն ուղղակի մեր վրա են հոսում եկեղեցվո մեջ, և խունկի ծուխն, ամբառնալով ալիք առ ալիք, ծիրանի ճառագայթների մեջ անգայտանում է կարծես։ Նայում էի հուզված, և աշխարհ գալուց հետո առաջին անգամ այդ պահին ընկալեցի իմ հոգում աստվածային խոսքի առաջին սերմը՝ զիտակցելով։ Մի պատանյակ եկավ տաճարի մեջտեղը՝ խոշոր մի գիրք բռնած, այնքա՜ն խոշոր, որ այդ պահին ինձ թվաց, թե նա նույնիսկ դժվար էր բարձրացնում. դրեց գիրքը գրակալի վրա, բացեց ու սկսեց ընթերցել, և ես հանկարծ առաջին անգամ հասկացա մի բան, առաջին անգամ կյանքիս մեջ հասկացա, թե ինչ են ընթերցում աստուծո տաճարում։ Հուս երկրում ապրում էր այր մի արդար ու աստվածապաշտ, և նա ուներ շատ հարստություն՝ այսքան ուղտ, այսքան ոչխար և էշ մատակ, և զավակներն ուրախ կյանք էին վարում, և նա շատ էր սիրում իր զավակներին ու նրանց համար աղոթում էր առ աստված, ասելով՝ գուցե թե մեղանչել են նրանք իրենց զվարճությունների մեջ։ Եվ ահա, սատանան աստուծո հրեշտակների հետ բարձրանում է աստուծո մոտ և ասում է տիրոջ, որ անցել է ամբողջ երկրի երեսով ու երկրի ընդերքով։ «Իսկ տեսա՞ր իմ ծառա Հոբին»,— հարցնում է նրան աստված։ Եվ աստված պարծենում է սատանայի առաջ, մատնացույց անելով իր մեծ ու սուրբ ծառային։ Եվ սատանան ծիծաղում է աստուծո խոսքերի վրա. «Հանձնիր ինձ քո ծառային և կտեսնես, որ կտրտնջա նա քո դեմ և կանիծի անունը քո»։ Եվ աստված իր արդար մարդուն, որին այնքա՜ն էր սիրում, հանձնեց սատանային, և հարվածեց սատանան նրա զավակներին ու անասուններին, ցիրուցան արեց հարստությունը նրա՝

ամեն ինչ մեկեն, երկնային հանկարծահաս շանթի նման. և պատառոտեց Հոբն հանդերձները յուր, նետվեց գետին ու աղաղակեց. «Մերկ ելա որովայնից իմ մոր, մերկանդամ և վերադառնում եմ հողին, տերը տվեց, տերը և առավ։ Եղիցի՞ անուն տյառն օրհնյալ հայսմ հետե մինչև հավիտյան»։ Հայրեր և ուսուցիչնե՞ր, ներողամիտ եղեք այժմու իմ արցունքների նկատմամբ, որովհետև ամբողջ իմ մանկությունն է կարծես հառնում իմ առաջ կրկին, և այժմ շնչում եմ այնպես, ինչպես շնչում էի այն ժամանակ ութամյա իմ մանկական կրծքով, և ինչպես այն ժամանակ՝ զգում եմ զարմանք ու խռովք և ուրախություն։ Ուղտերը ինչպե՞ս էին գրավել իմ երևակայությունն այդ պահին, և նույնպես սատանան, որ այդպես խոսում է աստուծո հետ, և աստված, որ լքեց իր ծառային ու հասցրեց կործանման, և ծառան նրա, որ բացականչում էր՝ «Օրհնյա՞լ եղիցի անուն քո, թեպետ և պատժում ես ինձ», և ապա մեղմ ու քաղցրաձայն երգեցողությունը տաճարում՝ «Ի կատար ածվի աղոթքն իմ», ու կրկին խունկի ծուխը քահանայի բուրվառից և աղոթասացությո՞ւնը ծնկադիր։ Այդ օրից ի վեր չեմ կարող առանց արտասուքի կարդալ պատմությունն այդ ամենասուրբ, ու դեռ երեկ իսկ կրկին կարդացի։ Եվ որքա՞ն վսեմ, խորհրդավոր ու անընդգրկելի բան կա այդ պատմության մեջ։ Հետագային հեգնանքի ու պարսավանքի խոսքեր եմ լսել մարդկանցից, հպարտ խոսքեր, թե ինչպե՞ս կարող էր աստված իր սուրբերից ամենասիրեցյալին հանձնել սատանայի զվարճությանը, խլել նրանից զավակներին, նրա անձը ևս այնպե՞ս խոցել հիվանդությամբ ու կեղերով, որ նա իր վերքերի թարախը խեցիով էր քերում,— և այդ բոլորն ինչո՞ւ համար. որպեսզի լոկ պարծենա սատանայի առաջ, այսինքն թե՝ «Ահա՛ իմ սուրբն ի՞նչ տանջանքներ կարող է կրել ի սեր ինձ»։ Բայց վսեմությունն էլ այն է, որ խորհուրդ կա այդ բոլորի մեջ՝ երկրային վաղանցուկ կերպարանքն ու հավիտենական ճշմարտությունը ի մի են բերված այստեղ։ Երկրային ճշմարտության հանդիման ի կատար է ածվում հավիտենական ճշմարտությունը։ Այստեղ արարիչը, ինչպես և իր արարչագործության առաջին օրերին, երբ յուրաքանչյուր օրն ավարտում էր գովաբանությամբ՝ «Լավ է այն, ինչ ստեղծեցի», նայում է Հոբին և կրկին պարծենում իր ստեղծագործությամբ։ Իսկ Հոբը, գովաբանելով արարչին, ծառայում է ոչ միայն նրան, այլև պիտի ծառայի ամբողջ ստեղծագործությանը նրա՝ աղգե-աղգ ու սերունդե-սերունդ և հավիտյանս հավիտենից, վասնզի ա՛յդ բանի համար էր նախասահմանված։ Աստվա՞ծ իմ, ի՞նչ գիրք է դա, և ի՞նչ դասեր կան նրա մեջ։ Ի՞նչ գիրք է այս սուրբ գիրքը, ի՞նչ հրաշք և ի՞նչ ուժ է տրված մարդուն այս գրքի հետ։ Կարծես քանդակն է աշխարհի ու մարդու և մարդկային բնավորությունների, և ամեն ինչ մատնանշված է, օրինագծված առհավետ։ Եվ որքա՞ն խորհուրդներ են լուծված ու բացահայտված. վերստին բարձրացնում է աստված Հոբին, վերստին հարստություն է տալիս նրան, բազում տարիներ են անցնում նորից, և արդեն նոր զավակներ է ունենում նա, ուրիշ զավակներ, ու սիրում է նրանց։ «Բայց տե՞ր աստված, ինչպե՞ս նա կարող էր սիրել այս նոր զավակներին, երբ նախկինները չկան, երբ զրկվեց նրանցից։ Հիշելով նրանց, կարելի՞ է արդյոք նոր զավակների հետ լիովին երջանիկ լինել, ինչպես առաջ, որքան էլ սիրելի լինեն այս նորերը»։ Բայց կարելի է, կարելի. մարդկային կյանքի մեծ խորհուրդն է այն, որ հին վիշտն աստիճանաբար դառնում է խաղաղ, գորովագին ուրախություն։ Պատանեկան եռուն արյունը տեղի է տալիս հեզաբարո և հստակատես ծերության. օրհնում եմ արևածագն հանապազօրյա, և սիրտն իմ երգում է ծագող արևի դիմաց, ինչպես և առաջ, սակայն այժմ ավելի ևս սիրում եմ մայրամուտը նրա, երկար ու շեղ ճառագայթները նրա, և դրանց հետ՝ մեղմ, հեզահամբույր, գորովագին հիշատակները, սիրելի պատկերներն իմ ամբողջ երկար ու օրհնաշատ կյանքի, իսկ այդ բոլորի՞ վրա տարածվում է աստվածային ճշմարտությունը, որ գորովանքով է լցնում սիրտը, հաշտեցնում է և ամեն ինչ ներում։ Վերջանում է կյանքն իմ, գիտեմ և ընդունում եմ այդ, սակայն ինձ մնացյալ յուրաքանչյուր օրվա մեջ զգում եմ, թե ինչպե՞ս իմ երկրային կյանքն արդեն շփման մեջ է մտնում մի նոր, անհուն, անծանոթ, բայց շուտով գալիք կյանքի հետ, որի նախազգացումից թրթռում է իմ հոգին ցնծությամբ, փայլում է միտքս և ուրախությամբ արտասվում է սիրտն իմ...

Բարեկամներ և ուսուցիչնե՛ր, շատ անգամ լսել եմ, իսկ վերջերս ավելի ևս հաճախակի է լսվում, թե ինչպես մեր քահանաները, և մանավանդ գյուղական երեցները, աղիողորմ գանգատվում են ամենուրեք իրենց անբավարար ապրուստից և իրենց նվաստացուցիչ վիճակից. և ուղղակի հավաստիացնում են, նույնիսկ տպագիր (ինքս եմ կարդացել այս բանը), որ իբր թե չեն կարող այլևս սուրբ գիրքը մեկնաբանել ժողովրդին, որովհետև

անբավարար է իրենց ապրուստը, և եթե արդեն գալիս են լութերականներն ու հերետիկոսները և սկսում են խլել հավատացյալների հոտն իրենց ձեռքից, դե՜հ, ասում են նրանք, թո՛ղ խլեն, որովհետև անբավարար է մեր ապրուստը։ Աստվա՜ծ իմ. մտածում եմ՝ ամեն բանից ավելի տա՛ աստված այդ ապրուստը, որ այնքան թանկ է նրանց համար (որովհետև նրանց գանգատն ևս արդարացի է), բայց ճշմարիտ եմ ասում՝ եթե որևէ ոք մեղավոր է այստեղ, ապա մերն է մեղքի կեսը։ Որովհետև՝ դիցուք ժամանակ չունի քահանան, դիցուք իրավացիորեն ասում է նա, թե շարունակ ծանրաբեռնված է աշխատանքով ու ծիսակատարությամբ, բայց համենայն դեպս անընդհատ չէ, որ զբաղված է, ամբողջ շաբթու մեջ նա էլ ունի գեթ մի ժամ՝ աստուծո մասին ևս հիշելու համար։ Եվ վերջապես ամբողջ տարին չէ, որ աշխատում է նա։ Եթե շաբաթը մեկ անգամ, երեկոյան ժամին, սկզբում գեթ միայն երեխաներին ժողովի իր տանը, հայրերը կլսեն այդ մասին, հայրերը ևս կսկսեն գալ։ Եվ պալատներ շինել պետք չէ այս գործի համար, այլ պարզապես հրավիրիր քեզ մոտ՝ քո խրճիթը. մի վախենար, չեն կեղտոտի խրճիթը քո, ընդամենը մեկ ժամվա համար ես ժողովում նրանց։ Բա՜ց այս գիրքը նրանց առաջ և սկսիր ընթերցել առանց մեծամեծ խոսքերի և առանց գոռոզության, առանց ինքդ քեզ վեր դասելու նրանցից, այլ գորովանքով ու հեզությամբ, ուրախանալով, որ ընթերցում ես նրանց համար և լսում են քեզ ու հասկանում են քեզ, ի՜նքդ սիրելով խոսքերն այդ սուրբ, և լոկ մերթ ընդ մերթ կանգ առ ու բացատրիր այս կամ այն խոսքը, որ անհասկանալի է հասարակ մարդուն. մի՜ մտահոգվիր, ամեն ինչ կհասկանան, ամե՜ն ինչ կհասկանա ուղղափառ սիրտը։ Կարդա՜ նրանց Աբրահամի ու Սառայի մասին, Իսահակի ու Ռեբեկայի մասին, կարդա՜, թե ինչպես Հակոբը գնաց Լաբանի մոտ և իր երազում մաքառեց աստուծո հետ ու ասաց՝ «Ահեղ է տեղն այս», և տպավորություն կգործես հասարակ մարդու բարեպաշտ մտքի վրա։ Կարդա՜ նրանց, և հատկապես մանուկներին, թե ինչպես եղբայրներն ատրկության վաճառեցին իրենց հարազատ եղբորը՝ քաղցրաբարո պատանյակ Հովսեփին, որ տեսանող էր ու մեծ մարգարե, խակ իրենց հորն ասացին, թե մի վայրի գազան է նրան հոշոտել, և ցույց տվեցին արյունոտ պատմուճանը նրա։ Կարդա՜, թե ինչպես հետագայում եղբայրները Եգիպտոս եկան ցորեն ճարելու, և արդեն մեծ պալատական զարձած Հովսեփը, որին

եղբայրները չկարողացան ճանաչել, տանջեց նրանց, մեղադրեց, իր մոտ պահեց Բենիամին եղբորը, և այդ բոլորն արեց սիրելով. «Սիրում եմ ձեզ ու սիրելով տանջում»։ Չէ՞ որ նա իր ամբողջ կյանքում հիշում էր անդադար, թե ինչպես վաճառեցին իրեն առևտրականներին՝ տոթակեզ անապատի մեջ մի տեղ, ջրհորի մոտ, և ինչպես ինքը, ծնկները ծեծելով, աղի արցունք էր թափում և աղաչում էր եղբայրներին, որ չվաճառեն իրեն օտար երկրում որպես ստրուկի. և ահա, տեսնելով նրանց այնքան տարիներ հետո, անչափորեն սիրեց նրանց կրկին, բայց նեղեց ու տանջեց՝ սիրելով շարունակ։ Վերջապես թողեց նրանց ու քաշվեց իր առանձնարանը, չդիմանալով իր սեփական սրտի տառապանքին, նետվեց իր մահճի վրա և արտասվեց. հետո սրբեց արցունքը, դուրս եկավ պայծառափայլ դեմքով և հայտնեց նրանց. «Եղբայրնե՜ր, Հովսեփն եմ ես, եղբայրը ձեր»։ Այնուհետև կարդա՜ այն մասին, թե ինչպես ուրախացավ Հակոբ ծերունին, երբ իմացավ, որ դեռ ողջ է իր քաղցրաբարո տղան, ու ճանապարհ ընկավ դեպի Եգիպտոս, լքելով նույնիսկ երկիրը հայրենի, և մեռավ օտար երկրում, գալիք դարերին կրտակելով գերագույն խոսքը, որ նրա հեզ ու երկյուղած սրտում անիմանալիորեն տեղ էր գտել ամբողջ կյանքի ընթացքում, այն խոսքը, թե իր ազգից՝ Հուդայի ցեղից է դուրս գալու մեծ ակնկալությունն աշխարհի՝ հաշտարարն ու փրկիչը նրա։ Հայրեր և ուսուցիչնե՜ր, ներողամիտ եղեք ու մի՜ բարկանաք, որ փոքր մանկան նման խոսում եմ այն բաներից, որոնք արդեն վաղուց գիտեք և ինքներդ ինձ կարող եք ուսուցանել՝ հարյուրապատիկ ավելի հմտորեն ու վայելուչ կերպով։ Ցնծությունն է լոկ մղում ինձ ասելու այս բաները, և ներեցեք արտասուքն իմ, քանզի սիրում եմ գիրքն այս սրբազան։ Թո՜ղ արտասվի և նա՝ քահանայն աստուծո, և կտեսնի, որ կցնցվեն իր ունկնդիրների սրտերն ի պատասխան։ Հարկավոր է լոկ փոքրիկ, մանրիկ մի սերմ. թո՜ղ նետի այդ սերմը հասարակ մարդու հոգու մեջ, և չի մեռնի դա, կապրի նրա հոգու մեջ ամբողջ կյանքում, պահված կմնա այնտեղ՝ խավարի մեջ, նրա մեղքերի աղտեղության մեջ, լուսավոր կետի նման, որպես մի մեծ հիշեցում։ Եվ հարկ չկա, հարկ չկա շատ բացատրելու և ուսուցանելու, նա ամեն ինչ կհասկանա պարզորեն։ Կարծո՞ւմ եք արդյոք, թե չի հասկանա ռամիկ մարդը։ Փորձեցեք կարդալ նրան հուզիչ ու սրտառուչ պատմությունը գեղեցիկ Եսթերի և գոռոզ Ասթինեի մասին. և կամ հրաշալի

պատումը՝ կետ ձկան փորի մեջ ընկած Հովնան մարգարեի մասին։ Մի՛ մոռանաք նաև մեր փրկչի առակները՝ նախընտրաբար ըստ Ղուկասու ավետարանի (այդպես էի անում ես), և ապա «Գործք առաքելոց»-ից՝ Սավուղի դարձը (այս մեկն անպայմա՛ն, անպայմա՛ն), ու վերջապես նաև «Վարք սրբոց»-ից՝ գոնե աստուծո մարդ Ալեքսեյի վարքը, ինչպես և մեծամեծ ու բերկրաշատ մարտիրոսուհու, աստվածատես ու քրիստոսակիր մայր Մարիամ Եգիպտացու վարքը. և այս պարզ պատմություններով խորապես կհուզես սիրտը ռամիկ մարդու։ Մեկ ժամ ընդամենը շաբաթվա մեջ, լոկ մի փոքր ժամ՝ չնայած քո անբավարար ապրուստին։ Եվ ինքդ կտեսնես, որ գթառատ է ժողովուրդը մեր և երախտագետ, հարյուրապատիկ ավելի կփոխհատուցի շնորհակալությամբ. հիշելով ջերմեռանդ հոգատարությունն ու գորովալից խոսքերն իր քահանայի, կամավորաբար կօգնի նրան արտում, կօգնի նաև նրա տան աշխատանքներին, և հարգանքն էլ ավելի մեծ կլինի, քան առաջ. ահա և կբարգավաճի ապրուստը քահանայի։ Խնդիրն այնքան պարզունակ է, որ երբեմն վախենում ենք նույնիսկ արտահայտվել այդ մասին, որովհետև կծիծաղեն մե՛ր իսկ վրա, և սակայն որքա՜ն ճշմարիտ է այս բանը։ Ով չի հավատում աստուծո, նա չի հավատա նաև աստուծո ժողովրդին։ Իսկ ով որ արդեն սկսել է հավատալ աստուծո ժողովրդին, նա կտեսնի նաև սրբությունն աստուծո, թեկուզ և մինչ այդ ինքն ամենևին հավատացած չլինի դրան։ Միայն ժողովուրդը և նրա ապագա հոգևոր ուժը դարձի կբերի մեր անաստվածներին, որոնք կտրվել են մայր հողից։

Եվ ի՞նչ Քրիստոսի խոսք, եթե օրինակ չես տալիս։ Կկործանվի ժողովուրդն առանց աստվածային խոսքի, վասնզի նրա հոգին ծարավի է խոսքի և որևէ գեղեցիկ ընկալման։ Իմ երիտասարդության օրերին, արդեն վաղուց, գրեթե քառասուն տարի առաջ, հայր Անֆիմի հետ թափառում էինք ամբողջ Ռուսաց աշխարհում, նվիրատվություններ հավաքելով մեր վանքի համար, և մի անգամ գիշերեցինք մեծ ու նավարկելի գետի ափին, ձկնորսների հետ. ու մեզ հետ նստեց վայելչատես մի պատանի՝ մոտ տասնութ տարեկան մի գյուղացի, որ շտապում էր հաջորդ օրը հասնել իր տեղը՝ առևտրական պարանաքարշ մի լաստանավի լծվելու և քաշելու համար։ Տեսնում եմ՝ նա գորովագին ու վճիտ հայացքով նայում է իր առաջը։ Հուլիսյան լուսավոր, մեղմ, տաք գիշեր էր, գոլորշի էր բարձրանում լայնահուն գետից ու

զովացնում մեզ, երբեմն թեթևակի ճողփում էր մի ձկնիկ, թռչունները լռել էին, ամեն ինչ խաղաղ էր, վեհաշունչ, ամեն ինչ աղոթում էր առ աստված։ Ու միայն մենք երկուքս չէինք քնում՝ այդ պատանին ու ես, տարվել էինք աստուծո այս աշխարհի գեղեցկության ու մեծ խորհուրդի մասին խոսելով։ Ամեն մի դալարիկ, ամեն մի բզեզ, մրջյուն ու ոսկեփայլ մեղվիկ, բոլո՜ր բոլորը զարմանալիորեն գիտեն իրենց ուղին, առանց խելք ունենալու, աստվածային խորհուրդն են վկայում և իրենք իսկ անընդհատ իրագործում են խորհուրդն այն։ Ու տեսա՝ բռնկվել է սիրտը բարեհամբույր պատանու։ Ասաց նա ինձ, թե սիրում է անտառը, թռչուններն անտառային. թռչնորս էր, հասկանում էր ամեն մի ճռվողյունը նրանց, կարող էր ամեն մի թռչուն հրապուրել իր ձայնով. չգիտեմ, ասաց, կա՞ ավելի լավ բան, քան անտառում լինելը, թեև ամեն ինչ լավ է։ «Ճշմարի՞տ է,— պատասխանեցի նրան,— ամեն ինչ լավ է ու հոյակապ, որովհետև ամեն ինչ ճշմարտություն է։ Նայի՛ր ձիուն,— ասացի,— խոշոր կենդանի է և մարդամոտ, կամ նայիր եզան՝ կորացած ու խոհուն այդ արարածին, որ սնում է մարդուն և աշխատում նրա համար, նայիր նրանց դեմքերին՝ ի՞նչ հեզություն, ի՞նչ նվիրվածություն մարդու նկատմամբ, որ հաճախ անգթորեն ծեծում է նրանց, տե՛ս, թե ի՞նչ անհիշաչարություն, ի՞նչ դյուրավստահություն և ի՞նչ գեղեցկություն կա նրանց դեմքին։ Մինչև իսկ հուզիչ է գիտենալ, թե նրանք զերծ են որևէ մեղքից, որովհետև, բացի մարդուց, ամե՞ն ինչ կատարյալ է, ամե՞ն ինչ անմեղ է, և դեռ մեղնից առաջ նրանց հետ է Քրիստոսը»։— «Բայց միթե նրա՞նք էլ Քրիստոս ունեն»,— հարցրեց պատանին։ «Իսկ ինչպե՞ս կարող է լինել այլ կերպ,— ասացի նրան,— քանի որ աստուծո խոսքը բոլորի համար է, ամբո՞ղջ արարչությունը, ամբողջ կենդանի աշխարհը, ամե՞ն մի տերև ձգտում է խոսքին, փառք է երգում աստուծո, արտասվում է Քրիստոսին, և կատարում է այս բանն անգիտորեն, իր անմեղ կյանքի խորհուրդով։ Ահա այնտեղ, անտառում,— ասացի նրան,— թափառում է զարհուրելի արջը, վայրագ ու ահարկու, և ոչ մի կերպ մեղավոր չէ, որ այդպիսին է ինքը»։ Եվ պատմեցի նրան, թե ինչպես մի անգամ արջը եկել է մի մեծ սուրբի մոտ, որ ճգնում էր անտառում՝ փոքրիկ խուցի մեջ, ու մեծ սուրբը գթացել է արջին, անվախորեն ելել է նրան ընդառաջ և հաց է տվել մի կտոր, ասելով՝ «Գնա, Քրիստոս ընդ քեզ», և վայրագ գազանը հեռացել է հլու և հնազանդ,

առանց վնաս տալու։ Եվ պատանին խանդաղատանքով լցվեց վան այնորիկ, որ արշը հեռացել է առանց վնաս տալու, և որ Քրիստոս նրա հետ է նմանապես։ «Ա՜խ, ինչ լա՜վ է,— ասաց նա,— ի՜նչ լավ ու հրաշալի է ամեն ինչ, որ ստեղծել է աստված»։ Նստել էր մտասույզ՝ մեղմանուշ խոհերով տարված։ Տեսա, որ հասկացել է։ Ու քնեց ինձ մոտ թեթև ու անմեղ քնով։ Օրհնյա՛, տե՛ր, զպատանեկություն։ Եվ ինքս, պառկելով քնելու, աղոթեցի նրա համար։ Տե՛ր, խաղաղություն ու լույս առաքիր քո մարդկանց։

գ) Հուշեր սրբահայր Զոսիմայի պատանեկության ու երիտասարդության տարիներից, երբ դեռ ապրում էր աշխարհիկ կյանքով։

Մենամարտը։

Երկար մնացի Պետերբուրգի կադետական դպրոցում, համարյա ութ տարի, և նոր դաստիարակությունը շատ բան մշուշապատեց իմ մանկական տպավորություններից, թեև ոչինչ չմոռացա։ Դրա փոխարեն բազում նոր սովորույթներ ու նույնիսկ կարծիքներ որդեգրեցի, և այնքան, որ դարձա գրեթե վայրի, դաժան ու անհեթեթ մի արարած։ Ֆրանսերենի հետ միասին ձեռք բերեցի նաև բարեկրթության ու բարձրաշխարհիկ վարվելակերպի արտաքին փայլը, սակայն բոլորս էլ կատարյալ անասուններ էինք համարում մեզ ծառայող զինվորներին, ու ես՝ նույնպես։ Ու գուցե ես անձամբ ամենից ավելի էի այդպես համարում, որովհետև իմ բոլոր մյուս ընկերներից ավելի շուտ էի ընկալում ամեն ինչ։ Երբ շրջանավարտ եղանք որպես սպաներ, պատրաստ էինք մեր արյունը թափելու մեր գնդի պատվին հասցված վիրավորանքի համար, բայց մեզնից գրեթե ոչ ոք չգիտեր, թե ինչ բան է իսկական պատիվը, իսկ եթե իմանար դիցուք, առաջինն ինքը իսկույն ծաղրանքի առարկա կդարձներ այդ բանը։ Հարբեցողությունը, ցոփ ու շվայտ կյանքը, կտրիճությունը հպարտության պես մի բան էին մեզ համար։ Չեմ ասի, թե վատ էինք մենք. բոլոր այդ երիտասարդները լավ մարդիկ էին, բայց վատ էին պահում իրենց, ու ես՝ բոլորից ավելի, մանավանդ որ իմ սեփական դրամագլուխն ունեցա, ուստի և սկսեցի ապրել իմ հաճույքի համար, պատանեկան ամբողջ թափով, անսանձորեն անձնատուր եղա այդ զեղխ կյանքի հոսանքին։ Արդ, զարմանալի բան, այն ժամանակ գրքեր էլ էի կարդում ու նույնիսկ մեծ հաճույքով, բայց Աստվածաշունչն այն միակ գիրքն էր, որ գրեթե երբեք չէի բացում, թեև երբեք չէի բաժանվում նրանից, ամեն տեղ հետս էի տանում. արդարև, ինքս էլ չիմանալով, պահպանում էի այդ գիրքը՝ գալիք «օրվա և ժամի, ամսվա ու տարվա համար»։ Չորս տարի այդպես ծառայելուց հետո, վերջապես պատահեց, որ ընկա Կ. քաղաքը, ուր օթևանել էր մեր գունդն այն ժամանակ։ Քաղաքի հասարակությունը բազմամարդ էր ու այլազան, կենսուրախ, հյուրասեր ու հարուստ, իսկ ինձ ամենուրեք լավ էին ընդունում, որովհետև ի բնե օժտված էի ուրախ բնավորությամբ և, բացի այդ, ունևոր մարդ էի համարվում, մի հանգամանք, որ բավական կարևոր նշանակություն ունի բարձրաշխարհիկ կյանքում։ Եվ ահա պատահեց մի բան, որից և ծայր առավ ամեն ինչ։

Բարեկամացա մի երիտասարդ ու գեղեցիկ, խելացի ու արժանավոր օրիորդի հետ, որ պայծառ, ազնիվ նկարագրի տեր էր, պատվարժան ծնողների դուստր։ Ականավոր մադիկ էին՝ հարուստ, դիրքի տեր ու ազդեցիկ, ինձ ընդունում էին սիրալիր ու գրկաբաց։ Ու մեկ էլ ահա ինձ թվաց, թե օրիորդը սրտագին հակում ունի իմ նկատմամբ, և բռնկվեց սիրտն իմ այդպիսի ցնորքից։ Հետագայում, անշուշտ, ինքս վերահասու եղա ու լրիվ հասկացա, որ գուցե բնավ էլ այնքան ուժեղ չէի սիրում նրան, այլ լոկ մեծարում էի նրա վսեմ միտքն ու նկարագիրը, և արդարև՝ չէի կարող չմեծարել։ Անձնասիրությունը, սակայն, խանգարեց ինձ այն ժամանակ նրա ձեռքը խնդրելու. ծանր ու սարսափելի թվաց հրաժարվել ամուրի և ազատ, անառակ կյանքի գայթակղություններից՝ այդպիսի ծաղկուն տարիքում, երբ նաև փող ունեի ի լրումն ամենայնի։ Բայց և այնպես որոշ ակնարկություն արեցի։ Համենայն դեպս, առժամապես հետաձգեցի որևէ վճռական քայլի դիմելը։ Եվ այդ օրերին էլ հանկարծ այնպես պատահեց, որ ինձ մի ուրիշ գավառ գործուղեցին երկու ամսով։ Վերադառնում եմ երկու ամիս հետո և հանկարծ իմանում, որ օրիորդն արդեն ամուսնացել է քաղաքամերձ հարուստ մի կալվածատիրոջ հետ. այդ մարդը թեև ինձնից ավելի տարեց էր, բայց երիտասարդ էր տակավին, կապեր ուներ մայրաքաղաքում և լավագույն հասարակության մեջ, մի բան, որ ես չունեի, շատ սիրալիր ու առավել ևս զարգացած մարդ էր, իսկ զարգացում ասված բանը ես բոլորովին չունեի։ Այնպես էի ցնցվել այդ անակնկալ դեպքից, որ նույնիսկ գիտակցությու-

՝նրս մթագնեց։ Իսկ գլխավորն այն էր, որ, ինչպես հենց այն ժամանակ էլ իմացա, երիտասարդ կալվածատերն արդեն վաղուց օրիորդի նշանածն էր եղել, և որ ինքս նրան բազմիցս հանդիպել էի այդ տանը, բայց ոչինչ չէի նկատել, իմ սեփական արժանիքներով կուրացած։ Բայց ճիշտ ա՜յդ էր, որ ամենից ավելի վիրավորեց ինձ. ինչպե՜ս թե, համարյա բոլորը գիտեին, և միայն ե՞ս ոչինչ չգիտեի։ Ու հանկարծ անտանելի զայրույթ զգացի։ Կարմրած դեմքով սկսեցի հիշել, թե ինչպես շատ անգամ գրեթե իմ սերն էի արտահայտել օրիորդին, և քանի որ նա չէր կանգնեցրել ինձ ու չէր նախազգուշացրել, ուրեմն, եզրակացրի, ծիծաղում էր ինձ վրա։ Հետագայում, անշուշտ, կշռադատեցի և հիշեցի, որ նա բնավ երբեք չէր ծիծաղել, այլ ընդհակառակն՝ ինքն իսկ կատակով ընդհատում էր այդպիսի խոսակցությունները և դրանց փոխարեն ուրիշ բաների մասին էր սկսում խոսել միշտ։ Բայց այդ պահին անկարող եղա կշռադատելու և սկսեցի վրիժառությամբ վառվել։ Զարմանքով եմ հիշում, որ իմ այդ վրիժառության զգացումն ու զայրույթը ինձ համար իսկ ծայր աստիճան տաժանելի էին ու նողկալի, որովհետև, անոխակալ բնավորություն ունենալով, ոչ ոքի վրա չէի կարող երկար ժամանակ բարկանալ, ուստի և ինքս էի կարծես արհեստականորեն բորբոքում ինձ և ի վերջո դարձա այլանդակ ու անհեթեթ։ Հարմար առիթի սպասեցի և մի անգամ, բազմամարդ հասարակության մեջ, կարողացա հանկարծ վիրավորանք հասցրնել իմ «ախոյանին», իբրև թե բոլորովին կողմնակի մի պատճառով. ծիծաղեցի իր մի կարծիքի վրա, որ նա հայտնեց՝ այն ժամանակ կարևոր նշանակություն ունեցող մի իրադարձության մասին,— քսանվեց թվականին էր,— և կարողացա սրամիտ ու ճարտար ծաղրի ենթարկել նրան, այդպես էին ասում մարդիկ։ Ապա ստիպեցի, որ բացատրություն պահանջի ինձնից, և բացատրության ժամանակ արդեն այնքան կոպիտ վարվեցի, որ նա ընդունեց իմ մարտահրավերը, հակառակ մեր միջև եղած հասկայական տարբերության, քանզի թե՛ ավելի երիտասարդ էի, թե՛ ցածր աստիճան ունեցող աննշան մի մարդ։ Հետագայում արդեն հաստատ իմացա, որ նա մարտահրավերն իմ ընդունել էր նույնպես մի տեսակ խանդի զգացումից մղված. առաջ ևս փոքր ինչ խանդում էր ինձ իր կնոջ նկատմամբ, որ այն ժամանակ հարսնացուն էր տակավին. իսկ այս առթիվ մտածել էր, որ եթե ինձնից վիրավորանք կրելուց հետո սիրտ չանի մե-

նամարտելու, ապա կինը կարող է իմանալ և ակամա կսկսի արհամարհել իրեն ու կխախտվի նրա սերն իր նկատմամբ։ Շուտով մարտավկա ճարեցի՝ մեր գնդի սպա էր, իմ ընկերը։ Թեև մենամարտերը խստագույնս հետապնդվում էին այն ժամանակ, բայց զինվորականների միջև կարծես նույնիսկ նորաձևություն էին դրանք. երբեմն ա՜յն աստիճան վայրենաբար ուռճանում ու զորանում են նախապաշարումները։ Հունիսի վերջն էր, և ահա պետք է հաջորդ օրը հանդիպեինք քաղաքից դուրս, առավոտյան ժամը յոթին. ու հիրավի, հանկարծ մի տեսակ ճակատագրական բան պատահեց ինձ այդ միջոցին։ Երեկոյան, կատաղած ու այլանդակ տրամադրությամբ տուն վերադառնալով, զայրացա իմ համհարզ Աֆանասիի վրա և ամբողջ ուժով հարվածեցի նրա դեմքին երկու անգամ, այնպես որ արյունաշաղախ արեցի դեմքը։ Վաղուց չէ, որ նա ծառայում էր ինձ, և առաջ էլ պատահել էր, որ հարվածել էի նրան, բայց երբեք այդպիսի գազանային դաժանությամբ։ Եվ կհավատա՞ք, սիրելի՛ ընկերներ իմ, քառասուն տարի է անցել, բայց այժմ ևս ամոթով ու ցավով եմ հիշում այդ։ Պառկեցի ու քնեցի մոտ երեք ժամ, և երբ զարթնեցի՝ լույսը բացվում էր արդեն։ Հանկարծ վերկացա, չուզեցի այլևս քնել, մոտեցա լուսամուտին, բացեցի՝ պարտեզն էր առաջս. տեսնում եմ՝ ծագում է արևը, տաք է, գեղեցիկ, սկսել են ճուլոզել թռչունները։ Բայց ի՞նչ է այս, մտածեցի, ինչո՞ւ ամոթալի և ստոր մի բան եմ զգում սրտիս մեջ։ Չլինի՞ այն պատճառով, որ գնում եմ արյուն թափելու։ Ոչ, մտածեցի, կարծես թե այդ չէ պատճառը։ Չլինի՞ թե մահից եմ վախենում, վախենում եմ, թե կսպանվեմ։ Ոչ, բոլորովին այդ չէ, բնավ էլ այդ չէ, բնավ... Եվ հանկարծ միանգամից հասկացա, թե ինչ էր. այն, որ երեկոյան ծեծել էի Աֆանասիին։ Ամեն ինչ վերստին պատկերացավ աչքիս, կարծես կրկնվեց նորից. կանգնել է նա իմ առաջ, ես թափով հարվածում եմ ուղղակի դեմքին, իսկ նա ձեռքերը պահել է կողերն ի վար, գլուխը բարձր, աչքերը չռած՝ ասես զգաստ կանգնել է շարքում, ցնցվում է ամեն մի հարվածի հետ և նույնիսկ չի համարձակվում ձեռքերը բարձրացնել պաշտպանվելու համար. և մա՜րդն է այդ վիճակին հասցված, և մա՜րդն է ծեծում մարդուն։ Ինչպիսի՜ հանցագործություն։ Կարծես մի սուր ասեղ մխրճվեց հոգվույս մեջ ու ծակեց անցավ։ Կանգնել էի ցնդածի նման, մինչ փայլո՜ւմ էր արևը, տերևները ցնծում էին, փայլում, իսկ թռչունն՝ ը, թռչունները գովքն էին երգում աս-

տուծո... Երեսն իմ ծածկեցի երկու ափերով, ընկա իմ մահճին և աղի արցունք թափեցի։ Ու այդ պահին հիշեցի եղբորն իմ՝ Մարկելին, և այն խոսքերը, որ մահվան շեմին ասաց նա ծառաներին. «Սիրելինե՛ր իմ, թանկագիննե՛ր, ինչո՞ւ եք ծառայություն մատուցում ինձ, ինչո՞ւ եք ինձ սիրում, և արժանի՞ եմ արդյոք, որ ինձ ծառայություն մատուցեն»։— «Այո, արժանի՞ եմ արդյոք»,— փայլատակեց հանկարծ իմ մտքում։ Արդարև, ինչո՞վ եմ արժանի, որ ինձ նման մի ուրիշ մարդ, նույնպես աստուծո պատկերով ու նմանությամբ ստեղծված, ինձ ծառայի։ Եվ այդ հարցն ուղղակի մխվեց իմ ուղեղի մեջ այդ պահին՝ առաջին անգամ իմ կյանքում։ «Մայրի՛կ, դու իմ սրտի՛կ սիրասուն, իսկապես յուրաքանչյուր ոք մեղավոր է բոլորի առաջ՝ բոլորի համար, միայն թե մարդիկ չգիտեն այդ, իսկ եթե իմանային՝ դրա՞խտ կլիներ իսկույն»։ Աստված իմ, միթե ա՞յս էլ կարող է սխալ լինել,— մտածում էի արտասվելով,— գուցե իրոք, ես բոլորից ավելի մեղավոր եմ բոլորի համար, և ավելի վատթար, քան աշխարհի բոլոր մարդիկ։ Եվ հանկարծ ամբողջ ճշմարտությունը երևաց ինձ՝ իր լրիվ պայծառությամբ. ի՞նչ եմ գնում անելու։ Գնում եմ սպանելու մի բարի, խելացի, ազնիվ մարդու, որ ոչ մի հանցանք չի գործել իմ դեմ, և այդպիսով նրա կնոջն ևս ընդմիշտ զրկած կլինեմ երջանկությունից, տանջանքների մատնած ու սպանած կլինեմ։ Այդպես մահճիս վրա պառկել էի երեսնիվայր, դեմքս բարձին, և չնկատեցի ամենևին, թե ինչպես անցավ ժամանակը։ Հանկարծ, ատրճանակը ձեռքին, ներս մտավ իմ ընկեր սպան՝ ինձ մենամարտի տանելու. «Ա՜յ, լավ է, որ արդեն վեր ես կացել,— ասաց,— ժամանակն է, գնա՛նք»։ Սկսեցի այս ու այն կողմ նետվել, գլուխս կորցրի բոլորովին, բայց և այնպես դուրս եկանք, որ կառք նստենք»։ «Սպասիր այստեղ մի քիչ,— ասացի նրան,— ներս վազեմ մի վայրկյան, դրամապանակս մոռացել եմ»։ Ու ետ վազեցի առանձին, ուղղակի Աֆանասիի նեղլիկ սենյակը։ «Աֆանասի,— ասացի,— երեկ ես երկու անգամ հարվածեցի քո դեմքին. ներիր ինձ»,— ասացի։ Ուղղակի ցնցվեց նա, կարծես վախեցավ, նայեց երեսիս, ու տեսա, որ քիչ է այդ, քիչ, և հանկարծ, տեղն ու տեղը, հենց սպայական համազգեստով և ուսադիրներով, շիփ-շիտակ ընկա ոտքերը, ճակատս գետնին։ «Ների՞ր ինձ»,— ասացի։ Այստեղ արդեն կատարելապես շշմեց նա. «Ձերդ ազնվություն, տե՛ր իմ, բայց ինչպե՞ս դուք... արժանի՞ եմ որ...», և հանկարծ նա փղձկաց ու սկսեց արտաս-

վել ճիշտ այնպես, ինչպես ինքս էի աղի արցունք թափել մի ժամ առաջ, երկու ափերով ծածկեց դեմքը, դարձավ լուսամուտին և ամբողջ մարմնով սկսեց ցնցվել հեծկլտանքներից, իսկ ես վազեցի ընկերոջս մոտ, ցատկեցի կառքը, «քշի՛ր» գոռացի։ «Տեսե՞լ ես հաղթական մարդու,— դիմեցի ընկերոջս գոռալով,— ահա՛ հիմա տեսնում ես քո առաջ»։ Այնպիսի՞ մի ցնծություն էր մեջս, ծիծաղում էի, խոսում ամբողջ ճանապարհին, էլ չեմ հիշում, թե ինչեր էի ասում։ Նայում էր նա ինձ ու «է՞հ, ախպերս,— ասաց,— ապրե՛ս, կտրիճ տղա ես. տեսնում եմ՝ բարձր կպահես համազգեստիդ պատիվը»։ Այդպես հասանք նշանակված տեղը, իսկ մյուսներն այնտեղ էին արդեն, մեզ էին սպասում։ Կանգնեցրին մեզ իրարից տասներկու քայլ հեռու, առաջին կրակոցը նրանն էր. ուրախ կանգնել էի նրա դիմաց, ուղղակի դեմառդեմ, հանգիստ ու սիրազեղ հայացքով նայում էի նրան, գիտեի, թե ինչ եմ անելու։ Կրակեց. գուլպն ինչ քերծվեց այստեղ և մի քիչ էլ ականջիս դիպավ, ուրիշ ոչինչ։ «Փա՜ռք աստուծո,— գոռացի,— մարդ չսպանեցինք»։ Ու վերցրի իմ ատրճանակը, ետ դարձա, վեր շպրտելով նետեցի անտառի մեջ. «Ա՛յդ է քո տեղը»,— գոռացի։ Դարձա իմ հակառակորդին. «Մեծահարգ տի՛ր,— ասացի,— ներեցե՛ք ինձ՝ հիմար երիտասարդիս, ներեցե՛ք, որ ինքս մեղավոր լինելով՝ ծանր վիրավորանք պատճառեցի ձեզ, իսկ այժմ էլ ստիպեցի, որ կրակեք ինձ վրա։ Ինքս տասնապատիկ վատթար եմ ձեզնից, գուցե և ավելի։ Հաղորդեցեք այս բանը այն անձնավորության, որին ամենից ավելի եք հարգում աշխարհիս երեսին»։ Հազիվ էի ասել այս խոսքը, իսկույն երեքը միասին սկսեցին գոռգոռալ։ «Բայց ներեցեք խնդրեմ,— ասաց հակառակորդն իմ ու բարկացավ նույնիսկ,— եթե չէիք ուզում մենամարտել, ինչո՞ւ ինձ անհանգստացրիք»։— «Երեկ հիմար էի տակավին,— ասացի նրան,— իսկ այսօր խելոքացա»։ Այդպես պատասխանեցի ուրախ սրտով։ «Երեկվա մասին հավատում եմ,— ասաց,— բայց այսօրվա մասին դժվար է ձեր կարծիքին հանգել»։— «Բռավո՜,— գոռացի ծափ զարնելով,— այդ բանում էլ համաձայն եմ ձեզ հետ, արժանի եմ դրան»։— «Կրակելո՞ւ եք թե չէ, հարգելի տիար»։— «Չեմ կրակելու,— ասացի,— իսկ դուք, եթե ուզում եք, նորից կրակեցեք, միայն թե ավելի լավ կլիներ, որ չկրակեիք»։ Գոռում էին նաև մարտավկանները, հատկապես իմը. «Այսպես խայտառակե՞լ մեր գունդը, պատնեշի՞ վրա ներողություն խնդրել. եթե սկզբից իմա-

նայի՞»։ Լսելով այդ, արդեն առանց ծիծաղելու կանգնեցի բոլորի առաջ։ «Պարոնայք իմ,— ասացի,— միթե իրո՞ք մեր այս օրերին այնքան զարմանալի է հանդիպել մի մարդու, որ զղջում է իր հիմարության համար և հրապարակով խոստովանում է իր իսկ գործած հանցանքը»։— «Բայց ո՞չ թե պատնեշի վրա»,— գոռաց նորից իմ մարտավկան։ «Հենց այդ է ահա,— պատասխանեցի,— այդ է զարմանալին, որովհետև ես պետք է իմ հանցանքը խոստովանեի անմիջապես, որ եկանք այստեղ, դեռ նրա կրակելուց առաջ, ու պետք չէ նրան առիթ տայի մի մեծ ու մահացու մեղք գործելու. բայց մենք այնքա՜ն այլանդակ մի կյանք ենք ստեղծել մեզ համար, որ այդպես վարվելն անհնար էր գրեթե, որովհետև հիմա՛ միայն, տասներկու քայլից նրա կրակոցը դիմագրավելուց հետո, իմ խոսքերը կարող են արդեն որևէ նշանակություն ստանալ նրա համար, իսկ եթե կրակոցից առաջ խոսեի, երբ նոր էինք եկել այստեղ, նա պարզապես կասեր՝ վախկոտ է, ատրճանակից սոսկաց, շարժե նրան լսել։ Պարոնա՞յք,— բացականչեցի հանկարծ ի խորոց սրտի,— նայեցեք չորս կողմ՝ աստուծո բարիքներին. պայծառ երկինք, վճիտ օդ, քնքուշ խոտեր, թռչնակներ, գեղեցիկ ու անմեղ բնություն, և մենք, մե՛նք ենք միայն անաստված ու հիմար և չենք հասկանում, թե դրախտ է կյանքը, որովհետև բավական է, որ ուզենք հասկանալ, և իսկույն կտիրի դրախտն իր ամբողջ գեղեցկությամբ, կգրկենք իրար ու կարտասվենք...»։ Ուզում էի շարունակել տակավին, բայց չկարողացա, նույնիսկ շունչս կըտրվեց այնպե՜ս քաղցրորեն, պատանեկան այնպիսի՜ ավյունով, և սիրտն իմ լեցուն էր այնպիսի՜ երջանկությամբ, որի նմանը երբեք չէի զգացել իմ ամբողջ կյանքում։ «Այս բոլորը ողջամիտ ու բարեպաշտ խոսքեր են,— ասաց հակառակորդն իմ,—և համենայն դեպս դուք ինքնատիպ մարդ եք»։— «Ծիծաղեցեք,— ասացի ես էլ ծիծաղելով,— իսկ հետո ինքներդ կգովեք»։— «Բայց ես հիմա էլ պատրաստ եմ գովելու,— ասում է,— համեցեք, ձեռքս եմ մեկնում ձեզ, որովհետև ինձ թվում է, թե դուք իսկապես անկեղծ մարդ եք»։— «Ոչ,— ասում եմ,— հիմա պետք չէ. երբ ավելի լավ մարդ դառնամ և արժանի լինեմ ձեր հարգանքին, այն ժամանակ կմեկնեք ձեր ձեռքը, և լավ կանեք»։ Վերադարձանք տուն, իմ մարտավկան ամբողջ ճանապարհին նախատում էր ինձ, իսկ ես համբուրում էի նրան։ Բոլոր ընկերներս իսկույն լսեցին պատահածը, նույն

օրն իսկ հավաքվեցին իմ դատաստանը տեսնելու, այսինքն թե՝ «համազգեստն է արատավորել, թող հրաժարական տա»։ Պաշտպանողներ էլ եղան. «Համենայն դեպս կանգնել է կրակոցի դեմ»,— ասացին նրանք։ «Այո, բայց վախեցել է հաջորդ կրակոցներից և պատնեշի վրա ներողություն է խնդրել»։— Եթե վախենար կրակոցներից,— առարկում էին պաշտպանողները,— ներողություն խնդրելուց առաջ նախ իր ատրճանակից կկրակեր, այնինչ նա անտառն է նետել իր լեցուն ատրճանակը. չէ՞, մի ուրիշ բան է եղել այստեղ, ինքնատիպ մի բան»։ Լսում էի և ուրախանում նրանց նայելով։ «Իմ շատ սիրելի բարեկամներ ու ընկերներ,— ասացի,— մի՛ անհանգստանաք իմ հրաժարական տալու առնչությամբ, որովհետև արել եմ արդեն այդ բանը, արդեն հրաժարական եմ տվել, այսօր իսկ առավոտյան, գրասենյակում, և երբ իմ հրաժարականն ստանամ, իսկույն ևեթ վանք եմ մտնելու, այդ պատճառով էլ հեռանում եմ զինվորական ծառայությունից»։ Հազիվ էի ասել այդ, բոլորը միանգամից քահ-քահ ծիծաղեցին. «Դե հենց սկզբի՞ց ասեիր, հիմա ամեն ինչ պարզ եղավ, վանականին չի կարելի դատել»։ Ծիծաղում էին, չէին կարողանում զսպել, և բնավ հեգնական չէր նրանց ծիծաղը, այլ սիրալիր էր մի տեսակ, ուրախ. սիրեցին հանկարծ ինձ բոլորը, նույնիսկ ամենամոլի մեղադրողները, կարծես ձեռքի վրա էին պահում ինձ. «Ա՜յ դու վանական»,— ասում էին։ Եվ ամեն մեկը սիրալիր մի խոսք էր ասում ինձ, ըսկըսեցին տարհամոզել, ափսոսալ նույնիսկ. «Ի՞նչ օրի ես մատնում ինքդ քեզ»։— «Չէ,— ասում էին,— նա քաջ տղա է, կրակոցի դեմ կանգնեց և իր ատրճանակից էլ կարող էր կրակել, բայց նախորդ գիշերը երազ է տեսել, որ վանական դառնա, ա՜յ թե ինչն է եղել պատճառը»։ Համարյա նույն բանը կատարվեց նաև քաղաքի հասարակության մեջ։ Առաջ հատուկ ուշադրություն չէին դարձնում ինձ, այլ պարզապես սրտաբաց ընդունում էին, իսկ այժմ հանկարծ բոլորը միանգամից նկատեցին ու սկսեցին իրար ձեռքից խլելով հրավիրել. ծիծաղում էին ինձ վրա, այլև սիրում էին ինձ։ Ասեմ իսկույն, որ թեև բոլորն այն ժամանակ բացեիբաց խոսում էին մեր մենամարտի մասին, բայց հրամանատարությունը կոծկեց այդ գործը, որովհետև իմ հակառակորդը մեր գեներալի մոտիկ ազգականն էր. ու քանի որ արյունահեղություն չէր եղել, այլ կատակի նման մի բան, և վերջապես ես էլ հրաժարական էի տվել, ուստի իրոք

կատակի վերածեցին խնդիրը։ Այդ պարագային ես էլ սկսեցի խոսել բացեիբաց և աներկյուղ, չնայած նրանց ծիծաղին, որովհետև այդ ծիծաղը չարամիտ չէր այնուամենայնիվ, այլ բարի։ Իսկ այդ խոսակցությունները տեղի էին ունենում առավելապես երեկոյան, կանանց շրջանակում. կանայք ավելի էին սիրում լսել ինձ այն ժամանակ և տղամարդկանց ևս ստիպում էին լսել։ «Բայց ինչպե՞ս կարելի է, որ ես մեղավոր լինեմ բոլորի փոխարեն,— ծիծաղում էր ամեն ոք իմ երեսին,— ա՛յ, օրինակ, ձեր փոխարեն կարո՞ղ եմ մեղավոր լինել»։— «Բայց ինչպե՞ս կարող եք ըմբռնել այդ,— պատասխանում էի,— երբ վաղուց արդեն ամբողջ աշխարհը հակառակ ուղիով է ընթացել, և երբ իսկական սուտը ճշմարտություն ենք համարում ու դեռ ուրիշներից էլ նույնպիսի սուտ ենք պահանջում։ Ահա ես իմ կյանքում մեկ անգամ ելա ու անկեղծ վարվեցի, և ի՞նչ, կարծես աստուծո խենթը դարձա բոլորիդ համար. թեև սիրում եք ինձ, բայց այնուամենայնիվ ծիծաղում եք իմ վրա»։— «Բայց ինչպե՞ս կարելի է չսիրել ձեզ նման մարդուն»,— բարձրաձայն ծիծաղեց տանտիրուհին, և նրա տանը շատ մարդ էր հավաքվել այդ օրը։ Հանկարծ տեսնում եմ՝ տիկնանց շրջանակից ոտքի է ելնում այն նույն երիտասարդ տիկինը, որի պատճառով մենամարտի էի հրավիրել իմ ախոյանին, և որին դեռ վերջերս իմ հարսնացուն էի համարել. չէի էլ նկատել, որ նա եկել է այդ երեկոյին։ Ոտքի ելավ, մոտեցավ ինձ, ձեռքը մեկնեց. «Թույլ տվեք հայտնել ձեզ,— ասաց,— որ ես, ամենից առաջ ե՛ս չեմ ծիծաղում ձեզ վրա, այլ, ընդհակառակը, արցունքն աչքերիս շնորհակալություն եմ ասում և իմ հարգանքն եմ արտահայտում ձեզ՝ այդ օրվա ձեր արարքի համար»։ Նրա ամուսինը ևս մոտեցավ իսկույն, և հետո հանկարծ բոլորն էլ շրջապատեցին ինձ, համբյա համբուրում էին։ Այնպե՞ս ուրախ զգացի, բայց այդ բոլորի մեջ հանկարծ ամենից ավելի ուշադրությունս գրավեց մի պարոն՝ արդեն տարեց մի մարդ, որ նույնպես մոտեցել էր ինձ. թեև առաջ էլ գիտեի նրան անունով, բայց երբեք չէի ծանոթացել և մինչև այդ երեկո մի բառ անգամ չէի փոխանակել նրա հետ։

դ) Խորհրդավոր այցելուն

Նա արդեն վաղուց էր ծառայում մեր քաղաքում, ակնառու պաշտոն ուներ, բոլորի կողմից հարգված մարդ էր, հարուստ,

հռչակված էր իր բարեգործությամբ, զգալիորեն մեծ գումարներ էր նվիրաբերել անկելանոցին ու որբանոցին և, բացի այդ, բազում այլ բարերարություններ էր կատարել գաղտնորեն, առանց հրապարակման, և այդ բոլորը հայտնի դարձան նրա մահից հետո։ Մոտ հիսուն տարեկան էր, գրեթե խստաբարո էր արտաքուստ, և սակավախոս. ընդամենը տասը տարի առաջ էր ամուսնացել, ու դեռ երիտասարդ իր կինը երեք զավակ էր պարգևել իրեն։ Արդ ուրեմն, հաջորդ իրիկուն նստած էի իմ տանը, երբ հանկարծ դուռը բացվեց ու այդ նույն պարոնը ներս մտավ։

Պետք է նշեմ, որ այն ժամանակ իմ նախկին բնակարանում չէի ապրում, այլ հրաժարական տալուց անմիջապես հետո սենյակ էի վարձել մի պառավ ու այրի տիկնոջ տանը և փոխադրվել էի այնտեղ. նրա ծառաներն էլ ինձ սպասարկում էին, որովհետև այս նոր բնակարանը տեղափոխվել էի պարզ այն պատճառով, որ հենց մենամարտի օրը, տուն վերադառնալուց հետո, Աֆանասիին ետ էի ուղարկել իր վաշտը. նրա հետ իմ վերջին հանդիպումից հետո ամաչում էի երեսին նայել... Հոգեպես անպատրաստ աշխարհիկ մարդն ա՞յն աստիճան ատակ է ամաչելու նույնիսկ իր որևէ արդարագույն արարքից։

«Ես,— ասաց ինձ ներս մտած պարոնը,— արդեն մի քանի օր է, ինչ մեծ հետաքրքրությամբ լսում եմ ձեզ տարբեր տներում, և վերջապես ցանկացա անձամբ ծանոթանալ, որպեսզի ավելի մանրամասն խոսեմ ձեզ հետ։ Կարո՞ղ եք, մեծահարգ տիար, այդպիսի մի մեծ ծառայություն մատուցել ինձ»։— «Կարող եմ,— ասացի,— մեծագույն հաճույքով, և հատուկ պատիվ կսեպեմ ինձ համար»։ Այդպես ասացի, բայց գրեթե վախեցել էի՝ այնքա՞ն էր ապշեցրել ինձ նրա այցելությունն առաջին րոպեին։ Որովհետև՝ թեպետ լսում էին ինձ մարդիկ և հետաքրքրքրություն ցուցաբերում, բայց դեռ ոչ ոք այդպիսի ներհուն ու խստաշունչ լրջությամբ չէր մոտեցել ինձ։ Ու տակավին՝ այս մարդն անձամբ եկել էր իմ բնակարանը։ Նստեց։ «Նկարագրի մեծ ուժ եմ տեսնում ձեր մեջ,— շարունակեց նա,— որովհետև չեք վախեցել ճշմարտության ծառայել այնպիսի մի հարցում, ուր ձեր ճշմարտության համար ընդհանուր արհամարհանքի արժանանալու վտանգն էր սպառնում ձեզ»։— «Գուցե խիստ չափազանցյալ է ձեր գովեստը»,— ասացի նրան։ «Ոչ, չափազանցյալ չէ,— պատասխանեց,— հավատացեք, որ այդպիսի

արարք գործելը շատ ավելի դժվար է, քան կարծում եք դուք։ Ճիշտն ասելով, այդ է միայն, որ մեծապես զարմացրել է ինձ,— շարունակեց նա,— և այդ հարցով է, որ եկել եմ ձեզ մոտ։ Եթե չեք խորշում իմ այս գուցե անպատշաճ հետաքրքրությունից, նկարագրեցեք խնդրեմ, թե հատկապես ի՞նչ էիք զգում այն րոպեին, երբ մենամարտի պատնեշի վրա վճռեցիք ներումն խնդրել. եթե, անշուշտ, հիշում եք ձեր զգացածը։ Թեթևամտություն մի՛ համարեք հարցս. ընդհակառակն, այսպիսի մի հարց տալով ձեզ՝ ունեմ իմ թաքուն շարժառիթը, որ հավանաբար կպարզեմ հետագայում, եթե կամոքն աստուծո մտերիմներ դառնանք»։

Երբ նա խոսում էր, ես շարունակ նայում էի ուղղակի նրա երեսին և հանկարծ բացարձակ վստահություն ունեցա նրա նկատմամբ, ու բացի այդ՝ նաև արտասովոր մի հետաքրքրություն իմ կողմից էլ, որովհետև զգացի, թե նա յուրահատուկ մի գաղտնիք ունի իր հոգում։

— Հարցնում եք, թե հատկապես ինչ էի զգում այն րոպեին, երբ ներումն էի խնդրում հակառակորդից,— պատասխանեցի,— բայց ավելի լավ կլինի, որ բուն սկզբից պատմեմ ձեզ այն, ինչ ոչ ոքի չեմ պատմել տակավին։— Ու պատմեցի ամեն ինչ, որ տեղի էր ունեցել Աֆանասիի և իմ միջև, և թե ինչպես խոնարհվել էի նրա առաջ մինչև գետին։— Այս բանից,— եզրակացրի,— ինքներդ կարող եք տեսնել, թե մենամարտի ժամանակ ավելի հեշտ էր ինձ համար այդ արարքը, որովհետև դեռ տանն էի սկսել, և մի անգամ որ ոտք էի դրել այդ ուղին, այնուհետև ամեն ինչ ընթացավ բնականորեն. ոչ միայն դժվար չէր, այլև նույնիսկ բերկրալի էր ու հրճվագին։

Լսում էր նա և այնպիսի լա՜վ մի հայացքով նայում էր ինձ։ «Զափազանց հետաքրքրական է այդ ամբողջը,— ասաց,— ես կրկին ու կրկին կգամ ձեզ մոտ»։ Եվ այդ օրից սկսյալ գրեթե ամեն իրիկուն գալիս էր նա։ Ու մենք շատ մտերիմ բարեկամներ կլինեինք, եթե նա իր մասին ևս պատմեր ինձ։ Բայց իր մասին գրեթե ոչ մի բառ չէր ասում, այլ շարունակ ինձ հարցեր էր տալիս՝ իմ մասին։ Հակառակ այդ բանին, ես շատ սիրեցի նրան և կատարյալ վստահությամբ արտահայտեցի զգացմունքներն իմ բոլոր, որովհետև մտածեցի՝ ի՞նչ պետք ունեմ նրա գաղտնիքներին, առանց այն էլ տեսնում եմ, որ առաքինի է մարդը։ Առավել ևս՝ այնքան լուրջ մարդ լինելով, և ինձնից շատ ավելի տարեց, գալիս է ինձ նման մի պատանու մոտ և չի արհամարհում

ինձ։ Ու բազում օգտակար բաներ սովորեցի նրանից, որովհետև բարձր մտքի տեր մարդ էր։ «Թե կյանքը դրախտ է,— ասաց նա հանկարծ,— վաղուց արդեն մտածում եմ այդ մասին», և անսպասելիորեն ավելացրեց. «Հենց միայն դրա՛ մասին եմ մտածում»։ Նայում ինձ ու ժպտում էր։ «Ես ավելի եմ համոզված այդ բանին, քան դուք,— ասաց նա,— հետո կիմանաք, թե ինչու»։ Լսում էի և մտածում. «Հավանաբար ուզում է մի բան հայտնել ինձ»։— «Դրախտը պահված է մեզնից յուրաքանչյուրի մեջ,— ասաց նա,— ահա իմ մեջ էլ պահված է հիմա, և եթե ուզեմ, վաղն ևեթ դրախտն իսկապես կբացվի ինձ համար, ու կբացվի ընդմիշտ՝ մինչև ավարտը կյանքիս»։ Տեսնում էի՝ հուզված է խոսում և խորհրդավոր կերպով նայում է ինձ, կարծես ինձ հարց է տալիս։ «Իսկ թե յուրաքանչյուր մարդ մեղավոր է բոլորի և ամեն ինչի համար, անկախ իր սեփական մեղքերից,— շարունակեց նա,— դուք կատարելապես ճիշտ եք դատում այդ մասին, և զարմանալի է, թե ինչպես կարող էիք մեկեն ընդգրկել այդ գաղափարն իր ամբողջ լիությամբ։ Ու ճշմարիտ է արդարև, որ եթե մարդիկ հասկանան այդ գաղափարը, երկնային թագավորությունն արդեն երազանք չի լինի նրանց համար, այլ կդառնա իրականություն»։— «Բայց ե՞րբ,— բացականչեցի ես վշտագին,— ե՞րբ պիտի կատարվի այդ, և պիտի կատարվի՞ արդյոք երբևիցե։ Սոսկ երազանք չէ՞ արդյոք այդ բանը»։— «Բայց ահա դուք էլ չեք հավատում,— ասաց նա,— քարոզում եք և ինքներդ չեք հավատում։ Իմացեք ուրեմն, որ այս երազանքը, ինչպես ասում եք, պիտի կատարվի անտարակույս, հավատացե՛ք դրան, բայց պիտի կատարվի ոչ այժմ, որովհետև յուրաքանչյուր լինելություն իր օրենքն ունի։ Այս լինելությունը հոգեկան է, հոգեբանական։ Աշխարհը վերափոխելու և նորակերտելու համար՝ պետք է, որ մարդիկ իրե՛նք հոգեպես շրջադարձ կատարեն դեպի մի այլ ճանապարհ։ Մինչև որ իսկապես եղբայր չդառնաս ամեն մի մարդու, եղբայրություն չի տիրի աշխարհում։ Մարդիկ երբեք չեն կարողանա որևէ գիտական ու որևէ օգտապաշտ մոտեցումով անվնասորեն բաժանել իրար միջև իրենց սեփականությունը և իրավունքներն իրենց։ Միշտ յուրաքանչյուր ոք քիչ պիտի համարի իր բաժինը, և միշտ պիտի տրտնջան, նախանձեն ու պիտի ոչնչացնեն իրար։ Հարցնում եք, թե երբ է կատարվելու այդ։ Կատարվելու է, բայց նախ պետք է բոլորվի մարդկային մեկուսացման շրջանը»։— «Ի՞նչ մեկուսացման»,— հարցրի ես։ «Ճիշտ

այն մեկուսացման, որ այժմ իշխում է ամենուրեք, և հատկապես մեր դարաշրջանում, բայց որ լրիվ չի բոլորվել տակավին, չի հասել վերջնաժամը դրա։ Քանզի յուրաքանչյուր ոք այժմ ձգտում է առավելագույնս սահմանազատել իր անձը, ուզում է ինքն իր մեջ զգալ լիությունը կյանքի, մինչդեռ նրա բոլոր ջանքերի արդյունքը լինում է ոչ թե կյանքի լիություն, այլ լիակատար անձնասպանություն, որովհետև իր սեփական էությունը լիովին ինքնորոշելու փոխարեն ընկնում է կատարյալ մեկուսացման մեջ։ Քանզի մեր դարաշրջանում մարդկությունը բաժանվել է միավորների, ամեն ոք մեկուսանում է իր պատյանի մեջ, ամեն ոք հեռու է պահում իրեն մյուսներից, թաքնվում է և իր ունեցածն ևս թաքցնում, ու հետևանքը լինում է այն, որ մարդիկ վանում են նրան, և ինքն ևս մարդկանց վանում է իրենից։ Հարստություն է դիզում մեկուսի և մտածում՝ որքա՜ն ուժեղ եմ հիմա և որքան ապահովված, սակայն չգիտե անմիտ արարածը, որ ինչքան ավելի է կուտակում, այնքան ավելի սուզվում է անձնակործան անզորության մեջ։ Քանզի սովորություն է դարձրել հույս դնել լոկ իր անձի վրա և ամբողջությունից անջատվել է որպես միավոր, իր հոգին վարժեցրել է չհավատալու մարդկային իրարօգնության, մարդկանց և առհասարակ մարդկության, ու միայն դողում է այն վախից, թե կկորցնի իր փողերը և իր ձեռք բերած իրավունքները։ Մարդկային միտքն այժմ ամենուրեք սկսում է ծիծաղելիորեն չհասկանալ, թե ճշմարիտ ապահովությունը պետք է փնտրել ո՛չ թե մարդու մեկուսի ջանքերի, այլ մարդկային համընդհանուր հավաքականության մեջ։ Բայց անպայման պիտի հասնի նաև վերջնաժամն այս ահավոր մեկուսացման, և բոլորը միանգամից պիտի հասկանան, թե որքա՜ն անբնականորեն տարանջատվում էին իրարից։ Այդպիսին պիտի լինի այլևս ժամանակի շունչը, և պիտի զարմանան, թե այնքան երկար նըստել էին խավարի մեջ ու չէին տեսնում լույսը։ Եվ հայնժամ պիտի երևա հերկինս նշան որդվո մարդո... Բայց մինչ այդ պետք է այնուամենայնիվ պահպանել դրոշը, և եթե ոչինչ էլ չլինի, գոնե այս կամ այն եղակի մարդը պետք է հանկարծ օրինակ ցույց տա՝ հոգին դուրս բերի մեկուսացումից ու մարդկանց միջև եղբայրասիրական հարաբերման սխրանք կատարի, թեկուզ նույնիսկ աստուծո խենթ համարեն իրեն։ Այդպես է պետք, որպեսզի մեռնի մեծ գաղափարը...»։

Ահա այսպիսի կաթոգին ու բերկրառիթ խոսակցությամբ էին անցնում մեր երեկոներն իրար ետևից։ Ես նույնիսկ դադարեցի հասարակության հետ շփվելուց և շատ հազվադեպ էի հյուր գընում. բացի այդ, սկսում էր անցնել նաև այն զգայացունց նորությունը, որ օրվա հերոս էր դարձրել ինձ։ Այս բանն ասում եմ ոչ իբրև մեղադրանք, որովհետև շարունակում էին սիրել ինձ և զվարթ վերաբերմունք ցուցաբերել. բայց պետք է խոստովանել այնուամենայնիվ, որ նորությունը հիրավի բավական զորեղ մի տիրակալ է հասարակության մեջ։ Վերջապես սկսեցի հիացմունքով նայել իմ խորհրդավոր այցելուին, որովհետև ոչ միայն իմացական վայելք էի ստանում նրա խելքից, այլև նախազգում էի, որ նա միշտ որոշ մտադրություն է փայփայում իր մեջ և պատրաստվում է գուցե մի մեծ սխրանքի։ Թերևս նրան հաճո էր և այն, որ ես արտաքուստ հետաքրքրություն չէի ցուցաբերում նրա գաղտնիքի նկատմամբ, հարցուփորձ չէի անում ոչ ուղղակիորեն, ոչ կողմնակի ակնարկներով։ Բայց վերջապես նկատեցի, որ արդեն ինքը ևս սկսել է կարծես վառվել՝ ինձ մի բան հայտնելու ցանկությամբ։ Համենայն դեպս դա շատ ակներև էր դարձել մոտավորապես մեկ ամիս հետո այն օրից, երբ նա սկսեց այցելել ինձ։ «Գիտե՞ք, որ քաղաքում շատ են հետաքրքրվում մեր երկուսով,— ասաց ինձ մի անգամ,— և զարմանում են, որ ես այսքան հաճախակի գալիս եմ ձեզ մոտ։ Բայց թող զարմանան, որովհետև շուտով ամեն ինչ կպարզվի»։ Երբեմն հանկարծ արտակարգ մի հուզմունք էր տիրում նրան, և այդպիսի դեպքերում գրեթե միշտ ելնում ու գնում էր։ Իսկ երբեմն էլ երկար ու թափանցող մի հայացք էր սևեռում ինձ, և ես մտածում էի՝ «Ա՜յ հիմա մի բան կասի», բայց նա հանկարծ շեղում էր հայացքը և սկսում ծանոթ ու սովորական մի բանից խոսել։ Սկսեց նաև հաճախակի գանգատվել գլխացավից։ Եվ ահա մի անգամ, նույնիսկ բոլորովին անսպասելիորեն, տեսա, որ նա, երկար ու հրայրքով խոսելուց հետո, հանկարծ գունատվեց, դեմքն այլայլվեց կատարելապես, իսկ աչքերը խիստ սևեռուն նայում էին ինձ։

— Ի՞նչ պատահեց ձեզ,— ասացի,— գուցե վա՞տ եք զգում։

Իսկ նա հենց նոր գանգատվել էր գլխացավից։

— Ես... գիտե՞ք ինչ... ես... մարդ եմ սպանել։

Ասաց ու ժպտաց, իսկ դեմքը կավճի նման սպիտակ էր։ «Ինչո՞ւ է այդպես ժպտում»,— այս միտքը հանկարծ ծակեց

սիրտն իմ, երբ դեռ ոչ մի բան չէի հասկացել։ Ես ինքս գուշ-նատվեցի։

— Ի՞նչ եք ասում,— գոռացի։

— Տեսնո՞ւմ եք,— պատասխանեց նույն գունատ ժպիտով,— որքան թանկ նստեց ինձ առաջին խոսքն ասելը։ Հիմա ասել եմ արդեն և, կարծում եմ, դա սկիզբն էր ճանապարհի։ Կընթանամ այս ուղիով։

Երկար ժամանակ չէի հավատում նրան, և մեկ անգամից չէ, որ հավատացի, այլ միայն այն բանից հետո, երբ երեք օր շարունակ եկավ ինձ մոտ և ամեն ինչ պատմեց մանրամասնորեն։ Խելագար էի համարում նրան, բայց վերջ ի վերջո համոզվեցի ասածին հայտնապես՝ մեծագույն վիշտ ու զարմանք ապրելով։ Նա մի մեծ ու սարսափելի ոճիր էր գործել. տասնչորս տարի առաջ սպանել էր մի հարուստ, երիտասարդ ու գեղեցիկ տիկնոջ, որ այրի կալվածատիրուհի է եղել և մեր քաղաքում էլ սեփական տուն է ունեցել։ Մեծ սեր զգալով տիկնոջ նկատմամբ, բացատրում է իր սերը և սկսում համոզել նրան, որ ամուսնանա իր հետ։ Բայց այրի տիկինն արդեն իր սիրտը տվել էր ուրիշին՝ ազնվատոհմ ու բարձրաստիճան մի զինվորականի, որ այդ ժամանակ ռազմի դաշտում էր գտնվում, և որի մոտալուտ վերադարձին էր սպասում տիկինը։ Ուստի մերժում է առաջարկը և խնդրում, որ նա չայցելի իրեն։ Ու նա դադարում է այցելել, բայց, տեղյակ լինելով տիկնոջ տան ներքին դասավորության, մի գիշեր այգու կողմի տանիքից գաղտագողի մտնում է սիրեցյալ կնոջ մոտ՝ մեծագույն հանդգնությամբ դիմագրավելով հայտնաբերվելու վտանգը։ Սակայն, ինչպես պատահում է շատ հաճախ, արտասովոր հանդգնությամբ կատարված ոճիրներն ավելի հաջող ելք են ունենում։ Լուսանցույցից մտնելով տան ձեղնահարկը, այնտեղից էլ սանդուղքով իջնում է ներքև՝ բնակելի սենյակները, գիտենալով, որ սանդուղքի ստորոտին գտնվող դուռը երբեմն կողպված չէր լինում՝ ծառաների անփութության պատճառով։ Այս դեպքում ևս այդ անփութության վրա է դնում հույսը, ճիշտ այդպես էլ պատահում է։ Մուտք գործելով բնակելի հարկաբաժինը, մթան մեջ գտնում է տիկնոջ ննջասենյակը, ուր կանթեղ էր վառվում։ Եվ կարծես դիտմամբ՝ տիկնոջ երկու աղախիններն առանց իրավունք առնելու գնացել էին դրկից տունը, նույն փողոցի վրա՝ անվանակոչության խնջույքի։ Իսկ մնացյալ ծառաներն ու սպասուհիները քնել էին ներքնահարկում՝ ծառայանոցում ու խոհանոցում։ Երբ տեսնում է քնած կընոջ, կիրքն է բոցավառվում նրա մեջ, իսկ ապա վրեժխնդիր խանդի զայրույթն է բորբոքում հոգին նրա, ու խելակորույս, հարբածի նման մոտենում է և դանակը խրում ուղղակի կնոջ սիրտը, այնպես որ զոհը ճիչ անգամ չի արձակում։ Հետո դժոխային և ամենաոճրական հաշվենկատությամբ սարքում է այնպես, որ ծառաների վրա ընկնի կասկածը. առանց խորշելու առնում է դրամապանակը նրա, բարձի տակից հանում է բանալիները և բացում զարդասեղանը, մի քանի իր վերցնում այնտեղից, ճիշտ այնպես, ինչպես կաներ տգետ ծառան, այսինքն արժեթղթերը թողնում է և միայն փողերն է առնում, առնում է մի քանի խոշոր ոսկյա իրեր, իսկ փոքր, բայց տասնապատիկ ավելի թանկարժեք բաներին ուշադրություն չի դարձնում։ Բան ինչ վերցնում է նաև որպես հիշատակ, սակայն այդ մասին՝ հետո։ Կատարելով սույն զարհուրելի արարքը, նույն ճանապարհով դուրս է գնում։

Ոչ հաջորդ օրը, երբ տագնապ է հարուցվում, ոչ էլ հետագայում որևէ ժամանակ՝ ոչ ոքի մտքով անգամ չի անցնում, ոչ ոք չի կասկածում, թե նա է բուն չարագործը։ Ու հիրավի, ոչ ոք չգիտեր նրա սիրո մասին, վասնզի միշտ լռակյաց ու ինքնամփոփ է եղել բնավորությամբ ու չի ունեցել նաև մի բարեկամ, որին իր սիրտը բացած լիներ։ Սպանված տիկնոջ ծանոթն էին համարում նրան պարզապես, ու նույնիսկ ոչ այնքան մոտիկ ծանոթը, որովհետև վերջին երկու շաբաթվա ընթացքում չէր այցելում տիկնոջ տունը։ Անմիջապես կասկածում են Պյոտր անունով մի ճորտ ծառայի, և բոլոր հանգամանքները ճիշտ այնպես են զուգադիպում, որ հաստատվում է կասկածն այդ, քանի որ ծառան գիտեր, թե իր տիրուհին մտադիր է զինվոր ուղարկել իրեն՝ ի հաշիվ տիրապատկան գյուղացիներից պահանջվող նորակոչիկի, և հանգուցյալը չէր թաքցնում իր մտադրությունը, նկատի ունենալով, որ Պյոտրը միայնակ մարդ է ու նաև վատ վարքի տեր։ Լսել էին, թե ինչպես նա գինետանը, հարբած վիճակում, զայրալից սպառնացել էր սպանել իր տիրուհուն։ Տիկնոջ մահից երկու օր առաջ նա փախել էր և ապրում էր քաղաքում՝ հայտնի չէ որտեղ։ Իսկ սպանության հաջորդ օրը նրան գտնում են քաղաքից դուրս տանող ճանապարհի վրա՝ սաստիկ հարբած, գրպանում՝ դանակ, ու դեռ ավելին՝ աջ ձեռքի ափն էլ չգիտես ինչու արյունոտ։ Պնդում է, թե քթից է արյուն եկել,

բայց չեն հավատում նրան։ Իսկ աղախինները խոստովանում են, որ իրենք խնջույքի էին գնացել, և թե շքամուտքի դուռը կողպված չի եղել մինչև իրենց վերադարձը։ Եվ ուրիշ բազմաթիվ նման նշաններ են երևան գալիս, հաստատելով անմեղ ծառայի վրա ընկնող կասկածը։ Ձերբակալում են նրան և սկսում դատավարությունը, բայց ձերբակալությունից մեկ շաբաթ հետո ջերմախտով է բռնվում նա և հիվանդանոցում մահանում է ուշակորույս։ Ու գործն ավարտում են այդպիսով, թողնում աստուծո կամքին, և բոլորը՝ թե՛ դատավորները, թե՛ իշխանությունը, թե՛ ամբողջ հասարակությունը մնում են այն համոզման, թե ոճիրը գործել է ոչ այլ ոք, քան այդ մահացած ծառան։ Իսկ այնուհետև սկսվում է պատիժը։

Խորհրդավոր իմ հյուրը, իսկ այժմ արդեն բարեկամն իմ, պատմեց, թե սկզբում նույնիսկ բոլորովին չէր տանջվում խղճի խայթից։ Տառապում էր երկար ժամանակ, բայց ոչ թե դրանից, այլ պարզապես մորմոքելով, որ սպանեց սիրեցյալ կնոջ, որ չկա այլևս կինն այդ, և որ, սպանելով նրան, սերն իր սպանեց, մինչդեռ իր արյան մեջ մնում էր տակավին հուրը տենչանքի։ Սակայն թափված անմեղ արյան մասին, մարդ սպանած լինելու մասին հազիվ թե մտածում էր այն ժամանակ։ Անտանելի էր թվում այն միտքը, թե զոհը կարող էր ուրիշի կինը դառնալ, ուստի երկար ժամանակ համոզված էր խղճի մտոք, թե այլ կերպ չէր կարող վարվել։ Սկզբում նրան որոշ չափով տանջում էր ձերբակալությունը ծառայի, սակայն բանտարկյալի վերահաս հիվանդությունը և ապա մահը հանգստացնում են նրան, որովհետև, ամենայն հավանականությամբ (այդպես էր դատում նա այն ժամանակ), ծառան մահացել էր ոչ թե ձերբակալության կամ վախի հետևանքով, այլ պաղառության, որ ձեռք էր բերել փախուստի օրերին, երբ ամբողջ գիշերը, սաստիկ հարբած, թավալվում էր խոնավ գետնի վրա։ Իսկ գողացյալ իրերն ու դրամը սակավ էին խռովում նրան, որովհետև (դատում էր նմանապես) գողությունը կատարված է ոչ թե շահատենչությամբ, այլ կասկածներն ուրիշ կողմ շեղելու համար։ Աննշան մի գումար էր կազմում գողացյալը, և շուտով այդ գումարն ամբողջությամբ, նույնիսկ շատ ավելին, նվիրաբերում է մեր քաղաքում հաստատված անկելանոցին։ Դիտմամբ է անում այդ՝ հանգստացնելու համար իր խիղճը գողության վերաբերյալ, և ուշագրավ է այն, որ իսկապես խաղաղվում է մի որոշ ու նույնիսկ երկար ժամանակ. այս քանը

ինքն է ասել ինձ։ Այնուհետև՝ նվիրվում է պաշտոնական բուռն գործունեության, կամավորաբար ստանձնում է դժվարին ու հոգսաշատ մի հանձնարարություն, որ երկու տարի զբաղեցնում է նրան, և ուժեղ նկարագրի տեր լինելով՝ գրեթե մոռանում է կատարվածը. իսկ երբ հիշում է մերթ ընդ մերթ, աշխատում է բնավ չմտածել այդ մասին։ Նվիրվում է նաև բարեգործության, բազում հաստատություններ հիմնադրում և բազում նվիրատվություններ է անում մեր քաղաքում, երկու մայրաքաղաքներում ևս անում է նման գործեր, Մոսկվայում և Պետերբուրգում ընտրվում է տեղական բարեգործական ընկերությունների անդամ։ Բայց ի վերջո սկսում է այնուամենայնիվ մտատանջվել, և իր ուժերից վեր է լինում տանջանքն այդ։ Նույն միջոցին համակրում է մի գեղեցիկ ու խելամիտ օրիորդի և շուտով ամուսնանում նրա հետ, հուսալով, որ ամուսնությամբ կփարատի տրտմությունն իր ներանձնական, իսկ մի նոր կյանք սկսելով ու եռանդագին կատարելով իր պարտքը կնոջ ու զավակների նկատմամբ՝ բոլորովին կթոթափի հիշատակներն իր անցյալի։ Բայց տեղի է ունենում ճիշտ հակառակն այդ ակնկալության։ Ամուսնության դեռ առաջին ամսին մի անդադրում միտք սկսում է խռովել նրան. «Ահա կինս սիրում է ինձ, բայց եթե հանկարծ իմանա՞ր»։ Երբ կինը հղանում է իր առաջին երեխան և հայտնում այդ մասին, նա տագնապում է հանկարծ. «Կյանք եմ տալիս, բայց ինքս եմ կյանք խլել»։ Երեխաներ են աշխարհ գալիս. «Ինչպե՞ս հանդգնեմ սիրել, ուսուցանել ու դաստիարակել նրանց, ինչպե՞ս նրանց հետ խոսեմ առաքինության մասին. արյուն եմ թափել»։ Սքանչելի զավակներ են դառնում, ուզում է գգվել նրանց. «Բայց ես չեմ կարող նայել նրանց անմեղ, պայծառ դեմքերին. անարժան եմ դրան»։ Վերջապես ահեղ ու դառնագին հաճախանքով սկսում է հալածել նրան սպանված զոհի արյունը, երիտասարդ ու խորտակված կյանքը նրա, հատուցում աղաղակող արյունը նրա։ Սկսում է սարսափելի երազներ տեսնել։ Բայց հոգեպես տոկուն մարդ լինելով, երկար ժամանակ դիմանում է տանջանքին. «Ամեն ինչ կքավեմ այս իմ թաքուն տառապանքով»։ Բայց ունայն էր այդ հույսը ևս. հետզհետե ավելի ուժգին է դառնում տառապանքը։ Հասարակության մեջ սկսում են հարգել նրան իր կատարած բարեգործությունների համար, թեև բոլորը վախենում են նրա խիստ ու մռայլ բնավորությունից. սակայն որքան ավելի են հարգում, այնքան ավելի անտանելի է դառնում վիճակը նրա։

Խոստովանեց ինձ, որ մտածել է անձնասպան լինել։ Բայց դրա փոխարեն մի այլ ցանկություն սկսում է հաճախել նրան, մի ցանկություն, որ սկզբում անկարելի ու ցնորական էր համարում, բայց որ ի վերջո այնպիսի արմատներ է արձակում նրա սրտի մեջ, որ անհնարին էր պոկել։ Երազում էր այսպես. վեր կենալ, կանգնել բազմության առաջ ու հայտարարել բոլորին, որ ինքը մարդ է սպանել։ Երեք տարի անձնատուր է լինում այդ երազին, որ այլազան ձևերով հաճախում էր նրան շարունակ։ Վերջապես սկսում է հաստատորեն հավատալ ամբողջ սրտով, որ եթե հրապարակով հայտնի իր կատարած ոճիրը, անպայմանորեն կբուժի իր հոգին և կխաղաղվի առընդմիշտ։ Սակայն այդպես հավատալուց հետո սարսափով է լցվում սիրտը, որովհետև ինչպե՞ս կարող էր իրագործել։ Եվ ահա հանկարծ՝ իմ մենամարտի այդ դեպքը։

— Հետևելով ձեզ, տվեցի այժմ որոշումս։

Ես նայեցի նրան։

— Բայց մի՞թե,— բացականչեցի ձեռքերս զարկելով իրար,— այսպիսի փոքր դեպքը կարող էր նման մի վճռականության ծնունդ տալ ձեր մեջ։

— Երեք տարի է, ինչ ծնվում էր իմ վճռականությունը,— պատասխանեց,— իսկ ձեր դեպքը մղիչ ուժ եղավ միայն։ Ձեզ նայելով, հանդիմանեցի ինքս ինձ ու նախանձեցի ձեզ,— ասաց նա նույնիսկ խստությամբ։

— Բայց ձեզ չեն էլ հավատա,— նկատեցի ես,— տասնչորս տարի է անցել։

— Ապացույցներ ունեմ, մեծ ապացույցներ։ Կներկայացնեմ։

Ու ես արտասվեցի հայնժամ, համբուրեցի նրան։

— Մի հարց կա, մի հարց, ա՛յդ լուծեցեք,— ասաց նա ինձ (կարծես թե ամեն ինչ ինձնից էր կախված այլևս),— կի՞նս, զավակնե՞րս։ Կինս կարող է մեռնել վշտից, իսկ զավակներս թեև չեն կորցնի ազնվականության կոչումն ու կալվածները, բայց կալանավորի զավակներ կդառնան, և ընդմիշտ։ Իսկ իմ մասին ի՞նչ հիշատակ եմ թողնելու նրանց սրտերում, ի՞նչ հիշատակ։

Ես լուռ էի մնում։

— Եվ բաժանվե՞լ նրանցից, թողնե՞լ նրանց ընդմիշտ։ Այո, ընդմիշտ, ընդմի՞շտ։

Լուռ նստած՝ աղոթք էի մրմնջում։ Վեր կացա ի վերջո, սարսափ պատեց ինձ։

— Ի՞նչ անեմ ուրեմն։

Նա ինձ էր նայում։

— Գնացեք,— ասացի,— խոստովանեցեք մարդկանց։ Ամեն ինչ կանցնի, ճշմարտությունը միայն կմնա։ Երեխաները մեծանալուց հետո կհասկանան, թե որքան վեհանձնություն կար ձեր այս վսեմ արարքի մեջ։

Այդ օրը նա կարծես իրոք վճռականությամբ լի հեռացավ ինձնից։ Բայց և այնպես, ավելի քան երկու շաբաթ գալիս էր ինձ մոտ այնուհետև, ամեն իրիկուն, պատրաստվում էր շարունակ, չէր կարողանում վճռել տակավին։ Տանջեց նա սիրտն իմ։ Մերթ գալիս էր հաստատակամ և ասում էր խանդաղատալից.

— Գիտեմ, որ դրախտն է բացվելու ինձ համար, իսկույն բացվելու է դրախտը, երբ խոստովանեմ հրապարակով։ Տասնչորս տարի դժոխքի մեջ էի։ Զարշարվել եմ ուզում։ Կընդունեմ շարշարանքն իմ ուսերին և կսկսեմ ապրել։ Անիրավությամբ կարող ես աշխարհն անցնել, բայց ետ դառնալ չես կարող։ Այժմ ոչ միայն իմ մերձավորին, այլև իմ զավակներին սիրել չեմ համարձակվում։ Աստվա՜ծ իմ, թերևս իրոք հասկանան զավակներս, թե ի՜նչ արժեց ինձ շարշարանքն իմ, ու չդատապարտե՞ն ինձ։ Աստված ոչ թե ուժի, այլ ճշմարտության մեջ է։

— Բոլորը կհասկանան սխրագործությունը ձեր,— ասում էի նրան,— եթե ոչ անմիջապես, գեթ հետագայում կհասկանան, որովհետև ճշմարտության ծառայած պիտի լինեք, գերագույն, աներկրային ճշմարտության...

Եվ գնում էր կարծես մխիթարված, սակայն հաջորդ օրը հանկարծ գալիս էր նորից՝ շարացած, գունատ, և ասում էր հեգնանքով.

— Ամեն անգամ որ գալիս եմ ձեզ մոտ, այնպիսի՜ մի հետաքրքրությամբ եք նայում ինձ, այսինքն թե՝ «Ինչ է, դեռ չե՞ս խոստովանել»։ Սպասեցեք, շատ մի՛ արհամարհեք։ Այնքան էլ հեշտ բան չէ այդ անելը, որքան կարծում եք։ Գուցե և բնավ չանեմ։ Այդ դեպքում չե՞ք գնա ինձ մատնելու, հա՞։

Իսկ ես ոչ միայն չէի նայում նրան անխոհեմ հետաքրքրությամբ, այլև երբեմն վախենում էի նույնիսկ հայացքս բարձ-

բացնել նրա վրա։ Տանջվել էի հիվանդ զգալու չափ, և հոգիս լի էր արտասուքով։ Մինչև իսկ քունս կորցրի գիշերային։

— Հիմա կնոջս մոտից եմ գալիս,— շարունակեց նա։— Հասկանո՞ւմ եք արդյոք, թե ինչ բան է մարդուս կինը։ Երբ դուրս էի գալիս, երեխաները գոռացին իմ ետևից. «Ցտեսությո՛ւն, հայրիկ, շուտ եկեք, որ «Հանդես մանկականը» կարդանք միասին»։ Ո՞չ, դուք չե՛ք հասկանում այս բանը։ Ուրիշի ցավից մարդու խելքը չի շատանա։

Աչքերը փայլատակում էին, շրթունքները դողդոջում։ Հանկարծ բռունցքով հարվածեց սեղանին, այնպես որ իրերը սեղանից վեր թռան. այնքա՜ն հեզահամբույր մարդ՝ առաջին անգամն էր, որ նման բան էր անում։

— Բայց պե՞տք է որ,— բացականչեց,— կարիք կա՞ որ։ Չէ որ ոչ ոք չի դատապարտվել, ոչ ոքի տաժանավայր չեն աքսորել իմ երեսից, ծառան հիվանդությունից մեռավ։ Իսկ հեղված արյան համար ես պատժվել եմ իմ տանջանքներով։ Ու չեն էլ հավատա ինձ ամենևին, իմ ոչ մի ապացույցին չեն հավատա։ Ի՞նչ կարիք կա խոստովանելու, ի՞նչ կարիք կա։ Թափված արյան համար պատրաստ եմ դեռ իմ ամբողջ կյանքում տառապելու, միայն թե հարված չհասցնեմ իմ կնոջն ու երեխաներին։ Արդա՞ր կլինի արդյոք կործանել նրանց ինձ հետ։ Չե՞նք սխալվում արդյոք։ Ո՞րն է ճշմարտությունը այստեղ։ Եվ մարդիկ կհասկանա՞ն արդյոք այդ ճշմարտությունը, կգնահատե՞ն, կհարգե՞ն արդյոք։

«Աստվա՛ծ իմ,— ասացի իմ մտքում,— մարդկանց հարգանքի մասին է մտածում այսպիսի բոպեին»։ Եվ այնքան խղճացի նրան այդ պահին, որ կարծես ինքս պատրաստ էի բախտակից լինելու նրան, միայն թե թեթևացնեի վիճակը։ Տեսնում էի՝ մոլեգնահար էր կարծես։ Սոսկում զգացի, երբ արդեն ոչ միայն մտքով, այլև հոգվույս կենդանի էությամբ հասկացա, թե ինչ արժեր այդպիսի վճիռ ընդունելը։

— Դե՛հ, վճռեցե՛ք իմ ճակատագիրը,— բացականչեց նա կրկին։

— Գնացե՛ք ու խոստովանեցե՛ք,— շշնջացի ես նրան։ Զայնս կտրվում էր, բայց շշնջացի հաստատակամորեն։ Ու վերջի սեղանից նոր կատակրանը, ուսերեն աշխարհաբար թարգմանությամբ, ցույց տվեցի նրան ավետարանն ըստ Հովհաննու՝ գլ. ԺԲ, հմբ. 24.

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե ցորենի հատի-

կը երկիր ընկնելով չմեռնի, ինքը միայն կմնա. իսկ եթե մեռնի, բազում արդյունք կբերի»։ Դեռ նոր, նրա գալուց առաջ ընթերցել էի այդ համարը։

Կարդաց նա։

— Ճիշտ է,— ասաց, բայց ժպտաց դառնագին։— Այո, սոսկում տվող բաների ես հանդիպում այս գրքերի մեջ,— ասաց մի փոքր լռելուց հետո։— Բայց հեշտ է մարդու աչքը կոխել սրանք։ Եվ ո՞վ է գրել այս բաները, միթե մարդի՞կ։

— Սուրբ ոգին է գրել,— ասացի։

— Ձեզ համար հեշտ է շաղակրատելը,— ժպտաց նա նորից, բայց արդեն ատելությամբ համարյա։

Ես նորից վերցրի գիրքը, մի ուրիշ տեղ բացեցի և ցույց տվեցի նրան թուղթն «Առ եբրայեցիս», գլ. Ժ, հմբ. 31։ Կարդաց.

«Սարսափելի է ընկնել կենդանի աստուծո ձեռքը»։

Կարդաց և ուղղակի դեն նետեց գիրքը։ Նույնիսկ սարսռաց ամբողջ մարմնով։

— Ահավոր բան է,— ասաց,— խոսք չկա, տեղին ընտրեցիք։— Վերկացավ աթոռից։— Դե՛հ,— ասաց,— ցտեսություն, գուցե չգամ այլևս... դրախտում կտեսնվենք։ Ուրեմն արդեն տասնչորս տարի է, ինչ «ընկել եմ կենդանի աստուծո ձեռքը», ահա թե ինչպես է կոչվում ուրեմն այդ տասնչորս տարին։ Վաղը կաղաչեմ այդ ձեռքին, որ ինձ ազատ արձակի...

Ուզում էի գրկել ու համբուրել նրան, բայց չհամարձակվեցի. այլայլված էր դեմքը, ծանր էր հայացքը։ Գնաց։ «Տե՛ր աստված,— մտածեցի,— ինչպիսի՜ փորձության է գնում մարդը»։ Մնրադրեցի իսկույն սրբապատկերի առաջ և արտասվեցի նրա համար, աղաչելով ամենասուրբ աստվածածնին՝ անմիջահաս բարեխոսին և օգնականին մեր։ Կես ժամ էր՝ աղոթքի էի կանգնել արտասվալից, և արդեն ուշ գիշեր էր, տասներկուքի մոտ։ Հանկարծ, տեսնում եմ, դուռը բացվեց ու նա կրկին ներս մտավ։ Ապշեցի։

— Ո՞ւր էիք գնացել,— հարցրի։

— Կարծեմ մի բան... մի բան եմ մոռացել,— ասաց,— կարծեմ թաշկինակս... Է՜հ, թեկուզ ոչինչ չեմ մոռացել, թողե՛ք նստեմ մի քիչ....

Նստեց աթոռին։ Ես գլխին կանգնած մնացի։

— Դուք էլ նստեցեք,— ասաց։

Նստեցի։ Մոտ երկու բոպե նստած մնացինք, նա սևեռուն

նայում էր ինձ և հանկարծ ժպտաց. հիշեցի ժպիտն այդ։ Ապա վերկացավ, գրկեց ինձ ուժգին և համբուրեց...

— Հիշի՛ր,— ասաց,— հիշի՛ր այս իմ երկրորդ անգամ գալը քեզ մոտ։ Լսո՞ւմ ես, հիշի՛ր այս պահը։

Առաջին անգամն էր, որ ինձ «դու» ասաց։ Ու գնաց։ «Վաղը»,— մտածեցի ես։

Եվ այդպես էլ եղավ։ Ու ես չգիտեի այդ իրիկուն, որ հաջորդ օրը ծննդյան օրն էր նրա։ Վերջին օրերը տնից դուրս չէի եկել, ուստի և առիթ չէի ունեցել որևէ մեկից իմանալու այդ մասին։ Իսկ ամեն տարի այդ օրը մեծ ընդունելություն էր կատարվում նրա տանը, ամբողջ քաղաքն էր հավաքվում։ Այդ անգամ ևս հավաքվել էին։ Եվ ահա, ճաշկերույթից հետո, նա ելնում ու կանգնում է հյուրասրահի մեջտեղը, մի թուղթ ձեռքին՝ կատարյալ մի զեկուցագիր, իր պաշտոնապետին ուղղված։ Ու քանի որ պաշտոնապետն անձամբ ներկա էր երեկույթին, նրա և բոլորի առաջ բարձրաձայն կարդում է թուղթն այդ, ուր լիովին նկարագրված էր ամբողջ ոճրագործությունը՝ բոլոր մանրամասներով։ «Որպես ճիվաղի՝ արտաքսում եմ ինքս ինձ մարդկանց միջավայրից, աստված ինձ այցելեց,— ավարտում է նա թուղթը,— տառապե՛լ եմ ուզում»։ Ապա իսկույն հանում ու սեղանի վրա է դնում բոլոր այն իրերը, որ պահել էր տասնչորս տարի, և որոնք, իր կարծիքով, պիտի իր գործած ոճիրն ապացուցեին— սպանված կնոջ ոսկեղեն զարդերը, որ գողացել էր՝ կասկածն իր անձից հեռացնելու մտքով, նրա վզից հանած մեդալիոնն ու խաչը, ընդ որում մեդալիոնի մեջ նրա փեսացուի դիմանկարը կար, նրա ծոցատետրը և վերջապես երկու նամակ. մեկը փեսացուի նամակն էր, որով վերջինս հայտնում էր իր մոտալուտ գալստյան մասին, իսկ մյուսն այդ նամակի պատասխանն էր, որ կինն սկսել էր գրել ու չէր ավարտել, թողել էր սեղանի վրա, որպեսզի հաջորդ օրն ուղարկի փոստատուն։ Այդ երկու նամակները վերցրել ու տարել էր իր հետ. ինչո՞ւ։ Ինչո՞ւ պահել էր դրանք տասնչորս տարի, փոխանակ ոչնչացնելու որպես հանցանշաններ։ Արդ ուրեմն, ահա թե ինչ է տեղի ունեցել. զարմանք ու սարսափ է պատել բոլորին, ոչ ոք չի ուզեցել հավատալ, ու թեև բոլորը լսել են ծայրահեղ հետաքրքրությամբ, բայց որպես հիվանդ մարդու զառանցանք, իսկ մի քանի օր հետո բոլոր տներում արդեն վերջնականապես որոշեցին ու վճռեցին, թե խելագարվել է դժբախտ մարդը։ Իշխանություններն ու դատարանը

չէին կարող ընթացք չտալ գործին, բայց նրանք ևս սկսեցին ու կես թողեցին. թեև ներկայացված իրերն ու նամակները ստիպում էին մտածել, բայց այստեղ նույնպես եկան այն որոշման, որ եթե նույնիսկ պարզվեր իսկությունն այդ փաստանշանների, այնուամենայնիվ չէր կարելի վճռականորեն մեղադրանք առաջադրել լոկ այդ փաստանշանների հիման վրա։ Եվ վերջապես նա կարող էր բոլոր իրերը նախօրոք ստացած լինել հանգուցյալից, որպես ծանոթ ու վստահյալ անձ։ Հետագայում սակայն լսեցի, թե իրերի վավերականությունն ստուգել են սպանյալի բազմաթիվ ծանոթների ու հարազատների միջոցով, և թե տարակույս չի եղել այլևս այդ մասին։ Բայց այդ գործին դարձյալ վիճակված էր անավարտ մնալ։ Հինգ օր հետո բոլորն իմացան, որ տառապյալը հիվանդացել է և երկյուղ են կրում նրա կյանքի համար։ Ի՞նչ էր նրա հիվանդությունը՝ բացատրել չեմ կարող, ասում էին, թե սրտի բաբախյունն է խանգարվել. բայց հայտնի դարձավ, որ բժշկական խորհուրդը, նրա կնոջ պնդմամբ, հավաստագրել է նաև հոգեկան վիճակը և եզրակացրել, թե խելագարությունն առկա է արդեն։ Ես ոչինչ չհայտնեցի, թեպետ ամեն կողմից հարցուփորձ էին անում. բայց երբ ցանկացա այցելել նրան, երկար ժամանակ մերժում էին ինձ, մանավանդ նրա կինը։ «Դո՛ւք եք նրա հիվանդության պատճառը,— ասաց ինձ,— առաջ էլ մռայլ էր, իսկ վերջին տարին բոլորն էլ նկատում էին, որ արտասովոր հուզմունքի մեջ է և տարօրինակ բաներ է անում, մեկ էլ ահա դուք խորտակեցիք նրան. դուք էիք քարոզներ կարդում գլխին, մի ամբողջ ամիս ձեր տնից դուրս չէր գալիս»։ Եվ ի՞նչ, ոչ միայն նրա կինը, այլև ամբողջ քաղաքը թափվեց իմ գլխին և ինձ մեղադրեցին. «Ձեր երեսից է ամեն ինչ»,— ասում էին։ Ես լուռ էի մնում, և ուրախ էր սիրտն իմ արդարև, վասնզի տեսա աներկբայելի ողորմածությունն աստուծո՝ ինքն իր դեմ ելած և ինքն իրեն պատժած մարդու նկատմամբ։ Իսկ նրա խելագարությանը չէի կարող հավատալ անշուշտ։ Վերջապես ինձ ևս թույլատրեցին այցելել նրան, ինքն էր անպայմանորեն պահանջել այդ, որպեսզի հրաժեշտ տա ինձ։ Ներս մտա ու տեսա արդարև, որ հաշվված էին ոչ միայն օրերը, այլև ժամերը նրա։ Տկար էր, դեղնած, դողում էին ձեռքերը, շնչահեղձ էր լինում, բայց հայացքը գորովալից էր և ուրախ։

— Կատարվե՛ց,— ասաց նա ինձ,— վաղուց ծարավի եմ քեզ տեսնելու, ինչո՞ւ չէիր գալիս։

Ես չհայտնեցի նրան, թե ինձ թույլ չէին տալիս այցելել իրեն։

— Աստված գթաց ինձ և կանչում է իր մոտ։ Գիտեմ, որ մահանում եմ, բայց ուրախություն եմ զգում և խաղաղություն՝ առաջին անգամ այնքան տարիներից հետո։ Երբ կատարեցի այն, ինչ հարկավոր էր, իսկույն ևեթ դրախտն զգացի իմ հոգում։ Այժմ արդեն համարձակվում եմ սիրել իմ զավակներին և համբուրել նրանց։ Չեն հավատում ինձ. ոչ ոք չհավատաց, ոչ կինս, ոչ դատավորները։ Եվ զավակներս էլ երբեք չեն հավատա։ Դրա մեջ աստուծո ողորմությունն եմ տեսնում իմ զավակների նկատմամբ։ Կմեռնեմ, և անունն իմ անբիծ կմնա նրանց համար։ Իսկ այժմ նախազգում եմ մերձավորությունն աստուծո, հրճվում է սիրտն իմ՝ ասես դրախտի մեջ... պարտականությունն իմ կատարեցի...

Չէր կարողանում խոսել, շունչը կտրվում էր, ջերմորեն սեղմում էր ձեռքս, կաթոգին նայում էր ինձ։ Սակայն երկար չխոսեցինք, կինն անընդհատ գալիս էր ու աչքը մեր վրա պահում։ Բայց և այնպես նա առիթ գտավ շշնջալու ինձ.

— Իսկ հիշո՞ւմ ես, թե ինչպես այն օրը երկրորդ անգամ եկա քեզ մոտ, կեսգիշերին։ Ու դեռ պատվիրեցի էլ, որ միտքդ պահես։ Գիտե՞ս ինչու էի եկել։ Եկել էի քեզ սպանելու։

Ուղղակի ցնցվեցի։

— Դուրս ելա քո տնից ու խավարի մեջ թափառեցի փողոցներով, պայքարելով ինքս իմ դեմ։ Եվ հանկարծ ատեցի քեզ այն աստիճան, որ սիրտս հազիվ դիմացավ։ «Հիմա նա միակն է, որ կապել է իմ հոգին,— մտածեցի,— և դատավորն է իմ, չեմ կարող արդեն հրաժարվել վաղվա իմ պատժից, որովհետև նա ամեն ինչ գիտե»։ Եվ ոչ թե վախենում էի, որ կմատնես ինձ (մտքովս իսկ չէր անցնում այդ բանը), այլ մտածում էի. «Ինչպես պետք է նայեմ նրա երեսին, եթե չխոստովանեմ հանցանքս»։ Ու թեկուզ դու աշխարհի մյուս ծայրին լինեիր, բայց կենդանի, միևնույն է՝ անտանելի էր այն միտքը, որ դու ապրում ես, ամեն ինչ գիտես ու մեղադրում ես ինձ։ Ատեցի քեզ, որպես թե դու լինեիր պատճառն ամեն ինչի, դու լինեիր մեղավոր ամեն ինչի համար։ Ու վերադարձա քեզ մոտ այնժամ, հիշում էի, թե քո սեղանի վրա դաշույն կար։ Նստեցի ու խնդրեցի, որ դու ևս նստես, ու մտածեցի մի ամբողջ րոպե։ Եթե սպանեի քեզ, միևնույն է՝ կկործանվեի ա՛յդ սպանության հետևանքով, թեկուզ և

խոստովանած չլինեի նախորդ ոճիրը։ Բայց այդ մասին բնավ չէի մտածում և չէի էլ ուզում մտածել այդ պահին։ Քե՛զ էի ատում միայն և ամբողջ էությամբ ուզում էի վրեժս լուծել քեզնից՝ ամեն ինչի համար։ Բայց տերն իմ աստված հաղթեց իմ սրտում սատանային։ Իմացիր սակայն, որ դու երբեք այնքան մոտ չէիր եղել մահվան։

Մի շաբաթ հետո նա մեռավ։ Ամբողջ քաղաքը մինչև գերեզման հուղարկավորեց ննջեցյալին։ Ավագերեցը սրտառուչ ճառ արտասանեց։ Ողբում էին այն սոսկալի հիվանդության համար, որ ընդհատեց կյանքի օրերը նրա։ Բայց նրան թաղելուց հետո ամբողջ քաղաքն ընդվզեց իմ դեմ, նույնիսկ դադարեցին ինձ հյուր ընդունել։ Ճիշտ է, ոմանք, սկզբում սակավաթիվ, բայց հետո ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ, սկսեցին հավատալ, որ ճշմարիտ է խոստովանությունը նրա, և սկսեցին խիստ հաճախակի այցելել ինձ, հարցուփորձ անել մեծ հետաքրքրությամբ ու խնդությամբ, քանզի մարդիկ սիրում են տեսնել անկումն ու նշավակությունն արդարակյաց մարդու։ Բայց ես լուռ մնացի և շուտով հեռացա քաղաքից առընդմիշտ, իսկ հինգ ամիս հետո, շնորհոք տյառն աստուծո, կանգնեցի հաստատուն ու բարեզարդ ուղու վրա, օրհնելով մատն աներևույթ, որ այնքան հստակորեն ցույց տվեց ինձ այս ուղին։ Իսկ աստուծո բազմաշարշար ծառա Միխայիլին օր ավուր հիշատակում եմ իմ աղոթքներում մինչև այսօր։

III

ԾԱՂԿԱՔԱՂ՝ ՍՐԲԱՀԱՅՐ ԶՈՍԻՄԱՅԻ ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՒ ՀՈՐԴՈՐՆԵՐԻՑ

ե) Բան ինչ՝ վանական ուս վանականի և նրա հնարավոր նշանակության

Հայրեր և ուսուցիչնե՛ր, ի՞նչ բան է վանականը։ Լուսավորյալ աշխարհում այս բառն այժմ ոմանք հեգնանքով են արտասանում արգեն, իսկ ուրիշներ՝ որպես նախատական բառ նույնիսկ։ Ու հետզհետե ավելի ակնբախ է դառնում վերաբերմունքն այդ։ Ճիշտ է, օհ ճի՛շտ, վանականների մեջ ևս բազմաթիվ են մակաբույծները, որկրամոլները, հեշտասերները ու անարես շրջմոլիկները։ Սրանց են մատնացույց անում աշխարհիկ

ու զարգացած մարդիկ, ասելով՝ «Ցույլեր եք դուք և հասարակության անօգուտ անդամներ, ուրիշի աշխատանքով եք ապրում, անամոթ մուրացկաններ»։ Մինչդեռ որքա՞ն մեծ է թիվը խոնարհ ու հեզահամբույր վանականների, որոնք տենչում են մենանալ ու կաթոգին աղոթել լռության մեջ։ Այսպիսիներին նրվազ ուշադրություն են դարձնում և նույնիսկ բնավ չեն խոսում նրանց մասին, և որքա՞ն պիտի զարմանային մարդիկ, եթե ասեի, որ թերևս ռուսաց աշխարհի փրկությունը մի անգամ ևս գա սույն հեզահամբույր վանականներից, որոնք ծարավի են մենավոր աղոթքի։ Քանզի նրանք լռության մեջ ճշմարտապես պատրաստվում են «վասն աւուրն այնորիկ և ժամու»։ Առայժմ իրենց մենության մեջ նրանք վեհաշուք և անաղարտ են պահում պատկերը Քրիստոսի, պահում են անարատությունն աստվածային ճշմարտության, ինչպես ավանդված է հնագույն հայրերից՝ առաքյալներից ու նահատակներից, և երբ անհրաժեշտ ժամանակը գա՝ պիտի պարզեն այդ պատկերն աշխարհի խախտված ճշմարտության առաջ։ Մեծ է գաղափարն այս։ Արևելքից պիտի այս աստղը շողա։

Այսպես եմ մտածում վանականի մասին, և սխա՞լ է թիթե, գոռոզակա՞ն է թիթե։ Նայեցեք աշխարհիկ մարդկանց և այն աշխարհին, որ ամեն բանում իրեն վեր է դասում աստուծո ժողովուրդից, արդյոք չի՞ խեղաթյուրվել նրանց մեջ պատկերն աստուծո և ճշմարտությունը նրա։ Գիտություն ունեն նրանք, բայց գիտությունը բովանդակում է լոկ այն, ինչ ենթակա է զգայարաններին։ Իսկ հոգեկան աշխարհը, մարդկային էության վերին կեսը բացասված է ամենևին, վտարված է մի տեսակ հանդիսավորությամբ, նույնիսկ ատելությամբ։ Ազատություն է հռչակել աշխարհը, վերջերս մանավանդ, և արդ՝ ի՞նչ ենք տեսնում նրանց այդ ազատության մեջ. ոչ այլ ինչ, քան ստրկություն և անձնասպանություն։ Վասնզի աշխարհն ասում է. «Պահանջներ ունես, ուրեմն և հագեցրու դրանք, որովհետև ունես նույն իրավունքները, որ ունեն մեծազարմ և ամենահարուստ մարդիկ։ Մի՛ վախենար հագեցնելու պահանջները քո, այլև նույնիսկ բազմացրու դրանք»։ Ահա այժմյան ուսմունքն աշխարհի։ Սրա մեջ են տեսնում ազատությունը։ Եվ ի՞նչ հետևանք է տալիս պահանջները բազմացնելու այդ իրավունքը։ Հարուստների մեջ՝ մեկուսացում և հոգեկան անձնասպանություն, իսկ աղքատների մեջ՝ նախանձ և մարդասպանություն, որովհետև իրավունքները

տվել են, բայց պահանջները հագեցնելու միջոցներ չեն մատնանշել տակավին։ Հավատացնում են, թե աշխարհն ավելի ու ավելի կմիավորվի հետզհետե, կսերտանան եղբայրական փոխհարաբերման կապերը, որովհետև տարածությունները կրճատվում են, օդի միջով մտքեր են հաղորդվում։ Ավա՜ղ, մի՛ հավատաք մարդկանց այդպիսի միավորման։ Ազատությունը հասկանալով որպես պահանջների բազմացում և շուտափույթ հագեցում, մարդիկ աղավաղում են սեփական բնությունն իրենց, վասընզի բազում անիմաստ ու հիմար ցանկությունների, սովորությունների և անհեթեթ ցնորքների են ծնունդ տալիս իրենց մեջ։ Ապրում են լոկ փոխադարձ նախանձի, մարմնասիրության ու սնապարծության համար։ Ճաշկերույթներ, հյուրասյեր, շքակառքեր, բարձր կոչումներ և ծառայող ստրուկներ ունենալն արդեն համարվում է անհրաժեշտություն, որի գոհացման համար զոհում են նույնիսկ կյանքը, պատիվն ու մարդասիրությունը, և մինչև իսկ անձնասպան են լինում, եթե չեն կարողանում գոհացնել։ Հարուստ չեղողների մեջ նույն բանն ենք տեսնում, իսկ աղքատներն իրենց չգոհացված պահանջներն ու նախանձը հարբեցողությամբ են խեղդում առայժմ։ Բայց շուտով գինվո փոխարեն արյամբ են հարբելու, ահա թե ո՛ւր են տանում նրանց։ Հարց եմ տալիս ձեզ՝ ազա՞տ է արդյոք այդպիսի մարդը։ Ճանաչում էի «գաղափարի համար մարտնչող» մի մարդու. նա անձամբ պատմեց ինձ, թե երբ բանտում զրկել են իրեն ծխախոտից, այնքան է տանջվել այդ զրկանքով, որ քիչ է մնացել՝ գնա ու մատնի իր «գաղափարը», որպեսզի պարզապես ծխախոտ տան իրեն։ Բայց չէ՞ որ այդպիսի մարդն ասում է. «Գնում եմ մարդկության համար պայքարելու»։ Է՜հ, ուրեմն, ի՞նչ պայքարի կարող է գնալ այդպիսին և ինչի՞ է նա ընդունակ. գուցե շուտափույթ կատարվելիք մի գործի, բայց չի կարող երկար դիմանալ։ Եվ զարմանալի չէ, որ ազատության փոխարեն ստրկության մեջ ընկան, իսկ եղբայրասիրության ու մարդկային միավորման ծառայելու փոխարեն, ընդհակառակն, տարանջատվեցին ու մեկուսացան, ինչպես իմ խորհրդավոր այցելուն և ուսուցիչն ասաց ինձ երիտասարդության օրերին։ Ուստի և աշխարհում ավելի ու ավելի է աղոտանում մարդկության ծառայելու, եղբայրական սիրո և մարդկանց միասնականության գաղափարը, և հիրավի՝ նույնիսկ ծաղրանքով են վերաբերվում արդեն այդ գաղափարին, որովհետև ինչպե՞ս կարող են հրաժարվել իրենց

սովորություններից, ի՞նչ ընթացք կարող է բռնել ստրուկն այս, եթե այնքան սովոր է գոհացնելու իր անհաշիվ պահանջները, որ ինքն իսկ հնարել է իր համար։ Մեկուսացել է նա, և ի՞նչ գործ ունի ամբողջ մարդկության հետ։ Ու հասել են այն բանին, որ ավելի շատ իրեր են կուտակել, բայց նվազել է ուրախությունը։

Այլ բան է վանական ուղին։ Հնազանդության, ծոմապահության ու աղոթքի վրա ծիծաղում են նույնիսկ, մինչդեռ դրա՞նց մեջ է լոկ այն ուղին, որ տանում է դեպի իսկական, արդեն ճշմարիտ ազատություն. ավելորդ ու անհարկի պահանջները կտրում ու հեռացնում են ինձնից, անձնասեր ու հպարտ իմ կամքը սաստում ու ձաղկում եմ հնազանդության միջոցով, և այդպիսով, օգնությամբն աստուծո, հասնում եմ ոգու ազատության ու դրա հետ նաև հոգեկան ուրախություն եմ ձեռք բերում։ Իսկ ո՞վ ավելի ընդունակ է մեծ գաղափար կրելու և ծառայելու դրան՝ մեկուսացյալ հարո՞ստը, թե ազատագրյալն այս, որ թոթափել է բռնությունն իրերի և սովորությունների։ Վանականին կշտամբում են մենության համար. «Առանձնացել ես դու, որպեսզի անձը քո փրկես վանքի պատերի մեջ փակված, և մոռացել ես եղբայրական ծառայություն մատուցել մարդկության»։ Բայց կտեսնե՞նք տակավին, թե ո՞վ է ավելի ջերմեռանդորեն նվիրվելու եղբայրասիրության գործին։ Քանզի ոչ թե մենք, այլ նրանք են մեկուսացել, բայց չեն տեսնում մեկուսացումն իրենց։ Իսկ մեր միջավայրից ժողովրդական գործիչներ են հայտնվել ի հնուց անտի, և ինչո՞ւ այժմ ևս չեն կարող հայտնվել նրանք։ Նույն այդ խոնարհ ու հեզաբարո ծոմապահներն ու լռակյացները ոտքի կելնեն ու կգնան ծառայելու մեծ գործին։ Ժողովուրդն է փրկությունը Ռուսաց աշխարհի։ Իսկ ռուսական վանքն ի հնուց անտի եղել է ժողովրդի հետ։ Եթե ժողովուրդն է մեկուսացել, ուրեմն մենք ևս մեկուսացման մեջ ենք։ Ժողովուրդը մեզ նման է հավատում, և անհավատ գործիչը Ռուսաստանում ոչինչ չի կարողանա անել, եթե նույնիսկ անկեղծ սիրտ ունենա և հանճարեղ միտք։ Հիշեցե՛ք այս բանը։ Ժողովուրդը կդիմագրավի անաստվածին ու կհաղթահարի նրան, և Ռուսաց աշխարհը կլինի միասնական, ուղղափառ։ Պահեցեք ու պահպանեցե՛ք ուրեմն ժողովուրդը և պաշտպանեցե՛ք սիրտը նրա։ Դաստիարակեցե՛ք նրան առանց աղմուկի։ Ահա՛ վանական սխրալի պարտքը ձեր, քանզի աստվածազգայց է ժողովուրդն այս։

զ) Բան ինչ՝ վասն տերերի ու ծառաների և վասն այնորիկ, թե հնարավո՞ր է արդյոք, որ տերերն ու ծառաները փոխադարձաբար եղբայրանան ոգեպես

Աստված իմ, ո՞վ է ժխտում, որ ժողովուրդը ևս մեղքեր ունի։ Եվ ապականության հրդեհը տարածվում է նույնիսկ ուռանելիորեն, ժամ առ ժամ, վերևից է իջնում ներքև։ Ժողովրդի մեջ ևս սկիզբ է առնում մեկուսացման ախտը. կուլակներ և ցեցեր են առաջ գալիս։ Վաճառականն ավելի ու ավելի է տենչում հարգանք ու պատիվ ձեռք բերել, ձգտում է կրթյալ ցույց տալ իրեն՝ դույզն ինչ կրթություն չունենալով հանդերձ, և այդ իսկ նպատակով զարբելիորեն արհամարհում է հնավանդ սովորությունները և նույնիսկ ամաչում է դավանել հավատքն իր հայրերի։ Այցելում է իշխաններին, թեև ինքն ապականյալ գյուղացի է պարզապես։ Ժողովուրդը նեխում է հարբեցողության մեջ և արդեն չի կարողանում ձերբազատվել դրանից։ Ու որքա՞ն դաժանություն ընտանիքի, սեփական կնոջ, նույնիսկ երեխաների նկատմամբ. և այդ ամբողջը՝ հարբեցողության հետևանքով։ Մինչև իսկ տասնամյա երեխաներ եմ տեսել գործարաններում՝ վոխտ, վատառողջ, կքած և արդեն ապականյալ։ Խեղդուկ աշխատանոց, մեքենաների ժխոր, օրնիբուն աշխատանք, անառակ խոսքեր ու խմիչք, խմիչք. իսկ ա՞յդ է պետք՝ դեռ այնքան փոքրի՛կ երեխայի հոգուն։ Արև է պետք նրան, մանկական խաղեր են պետք, պայծառ օրինակներ շորս կողմից և գոնե մի կաթիլ սեր նրա նկատմամբ։ Թող չլինի՛ այլևս այդ բանը, վանականնե՛ր, թող վե՛րջ գտնի տանջանքը երեխաների, ելեք ու քարոզեցե՛ք այդ, փութացե՛ք, փութացե՛ք։

Սակայն կփրկի աստված Ռուսաստանը, քանզի ապականյալ է թեև ռամիկը և չի կարող արդեն հրաժարվել ժանտահոտ մեղքից, բայց այնուամենայնիվ գիտե, որ իր ժանտահոտ մեղքն անիծել է աստված, և որ ինքը վատ է վարվում, երբ մեղանչում է։ Այնպես որ ժողովուրդը մեր անդուլ հավատում է տակավին ճշմարտության, հավատում է աստուծո, արտասվում է բարեպաշտ խանդաղատանքով։ Այդպես չեն բարձր դասի մարդիկ։ Հետևելով գիտության, նրանք ուզում են իրենց բանականությամբ միայն արդարություն ստեղծել, բայց այլևս առանց Քրիստոսի, ինչպես առաջ, և արդեն հայտարարել են, թե չկա հանցագոր-

ծություն, չկա մեղսագործություն։ Եվ իրոք, դա ճիշտ է ըստ նրանց մտածելակերպի. քանզի եթե աստված չունես, այլևս ի՞նչ հանցագործություն։ Եվրոպայում ժողովուրդն արդեն բռնի ուժ գործադրելով է ապստամբում հարուստների դեմ, և ժողովրդի առաջնորդներն ամենուրեք տանում են նրան արյուն թափելու և ուսուցանում են, թե արդար է ցասումը նրա։ Սակայն «անիծյալ է ցասումը նրանց, վասնզի լի է դաժանությամբ»։ Իսկ աստված կփրկի Ռուսաստանը, ինչպես փրկել է բազում անգամներ։ Ժողովրդից պիտի գա փրկությունը, հավատքից նրա ու խոնարհությունից։ Հայրեր և ուսուցիչնե՛ր, պահպանեցե՛ք հավատքը ժողովրդի, լոկ երազանք չէ այդ. ամբողջ իմ կյանքում զարմացրել է ինձ վեհաշունչ և ճշմարիտ արժանապատվությունը մեր մեծ ժողովրդի, ինքս եմ տեսել, անձամբ կարող եմ վկայել, տեսել եմ ու զարմացել, տեսել եմ՝ հակառակ նույնիսկ մեր ժողովրդի չքավոր երևույթին ու նրա մեղքերի ապականության։ Ստրկամիտ չէ նա, և այն էլ՝ երկու դար տևած ստրկությունից հետո։ Համարձակ է իր տեսքով ու վարվելակերպով, բայց առանց չարամիտ լինելու։ Ու վրեժխնդիր չէ նա, ու նախանձոտ չէ։ «Դու ազնվազարմ ես, հարուստ, դու խելացի ես ու տաղանդավոր. թո՛ղ այդպես լինի, աստված օրհնի քեզ։ Հարգում եմ քեզ, բայց գիտեմ, որ ե՛ս էլ մարդ եմ։ Քեզ հարգում եմ առանց նախանձի և հենց դրանով էլ իմ մարդկային արժանապատվությունն եմ ի հայտ բերում քո առաջ»։ Հիրավի, եթե չեն ասում այսպես (որովհետև անկարող են դեռ այս բանն ասելու), ապա վարվում են այս ոգով, ինքս եմ տեսել, ինքս եմ զգացել. և, կհավատա՞ք, ինչքան ավելի աղքատ ու ստորադաս է ռուս մարդը մեր, այնքան ավելի նկատելի է նրա մեջ ճշմարտությունն այս վեհաշունչ, քանզի ժողովրդից դուրս եկած հարուստ կուլակներն ու ցեցերը մեծավ մասամբ ապականված են արդեն, և այստեղ շատ բան, շատ բան հետևանքն է մեր անփութության և անտարբերության։ Բայց կփրկի աստված իր ժողովրդին, վասնզի մեծ է Ռուսաստանն իր խոնարհությամբ։ Երազում եմ տեսնել և կարծես հստակորեն տեսնում եմ արդեն մեր ապագան. վասնզի պիտի լինի այնպես, որ մինչև իսկ ամենից ավելի ապականյալ հարուստը մեր պիտի ամաչի ի վերջո աղքատների առաջ՝ իր հարստության համար, իսկ աղքատը, տեսնելով խոնարհությունն այդ, պիտի հասկանա ու պիտի զիջի նրան ուրախությամբ և պիտի սիրալիր պատասխանի նրա բարեմտությունն ամոթահարության։

Հավատացեք, որ այդպես է լինելու վերջ ի վերջո. դեպի այդ բանն է տանում ընթացքն իրերի։ Մարդու հոգեկան արժանապատվության մեջ է լոկ հավասարությունը, և միայն մեզ մոտ պիտի այդ բանը հասկանան։ Եթե եղբայրներ լինեն մարդիկ, կլինի նաև եղբայրություն, իսկ եղբայրության հաստատումից առաջ երբեք չեն կարող նրանք արդար բաժանում կատարել իրար միջև։ Պահպանենք պատկերը Քրիստոսի, և նա թանկագին ադամանդի նման պիտի փայլ արձակի համայն աշխարհին... Եղիցի՛, եղիցի՛։

Հայրեր և ուսուցիչնե՛ր, սրտաշարժ մի դեպք պատահեց ինձ տարիներ առաջ։ Իմ թափառումների ընթացքում, նահանգային Կ. քաղաքում հանկարծ հանդիպեցի իմ նախկին համհարզ Աֆանասիին, իսկ այն ժամանակ ութ տարի էր անցել արդեն մեր բաժանումից հետո։ Պատահաբար տեսավ նա ինձ շուկայում, ճանաչեց, վազելով մոտեցավ, և աստվա՞ծ իմ, որքա՞ն ուրախացավ, ուղղակի փարվեց ինձ. «Հա՞յր սուրբ, տե՛ր իմ, դո՞ւք եք, դո՞ւք։ Բայց իրո՞ք ձեզ եմ տեսնում»։ Իր տունը տարավ ինձ։ Բանակից հեռացել էր արդեն, ամուսնացել էր, և արդեն երկու փոքրիկ երեխա ուներ։ Կնոջ հետ իրենց ապրուստը ճարում էին մանրավաճառություն անելով շուկայում։ Աղքատիկ էր նրանց սենյակը, բայց կոկիկ ու զվարթ։ Նստեցրեց ինձ, ինքնաեռը դրեց, մարդ ուղարկեց կնոջը կանչելու, կարծես թե իմ հայտնվելը մի տեսակ տոն էր նրա համար։ Մոտս բերեց երեխաներին. «Օրհնեցե՛ք, հայր սուրբ»։— «Միթե ե՞ս պետք է օրհնեմ,— պատասխանեցի,— պարզ ու խոնարհ մի վանական եմ ես, նրանց համար կաղոթեմ առ աստված, իսկ քեզ համար, Աֆանասի Պավլովիչ, միշտ եմ աղոթում, այն օրից սկսյալ ամենայն օր, վասնզի քեզնից է, որ սկիզբ առավ այս ամբողջը»։ Եվ բացատրեցի նրան, որքան որ կարող էի։ Եվ ի՞նչ. մարդը նայում էր ինձ շարունակ ու չէր կարողանում պատկերացնել, որ ես, նախկին նրա տերը, սպա, այժմ այդպիսի տեսքով և այդպիսի հագուստով գտնվում եմ նրա առաջ. արտասվեց նույնիսկ։ «Ինչո՞ւ ես արտասվում,— ասացի նրան,— ավելի լավ է՝ ուրախացի՛ր ինձ համար սրտանց, սիրելի, անմոռանալի՛ բարեկամդ իմ, վասնզի բերկրալի ու պայծառ է իմ ուղին»։ Շատ բան չէր ասում, այլ շարունակ հառաչում էր և ինձ նայելով գլուխն էր շարժում գորովալից։ «Իսկ ո՞ւր է ձեր հարստությունը»,— հարցրեց։ «Վանքին եմ նվիրել,— պատասխանեցի,— ու մենք ապրում ենք համակեցությամբ»։ Թեյից հետո սկսեցի հրաժեշտ տալ նրանց, և հանկարծ նա մի

հիսուն կոպեկանոց հանձնեց ինձ որպես նվիրատվություն վանքի համար, իսկ մի ուրիշ հիսուն կոպեկանոց էլ, տեսնեմ, հապճեպորեն խցկում է ձեռքս. «Սա ձեզ,— ասում է,— ուխտավոր եք, ճամփա եք գնում, գուցե թե պետք լինի, հայր սուրբ»։ Ընդունեցի նրա հիսուն կոպեկը, խոնարհվեցի նրան ու կնոջը և դուրս եկա ուրախացած։ Ու մտածում էի ճանապարհին. «Ահա հիմա երկուքս էլ, թե՛ նա՝ իր տանը նստած, թե՛ ես՝ ճանապարհին քայլելով, հառաչում ենք անշուշտ և միաժամանակ ժպտում ուրախ, մեր սրտերը բերկրանքով լի, գլուխներս շարժելով ու հիշելով, թե ինչպես նորից հանդիպեցինք կամոքն աստուծո»։ Եվ այդ օրից հետո երբեք այլևս չեմ տեսել նրան։ Ես նրա տերն էի եղել, իսկ նա՝ իմ ծառան, իսկ այժմ, երբ մենք սիրով ու հոգեպարար խանդաղատանքով համբույր տվեցինք միմյանց, մարդկային մեծ միավորումը կատարվեց մեր միջև։ Շատ եմ խորհրդածել այս մասին, իսկ այժմ մտածում եմ այսպես. մի՞թե այնքան դժվար է ըմբռնել, թե այս մեծ ու պարզասիրտ միավորումը կարող է ամենուրեք ի կատար ածվել մեր ռուս մարդկանց միջև, երբ որ գա ժամանակը դրա։ Հավատում եմ, որ պիտի կատարվի այդ, և ժամանակը մոտ է։

Իսկ ծառաների վերաբերյալ ավելացնեմ հետևյալը. իմ երիտասարդության օրերին հաճախակի բարկանում էի ծառաների վրա՝ «խոհարարուհին շատ տաք մատուցեց ճաշը, համհարզը հագուստս չի խոզանակել»։ Բայց հանկարծ լույսի նման ծագեց իմ մեջ սիրելի եղբորս այն միտքը, որ նրանից լսել էի իմ մանկության օրերին. «Իմ ամբողջ էությամբ արժանի՞ եմ արդյոք, որ ուրիշը ծառայի ինձ, իսկ ես, օգտվելով նրա աղքատ ու տգետ լինելուց, շարունակ հրամայեմ նրան»։ Եվ զարմանքով մտածեցի այդ նույն պահին, թե ամենապարզ ու ակնհայտ մտքերը որքա՞ն ուշ են հասնում մեր գիտակցության։ Անհնար է, որ ծառաներ չլինեն աշխարհում, բայց այնպես արա, որ քո ծառան ավելի ազատ լինի ոգեպես, քան եթե ծառա չլիներ նա։ Եվ ինչո՞ւ չեմ կարող իմ ծառայի ծառան լինել և այնպես անել, որ նա նույնիսկ տեսնի այդ բանը՝ առանց իմ կողմից որևէ հպարտության և նրա կողմից անվստահության։ Ինչո՞ւ իմ ծառան հարազատի պես չլինի ինձ համար, այնպես որ ի վերջո նրան ընդունեմ իմ ընտանիքի մեջ և ուրախանամ այդպես անելով։ Մինչև իսկ այժմ իրագործելի է այս բանը, բայց այսօր դա միմիայն ծառայի մարդկանց ապագա հոյակապ միավորման, երբ մարդն

այլևս ոչ թե ծառա պիտի փնտրի իր համար և ոչ թե պիտի ցանկանա ծառա դարձնել իր նման մարդկանց, ինչպես այժմ, այլ ընդհակառակն՝ ինքը իր ամբողջ էությամբ պիտի ձգտի ծառա դառնալ բոլորին, կատարելով պատվիրանն ավետարանի։ Ու մի՞թե երազ է այն, որ ի վերջո մարդն իր ուրախությունը գտնի լուսավորման ու գթասրտության արի գործեր կատարելու մեջ, և ոչ թե դաժան հաճույքների՝ որկրամոլության, անառակության, գոռոզության, սնապարծության և նախանձամտորեն իրար գերազանցելու, ինչպես այժմ։ Հաստատապես հավատում եմ, որ երազ չէ այդ, և որ մոտ է ժամանակը։ Ծիծաղում են ու հարցնում՝ ե՞րբ է գալու ժամանակն այդ և գալո՞ւ է արդյոք։ Իսկ ես մտածում եմ, որ մենք, օգնությամբ Քրիստոսի, ի կատար կածենք գործն այդ վսեմ։ Եվ որքա՞ն գաղափարներ են եղել երկրի վրա, մարդկային պատմության մեջ, գաղափարներ, որոնք մինչև իսկ տասը տարի առաջ աներևակայելի լինելով՝ հանկարծ ի հայտ են եկել, երբ հասել է խորհրդավոր ժամանակը դրանց, ու տարածվել են ամբողջ երկրի երեսին։ Այդպես և պիտի լինի մեզ մոտ, ու պիտի ճառագե աշխարհին ժողովուրդը մեր, և պիտի ասեն մարդիկ. «Քարն այն, որ մերժել էին հիմնադիրները, դարձավ անկյունաքարը կառույցի»։ Իսկ հեգնողներին կարող ենք հարց տալ. եթե երազ է ձգտումը մեր, ապա դուք ինքներդ ե՞րբ պիտի բարձրացնեք ձեր կառույցը և արդար գոյավիճակ ստեղծեք՝ լոկ բանականությամբ ձեր, առանց Քրիստոսի։ Եվ եթե պնդում էլ են նրանք, թե իրենք են, որ առաջ են գնում դեպի միավորումը մարդկանց, ապա նրանցից լոկ ամենապարզամիտներն են, որ ճշմարտապես հավատում են այդ բանին, այնպես որ նույնիսկ կարելի է զարմանալ այդ պարզամտության վրա։ Հիրավի, նրանք ավելի են հրապուրվում ցնորական երազանքներով, քան մենք։ Մտածում են արդար գոյավիճակ ստեղծել, բայց, մերժելով Քրիստոսին, ի վերջո արյամբ են ողողելու աշխարհը, վասնզի արյունն արյուն է բերում, և սուր բարձրացնողը սրով պիտի ընկնի։ Եվ եթե չլիներ խոստումը Քրիստոսի, այդպես էլ կբնաջնջեին իրար՝ մինչև վերջին երկու մարդն ի վերա երկրի։ Այս վերջին երկու մարդն ևս, անսալով իրենց հպարտության, չէին կարողանա զսպել միմյանց, այնպես որ վերջինը կոչնչացներ վերջընթերին, ապա և ինքնիրեն։ Եվ կկատարվեր այդպես, եթե չլիներ խոստումը Քրիստոսի, թե ի սեր խոնարհների ու հեզերի պիտի կարճեցվեն օրերն այդ։

Դեռ այն օրերին, երբ սպայական համազգեստը շարունակում էի հագնել իմ մենամարտից հետո, ծառաների մասին խոսեցի բարձրաշխարհիկ հասարակության մեջ, և հիշում եմ, որ բոլորը զարմացան իմ խոսքերի վրա. «Ինչ է,— ասացին,— բազմոցի վրա՞ նստեցնենք ծառային և թե՞յ մատուցենք նրան»։ Ու ես պատասխանեցի նրանց. «Իսկ ինչո՞ւ չանել և այդպես, թեկուզ երբեմն միայն»։ Բոլորը ծիծաղեցին հայնժամ։ Թեթևամիտ էր հարցը նրանց, իսկ պատասխանն իմ՝ տարտամ, բայց մտածում եմ, որ դրա մեջ որոշ ճշմարտություն կար։

է) Վասն աղոթքի, սիրո և այլ աշխարհների հետ հաղորդակցության

Պատանյա՛կ, մի՛ մոռանար աղոթել։ Ամեն անգամ աղոթքի մեջ քո, եթե անկեղծ է, պիտի մի նոր զգացում առկայծի, իսկ այդ զգացման մեջ՝ մի նոր միտք, որ չգիտեիր առաջ, և որ պիտի վերստին քաջալերի քեզ. ու պիտի հասկանաս, որ աղոթքը դաստիարակություն է։ Հիշիր նաև այս. ամեն օր և երբ որ կարող ես՝ կրկնիր մտքի մեջ քո. «Ողորմյա, տե՛ր, բոլոր նրանց, որոնք կանգնում են այժմ քո առաջ»։ Վասնզի ամեն ժամ և ամեն վայրկյան այս երկրի վրա հազարավոր մարդիկ հեռանում են կյանքից, և հոգիները նրանց կանգնում են աստուծո առաջ. ու նրանցից քանի՞-քանիներն են առանձնության մեջ հրաժեշտ տալիս երկրին, մնալով անհայտ, տխուր ու վշտացած, որ ոչ ոք չի գթում իրենց և նույնիսկ ոչ ոք չգիտե ամենևին, թե ապրե՞լ են իրենք կամ ոչ։ Եվ ահա, թերևս երկրի մյուս ծայրից բարձրանա առ աստված աղոթքը քո՝ վասն խաղաղության նրա հոգու, թեպետ և ամենևին չչիր ճանաչում դու հանգուցյալին, իսկ նա՝ քեզ։ Աստուծո առաջ երկյուղահար կանգնած նրա հոգին ինչպիսի՞ խանդաղատանքով կլեցվի այդ վայրկյանին, երբ զգա, թե իր համար ևս կա մի աղոթող, թե իրեն ևս սիրող մի մարդկային էակ է մնացել երկրի վրա։ Եվ աստված ավելի ողորմածորեն կնայի ձեզ երկուսիդ, վասնզի եթե դո՛ւ ես այնքան գթացել հանգուցյալի հոգուն, ապա որքա՞ն ևս առավել պիտի գթա աստված, որ անհունորեն ավելի ողորմած է ու սիրազեղ, քան դու։ Ու կների նրան քո սիրույն։

Եղբայրնե՛ր, մի՛ վախենաք մարդկանց մեղքերից, սիրեցեք մարդուն՝ իր մեղքերով իսկ, վասնզի սերն այդ նման է աստվածային սիրո և գերագույն սերն է ի վերա երկրի։ Սիրեցեք

համայն ստեղծագործությունն աստուծո, թե՛ ամբողջությունը, թե՛ յուրաքանչյուր ավազահատիկը նրա։ Սիրեցե՛ք աստուծո ստեղծած ամեն մի տերև, ամեն մի ճառագայթ։ Սիրեցե՛ք կենդանիներին, սիրեցե՛ք բույսերին, սիրեցե՛ք ամեն բան։ Սիրելով ամեն բան՝ իրերի մեջ կըմբռնես խորհուրդն աստվածային։ Ըմբռնելով մի անգամ՝ կսկսես առավել ու առավել իմանալ խորհուրդն այդ հետզհետե, անդադար, օր ավուր։ Եվ ի վերջո կսիրես աշխարհն ամբողջ՝ արդեն համայնական, համասփյուռ սիրով։ Սիրեցե՛ք կենդանիներին. մտածման սկզբնատարրերը և անվերջով ուրախություն է տվել նրանց աստված։ Մի՛ վրդովեք ուրախությունն այդ, մի՛ տանջեք նրանց, մի՛ զրկեք նրանց երջանկությունից, մի՛ հակառակվեք մտածմանն աստուծո։ Մա՛րդ, մի՛ գոռոզանար կենդանիների հանդեպ. անմեղ են նրանք, իսկ դու, քո մեծությամբ հանդերձ, նեխոտում ես երկիրը քո երևմամբ և քեզնից հետո թողնում ես շարավոտ հետքը քո. այդպես է գրեթե յուրաքանչյուր ոք մեզնից, ավա՛ղ։ Մանուկներին հատկապե՛ս սիրեցեք, զի նրանք ևս անմեղ են հրեշտակաց նման, և ապրում են՝ խանդաղատանքով լեցնելու և մաքրազարդելու համար սրտերը մեր, մի տեսակ ուղեցույց ծառայելու մեզ։ Վա՛յ նրան, որ վիրավորում է հոգին մանկան։ Իսկ ինձ հայր Անֆիմն է սովորեցրել սիրել փոքրիկներին. մեր թափառումների ժամանակ պատահում էր հաճախ, որ նա, ընդհանրապես հեզահամբույր ու սակավախոս մարդ, քաղցրաբլիթ ու շաքարեղեն էր գնում մեր հանգանակած դահեկաններով ու բաժանում էր նրանց։ Չէր կարող առանց խոր հուզմունքի անցնել երեխաների մոտով. այդպիսին էր մարդը։

Լինում են մտքեր, որոնց առաջ մնում ես տարակուսած, հատկապես երբ տեսնում ես մեղքերը մարդկանց, և հարց ես տալիս դու քեզ. «Ուժո՞վ հաղթահարեմ, թե խոնարհ սիրով»։ Միշտ որոշիր. «Խոնարհ սիրով հաղթահարեմ»։ Եթե մի անգամ ընդմիշտ վճռես այդպես, աշխարհն ամբողջ կարող ես նվաճել։ Սիրազեղ խոնարհությունը ահռելի ուժ է, բոլոր ուժերից հզորագույնը, որի նման ոչինչ չկա։ Ամեն օր ու ամեն ժամ, ամեն րոպե շրջահայաց եղիր անձիդ նկատմամբ ու հսկիր քեզ, որ բարեվայելուչ լինի կերպարը քո։ Ահա անցնում ես փոքրիկ երեխայի մոտից, անցնում շարացած, գեշ խոսքեր ասելով, հոգիդ ցասմամբ լեցուն. գուցե չես էլ նկատում երեխային, բայց նա տեսնում է քեզ, և ողորմելի ու անշնորհ կերպարը քո մնում է գուցե

փոքրիկ ու անպաշտպան սրտում։ Դու չգիտես այդ, բայց գուցե դրանով իսկ մի շարաղետ սերմ նետեցիր արդեն նրա մեջ, իսկ սերմն այդ գուցե ծլի ու մեծանա, և ամբողջ այն պատճառով, որ դու չզգուշացար երեխայի առաջ, որովհետև շրջահայաց ու գործունյա սիրո ոգով չես դաստիարակել դու քեզ։ Եղբայրնե՛ր, սերն ուսուցիչ է, բայց պետք է գիտենալ, թե ինչպե՛ս կարելի է ձեռք բերել այն, վասնզի դժվար է ձեռք բերվում սերը, թանկ է գինը նրա, երկար աշխատանք ու երկար ժամանակ է պետք վաստակելու համար։ Չի պետք է սիրել ոչ թե պատահաբար ու մի ակնթարթ, այլ առընդմիշտ։ Իսկ պատահաբար սիրել՝ կարող է ամեն ոք, շարագործն անգամ կսիրի։ Պատանի եղբայրն իմ ներումն էր խնդրում թռչնակներից. կարծես թե անիմաստ է այդ, բայց ճշմարիտ է արդարև, քանզի աշխարհն օվկիանոսի է նման, ամեն ինչ հոսում է և շփվում մեկը մյուսին. այստեղ կատարված հպումն արձագանք է տալիս աշխարհի մյուս ծայրում։ Թեկուզ և խենթություն լինի ներումն խնդրել թռչնակներից, բայց չէ՞ որ թռչնակներն էլ, երեխան էլ ու ամեն մի կենդանի արարած ավելի ուրախ կզգար քո շուրջ, գոնե դույզն ինչ ավելի ուրախ, եթե դու ինքդ ավելի բարեզարդ լիներիր, քան այժմ։ Աշխարհն օվկիանոսի է նման, ասում եմ ձեզ։ Հայնժամ թռչնակներին ևս կուղղեիր աղոթքը քո, համայնական սիրով տենչավառ, մի տեսակ հափշտակությամբ ցնծուն, և կազաչեիր, որ նրանք ևս թողություն շնորհեն քո մեղքերին։ Ուրեմն թանկ գնահատիր հափշտակությունն այդ ցնծագին, որքան էլ դա անիմաստ թվա մարդկանց։

Բարեկամնե՛ր իմ, խնդրեցեք, որ ուրախություն տա առաված ձեզ։ Ուրախ եղեք մանուկների նման, թռչունների նման երկնային։ Ու թող ձեր գործունեության մեջ չխռովի ձեզ մեղքը մարդկանց, մի՛ վախենաք, որ մեղքն այդ կխափանի գործը ձեր և արգելք կլինի դրա կատարման, մի՛ ասեք՝ «Հզոր է մեղքը, հզոր է պղծությունը, հզոր է գեշ միջավայրը, իսկ մենք միայնակ ենք ու անզոր, գեշ միջավայրը կխափանի մեզ և արգելք կլինի բարի գործերի կատարման»։ Խույս տվեք այդ վհատությունից, մանկտի՛ք։ Մեկ փրկություն միայն ունես այդ պարագային. վերցրու ինքդ քեզ ու քե՛զ իսկ պատասխանատու նկատիր մարդկային բոլոր մեղքերի համար։ Բարեկա՛մդ իմ, չէ՞ որ այդպես է հիրավի, քանզի բա-

վական է միայն, որ ինքդ քեզ անկեղծորեն պատասխանատու նկատես ամեն ինչի և բոլորի համար, իսկույն կեթ կտեսնես, որ այդ այդպես է արդարև, և որ դու ինքդ մեղավոր ես բոլորի և ամեն ինչի համար։ Իսկ սեփական ծուլությունդ ու անզորությունդ ուրիշ մարդկանց վրա նետելով, վերջ ի վերջո հաղորդակից կլինես սատանայական հպարտության և կտրտնջաս աստուծո դեմ։ Ապա և սատանայական հպարտության մասին մտածում եմ այսպես. երկրի վրա մեզ համար դժվար է իսկ ըմբռնել այն, ուսաի որքան հեշտ է ընկնել սխալի մեջ և հաղորդակից լինել նրբան, ու տակավին կարծել նաև, թե վսեմ ու գեղեցիկ մի բան ենք անում։ Ու հիրավի, մեր մարդկային բնության ուժեղագույն զգացումներից ու շարժումներից շատերն առայժմ չենք կարող ըմբռնել երկրի վրա. այս ևս թող չգայթակղեցնի քեզ, և մի՛ մտածիր, թե այս կարող է իբրև արդարացում ծառայել քեզ որևէ բանի համար, քանզի դատավորն հավիտենական քեզնից կպահանջի այն, ինչ կարող էիր ըմբռնել, և ոչ թե այն, ինչ չէիր կարող. ինքդ կհամոզվես այն ժամանակ, որովհետև ամեն ինչ կըտեսնես ճշտորեն ու չես վիճարկի այլևս։ Իսկ երկրի վրա կարծես թե խարխափում ենք արդարև, ու եթե չլիներ մեր առաջ թանկագին պատկերը Քրիստոսի, ապա բոլորովին կմոլորվեինք ու կկործանվեինք իսպառ, ինչպես մարդկային ցեղը ջրհեղեղից առաջ։ Երկրի վրա շատ բան գաղտնիք է մեզ համար, բայց դրա փոխարեն շնորհված է մեզ այն զգացողությունը խորախորհուրդ, որով զգում ենք մեր կենդանի կապը մյուս աշխարհի հետ՝ երկնային ու բարձրագույն աշխարհի. ու նաև արմատները մեր մտքերի ու զգացումների ոչ թե այստեղ են, այլ ուրիշ աշխարհներում։ Ահա թե ինչու փիլիսոփաներն ասում են, թե մեր երկրի վրա հնարավոր չէ ըմբռնել էությունն իրերի։ Աստված սերմեր է վերցրել այլ աշխարհներից, ցանել է այս երկրի վրա և իր պարտեզն աճեցրել. ու բողբոջել է ամեն ինչ, որ կարող էր բողբոջել, սակայն աճածն ապրում է ու կենդանի մնում՝ ուրիշ խորհրդավոր աշխարհների հետ իր հաղորդակցության զգացմամբ միայն։ Եթե զգացումն այդ թուլանա կամ ոչնչանա քո մեջ, ապա կմահանա և այն, որ աճեցրել էր քո մեջ աստված։ Հայնժամ անտարբեր կդառնաս կյանքի նկատմամբ ու նույնիսկ կատես կյանքը։ Այսպես եմ մտածում։

ը) Հնարավո՞ր է արդյոք, որ մարդ մարդու դատավորը լինի։ Մինչև վերջ աներեր հավատքի մասին

Հիշի՛ր մանավանդ, որ ոչ ոքի դատավորը չես կարող լինել։ Քանզի երկրի վրա ոչ մի մարդ չի կարող դատել հանցագործին, մինչև որ դատավորն ինքը չգիտակցի, որ ինքը ճիշտ նույնպիսի հանցագործ է, ինչպես իր առջև կանգնած մարդը, և որ այդ մարդու կատարած հանցանքի համար գուցե ինքն է մեղավոր բոլորից ավելի։ Իսկ երբ ըմբռնի այս բանը, հայնժամ կարող է և դատավոր լինել։ Որքան էլ անմիտ թվա երևութապես, բայց ճշմարիտ է այս։ Քանզի եթե ինքս արդար մարդ լինեի, թերևս հանցագործ չլիներ նա, որ կանգնած է իմ առջև։ Եթե կարող ես ինքդ քո վրա վերցնել հանցանքն այն հանցագործի, որ կանգնած է քո առջև ու ենթակա է քո սրտի՛ դատին, վերցուր անմիջապես և ի՛նքդ տուժիր նրա փոխարեն, իսկ նրան ազատ արձակիր առանց կշտամբելու։ Եվ եթե մինչև իսկ օրենքն է քեզ դատավոր կացուցանել նրա վրա, այդ պարագային ևս, որքան որ հնարավոր է քեզ համար, գործիր այս նույն ոգով, վասնզի հանցագործը կգնա և ավելի դառնորեն կդատապարտի ինքնիրեն։ Իսկ եթե քո համբույրին անզգա մնալով հեռանա ու քեզ իսկ ծաղրի, այդ ևս թող չգայթակղեցնի քեզ. նշանակում է՝ չի եկել դեռ ժամանակը նրա, բայց պիտի գա պատշաճ պահին։ Իսկ թե չգա, փույթ չէ. եթե ոչ նա, ապա ուրիշ մեկը պիտի հասկանա նրա փոխարեն ու պիտի տառապի, պիտի դատապարտի ու մեղադրի ինքնիրեն, և ճշմարտությունը պիտի լրացվի։ Հավատա՛ այս բանին, աներկբայորեն հավատա, վասնզի այս բանի վրա է հիմնված ամբողջ հույսն ու հավատքը սրբերի։

Գործի՛ր անդուլ, անդադար։ Եթե հիշես ի գիշերի, քուն մրտնելու պահին՝ «Չեմ կատարել այն, ինչ պետք է կատարեի», վեր կաց իսկույն և կատարի՛ր։ Եթե չարակամ ու անզգա են մարդիկ քո շուրջ և չեն ուզում լսել քեզ, ընկի՛ր նրանց ոտքերը ու ներումն խնդրիր նրանցից, վասնզի դու ևս մեղավոր ես հիրավի, որ չեն ուզում լսել քեզ։ Իսկ եթե չես կարող այլևս խոսել գազազած մարդկանց հետ, ապա լռելյայն ծառայիր նրանց քո նվաստացման մեջ, երբեք չկորցնելով հույսը քո։ Այլ եթե լքեն քեզ բոլորը, նույնիսկ վռնդեն բռնի ուժով ու մնաս առանձին, ապա նետվիր գետին ու համբուրի՛ր երկիրը, թրջիր քո արցունքներով, և

պտուղ կտա երկիրը քո արցունքներից, թեկուզ ոչ ոք տեսած ու լսած չլինի քեզ առանձնության մեջ քո։ Հավատա մինչև՛ վերջ, եթե նույնիսկ պատահի, որ բոլորը մոլորվեն երկրի վրա և դու միակը մնաս հավատարիմ. այդ պարագային ևս, ո՛վ միակ մնացյալ, մատուցիր զոհաբերությունդ և գովաբանիր զաստված։ Իսկ եթե քեզ նման երկու հոգի հանդիպեն միմյանց, ահա արդեն մի ամբողջ աշխարհ, կենդանի սիրո մի աշխարհ. գրկեցեք իրար գորովալից ու գովաբանեցեք բարձրյալին, վասնզի՝ թեկուզ ձեր երկուսի մեջ միայն, բայց ամբողջացել է արդարև ճշմարտությունը նրա։

Եթե ինքդ մեղանչես ու նույնիսկ մահու չափ տրտմես քո մեղքերի համար և կամ անակնկալ մի մեղքի համար քո, ապա ուրախացիր վասն ուրիշի, ուրախացիր վասն արդար մարդու, ուրախացիր վասն այնորիկ, որ եթե դու մեղանչել ես, ապա նա՝ արդար է ու չի մեղանչել։

Իսկ եթե մարդկանց չարագործությունն այնքան վրդովի քեզ, որ այլևս անդիմադրելի զայրույթ ու տրտմություն զգաս, մինչև իսկ չարագործներից վրեժ լուծելու աստիճան, ապա ամենից ավելի սոսկա՛ յդ զգացումից. իսկույն ևեթ գնա ու քեզ համար տառապանք որոնիր այնպես, որ իբրև թե ինքդ մեղավոր լիներիր մարդկանց այդ չարագործության համար։ Ընդունիր տառապանքն այդ ու կրիր, և կամոքվի սիրտը քո, ու կհասկանաս, որ ինքդ ևս մեղավոր ես, քանզի կարող էիր լույս տալ չարագործներին՝ որպես միակ անմեղը մինչև իսկ, և լույս չտվեցիր։ Եթե լույս տայիր, ապա ուրիշների համար ևս կլուսավորեիր ճանապարհը քո լույսով, և չարագործություն կատարողը չէր ընկնի թերևս այդ մեղքի մեջ՝ քո լույսի՛ շնորհիվ։ Եվ նույնիսկ եթե լույս ես տվել, բայց տեսնում ես, որ մարդիկ չեն փրկվում մինչև իսկ քո լույսի շնորհիվ, հաստատ մնա և մի տարակուսիր երկնային լուսո զորության վրա. հավատա՛, որ եթե այժմ չեն փրկվել, պիտի փրկվեն հետագայում։ Իսկ եթե հետագայում ևս չփրկվեն, որդիները նրանց փրկվեն պիտի, քանզի չի մեռնի լույսը քո, թեկուզ և դու մեռած լինես արդեն։ Արդար մարդը գնում է, բայց մնում է լույսը նրա։ Իսկ փրկչի մահից հետո միշտ էլ փրկվում են մարդիկ։ Չի ընդունում մարդկային ցեղն իր մարգարեներին ու խոշտանգում է նրանց, բայց մարդիկ սիրում են իրենց նահատակներին ու մեծարում այն մարդկանց, որոնց խոշտանգել են իրենք։ Իսկ դու աշխատում ես

ընդհանուրի համար, գործում ես վասն ապագայի։ Ու երբեք վարձատրություն մի՛ փնտրիր, քանզի առանց այդ էլ մեծ է քո վարձատրությունն այս երկրի վրա. հոգեկան ուրախությունն է այդ, որ միայն արդար մարդուն է շնորհվում։ Մի՛ երկնչիր ոչ մեծավորներից, ոչ էլ հզորներից, այլ եղիր իմաստուն և միշտ բարեզարդ։ Չափն ու սահմանը գիտցիր, պայմանաժամերը գիտցիր, սովորիր իմանալ դրանք։ Իսկ երբ մենության մեջ լինես, աղոթի՛ր։ Սիրիր ծնկի իջնել ու գետնատարած համբուրե՛լ երկիրը։ Համբուրի՛ր երկիրը և սիրի՛ր անդադար, անհագորե՛ն սիրիր, բոլորի՛ն սիրիր, ամե՛ն ինչ սիրիր, ձգտիր այդ սիրազեղ ցնծության ու հափշտակության։ Թրջիր երկիրն արցունքներով քո ուրախության ու սիրիր այդ արցունքները քո։ Եվ մի՛ ամաչիր այդ ցնծագին հափշտակությունից, թանկ գնահատիր, վասնզի աստվածային շնորհ է դա, մե՛ծ շնորհ, և տրվում է ոչ թե բազմաց, այլ ընտրյալներին։

Թ) Վասն դժոխոց և դժոխային հրո, միստիկ դատողություն

Հայրեր և ուսուցիչներ. մտածում եմ՝ «ի՞նչ բան է դժոխքը»։ Դատում եմ այսպես. «Դա այն տառապանքն է, որով տվայտում է մարդ, երբ այլևս չի կարող սիրել»։ Անհուն գոյության մեջ, որ ոչ ժամանակով է չափվում, ոչ էլ տարածությամբ, հոգեղեն մի արարած, հայտնվելով երկրի վրա, լոկ մեկ անգամ կարողությունն է ստանում ասելու ինքն իրեն. «Ես կամ, ու ես սիրում եմ»։ Մեկ անգամ, մեկ անգամ միայն տրվում է նրան գործունյա, կենդանի սիրո ակնթարթը, դրա համար և երկրային կյանքն է տրվում, տրվում են կյանքի շրջաններն ու պայմանաժամերը։ Եվ ի՞նչ. այդ երջանիկ արարածը մերժել է շնորհն անգին, չի գնահատել այն, չի սիրել, հեգնանքով է նայել ու մրնացել է անզգա։ Այդպիսի մեկը, հեռացած լինելով այլևս երկրային կյանքից, տեսնում է գոգն Աբրահամի, նաև խոսում է Աբրահամի հետ, ինչպես ասված է մեզ մեծատան ու Ղազարոսի առակում, ու նաև դրախտն է դիտում և կարող է բարձրանալ աստուծո մոտ. բայց տանջվում է ճիշտ այն պատճառով, որ կարող է աստուծո մոտ բարձրանալ առանց սիրած լինելու, կարող է հաղորդակցել նրանց հետ, ովքեր սիրել են, մինչդեռ ինքն արհամարհել է սերը նրանց։ Վասնզի տեսնում է հստակորեն և այլևս ինքն է ասում իրեն. «Այժմ արդեն իմացություն ունեմ ու թեև

ծարավի եմ սիրո, բայց այլևս սիրանքի վսեմությունը չի լինելու իմ սիրո մեջ, չի լինելու նաև զոհաբերություն, քանզի վերջացավ կյանքն իմ երկրային, և հայր Աբրահամն այլևս չի գա գեթ մի կաթիլ կենարար ջուր տալու (այսինքն կրկին երկրային կյանք շնորհելու նախկինի նման, գործունյա մի կյանք), չի զովացնի հոգեկան սիրո ծարավն հրակեզ, որով այրվում եմ հիմա, մինչդեռ արհամարհել եմ այդ սերը երկրի վրա. ինձ համար չկա այլևս կյանք, ու ժամանակը ևս գոյություն չի ունենալու։ Թեկուզ նույնիսկ ուրախությամբ ուզեի կյանքս տալ ուրիշների համար, բայց անհնար է արդեն, որովհետև անցավ այն կյանքը, որ կարելի էր զոհաբերել վասն սիրո, և այժմ անդունդ կա այդ կյանքի և այս գոյության միջև»։ Խոսում են դժոխային նյութական հրո մասին. չեմ քննում խորհուրդն այդ և սոսկում եմ դրանից, բայց մտածում եմ, որ եթե նույնիսկ գոյություն ունենար հուրն այդ նյութական, ապա պիտի ուրախանային արդարև դրա համար, վասնզի, երևակայում եմ, նյութական տանջանքի մեջ պիտի մի վայրկյա՛ն գոնե մոռանային հոգեկան տանջանքը, որ ավելի սարսափելի է։ Այլև անհնար է վերացնել նրանցից այդ տանջանքը հոգեկան, վասնզի տանջանքն այդ ոչ թե արտաքին է, այլ նրանց մե՛ջ է։ Եվ եթե նույնիսկ հնարավոր լիներ վերացնել, ապա մտածում եմ, որ դա ավելի ևս կդառնացներ դժբախտությունը նրանց։ Քանզի եթե դրախտի արդարները, դիտելով տանջանքները նրանց, թեկուզ ներեին և անհուն սիրով կանչեին իրենց մոտ, դրանով իսկ բազմապատկած կլինեին տանջանքները նրանց, որովհետև առավել ևս ուժգնորեն բրցավառած կլինեին նրանց մեջ ծարավը փոխադարձ սիրո, գործունյա ու եռախտապարտ սիրո, որ անհնար է տրգեն։ Բայց և այնպես, սրտի երկյուղով մտածում եմ, որ այդ անկարելիության գիտակցությունն խակ ի վերջո մխիթարություն կլինի նրանց համար, վասնզի ընդունելով արդարների սերը և փոխադարձելու անկարելիությունը, այդ համակերպության շնորհիվ և այդ խոնարհության ներգործմամբ վերջապես ձեռք կբերեն մի տեսակ նմանակն այն գործունյա սիրո, որ արհամարհել էին երկրի վրա, ու ձեռք կբերեն նաև գործելու մի եղանակ, որ նման կլինի այդ սիրո... Ցավում եմ, եղբայրներ ու բարեկամներ իմ, որ չեմ կարող հստակորեն արտահայտել այս բանը։ Բայց վա՜յ նրանց, որ իրե՛նք խակ իրենց են ոչնչացրել երկրի վրա, վա՜յ անձնասպաններին։ Մտածում եմ, որ այլևս ոչ ոք չի կարող ավելի դժբախտ լինել, քան նրանք։

Մեզ ասում են, թե մեղսական է նրանց համար աղոթել աստուծո, և եկեղեցին կարծես թե մերժում է նրանց երևութապես, բայց մտածում եմ ի խորոց սրտի, որ կարելի է նրանց համար ևս աղոթել։ Չէ՞ որ սերը երբեք այնպանելի չէ հաշս Քրիստոսի։ Այդպիսիների համար ևս ներքուստ աղոթել եմ իմ ամբողջ կյանքում, խոստովանում եմ այս բանը ձեզ, հայրեր և ուսուցիչներ, և այժմ ևս աղոթում եմ ամենայն օր։

Օ՜, կան և այնպիսիք, որոնք դժոխքում անգամ մնում են հպարտ ու մոլեգին, հակառակ որ աներկբայելի իմացություն են ձեռք բերել և տեսնում են ճշմարտությունն անհեղլի. կան զարհուրելի ոմանք, որ լիովին անձնատուր են եղել սատանային ու հպարտ ոգուն նրա։ Սրանց համար դժոխքն արդեն կամովին է և հավերժատանջ. հոժարակամորեն շարշարվում են նրանք։ Վասնզի իրենք իսկ անիծել են իրենց, անիծելով կյանքն ու զաստված։ Սնվում են իրենց քինախնդիր հպարտությամբ, ինչպես եթե սովահարն անապատում սկսեր իր սեփական արյունը ծծել իր իսկ մարմնից։ Սակայն անհագ են մնում հավիտյանս հավիտենից և մերժում են ներումն աստուծո, անիծում են բարձրյալին, որ կանչում է նրանց։ Չեն կարող առանց ատելության նայել կենդանի աստուծո և պահանջում են, որ ի չիք դառնա աստվածն կյանքի, որ աստված ոչնչացնի ինքնիրեն և իր ստեղծագործությունն ամբողջ։ Ու նրանք պիտի հավերժորեն վառվեն իրենց ցասման հրո մեջ, պիտի մահ ու չգոյություն տենչան։ Բայց մահը չի տրվելու նրանց...

Այստեղ ավարտվում է Ալեքսեյ Ֆյոդորովիչ Կարամազովի ձեռագիրը։ Կրկնում եմ՝ այս գրվածքը թերի է և հատուկտոր։ Կենսագրական տեղեկությունները, օրինակ, սրբահոր կյանքի վաղ շրջանն են ընդգրկում միայն։ Իսկ նրա հորդորներից ու կարծիքներից ի մի են բերվել ու մի տեսակ ամբողջություն են կազմել զանազան ասույթներ, որոնք հավանաբար տարբեր ժամանակներում են ասվել՝ այլազան շարժառիթներով։ Համենայն դեպս, որոշակիորեն չի սահմանազատված այն, ինչ սրբահայրն ասել է իր կյանքի վերջին ժամերին, այլ շարադրված է այնպես, որ կարելի է լոկ գաղափար կազմել նաև այդ զրուցատրության ոգու և բնույթի մասին, եթե համեմատենք այն նախկին հորդորների հետ, որոնք բերված են Ալեքսեյ Ֆյոդորովիչի ձեռագրում։ Իսկ սրբահոր մահը բոլորովին անսպասելիորեն տեղի ունեցավ արդարև։ Թեև այդ վերջին իրիկունը նրա մոտ հավաքվածները հասկանում էին լիովին, որ մոտալուտ է նրա վախճանը, բայց այնուամենայնիվ չէր կարելի պատկերացնել, թե մահն այնքան հանկարծակի է վրա հասնելու։ Ընդհակառակը, ինչպես ասել եմ արդեն, բարեկամներն այդ գիշեր երևութապես այնքան առույգ ու զրուցասեր տեսնելով նրան՝ մինչև իսկ համոզվել էին, թե սրբահոր առողջական վիճակում նկատելի բարելավում է կատարվել, թեկուզ և կարճ ժամանակով միայն։ Նույնիսկ մահից հինգ րոպե առաջ, ինչպես ասում էին հետո զարմանքով, դեռ ոչինչ չէր կարելի նախատեսել։ Ասես հանկարծ մի շատ ուժեղ ցավ զգաց կրծքի մեջ, գունատվեց և ձեռքերն ամուր սեղմեց սրտին։ Բոլորը վերկացան իրենց տեղերից ու փութացին նրա մոտ։ Բայց նա, թեև տառապելով, բայց դեռ շարունակելով ժըպտագին նայել նրանց, բազկաթոռից իջավ մեղմորեն, ծնկի եկավ, ապա երեսը խոնարհեց դեպի երկիր, թևերը տարածեց ու կարծես ցնծագին հափշտակությամբ, համբուրելով երկիրը և աղոթելով (ինչպես ինքն էր ուսուցանում), հանդարտորեն ու բերկրալից ավանդեց իր հոգին աստուծո։ Նրա վախճանման լուրն անմիջապես տարածվեց մենաստանում և հասավ վանք։ Հանգուցյալի մերձավորագույն բարեկամները և այն անձինք, որոնք պարտավոր էին ըստ եկեղեցական կարգի, սկսեցին հանդերձել նրա մարմինը հնավանդ ծիսակատարությամբ, իսկ ամբողջ միաբանությունը հավաքվեց մայր եկեղեցվո մեջ։ Եվ դեռ լույսը չըբացված, ինչպես պատմում էին հետագայում, սրբահոր վախճանման լուրը հասավ քաղաք։ Առավոտյան դեմ գրեթե ամբողջ քաղաքը խոսում էր դեպքի մասին, և բազմության հոսանքը ծայր առավ դեպի վանք։ Բայց դրա մասին կպատմենք հաջորդ գրքում, իսկ այժմ, կանխելով, պարզապես ավելացնենք, որ դեռ մեկ օր էլ չէր անցել, երբ անսպասելի մի բան կատարվեց, այնքա՜ն անսպասելի բոլորի համար, և վանքում ու քաղաքում գործած տպավորությամբ այնքա՜ն տարօրինակ, տագնապալից ու խառնաշփոթ, որ մինչև այսօր էլ, այնքան տարիներ հետո, մեր քաղաքում ամենակենդանի հիշատակներ են մնացել այդպիսի ընդհանուր տագնապ պատճառած օրվա մասին...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մասն առաջին

Գիրք առաջին — Մի ընտանիքի պատմություն

Ֆյոդոր Պավլովիչ Կարամազով 8
Առաջին որդուց գլուխն ազատում է 12
Երկրորդ ամուսնությունն ու մյուս զավակները 17
Երրորդ որդին՝ Ալյոշան 25
Սրբահայրեր 35

Գիրք երկրորդ — Անպատեհ հավաքույթ

Գալիս են վանք 47
Միշտ նույն խեղկատակը 54
Հավատացյալ կնիկներ 65
Թերահավատ տիկինը 75
Եղիցի՛, եղիցի՛ 84
Ինչո՞ւ է ապրում այսպիսի մարդը 96
Պատեհապաշտ հեմարանականը 110
Խայտառակություն 121

Գիրք երրորդ — Հեշտամոլներ

Մառայանոցում 132
Լիզավետա Սմերդյաշչայա 139
Տենչահույզ սրտի խոստովանանք՝ ոտանավորներով 144
Տենչահույզ սրտի խոստովանանք՝ անեկդոտներով 155
Տենչահույզ սրտի խոստովանանք՝ «կրունկները վեր» . . . 165
Սմերդյակով 176
Բանավեճ 182
Կանյակ խմելով 190
Հեշտամոլներ 199
Երկուքը միասին 206
Մի լավ անուն ևս փչանում է 220

Մասն երկրորդ

Գիրք չորրորդ — Չլատումներ

Հայր Ֆերապոնտ 231
Հոր մոտ 244
Դպրոցական տղաների հետ է կապվում 250
Խոխլակովաների մոտ 256
Չլատում՝ հյուրասենյակի մեջ 263
Չլատում՝ խրճիթի մեջ 278
Եվ մաքուր օդում 288

Գիրք հինգերորդ — Pro և contra

Խոսքակապ 301
Սմերդյակովը կիթառ է նվագում 315
Եղբայրները մտերմանում են 323
Ըմբոստություն 335
Մեծ հավատաքննիչը 349
Առայժմ դեռ շատ մթին մի բան 376
«Խելոք մարդու հետ քար կրի, խենթի հետ հաց մի՛ ուտի» . . 389

Գիրք վեցերորդ — Ռուս վանականը

Սրբահայր Զոսիման և իր հյուրերը 399
Էջեր ի տեր հանգուցյալ սքեմազգյաց աբեղա սրբահայր Զոսիմայի վարքից՝ կազմված յուր սեփական խոսքերից, Երկասիրությամբ Ալեքսեյ Ֆյոդորովիչ Կարամազովի
Կենսագրական տեղեկություններ
ա) Սրբահայր Զոսիմայի պատանի եղբոր մասին . . 405
բ) Սուրբ գրոց դերը սրբահայր Զոսիմայի կյանքում . . 410
գ) Հուշեր սրբահայր Զոսիմայի պատանեկության ու երիտասարդության տարիներից, երբ դեռ ապրում էր աշխարհիկ կյանքով։ Մենամարտը 418
դ) Խորհրդավոր այցելուն 426
Ծաղկաքաղ՝ սրբահայր Զոսիմայի զրուցատրություններից ու հորդորներից
ե) Բան ինչ՝ վասն ռուս վանականի և նրա հնարավոր նշանակության 443
զ) Բան ինչ՝ վասն տերերի ու ծառաների և վասն այնորիկ, թե հնարավո՞ր է արդյոք, որ տերերն ու ծառաները փոխադարձաբար եղբայրանան ոգեպես 447
է) Վասն աղոթքի, սիրո և այլ աշխարհների հետ հաղորդակցության 452
ը) Հնարավո՞ր է արդյոք, որ մարդ մարդու դատավորը լինի։ Մինչև վերջ աներեր հավատքի մասին 456
թ) Վասն դժոխքց և դժոխային հրոյ, միստիկ դատողություն . 458

Ֆյոդոր Միխայլովիչ Դոստոևսկի

ԿԱՐԱՄԱԶՈՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Վեպ

Федор Михайлович Достоевский

БРАТЬЯ КАРАМАЗОВЫ

Роман

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1983

Խմբագիր՝ Է. Ռ. Մասումյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջալճակյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ց. Կովկասյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բալաբյան

ИБ № 6105

Հանձնված է շարվածքի 29.03.83։ Ստորագրված է տպագրության 26.08.83։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 24,36 պայմ. տպ. մամ., 23,3 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50 000։ Պատվեր՝ 555։ Գինը՝ 2 ռ. 30 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հ. Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան-9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.